

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 11

ՀՈՒՍԱՆԻՏԱՐ ՀՈՍՔ

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Պ. ՉՈԲԱՆՅԱՆ, Ա. ՍԻՄՈՆՅԱՆ, Ա. ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2015

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝
որպես դասագիրք ավագ դպրոցի 11-րդ դասարանի հումանիտար հոսքի համար

ՀՏԴ 373.167.1: 941(479.25)(075)
ԳՄԴ 63.3(2Հ)g72
Հ 282

Խմբագիրներ՝ **ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ**. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ. պատմագիտության թեկնածու

Հեղինակներ՝ **ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ**
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
(Ներածություն, Մաս Բ. Բաժին 1. Գլուխ 2, Մաս Գ. Բաժին 1. Գլուխ 2, Բաժին 2. Գլուխներ 2–4, Բաժին 3. Գլուխ 1. § 3)
ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
(Մաս Բ. Բաժին 1. Գլուխ 1, Բաժին 2. Գլուխ 2, Մաս Գ. Բաժին 3. Գլուխ 3)
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Մաս Բ. Բաժին 1. Գլուխ 3, Բաժին 3. Գլուխ 1)
ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ
Պատմագիտության դոկտոր
(Մաս Բ. Բաժին 2. Գլուխ 1, Բաժին 3. Գլուխ 2, Մաս Գ. Բաժին 1. Գլուխ 1, Բաժին 3. Գլուխ 1. §§ 1, 2)
ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
(Մաս Գ. Բաժին 2. Գլուխ 1, Բաժին 3. Գլուխ 2)
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
Պատմագիտության թեկնածու
(Մաս Գ. Բաժին 2. Գլուխներ 5, 6)

Մեթոդական մասի հեղինակներ՝ **ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**. պատմաբան, մանկավարժ
ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ. պատմագիտության թեկնածու

Քարտեզագիր՝ **ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ**

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: 11-րդ դասարան: Հումանիտար հոսքի դասագիրք /
Հ 282 Ա. Մելքոնյան, Վ. Բարխուդարյան, Գ. Հարությունյան, Պ. Չոբանյան, Ա. Սիմոնյան, Ա. Նազարյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2015.— 352 էջ:

ՀՏԴ 373.167.1: 941(479.25)(075)
ԳՄԴ 63.3(2Հ)g72

ISBN 978-99941-1-800-7

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2015

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավագ դպրոցի 11–րդ դասարանի հումանիտար հոսքի դասագիրքն ընդգրկում է հայոց պատմության միջնադարի զարգացած (IX–XIV դդ.) և ուշ (XV–XVII դ. կեսեր) փուլերը և նոր պատմության (XVII դ. կեսից մինչև 1918 թ.) ժամանակաշրջանը: Ուսումնական նյութը, հիմնական գծերով ներառելով միջին դպրոցում սովորածը, հայոց պատմությունը ներկայացնում է առավելապես քաղաքակրթական զարգացման տեսանկյունից: Այն սովորողի մոտ կձևավորի դեպքերի և իրադարձությունների պատճառահետևանքային կապերը բացահայտելու, ազգային հիմնախնդիրների նկատմամբ ինքնուրույն մոտեցում դրսևորելու, համաշխարհային պատմության հետ պատմական զուգահեռներ անցկացնելու կարողություններ և հմտություններ:

Դասագրքի առաջին մասում կարևորվում է համահայկական անկախ պետության՝ Բագրատունիների թագավորության վերականգնման խնդիրը: 885 թ. արաբների դեմ դժվարին պայքարը հայ Բագրատունիները հասցնում են հաղթական ավարտին: Հայաստանը դառնում է տարածաշրջանի ուժեղագույն պետություններից մեկը:

Անկախ պետականության պայմաններում աննախադեպ բարձրության է հասնում հայ միջնադարյան մշակույթը՝ ազդարարելով համաշխարհային քաղաքակրթության մեջ Վաղ Վերածննդի (Ռենեսանս) սկզբնափուլը: Այդ ժամանակաշրջանում ստեղծվում են քաղաքակրթական բազմաթիվ բարձրարժեք կոթողներ: Մշակութային բուռն զարգացումը շարունակվում է նաև XIII դ. առաջին տասնամյակներին՝ Զաքարյանների իշխանապետության և Կիլիկյան Հայաստանի վերելքի շրջանում: Հայ ժողովուրդը համաշխարհային մշակույթի մեջ ծանրակշիռ ավանդ է ներդնում հատկապես խաչքարերի, մանրանկարչության և երաժշտական ինքնատիպ նոտաների՝ խազերի արվեստով: Գրիգոր Նարեկացին գրում է իր «Մատյան ողբերգության» անմահ պոեմը:

Ցավոք, մոնղոլների, Լենկ Թեմուրի և թուրքմենական ցեղերի ասպատակությունների հետևանքով Հայաստանում մշակութային վերածննդի գործընթացը խաթարվում է, իսկ XVI–XVII դդ.՝ թուրք–պարսկական արյունալի պատերազմների ժամանակաշրջանում, կտրուկ անկում է ապրում:

Հայ ժողովուրդը XVII դ. կեսերին պատմության նոր դարաշրջան է թևակոխում օտար տիրապետության դեմ ազատագրական պայքարի վերելքով, որի գլուխ կանգնում է Հայ առաքելական եկեղեցին: Ազատագրական շարժման մեջ նոր փուլ է սկսվում XVIII դ. սկզբին, երբ ազգային գործիչ Իսրայել Օրին փորձում է հայկական պետականության վերականգնման գաղափարը և պայքարը կապել Ռուսաստանի օժանդակության հետ: Օտար տիրապետության դեմ զինված պայքարի կենտրոններ են դառնում Սյունիքի ու Արցախի մելիքություններն ու սղնախները: Դրանց հետագա ամրապնդումը 1720–1740–ական թթ. հանգեցնում է այդ երկրամասերում որոշ ժամանակով հայոց պետականության վերականգնմանն ու միջազգային ճանաչմանը:

XVIII դ. վերջին քառորդին հայ գործիչները մշակում են Ռուսաստանի օգնությամբ հայկական պետականությունը վե-

ռականգնելու ծրագրեր: Հնդկահայ գործիչ Շահամիր Շահամիրյանն առաջ է քաշում ժամանակի համար խիստ առաջադիմական մի նախագիծ, ըստ որի՝ ապագա Հայաստանը պետք է դառնար հանրապետական վարչակարգ ունեցող սահմանադրական երկիր:

XIX դ. սկզբին Անդրկովկասում իր ծավալապաշտական քաղաքականությունն է սկսում իրագործել Ռուսաստանը: Սակայն Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ցարական արքունիքը մոռացության է տալիս Հայաստանի ազատագրության ծրագրերը:

Արևմտահայությունն օսմանյան գերիշխանության տակ շարունակում է ենթարկվել ազգային, կրոնական ու սոցիալական ծանր հալածանքների: XIX դ. վերջին քառորդին հայ հասարակական–քաղաքական կյանքի գլխավոր առանցքը կազմում է 1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով ամրագրված հայկական բարեփոխումների խնդիրը, որը միջազգային դիվանագիտության մեջ ստանում է Հայկական հարց անվանումը:

Հայ հասարակությունը, Հայկական հարցն ընկալելով որպես արևմտահայության ազատագրության խնդիր, հետզհետե իր ողջ ներուժն ուղղում է դրա իրագործմանը: Ստեղծվում են ազատագրական խմբակներ ու ազգային կուսակցություններ, ծավալվում է հայդուկային ազատագրական շարժումը:

Հայկական հարցի միջազգայնացումն իր բարերար ազդեցությունն է թողնում XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ մշակույթի նոր ու բազմակողմանի վերելքի վրա: Սակայն օսմանյան իշխանությունները, ձգտելով ազատվելու Հայկական հարցից, նախընտրում են խնդրի լուծման ուրույն տարբերակ՝ բնաջնջել հայերին: Հայերին վերացնելու ծրագիրը սուլթան Համիդ II–ից ժառանգում են 1908 թ. իշխանության եկած երիտթուրքերը: Վերջիններս էլ Առաջին աշխարհամարտի տարիներին իրականացնում են Մեծ եղեռնը: Այդ դժնդակ օրերին ևս հայ ժողովուրդը պայքարում է իր ազատության համար: Բազմահազար հայ ռազմիկներ հայկական կամավորական ջոկատներում հերոսաբար կռվում են թուրքական զորքերի դեմ: Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում (Վան, Սասուն–Մուշ, Շապին Կարահիսար, Ուրֆա) և Կիլիկիայում (Սուետիա, Դյորթյոլ, Հաճըն և այլն) կազմակերպված ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ բազմաթիվ հայեր փրկվում են եղեռնից:

Այսրկովկասում հայության համար ստեղծված ռազմաքաղաքական անբարենպաստ պայմաններում 1918 թ. փետրվար–մարտին թուրքական զորքերն անցնում են հակահարձակման, գրավում Արևմտյան Հայաստանի ազատագրված տարածքները և ներխուժում Արևելյան Հայաստան: Սակայն Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի և մյուս շրջանների հերոսամարտերի շնորհիվ ոչ միայն ձախողվում է հայերին լիովին բնաջնջելու թուրքական ծրագիրը, այլև կռիվների մեջ վերածնվում է հայկական անկախ պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը: Հայ ժողովուրդը պատմության նորագույն ժամանակաշրջան է թևակոխում վերականգնված անկախ պետականությամբ:

ՄԱՍ Բ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԲԱԺԻՆ 1

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հայկական անկախ պետականության վերականգնման նախադրյալները: IX դարի կեսերին ստեղծվել էին անհրաժեշտ պայմաններ Հայաստանի անկախությունը վերականգնելու համար:

Արտաքին քաղաքական իրադրությունը բարենպաստ էր դրա համար: Միջնադարյան հզոր տերություններից մեկը՝ ***Արաբական խալիֆայությունը***, IX դարում սկսեց թուլանալ, քանի որ նրանում բռնի միավորված էին զարգացման տարբեր աստիճաններում գտնվող, տարբեր լեզու և դավանանք ունեցող ժողովուրդներ: Խալիֆայության ներքին հակասությունները ավելի էին խորացել: Առանձին երկրների արաբ ամիրաները տեղերում ամրապնդել էին իրենց իշխանությունը և ձգտում էին անջատվելու խալիֆայությունից: Արաբական ցեղերից կազմված բանակը դադարել էր պետության հենարանը լինելուց: Ուստի պետության ղեկավարները գերազանցապես վարձկաններից կազմված մշտական հեծելազոր էին ձևավորել, որն այնքան էր ուժեղացել, որ այլևս չէր ենթարկվում անգամ խալիֆներին: Կայուն չէր դրությունը նաև խալիֆայության կենտրոնում: Լայն ծավալ ստացած ժողովրդական ազատագրական ապստամբությունները և գահակալական կռիվները խարխլում էին կենտրոնական կառավարության դիրքերը:

Մյուս կողմից՝ պետության միջազգային դրությունը ևս նպաստավոր չէր: Խալիֆայության ծանր դրությունից օգտվում էր նրա վաղեմի հակառակորդը՝ ***Բյուզանդիան***: Վերջինս ամեն կերպ աջակցում էր խալիֆայության կենտրոնախույս ուժերին: Այդ պատճառով խիստ սրվել էին արաբա–բյուզանդական հարաբերությունները: Կազմալուծվող խալիֆայությունը հարկադրված էր դիմելու զիջումների քաղաքականության:

Բարենպաստ չէր նաև խալիֆայության ներքին քաղաքական ու տնտեսական իրադրությունը: Պետությանը ենթակա երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, աստիճանաբար ավելի ու ավելի էր զորեղանում անկախություն ձեռք բերելու, արաբական լուծը թոթափելու ձգտումը:

Խալիֆայության թուլացման և տրոհման ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսական կյանքում տեղի էին ունենում որոշակի փոփոխություններ: Առաջադիմում ու խորանում էին ավատատիրական հարաբերությունները: Աստիճանաբար ամրապնդվում էր հայ իշխանների ժառանգական հողատիրությունը, ընդարձակվում էին նրանց կալվածքները: Զարգանում էր երկրի տնտեսական կյանքը՝ գյուղատնտեսությունը, արհեստագործու-

թյունը: Տնտեսապես և ռազմականորեն զորեղացող հայ նախարարները ձգտում էին անկախության: Հայ եկեղեցին ջանում էր ազատվելու կրոնական անհանդուրժողականությունից, հալածանքներից, աշխատավորական զանգվածները՝ օտարերկրյա ծանր լծից: Հայ իշխանական տները ի զորու էին գլխավորելու հայկական պետականությունը վերականգնելու համաժողովրդական շարժումը, մանավանդ որ հայ ժողովրդի բոլոր խավերը միասնական էին, բոլորն էլ երազում էին անկախության մասին:

Այսպիսով՝ առկա էին թե՛ ներքին և թե՛ արտաքին բոլոր անհրաժեշտ նախադրյալները հայկական պետականությունը վերականգնելու համար:

Հայոց թագավորության վերականգնումը: Արաբական խալիֆայության թուլացումից Հայաստանում հմտորեն օգտվում էին հատկապես Բագրատունիները: Նրանք ձգտում էին իրենց ազդեցությունն ու իշխանությունը տարածելու ամբողջ երկրում: Նպաստավոր պայմաններում իր գործունեությունն էր ծավալում նշանավոր ռազմաքաղաքական գործիչ և շնորհալի դիվանագետ ***Աշոտ Բագրատունին:*** Արդեն ասվել է, որ 855 թ. նա հաստատվել էր Հայոց իշխանի և սպարապետի պաշտոններում, իսկ 862 թ. երկրի իշխանների առաջարկով նա ճանաչվեց Հայոց իշխանաց իշխան: Նրան հանձնվեց նաև ամբողջ երկրի հարկահանությունը: Շնորհիվ դրա՝ կրճատվեցին հարկերը, փոխվեց արաբական հարկահանության՝ բռնություններով և կամայականություններով ուղեկցվող կարգը:

Աշոտ Բագրատունու ձեռքն անցավ երկրի կառավարումը: Իր եղբորը՝ Աբասին, որը քաջ ռազմիկ էր, նա նշանակեց սպարապետ: Շուտով բանակի թիվը հասավ 40 հազարի: Աշոտը հմտորեն օգտագործեց արաբ ամիրաների ներքին հակասությունները և թույլ չտվեց նրանց միջամտել Հայաստանի ներքին գործերին:

Այսպիսով՝ թեպետև երկիրը արաբական տիրապետության վերահսկողության ներքո էր, սակայն Բագրատունիների ձեռքում էր ինչպես ռազմավարչական, այնպես էլ տնտեսական փաստական իշխանությունը: Աշոտ Բագրատունին որոշակի քայլեր կատարեց հայ նախարարների միջև գժտությունները վերացնելու և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելու ուղղությամբ: Այդ նպատակով նա խնամիական կապեր հաստատեց Վասպուրականի և Սյունիքի գահերեց իշխանների հետ:

Բյուզանդիան հետևում էր խալիֆայության ներսում, այդ թվում նաև Հայաստանում կատարվող իրադարձություններին և, ինչպես նշվեց, նպաստում անկախության ձգտումներին: Հայաստանին իր կողմը գրավելու նպատակով Բյուզանդիան Հայ եկեղեցին բյուզանդականի հետ միավորելու հարց բարձրացրեց: Այդ առթիվ բյուզանդական պատրիարքը նամակով դիմեց Աշոտ Բագրատունուն: ***Սակայն 869 թ. Շիրակավանի եկեղեցական ժողովը մերժեց դավանական միավորման առաջարկը:*** Աշոտը հայտնում է այդ մասին, միաժամանակ հասկացնում, որ, այդուհանդերձ, կայսրության հետ քաղաքական դաշինքի մեջ մտնելու կողմնակից է:

Հայ եկեղեցին մեծապես շահագրգռված էր Հայաստանի անկախությունը վերականգնելու հարցում և լիակատար աջակցություն էր ցույց տալիս Բագրատունիներին: Հայոց կաթողիկոս Զաքարիա Ձագեցու նախաձեռնությամբ նույն՝

869 թ. նշանավոր հայ իշխանների հատուկ ժողով հրավիրվեց: Այնտեղ միահամուռ որոշում ընդունվեց Աշոտ Բագրատունուն հռչակելու հայոց թագավոր: Հայոց թագավորությունը ճանաչելու նպատակով ժողովը դիմեց խալիֆային, բայց խալիֆայությունը ձգձգում էր Հայաստանի անկախության ճանաչումը:

Բյուզանդիան ամեն կերպ խրախուսում էր հայերի՝ խալիֆայությունից անջատվելու քայլերը: Բյուզանդիայում գահ բարձրացած՝ ծագումով հայ, ***Մակեդոնական*** կամ ***Հայկական*** հարստության (867–1057) հիմնադիր ***Վասիլ (Բարսեղ) I կայսրն*** ուշիուշով հետևում էր Հայաստանի ինքնուրույնության վերականգնմանը: Նա 876 թ. պատվիրակ է ուղարկում Աշոտ Բագրատունու մոտ: Կայսրը հայտնում էր, որ ինքը ծագում է հայ Արշակունիներից, և քանի որ Բագրատունիներն ավանդաբար հայոց արքաների թագադիր ասպետի առանձնաշնորհին են ունեցել, նրանից թագ է խնդրում: Ի նշան փոխադարձ բարեկամության՝ Աշոտը թագ է ուղարկում Վասիլ I–ին: Բյուզանդական կայսրին թագադրելու այս փաստը վկայում է Աշոտ Բագրատունու հեղինակության մասին և ուղղված էր արաբների դեմ:

Հանդիպելով հայ ժողովրդի միահամուռ դիմադրությանը և համոզվելով, որ բռնի ուժով հնարավոր չէ հասնել հաջողության՝ արաբական խալիֆը 885 թ. արքայական թագ ու թանկարժեք զգեստներ է ուղարկում Աշոտ Բագրատունուն և ճանաչում Հայաստանի թագավոր: Վասիլ I կայսրն իր հերթին շտապում է ճանաչելու Աշոտի գահակալությունը: Նա ևս արքայական թագ է ուղարկում և բարեկամական դաշինք կնքում Աշոտի հետ:

Հայաստանի և հարևան երկրների հյուրերի ներկայությամբ ***885 թ. օգոստոսի 26–ին Բագարան*** քաղաքում մեծ հանդիսավորությամբ Աշոտ Բագրատունին կաթողիկոս ***Գևորգ Գառնեցու կողմից օծվում է հայոց թագավոր:***

Այսպիսով՝ տարիներ առաջ հաստատված փաստական անկախությունը միջազգային ճանաչում է ստանում: Դրանով հիմք է դրվում Բագրատունյաց հարստությանը (885–1045): Ավելի քան 450 տարի առաջ վերացած հայկական անկախ պետականությունը վերականգնվում է: Դա պատմական շրջադարձային երևույթ էր, որը մեծապես նպաստեց Հայաստանի հետագա զարգացմանը:

Երկրի անկախության ամրապնդումը: Աշոտ I–ը (885–890) ջանք չէր խնայում թագավորական իշխանությունն ամբողջ երկրում տարածելու, միասնական հայկական պետություն ստեղծելու համար: Սակայն դժվարին, բայց անհրաժեշտ այդ պայքարում նա հանդիպում էր ուժեղ դիմադրության: Կենտրոնացված միասնական պետություն ստեղծելուն ընդդիմանում էին առանձին իշխանական տներ, ինչպես նաև արտաքին թշնամական ուժերը:

Աշոտ I–ին հաջողվեց ճնշել Վանանդի իշխանների ապստամբությունը և այդ գավառն իր Կարս բերդաքաղաքով միացնել պետությանը: Կարսը վերակառուցվեց և դարձավ հայոց սպարապետների գահանիստը:

Բարդ ու դժվար էր երկու խոշոր իշխանական գերդաստանների՝ Վասպուրականի Արծրունի և Սյունիքի Սյունի նախարարական տների հարցը: Այդ իշխաններն իրենց տնտեսական կարողությամբ և ռազմական ուժով գրեթե չէին զիջում

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇՈՏ Ա-Ի ՕՐՈՔ

Սև ծով
Կասպից ծով
Մեծ Հայք
Բագրատունյաց թագավորությունը Աշոտ Ա-ի օրոք
Բագրատունյաց Հայաստանի սահմանները
Հայ Բագրատունիների տիրապետությունը
Հայ Բագրատունիների ազդեցությունը
Հայ Բագրատունիների ազդեցությունը
Գավառների սահմանները
Գավառներ
Գավառներ
Գավառներ

Ջ. Ջասր. «Սմբատ I Բագրատունին մխիթարում է Դվինի երկրաշարժի աղետյալներին»

Բագրատունիներին: Աշոտ թագավորին խաղաղ ճանապարհով հաջողվեց ավատական այդ հզոր իշխանություններին ևս ենթարկել իրեն: Այնուհետև թագավորն իր որդի Սմբատի գլխավորությամբ, որին կարգել էր իշխանաց իշխան, զորք ուղարկեց Գուգարք և Ուտիք: Վերջ տրվեց նաև այդտեղի որոշ իշխանների անհնազանդությանը: Սնոելով Վրաստան՝ Աշոտ արքան հասավ մինչև Կովկասի գլխավոր լեռնաշղթան, ընկճեց Վրաստանն ու Աղվանքն ասպատակող լեռնականներին:

Հայոց թագավորը կարգավորել էր երկրի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործերը: Հայկական թագավորությունը նկատելիորեն ամրապնդված էր, և երկրում հաստատված խաղաղությունն իր պտուղներն էր տալիս: Նա շրջագայեց երկրում, ապա մեկնեց Կոստանդնուպոլիս և Բյուզանդիայի հետ պայմանագիր կնքեց: Բայց վերադարձի ճանապարհին հիվանդացավ և մայրաքաղաք չհասած՝ մահացավ:

Աշոտի մահից հետո գահ բարձրացավ և նրա քաղաքականությունը հաջողությամբ շարունակեց որդին՝ ***Սմբատ I-ը (890-914)***: Նորընտիր թագավորը պետական խոշոր գործիչ էր և իր հոր արժանի ժառանգորդը: Նա շարունակեց երկրի խաղաղ շինարարությունը և պետության ամրապնդումը: Սմբատ I-ը ճկուն քաղաքականություն էր վարում Հայաստանին սահմանակից Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության հանդեպ: Նրա օրոք հայկական պետության սահմաններն ավելի ընդարձակվեցին: Շարունակելով ճանաչել արաբական պետության սոսկ ձևական գերիշխանությունը՝ Սմբատը պատգամավորություն ուղարկեց Կ. Պոլիս: Ամրապնդվեց բարեկամությունը կայսրության հետ, և 893 թ. կնքվեց առևտրական համաձայնագիր: Հայաստանը

դառնում էր տարանցիկ առևտրի գլխավոր կենտրոն երկու տերությունների միջև: Այդ պայմանագիրը մեծապես նպաստեց Հայաստանի տնտեսական վերելքին:

Խալիֆայությունը և Ատրպատականի Սաջյան ամիրայությունը, սակայն, թշնամաբար էին նայում հայկական պետության հզորացմանը: 893 թ. տեղի ունեցած երկրաշարժից ավերվեց Դվինը: Հայաստանի համար ստեղծված դժվարին պայմաններում, Բյուզանդիայի հետ կնքված պայմանագիրն առիթ դարձնելով՝ Սաջյան ամիրայի զորքերը ներխուժեցին Հայաստան: ***894 թ. Արագածոտն գավառի Դողս գյուղի մոտ*** տեղի ունեցած ճակատամարտում արաբները ծանր պարտություն կրեցին:

Համոզվելով, որ ռազմական ուժով դժվար է հասնել հաջողության, Սաջյան ամիրաները փոխեցին իրենց քաղաքականությունը: Շուտով առիթ ստեղծվեց միջամտելու հայ իշխանների ներքին խնդիրներին: Սյունյաց և Արծրունյաց իշխանների միջև վեճ առաջացավ Նախճավան քաղաքին տիրելու համար: Սմբատ թագավորն այդ վեճը լուծեց հօգուտ Սյունիքի: Գագիկ Արծրունին Սմբատին խնդրեց վերանայել վճիռը և իրեն վերադարձնել Նախճավանը, քանի որ այդ քաղաքը ժամանակին եղել էր Վասպուրականի կազմում: Սակայն Սմբատը մնաց անդրդվելի:

Գագիկ Արծրունին, խիստ դժգոհ լինելով Սմբատ թագավորից, սկսեց գործակցել Ատրպատականի ամիրա Յուսուֆի հետ: Վերջինիս միջնորդությամբ խալիֆը 908 թ. Սմբատի փոխարեն Հայաստանի թագավոր ճանաչեց Գագիկ Արծրունուն և նրան վերապահեց հարկերը հավաքելու իրավունքը: Նման ձեռնարկումներով արաբները ձգտում էին ավելի խորացնելու հայ ազդեցիկ իշխանների տարաձայնությունները, արգելակելու Բագրատունիների՝ Հայաստանը միավորելու ջանքերը:

Բագրատունիների թագավորությանը վերջ տալու նպատակով Յուսուֆ ամիրան Գագիկ Արծրունու հետ հարձակվեց Հայաստանի վրա: Յուսուֆի կողմն անցան նաև որոշ հայ իշխաններ: Սկսվեց Հայաստանի համար աննպաստ, ծանր պատերազմ: Սմբատին օգնելու համար բյուզանդական կայսրը մեծ զորքով շարժվեց դեպի Հայաստան, բայց ճանապարհին մահացավ, իսկ նրա զորքը, դաշնակից պետությանը որևէ աջակցություն չցուցաբերելով, վերադարձավ: Հայոց թագավորը իր զորքով մնաց մեն-մենակ:

Սմբատ I-ը իր մի զորագնդով ամրացավ ***Կապույտ բերդում:*** Սակայն մեկ տարի դիմադրելուց հետո տեսնելով, որ երկիրն ավերվում է, անձնատուր եղավ: Յուսուֆը, պայմանավորվածության համաձայն, հայոց թագավորի հետ բանակցելու փոխարեն նրան կալանավորեց և ուղարկեց Դվինի բանտը: Այդ ժամանակ Նախճավանի ***Երնջակ*** բերդը խիզախորեն դիմադրում էր արաբներին: Յուսուֆը Սմբատին տարավ այնտեղ և նրանից պահանջեց, որ բերդի պաշտպաններին զենքը վայր դնելու հրաման արձակի: Եվ երբ գերված թագավորը հրաժարվեց այդ անելուց, Յուսուֆը նրան տանջանքների ենթարկեց ու գլխատեց (914 թ.): Այսպիսով՝ Բագրատունյաց երկրորդ գահակալը մաքառեց հանուն միասնական հայոց պետության ու զոհ գնաց ավատական ներքին երկպառակություններին և օտար նվաճողների ոտնձգություններին:

Արաբների կատարած ասպատակությունների հետևանքով խախտվել էր երկրի բնականոն կյանքը: Սկսվեց սով, որը տևեց մի քանի տարի: Այս ամենի

հետևանքով հայկական պետությունը կանգնեց իր անկախությունը կորցնելու լուրջ վտանգի առաջ:

Յուսուֆը հույս ուներ, որ Սմբատ թագավորին ասպարեզից հանելուց հետո հայերը չեն դիմադրի, բայց նրա հույսերը չարդարացան: Հայ ժողովուրդը ոտքի ելավ իր անկախությունն ու պետականությունը պահպանելու համար: Այդ պայքարը գլխավորում էր Սմբատ I–ի ավագ որդին՝ ***Աշոտ II–ը (914–928)***: Նրան ժողովուրդը ***Երկաթ*** մականունն էր տվել իր խիզախության ու տոկունության համար: Նա իր եղբայր Աբասի հետ հայկական զորաջոկատներով հանկարծակի ու սրընթաց հարձակումներով ոչնչացնում էր թշնամու ուժերը և քայլ առ քայլ ազատագրում երկիրը: Նա հարձակվեց նաև Տփղիսի (Թիֆլիս) ամիրայության վրա, ջախջախեց Յուսուֆի կայազորը:

Երկրի ուժերը կրկին պառակտելու միտումով արաբները Հայաստանի թագավոր հռչակեցին Աշոտի հորեղբորորդուն՝ Աշոտ սպարապետին: Աշոտ Երկաթը վճռական միջոցներով սատեց նրան և որոշ նախարարների: Հայ իշխանները հասկացան, որ փրկությունը միասնության մեջ է: Նրանք աստիճանաբար սկսեցին համախմբվել Աշոտ II–ի շուրջը: Գագիկ Արծրունին, զգալով իր վարմունքի կորստաբեր լինելը, երես թեքեց արաբներից: Նա, լեռներում ամրացած, հարվածներ էր հասցնում արաբներին, ազատագրում ու ամրապնդում Վասպուրականի թագավորությունը: Սյունյաց Սմբատ և Սահակ իշխանները, գործակցելով Աշոտ Երկաթի հետ, ազատագրում էին Հայաստանը:

Աշոտ Երկաթն իր ջոկատով 921 թ. ամրացել էր Սևանա կղզում: Արաբական զորքերը շրջապատեցին կղզին: Աշոտ II–ը, իր 70 ռազմիկներին տեղավորելով նավակներում, մի մառախլապատ օր դեռևս ափ չհասած, հանկարծակի սկսեց նետահարել արաբներին: Հայոց զորաջոկատի այդ անսպասելի ու համարձակ գործողությունը խուճապի մատնեց արաբներին: Գլխակորույս նահանջող թշնամու վրա Գառնիում հարձակվեց ***Գևորգ Մարզպետունի*** իշխանը և նոր ջարդ տվեց նրանց: Սևանի վճռական ճակատամարտից հետո ազատագրվեց կենտրոնական Հայաստանի մեծ մասը:

Բյուզանդիան Հայաստանի և Վրաստանի ուժերը ընդդեմ արաբների միավորելու փորձեր էր անում: Աշոտ II–ը 921 թ. մեկնեց Կոստանդնուպոլիս, որտեղ հակաարաբական դաշինք կնքեց:

Համոզվելով, որ Հայաստանը զենքի ուժով չեն կարող իրենց ենթարկել, արաբները զիջումների գնացին: Բաղդադի խալիֆը 922 թ. Աշոտ II–ին ոչ միայն թագ ուղարկեց, այլև ճանաչեց նրան Հայաստանի ***շահնշահ***, այսինքն՝ թագավորների թագավոր: Դրանով նա գերապատվություն էր ստանում մյուս թագավորների նկատմամբ: Արքայական այս բարձր տիտղոսը Բագրատունիները կրեցին մինչև վերջ: Ամրապնդելով իր իշխանությունը՝ Աշոտ շահնշահը կարճ ժամանակում հնազանդեցրեց կենտրոնախույս նախարարներին:

Այսպիսով՝ հայկական պետության պահպանման ու ամրապնդման համար մղվող պայքարն ավարտվեց հաղթանակով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք հայոց թագավորության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները:
2. Նախարարական ո՞ր տոհմը գլխավորեց Հայաստանի անկախության համար մղվող պայքարը: Ձեր կարծիքով ինչո՞ւ Մամիկոնյանները դուրս մղվեցին քաղաքական առաջնորդության համար մղվող պայքարից: Վերհիշե՛ք, թե ինչպես վերականգնվեց Հայաստանի ներքին ինքնավարությունը:
3. Ներկայացրեք Աշոտ Բագրատունու գործունեությունը հայոց թագավորության վերականգնման ուղղությամբ: Փաստացի ե՞րբ է Աշոտ Բագրատունին հռչակվել հայոց թագավոր: Բացատրեք հայ–բյուզանդական քաղաքական մերձեցման բուն պատճառն այս շրջանում: Ինչո՞ւ Վասիլ I կայսրը շտապեց ճանաչելու Աշոտի գահակալությունը և թագ ուղարկեց նրան: Պաշտոնապես ե՞րբ է վերականգնվել հայոց թագավորությունը: Ո՞վ և որտե՞ղ Աշոտին օծեց թագավոր:
4. Ցո՛ւյց տվեք Աշոտ I–ի և Սմբատ I–ի գործունեության արդյունքները երկրի միավորման ուղղությամբ: Ներկայացրե՛ք հայ–բյուզանդական և հայ–արաբական հարաբերությունները Սմբատ I Բագրատունու օրոք: Ինչո՞ւ Գագիկ Արծրունին պայքարի դուրս եկավ Սմբատ I–ի դեմ: Նշե՛ք այդ հակամարտության հետևանքները Հայաստանի համար:
5. Ո՞վ էր Աշոտ Երկաթը, ինչպե՞ս նա կարողացավ հաղթել արաբներին: Ե՞րբ նա ճանաչվեց շահնշահ: Բնութագրե՛ք Աշոտ Երկաթին:

§ 2. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼՔԸ

Հայաստանի բարգավաճումը: Անկախության ամրապնդումն ուղեկցվեց Հայաստանի տնտեսական և մշակութային վերելքով: Խաղաղ ու նպաստավոր պայմաններում անցան Աշոտ II–ի թագավորության վերջին տարիները: Քանի որ հայոց թագավորը զավակ չուներ, նրա մահվանից հետո գահ բարձրացավ եղբայրը՝ Կարսի կառավարիչ ***Աբասը (928–953)***: Նա Բագրատունիների նոր մայրաքաղաք դարձրեց ***Կարսը***, որը կարճ ժամանակում աճեց, կառուցապատվեց և դարձավ երկրի նշանավոր քաղաքներից մեկը:

Երկարատև ավերիչ պատերազմներից հետո երկրի բնակչությունը զբաղված էր քայքայված տնտեսությունը վերականգնելով ու բարեկարգելով: Միջնադարյան հասարակության տնտեսական գլխավոր հիմքը ավատատիրական հողատիրությունն էր: Չորային կլիմա ունեցող Հայաստանի համար բացառիկ նշանակություն ուներ ոռոգման համակարգի զարգացումը: Ահա թե ինչու երկրի հիմնական նահանգներում՝ Այրարատում, Սյունիքում, Վասպուրականում կառուցվեցին նոր ջրամբարներ, ջրանցքներ: Դարերով խոպան մնացած տարածությունները յուրացվում և մշակվում էին:

Կենտրոնական իշխանության հզորացման ու երկրի բարեշինմանն էր ձգտում նաև Հայ եկեղեցին: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Աբասը

կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Շիրակ: ***Անանիա Մոկացի*** կաթողիկոսը ***948 թ.*** Աղթամար կղզուց տեղափոխվեց Անիից հյուսիս գտնվող ***Արգինայի վանքը***: Եկեղեցին իր հերթին տեր դարձավ հողային մեծ տարածքների ու կալվածքների: Սկսեց ծավալվել եկեղեցական շինարարությունը, վանական համալիրների կառուցումը:

Երկրում սկսված տնտեսական, մշակութային վերելքը նշանավորում է զարգացման մի նոր աստիճան. ավատատիրությունը վաղմիջնադարյան փուլից թևակոխում էր զարգացած ավատատիրության դարաշրջան:

Աբասին հաջորդեց նրա որդին՝ ***Աշոտ III-ը (953-977)***: Նոր թագավորը պետության ամրապնդման ուղղությամբ սկսեց իրականացնել ավելի վճռական ու ծավալուն ձեռնարկումներ: Նա կազմակերպեց մեծ բանակ, և երբ Կովկասի լեռնարնակ ցեղերն ավարառության նպատակով ներխուժեցին Հայաստան, հայոց բանակը նրանց ջախջախեց և դուրս քշեց երկրից:

Հայ եկեղեցու որոշ թեմեր անջատողական հակումներ ունեին: Դա հայկական հզոր իշխանությունների ինքնիշխանական ձգտումների արտահայտությունն էր: Սյունյաց և Աղվանից (Արցախ և Ուտիք) թեմերը, հենվելով տեղի իշխանությունների աջակցության վրա, իրենց անկախ էին համարում: Սակայն Անանիա Մոկացի կաթողիկոսին հաջողվեց նրանց հնազանդեցնել: Դա, ըստ էության, Բագրատունյաց թագավորության հաղթանակն էր, նրա զորեղության և հեղինակության վկայությունը:

Հայաստանում մեծ չափերով ծավալվեցին շինարարական աշխատանքները: Խոսրովանույշ թագուհին Ձորագետի հովտում հիմնեց Սանահինի և Հաղպատի նշանավոր վանքերը, որոնք տնտեսապես հզորացան և շուտով ընդարձակ կալվածքների տեր դարձան: Դրանք առավել նշանավորվեցին որպես հայ մշակույթի խոշոր կենտրոններ: Երկրի գլխավոր նահանգներում և գավառներում հիմնվեցին վանքեր, դպրոցներ, հիվանդանոցներ: Աշոտ III թագավորը հատուկ հոգատարություն էր ցուցաբերում կարիքավորների՝ աղքատների, հիվանդների, անդամալույծների, կույրերի նկատմամբ: Նրանց համար բացում էր հիվանդանոցներ, անկելանոցներ և այլ բարեգործական հաստատություններ, որի համար էլ ստացավ

Անիի Սաբատաշեն պարիսպները

Ողորմած մականունը: Դրա հետ միասին նա աննահանջ ու հզոր էր երկրի անվտանգությանը սպառնացող թշնամիների հանդեպ:

Երկրի բարգավաճումն ու շինարարությունը ավելի մեծ թափով շարունակվեցին նրան հաջորդող ***Սմբատ II Տիեզերակալի (977–990)*** ժամանակ: Հայաստանում դեռևս գոյատևում էին արաբական որոշ կազմավորումներ: Դվինի ամիրան, որ շարունակում էր ժամանակ առ ժամանակ ըմբոստանալ Բագրատունիների դեմ, հանկարծակի հարձակվեց Շիրակի վրա: Սակայն Սմբատ II–ը կարողացավ ոչ միայն հետ մղել, այլև գլխովին ջախջախել թշնամուն: Նա Դվինի ամիրայությունը՝ արաբների այդ վերջին հենակետը, 987 թ. միացրեց իր թագավորությանը:

Անիի հռչակումը մայրաքաղաք: Բագրատունյաց թագավորությունը ներքին և արտաքին նպաստավոր պայմաններում բռնել էր վերելքի ուղին: Սակայն նա չուներ իր հիմնական նստավայրը: Զգացվում էր խոշոր կենտրոնի՝ մայրաքաղաքի անհրաժեշտությունը: Առաջին Բագրատունիները հաստատվել էին ***Բագարանում***, ապա՝ ***Երազգավորսում*** (Շիրակավան): Արասն իր նստավայրը դարձրեց Կարս քաղաքը, որն, լինելով թագավորության ծայրամասային մի գավառում, մայրաքաղաքի նշանակություն ձեռք չբերեց: Դվինը շարունակում էր մնալ արաբների ձեռքին: Դրանից բացի՝ այն չէր կարող մայրաքաղաք լինել, որովհետև դուրս էր Բագրատունիների հիմնական կենտրոնից՝ Շիրակից: Բարգավաճող Հայաստանին անհրաժեշտ էր ունենալ մեկ միավորող կենտրոն: Բագրատունիները նպատակահարմար գտան մայրաքաղաք

Անիի Ապուղամրենց Ս. Գրիգոր և Ս. Առաքելոց եկեղեցիները. X–XI դդ.

դարձնել Շիրակի նշանավոր Անի ամրոցը, որը Կամսարականներից էր անցել իրենց:

Անին 961 թ. հռչակվեց մայրաքաղաք: Նոր մայրաքաղաքն աշխարհագրական հարմար տեղանքում էր: Նա անառիկ դիրք ուներ և առևտրական բանուկ ուղիների վրա էր: Նոր մայրաքաղաքի հիմնումը խորհրդանշում էր Բագրատունյաց թագավորության՝ համահայկական պետություն դառնալու հանգամանքը: Այդ նպատակով Անին մայրաքաղաք դարձնելու տոնակատարությունը միացվեց Աշոտ III–ին թագադրելու հանդիսությունների հետ: Անի էին հրավիրվել «ամենայն իշխանքն տանն Հայոց», ամբողջ զորքը, Աղվանքի թագավորն իր շքախմբով, բարձրաստիճան հոգևորականներ և այլ նշանավոր դեմքեր: Բոլորի ներկայությամբ Անանիա կաթողիկոսը մեծ շուքով օծեց Աշոտ թագավորին: Նա հռչակվեց շահնշահ՝ արքայից արքա: Այդ հանդիսությունները ժամանակակիցների վրա այն տպավորությունն էին գործում, կարծես վերականգնվել էր Արշակունիների ժամանակվա համահայկական պետությունը: Աշոտի թագավորությունը օրինական ճանաչվեց Բյուզանդական կայսրության, աբխազների թագավորության, հարևան ամիրայությունների կողմից:

Աշոտ III–ը և նրա հաջորդները միջոցներ չէին խնայում նոր մայրաքաղաքը բարեկարգելու, շքեղ պալատներով, եկեղեցիներով, բնակելի շենքերով և այլ շինություններով կառուցապատելու համար: Աշոտ թագավորը 963–964 թթ. կառուցեց ընդարձակ քաղաքն իր մեջ ընդգրկող աշտարակազարդ պարիսպների առաջին գիծը (Աշոտաշեն): Կամսարականների նախկին ամրոցն ընդարձակվելով դարձավ Անի քաղաքի միջնաբերդը: Հետագայում քաղաքն այնքան էր ծավալվել, որ Սմբատ II թագավորը 989 թ. անհրաժեշտ համարեց կառուցելու վիթխարի քաղաքն իր մեջ ընդգրկող պարիսպների երկրորդ գիծը (Սմբատաշեն):

Մայրաքաղաքի՝ ճարտարապետական հոյակապ շինություններով կառուցապատումը շարունակվեց նաև հետագա տասնամյակներում: Քաղաքն ուներ ընդարձակ շուկա, իջևանատներ, հարյուրավոր եկեղեցիներ, տաճարներ, պալատներ, շքեղ հյուրանոցներ, աշխարհիկ բազմաթիվ շենքեր: Նա միջնադարյան Հայաստանի հոչակավոր ու ամենամեծ քաղաքն էր:

Անին խոշորագույն դեր խաղաց միջնադարյան Հայաստանի հասարակական–քաղաքական և մշակութային կյանքում:

Հայոց թագավորության հզորացումը X դ. վերջին և XI դ. սկզբին: Սմբատ II–ի մահից հետո գահ բարձրացավ նրա եղբայր ***Գագիկ I–ը (990–1020)***: Նա, որպես պետական ու ռազմական գործիչ, Բագրատունյաց թագավորների շարքում առավել տաղանդավորն էր: Գագիկի օրոք Բագրատունյաց թագավորությունը հասավ իր հզորության ու ծաղկման գագաթնակետին:

Նա ընդարձակեց իր պետության սահմանները: Դրա հետ մեկտեղ հարևանների հետ շարունակեց պահպանել խաղաղ, բարեկամական հարաբերություններ: Այդպիսի հարևաններից էին Տայքի կյուրապաղատությունը և վրաց թագավորությունը: Ատրպատականի Մամլան ամիրան, որին դուր չէր գալիս Հայաստանի և Վրաստանի հզորացումն ու դաշնակցությունը, երկու անգամ արշավանք կազմակերպեց: Հայ–վրացական միացյալ ուժերը ***998 թ. Սպահունիքի Ծոմը գյուղի*** մոտ պարտության մատնեցին Ատրպատականի ամիրային: Այդ կռիվներում աչքի ընկավ հայկական զորքերի հրամանատար, սպարապետ ***Վահրամ Պահլավունին***:

Հայաստանի տարբեր ծայրամասերում առաջացած թագավորությունները ենթակա էին Անիի Բագրատունիներին: Առանց շահնշահի հավանության նրանք չէին կարող գահակալել: Հայոց կաթողիկոսների ընտրությունն անգամ կատարվում էր Բագրատունյաց թագավորների միջնորդությամբ: Տաշիր–Զորագետի (Լոռի) թագավոր Դավիթը (989–1048) 1001 թ. անհնազանդություն հայտնեց և հրաժարվեց ճանաչելու հայոց թագավորի գերիշխանությունը: Գագիկի բանակը մտավ Տաշիր–Զորագետ և նվաճեց ամբողջ տարածքը: Դավիթ թագավորը երկրից փախավ՝ զրկվելով իր հողային տարածքներից: Այդ պատճառով էլ նա ստացավ «Անհողին» մականունը: Սակայն իր արարքի համար Դավիթը զղջաց, և հարցը խաղաղությամբ կարգավորվեց. Դավիթը գնաց իր հորեղբայր Գագիկ I–ի մոտ, ներում խնդրեց և հետ ստացավ իր տիրույթները:

Գագիկ I արքան ավելի ամրապնդեց ու մեծացրեց բանակը, որը նրա օրոք հզոր ուժ էր: Նա աստիճանաբար, բայց և հետևողականորեն ընդարձակում էր պետության

սահմանները: Նախ վերացրեց Վայոց ձորի իշխանությունը և նրա տարածքը միացրեց իր թագավորությանը: Ապա միացրեց Արցախի մեծ մասը, այդ թվում և Խաչեն գավառը: Հարավում Վասպուրականից անջատվեցին և Բագրատունիների տերությանը միացվեցին Կոգովիտ և Ծաղկոտն գավառները: Այդ մասին Անողիկ պատմիչը գրում է. *«Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»*:

Գագիկ I-ի թագավորության շրջանում հայկական տարածքների զգալի մասը փաստորեն միավորվել էր Բագրատունիների կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:

Տայքի Դավիթ կյուրապաղատը 1001 թ. մահացավ: Վասիլ II կայսրը զորքով շարժվեց դեպի Արևելք և կտակի համաձայն՝ Տայքը միացրեց կայսրությանը: Վրաստանի, Աբխազիայի և մյուս բոլոր թագավորներն ու նշանավոր իշխանները ներկայացան նրան և հայտնեցին իրենց նվիրվածությունը: Թեպետև կայսրը մոտեցել էր Հայաստանի կենտրոնական շրջաններին, բայց Գագիկ I-ը հարկ չհամարեց այցելելու նրան: Այդ քայլով հայոց թագավորը ցուցադրեց իր զորեղությունն ու արժանապատվությունը:

Գագիկ I-ի թագավորության տարիներին ավելի մեծ ծավալներով շարունակվում էին խաղաղ շինարարական աշխատանքները, երկիրն օրեցօր բարգավաճում էր: Ծաղկում էր Անի մայրաքաղաքը: Այնտեղ կառուցվում էին մեկը մյուսից գեղեցիկ շենքեր: Գագիկ I-ի կինը՝ ***Կատրամիդե*** թագուհին, 1001 թ. ավարտեց Անիի գլխավոր (կաթողիկե) եկեղեցու շինարարությունը հռչակավոր ճարտարապետ Տրդատի նախագծով: Այդ ժամանակ Զվարթնոցի նշանավոր տաճարը քանդվել էր: Գագիկը դրա նմանությամբ մի նոր տաճար կառուցեց Անիում:

Գագիկ I-ի ժամանակ հզորացավ Պահլավունիների իշխանական գերդաստանը: Այդ տոհմի ներկայացուցիչները ժառանգաբար վարում էին սպարապետի պաշտոնը: Պահլավունիները ևս շինարարական լայնածավալ աշխատանքներ էին սկսել: Նրանք են կառուցել ***Բջնիի նշանավոր ամրոցը և եկեղեցին, Ամբերդը, Սարմաշենը*** և այլն: Շինարարական աշխատանքներ էին ծավալվում նաև Վասպուրականում, Սյունիքում, Արցախում, Տաշիր-Զորագետում, Տարոնում և Հայաստանի տարբեր շրջաններում:

XI դ. հաջորդ տասնամյակներում՝ 1020-1030-ական թթ., շարունակվում էր երկրի տնտեսության բարգավաճումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Աբաս թագավորը: Ներկայացրեք Աշոտ III-ի կառավարման շրջանում երկրի ունեցած հաջողությունները:
2. Պարզաբանեք Սմբատ II-ի ներքին և արտաքին քաղաքականության արդյունքները:
3. Ձեր կարծիքով ինչո՞ւ Բագրատունիները կառուցեցին նոր մայրաքաղաք: Երբ և ո՞ւմ օրոք Անին հռչակվեց մայրաքաղաք:

4. Փաստերով հիմնավորեք, որ Գագիկ I–ի օրոք Բագրատունյաց թագավորությունը հասել էր մեծ հզորության: Իշխանական ո՞ր տոհմը նշանակալի դիրքերի հասավ նրա օրոք:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Բյուզանդացի պատմիչ Միքայել Ատտալիատեսը Անիի մասին

Անին մեծ ու բազմամարդ քաղաք է՝ շուրջբոլորը պատված անձեռակերտ խրամներով, բնական ու անանցանելի ձորերով ու գահավեժ ժայռերով, իսկ որտեղ չկան ուղղաբերձ դարափներ ու ձորեր, շրջապատված է խոր և անանցանելի գետով: Քաղաքի այն մասն էլ, որ հարթավայր է, պաշտպանված է հսկայական հզոր պարիսպներով:

§ 3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կառավարման համակարգը: Բագրատունյաց Հայաստանը միջնադարյան տիպի միապետություն էր: Հայկական պետության գլուխ կանգնած էր թագավորը՝ անսահմանափակ իշխանությամբ: Բագրատունի թագավորն ***ինքնակալ միապետ*** էր և անձամբ էր կարգադրում պետության գործերը: Նա երկրի տիրակալն էր, ներքին և արտաքին բոլոր հիմնական հարցերը վճռողը: Նա կարևոր հարցերում խորհրդակցում էր սպարապետի, կաթողիկոսի, իշխանաց իշխանի և այլ մեծամեծ պաշտոնյաների հետ: Բագրատունի թագավորների գահը ժառանգում էր ավագ որդին, հաճախ նաև եղբայրը:

Հայոց թագավորը կրում էր «շահնշահ հայոց» տիտղոսը: Դա նշանակում էր, որ Հայաստանի տարբեր մասերում առաջացած թագավորությունները և իշխանությունները, ինչպես նաև որոշ ամիրայություններ ենթակա էին Անիի Բագրատունիներին: Առանց շահնշահի հավանության ենթակա թագավորներն ու իշխանները չէին կարող գահակալել: Նրանք իրավասու չէին ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնելու հարևան պետությունների հետ: ***Բագրատունյաց Հայաստանը փաստորեն տարբեր թագավորություններից և իշխանություններից կազմված յուրահատուկ համադաշնություն էր՝ Անիի Բագրատունիների գլխավորությամբ:***

Բագրատունյաց թագավորության զինանշանն արծիվն էր, ինչպես եղել է նախկինում Արշակունիների և Արտաշեսյանների ժամանակաշրջանում:

Թագավորը պետությունը կառավարում էր բարձրաստիճան հատուկ պաշտոնյաների կամ գործակալությունների միջոցով: Պաշտոնները վստահվում էին թագավորական տան անդամներին և արքունիքին մոտ գտնվող խոշոր ավատատերերին: Գործակալությունների մեջ կարևոր էին ***իշխանաց իշխանի*** և ***հայոց սպարապետի*** պաշտոնները:

Իշխանաց իշխանը թագավորին հաշվետու էր ենթակա իշխանների գործունեության համար: Նրան էին ենթարկվում արքայական կալվածքների տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները, հարկահանները: Այդ բարձր պաշտոնը սովորաբար տրվում էր արքայի եղբորը կամ զահաժառանգին:

Հայոց սպարապետը պետության զինված ուժերի՝ բանակի հրամանատարն էր: Պատերազմի ժամանակ ենթակա թագավորությունների զորքերի հրամանատարները ենթարկվում էին հայոց սպարապետին: Անիի թագավորությունում X դ. վերջերից այդ պաշտոնը վարում էին Պահլավունիները:

Բագրատունի թագավորները հատուկ նշանակություն էին տալիս բանակի կազմակերպմանը: Մշտական բանակը պատերազմների ժամանակ համալրվում էր՝ հասնելով 90–100 հազարի: Բանակը կազմված էր ***արքունական*** և ***մարզպանական*** գնդերից: Արքունի գունդն անմիջականորեն ենթարկվում էր թագավորին, իսկ մարզպանական գունդը իշխաններին ենթակա զորամասն էր: Բանակը կազմված էր հեծելազորից և դրանից կրկնակի ավելի հետևակից: Հայոց զորքի հիմքը այրուձին էր՝ հեծելազորը: Բագրատունի թագավորների հենարանը արքունական գունդն էր, որը կազմված էր թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից և պահվում էր մեծ մասամբ մայրաքաղաքում ու արքայական ամրոցներում: Հայկական բանակում Բագրատունիների օրոք լեզգիներից և այլ ցեղերից օգտագործել են (շատ սահմանափակ թվով) վարձու զինվորներ:

Միջնադարում եկեղեցին մեծ մասնակցություն ուներ երկրի կառավարման համակարգում: Բագրատունի թագավորների համար եկեղեցու դերն ավելի մեծացավ հատկապես X դ. երկրորդ կեսից սկսած: Նրանց տիրապետությունը հեռավոր իշխանությունների վրա հաճախ ձևական բնույթ էր կրում, ***եկեղեցին էր ապահովում երկրի միասնականությունը***: Բոլոր եպիսկոպոսական թեմերը ենթակա էին հայոց կաթողիկոսին, որն իր հերթին ճանաչում էր թագավորի գերիշխանությունը: Անին մայրաքաղաք դառնալուց հետո նրա մերձակայքում գտնվող Արգինան ի վերջո դարձավ հայոց կաթողիկոսների մշտական նստավայր: Բագրատունիների ժամանակաշրջանում չկար Արշակունյաց շրջանին այնքան հատուկ հակասությունը թագավորական իշխանության և եկեղեցու միջև: Հայոց թագավորի դիրքորոշումը վճռական էր կաթողիկոսի ընտրության ժամանակ: Մեծ դատավորի իրավունքն առաջվա նման պատկանում էր հայոց կաթողիկոսին: Փոքր գործերի դատավարությունը կատարվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոններով և սովորութային իրավունքի նորմերով:

Խոշոր հողատեր էր դարձել նաև Հայոց եկեղեցին: Վանքերը տիրում էին բազմաթիվ գյուղերի՝ իրենց հողով ու ջրով: Տաթևի վանքին, օրինակ, X դ. սկզբներին պատկանում էր 22 գյուղ: Հայոց կաթողիկոսի տիրույթներն ու հարստություններն ավելի մեծ էին:

Գյուղատնտեսությունը: Օտար տիրապետության տապալումից հետո սկսված երկարատև խաղաղությունը երկրի տնտեսության վերելքի համար լայն հնարավորություններ ստեղծեց: Դրան նպաստում էին նաև ավատատիրական հարաբերությունների զարգացումը:

Երկրի բարեկեցության հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն էր, իսկ զարգացած միջնադարում քաղաքներում տիրապետող էին արհեստներն ու առևտուրը: Երկրագործության համար բարենպաստ պայմաններ ուներ Հայաստանը: Խոշոր գետերի հովիտները գյուղատնտեսության զարգացման համար լավագույն պայմաններ էին ստեղծում:

Նշանավոր էին Արարատյան, Շիրակի, Տարոնի, Բագրևանդի դաշտերը: Զարգացած ավատատիրության այս շրջանում որոշակի առաջադիմություն ապրեց երկրագործությունը, կատարելագործվեց երկրագործական տեխնիկան: Դաշտավարության մեջ կարևոր նորություն էր երկաթե խոփ ունեցող ծանր գութանի կիրառումը: Այն օգտագործվում էր հատկապես խոշոր տնտեսություններում, որով հեշտությամբ վարում էին նաև խոպան հողերը:

Մեծ տարածում գտավ հողի մշակման ***եռադաշտային համակարգը***: Վարելահողերը բաժանվում էին երեք մասի: Մի մասում ցել էր արվում, այսինքն՝ հողը հերկվում և առանց ցանքս անելու թողնվում էր այդպես հանգստանալու: Վարելահողերի երկրորդ մասում աշնանացան էր կատարվում, իսկ երրորդ մասում՝ գարնանացան: Եռադաշտային համակարգը բերքատվությունը բարձրացնելու նպատակով հողին հանգիստ տալու հնարավորություն էր ընձեռում: Դա հողամշակության զարգացման գործում որոշակի առաջընթաց էր:

Երկրագործության վերելքի կարևոր պայմաններից էր ոռոգման համակարգի զարգացումը: Ընդարձակվեց ***ոռոգման ցանցը***: Օգտագործվում էին հնից մնացած, դեռևս Վանի թագավորության շրջանի ջրանցքները, կառուցվում էին նոր ջրանցքներ, ջրամբարներ: Ոռոգելի երկրագործությունը մեծապես նպաստում էր այգեգործության, ինչպես նաև դաշտավարության զարգացմանը: Գինու հնձանները, ձիթհաններն ու ջրաղացներն ավելի լայն տարածում էին ստանում: Մինչ այդ եղած աղբյուրներում գրեթե հիշատակություններ չկային ջրաղացների մասին:

Տարածված էր ցորենի, գարու, հաճարի, բրնձի մշակումը: Ընդարձակվեց նաև տեխնիկական բույսերի՝ բամբակի, կտավատի, քնջութի, կանեփի մշակումը:

Գյուղատնտեսության ճյուղերից զարգանում էին նաև ***այգեգործությունն*** ու ***բանջարաբուծությունը***: Հարթավայրերում, գետերի մերձակա դաշտերում աճեցվում էին պտղատու ծառեր: Ծառապտուղներից տարածված էին ծիրանը, դեղձը, տանձը, խնձորը, սալորը, ընկույզը: Արարատյան դաշտում, Վանա լճի շրջակայքում, Հայաստանի հարավի տաք վայրերում լայնորեն մշակվում էր խաղող: Եթե խաղողագործությունը ավանդական զբաղմունք էր Հայաստանում, ապա բանջարանոցային որոշ բույսերի մշակումը նորություն էր: Դրանցից էին լոբին, վարունգը, կաղամբը, գազարը, ձմերուկը և այլն: Զարգանում էր նաև ***շերամապահությունը***:

Խոպան հողերի հաշվին աճում էին մշակելի հողատարածքները: Մշակելի դարձած հողային տարածքներն անվանում էին ***նորք***: IX–XI դդ. հողօգտագործման եղանակների մեջ կատարված տեղաշարժերից նշանակալից էր ավատատիրական խոշոր տնտեսության՝ տերունի կալվածքների առաջացումը:

Անասնապահությունը: Անասնապահությունը գյուղատնտեսության կարևոր ճյուղերից էր: Երկրի լեռնային մասերի ալպյան ընդարձակ արոտավայրերն անասնապահության զարգացման համար լայն հնարավորություններ էին ստեղծում: Այդպիսի արոտավայրերով հարուստ էին մասնավորապես Արագածի լանջերը, Սյունիքը, Սևանի ավազանը, Տաշիր–Զորագետը, Վասպուրականը, Տարոնը և այլն: Նախալեռնային շրջանների և դաշտերի խոտհարքներն ապահովում էին անասունների ձմեռային կերը:

Պահվում էին մեծ քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր անասուններ՝ կով, եզ, գոմեշ, ձի, էշ, ոչխար, այծ: Ժամանակակից պատմիչը վկայում է, որ Աշոտ I թագավորը հայոց կաթողիկոսին նվիրել է «ձիերի երամակներ, տավարի նախիրներ և ոչխարի հոտեր»: Երկար տարիներ Հայաստանում եղած արաբ հեղինակը վկայում է, որ «չի տեսել ավելի հարուստ և անասունների թվով ավելի նշանակալից մի երկիր, քան Արմինիան»:

Անասնապահությունը տնտեսության մեջ ծանրակշիռ դեր էր կատարում: Լայնորեն օգտագործվում էին կաթնամթերքը, միսը, կաշին: Ոչխարի հոտերից ստացվող բուրդն օգտագործվում էր գորգեր, հագուստ և տարատեսակ գործվածքներ պատրաստելու համար: Անասնապահությունը բավարարում էր քաշող ուժի և տրանսպորտի պահանջները: Դաշտավարության մեջ հողի հերկումը կատարվում էր խոշոր եղջերավոր անասունների միջոցով: Ձիերը, ավանակներն ու խոշոր եղջերավոր անասուններն օգտագործվում էին որպես տրանսպորտի հիմնական միջոցներ: Դրանցով բեռներ էին տեղափոխում կամ սայլերի, կառքերի համար օգտագործում էին որպես քաշող ուժ:

Բնակչության տնտեսական կյանքում որոշակի տեղ էին զբաղեցնում նաև մեղվաբուծությունը, որսորդությունը, ձկնորսությունը:

Արհեստագործությունը: Երկրի տնտեսության ու մշակույթի ընդհանուր վերելքի պայմաններում առաջադիմում և առավել մասնագիտանում էին արհեստների առանձին ճյուղեր: Համապատասխան հումքի առկայությունը խթանում էր արհեստագործության զարգացումը: Գյուղատնտեսությունից ստացվող տարատեսակ հումքը՝ բուրդը, կաշին, բամբակը, մետաքսը, մորթին, լայն հնարավորություններ էին ընձեռում մանածագործական և կաշեգործական արհեստների առաջադիմության համար:

Բագրատունյաց ժամանակաշրջանի տևական խաղաղ պայմաններում ***արհեստագործությունն այնքան առաջադիմեց, որ անջատվեց երկրագործությունից***:

Հիմնական արհեստներից էր մետաղագործությունը: Արհեստի այս ճյուղից զարգացած էին դարբնությունը, զինագործությունը, պղնձագործությունը և ոսկերչությունը: Մետաղագործ վարպետները պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ, սառը զենքեր, խոհանոցային ամանեղեն, եկեղեցական սպասք, պերճանքի առարկաներ ու զարդեր: Հայտնի էին հատկապես ոսկերչական բարձրարվեստ իրերը:

Մեծ հռչակ էին վայելում հայ շինարարները, ճարտարապետները, քարագործ վարպետները: Նրանք կառուցում էին բերդեր, քարավանատներ, աշխարհիկ ու եկեղեցական շենքեր, կամուրջներ և այլ շինություններ, դրանք զարդարում նրբաճաշակ քանդակներով:

Հյուսները պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ, շենքերի փայտյա մասեր, կահույք, կենցաղային իրեր և այլն: Ծաղկում էր ապրում փայտի փորագրությունը, որի գեղեցիկ նմուշները պահպանվել ու հասել են մեզ: Տարածում գտած արհեստներից էր կաշեգործությունը: Արհեստի այս տեսակը հայ մարդու կենցաղի անբաժանելի մասն էր կազմում: Կաշեգործական արհեստներից տարածված էին կոշկակարությունը, մորթեգործությունը, գդակագործությունը:

Հայաստանը հայտնի էր իր մանածագործական արտադրանքով: Հատուկ արհեստանոցներում պատրաստում էին Արևելքում մեծ հռչակ վայելող բրդե և մետաքսե գործվածքներ: Դրանք մեծ սպառում ունեին և՛ երկրի ներսում, և՛ արտաքին շուկայում: ***Արաբ հեղինակ Մասուդին*** գրում է. *«Հայկական գործվածքներն այնքան գեղեցիկ են, որ նրանց նմանը չկա ծայրից ծայր ամբողջ աշխարհում»*: Միջազգային շուկաներում հայտնի էին հայկական գորգերը: Դրանք տարածում էին գտել Արևելքի երկրներում, Վոլգայի բուլղարների ու սլավոնների մոտ:

Մանածագործության հետ սերտորեն կապված էր նաև ներկերի արտադրությունը: Դվինն իր շրջակայքով հայտնի էր որպես ***որդան կարմիր*** հռչակավոր ներկի արտադրության կենտրոն: Որդան կարմիր ներկը մեծ պահանջարկ ուներ նաև արտաքին շուկաներում:

Բարձր զարգացման էր հասել կավագործությունը: Կավե ամանները, հատկապես կարասը, լայն տարածում ունեին կենցաղում: Դվինը և Անին հայտնի էին իրենց բրուտանոցներով: Հայաստանի քաղաքներում IX–XI դդ. արտադրվում էին գույնզգույն նախշերով զարդարված բազմատեսակ անոթներ ու ամանեղեն: Հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են հարուստ ու բազմազան խեցեղեն, նրբորեն մշակված ապակեղեն:

Արհեստների զարգացման հետ խորանում է դրանց ներսում ***աշխատանքի բաժանումը***: Մայր արհեստը ճյուղավորվում է, և առաջ են գալիս նոր մասնագիտություններ: Կատարելագործվում ու զարգանում է արհեստագործական տեխնիկան:

Առևտուրը: Հայաստանի տնտեսության ընդհանուր վերելքը խթանեց նաև առևտրի բուռն զարգացումը: Գյուղացին իր մթերքը շուկա էր հանում, որպեսզի գներ գործիքներ, հագուստ, կենցաղային իրեր: Արհեստավորն էլ իր արտադրանքն էր վաճառքի հանում անհրաժեշտ հումք և ապրուստի միջոցներ գնելու համար: Այսպիսով՝ քաղաքի և գյուղի միջև տեղի էր ունենում աշխույժ առևտուր:

Մանրավաճառ առևտրականները՝ ***փերեզակները***, զամբյուղները ձեռքներին շրջում էին քաղաքներում ու գյուղերում և վաճառում զանազան կենցաղային իրեր: Երկրի ներքին առևտրի զարգացման շնորհիվ խոշոր քաղաքներում առաջանում էին մշտական շուկաներ: Քաղաքներում և առևտրական ճանապարհների խաչմերուկներում կազմակերպվում էին կիրակնօրյա շուկաներ, ***տոնավաճառներ***:

Երկրի ներքին առևտրին զուգընթաց IX–XI դդ. աշխուժանում էր հատկապես ***արտաքին առևտուրը***: Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի միջև կրկնվող պատերազմների պատճառով չեզոք Հայաստանը դարձել էր տարանցիկ առևտրի կարևոր կենտրոն: Հայաստանի վրայով էին անցնում արևելքը և արևմուտքը, հյուսիսն ու հարավն իրար կապող միջազգային առևտրի կարևոր մայրուղիները: Այդ առևտուրն ընդգրկում էր Միջին Արևելքը, Արաբական խալիֆայությունը և Բյուզանդիան, հասնում մինչև Հնդկաստան և Չինաստան:

Հայաստանն արտաքին առևտրին մասնակցում էր նաև իր սեփական արտադրանքով: Հայաստանից արտահանվում էին հացահատիկ, ձիեր, ջորիներ, երկաթ, պղինձ, աղ, գինի, ներկեր և այլն: Արտահանվող ապրանքների մեջ զգալի տեղ էր գրավում արհեստագործական արտադրանքը: Դրանցից էին մետաղյա

գործիքները, ոսկյա և արծաթյա իրերը, պղնձյա ամանեղենը, բրդյա և մետաքսյա գործվածքեղենը և այլն:

Առևտրական քարավանները դրսից Հայաստան էին բերում հնդկական համեմունքներ, թանկագին քարեր, չինական ու միջինասիական մետաքսյա գործվածքներ, ռուսական մորթիներ ու մուշտակներ և այլն:

Առևտրի ծավալման շնորհիվ մեծացավ դրամական շրջանառությունը, բարձրացավ փողի դերը: Միջազգային առևտուրը նպաստում էր քարավանային առևտրի գլխավոր ճանապարհների վրա գտնվող հայկական քաղաքների բարգավաճմանը:

Քաղաքները: Բագրատունիների ժամանակաշրջանը նշանավորվում է նաև մեկ այլ կարևոր առանձնահատկությամբ՝ բազմաթիվ քաղաքների առաջացումով ու բուռն աճով: Դա կապված էր աշխատանքի հասարակական բաժանման, արհեստների և առևտրի՝ մանավանդ միջազգային առևտրի զարգացման հետ: Հին քաղաքների տեղերում կամ նոր վայրերում առաջացան տասնյակ քաղաքներ: Դրանցից արագ զարգացան առանձին իշխանությունների կենտրոններն ու միջազգային առևտրական ուղիների վրա գտնվող քաղաքները:

Քաղաքի կենտրոնական մասում սովորաբար ***միջնաբերդն*** էր: Այնտեղ էր գտնվում արքունիքը կամ իշխանի դղյակը՝ իր օժանդակ շենքերով: Այստեղ էին նաև ազդեցիկ իշխանավորների և բարձր հոգևորականության պալատները: Միջնաբերդը շրջապատված էր առանձին պարսպով: Միջնաբերդի շուրջը տարածվում էր բուն քաղաքը, որը կոչվում էր ***շահաստան:*** Այստեղ կենտրոնացած էին հարուստ վաճառականների շենքերը, շուկաները, արհեստավորական գործատները, հյուրանոցները և այլն: Շահաստանը ևս շրջապատված էր արտաքին պարսպով: Դրանից դուրս քաղաքի արվարձաններն էին, որտեղ բնակվում էին ընչազուրկ խավերը:

Քաղաքը կառավարում էր քաղաքապետը՝ ***շահապը:*** Հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևում էր հատուկ մի պաշտոնյա, որը կոչվում էր ***մուհթասիբ:*** Որոշ խոշոր քաղաքներ կառավարվում էին ավագների խորհրդի կողմից:

Իշխանական դասը, ինչպես նաև հոգևորականները, քաղաքներում ունեին խանութներ, արհեստանոցներ, ձիթհաններ, ջրաղացներ, հյուրանոցներ: Քաղաքների կյանքում գյուղատնտեսությունը նույնպես կարևոր, երբեմն գերակշիռ դեր էր կատարում: Դրանք ունեին իրենց վարելահողերը, այգիները, անասունները:

Հայաստանի նշանավոր քաղաքները մանր թագավորությունների կամ իշխանությունների կենտրոններ էին: Խոշոր ավատատերերը մրցում էին իրար հետ՝ իրենց մայրաքաղաքում կամ կենտրոնում կառուցելով պալատներ, տաճարներ և այլ շինություններ:

Միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր քաղաքը ***Անին*** էր: Քաղաքի միջնաբերդը բարձրանում էր Ախուրյան գետի աջ ափի մի ժայռաբլրի վրա: Միջնաբերդից իջնող հարթության վրա փռված էր քաղաքը: Առևտուրը կատարվում էր հատուկ հրապարակում, որտեղ իրար էին հանդիպում տարբեր երկրներից ժամանած վաճառականներ: Քաղաքի բնակչությանը խմելու ջրով ապահովելու համար կավե խողովակներով 12 կմ հեռավորությունից ջուր է բերվել: Անի մայրաքաղաքը զարդարված էր բազմաթիվ գեղեցիկ պալատներով, եկեղեցիներով: Քաղաքը կառուցապատված էր քարակերտ շենքե-

րով, ուներ սալահատակված մայթերով բարեկարգ փողոցներ: Այն միջնադարյան հայ մշակույթի, արհեստների, հատկապես ճարտարապետության ամենանշանավոր կենտրոնն էր: ***Անին ուներ քաղաքային ինքնավարություն***, որի գլուխ կանգնած էր քաղաքի ավագների խորհուրդը:

Դվինը, մի որոշ ժամանակ լինելով խալիֆայության «Արմինիա» վարչաքաղաքական միավորի կենտրոնը, բարգավաճում էր: Քաղաքի միջնաբերդը շրջակայքի վրա իշխող բլրի վրա էր և շրջապատված էր պարիսպներով: Ընդարձակ քաղաքը փռված էր բլրի ստորոտում և նույնպես շրջապատված էր բարձր պարիսպներով: Երկրի մայրաքաղաքի դերը Դվինը զիջել էր Անիին, բայց պահպանում էր խոշոր կենտրոնի նշանակությունը: Քաղաքն ուներ ընդարձակ շուկա և մեծ թվով արհեստանոցներ: Նա միջազգային քարավանային առևտրի և արհեստների խոշոր կենտրոն էր: Ավերիչ երկրաշարժի (893 թ.) հետևանքով շատ շենքեր կործանվեցին, սակայն քաղաքն աստիճանաբար վերաշինվեց և պահպանեց առևտրաարհեստագործական խոշոր կենտրոնի իր դերը:

Բագրատունյաց Հայաստանում նշանավոր քաղաքներ էին նաև ***Կարսը, Արծնը, Վանը*** և շուրջ երեք տասնյակի հասնող մեծ ու փոքր այլ քաղաքներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Գծապատկերի միջոցով ներկայացրեք Բագրատունյաց Հայաստանի պետական կառավարման համակարգը: Այն համեմատեք վաղ միջնադարի Հայաստանի կառավարման համակարգի հետ:
2. Տնտեսության ո՞ր ճյուղերը վերելք ապրեցին զարգացած միջնադարում: Ցո՛ւյց տվեք գյուղատնտեսության բնագավառում ի հայտ եկած նորությունները: Բացահայտեք հողի մշակման եռադաշտային համակարգի առավելությունը:
3. Պարզաբանեք արհեստների վերելքի նախադրյալները: Արհեստների ի՞նչ նոր տեսակներ զարգացան Հայաստանում: Ներկայացրեք արհեստագործության բնագավառի փոփոխությունները:
4. Որո՞նք էին առևտրի զարգացման նախադրյալները Բագրատունյաց Հայաստանում: Ներկայացրեք երկրի ներքին և արտաքին առևտուրը: Արտաքին շուկայում ինչո՞վ էր հայտնի Հայաստանը:
5. Որո՞նք էին քաղաքային կյանքի վերելքի պատճառները: Թվարկեք զարգացած միջնադարի հայկական քաղաքները: Նկարագրեք այդ ժամանակի քաղաքը, համեմատեք ժամանակի եվրոպական քաղաքի հետ:

§ 4. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՏՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Կենտրոնացված պետություն ստեղծելու ջանքերը: Բագրատունի թագավորները ձգտում էին ամբողջ Հայաստանը միավորելու մեկ միասնական, կենտրոնացված պետության մեջ: Նրանց այդ քաղաքականությունը հանդիպում էր երկրի ներքին ու արտաքին ուժերի համառ դիմադրությանը: Երկրի, հատկապես ծայրագավառների նշանավոր իշխանու-

Գագիկ թագավոր. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի, 915–921 թթ.

թյունները տնտեսական և ռազմական բավարար հզորություն ունեին և ինքնաբավ կյանք էին վարում: Նրանք կենտրոնական պետության պահանջը չէին զգում, այդ պատճառով էլ ձգտում էին ինքնուրույնության կամ անկախության:

Նրանց կենտրոնախույս փորձերը խրախուսվում էին սահմանակից Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության կողմից: Խալիֆայությունը չէր հաշտվում Հայաստանը կորցնելու իրողության հետ և ամեն կերպ աջակցում էր կենտրոնախույս ուժերին:

Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու, Հայաստանի արևմտյան տարածքները կայսրությանը միացնելու հետևողական քաղաքականություն էր վարում: Խորամանկ ու դավադիր քայլերով նա աստիճանաբար իրականացնում էր իր նվաճողական ծրագիրը:

Բագրատունի թագավորները պայքարում էին ներքին պառակտիչ ուժերի դեմ և փորձում էին ուժեղացնել միասնական կենտրոնական իշխանությունը: Նրանք այդ բնագավառում նկատելի հաջողություններ ունեցան, սակայն վերջնական հաղթանակի չհասան:

Զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում բոլոր երկրներում տիրապետող են եղել ավատատիրական մասնատվածությունը և կենտրոնախույս ձգտումները: Սակայն առաջին հերթին երկրի տնտեսական ընդհանուր զարգացումը խթանում և ի վերջո հանգեցնում էր միավորման ու միասնական կենտրոնացված պետության ստեղծման: Հայաստանում լիովի առկա էին տնտեսական զարգացման գործոնը և մյուս հանգամանքները: Այդուհանդերձ, ինչո՞ւ տեղի չունեցավ այդ միավորումը՝ միասնական կենտրոնացված պետության ստեղծումը. մի երևույթ, որը բախտորոշ նշանակություն կունենար Հայաստանի և հայ ժողովրդի հետագա պատմական ճակատագրում: Դրա գլխավոր պատճառն անհրաժեշտ է որոնել արտաքին գործոնների մեջ: Պատմական այդ բնական գործընթացի իրականացմանը խանգարեց Բյուզանդական կայսրությունը, որը տիրեց երկրի զգալի մասին և ապա վերջ տվեց Բագրատունյաց կենտրոնական թագավորությանը:

Հայկական ենթակա թագավորությունների առաջացումը: Ենթակա թագավորությունների մեջ ***Վասպուրականն*** ամենից ընդարձակն էր: Այն ընդգրկում էր Վանա և Կապուտան լճերի միջև ընկած տարածքը: Ինչպես ասվել է, խալիֆայությունը Գագիկ Արծրունուն 908 թ. ճանաչել էր թագավոր: Արծրունիներն ընդունում էին Բագրատունիների գերիշխանությունը, որը հաճախ ձևական բնույթ էր կրում: Վասպուրականով էր անցնում միջազգային առևտրի հարավային ուղին, որի վրա առաջացել էին առևտրական խոշոր

կենտրոններ ***Վանը, Բերկրին, Արճեշը, Մանազկերտը***: Գագիկ Արծրունու օրոք՝ X դ. առաջին կեսին, Վասպուրականը տնտեսական և մշակութային վերելք ապրեց: Պատմական աղբյուրների համաձայն՝ Վասպուրականն ուներ 8 քաղաք, 4000 գյուղ, 72 ամրոց ու բերդ, 115 վանք: Նրա բնակչությունը պատկառելի թիվ էր կազմում՝ հասնելով 1 միլիոնի:

Անիի Բագրատունիների հետ սերտ հարաբերությունների մեջ էր ***Վանանդի*** կամ ***Կարսի*** թագավորությունը: Այն գոյություն ունեցավ մեկ դար (963–1065): Երբ Աշոտ III–ը մայրաքաղաքը տեղափոխեց Անի, Կարսի կառավարիչ նշանակեց իր եղբորը՝ Մուշեղ Բագրատունուն, որն իրեն թագավոր հռչակեց: Աշոտ III–ը 963 թ. ճանաչեց նրա թագավորությունը՝ իրեն ենթակա լինելու պայմանով: Այսպես առաջացավ Բագրատունյաց մի նոր թագավորություն: Մուշեղին հաջորդեց Աբասը, որը հատուկ ուշադրություն դարձրեց զորքին: Նա իր հեծյալ զորքով ակտիվ մասնակցեց արաբների դեմ հայերի և վրացիների արշավանքներին:

Հաջորդը ստեղծվեց ***Տաշիր–Ձորագետի*** կամ ***Լոռու*** թագավորությունը՝ նույնպես Բագրատունիների գլխավորությամբ: Տաշիրի կառավարիչ էր նշանակվել Աշոտ III–ի որդի ***Գուրգենը***, որին Սմբատ II–ը ***978 թ.*** թագավորի տիտղոս շնորհեց: Այդպես հիմնադրվեց Տաշիր–Ձորագետի թագավորությունը: Գուրգեն թագավորը, ստանալով տեղական «Կյուրիկե» անվանումը, հիմք դրեց Կյուրիկյան հարստությանը: Սա ևս ենթակա էր Անիի Բագրատունիների գերիշխանությանը: Այս թագավորությունը զբաղեցնում էր Գուգարք նահանգի մեծագույն մասը: Տաշիր–Ձորագետի քաղաքները, սերտ կապերի մեջ լինելով Անիի, Դվինի, Տփղիսի հետ, մասնակցում էին միջազգային առևտրին:

Կյուրիկյանների թագավորությունն առավել հզորության հասավ ***Դավիթ Անհողինի***՝ շուրջ 60 տարի տևած (989–1048) կառավարման շրջանում: Նա ընդարձակեց իր թագավորության սահմանները Գանձակի և Տփղիսի ամիրայություններին հաշվին: Տաշիր–Ձորագետի կենտրոնը դարձավ ***Լոռի (Լոռե)*** քաղաքը, որի ավերակները Ստեփանավան քաղաքի մոտ են: Այս թագավորությունը գոյատևեց մինչև ***1113 թվականը***:

Սյունիքի նշանավոր իշխան Սմբատը ***987 թ.*** հիմնեց Սյունիքի թագավորությունը՝ ճանաչելով Անիի Բագրատունիների գերիշխանությունը: Ենթակա թագավորություններից սա ամենաերկար կյանքն ունեցավ՝ իր գոյությունը պահպանելով շուրջ երկու դար՝ մինչև ***1170 թ.***: Թագավորության կենտրոնը սկզբում Սյունի ավանն էր (այժմ՝ Սիսիան), որը ռազմական և առևտրական առումով անհարմար վայրում էր: Այդ պատճառով մայրաքաղաքը տեղափոխվեց ***Կապան***: Սյունիքի թագավորությունը մեծ վերելք ապրեց Վասակ թագավորի ժամանակ: Համեմատաբար փոքր տարածք ունեցող այս թագավորությունը բավականաչափ խիտ բնակչություն ուներ: Սյունիքում XII դ. կային 43 ամրոց ու բերդ, 40 վանք և 1000–ից ավելի գյուղ ու ավան:

Բյուզանդիայի նախաձողական քաղաքականությունը: Գագիկ I–ի մահից հետո գահին տիրանալու համար պայքար սկսվեց նրա երկու զավակների միջև: Վրաց թագավորի և զորավար Վահրամ Պահլավունու միջնորդությամբ կայացավ հաշտություն: Ավագ որդին՝ Հովհաննես–Սմբատը, ժառանգեց հոր գա-

հը և ստացավ Անի քաղաքն ու Շիրակը: Կրտսեր եղբորը՝ եռանդուն զինվորական ***Աշոտ IV-ին***, բաժին ընկան Սևանի ավազանը, Գուգարքը և որոշ այլ գավառներ: Ըստ պայմանավորվածության՝ Հովհաննես-Սմբատի մահից հետո Աշոտը ժառանգելու էր ամբողջ թագավորությունը: Այսպիսով՝ Անիի թագավորությունը փաստացի երկու մասի բաժանվեց և հենց դրանով թուլացավ: Նրան ենթակա թագավորություններն ավելի ինքնիշխան դարձան:

X դ. երկրորդ կեսից Բյուզանդիան սկսեց վարել հայկական տարածքները բռնազավթելու հետևողական քաղաքականություն: ***Տարոնում*** հաստատվել էր Բագրատունիների ինքնուրույն մի իշխանություն, որը 966 թ. միացվեց կայսրությանը: Տարոնից հետո բյուզանդացիները գրավեցին Մանազկերտը: Միայն ազատասեր Սասունն էր, որ պահպանեց իր անկախությունը: Դրանից հետո Բյուզանդիայի քաղաքականության զոհ դարձավ ***Տայքը***: Տայքում առաջացել էր հայ-վրացական խառը բնակչությամբ զորեղ մի իշխանություն՝ Դավիթ Կյուրապաղատի գլխավորությամբ: Վասիլ II կայսրը հարկադրեց Դավիթ իշխանին, որ Տայքը կտակի կայսրությանը: Դավիթ Կյուրապաղատը շուտով մահացավ և 1001 թ. Վասիլ II կայսրը զորքով եկավ ու Տայքը միացրեց Բյուզանդիային: Վրաց Բագրատունիները փորձեցին այն վերադարձնել, բայց հաջողություն չունեցան:

Տայքի հիմնախնդրի շուրջ Բյուզանդիայի և Վրաստանի միջև 1022 թ. Տրապիզոնում տեղի ունեցած բանակցություններին Հայաստանից մասնակցում էր ***Պետրոս*** կաթողիկոսը: Վասիլ II կայսրը նրանից պահանջեց, որ Անիի թագավորությունը հանձնվի Բյուզանդիային: Թուլամորթ թագավոր ***Հովհաննես-Սմբատը*** կայսրի և կաթողիկոսի ճնշման տակ ստորագրեց մի ամոթալի կտակ, որի համաձայն՝ Անիի թագավորությունը իր մահից հետո պետք է անցներ Բյուզանդիային:

Բյուզանդիայի զոհը դարձավ նաև ***Վասպուրականը***, որն այդ շրջանում ենթարկվում էր թյուրք-սելջուկների ցեղերի հարձակումներին: Վասիլ II-ը 1021 թ. հարկադրեց Սենեքերիմ Արծրունուն Վասպուրականը հանձնել կայսրությանը: Դրա փոխարեն նա Սենեքերիմին տվեց ***Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքն*** իր շրջակայքով: Սենեքերիմ Արծրունու հետ Սեբաստիա գաղթեցին տասնյակ հազարավոր հայեր:

Այսպես՝ Հայաստանի մեծ մասն անցավ Բյուզանդիային: Հերթը հասել էր Անիի թագավորությանը:

Պայքար թագավորության պահպանման համար. Անիի անկումը: Անին Բյուզանդիային կտակելը գաղտնի էր պահվում, այդ պատճառով եղբայրների միջև բախում չառաջացավ: Խաղաղ վիճակը շարունակվեց շուրջ քսան տարի՝ մինչև 1041 թ., երբ նույն տարում Աշոտ IV-ը և Հովհաննես-Սմբատը մահացան: Նրանց մահից հետո Անիում ակտիվացան բյուզանդական կողմնորոշում ունեցողները: Այդ հոսանքը գլխավորում էին ***Պետրոս կաթողիկոսը*** և արքունիքում մեծ կշիռ ունեցող ***Վեստ Սարգիսը***՝ թագավորի խնամակալը:

Իմանալով հայոց թագավորների մահվան մասին՝ բյուզանդական կայսրը Անին գրավելու համար մեծ բանակ ուղարկեց: Քաղաքի պաշտպանության համար ուրքի ելավ բնակչությունը և դիմեց սպարապետ Վահրամ Պահլավունուն, որ նա գլխավորի

Ջ. Ջասսո. «Հայերը փախուստի են մատնում Անին պաշարող բյուզանդական զորքին»

պայքարն ընդդեմ զավթիչների: Դուրս գալով քաղաքի դարպասներից՝ հայերն ալեզարդ զորավարի գլխավորությամբ հարձակվեցին և մեծ ջարդ տալով՝ փախուստի մատնեցին բյուզանդական զորքին:

Այդ հաղթանակից հետո սպարապետ Վահրամ Պահլավունու առաջարկով Անիում թագավոր հռչակվեց Աշոտ IV–ի տասնութամյա որդին՝ ***Գագիկ II–ը (1042–1045)***: Դա պետությունն ամրապնդելու նպատակով կատարված խելամիտ քայլ էր: Հայոց նոր թագավորը լավ կրթություն ստացած, հունարենին տիրապետող, հոր քաջությունը ժառանգած երիտասարդ էր: Իր կարճ թագավորության ընթացքում նա դրսևորեց ռազմական և պետական գործչի մեծ ունակություններ՝ նախ պայքար սկսելով երկիրը ներսից քայքայողների դեմ: Բանտարկեց Վեստ Սարգսին: Նրանից հետո վերցրեց հափշտակված արքունի գանձերը: Սակայն հավատալով նրա կեղծ խոստումներին՝ հետո ազատ արձակեց: Կայսերական զորքերի երկրորդ և երրորդ հարձակումները նույնպես վերջացան բյուզանդացիների պարտությամբ:

Այդ անհաջողություններից հետո Բյուզանդիան, համոզվելով, որ զենքի ուժով չի կարողանում հասնել հաջողության, դիմեց դավադիր միջոցների:

Կայսրը հաշտություն կնքելու պատրվակով Գագիկ II–ին հրավիրեց Կոստանդնուպոլիս: Վահրամ Պահլավունին և նրա կուսակիցները, դրա մեջ խարդավանք տեսնելով, դեմ կանգնեցին այցելությանը: Նրանց խորհրդով Գագիկը հրաժարվեց Բյուզանդիայի մայրաքաղաք մեկնելուց: Երիտասարդ թագավորը սպարապետի հետ կանգնած էր պետության պաշտպանության դիրքերում, սակայն հետագայում տեղի տվեց կաթողիկոսի և Վեստ Սարգսի հորդորներին և 1044 թ. մեկնեց Կ. Պոլիս: Կոստանդին Մոնոմախ կայսրը հայոց թագավորից պահանջեց Անին հանձնել կայսրությանը:

Գագիկ II–ը մինչև վերջ մերժեց այդ պահանջը՝ կայսրին դատապարտելով

հետևյալ ձևով. «*Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս*»:

Կայսրը հայոց թագավորին կալանավորեց և թույլ չտվեց վերադառնալ Հայաստան: Նա զորք ուղարկեց՝ գրավելու Անին: Անիի բնակչությունը կրկին համախմբվեց սպարապետի շուրջը և հետ մղեց զավթիչների գրոհները: Սակայն արքունիքում մեծացել էր բյուզանդասերների թիվը, ջլատվել ու թուլացել էր բնակչության դիմադրական կորովը: 1045 թ. ավարտվեց Անիի կենտրոնական թագավորության պայքարը վիթխարի կայսրության դեմ և քաղաքը հանձնվեց բյուզանդացիներին:

Բագրատունյաց կենտրոնական թագավորության անկումը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար: Որոշ ժամանակ անց հայ ժողովուրդը բուն երկրում՝ Հայաստանում, կորցրեց իր անկախ պետականությունը: Սակայն հայկական պետականությունը տարբեր դրսևորումներով շարունակվեց գոյություն ունենալ նաև հետագա դարերում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պարզաբանե՛ք Բագրատունյաց կենտրոնացված պետության թուլացման ներքին և արտաքին պատճառները:
2. Ե՞րբ, որտե՞ղ և ո՞ւմ կողմից ստեղծվեցին ենթակա թագավորությունները: Դրանցից ո՞րն էր ամենահզորը:
3. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Բյուզանդիան Հայաստանի նկատմամբ: Հայաստանի ո՞ր տարածքները նվաճեց Բյուզանդիան X դ. երկրորդ կեսին և XI դ. սկզբներին: Բացատրե՛ք նրա հաջողության պատճառները:
4. Ներկայացրե՛ք Անիի թագավորության թուլացման և անկման պատմությունը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XI–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Իրադրությունը Հայաստանում Անիի կենտրոնական թագավորության անկումից հետո: Անիի անկումը լուրջ հարված հասցրեց հայոց պետականությանը: Սակայն բազմաթիվ հայկական պետական կազմավորումներ այդուհետ ևս շարունակեցին պահպանել իրենց գոյությունը: Ավելին՝ անգամ Բյուզանդիային ենթակա մի շարք տարածքներում հայ ազնվականությունը չզիջեց իր քաղաքական ու տնտեսական դիրքերը և ներքին հարցերում պահպանեց նախկին ինքնիշխանությունը: Պատահական չէ, որ սկզբում բյուզանդացիները հարկադրված էին հաշվի նստելու հայ իշխանական տների հետ և վարելու հայերին սիրաշահելու քաղաքականություն: Բյուզանդացիները Հայաստանից բռնազավթված տարածքները փաստորեն բաժանեցին երկու խոշոր վարչական միավորի՝ հյուսիսային և հարավային: Անիի Բագրատունիների օրոք սպարապետի պաշտոնը զբաղեցրած Վահրամ Պահլավունու ազգական,

նշանավոր փիլիսոփա և զինվորական ***Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն*** բաժին ընկավ դրանցից մեկի՝ հարավային միավորի կառավարումը, որը ներառում էր Վասպուրականը, Տարոնը, Աղձնիքը, Բարձր Հայքի մեծագույն մասը և Հյուսիսային Միջագետքը: Հյուսիսային վարչական միավորը, որը հիմնականում ընդգրկում էր Անիի թագավորության երբեմնի տարածքը, տրվեց բյուզանդացի կառավարիչներին:

Հայաստանում իր տիրապետությունն ամրապնդելուն զուգընթաց բյուզանդական արքունիքը շարունակեց հայոց պետականությունը վերացնելու կամ հայկական անկախ բոլոր պետական կազմավորումներն իրեն ենթարկելու քայլերը: Հայաստանի նվաճված երկրամասերի հայ ազնվականությանը երկրից հեռացնելու նպատակով հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ, կայսրության արևմտյան շրջաններում տրվեցին ընդարձակ կալվածքներ: Հայկական զորքերը ցիրուցան արվեցին, մի մասն էլ տարվեց տերության խորքերը: Սկսվեց բնակչության զանգվածային արտագաղթ դեպի Փոքր Ասիա, Վրաստան և այլ շրջաններ: Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ) պատմիչի վկայությամբ՝ դեռ Վասիլ II կայսրը ծրագրել էր հայ բնակչությանը տեղահանել և բնակեցնել Մակեդոնիայում՝ ինչպես բուլղարների դեմ պատերազմում նրանց օգտագործելու, այնպես էլ այդ երկրի տնտեսական կյանքին զարկ տալու նպատակով:

Հայ բնակչությունն ընկավ ծանր հարկերի տակ: Պայքարի սլաքն ուղղվեց նաև Հայ եկեղեցու դեմ: Հարկեր գանձվեցին նաև հայ հոգևորականությունից: Նույնիսկ Անիի անկման հարցում իրենց օժանդակած կաթողիկոս Պետրոս Գետադարձին բյուզանդացիները 1047 թ. կանչեցին Կ. Պոլիս և արգելեցին վերադառնալ հայրենիք: Կայսրը ձերբակալեց Պետրոս Գետադարձի հաջորդին՝ ***Խաչիկ կաթողիկոսին***, և բռնագրավեց կաթողիկոսարանի գանձերը: Փորձ արվեց հայոց կաթողիկոսությունը ենթարկելու բյուզանդական եկեղեցուն: Հայաստանում քաղկեդոնական դավանանքի զանգվածային տարածման լուրջ վտանգ ստեղծվեց:

Հայ ժողովուրդը չհաշտվեց ստեղծված իրավիճակի հետ: ***1053 թ.*** Ծոփքի ***Պաղնատուն*** կիսանկախ գավառի հայ իշխաններն ապստամբություն բարձրացրին բյուզանդական տիրապետության դեմ: Հայաստան ուղարկված կայսերական զորքերը կարողացան գրավել ապստամբության կենտրոն ***Արկնի*** բերդը և ձերբակալել ղեկավարներին:

Բյուզանդիայի ***այս անհեռատես հակահայկական քաղաքականությունը ճակատագրական եղավ ոչ միայն Հայաստանի, այլև կայսրության համար:*** Շուտով բյուզանդացիներն Արևելքում բախվեցին հզոր թշնամու՝ թյուրք-սելջուկների հետ: Խիստ թուլացած Հայաստանն այլևս ի զորու չեղավ նոր թշնամուց պաշտպանելու Բյուզանդական կայսրության արևելյան սահմանները:

Հայկական թագավորությունները և իշխանությունները: XI դ. կեսին Անիի Բագրատունյաց թագավորության անկման և Միջին Ասիայի ռազմատենչ քոչվոր ցեղերի՝ թյուրք-սելջուկների ձեռնարկած ավերիչ արշավանքների հետևանքով ստեղծված բարդ աշխարհաքաղաքական պայմաններում իսկ հայ ժողովուրդը շարունակեց իր անդադրում պայքարը համահայկական պետականությունը վե-

ռականգնելու ուղղությամբ: Եթե կենտրոնական թագավորության բնակչության մի մասն իր ոչ եռանդուն պայքարն արտահայտում էր օտար ափեր հեռանալու եղանակով, ապա մյուսները, մնալով հայրենիքում, հնարավոր միջոցներով փորձում էին ընդդիմանալ բյուզանդացիների հայակործան քայլերին ու սելջուկների ասպատակություններին:

Միասնական պետականության վերականգնման համար պայքարում հայ բնակչությունը փորձում էր համախմբվել գոյատևող մյուս հայկական թագավորությունների գահակալների շուրջ և ունենում էր նաև հաջողություններ: Պատահական չէ, որ Անիի անկումից հետո հայկական թագավորություններն ու իշխանությունները, որպես հայոց պետականության կրողներ, դեռ երկար ժամանակ պահպանեցին իրենց գոյությունը: Բագրատունիները գահազրկվել էին Անի–Շիրակում, սակայն շարունակում էին իշխել հարևան Կարսում և Տաշիր–Ձորագետում: Սյունիները պահպանեցին իրենց թագավորությունը ևս 120 տարի:

Կարսի թագավորությունում դեռևս Աբաս թագավորի ժամանակ հաստատված խաղաղությունը շարունակվեց նրա որդու՝ ***Գագիկ Աբասյանի*** օրոք (1029–1065): Գագիկը կարողացավ խնամիական կապեր հաստատել տարբեր հայ և օտարազգի թագավորական ու ազնվականական տոհմերի հետ և զգալիորեն ամրապնդել իր դիրքերը: Նա ամուսնացավ վիրա–աբխազաց թագավոր Բագրատ IV–ի քրոջ՝ ***Գուրանդուխտի*** հետ: Ըստ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու՝ Անիի տիրակալներից հետո «շահնշահ» տիտղոսն անցավ Գագիկ Կարսեցուն: XI դարի կեսերին Կարսի թագավորությունն ընդգրկում էր ընդարձակ մի տարածք՝ հիմնականում Արաքս ու Ախուրյան գետերի վերին հոսանքի շրջանը, Ծովակ Հյուսիսո (Չլդիր) լճի ավազանն ու Վանանդի սարահարթը:

Իր ազդեցիկ դիրքը պահպանում և Բյուզանդիայի ու մահմեդական զանազան ամիրայությունների ոտնձգություններին հաջողությամբ ընդդիմանում էր Հայաստանի հյուսիսային ընդարձակ տարածքները զբաղեցնող ***Տաշիր–Ձորագետի Կյուրիկյան թագավորությունը***: Այստեղի երկարամյա թագավոր Դավիթ Անհողինը շարունակում էր յուրաքանչյուր պատեհ առիթ օգտագործել իր ազդեցությունը տարածաշրջանում մեծացնելու նպատակով: Նա ամուսնացած էր Կախեթի իշխան ***Կվիրիկեի*** քրոջ հետ: Կվիրիկեի մահից հետո այդ իշխանությունն անցավ Դավթի որդուն՝ Գագիկին, որն էլ դարձավ ***Կախեթի Կյուրիկյան հարստության*** նոր ճյուղի հիմնադիրը: Այս եղանակով սերտ կապեր հաստատվեցին Կախեթի հետ, որտեղ հետզհետե աճեց հայ բնակչության թիվը: Պատահական չէ, որ այդ իշխանությունը (նաև՝ թագավորություն) վերածվեց հայկական պետական կազմավորման:

Իր կյանքի վերջին տարիներին Դավիթ Անհողինը, չնայած պատկառելի տարիքին, ծրագրել էր բյուզանդացիներից Անին ազատագրել և հասնել իր վաղեմի երազանքին: Սակայն վերահաս սելջուկյան արշավանքները ձախողեցին այդ ծրագիրը: Դավթին փոխարինած որդու՝ Կյուրիկեի օրոք (մոտ 1048–1090 թթ.) երկիրը կարողացավ զերծ մնալ ավերածություններից և շարունակել խաղաղ տնտեսական բարգավաճումը: 1065 թ. ***Լոռի (Լոռե)*** բերդը դարձավ թագավորանիստ, աճեց

պղնձի հանքերի շահագործումը, հատկապես մեծ զարգացում ապրեց գյուղատնտեսությունը: Կյուրիկե I–ի որդիների՝ Դավթի ու Աբասի օրոք Կյուրիկյանների թագավորության տարածքը զգալիորեն կրճատվեց՝ հիմնականում ամփոփվելով Ուտիքի սահմաններում:

Լեռնային անմատչելի տեղանքը և այունեցիների ազատ ապրելու կամքն ապահովեցին հայկական մյուս՝ ***Սյունիքի*** թագավորության կենսունակությունը: Վասակ թագավորը չուներ արու զավակ: Նրա մահից հետո գահն անցավ իր փեսա ***Սմբատին (1040–1044)***: Սյունյաց թագավորությունը կարողացավ դիմակայել ժամանակի բոլոր փորձություններին նաև Սմբատի եղբայր ***Գրիգորի*** օրոք (1044–1084)՝ հաջող պայքար մղելով նախ Գանձակի ամիրայության, ապա սելջուկների դեմ: Այդ պայքարում նա սերտորեն համագործակցեց Կյուրիկյանների և Արցախի իշխանների հետ: Սյունյաց թագավորները լեռնցիական անկոտրում կամքի և աշխարհաքաղաքական բարդ իրադրության պայմաններում ճիշտ կողմնորոշվելու ունակության շնորհիվ իրենց դիրքերը պահպանեցին երկար ժամանակ՝ մինչև 1170 թ.:

Հայկական թագավորություններից իր անկախությունը ամենավաղը կորցրած ***Վասպուրականը*** ևս XI դարի երկրորդ կեսերին պահպանում էր ինքնիշխանության շատ հատկանիշներ: Վանա լճի կղզիներում և հարավարևմտյան լեռնային գավառներում Վասպուրականի Մեծ իշխանի տիտղոսով հաջորդաբար իշխում էին Արծրունիների շառավիղները: ***1113 թ.*** Աղթամարում նրանց հիմնադրած կաթողիկոսությունն ավելի ամրապնդեց Վասպուրականի իշխանության դիրքերը: Արծրունիներին շուտով փոխարինեցին նրանց շառավիղ ***Սեֆեդինյանները***:

Հայկական անկախ թագավորություններից բացի՝ իրենց կիսանկախ վիճակը պահպանում էին բազմաթիվ այլ իշխանություններ ու կազմավորումներ Տայքում, Սասունում, Վասպուրականում, Տարոնում, Սպեր–Բաբերդում, Արցախում և այլուր:

Հայաստանը թյուրք–սելջուկների արշավանքների ժամանակաշրջանում: Թյուրք–սելջուկների նախնիները քոչվոր անասնապահներ էին և զբաղեցնում էին Ալթայից Միջին Ասիա ընկած տարածքը: Նրանք առաջին անգամ Հայաստանում և Փոքր Ասիայում հայտնվել էին դեռևս VIII դարում՝ իբրև վարձկաններ արաբական բանակում: X դարի երկրորդ կեսին թուրքական ցեղերի մի մասը միավորվեց իրենց առաջնորդ Սելջուկի շուրջը, գրավեց Պարսկաստանը և մոտեցավ Հայաստանի սահմաններին:

XI դարի առաջին երեսնամյակին զանազան մահմեդական իշխանություններից վարձված թյուրքական ջոկատներն ասպատակեցին Ատրպատականն ու Վասպուրականը, իսկ ***1047 թ.*** Անիի Բագրատունյաց թագավորության անկումից երկու տարի անց, արդեն սելջուկյան 20–հազարանոց բանակն առաջին անգամ ներխուժեց Հայաստան: Բյուզանդացիների թողտվությամբ Վասպուրականի վրայով այն գրեթե անարգել հասավ մինչև ***Բասեն***՝ ճանապարհին ավերելով բազմաթիվ բնակավայրեր:

1048 թ. սկսվեց սելջուկյան 100–հազարանոց բանակի նոր արշավանքը: Զորավարներ ***Գթրմուշի*** և ***Իբրահիմի*** զորքերը մահ ու ավեր սփռեցին ամենուր: ***Մանանադիի Սմբատաբերդ*** լեռան մոտ նրանք կազմակերպեցին բնակչության

սոսկալի կոտորած: Թուրքերը գրավեցին Կարինի մոտ գտնվող ***Արծն*** վաճառաշահ ու հարուստ քաղաքը, ավերեցին այն, բնակչությանը կոտորեցին կամ գերեվարեցին: Սելջուկներին ուշացումով փորձեցին կանգնեցնել բյուզանդական զորքն ու նրան օգնության հասած հայկական և վրացական ջոկատները, սակայն ***1049 թ. Բասենի ճակատամարտում*** պարտություն կրեցին: Հարուստ ավարով սելջուկները վերադարձան Ատրպատական:

1054 թ. սելջուկների երրորդ արշավանքը գլխավորում էր նրանց առաջնորդ ***Տուղրիլը***: Հույսը կտրելով բյուզանդացիներից՝ հայ ժողովուրդը քոչվորների դեմ դուրս եկավ հերոսական պայքարի: Թշնամին համառ դիմադրության հանդիպեց նախ Կարին բերդաքաղաքում, ապա Կարսում: Պատմիչ Արիստակես Լաստիվերցու վկայությամբ՝ Կարսի պաշտպաններից ***Թաթուլ*** անունով մի երիտասարդ ծանր վիրավորել էր Տուղրիլի մերձավորներից մեկին, և ինքն էլ գերի էր ընկել: Տուղրիլը Թաթուլին խոստանում է, որ եթե իր մերձավորն ապրի, ինքն ազատ կարձակի նրան: Քաջ Թաթուլը համարձակորեն պատասխանում է, որ իր հարվածից թուրք զինվորն անպայման կմեռնի:

Սելջուկները փորձում են Կարինի ու Կարսի անհաջողությունների վրեժը լուծել Մանազկերտի բնակիչներից: Այս բերդաքաղաքը գրավելու համար նրանք գործի են դնում պաշարողական մեքենաներ: Սակայն պաշտպաններից մեկը, ձևացնելով, թե գնում է բանակցելու թուրքերի հետ, հասնում է պաշարողական մեքենային և նախապես իր հետ վերցրած նավթով հրկիզում այն: Մինչև թշնամին ուշքի կգար կատարվածից, քաջարի զինվորը կրկին հեծնում է ձին և վերադառնում ամրոց: Մեկամսյա անհաջող գրոհներից հետո թշնամին հարկադրված դադարեցնում է Մանազկերտի պաշարումը:

1056 թ. Տուղրիլի զորաբանակներից մեկը ներխուժել էր Տարոն: Այստեղ թշնամու առաջխաղացումը կասեցնելու դժվարին գործը ղեկավարում են գավառում դեռ իրենց ազդեցությունը պահպանող Մամիկոնյանները՝ ***Մուշեղի*** և նրա որդի ***Թոռնիկի*** գլխավորությամբ: ***1058 թ.*** Թոռնիկի զորքերը պարտության են մատնում սելջուկներին, գերությունից ազատում հայ գերիներին ու վերադարձնում Մալաթիայի բնակիչներից թշնամու հափշտակած ավարը:

Հայ ժողովրդի հերոսական ու համառ պայքարի շնորհիվ սելջուկներին այս արշավանքի ընթացքում էլ չհաջողվեց հպատակեցնել Հայաստանը: Սակայն երկրին հասցվեց հսկայական վնաս. բազմահազար գերիներով ու հարուստ ավարով թշնամին կրկին հեռացավ Հայաստանից:

Իրադրությունը փոխվեց, երբ սելջուկյան պետության գլուխ կանգնեց սուլթան ***Արի Արսլանը***: 1064 թ. նա ձեռնարկեց արշավանք՝ Հայաստանը, Վրաստանն ու Աղվանքը վերջնականապես նվաճելու մտադրությամբ: Ասպատակելով Լոռին՝ սելջուկները պաշարեցին Անին: Սկզբում քաղաքի պաշտպանների կատաղի դիմադրությունը թշնամուն ստիպեց հրաժարվել այն գրավելու մտադրությունից: Սակայն երբ բյուզանդական կայազորն անսպասելիորեն քաշվեց միջնաբերդ և բնակչությանը թողեց անպաշտպան, սելջուկները վերադարձան և օգտվելով պաշտպանների շրջանում սկսված խուճապից՝ ներխուժեցին քաղաք: Երբեմնի ծաղկուն Անին վերածվեց ավերակների: *«Նրանք սկսեցին անգթորեն կոտորել քաղա-*

քի ողջ բնակչությանը,— գրում է պատմիչ Մ. Ուռհայեցին,— *դալար խոտի նման հնձեցին քաղաքացիների այդչափ բազմությունը և նրանց դիակները քարակույտի նման դիզեցին: Ամբողջ քաղաքն այդպես մեջ էր ծփում»:*

Ալփ Արսլանի զորքերն առանձնակի դաժանություն հանդես բերեցին նաև Ջավախքի կենտրոն ***Ախալ*** քաղաքի (Նոր քաղաք, այժմ՝ Ախալքալաք) բնակիչների նկատմամբ: Բազմաթիվ մարդիկ սրի քաշվեցին կամ գերեվարվեցին Պարսկաստան, քաղաքից հափշտակվեցին մեծ քանակությամբ թանկարժեք իրեր:

Անիի անկումից հետո ավերածություններից խուսափելու նպատակով Տաշիր–Ձորագետի, Կարսի ու Սյունիքի թագավորները ձևականորեն իրենց հպատակությունը հայտնեցին սելջուկներին: Այդ ժամանակ, չունենալով անհրաժեշտ ուժեր, սելջուկները հրաժարվեցին հայկական մյուս թագավորությունների վրա հարձակվելու ծրագրից:

1071 թ. բյուզանդացիները փորձեցին կասեցնել սելջուկների առաջխաղացումը և մեծ բանակով շարժվեցին արևելք: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ ***Մանազկերտի*** մոտ և ողբերգական վախճան ունեցավ կայսրության համար: Բյուզանդացիները ծանր պարտություն կրեցին: Բազմաթիվ գերիների հետ թուրքերի ձեռքն ընկավ նաև կայսր ***Ռոմանոս IV Դիոգենեսը***: Շուտով կնքվեց հաշտություն, որով բյուզանդացիները ճանաչեցին սելջուկների տիրապետությունը Հայաստանի ու Փոքր Ասիայի վրա: ***1074 թ.*** հաստատվեց սելջուկյան պետության իշխանությունը Փոքր Ասիայում: Հայաստանի տարածքում ստեղծվեցին Մանազկերտի, Խլաթի և այլ սելջուկյան իշխանություններ: Նորից, ինչպես արաբական տիրապետության շրջանում, երկիրը հայտնվեց ծանր վիճակում: Կրկին մեծ չափեր ընդունեց բնակչության զանգվածային արտագաղթը:

Սակայն սելջուկները չկարողացան երկար ժամանակ իրենց տիրապետությունը հաստատել ամբողջ Հայաստանի վրա: Բազմաթիվ շրջաններում իրենց գոյությունը պահպանեցին հայկական զանազան պետական կազմավորումներ: Ավելին՝ ժամանակավորապես թուլացած կամ իրենց հպատակությունը օտարներին հայտնած թագավորություններն ու իշխանությունները, սելջուկյան պետության թուլացմանը զուգընթաց, կրկին վերականգնեցին իրենց անկախությունը: ***Նախորդ ժամանակաշրջանում ժողովրդի մեջ արմատացած պետականության ավանդույթները XII–XIII դարերում երևան եկան նոր դրսևորումներով:***

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քայլեր ձեռնարկեց Բյուզանդիան Հայաստանում Անիի թագավորության անկումից հետո: Ներկայացրեք Հայոց եկեղեցու նկատմամբ վարած նրա քաղաքականությունը:
2. Ովքե՞ր էին թյուրք–սելջուկները: Թվարկեք նրանց արշավանքները, ցույց տվեք դրանց հետևանքները:
3. Որտե՞ղ և ե՞րբ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը բյուզանդացիների և սելջուկների միջև: Ինչ հետևանք ունեցավ այն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Մատթեոս Ուռհայեցին՝ Տարոնում թյուրք-սելջուկների դեմ հայ բնակչության մղած հաղթական կռիվների մասին

Այլազգիների զորքը գնաց Տարոն գավառը և բանակեց Տավրոս լեռան ստորոտում՝ Սասունի մոտ: Հայոց հզոր և քաջ իշխան Թոռնիկը՝ Մուշեղի որդին, լսելով այդ մասին, բովանդակ Սասունում զորահավաք արեց և արշավեց այլազգիների զորքի վրա... Այդ օրը սոսկալի և ահավոր եղավ, քանզի երկու կողմն էլ միմյանց դեմ էին կռվում առյուծների ջոկերի նման: Քաջ Թոռնիկը ձայն տվեց իր զորքի աջ թևին, հարձակվեց այլազգիների ձախ թևի վրա և մեծ ուժգնությամբ ձեղքեց այն: Նա դարձավ, նայեց Սուրբ Կարապետի վանքին և գոչեց. «*Գլակա՛ վանք, Սո՛ւրբ Կարապետ, հասի՛ր մեզ օգնության...*»: Բոլորը միասին, իրար ձայն տալով, հարձակվեցին այլազգիների վրա, նրանցից խլեցին ամբողջ ավարը և ազատեցին բոլոր գերվածներին: Մի կերպ կենդանի մնացած այլազգիները իայտառակ կերպով գնացին պարսից երկիրը:

«Ժամանակագրություն», մաս երկրորդ

§ 2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ XII–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Պայքար թյուրք-սելջուկների դեմ: XI դ. վերջին սելջուկյան պետությունն սկսեց թուլանալ: Ջուգահեռաբար նկատվեց Հայաստանի հյուսիսային հարևանի՝ Վրաստանի հզորացման գործընթացը: ***1065 թ.*** Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը, վախենալով սելջուկներից, իր թագավորությունը հանձնեց Բյուզանդիային և հեռացավ Փոքր Ասիա: Սյունիքի ու Տաշիր-Ձորագետի թագավորությունները շարունակեցին պահպանել իրենց գոյությունը և, օգտվելով սելջուկների թուլացումից, վերականգնեցին իրենց տիրույթները: Հայաստանի հարավում՝ ***Սասունում***, պահպանվում էր ***Թոռնիկյանների*** իշխանությունը:

Սելջուկյան պետության մասնատման հետևանքով Հայաստանում առաջացան մահմեդական իշխանություններ: 1064 թ. գրավված Անին հանձնվեց ***Շադդադյաններին:*** Հայաստանի հարավում ստեղծվեց ***Շահ-Արմենների*** ամիրայությունը՝ ***Խլաթ*** կենտրոնով, իսկ պատմական Ուտիքում ձևավորվեց ***Գանձակի աթաբեկությունը:***

Այս մահմեդական իշխանությունների դեմ XI դարի վերջից համատեղ պայքարի դուրս եկան հայերն ու վրացիները: Հայ-վրացական հարաբերությունները ջերմացան հատկապես վրաց ***Դավիթ Շինարար*** (1089–1125) թագավորի օրոք: Վերջինս Վրաստանի ռազմաքաղաքական ու տնտեսական դիրքերն ամրապնդելու նպատակով խթանեց հայերի գաղթը Հայաստանից դեպի իր երկիր: Այդ նպատակով նա հատուկ հայ գաղթականների համար Կուրի ափին կառուցել տվեց ***Գորի*** քաղաքը: Դավթի շուրջը համախմբվեցին բազմաթիվ հայ իշխաններ՝ իրենց զինական ուժերով: Հայ զորահրամանատարների ներկայությունը վրացական արքունիքում ավելի էր բարձրացնում Վրաստանի՝ որպես քրիստոնյա հարևանի հեղինակությունը սելջուկների լծից ազատվել ցանկացող հայ ժողովրդի աչքում: Այսպիսի պայմաններում հայերը հաճախ ապստամբում

Ամբերդ ամրոցը և եկեղեցին

էին և օգնության խնդրանքով դիմում վրաց թագավորներին:

Հայ–վրացական ուժերը 1113 թ. թշնամուց մաքրեցին Լոռին, սակայն վրաց արքունիքը վերացրեց Տաշիր–Ձորագետի թագավորությունը և նրա տարածքը մտցրեց վրացական պետության կազմի մեջ: Այդ հողերը թողնվեցին հայ իշխանական տներին:

1124 թ. Անիի ապստամբած բնակչությունը պատվիրակություն ուղարկեց Դավիթ Շինարարի մոտ՝ նրան հայտնելով քաղաքը վրաց թագավորին հանձնելու իրենց մտադրության մասին: Դավիթը զորքով մտավ Անի և այնտեղից դուրս քշեց Շադդադյաններին: Վերջիններս նոր զորք հավաքեցին և կրկին պաշարեցին Անին: Քաղաքի պաշտպանների մեջ աչքի ընկավ հերոսուհի ***Այծեմնիկը***, ով, արհամարհելով նետերից ստացված բազմաթիվ վերքերը, շարունակում էր պարիսպներից քարեր նետել թշնամու վրա: Միայն երկու տարի անց՝ 1126 թ., երբ քաղաքում սով սկսվեց, անեցիները հանձնվեցին թշնամուն:

Պայքարն Անիի և Հյուսիսային Հայաստանի մյուս շրջանների համար նոր թափ ստացավ վրաց ***Գեորգի III*** թագավորի օրոք (1156–1184): ***1161 թ.*** Անին նորից գրավվեց հայ–վրացական ուժերի կողմից: Թշնամին կրկին այն հետ գրավեց: ***1174 թ.*** Անին երրորդ անգամ որոշ ժամանակով անցավ հայերի ու վրացիների ձեռքը:

Հայ–վրացական զինակցությունն իր գագաթնակետին հասավ ***Թամար*** թագուհու գահակալության տարիներին (1184–1207): Հենց նրա ժամանակ էլ ***Սարգիս Զաքարյանը 1185 թ.*** ստացավ ***ամիրսպասալարի***՝ սպարապետի պաշտոնը: Նրա մահից հետո այդ պաշտոնն անցավ Սարգսի ավագ որդուն՝ ***Զաքարե Զաքարյանին***: Զաքարեի կրտսեր եղբայր ***Իվանեն*** (Հովհան, Հովհաննես) դարձավ ***աթաբեկ***՝ թագաժառանգի խնամակալ:

Վերջիններիս հրամանատարությամբ XII դ. վերջին հայ–վրացական զորքերը թշնամուց ազատագրեցին Հյուսիսային Հայաստանի բազմաթիվ շրջաններ: ***1196 թ.*** ազատագրվեց Արագածի լանջին կառուցված հայտնի ***Ամբերդը***, իսկ ***1199 թ.***՝ քանիերորդ անգամ նաև ***Անին***: Թշնամուց մաքրվեցին Արցախը, Սյունիքը, Արարատյան դաշտը:

1203 թ. ազատագրվեց ***Դվինը***, իսկ ***1206 թ.***՝ Կարսը, ապա նաև ***Բասենն*** ու ***Բագրևանդը***: Շարունակելով հարձակումը՝ հայ–վրացական ուժերը հասան Մանազկերտ ու Արձեշ: ***1209 թ.*** պաշարվեց Վանա լճի ափին ընկած ***Խլաթը***՝ Շահ–Արմենների նստավայրը: Սակայն մի պատահական դիպված (Իվանեն պատահաբար ընկավ որսափոսը և գերվեց թշնամու կողմից) խանգարեց Խլաթի գրավմանը: Զաքարեն ստիպված էր եղբորը ստանալու դիմաց դադարեցնել քաղաքի պաշարումը և նահանջել:

Շուտով Զաքարյան եղբայրների գլխավորած բանակը Նախճավանի ու Զուղայի

վրայով հասավ նաև Ատրպատական: Հաղթական արշավանքից հետո՝ 1212 թ., Զաքարեն մահացավ: Նշանավոր զորավարին հողին հանձնեցին հոր կողքին՝ Սանահնի վանքում:

Զաքարյանների իշխանապետությունը: Իշխանական նոր տները: Հյուսիսային ու կենտրոնական Հայաստանում սելջուկների տիրապետության անկումից հետո ազատագրված հայկական հողերը վրաց արքունիքի կողմից հիմնականում տրվեցին Զաքարյաններին: Վերջիններս, վրաց պետության հովանավորությամբ ունենալով ներքին լայն ինքնուրույնություն, ստեղծեցին իրենց իշխանապետությունը, որն իր մեջ ընդգրկեց Շիրակը՝ Անի մայրաքաղաքով, Արարատյան դաշտը, Արաքս գետի միջին հոսանքը, Սևանի շրջակայքը: Անիի քաղաքապետի պաշտոնը վստահվեց մեծ հեղինակություն վայելող Պահլավունիներին:

Զաքարյաններն այնքան մեծ իշխանություն ունեին սեփական տիրույթներում, որ իրենց հերթին պահում էին վասալ՝ կախյալ իշխանապետություններ: Հայաստանի հյուսիս-արևելքում՝ Տավուշում, Գարդմանում և Փառիսոսում, Զաքարյաններից կախյալ ստեղծվել էր ***Վահրամյանների իշխանությունը***, որի կենտրոնը ***Գագ*** ամրոցն էր: Նրա հիմնադիրը Սարգիս Զաքարյանի եղբայր ***Վահրամն*** էր: Զաքարյանների մի ճյուղն էլ նստում էր ***Զավախքի իշխանության*** կենտրոն ***Թմուկ*** (Թմկա) ***բերդում***:

Զաքարյաններին ենթակա իշխանություններ կազմավորվեցին Վայոց ձորում ***Պռոշյանների***, իսկ Արագածոտն և Նիգ գավառներում՝ ***Վաչուտյանների*** կողմից: Վաչուտյանների նստավայրն Ամբերդն էր: Սյունիքում ազդեցիկ դիրք ձեռք բերեցին ***Օրբելյանները***: Սարգիս Զաքարյանի դստեր՝ ***Խորիշահի*** որդին՝ ***Հասան Զաքալ***

ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Դոլան, Արցախի Խաչեն գավառում հիմնադրեց ***Հասան-Ջալալյանների*** իշխանությունը: Այս տոհմերը կրում էին զանազան տիտղոսներ՝ «իշխան», «իշխանաց իշխան», «պարոնտեր», «տերանց տեր» և այլն:

Հայկական այս բոլոր իշխանապետությունները սերտորեն գործակցում էին վրաց պետության հետ, սակայն ներքին քաղաքական ու տնտեսական բնագավառներում միանգամայն ինքնուրույն էին: Հայ եկեղեցին ևս պահպանում էր իր ինքնուրույն ու գերակա դիրքը և պայքար մղում հայության նկատմամբ վրաց քաղկեդոնական եկեղեցու զանազան ոտնձգությունների դեմ: XII դ. վերջին և XIII դ. սկզբին այդ պայքարի եռանդուն ղեկավարներից էր նշանավոր առակագիր, օրենսգետ Մխիթար Գոշ վարդապետը:

Այսպիսով՝ Հայաստանի մեծագույն մասում ինքնատիպ կարգավիճակով վերականգնելով հայոց պետականությունը՝ Զաքարյանները բարենպաստ պայմաններ էին ստեղծել երկրի քաղաքական ու տնտեսական վերելքի համար:

Այնինչ Զաքարյանների իշխանապետությունից դուրս՝ երկրի հարավում և հարավ-արևմուտքում, հայկական տարածքների բնակչությունը, լինելով Եգիպտոսի և Իկոնիայի սուլթանությունների տիրապետության տակ, հայտնվել էր ազգային ու կրոնական դաժան ճնշումների պայմաններում:

Պայքար թաթար-մոնղոլական տիրապետության դեմ: 1206 թ. Սիբիրի և Չինաստանի միջև ընկած քոչվոր մոնղոլական ցեղերի ժողովը՝ Մեծ խուրալը, Օնոն գետի ավազանի ցեղապետերից ***Թեմուչինին*** ընտրեց խան՝ ***Չինգիզ խան*** անունով: Վերջինս շուտով սկսեց իր աշխարհակալ նվաճումները: 1210-ական թթ. մոնղոլները ներխուժեցին Չինաստան և Սիբիրի հարավային շրջաններ: ***1219 թ.*** Չինգիզ խանը մտավ Միջին Ասիա և պարտության մատնեց Խորեզմի շահ Մուհամմեդին, որի որդին՝ ***Ջալալէդդինը***, նահանջելով պայքարը շարունակեց Իրանում և Հայաստանում՝ իր հերթին կողոպտելով ու կոտորելով տեղի բնակչությանը:

1220 թ. աշնանը մոնղոլները ներխուժեցին Այսրկովկաս: Նրանց դեմ դուրս եկան վրաց թագավոր ***Գեորգի Լաշան*** և ***Իվանե Զաքարյանը*** հայ-վրացական միացյալ ուժերով: Վերջիններիս կազմում թշնամու դեմ կռվի էին դուրս եկել նաև Վահրամյանները՝ Վահրամ Գագեցու գլխավորությամբ: Ճակատամարտը տեղի ունեցավ ***Կոտմանի դաշտում:*** Սկզբում հաջողվեց թշնամուն կորուստներ պատճառել և հարկադրել նահանջել: Սակայն հետո մոնղոլները, մարտի մեջ մտցնելով թաքստոցում պահած ուժերը, հարվածեցին թիկունքից և նկատելի հաջողության հասան: Չդիմանալով թշնամու գերակշիռ ուժերի ճնշմանը՝ Գեորգիի զորքերը նահանջեցին:

Իսկ Վահրամ Գագեցու զորամասը, որը կռվում էր աջ թևում, ոչ միայն չլքեց մարտադաշտը, այլև անցավ հակահարձակման: Անակնկալի եկած մոնղոլները, որ կարծում էին, թե արդեն շահել են ճակատամարտը, բռնեցին փախուստի ճանապարհը: Հայկական ուժերը թշնամուն հետապնդեցին մինչև Գարդման: Կոտմանի դաշտում մոնղոլներն առաջին անգամ իրենց երկարատև արշավանքների ընթացքում հանդիպեցին լուրջ դիմադրության:

1221 թ. հայերի դիմադրական մարտերը շարունակվեցին Ուտիքում: Մոնղոլ-

Կարս. Վարդանի կամուրջը

Կարս. Ս. Առաքելոց եկեղեցին, X դ.

ները չհամարձակվեցին գրոհել Գանձակ քաղաքի վրա՝ տեղեկանալով, որ նրա բաջարի բնակիչները խնամքով նախապատրաստվել են դիմադրության: Պատահական չէ, որ մոնղոլները, շուտով շրջանցելով Զաքարյանների տիրույթներն ու Վրաստանը, Հյուսիսային Կովկասի և Ռուսիայի վրայով վերադարձան Միջին Ասիա: Սակայն քոչվորներին շուտով փոխարինեց Ջալալէդդինը: Նա իր հերթին մոտ մեկ տասնամյակ ավերածություններ կատարեց տարածաշրջանում:

Վերոհիշյալ հետախուզական արշավանքից հետո՝ 1231 թ., մոնղոլները նորից հայտնվեցին և, հետապնդելով Ջալալէդդինին, կարողացան նրան պարտության մատնել: Ապա անցան Վասպուրական, ավերեցին շատ բնակավայրեր: 1232 թ. նրանք նորից վերադարձան Միջին Ասիա՝ հետդարձի ճանապարհին ավերելով Գանձակ քաղաքը:

1236 թ. մոնղոլական 30-հազարանոց բանակը, բազմաթիվ քոչվոր ցեղերի ուղեկցությամբ, ***Չարմաղանի*** գլխավորությամբ ներխուժեց Հայաստան: Այդ ժամանակ Վրաստանը կորցրել էր իր նախկին հզորությունը, իսկ Աղվանքն ու Զաքարյան Հայաստանը խիստ մասնատված էին և բռնկված ներիշխանական երկպառակություններով: Պատահական չէ, որ թշնամին լուրջ ու կազմակերպված դիմադրության չհանդիպեց: Քաջ ծանոթ լինելով Հայաստանի իրավիճակին՝ մոնղոլները բաժանեցին զորքը ջոկատների, որոնք իրենց հրամանատարների՝ ***նոյոնների*** գլխավորությամբ սկսեցին հպատակեցնել երկրամասը: Հայ իշխաններից շատերը հեռացան Վրաստան, իսկ մյուսները հայտնեցին իրենց հպատակությունը: Վերջիններից ոմանք հետ ստացան իրենց կալվածքները և սեփական զինական ուժերով մասնակցեցին մոնղոլների արշավանքներին:

Լոռե և ***Շամքոր*** քաղաքները գրավելուց հետո մոնղոլները ներխուժեցին Արցախ ու Սյունիք: Նրանք հատկապես կատաղի դիմադրության հանդիպեցին Արցախի ***Խաչեն*** գավառում: Տեղի իշխանները Հասան-Ջալալ Դոլայի գլխավորությամբ ամրացան ***Խոխանաբերդում*** (Իշխանաբերդ): Հայերի երկարատև ու համառ դիմադրությունը ստիպեց թշնամուն հաշտության առաջարկ անել: Մոնղոլները համաձայնեցին Հասան-Ջալալի առաջադրած պայմաններին: Դրանով Խաչենը պահպանեց իր հարաբերական ինքնուրույնությունը և դարձավ մոնղոլներին հարկատու իշխանություն: Այդ վիճա-

կը հնարավորություն տվեց Հասան–Ջալալին ու նրա հաջորդներին հիմնականում խուսափելու ավերածություններից, ծավալելու շինարարական ու տնտեսական գործունեություն, ինչպես նաև ավարտին հասցնելու Գանձասարի հոյակերտ վանքի շինարարությունը:

Նույն՝ 1236 թ. քոչվորները շարժվեցին ***Անիի*** վրա: Թշնամին պատվիրակներ ուղարկեց քաղաքի բնակիչների մոտ՝ պահանջելով անձնատուր լինել: Վրդովված անեցիները հարձակվեցին մոնղոլ պատվիրակների վրա և սպանեցին նրանց: Գազազած թշնամին գործի դրեց պաշարողական մեքենաները և քանդելով քաղաքի պարիսպները՝ ներխուժեց անպաշտպան թաղամասերը: Բնակչության մի մասը կարողացավ փախչել, իսկ մյուս մասը սրի քաշվեց կամ ստրկության վաճառվեց: Շուտով նույն բախտին արժանացան նաև ***Կարսը, Դվինը*** և այլ քաղաքներ: Մոնղոլական բանակին կրնկակոխ ուղեկցող քոչվոր ցեղերը շտապեցին զավթել երկրի լավագույն հողերը:

1242–1243 թթ. մոնղոլական զորքերը շարժվեցին դեպի երկրի արևմտյան շրջանները, որոնք այդ ժամանակ ***Իկոնիայի սուլթանության*** հսկողության տակ էին: Ճանապարհին պաշարվեց ***Կարինը***, որտեղ կենտրոնացել էր շրջակա խաղաղ բնակչության մի ստվար հատված: Մոնղոլներն այս արշավանքին հարկադրաբար մասնակից էին դարձրել նաև վրացական ու հայկական ջոկատներ: Վերջիններս, տեղակայված լինելով նրանց բանակի առաջին գծում, ստիպված կռվում էին իրենց հայրենակիցների դեմ և տալիս մեծ կորուստներ: Կարինը դիմադրեց շուրջ երկու ամիս և նոր միայն ընկավ թշնամու ձեռքը:

1243 թ. մոնղոլները պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը և գրավեցին ***Երզնկան, Տերիկը, Կեսարիան*** և ***Սեբաստիան***: 1244 թ. մոնղոլներն իրենց ենթարկեցին նաև Հայաստանի հարավային շրջանները՝ Տարոնը, Վասպուրականը և Աղձնիքը: Հասնելով Կիլիկիայի սահմաններին՝ մոնղոլները կանգ առան և 1254 թ. դաշնակցային պայմանագիր կնքեցին Կիլիկիայի հայոց թագավոր Հեթում I–ի հետ:

Մոնղոլական տիրապետությունն աղետաբեր եղավ հայ ժողովրդի համար: Լինելով քոչվոր անասնապահներ՝ նրանք բերրի դաշտերն ու հատկապես քաղաքները սկսեցին վերածել արոտավայրերի: Նորից վերսկսվեց բնակչության զանգվածային արտագաղթը:

Նվաճված երկրների բնակչությունը ենթարկվեց ծանր հարկման: 16–ից մինչև 50 տարեկան տղամարդիկ դարձան հարկատու: Բնակչությունը պարտավոր էր նաև զանազան պարհակներ կատարել: Հպատակ ժողովուրդներից կազմված զինական ջոկատներն ուղարկվում էին ամենավտանգավոր ճակատները:

Սկզբնական շրջանում Հայ եկեղեցու նկատմամբ նվաճողները մեղմ քաղաքականություն էին վարում: Սակայն երբ XIII դարի վերջին մոնղոլներն ընդունեցին իսլամ, սկսվեցին նաև կրոնական հալածանքները: Երբեմնի վաճառաշահ Անի, Դվին, Արճեշ և այլ քաղաքներ վերածվեցին ավանների:

Անտանելի օտար տիրապետությունը զայրույթի ալիք բարձրացրեց հպատակ ժողովուրդների շրջանում: ***1249 թ.*** հայ և վրաց իշխանները վրաց թագավորի մասնակցությամբ սկսեցին նախապատրաստվել ապստամբության: Գավառներ

ուղարկվեցին զինված ջոկատներ: Լոռիում հատկապես ակտիվ էին Զաքարյանները: Սակայն մոնղոլները կարողացան բացահայտել ապստամբությունը և ճնշել այն:

1259 թ. բռնկվեց նոր ապստամբություն, որի պատճառը հարկերի բարձրացումն էր և հայ-վրացական ջոկատները Եգիպտոս՝ մամլուքների դեմ պատերազմի ուղարկելու մոնղոլների որոշումը: Հուզումներն ընդգրկել էին Արևելյան Վրաստանը, Շիրակը, Արցախը, Լոռին: ***Հուլավու խանը*** դաժանորեն ճնշեց ապստամբությունը: Հայ ղեկավարներից Խաչենի նշանավոր տիրակալ ***Հասան-Ջալալը*** և ***Զաքարե Զաքարյանը***՝ ամիրսպասալար Զաքարեի թոռը, մահապատժի ենթարկվեցին:

Հայկական իշխանական տները XIII դ. երկրորդ կեսին և XIV դարում: Մոնղոլները Հայաստանը մտցրին ***Էրդանություն*** վարչամիավորի մեջ: Շարունակվեցին հայ իշխանական տների թուլացման քայլերը, նրանց միմյանց դեմ օգտագործելու փորձերը: Խիստ թուլացան ***Վաչուտյաններն*** ու ***Պռոշյանները***: Համեմատաբար իրենց դիրքերը պահպանեցին ***Օրբելյանները՝ Սյունիքում, Դոփյանները՝ Վերին Խաչենում, Հասան-Ջալալյանները՝ Ներքին Խաչենում, Զաքարեկյանները՝ Արայի լեռան շրջանում:***

Հասան-Ջալալ Դոպան իր նպաստը բերեց Կիլիկյան Հայաստանի ու Մոնղոլական տերության միջև դաշնագրի կնքմանը, քանիցս եղավ մոնղոլների մայրաքաղաք Կարակորումում և Արևելյան Հայաստանի կիսանկախ իշխանությունների համար ստացավ զանազան արտոնություններ: Պատահական չէ, որ հաճախ նրան դիմում էին ***թագավոր*** ու ***ինքնակալ*** տիտղոսներով:

Զաքարյանների շառավիղները ***1266 թ.*** Գուգարքի Զավախք գավառում, Ախալցխայի շրջակայքում, Տայքի զգալի մասում ստեղծեցին հայ-վրացական մի իշխանություն՝ ***Սամցխե-Զավախք*** անունով, որը պահպանեց իր անկախությունը մոնղոլական պետությունից և գոյատևեց մինչև XVI դ. վերջը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մահմեդական ինչ իշխանություններ առաջացան Հայաստանում:
2. Ինչպես զարգացան հայ-վրացական հարաբերությունները Դավիթ Շինարարի օրոք: Երբ և ում օրոք երկու երկրների միջև զինակցությունը հասավ իր գագաթնակետին: Ներկայացրեք Զաքարյանների ազատագրական պայքարի արդյունքները: Հայաստանում Զաքարյաններից կախյալ ինչ իշխանություններ ստեղծվեցին:
3. Որտեղ էին բնակվում մոնղոլական ցեղերը, երբ և ում նվաճումների արդյունքում ստեղծվեց նրանց տերությունը: Պարզաբանեք դեպի Հայաստան և Կովկաս մոնղոլների արշավանքների արդյունքները: Ինչ հետևանքներ ունեցավ մոնղոլական տիրապետությունը հայ ժողովրդի համար: Ձեր կարծիքով ինչով էր պայմանավորված մոնղոլների սկզբնական մեղմ քաղաքականությունը Հայ եկեղեցու հանդեպ:
4. XIII դարի երկրորդ կեսին և XIV դարում ինչպիսին էր հայ իշխանական տների վիճակը Հայաստանում: Ո՞ր իշխանությունները պահպանեցին իրենց դիրքերը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Վրաց ժամանակագիրը՝ Զաքարյանների մասին

Ապա [Թամար թագուհին] ամիրսպասալար նշանակեց Սարգիս Միսարգրձելիին (Երկայնաբազուկ), որը բարեծնունդ էր և արշավանքների ու քաջագործության մեջ սնված, և շնորհեց նրան Լոռին՝ ի իշխանություն և ի տիրապետություն Սոմխիթի. և շնորհատվություն արավ նրա որդի Զաքարիային ևս, և այս Զաքարիա և Հովհանն (Իվանեն)՝ Միսարգրձելիի որդիք, հավատարիմ էին թագավորներին և փորձված արշավանքների մեջ, մարդիկ անվանի, թեև կրոնով հայեր (սոմեխներ) էին…

(Թամարի) ամբողջ թագավորությունը լցվեց անթիվ հարստությամբ, ոսկով, արծաթով ու այլ ամենայն հարստությամբ, որ բերեցին Զաքարիան և Հովհանը…

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Բ, էջ 11, 23

Պարսիկ մատենագիր Համդալլահ Ղազվինին՝ մոնղոլ-թաթարների ասպատակությունների հետևանքների մասին

Անկասկած է, որ եթե հազար տարվա ընթացքում որևէ այլ աղետ չլինի, մոնղոլական արշավանքների ու տիրապետության հետևանքներն ուղղել հնարավոր չէ, և աշխարհն իր նախկին զորությանը չի վերադառնա, որպիսին նա եղել է մինչև այդ դեպքերը:

Կիրակոս Գանձակեցին՝ Խոխանաբերդի պաշտպանությունից հետո կնքված հայ-մոնղոլական հաշտության մասին

Երբ այդ իմաստուն իշխանը [Հասան-Ջալալը] տեսավ անօրենների հարձակումը, իր երկրի բնակիչներին ամրացրեց պարսկերենով Խոխանաբերդ կոչված ամրոցում: Երբ [թաթարները] եկան այն պաշարելու, տեսան, որ հնարավոր չէ այդ ամրությունները գրավել, հաշտությամբ ու խաղաղությամբ նրան կանչեցին իրենց մոտ: Նա իմաստնաբար գոհացրեց նրանց: Հետո բազմաթիվ ընծաներով ինքն էլ նրանց մոտ գնաց: Նրան մեծարելով՝ նրա երկիրը հանձնեցին իրեն և այն էլ՝ մեծացնելով: Նրան հրամայեցին ամեն տարի իրենց հետ պատերազմի գնալ և հավատարմությամբ հնազանդ մնալ իրենց: Իսկ նա խոհեմաբար կարգավորեց իր երկիրը… Թե՛ ուտելիք և թե՛ այլ ինչք առնում պահում էր ու իր կողմից ավելացնելով՝ տալիս էր նրանց, երբ նրա մոտ էին գալիս, և [նրանք] երկրին նեղություն չէին տալիս…, իսկ այլ երկրներում այսպես չէին վարվում, այլ ուր հասնում էին, ամեն տեղ նեղում էին նրանց:

«Հայոց պատմություն», գլուխ Լ

ԳԼՈՒԽ 3. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Հայկական պետականության ստեղծման նախադրյալները: Այն տարածքը, որտեղ Բագրատունյաց թագավորության անկումից հետո ստեղծվեց հայկական նոր պետականություն, հայտնի է ***Կիլիկիա*** անվանումով: Կիլիկիան Փոքր Ասիայի հարավ-արևելքում է: Հարավից այն եզերում է Միջերկրական ծովը: Կիլիկիայի հայկական պետությունն ուներ 500 կմ երկարությամբ ծովափ: Հյուսիսում

Կիլիկիայի սահմանները հասնում էին մինչև Տավրոսի լեռները: Արևելքում նրա սահմաններն անցնում էին Ամանոսի (Սև) լեռներով:

Այս բնական սահմանների միջև ընկած տարածքը բաժանված է երեք մասի: Հյուսիս–արևելքը, որտեղ կան բազմաթիվ լեռնային զանգվածներ, կոչվում է ***Լեռնային Կիլիկիա***: Հարավարևելյան շրջանները, որոնք հարուստ են գետահովիտներով ու դաշտավայրով, հայտնի է ***Դաշտային Կիլիկիա*** անունով: Նրա հիմնական մասը ծովի մակերևույթից ունի մոտ 150–200 մ բարձրություն և աշխարհի առավել արգավանդ դաշտավայրերից մեկն է: Քարքարոտ բլուրներ ունեցող արևմտյան մասը կոչվում է ***Քարուտ Կիլիկիա***:

Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում հայկական աղբյուրները Կիլիկիան սովորաբար անվանել են ***«Հայոց աշխարհ»***, ***«Կիլիկյան Հայաստան»***, իսկ խաչակիր մատենագիրները՝ ***«Հայաստան»***, ***«Փոքր Հայք»***:

Կիլիկիան՝ որպես աշխարհագրական միավոր, և Կիլիկյան Հայաստանը՝ որպես պետություն, տարածքային առումով միմյանց երբեք չեն համապատասխանել: Սկզբնական շրջանում նորաստեղծ հայկական պետությունն ընդգրկում էր Կիլիկիայի միայն մի մասը, իսկ հետագայում իր մեջ ներառեց նաև նրանից դուրս եղած մի շարք շրջաններ: Կիլիկյան Հայաստանի տարածքը XIII դ. կազմում էր շուրջ 50 000 քառ. կմ, իսկ բնակչության թիվը հասնում էր 1 միլիոնի:

Հայկական լեռնաշխարհի հարևանությամբ գտնվող Կիլիկիան դեռևս հին ժամանակներից էր ծանոթ հայերին: Տիգրան Մեծը Ք. ա. I դ. նվաճեց և հայկական տերությանը միացրեց Կիլիկիայի արևելյան շրջանները: Վաղ ժամանակներից սկսած՝ հայերը բնակություն էին հաստատել Կիլիկիայում, իսկ X դ. արդեն զգալի թիվ էին կազմում:

Կիլիկիայում և հարակից շրջաններում հաստատված հայ բնակչության ազգային–եկեղեցական խնդիրները հոգալու համար ***Խաչիկ Ա*** կաթողիկոսը (973–992) X դ. վերջին Անտիոք, Տարսոն քաղաքներում և մի շարք գավառներում եպիսկոպոսական թեմեր հիմնադրեց:

Կիլիկիայի հայերը հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ, արհեստներով, առևտրով և լեռնային արդյունագործությամբ: Կիլիկիայում հայկական պետականության առաջացման նախօրյակին տեղի հայ բնակչությունն արդեն ուներ կայուն, կազմակերպված ընկերային միջավայր:

XI դ. կեսերից սկսած՝ Հայաստանի համար անբարենպաստ իրավիճակի պատճառով տեղի է ունենում հայ բնակչության զանգվածային արտագաղթը Կապադովկիա, Կիլիկիա, Ասորիք, Հյուսիսային Միջագետք: Դա հիմնականում կապված էր թյուրք–սելջուկների ավերիչ արշավանքների և Բյուզանդիայի վարած քաղաքականության հետ: Քոչվոր սելջուկների տիրապետության հաստատումը Հայաստանում այնպիսի ծանր տնտեսական ու քաղաքական հետևանքներ ունեցավ, որ հայ բնակչության մի հատվածը հեռացավ հայրենիքից: Նրանց մի մասը հաստատվեց Կիլիկիայում:

Հայաստանից հայերին տարհանելու քաղաքականությունը, որ մշտապես կիրառում էր Բյուզանդիան, XI դ. սկսում է առավել զանգվածային բնույթ կրել: Բյուզանդիան Հայաստանից Կապադովկիա, Կիլիկիա, Ասորիք, Հյուսիսային Միջա-

գետք էր տեղափոխում հիմնականում արքայական և իշխանական ընտանիքներին: Այսպես Հայաստանից արտագաղթեց նաև Արծրունիների և Բագրատունիների մի մասը: Նրանց հետ հայրենիքից հեռացավ զգալի թվով հայ բնակչություն:

Հարկադրական արտագաղթի հետևանքով արդեն XI դ. երկրորդ կեսին, Եփրատ գետից արևմուտք եղած հայաբնակ շրջաններից բացի, հայերը մեծամասնություն էին կազմում նաև Կիլիկիայի, Կապադովկիայի, Ասորիքի և Հյուսիսային Միջագետքի մի շարք գավառներում:

Կիլիկիայում ապրում էին նաև հույներ, ասորիներ, արաբներ, հրեաներ, սակայն XI դ. վերջերին Կիլիկիայի ողջ բնակչության գերակշռող մասը հայերն էին: Նրանք բնակվում էին և Լեռնային, և Դաշտային Կիլիկիայում:

Կապադովկիայում, Կիլիկիայում, Ասորիքում և Հյուսիսային Միջագետքում հաստատված հայ իշխանների մի մասը ծառայության մեջ էին մտել Բյուզանդական կայսրությունում, և որոշակի տարածքների կառավարումը հանձնվել էր նրանց: Այս ճանապարհով Բյուզանդիան աշխատում էր ամրապնդել կայսրության արևելյան սահմանները, քանի որ այստեղ հաստատված հոծ հայ բնակչությունն անհրաժեշտության դեպքում կպաշտպաներ այս տարածքները թշնամիների, մասնավորապես սելջուկների հարձակումներից: Այդ իշխաններից էր ***Ապլղարիպ Արծրունին***, որը Սենեքերիմ Արծրունու հետ տեղափոխվել էր Սեբաստիա: 1042 թ. նա նշանակվեց Կիլիկիայի կառավարիչ (ստրատեգոս): Նրան էին հանձնել ***Ադանա, Մսիս (Մամեստիա), Տարսոն քաղաքները*** և ***Լամբրոն*** ու ***Պապկեռոն*** բերդերը: Հետագայում Ապլղարիպ Արծրունին Լամբրոնը և շրջակա գյուղերը նվիրեց Գանձակից Կիլիկիա տեղափոխված ***Օշին*** իշխանին, որն ամուսնացել էր նրա աղջկա հետ: Այսպես Լամբրոն ամրոցում հաստատվում է ***Հեթումյան*** իշխանական տունը:

Անիի Բագրատունյաց վերջին թագավոր ***Գագիկ II-ը*** հաստատվել էր Կիլիկիայի սահմանագլխին գտնվող ***Պիզու քաղաքում***: 1065 թ. Կարսի թագավոր Գագիկ Կարսեցին իր թագավորությունը հանձնեց Բյուզանդիային: Կոստանդին Դուկաս կայսրը նրան տվեց Կիլիկյան Տավրոսում գտնվող ***Ծամնդավ*** բերդաքաղաքը: Բյուզանդիայում ռազմական ծառայության մեջ էին նաև շատ հայ բերդատեր իշխաններ, որոնք պահպանում էին Կիլիկիայի սահմանները մահմեդականների հարձակումներից:

Այսպիսով՝ հայ բնակչության, Հայոց եկեղեցու և հայկական արքայական ու իշխանական տների առկայությունը հիմք դարձավ Կիլիկիայում հայկական պետականության ստեղծման համար:

Հայկական իշխանությունների առաջացումը: Օգտվելով Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի պարտությունից՝ սելջուկները ներխուժեցին Փոքր Ասիայի կենտրոնական ու արևմտյան շրջանները և ձեռնամուխ եղան դրանց նվաճմանը:

Կիլիկիայում և սահմանամերձ շրջաններում հաստատված հայ իշխանները փորձեցին օգտվել Բյուզանդիայի թուլացումից և վերականգնել հայոց պետությունը: Նրանցից մեկը՝ բյուզանդական բանակում ծառայող հայ իշխան ***Փիլարտոս Վարաժնունին***, Մանազկերտի ճակատամարտից հետո Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայի արևելյան շրջաններում հիմնադրեց ուժեղ և ընդարձակ հայկական իշխանու-

թյուն, որը գոյատևեց ***1072–1090 թթ.***: Նրա կենտրոնը ***Մարաշ*** քաղաքն էր: Հենվելով հիմնականում հայերից կազմված ռազմական ուժի վրա՝ Փիլարտոսը կարողացավ որոշ ժամանակ կանգնեցնել սելջուկների առաջխաղացումը դեպի հայկական իշխանության սահմանները: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Բյուզանդիան ճանաչեց Փիլարտոսի իշխանությունը: Սակայն շուտով սելջուկները ձեռնամուխ եղան հայկական իշխանության նվաճմանը և գրավեցին համարյա ամբողջ Դաշտային Կիլիկիան, այդ թվում՝ Տարսոն, Մսիս և Ադանա քաղաքները, իսկ 1084 թ.՝ Անտիոքը: Հայկական իշխանությունը սկսեց տրոհվել դեռևս Փիլարտոսի օրոք: Սակայն նրա իշխանության վերացումից հետո էլ այստեղ շարունակեցին իրենց գոյությունը պահպանել մի քանի փոքր հայկական իշխանություններ:

Հյուսիսային Ասորիքում և Արևելյան Կիլիկիայում ***1082 թ.*** մի նոր ուժեղ և ընդարձակ հայկական իշխանություն հիմնադրեց նաև ***Գող Վասիլը***: Նրա կենտրոնը ***Քեսուն*** քաղաքն էր: Այն գոյատևեց մինչև ***1117 թվականը***:

Չնայած հայկական այս իշխանությունները կարճատև կյանք ունեցան, սակայն որոշ ժամանակ խոչընդոտեցին սելջուկների ներթափանցումը Կիլիկիա:

Ռուբինյանների պետության առաջացումը: Հայաստանից դուրս ստեղծված պետական կազմավորումներից ամենակենսունակը ***Ռուբինյան իշխանությունն*** էր: Հայ իշխաններից ***Ռուբենը 1080 թ.*** Լեռնային Կիլիկիայում հիմնադրեց հայկական իշխանություն: Հենվելով այստեղ հաստատված հայերի օժանդակության վրա՝ նա ապստամբություն բարձրացրեց բյուզանդացիների դեմ և ամրացավ Լեռնային Կիլիկիայի ***Կոռոմոզոլ*** բերդում: Կարճ ժամանակահատվածում հայերին հաջողվեց բյուզանդացիներից ազատագրել Լեռնային Կիլիկիայի մի մասը: Այսպիսով՝ հայկական այս իշխանությունը հիմնադրի անունով կոչվեց ***Ռուբինյան***:

Ռուբեն I–ին հաջորդեց որդին՝ ***Կոստանդին I–ը (1095–1100)***: Այսպես նորաստեղծ հայկական իշխանության շրջանակներում լուծվեց քաղաքական կարևորագույն մի խնդիր՝ գահաժառանգության հարցը: Կոստանդինի օրոք հայկական իշխանությունն ավելի ընդարձակվեց և ամրապնդվեց: ***1098 թ.*** նա բյուզանդացիներից խլեց Լեռնային Կիլիկիայի նշանավոր ***Վահկա*** բերդը և դարձրեց իշխանության կենտրոն:

Ռուբինյան իշխանության գոյությանը սպառնում էր ոչ միայն Բյուզանդիան, այլև սելջուկները: Սակայն սկսված խաչակրաց առաջին արշավանքը նրանց ուշադրությունը որոշ ժամանակով շեղեց Կիլիկիայից: Սա հնարավորություն տվեց հայերին ամրապնդելու և ընդարձակելու նորաստեղծ իշխանությունը:

Պաղեստինը և Ասորիքը մահմեդականներից ազատագրելու համար 1096 թ. կազմակերպվեց խաչակրաց առաջին արշավանքը: Արևմտյան Եվրոպայից խաչակիրները շարժվեցին դեպի Արևելք: Նրանց մի մասն անցնելու էր Կիլիկիայով: 1097 թ. խաչակիրների երկու բանակ մտավ Կիլիկիա և ձեռնամուխ եղավ Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճմանը: Այդ ժամանակ հայոց իշխան Կոստանդինը վերահսկում էր Տավրոսի լեռնանցքները, ուստի խաչակիրները ստիպված էին համագործակցել նրա հետ: Հայոց իշխանը թույլատրեց, որ խաչակիրներն անցնեն Տավրոսի լեռնանցքներով, և նրանց պա-

ռենով ապահովեց: Սրա դիմաց խաչակիրները նրան բարոնի տիտղոս շնորհեցին:

Խաչակիրների հետ սկսեցին համագործակցել նաև Կիլիկիայում հաստատված մյուս հայ իշխանները, մասնավորապես Լամբրոնի տեր ***Օշինը*** և իշխան ***Բագունին***: Սակայն խաչակիրների և հայերի փոխհարաբերությունները միշտ չէ, որ բարեկամական էին: Խաչակիրները հաճախ թալանում և ավերում էին հայկական բնակավայրերը: Նրանք բռնազավթեցին նաև Հյուսիսային Ասորիքի և Եփրատի ափերի՝ հայ իշխաններին պատկանող տիրույթները: Դրանց թվում էին ***Կուրխա, Կարկառ*** և ***Պիր*** բերդաքաղաքները:

Խաչակիրները հայերի օգնությամբ սելջուկներից ազատագրեցին Դաշտային Կիլիկիայի նշանավոր քաղաքները՝ ***Մսիսը, Տարսոնը, Ադանան***: Այսպիսով՝ Դաշտային Կիլիկիային տիրելու համար պայքարում էին ոչ միայն հայերը և բյուզանդացիները, այլև սելջուկները և խաչակիրները:

Մանազկերտի ճակատամարտից հետո սելջուկների մի մասը հաստատվել էր Փոքր Ասիայում: Նրանք այստեղ ստեղծել էին իրենց պետությունը՝ Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը: Սելջուկները և այստեղ հաստատված թուրքմենական տարբեր ցեղեր Կիլիկիայի համար դարձան վտանգավոր հարևաններ:

Դաշտային Կիլիկիան գրավելուց հետո խաչակիրները շարժվեցին դեպի Ասորիք և Պաղեստին: 1098 թ. նրանք գրավեցին Եդեսիան և հիմնեցին խաչակրաց առաջին պետությունը՝ ***Եդեսիայի կոմսությունը***: Նույն թվականին խաչակիրները գրավեցին Անտիոքը և ստեղծեցին խաչակրաց երկրորդ պետությունը՝ ***Անտիոքի իշխանությունը***: 1099 թ. նրանք նվաճեցին Երուսաղեմը և հիմնադրեցին ***Երուսաղեմի թագավորությունը***:

Եթե Իկոնիայի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններին սովորաբար բնորոշ էին թշնամանքը և մշտական ռազմական առճակատումը, ապա խաչակիրների հետ հարաբերություններն ավելի բարդ ու խճճված էին:

Խաչակրաց առաջին արշավանքի ընթացքում խաչակիրները գրավեցին և կործանեցին հայկական մի շարք իշխանություններ, որից հետո հայ–խաչակրաց ռազմական բախումները կապված էին Դաշտային Կիլիկիայի հետ: Սակայն հայ–խաչակրաց փոխհարաբերություններին բնորոշ էին նաև քաղաքական ու մշակութային առնչությունները: Խաչակրաց պետությունների թուլացմանը զուգահեռ հայ–խաչակրաց հարաբերություններում առավել գերակշռող էին դառնում դաշնակցային հարաբերությունները, քանի որ մահմեդական վտանգը հավասարապես սպառնում էր նրանց գոյությանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ է գտնվում Կիլիկիան և աշխարհագրական ինչ շրջանների է բաժանվում: Երբ և ինչու՞ Կիլիկիայի քաղաքներում ու գավառներում ստեղծվեցին եպիսկոպոսական թեմեր: Ինչո՞վ էին զբաղվում Կիլիկիայում հաստատված հայերը: Երբ և ինչպե՞ս փոխվեց Կիլիկիայի ժողովրդագրական պատկերը:
2. Ներկայացրեք Կիլիկիայում հայկական պետության ստեղծման նախադրյալները:

3. Ինչն առիթ դարձավ Փիլարտոս Վարաժնունու կողմից հայկական իշխանության ստեղծման համար: Ինչո՞ւ Բյուզանդիան ճանաչեց Փիլարտոսի իշխանությունը: Ուրիշ ինչ հայկական իշխանություն ստեղծվեց, ո՞վ էր հիմնադիրը, ո՞րն էր կենտրոնը, և մինչև ե՞րբ գոյատևեց: Ինչ նշանակություն ունեցան հայկական այդ իշխանությունները:
4. Հայաստանից դուրս ստեղծված պետական կազմավորումներից ո՞րն էր ամենակենսունակը, և ե՞րբ է այն հիմնադրվել: Ո՞վ է հաջորդել Ռուբեն I–ին, ինչո՞վ են նշանավորվել նրա կառավարման տարիները: Ինչը հնարավորություն տվեց հայերին ընդարձակելու և ամրապնդելու նորաստեղծ իշխանությունը:
5. Վերհիշեք խաչակրաց շարժման ներքին և արտաքին պատճառները: Ներկայացրեք Կիլիկյան Հայաստանի և խաչակիրների փոխհարաբերություններն ու հետագա իրադարձությունները: Դրական և բացասական ինչ հետևանքներ ունեցան խաչակրաց արշավանքները Կիլիկիայի հայերի համար:

§ 2. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Պայքար Դաշտային Կիլիկիայի համար: Լեռնային Կիլիկիայում ձևավորված Ռուբինյանների պետության հետագա գոյատևման համար կարևոր էր Դաշտային Կիլիկիայի նվաճումը: Անհրաժեշտ էր իջնել անմատչելի լեռներից ու գրավել գյուղատնտեսության համար կարևոր կենսական տարածքներ և առևտրական ճանապարհների վրա գտնվող քաղաքներ: Անհրաժեշտ էր նաև նվաճել Միջերկրական ծովի նավահանգիստները: Հակառակ դեպքում լեռներում ծվարած հայկական փոքրիկ պետությունը չէր կարող երկար գոյություն ունենալ: Այս խնդիրները լուծելու համար Կիլիկյան Հայաստանը պայքարի մեջ մտավ Բյուզանդիայի, խաչակիրների և սելջուկների հետ:

Կոստանդինին հաջորդեց նրա որդի ***Թորոս I–ը (1100–1129)***, որը Կիլիկյան Հայաստանի սահմաններն ընդարձակեց դեպի հարավ: 1104 թ. Թորոսը գրավեց Սիս և Անավարզա (Անաբարզա, Անարզաբա) քաղաքները: Նա ամրացրեց ***Անավարզան*** և ***դարձրեց մայրաքաղաք***: Թորոսը հայոց Գագիկ II թագավորի սպանության համար վրեժ լուծեց հույն ***Մանդալեի*** երեք որդիներից՝ 1111 թ. ձերբակալելով և մահապատժի ենթարկելով նրանց:

1107 թ. Կիլիկիա ներխուժեցին Իկոնիայի սելջուկները: Թորոսի և Գող Վասիլի միացյալ զորքերը ***Բերդուսի*** մոտ տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտության մատնեցին նրանց և դուրս քշեցին երկրից:

Թորոսին հաջորդեց նրա եղբայր ***Լևոն I–ը (1129–1137)***: Նա ձեռնամուխ եղավ Դաշտային Կիլիկիայի նվաճմանը, որտեղ հայերը բախվեցին խաչակիրների և բյուզանդացիների հետ: Խաչակիրները առաջին արշավանքի ժամանակ Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջանները խլել էին սելջուկներից և հաստատվել այստեղ:

1132 թ. Լևոնը բյուզանդացիներից խլեց Մսիս, Ադանա և Տարսոն քաղաքները: Այսպիսով՝ համառ պայքարից հետո Կիլիկյան Հայաստանը կարողացավ իր սահմանները հարավում հասցնել Միջերկրական ծով:

Անավարզայի բերդը

Հայ-բյուզանդական հակամարտություն: Բյուզանդիան չէր կարող հաշտվել Կիլիկիայի և Ասորիքի կորստի հետ, ուստի ***Հովհաննես Կոմնենոս*** կայսրը որոշեց վերանվաճել դրանք: 1137 թ. նա, մի մեծ բանակի գլուխ անցած, շարժվեց Արևելք: Կայսրը փորձում էր հնազանդեցնել կայսրության դեմ ապստամբած և անկախություն ձեռք բերած Կիլիկիային, ինչպես նաև խաչակրաց պետություններին: Գարնանը բյուզանդական մի մեծ բանակ կայսեր գլխավորությամբ հայտնվեց Դաշտային Կիլիկիայում: Օգտվելով թվական գերակշռությունից՝ նրանք գրավեցին Տարսոն, Ադանա և Մսիս քաղաքները: Բյուզանդացիները մեծ դժվարությամբ կարողացան գրավել Անավարզան: Քաղաքը 37 օր համառ դիմադրություն ցույց տվեց:

Լևոնը հայկական փոքրաթիվ ուժերի հետ ամրացավ Վահկա բերդում, որի պաշտպանությունը տևեց վեց ամիս: Ի վերջո Վահկան ևս հանձնվեց: Լևոնը կնոջ և երկու որդիների՝ Ռուբենի ու Թորոսի հետ շղթայակապ տարվեց Կոստանդնուպոլիս:

Կիլիկիայում ստեղծված հայկական պետությունը մի քանի տարով դադարեց գոյություն ունենալուց: Սակայն բյուզանդացիները չկարողացան ամուր հաստատվել Կիլիկիայում: Հայ բնակչությունը ոտքի կանգնեց և պայքար սկսեց բյուզանդական տիրապետության դեմ:

Գերված Լևոնը մահանում է բանտում, իսկ Ռուբենին կայսեր հրամանով մահապատժի են ենթարկում: Թորոսը շահել էր կայսեր համակրանքը և ապրում էր արքունիքում: Օգտվելով այդ իրավիճակից՝ նա փախուստի է դիմում, վերադառնում է Կիլիկիա և գլխավորում հայ ժողովրդի ազատագրական պայքարը: Նրան են միանում նաև իր երկու եղբայրները՝ ***Սմբատը*** և ***Ստեփանեն***, որոնք բյուզանդական արշավանքի ժամանակ Հալեպում էին ու խույս էին տվել գերությունից:

Այդ ժամանակ հայկական պետության վերականգնման համար ստեղծվել էին

նպաստավոր պայմաններ: Բյուզանդիան զբաղված էր իր արևմտյան սահմանների պաշտպանությամբ և անընդհատ պատերազմների մեջ էր, իսկ Անտիոքի խաչակիրները ծանր պարտություն էին կրել Հալեպի ամիրայից:

Թորոս II-ը (1145-1169) իր շուրջը համախմբված հայկական փոքրաթիվ զորախմբի հետ պայքար սկսեց բյուզանդացիների դեմ: Մի քանի տարվա ընթացքում նա գրավեց Վահկան, Անավարզան, Մսիսը, Տարսոնը: Այսպիսով՝ հայերին հաջողվեց վերականգնել հայկական պետականությունը: Սակայն Բյուզանդիան չէր հաշտվում Կիլիկիան կորցնելու մտքի հետ: 1152 թ. Կիլիկիա մտավ բյուզանդական մի մեծ բանակ, որին միացան նաև Արևմտյան Կիլիկիայի հայ իշխանների տրամադրած զորքերը և պաշարեցին Մսիս քաղաքը: Մթության քողի տակ Թորոսը հակահարձակման անցավ և ջախջախեց բյուզանդական զորքերը: Ճակատամարտում գերի ընկածների թվում էր նաև Բյուզանդիայի հետ դաշնակցած ***Օշին Լամբրոնացին***: Նա ազատվեց միայն այն բանից հետո, երբ փրկագին վճարեց: Թորոսի աղջիկն ամուսնացավ Օշինի որդու հետ, սակայն խնամական կապերը չվերացրին թշնամությունը երկու հայկական իշխանական տների միջև:

Բյուզանդական կայսրը, հասկանալով, որ միայն ռազմաքաղաքական ճանապարհով արդեն ի վիճակի չէ Կիլիկիան պահելու իր տիրապետության տակ, որոշում է այդ խնդիրը լուծել հայ-բյուզանդական եկեղեցիների միավորման ճանապարհով: Այս նպատակով Կիլիկիայի բյուզանդական զորքերի հրամանատարը բանակցություններ է սկսում կաթողիկոսի եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ: Բանակցություններն ավարտվում են անարդյունք:

Թորոս II-ը նշանակալից գործ կատարեց: Նա վերականգնեց հայկական պետությունը և ստեղծեց 30 000-անոց բանակ: Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո Հայոց կաթողիկոսությունը մշտական նստավայր չուներ և տեղից տեղ էր փոխադրվում: Թորոսի ջանքերով ***1151 թ.*** այն հաստատվեց ***Հռոմկլայում***, ուր մնաց մինչև ***1292 թ.***:

Հայոց պետության ընդարձակումն ու ամրապնդումը: Թորոս II-ին հաջորդեց նրա եղբայր ***Մլեհը (1169-1175)***: Այդ ժամանակ Դաշտային Կիլիկիան Բյուզանդիայի տիրապետության տակ էր: Միայն նրա արևելյան մի քանի շրջաններ էին պատկանում խաչակիրներին: Երկրի ընդարձակման և հետագա ամրապնդման համար անհրաժեշտ էր ծովեզրյա բոլոր շրջաններն ազատագրել հույներից և խաչակիրներից: Այս դժվարին խնդիրն իրագործելու համար Մլեհը դաշնակցեց Հալեպի ամիրայի հետ: Նա խաչակիրներից հետ վերցրեց Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջանների կարևորագույն բերդերը: 1173 թ. նա Բյուզանդիայից ազատագրեց ծովափնյա շրջանները: Այս հաղթանակը շատ կարևոր էր, քանի որ հայերի ձեռքն անցան առևտրական կարևորագույն ճանապարհները:

Մլեհի դաշինքը մահմեդականների հետ ճիշտ հաշվարկված քաղաքականության արդյունք էր: Մլեհից առաջ և հետո բազմաթիվ քրիստոնյա տիրակալներ, ելնելով իրենց պետությունների շահերից, դաշնակցում էին նաև մահմեդականների հետ:

Մլեհը փորձեց նվաճել նաև Հեթումյաններին պատկանող ***Լամբրոն*** անառիկ

բերդը: Նա շրջապատեց այն, բայց չկարողացավ գրավել:

Մլեհը բարեկարգեց *Սիս* քաղաքը և 1173 թ. դարձրեց Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաքը: Նրա վարած քաղաքականությունը և իրագործած բարեփոխումները նպաստեցին հայոց պետության ամրապնդմանն ու հզորացմանը: Սակայն այդ քաղաքականությունից դժգոհ բարձրաստիճան հոգևորականները և իշխանները դավադրություն կազմակերպեցին և սպանեցին նրան:

Մլեհին հաջորդեց նրա եղբայր Ստեփանեի որդի ***Ռուբեն II-ը (1175-1187)***: Օգտվելով Բյուզանդիայի և Իկոնիայի սուլթանության միջև առաջացած թշնամանքից՝ Ռուբենը գրավեց Կիլիկիայի արևմտյան շրջանները, որով վերջ դրեց Կիլիկիայում բյուզանդական տիրապետության վերջին հենակետերին:

Այսպիսով՝ ավելի քան մեկդարյա հերոսական ու արդյունահեղ պայքարից հետո Կիլիկիայում ամրապնդվեց հայկական պետությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էր անհրաժեշտ Դաշտային Կիլիկիայի նվաճումը. այդ խնդիրը լուծելու համար ո՞ւմ դեմ էր պայքարում Կիլիկիան: Ո՞վ է հաջորդել Կոստանդին I-ին և ե՞րբ է իշխել. ի՞նչ կարևոր իրադարձություններ տեղի ունեցան նրա օրոք: Ե՞րբ է գահակալել Լևոն I-ը. ներկայացրե՛ք նրա գործունեության կարևոր դրվագները:
2. Ինչո՞ւ և ե՞րբ Հովհաննես Կոմնենոս կայսրը շարժվեց Արևելք. ի՞նչ հետևանքներ ունեցավ այդ արշավանքը: Կիլիկիայում հայկական պետությունը վերականգնելու համար ի՞նչ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել. ներկայացրե՛ք Կիլիկիայում հայկական պետությունը վերականգնելու ընթացքը: Ի՞նչ կարևոր ձեռքբերումներ ունեցավ Կիլիկիան Թորոս II-ի օրոք:
3. Ո՞վ է հաջորդել Թորոս II-ին և ե՞րբ է գահակալել: Ինչո՞ւ Կիլիկիան դաշնակցեց մահմեդականների հետ: Ի՞նչ հաջողություններ ունեցավ Կիլիկիան Մլեհի օրոք: Ի՞նչ ավարտ ունեցան Կիլիկիայի նկատմամբ Բյուզանդիայի հավակնությունները:

§ 3. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Քաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում XII դ. վերջին և Կիլիկյան Հայաստանը: XII դ. վերջին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան այնպիսի փոփոխություններ, որոնք զգալի ազդեցություն թողեցին Կիլիկյան Հայաստանի վրա: Այդ ժամանակ հզորացել էր Եգիպտոսի Այուբյան սուլթանությունը: Սուլթան ***Սալահ ադ Դինը*** (1169-1193) Եգիպտոսին միավորեց Ասորիքի և Պաղեստինի մի մասը և պայքար սկսեց խաչակիրների դեմ: 1187 թ. նա պարտության մատնեց խաչակիրներին և գրավեց Երուսաղեմը:

Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը զբաղված էր հիմնականում իր տարածքները Բյուզանդիայի հաշվին ընդարձակելով: Իկոնիայի սուլթանությունը և Եգիպտոսը թշնամաբար էին տրամադրված Կիլիկիայի նկատմամբ: Լարված էին նաև Անտիոքի իշխանության և Կիլիկիայի փոխհարաբերությունները:

Այսպիսի իրավիճակում Կիլիկյան Հայաստանում իշխանությունն անցնում է Ռուբենի եղբայր ***Լևոն II-ին (1187-1219)***: Նրա կառավարման առաջին շրջանում ստեղծված միջազգային իրավիճակը բարենպաստ էր Կիլիկիայի համար: ***Միրիոկեֆալոնի*** ճակատամարտից (1176 թ.) հետո Բյուզանդիան մեկընդմիշտ հրաժարվել էր Կիլիկիայից: Իկոնիայի սուլթանությունը պատրաստվում էր դիմագրավելու խաչակրաց երրորդ արշավանքին:

Լևոն II-ը փորձեց առավելագույնս օգտվել Կիլիկիայի համար ստեղծված այս բարենպաստ իրավիճակից:

1187 թ. Իկոնիայի սուլթանության զորքերը հարձակվեցին Կիլիկիայի վրա և հասան մինչև Սիս: Հայերին հաջողվեց ***Ռավին*** վայրում ծանր պարտության մատնել և երկրից վտարել նրանց: Երուսաղեմը մահմեդականներից հետ գրավելու համար 1189 թ. սկսված խաչակրաց երրորդ արշավանքը ստիպեց սելջուկներին դադարեցնել արշավանքները դեպի Կիլիկիա: 1190 թ. խաչակիրներին հաջողվեց գրավել սուլթանության մայրաքաղաք ***Իկոնիան***: Օգտվելով այս հանգամանքից՝ Լևոնը սելջուկներից գրավեց և ամրացրեց սահմանային մի քանի ամրոցներ:

Լևոն II-ը կապեր հաստատեց խաչակիրների առաջնորդներից մեկի՝ Սրբազան հռոմեական կայսրության կայսր ***Ֆրիդրիխ Շիկամորուսի*** հետ: Լևոնը խոստացավ օգնել խաչակիրներին, իսկ դրա դիմաց կայսրը համաձայնեց նրան ճանաչելու Կիլիկիայի թագավոր: Սակայն արշավանքի ընթացքում կայսրը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում, և Լևոնի թագադրությունը հետաձգվեց:

Լևոնը մասնակցեց խաչակիրների մղած կռիվներին: Նա օգնեց Անգլիայի

Լևոն II Մեծագործ

Ռիչարդ Առյուծասիրտ թագավորին Կիպրոս կղզին բյուզանդացիներից գրավելիս:

Այդ ժամանակ Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջանների համար նորից վեճեր սկսվեցին Անտիոքի և Կիլիկիայի միջև: Սահմանային վեճերը լուծելու պատրվակով Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ը Լևոնին հրավիրում է Անտիոք: Իրականում նրա նպատակը հայոց իշխանին ձերբակալելն էր: Իմանալով այդ մասին՝ Լևոնն ինքն է նշանակում հանդիպման վայրը: Խնջույքի պատրվակով նա Անտիոքի դուքսին հրավիրում է իր մոտ և ձերբակալում: 1194 թ. Սիս քաղաքում Լևոնի և Բոհեմունդի միջև հաշտության պայմանագիր կնքվեց: Պայմանագրի համաձայն՝ Բոհեմունդը Կիլիկիային վերադարձրեց նրանից խլված տարածքները՝ մինչև Այաս նավահանգիստը: Սրա դիմաց առանց փրկագնի Լևոնն ազատ արձակեց Անտիոքի դուքսին: Երկու երկրների բարեկամությունը ամրապնդելու համար կողմերը որոշեցին Բոհեմունդի ավագ որդի և ժառանգորդ Ռայմոնդին ամուսնացնել Լևոնի եղբայր Ռուբենի ավագ դուստր Ալիսի հետ: Ծնված արու զավակը պիտի ժառանգեր Անտիոքը և Կիլիկիան: Անտի-

Ջ. Ձասսո. «Լևոն Մեծագործի հաղթական մուտքը Անտիոք»

ոքի և Կիլիկիայի միավորմամբ Լևոնը փորձում էր ստեղծել հայ-խաչակրաց միացյալ պետություն:

Թագավորության հռչակումը: XII դ. վերջին Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի ամենաուժեղ քրիստոնյա երկիրն էր: Արտաքին թշնամիների դեմ տարած հաղթանակները և երկրի սահմանների ընդարձակումն ու ամրապնդումը բարձրացրին Լևոն II-ի հեղինակությունը:

Եգիպտոսի հզորացումից ու Երուսաղեմի անկումից հետո խաչակիրների վիճակը խիստ ծանրացել էր: Նրանց օգնելու գործում Արևմտյան Եվրոպան հույսեր էր կապում նաև Կիլիկյան Հայաստանի հետ: Հաշվի առնելով այս ամենը՝ Լևոնը շարունակեց բանակցություններն արքայական թագ ստանալու ուղղությամբ: Նա բանակցություններ սկսեց Հռոմի պապի և Սրբազան հռոմեական կայսրության կայսր Հենրիխ VI-ի հետ: Այս անգամ դրանք հաջողությամբ պսակվեցին: 1197 թ. Հենրիխ VI-ը պատվիրակության միջոցով թագ ուղարկեց Լևոնին: Նրան թագ էր ուղարկել նաև Բյուզանդիայի կայսր ***Ալեքսիոս III Անգելոսը:*** Քաղաքական նկատառումներից ելնելով՝ Լևոնը որոշում է թագադրվել Սրբազան հռոմեական կայսրության թագով: Բյուզանդիան այդ ժամանակ խիստ թուլացել էր և անհրաժեշտության դեպքում ի վիճակի չէր օգնություն ցույց տալու Կիլիկիային, ուստի նրա գերիշխանության ընդունումը դառնում էր անիմաստ: Սրբազան հռոմեական կայսրության թագով թագադրվելու դեպքում Կիլիկյան Հայաստանը կարող էր ակնկալել Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունը:

Լևոնի թագադրության հարցով շահագրգռված էր նաև պապականությունը, որը փորձում էր Հայոց եկեղեցին ենթարկել կաթոլիկ եկեղեցուն: Հայոց թագավորության վերականգնման խնդրի լուծումը Լևոնի համար այնքան կարևոր էր, որ նա համաձայնեց առերես կատարելու Հռոմի պապի

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՍՊՈԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԱԳՈՒՄՆԵՐԻ ՕՐՈՔ

Գեղարքունիք
Սևանա լիճ
Գանձակ գավառ
Ղարաբաղ գավառ
Ուտիք գավառ
Գեղարքունիքի գավառ
Գեղարքունիքի գավառի գյուղերի
Գեղարքունիքի գավառի գյուղերի
Գեղարքունիքի գավառի գյուղերի

պահանջները: Իրականում Հայոց եկեղեցին ոչ մի զիջում չարեց կաթոլիկ եկեղեցուն:

Լևոն II–ը ***1198 թ. հունվարի 6–ին Տարսոն քաղաքի մայր տաճարում Գրիգոր Ջ Ապիրատ (1194–1203)*** կաթողիկոսի կողմից մեծ հանդիսավորությամբ հայոց թագավոր օծվեց: Կայսրի և պապի ներկայացուցիչները մատուցեցին արքայական պատվանշանները:

Հայ ժողովուրդը ցնծության մեջ էր: Նա Լևոնի թագադրությամբ տեսնում էր հայոց թագավորության վերականգնումը: Պատահական չէ, որ Տարսոնում հավաքվել էին բազմաթիվ իշխաններ և բարձրաստիճան հոգևորականներ: Այստեղ էին եկել նաև օտարերկրյա պատվիրակություններ: Այս ամենը վկայում էր Լևոնի հեղինակության և հայոց պետության միջազգային ճանաչման մասին:

Լևոն II արքայի արտաքին և ներքին քաղաքականությունը: Լևոն II–ի օրոք Կիլիկիայի Հայոց թագավորությունը վերելք էր ապրում:

Լևոնի ձեռնարկած կարևոր քայլերից մեկը երկրի սահմանների անվտանգության ամրապնդումն էր: Սահմանամերձ մի քանի բերդեր նա հանձնեց խաչակիրներին, որի դիմաց նրանք պարտավորվում էին զինվորական ծառայություն կատարել: Լեռնանցքներում կառուցվեցին ամրություններ, որտեղ տեղակայվեցին մշտական զորքեր: Նրա կարևոր ձեռնարկումներից էր նաև Կիլիկիայի ***Լամբրոն*** բերդի գրավումը: Նրա նախորդները մի քանի անգամ փորձել էին գրավել այն, սակայն անհաջողության էին մատնվել: 1202 թ. նա Լամբրոնի ***Հեթում*** իշխանին հրավիրեց Տարսոն և բանտարկեց: Դրանից հետո Լևոնը առանց կռվի գրավեց բերդը և միացրեց արքունիքին:

Լևոն II–ի թագավորության շրջանի կարևոր խնդիրներից մեկը Անտիոքի համար մղվող պայքարն էր: Երբ մահացավ Անտիոքի դուքս Ռայմոնդը, նրա և Ալիսի որդի Ռայմոնդ–Ռուբենը դարձավ Անտիոքի իշխանության ժառանգորդը: Սակայն վերջինիս դեմ դուրս եկավ նրա հորեղբայր Բոհեմունդը: Նա գրավեց Անտիոքը և իր ձեռքը վերցրեց իշխանությունը: Այդ ժամանակ Լևոնը որոշեց միջամտել Անտիոքի ժառանգության համար մղվող պայքարին և պաշտպանել իր ազգականի շահերը: Կիլիկիայի և Անտիոքի միջև սկսվեց երկարատև պայքար: 1216 թ. Լևոնը գրավեց Անտիոք քաղաքը և իշխանությունը հանձնեց Ռայմոնդ–Ռուբենին, որին հռչակել էր նաև Կիլիկիայի թագաժառանգ: Շուտով նրա գործունեությունից հիասթափված՝ Լևոնը փոխեց իր որոշումը և Կիլիկիայի թագաժառանգ նշանակեց իր մանկահասակ դուստր Զաբելին: Այդ պատճառով, երբ 1219 թ. Ռայմոնդ–Ռուբենին արտաքսեցին Անտիոքից, Լևոնն այլևս չօգնեց նրան:

Աշխարհագրական դիրքի շնորհիվ Կիլիկիան առևտրական ճանապարհների խաչմերուկում էր, ուստի Լևոնը մեծ ուշադրություն էր դարձնում առևտրի զարգացմանը: Վերաշինվեցին ու բարեկարգվեցին ***Այաս*** և ***Կոռիկոս*** նավահանգիստները: Կառուցվեց ոչ միայն ռազմական, այլև առևտրական նավատորմ: Կարգավորվեց երկրի դրամական շրջանառությունը: Լևոնն արտոնություններ շնորհեց Ջենովայի, Վենետիկի և մի շարք այլ քաղաքների վաճառականներին:

Նա մեծ ուշադրություն էր դարձնում նաև մշակույթի զարգացմանը: Թագավորի հրամանով Կիլիկիայում հիմնադրվեցին տարբեր տիպի դպրոցներ: Նա արքունիք էր հրավիրում և հովանավորում գիտության ու արվեստի գործիչներին:

Լևոն II թագավորը, որ պատմության մեջ մնաց ***Մեծագործ*** անունով, մահացավ 1219 թ.՝ իր հաջորդներին թողնելով հզոր պետություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ փոփոխություններ տեղի ունեցան Մերձավոր Արևելքում XII դարի վերջին: Ինչ իրավիճակ էր Կիլիկյան Հայաստանում: Իշխան Լևոն II–ն ինչպե՞ս օգտվեց Կիլիկիայի համար բարենպաստ իրավիճակից. ինչ համաձայնություն էր կայացել Լևոն II–ի և Ֆրիդրիխ Շիկամորուսի միջև: Ինչ ընթացք և ավարտ ունեցավ Լևոն II–ի և Անտիոքի իշխանության միջև ծագած սահմանային վեճը:
2. Ինչ գործոններ նպաստեցին Լևոն II–ի հեղինակության բարձրացմանը: Ինչո՞ւ էր ծանրացել խաչակիրների վիճակը:
3. Արքայական թագ ձեռք բերելու ուղղությամբ Լևոն II–ն ինչ քայլեր ձեռնարկեց. ինչ արդյունք ունեցան դրանք: Գնահատե՛ք Լևոնի և Հռոմի պապի միջև կայացած համաձայնությունը: Ո՞վ և ե՞րբ թագավոր օծեց Լևոնին: Ո՞րն է Լևոնի թագադրության պատմական նշանակությունը:
4. Ներկայացրե՛ք Լևոն II–ի ներքին և արտաքին քաղաքականությունը: Կազմե՛ք ժամանակագրական աղյուսակ՝ ներկայացնելով Լևոնի ներքին և արտաքին քաղաքականության կարևոր ձեռնարկումները:

§ 4. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ XIII ԴԱՐՈՒՄ

Հեթումյան արքայատոհմի հաստատումը: Լևոն II թագավորն արու զավակ չուներ և 1216 թ., արքունի խորհրդի համաձայնությամբ, թագաժառանգի իրավունքները փոխանցեց իր դուստր Զաբելին: Վերջինս անչափահաս էր, ուստի նշանակվեցին երեք խնամակալներ՝ հայոց կաթողիկոս Հովհաննես Սսեցին, Ատան պայլն ու Կոստանդին Գունդստաբլը: Սակայն Ատան պայլի սպանվելուց և կաթողիկոսի մահվանից հետո Կոստանդին Գունդստաբլը մնաց որպես Զաբելի միակ խնամակալ: Այդ ժամանակ հայոց գահին փորձեց տիրանալ Ռայմոնդ–Ռուբենը, որին Լևոնը զրկել էր թագաժառանգի իրավունքներից: Նրան միացան նաև մի շարք հույն և հայ իշխաններ: Կոստանդին Գունդստաբլը կարողացավ ճնշել ապստամբությունը և ձերբակալել խռովարար իշխաններին: Ռայմոնդ–Ռուբենը բանտում գտավ իր վախճանը:

Հայոց արքունական խորհուրդը որոշեց Զաբելին ամուսնացնել Անտիոքի դուքս Բոհեմունդ IV–ի որդու՝ ***Ֆիլիպի*** հետ: Այսպիսի ընտրությունը պատահական չէր, քանզի այս ճանապարհով աշխատում էին վերջ դնել Անտիոքի և Կիլիկիայի միջև շարունակվող թշնամանքին: Ֆիլիպը Կիլիկիա ժամանեց 1222 թ. և ամուսնանալով Զաբելի հետ՝ հռչակվեց հայոց թագավոր: Գահը նրան հանձնվեց որոշակի պայմաններով: Նա երկիրը պետք է կառավարեր հայկական օրենքներով և հարգեր Հայոց եկեղեցու դավանանքը: Սակայն Ֆիլիպի և Զաբելի համատեղ թագավորությունը կարճ տևեց: Ֆիլիպը սկսեց արհամարհել հայոց դա-

Լևոնի բերդը. Կիլիկիա, XIII դ. վերջ

վանանքը և հովանավորել խաչակիրներին: Նա արքունիքից հեռացնում էր հայ իշխաններին և կարևոր պաշտոնները տալիս խաչակիրներին: Կողոպտվում էին հայոց թագավորության արքունի գանձերը և ուղարկվում Անտիոք: Զայրացած հայ իշխանները ձերբակալեցին նրան և բանտարկեցին: Բանտում էլ նրան մահացու թունավորեցին: Ֆիլիպի ձերբակալության և մահվան պատճառով կրկին սրվեցին Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի փոխհարաբերությունները:

Գահակալության խնդիրը լուծելու համար հայ ավագանին 1226 թ. Տարսոն քաղաքում ժողով հրավիրեց: Այս անգամ որոշեցին Զաբելին ամուսնացնել Կոստանդին Գունդստաբլի որդի Հեթումի հետ:

Այսպիսով՝ Զաբելի և Հեթումի ամուսնությամբ վերջապես լուծվեց գահակալության խնդիրը: ***Հեթումը*** հռչակվեց հայոց թագավոր (1226–1270) և հիմք դրեց ***Հեթումյանների արքայատոհմին:***

Հայ-մոնղոլական դաշինքը: XIII դ. կեսերին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան քաղաքական նոր փոփոխություններ, որոնք կապված էին մոնղոլական արշավանքների և Եգիպտոսում մամլուքների իշխանության հաստատման հետ:

Մոնղոլական արշավանքները նոր խնդիրներ դրեցին նաև հայկական պետության առջև: Գրավելով Անդրկովկասը և Հայաստանը՝ մոնղոլական հորդաները մտան Փոքր Ասիա: ***1243 թ. Չմանկատուկի*** ճակատամարտում նրանք ծանր պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը: Հեթում I-ը գիտակցեց, որ միայն մոնղոլների հետ կնքված դաշինքը կփրկի Կիլիկիան, ուստի չօգնեց Իկոնիայի սելջուկներին: Չմանկատուկի ճակատամարտից հետո Կոստանդին թագավորահայրը մեկնեց մոնղոլների հրամանատար Բաչուի մոտ և առաջարկեց դաշինք կնքել երկու պետությունների միջև: Մոնղոլներն ընդունեցին այս առաջարկը միայն այն պայմանով, որ հայոց թագավորն անձամբ մեկնի մոնղոլների մայրաքաղաք ***Կարակորում:***

Իր այցը Մոնղոլիա նախապատրաստելու նպատակով Հեթումն իր եղբայր Սմբատ Գունդստաբլին ուղարկեց Կարակորում: Մոնղոլները համաձայնեցին պահպանել Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Հայերի բարեկամությունը շահելու համար նրանք խոստացան վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից:

Հայ–մոնղոլական դաշինքը երկու կողմերին էլ ձեռնտու էր: Մոնղոլները ծրագրել էին գրավել Ասորիքը և Պաղեստինը, ուստի վստահելի դաշնակցի կարիք ունեին: Այդպիսին կարող էր լինել Կիլիկյան Հայաստանը:

Հայ–մոնղոլական դաշինքը հաստատելու համար Հեթում I–ը 1254 թ. գարնանը մեկնեց Կարակորում: 1254 թ. աշնանը Հեթումը և Մանգու մեծ խանը հաստատեցին հայ–մոնղոլական դաշինքը: Երկու կողմերը պարտավորվում էին միմյանց օգնել պատերազմների ժամանակ: Հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատվում էին հարկերից: Հեթումն իր առջև խնդիր էր դրել օգտագործելու մոնղոլների ռազմական ուժերը՝ Պաղեստինը և Ասորիքը մահմեդականներից ազատագրելու համար: Այս դաշինքին պիտի միանային նաև խաչակիրներն ու Արևմտյան Եվրոպայի երկրները, մասնավորապես Ֆրանսիան ու Անգլիան, և պիտի ստեղծվեր հակամահմեդական կոալիցիա:

Օգտվելով մոնղոլների հետ կնքած դաշինքից՝ Հեթումը 1259 թ. պարտության մատնեց Իկոնիայի սուլթանությանը, իսկ 1263 թ.՝ Կիլիկիայի արևմտյան շրջաններում հաստատված թուրքմենական ցեղերին:

Կիլիկյան Հայաստանը մոնղոլների և մամլուքների միջև: 1250 թ. Եգիպտոսում իշխանության գլուխ էին եկել ***մամլուքները*** (նրանք գնված ստրուկներ էին և ծառայում էին սուլթանի անձնական գվարդիայում): Նրանք առաջնորդվում էին մոնղոլների և քրիստոնյաների դեմ սրբազան պատերազմի գաղափարով: Մամլուքները ծրագրել էին գրավել ոչ միայն խաչակիրների տիրույթները, այլև Կիլիկյան Հայաստանը:

1259 թ. մոնղոլները ձեռնամուխ եղան Ասորիքի նվաճմանը, որին մասնակցում էին նաև հայկական զորքերը: Սակայն 1260 թ. տեղի ունեցած ճակատամարտում մամլուքները ծանր պարտության մատնեցին դաշնակիցներին: Մամլուքներին անհանգստացնում էր մոնղոլա–հայ–խաչակրաց ռազմաքաղաքական դաշինքը: Անտիոքի իշխանության վրա մի քանի արշավանքներ կազմակերպելուց հետո մամլուքները որոշեցին շարժվել դեպի Կիլիկիա: 1266 թ. մամլուքները հարձակվեցին Կիլիկիայի վրա: Օգնության համար Հեթումը մեկնեց մոնղոլների մոտ, սակայն նրանք ժամանակին չհասան: Հայ–եգիպտական զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ ***1266 թ. օգոստոսի 23–ին*** Սև լեռների մոտ՝ ***Մառի*** կոչվող վայրում: Չնայած հայերը քաջաբար դիմադրեցին, բայց պարտություն կրեցին: Զոհվածների թվում էր նաև Հեթում I–ի որդի Թորոսը, իսկ մյուս որդի Լևոնը գերի ընկավ: Մամլուքյան զորքերը կողոպտեցին երկիրը: Նրանք վերադարձան Ասորիք՝ իրենց հետ տանելով հսկայական ավար և 40 000 գերի: ***1268 թ.*** Կիլիկիայի և Եգիպտոսի միջև հաշտության պայմանագիր ստորագրվեց: Հեթումը

ստիպված էր մամլուքներին զիջել սահմանամերձ մի շարք բերդեր:

Մառիի ճակատամարտում հայկական զորքերի կրած պարտությունն ավելի բարդացրեց խաչակիրների վիճակը: 1268 թ. մամլուքները կարողացան գրավել Անտիոք քաղաքը: Մառիի պարտությունը և Անտիոքի անկումը վերջ դրեցին քրիստոնեա-մոնղոլական դաշինք ստեղծելու Հեթումի ծրագրին: Մոնղոլներն այլևս ի վիճակի չէին մեծ ուժեր կենտրոնացնելու՝ մամլուքներին վճռական հարվածներ հասցնելու համար: Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը դարձավ Մերձավոր Արևելքի ամենահզոր պետությունը, որն արդեն աշխատում էր վերջ դնել խաչակրաց տիրույթներին և Կիլիկյան Հայաստանին: Այս պայմաններում Հեթում I-ը 1270 թ. գահը հանձնեց եգիպտական գերությունից ազատված Լևոն III-ին (1270–1289): Վերջինիս կառավարման առաջին տարիները խաղաղ անցան, ինչը հնարավորություն տվեց վերականգնելու ավերված երկիրը: Նա կառուցեց իր անունը կրող նշանավոր բերդը:

Մամլուքների հարձակումները վերսկսվեցին 1275 թ.: Նրանք ներխուժեցին Կիլիկիա, գրավեցին ու ավերեցին Մսիս քաղաքը և շրջապատեցին մայրաքաղաք Սիսը: Սակայն չկարողանալով գրավել միջնաբերդը՝ նրանք հեռացան մեծ ավարով և բազմաթիվ գերիներով: Նույն ժամանակ Արևմտյան Կիլիկիա ներխուժեցին Փոքր Ասիայում հաստատված թուրքմենները: Հայոց բանակը կարողացավ դիմակայել նրանց հարձակումներին:

Այդ ժամանակ Ասորիքը գրավելու համար մոնղոլները կազմակերպեցին նոր արշավանք, որին մասնակցում էին նաև Լևոն III-ը և վրաց թագավոր ***Դեմետրեն***: Սակայն 1281 թ. տեղի ունեցած ճակատամարտում դաշնակիցները պարտություն կրեցին և նահանջեցին: Լևոն արքան ստիպված էր բանակցություններ սկսել Եգիպտոսի հետ: Վերջապես 1285 թ. տասը տարի ժամկետով զինադադար կնքվեց, որի պայմանները Կիլիկիայի համար ծանր էին: Երկու կողմերը պարտավորվեցին փոխանակել ռազմագերիներին և թույլատրել յուրաքանչյուր կողմի առևտրականների ազատ երթևեկությունն իրենց պետությունների տարածքում:

1292 թ. մամլուքները պաշարեցին ու գրավեցին հայոց կաթողիկոսանիստ ***Հռոմկլա*** բերդաքաղաքը: Սպանվեցին բազմաթիվ հոգևորականներ, իսկ մյուսները ***Ստեփանոս Հռոմկլայեցի*** կաթողիկոսի (1290–1293) հետ գերի տարվեցին: Մամլուքները թալանեցին ու ավերեցին Հռոմկլայի եկեղեցիները: Հեթում II թագավորը (1289–1306) հայոց կաթողիկոսությունը տեղափոխեց Սիս:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք գահաժառանգության խնդրի լուծումը Կիլիկիայում Լևոն II-ի մահից հետո: Երբ է գահակալել Հեթում I-ը: Հեթումյաններն ինչպես ամրապնդեցին թագավորական իշխանությունը Կիլիկիայում:
2. Քաղաքական ինչ փոփոխություններ կատարվեցին Մերձավոր Արևելքում XIII դ. կեսերին: Ինչո՞ւ Հեթումը չօգնեց Իկոնիայի սուլթանությանը: Ո՞վ և ինչպես նախապատրաստեց Հեթումի այցը Մոնղոլիա: Երբ և ինչ պայմաններով կնքվեց հայ-մոնղոլական դաշինքը:

3. Ովքե՞ր էին մամլուքները և ե՞րբ եկան իշխանության Եգիպտոսում: Ի՞նչ էին ծրագրել մամլուքները: Ներկայացրեք 1266 թ. սկսված Կիլիկիայի և մամլուքների միջև պատերազմի ընթացքը և հետևանքները:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ 1275 թ. մամլուքների հարձակումը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ մամլուքների կողմից 1292 թ. Հռոմկլա բերդաքաղաքի գրավումը:

§ 5. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Կիլիկյան Հայաստանը XIV դ. սկզբին: Կիլիկիայի համար ստեղծված անբարենպաստ դրությունը շարունակվեց նաև XIV դ. սկզբին: Իրավիճակն ավելի բարդացավ, քանի որ մոնղոլներն ընդունեցին մահմեդականություն, և փոխվեց նրանց վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ: Այսպիսով՝ մոնղոլա-մամլուքյան հակամարտությունն ավարտվեց մամլուքների հաղթանակով: Օգտվելով դրանից՝ մամլուքները 1305 թ. նորից հարձակվեցին Կիլիկիայի վրա: Սակայն այս արշավանքի ժամանակ նրանք պարտություն կրեցին և ստիպված հաշտություն կնքեցին:

Ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար Կիլիկյան Հայաստանը սկսեց բանակցություններ վարել Բյուզանդիայի, Արևմտյան Եվրոպայի երկրների և պապականության հետ: Օգնության դիմաց հայերը խոստանում էին որոշ զիջումներ կատարել հունական և հռոմեականաթոլիկական եկեղեցիներին: Այս խնդիրը քննարկվեց ***1307 թ. Սիս*** քաղաքում հրավիրված ժողովում: Որոշվեց Հայոց եկեղեցու դավանանքի, ծեսերի ու արարողությունների մի մասը վերափոխել և հարմարեցնել հունական ու կաթոլիկ եկեղեցիների դավանանքին: ***Եկեղեցիների միավորման ձանապարհով հայոց արքունիքը ձգտում էր ստեղծելու քրիստոնեական երկրների դաշինք ընդդեմ մահմեդականների:***

1307 թ. Կիլիկիայում տեղակայված մոնղոլական զորքերի հրամանատար Բիլարղուն հյուրասիրության պատրվակով Անավարզա հրավիրեց հայոց թագավոր Լևոն IV-ին, նախկին թագավոր Հեթում II-ին և 40 հայ իշխանների ու սպանել տվեց նրանց: Հեթում II-ի մյուս եղբայր ***Օշինը*** կարողացավ մոնղոլներին դուրս քշել Կիլիկիայից և երկրի կառավարումը վերցնել իր ձեռքը (1308–1320):

Այդ ժամանակ լարված իրավիճակ ստեղծվեց նաև Կիլիկյան Հայաստանի ներքաղաքական կյանքում: Երբ Օշին թագավորը և ***Կոստանդին Կեսարացի*** կաթողիկոսը փորձեցին իրագործել Սսի ժողովի որոշումները, հանդիպեցին հայ բնակչության համառ դիմադրությանը: Մայրաքաղաքում տեղի ունեցան ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին հրաժարվել Սսի ժողովի որոշումները կենսագործելուց: Եկեղեցիների միավորման հակառակորդների մի մասին ձերբակալեցին և աքսորեցին Կիպրոս կղզի, իսկ մյուսներին բանտարկեցին: Տարաձայնություններին վերջ տալու համար Օշին թագավորը ***1309 թ. Ադանա*** քաղաքում հրավիրեց նոր ժողով, որը վերահաստատեց Սսի ժողովի որոշումները: Հայաստանում հրաժարվեցին Սսի և Ադանայի ժողովների որոշումները կատարելուց: Իմանալով այս մասին՝ պապականությունը պահանջեց նոր ժողով հրավիրել, վերահաստատել

նախորդ ժողովների որոշումներն ու իրագործել դրանք: Արևմուտքից օգնություն ստանալու ակնկալիքով Օշին թագավորը և Կոստանդին կաթողիկոսը ***1317 թ. Ադանայում*** նոր ժողով հրավիրեցին, որը վերահաստատեց նախորդ ժողովների որոշումները: Այսպես հայ հասարակության մեջ առաջացավ մի խմբավորում, որը փորձում էր Հայոց եկեղեցին միավորել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: Այն ստացավ ***ունիթորներ*** (միարարներ) անվանումը: Ունիթորների և հակաունիթորների պայքարը խախտեց Կիլիկիայի հասարակության միասնությունը և թուլացրեց երկիրը:

Մամլուքների արշավանքները: Օշին թագավորի մահից հետո գահն անցավ նրա որդի Լևոն V–ին (1320–1342): Քանի որ նա անչափահաս էր, երկիրը կառավարում էին խնամակալները: Այդ ժամանակ Կիլիկիան մեն–մենակ էր մնացել՝ շրջապատված մահմեդական երկրներով:

1320 թ. մամլուքները կրկին հարձակվեցին Կիլիկիայի վրա: Նրանք պաշարեցին Սիս քաղաքը, ավերեցին շրջակայքի գյուղերը:

Հաջորդ տարի Կիլիկիա ներխուժեցին Իկոնիայի սուլթանության տարածքում տեղակայված մոնղոլական զորքերը և թուրքմենները: Նրանց 30–հազարանոց բանակը հասավ Ադանա և Սիս ու շուրջ մեկ ամիս ավերում էր երկիրը:

1322 թ. Կիլիկիա արշավեցին մամլուքները: Նրանց հաջողվեց գրավել ***Այաս*** նավահանգիստը և ավերել ցամաքային ու ծովային ամրությունները: Եգիպտոսի հետ հաշտության պայմանագիր կնքելու համար հայոց կաթողիկոս ***Կոստանդին Լամբրոնացին*** մեկնում է Կահիրե: ***1323 թ.*** կնքվում է հայ–եգիպտական հաշտության պայմանագիր: Կիլիկիան պարտավորվում էր Եգիպտոսին վճարել տարեկան 1,2 մլն արծաթ դիրհեմ, Այաս նավահանգստից ստացած եկամուտների կեսը և օտարերկրացիներին վաճառած աղից ստացված եկամուտների կեսը: Եգիպտոսը պարտավորվում էր զորքերը դուրս բերել Կիլիկիայից և վերաշինել ավերված քաղաքները՝, բացի Այաս նավահանգստի ծովային ամրություններից:

Այաս նավահանգստի գրավումը և ավերումը մեծ արձագանք առաջացրին Արևմտյան Եվրոպայում: Պապական արքունիքում նորից փորձեր ձեռնարկվեցին խաչակրաց արշավանք կազմակերպելու համար: Այաս նավահանգստի վերականգնման համար պապական արքունիքը Կիլիկիային տրամադրեց 30 000 ֆլորին գումար:

Այդ ժամանակ ֆրանսիական արքունիքում որոշակի նախապատրաստական աշխատանքներ էին կատարում խաչակրաց արշավանք կազմակերպելու համար: Նախատեսվող արշավանքի մասին լուրերը վրդովեցնում են մահմեդականներին: 1335 թ. Կիլիկիա մտան մամլուքները և գրավեցին ու ավերեցին Տարսոն, Ադանա, Այաս և Մսիս քաղաքները: Ռազմական գործողությունները շարունակվեցին մինչև 1337 թ.: Լևոն V–ը 1337 թ. ստիպված եղավ ծանր պայմաններով հաշտության պայմանագիր կնքել: Կիլիկիան որոշ տարածքներ ու բերդեր զիջում էր մահմեդականներին: Այսպիսի ծանր իրավիճակում էլ Լևոն V–ը հանկարծամահ եղավ:

Կիլիկիայի հայկական թագավորության անկումը: Լևոնը ժառանգներ չուներ, ուստի արքունական խորհուրդը որոշեց գահը հանձնել նրա հորաքրոջ որդուն՝ ***Գվիդոն Լուսինյանին***, որն այդ ժամա-

նակ Բյուզանդիայում էր: Լուսինյանները ֆրանսիական ծագում ունեին և կառավարում էին Կիպրոսում: Սա քաղաքական որոշում էր, որի միջոցով փորձ էր արվում Կիլիկիայի համար ապահովելու Կիպրոսի և Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունը: Սակայն Գվիդոն Լուսինյանի կառավարումը կարճ տևեց: 1344 թ. նա իր եղբայր Բոհեմունդի և 300 ֆրանկ ասպետների հետ սպանվեց Ադանա քաղաքում: Արքունի խորհուրդը որոշեց թագավոր ընտրել Պաղտին Մարաջախտի որդի ***Կոստանդինին*** (1344–1362): Այսպես հայոց գահն անցավ Հեթումյանների ազգակից ***Նորեցիներին***:

Համախմբելով երկրի ռազմական ուժերը՝ Կոստանդին IV–ը Հռոդոս կղզու ասպետների ու կիպրոսցիների օգնությամբ 1347 թ. վերագրավեց Այաս նավահանգիստը: Սակայն մեկ տարի անց մամլուքները գրավեցին և հիմնովին ավերեցին Այասը:

1360 թ. մամլուքները վերջնականապես տիրեցին Տարսոն և Ադանա քաղաքներին: Դրանով Կիլիկյան Հայաստանը կորցրեց ողջ Դաշտային Կիլիկիան և գրեթե մեկուսացվեց Միջերկրական ծովից:

Նույն ժամանակ կարամանները (թուրքմենական ցեղ) պաշարում են Կոռիկոս նավահանգիստը: Հայերին օգնության է գալիս Կիպրոսի թագավոր Պետրոս I–ը և քաղաքն ազատում պաշարումից: Կոռիկոսը մնում է Կիպրոսին մինչև 1448 թ.: Պետրոսը ծրագրում էր դառնալ նաև Կիլիկիայի թագավոր և ստեղծել հայ–կիպրական միացյալ պետություն: Սակայն այս ծրագիրը չիրագործվեց: 1369 թ. նա սպանվեց:

Դաշտային Կիլիկիան նվաճելուց հետո մամլուքները ծրագրում են գրավել նաև Լեռնային Կիլիկիան: Նրանց 60–հազարանոց բանակը շարժվում է Լեռնային Կիլիկիա և պաշարում Սիս մայրաքաղաքը: Մարտերում իրենց կատարած քաջագործություններով աչքի ընկան ***Լիպարիտ*** սպարապետը, ***Հեթում*** և ***Զարմանդուխտ*** ամուսինները: Մեծ դժվարությամբ հայերը կարողացան վերացնել մայրաքաղաքի պաշարումը:

Գիտակցելով, որ քրիստոնյա երկրները չեն օգնելու Կիլիկիային, ***Մեսրոպ Արտազեցի*** կաթողիկոսը (1359–1372) Սիս քաղաքում ***1361 թ.*** հրավիրում է եկեղեցական ժողով, որը չեղյալ է հայտարարում Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումները:

1373 թ. հայոց գահը կրկին թափուր է մնում: Արքունի խորհուրդը որոշում է այն հանձնել Գվիդոն Լուսինյանի եղբորորդի Լևոնին, որն այդ ժամանակ Կիպրոսում էր: Նա ծնվել էր 1342 թ. Կիլիկիայում, սակայն Գվիդոնի սպանությունից հետո տեղափոխվել էր Կիպրոս: Լևոնը մեծ դժվարությամբ հասավ Սիս և օծվեց հայոց թագավոր: Այդ ժամանակ հայկական թագավորությունը, բացի մայրաքաղաքից, ընդգրկում էր Անավարզա քաղաքը և մի քանի բերդեր Լեռնային Կիլիկիայում: Մամլուքները և կարամանները կրկին պաշարում են մայրաքաղաքը: Պաշարվածները, դրսից ոչ մի օգնություն չստանալով, հրկիզում են քաղաքը և քաշվում միջնաբերդ: Ռազմամթերքի և սննդամթերքի պակասը ստիպում է ***1375 թ. ապրիլի 16–ին*** հանձնել միջնաբերդը: Գերյալների մեջ էին նաև Լևոն VI Լուսինյանն ու նրա ընտանիքը, ***Պողոս Սսեցի*** կաթողիկոսը: Նրանց հատուկ հսկողությամբ տարան Կահիրե: Սուլթանը հայոց կաթողիկոսին թույլատրեց վերադառնալ

Կիլիկիա, իսկ Լևոնին արգելեց թողնել Կահիրեն: Հետագայում նա ևս գերությունից ազատվեց և տեղափոխվեց Արևմտյան Եվրոպա: Հայոց վերջին թագավորը մահացավ 1393 թ. Փարիզում:

Սսի անկումից հետո Կիլիկիայում իր գոյությունը շարունակում էր պահպանել հայոց կաթողիկոսությունը: Հայոց պետականության անկումից հետո Կիլիկիայում դեռ երկար ժամանակ իրենց գոյությունը շարունակում էին պահպանել մեծ թվով հայ իշխանական տներ: Սակայն նեղվելով կարամանների և մամլուքների միջև անընդհատ պատերազմներից և ծանր հարկերից՝ Կիլիկիայի հայ բնակչության մի մասը ստիպված հեռացավ հայրենիքից՝ հիմնականում հաստատվելով Կիպրոսում, Իտալիայում, Ֆրանսիայում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրեք Կիլիկիայի հայոց թագավորության քաղաքական դրությունը XIV դարի սկզբին: Ինչ քայլեր ձեռնարկվեցին այդ իրավիճակից դուրս գալու համար: Ինչ իրադարձություններ եղան Կիլիկիայում, երբ Օշինն ու կաթողիկոսը փորձեցին իրագործել Սսի ժողովի որոշումները: Ներկայացրեք ունիթորական (միարարական) խմբավորման առաջացումը. ինչ հետևանք ունեցավ դա:
2. Երբ է գահակալել Լևոն V–ը: Ովքեր հարձակվեցին Կիլիկիայի վրա 1320 և 1321 թվականներին: 1323 թ. հայ–եգիպտական պայմանագրով կողմերն ինչ պարտավորություններ էին ստանձնում:
3. Ո՞վ և ինչո՞ւ կիլիկյան գահը հանձնեց Գվիդոն Լուսինյանին. վերջինս ինչ ճակատագիր ունեցավ: Երբ է գահակալել Կոստանդին IV–ը: Ո՞վ էր Պետրոս I–ը և ինչ էր ծրագրում: Ովքեր աչքի ընկան Սիս մայրաքաղաքի պաշտպանության ժամանակ:
4. Ինչ որոշում կայացրեց Սսի 1361 թ. եկեղեցական ժողովը. հիմնավորեք այդ որոշման անհրաժեշտությունը:
5. Ինչ գիտեք Լևոն Լուսինյանի մասին. երբ է նա օծվել հայոց թագավոր: Ինչ ճակատագիր ունեցավ Կիլիկիայի հայոց վերջին թագավոր Լևոն VI–ը:
6. Ժամանակագրական աղյուսակի տեսքով ներկայացրեք Կիլիկյան Հայաստանի գահակալներին և նրանց օրոք տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

§ 6. ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հողատիրության տեսակները: Կիլիկիայի բնակլիմայական բարենպաստ պայմանները, ընդարձակ արոտավայրերը, խոտհարքները և արգավանդ հողերը հնարավորություն էին տալիս զբաղվելու երկրագործությամբ և անասնապահությամբ: Երկրագործության մեջ առաջին տեղը զբաղեցնում էին հացահատիկային բույսերի մշակումը և այգեգործությունը: Դաշտային Կիլիկիայի որոշ շրջաններում մշակում էին նաև մերձարևադարձային մի քանի բուսատեսակներ:

Անասնապահությունը զարգացած էր հատկապես Լեռնային Կիլիկիայում: Այդ բնագավառում հայտնի էր ձիաբուծությունը:

Սոցիալ–տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում ավե-

լի բարդ ձևեր ընդունեցին, քան դրանք գոյություն ունեին բուն Հայաստանում: Մինչև Ռուբինյան իշխանության հաստատումն այստեղ բնակվում էին մեծ թվով հույն և հայ իշխաններ: Հետագայում Կիլիկիայում հաստատվում են նաև խաչակիրներ, որոնք ռազմական ծառայության դիմաց հողեր էին ստանում: Ստեղծված պայմաններում Կիլիկյան Հայաստանում ձևավորվեցին հողատիրության մի քանի տեսակներ՝ ***արքունական, իշխանական, վանքապատկան, համայնական***:

Թագավորին պատկանող հողերը, քաղաքները, բերդերը կոչվում էին թագավորական կամ արքունի: Կիլիկյան Հայաստանում արքունի տիրույթները պատկանում էին թագավորին և արքայական ընտանիքի բոլոր անդամներին:

Կիլիկիայում հաստատված իշխանների մի մասն ուներ որոշակի տարածքներ, որոնց տիրում էին ժառանգաբար՝ մասնավոր սեփականության իրավունքով: Այս տարածքները կոչվում էին ***հայրենիք***, իսկ սրանց տերերը՝ ***հայրենատեր–բերդատերեր***: Խոշոր հայրենատերերի թիվը Կիլիկիայում XII դ. վերջին հասնում էր 45–ի:

Թագավորը և հայրենատեր–բերդատերերը որոշակի պայմանով, մասնավորապես զինվորական ծառայության դիմաց հողեր էին տրամադրում առանձին մարդկանց: Այս հողերը ժառանգաբար էին անցնում, միևնույն ժամանակ պայմանական էին, քանզի ստացողի սեփականությունը չէին և պայմաններից որևէ մեկի խախտման դեպքում հետ էին վերցվում:

Կիլիկիայում կային շուրջ 150 վանք ու եկեղեցի, որոնք ունեին հսկայական չափերի հասնող հողատարածքներ: Վանքապատկան հողատիրությունը հիմնականում առաջանում էր գնման և նվիրատվությունների հաշվին: Կիլիկիայի հայ թագավորներն ու իշխանները ևս բազմաթիվ հողային նվիրատվություններ էին կատարում հօգուտ եկեղեցու:

Կիլիկիայում գոյություն ուներ նաև համայնական հողատիրություն: Համայնքին պատկանող հողերի մի մասը որոշակի պայմաններով գյուղացիներին տրվում էր օգտագործման համար: Տնամերձ հողերը համարվում էին գյուղացիների սեփականությունը:

Գյուղական համայնքը: Գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելու նպատակով համայնքի համար առանձնացված հողատարածքները սովորաբար բաժանվում էին երկու մասի՝ ***համայնական*** և ***անձնական***: Առաջինը տնօրինում էր համայնքը, ուստի այն ներկայանում էր որպես համայնքի սեփականություն, իսկ երկրորդը տնօրինում էր համայնքի անդամ ընտանիքը: Համայնական մշակելի հողերի և արոտավայրերի մի մասը պարբերաբար վերաբաժանվում էր ընտանիքների միջև՝ ըստ շնչերի: Համայնքի անդամների մի մասը պարտավոր էր ռազմական ծառայություն կատարել:

Գյուղական համայնքը որոշակի ինքնավարությամբ օժտված վարչական միավոր էր: Գյուղի ներքին կյանքի հետ կապված խնդիրները տնօրինում էր համայնքը: Համայնքին վերաբերող կարևոր խնդիրները լուծելու համար հրավիրում էին համայնքի անդամների ժողով, որն ընտրում էր նաև գյուղի տանուտեր: Յուրաքանչյուր համայնք ուներ իր եկեղեցին կամ մատուռը, որը նվիրված էր լինում գյուղը հովանավորող որևէ սրբի: Գյուղական եկեղեցին զբաղվում էր համայնքի հոգևոր խնդիրներով: Նա էր իրականացնում ծննդյան, հարսանիքի, թաղման և գյուղում կատարվող այլ արարողություններ: Եկեղեցուն կից սո-

վորաբար կար դպրոց, ուր գյուղի երեխաները սովորում էին գրել, կարդալ, հաշվել, երգել:

Արհեստները, առևտուրը և քաղաքային կյանքը: Կիլիկիայի ընդերքը հարուստ էր զանազան տեսակի օգտակար հանածոներով: Կիլիկյան Հայաստանում արդյունահանում և վերամշակում էին տարբեր տեսակի հանքեր: Հայկական պետականության շրջանում Կիլիկիայում ամենից շատ արդյունահանում և վերամշակում էին երկաթը: Արդյունահանում էին նաև պղինձ, արծաթ, ոսկի:

Կիլիկյան Հայաստանում վերելք էին ապրում նաև արհեստները: Արհեստագործության զարգացման համար խթան էին բազմատեսակ հումքի և օգտակար հանածոների առկայությունը և ներքին ու արտաքին առևտրի աճը:

Կիլիկիան Արևելք-Արևմուտք ցամաքային և ծովային տարանցիկ առևտրական ճանապարհների խաչմերուկում էր: Միջերկրական ծովի ափերին գտնվող նավահանգիստները տարանցիկ առևտրի համար շատ հարմար դիրք ունեին:

Կիլիկյան Հայաստանի քաղաքային կյանքի աշխուժացման և առևտրի զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ մոնղոլական կայսրության ստեղծումը, որը ձգվում էր Չինաստանից մինչև Միջերկրական և Սև ծովերը: Մոնղոլական տերության տարածքով անցնող առևտրական ճանապարհների մի մասն ավարտվում էր մոնղոլների դաշնակից Կիլիկիայում: Այստեղի նավահանգիստներից էլ սկսվում էր ծովային առևտրական ուղին դեպի Եվրոպա:

Կիլիկյան Հայաստանի նշանավոր քաղաքներից էին Սիսը, Տարսոնը, Այասը, Մսիսը, Կոռիկոսը, Աղանան, Անավարզան: Բոլոր քաղաքները ներառված էին արքունական տիրույթների մեջ և կոչվում էին թագավորական քաղաքներ: Սրանք կառավարում էին թագավորի նշանակած հատուկ պաշտոնյաները՝ ***կապիտանները***:

Քաղաքների մեջ որպես վարչական և մշակութային կենտրոն առանձնանում էր Սիս մայրաքաղաքը: Այստեղ էին հայոց արքունիքը, դրամատունը, զանձարանը, օտարերկրյա դեսպանությունները: 1292–1441 թթ. Սիսը եղել է Հայոց կաթողիկոսների նստավայրը:

Կիլիկյան Հայաստանի մյուս նշանավոր քաղաք ***Տարսոնը*** համարվում էր պետության երկրորդ մայրաքաղաքը: Հայոց թագավորները սովորաբար թագադրվում էին Տարսոն քաղաքում: Այն Կիլիկիայի արհեստագործության և առևտրի գլխավոր կենտրոններից էր: Քաղաքը Կապադովկիայից Ասորիք տանող քարավանային առևտրի ճանապարհին էր:

Արտաքին և ներքին առևտրի ու արհեստագործության կենտրոններից էր ***Այաս*** քաղաքը: Այն անվանում էին «Հայոց թագավորի նավահանգիստ»: Այասի առևտրական նշանակությունը հատկապես բարձրացավ, երբ խաչակիրները կորցրին Անտիոք և Ակրա քաղաքները: Այասը մնաց Արևելքի միակ մեծ առևտրական կենտրոնը, որը քրիստոնյաների ձեռքին էր: Նրա առևտրական մրցակիցը Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգիստն էր: Տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն էր նաև ***Կոռիկոսը***: Տարանցիկ առևտրից հայկական պետությունը մեծ եկամուտներ էր ստանում: Այսպես՝ 1312 թ. Այասում վենետիկցի 28 վաճառականներից գանձված մաքսատուրքի չափը կազմում էր 450 000 ոսկե ֆրանկ:

Կիլիկյան Հայաստանից արտահանում էին երկաթ, շինափայտ, կաշի, բուրդ, ձի-

եր, հացահատիկ, աղ: Առևտրի զարգացմանը նպաստում էին հայոց թագավորների կողմից եվրոպացի վաճառականներին տրված առևտրական արտոնությունները: 1201 թ. արտոնություններ ստացան ջենովացիները, 1271 թ.՝ վենետիկցիները, իսկ 1335 թ.՝ ֆլորենցիացիները:

Քաղաքային բնակչության մի մասը զբաղվում էր արհեստագործությամբ: Արհեստավորները ստեղծում էին իրենց կազմակերպությունները՝ ***համքարությունները*** (եղբայրություն): Քաղաքի սահմաններում միևնույն մասնագիտության արհեստավորները միավորվում էին մեկ համքարության մեջ:

Արհեստի և առևտրի զարգացման համար խիստ կարևոր էր նաև դրամաշրջանառության ճիշտ կազմակերպումը: Դրամների թողարկումը սկսվել էր դեռևս Ռուբինյան իշխանության շրջանում և շարունակվել մինչև պետության անկումը: Հիմնական դրամական միավորն արծաթե դրամն էր: Կային նաև պղնձե դրամներ: Արծաթե դրամը, որը կոչվում էր թագավորական, օգտագործել են նաև այլ երկրների շուկաներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տնտեսության ինչ ճյուղեր էին զարգացած Կիլիկիայում: Հողատիրության ինչ ձևեր կային. պարզաբանեք դրանց էությունը:
2. Ո՞րն էր գյուղական բնակչության կազմակերպման հիմնական ձևը: Ովքե՞ր էին տնօրինում համայնական և անձնական հողատարածքները: Ինչպե՞ս էր դրսևորվում համայնքի ինքնավարությունը:
3. Ինչ օգտակար հանածոներ էին արդյունահանում Կիլիկիայում: Ինչն էր նպաստում արհեստագործության զարգացմանը: Ինչ գործոններ նպաստեցին Կիլիկիայում քաղաքների զարգացմանը: Թվարկեք Կիլիկիայի նշանավոր քաղաքները. ինչո՞ւ էին դրանք կոչվում թագավորական, և ովքե՞ր էին կառավարում: Ինչո՞վ էր առանձնանում Սիսը: Ե՞րբ և ինչո՞ւ մեծացավ Այասի նշանակությունը:
4. Ինչ արտադրատեսակներ էին արտահանում Կիլիկիայից: Առևտուրը զարգացնելուն միտված ինչ քայլեր ձեռնարկեցին հայոց թագավորները: Ինչ կազմակերպությունների մեջ էին միավորված արհեստավորները: Ինչ դրամներ էին շրջանառվում Կիլիկիայում:

§ 7. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Արքունիքը: Երկիրը վարչական տեսակետից բաժանված էր նահանգների (աշխարհ), գավառների, գյուղերի: Առավել մեծ արտոնություններ ունեին հատկապես սահմանամերձ չորս նահանգները, որոնք փաստորեն նաև ռազմավարչական միավորներ էին:

Պետության կառավարման կենտրոնը արքունիքն էր: Նրա մեջ էին ***արքունի խորհուրդը, բարձրագույն դատական ատյանը*** և ***գործակալությունները***:

Արքունիքի գլուխ սկզբում կանգնած էր իշխանաց իշխանը, իսկ 1198–ից՝ հայոց թագավորը: Նրանք էին պատերազմ հայտարարում, հաշտություն և դաշինք կնքում, քաղաքներ և ամրոցներ հիմ-

նադրում, դրամ հատում և լուծում գահաժառանգության խնդիրը:

Արքունի խորհուրդը խորհրդակցական–օրենսդրական մարմին էր:

Երկրի կառավարումը թագավորն իրականացնում էր տասից ավելի գործակալությունների միջոցով:

Թագավորության հռչակումից հետո վերականգնվեց նաև ***թագադիր գործակալությունը***: Հանդիսությունների ժամանակ նա էր թագ դնում թագավորի գլխին և կապում արքայական նշանները, հետևում էր նաև արքունիքի կարգ ու կանոնի պահպանմանը:

Խնամակալության (պայլության) գործակալությունը գոյություն ուներ դեռ իշխանության շրջանից: Պայլը թագավորի առաջին խորհրդականն էր, և նրա բացակայության դեպքում փոխարինում էր թագավորին: Թագավորի անչափահասության դեպքում պայլը իրականացնում էր ոչ միայն նրա, այլև ամբողջ երկրի խնամակալությունը:

Կենտրոնական կառավարման համակարգում մեծ էր արքունի պալատի կառավարչի՝ ***սենեսկալի*** դերը: Նա էր տնօրինում արքունի եկամուտները և ծախսերը:

Գործակալությունների մեջ բավական ազդեցիկ էր ***արքունի քարտուղարությունը***, որի գլխավոր պաշտոնյան կոչվում էր ***կանցլեր***: Նա էր ղեկավարում բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ: Սովորաբար այս պաշտոնը տրվում էր Սսի արքեպիսկոպոսին: Սակայն հաճախ այս պաշտոնին նշանակում էին կրթված և լեզուներ իմացող այլ հոգևորականների: Այսպես՝ 1260–1289 թթ. այն զբաղեցնում էր ***Վահրամ Բաբունի*** վարդապետը:

Պետության զինված ուժերը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվել էին երեք գործակալություններ՝ ***սպարապետություն, սպասալարություն*** և ***մարաջախտություն (մատակարարման)***: Սպարապետին Կիլիկիայում հաճախ անվանում էին նաև ***գունդստաբլ***: Նա բանակի ընդհանուր հրամանատարն էր: Այդ պաշտոնին սովորաբար նշանակում էին առավել բանիմաց և ունակ զորահրամանատարների: Բանակում մեծ էր արքունական հեծելազորի հրամանատարի՝ ***սպասալարի*** դերը: Բանակի սպառազինության և պարենի մատակարարմամբ զբաղվում էր մարաջախտությունը, որի ղեկավարը կոչվում էր ***մարաջախտ***: Նա սպարապետի անմիջական տեղակալն էր:

Բանակը: Կիլիկիայի հայկական պետությունն իր գոյատևման ամբողջ ընթացքում միշտ պատերազմների մեջ էր, ուստի կանոնավոր և ուժեղ բանակ ունենալն անհրաժեշտություն էր: Մշտական բանակի կազմակերպումը սկսվեց դեռևս Ռուբինյան առաջին իշխանների օրոք:

Հայոց թագավորների և իշխանների հետ Կապադովկիա, Կիլիկիա և Հյուսիսային Միջագետք էր տեղափոխվել նաև նրանց ռազմական ուժերի մի մասը: Առավել մեծ զորքեր ունեին սահմանամերձ չորս նահանգների իշխանները, ապա՝ բերդատեր իշխանները: Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ էին զբաղեցնում հոգևոր–ասպետական միաբանությունների զորքերը: Ջինվորական ծառայության դիմաց սովորաբար Կիլիկիայի սահմանամերձ շրջաններում նրանց տալիս էին բերդեր և հողատիրույթներ: ***Հիվանդախնամների միաբանությունն*** իր ստացած տիրույթների դիմաց պար-

տավորվել էր ամեն տարի տրամադրել 400 հեծյալ ռազմիկ:

Պատերազմների ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրում էին նաև ***աշխարհազոր***: Կանոնավոր բանակի հիմնական կորիզը ձիավորներից կազմված հեծելազորն էր: Կիլիկիայում ևս սահմանվել էր ***ասպետի (ձիավորի)*** աստիճանը: Այն ստանալու համար անհրաժեշտ էր քննություն հանձնել ձիավարժությունից, նետաձգությունից, նիզակի և սրի գործածությունից և զինվորականի համար անհրաժեշտ այլ գիտելիքներից: Ձիավորի աստիճանի շնորհումը տեղի էր ունենում հանդիսավոր պայմաններում: Ձիավորի աստիճան ստանալը պարտադիր էր ոչ միայն ազատների, այլև թագավորի և բոլոր իշխանների որդիների համար:

Հայոց բանակում մեծ տեղ ուներ նաև ***ռազմական նավատորմը***, որը պաշտպանում էր պետության ծովային սահմանները: Այն անհրաժեշտ էր նաև ծովային առևտրի անվտանգությունն ապահովելու համար: Ռազմական նավատորմի համար կառուցել էին ծովային հատուկ ամրություններ: Դրանց մեջ հատկապես մեծ էր Այասի և Կոռիկոսի ծովային բերդերի նշանակությունը:

Մշտական բանակ պահելու համար Կիլիկյան Հայաստանում ևս մտցվեց ռազմական հարկ:

Պատերազմի ժամանակ Կիլիկյան Հայաստանը կարող էր ռազմադաշտ դուրս բերել 80–100 հազար զինվոր:

Դատական համակարգը: Մինչև հայկական պետականության առաջացումը Կիլիկիան Բյուզանդիայի կազմում էր և կառավարվում էր կայսրության օրենքներով: Հայկական պետականության հաստատումից հետո էլ այստեղ մեծ թվով հույներ էին ապրում, որոնց հասարակական-քաղաքական կյանքը որոշ ժամանակ դեռևս կարգավորվում էր հունա-բյուզանդական իրավանորմերով: Կիլիկիայում բնակություն էին հաստատել նաև մեծ թվով արևմտաեվրոպացիներ և խաչակիրներ, որոնք այստեղ բերեցին իրենց օրենսդրությունը:

Մինչև հայկական պետության ստեղծումը Կիլիկիան բաղկացած էր առանձին իշխանություններից, ուստի դատական կենտրոնական մարմիններ և համապետական օրենսդրություն դեռ չուներ: Յուրաքանչյուր իշխանություն ուներ սեփական դատարանը, որը համարվում էր այդ շրջանի բարձրագույն դատական մարմինը: Տեղական իրավական մարմինների դեր էին կատարում նաև եկեղեցական դատարանները, որոնք առաջնորդվում էին կանոնական իրավունքներով, սակայն դրանք բավարար չէին հասարակական ողջ կյանքը կարգավորելու համար: Ուստի ***Տարոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին*** հունարենից թարգմանում է հունա-բյուզանդական իրավունքի մի շարք երկեր:

Հայկական պետականության ամրապնդմանը զուգահեռ անհրաժեշտ էր այս բոլորը միավորել և ստեղծել համապետական միասնական օրենսդրություն: Այս խնդիրը լուծեց Հեթում I թագավորի եղբայր ***Սմբատ սպարապետը***: Նրա կազմած ***«Դատաստանագիրքը»*** միավորեց հայկական, հունական և խաչակրաց իրավանորմերը և հարմարեցրեց Կիլիկիայում ձևավորված պայմաններին:

Կիլիկյան Հայաստանի դատարաններում օգտագործում էին նաև Անտիոքի իշխանությունում ստեղծված ***«Անտիոքի ասիզներ»*** օրենսգիրքը:

Կիլիկիայում գոյություն ունեին հետևյալ դատարանները՝ արքունի, Սսի արքեպիսկոպոսական, ստորին կամ փոքր և եկեղեցական:

Արքունի դատարանը՝ որպես բարձրագույն դատական մարմին, քննում էր պետական նշանակության կարևորագույն գործերը: Դրանց թվում էին իշխանների միջև ծագած վեճերը, գահաժառանգության հետ կապված խնդիրները, հայրենիքի դավաճանությունը, թագավորի դեմ կազմակերպված դավադրությունը: Արքունի դատարանի նախագահը թագավորն էր, իսկ նրա բացակայության դեպքում՝ իշխանաց իշխանը:

Իր նշանակությամբ կարևոր տեղ էր զբաղեցնում Սսի արքեպիսկոպոսական դատարանը: Այստեղ հիմնականում քննում էին բարձրաստիճան հոգևորականներին վերաբերող գործերը, քրիստոնյաների և այլադավանների միջև առաջացած վեճերը: Սսի արքեպիսկոպոսական դատարանը նախագահում էր Սսի արքեպիսկոպոսը:

Ստորին կամ փոքր դատարանները քաղաքներում ու գավառներում էին և քննում էին տեղական նշանակություն ունեցող տարաբնույթ հանցագործություններ, իրավախախտումներ:

Եկեղեցական դատարանները Կիլիկիայում ևս պահպանվեցին: Այստեղ հիմնականում քննում էին ամուսնական հավատարմության, ամուսնալուծության և կենցաղային իրավախախտումների հետ կապված խնդիրներ, նաև եկեղեցական հարկերի մուծման կարգի խախտման գործեր:

Եկեղեցական դատարանների գործունեության համար 1243 թ. Սիս քաղաքում գումարված եկեղեցական ժողովն ընդունեց հատուկ կանոններ:

Այսպիսով՝ Կիլիկյան Հայաստանում ստեղծվել էր ***ճյուղավորված և լավ կազմակերպված դատական համակարգ***:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վարչական ինչ միավորների էր բաժանված Կիլիկիան: Ինչից էր բաղկացած արքունիքը: Ո՞վ էր կանգնած արքունիքի գլուխ, ինչ լիազորություններ ուներ արքունիքը: Ներկայացրեք գործակալությունները և նրանց գործառույթները:
2. Ինչ զորքեր էին ներառվում պետական բանակի կազմում: Ինչ պարտականություններ ուներ աշխարհազորը: Ո՞րն էր կանոնավոր բանակի հիմքը: Ինչ զորատեսակներից էր բաղկացած կիլիկյան բանակը: Ո՞վ էր ձիավորը, որքա՞ն էր մշտական բանակի թիվը պատերազմի ժամանակ:
3. Մինչև Սմբատ սպարապետի «Դատաստանագրքի» ստեղծումն ինչպե՞ս էր իրականացվում արդարադատությունը Կիլիկյան Հայաստանում: Ո՞րն էր Ներսես Լամբրոնացու և Սմբատ սպարապետի ներդրումը դատական համակարգի կայացման գործում: Ինչ դատարաններ կային Կիլիկիայում. պարզաբանե՛ք նրանց գործառույթները:

ԲԱԺԻՆ 2

ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (XV ԴԱՐ — XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XV ԴԱՐՈՒՄ

Հայկական անկախ պետականության անկման հետևանքները: Անկախ միասնական պետականության կորուստը բազմապիսի բացասական հետևանքներ ունեցավ հասարակության բոլոր խավերի համար: Առավել զգալի կորուստներից էր հայ իրավունքի, դատաստանի ու դատավարության բնագավառում սեփական ազգային համակարգի կազմալուծումը: Նվաճողները հայկական միջավայրում օտար համակարգ պարտադրեցին, որը կարևոր լծակ էր օտարների կողմից հայ իրականության մեջ ներթափանցելու, հայ հասարակությունը պառակտելու և հայ հասարակության դիմադրությունը ջլատելու համար:

Դրանով իսկ լուրջ հարված հասցվեց նաև ***հայրենիքի*** գաղափարին: Օտար դավանանքի վրա խարսխված կառավարման համակարգի ներդրումը, հողի սեփականության իրավունքի անցումն արևելյան բռնատիրության իշխանությանը, քոչվորական ցեղախմբերի ներհոսքը Հայկական լեռնաշխարհ միանգամայն անհուսալի և անպաշտպան էին դարձնում անձի և գույքի իրավունքները, նպաստում բնակչության ունեզրկմանը և սեփական բնակավայրերը լքելուն:

Խոշոր հարված հասցվեց նաև կրթամշակութային համակարգին: Չնայած ստեղծված պայմաններում առանձին անհատների գործադրած մաքառումներին, Հայաստանի և գաղթաշխարհի տարբեր վայրերում ու տարբեր ժամանակներում կրթական կենտրոնների ստեղծմանը՝ քաղաքական ու տնտեսական անկայուն իրավիճակը հնարավորություն չէր տալիս բուն Հայաստանում ծավալելու լիարժեք կրթական միասնական գործընթաց: Դա նույնպես իր բացասական հետևանքներն էր թողնում հայ հասարակության քաղաքակրթական առաջընթացի վրա:

Չնայած ստեղծված ծանր պայմաններին՝ հայ բնակչության հիմնական զանգվածը, կառչած մնալով հայրենի ավանդույթներին, օգտագործելով նաև ժամանակի գիտական ու կրթական ոլորտի հայտնագործությունները ու առաջընթացը, կարողացել է շարունակել իր գոյապայքարը, հիմնականում պահպանել ազգային–քաղաքակրթական դիմագիծը, ուղիներ փնտրել հայրենիքում վերականգնելու անկախ պետականությունը և ունենալու արժանապատիվ ապագա:

Դայքար վաչկատուն ցեղերի դեմ: Հայոց պետականության անկումից հետո օտար ցեղերի ներհոսքը Հայաստան տեղի է ունեցել հայ բնակչության զինված ուժեղ դիմադրության պայմաններում: Այդ մասին պատմական սկզբնաղբյուրներում եղած տեղեկություններից բացի՝ ցայտուն

վկայություն են նաև օտարների կողմից հաղթանակի հասնելու դեպքում տեղի բնակչության նկատմամբ իրականացված դաժանությունները և հաշվեհարդարները:

XIV դ. վերջին Հայաստանը ենթարկվեց Լենկ Թեմուրի, XV դ.՝ թուրքմենական ակ–կոյունլու և կարա–կոյունլու ցեղերի ասպատակություններին: XV–XVII դարերից պահպանված սկզբնաղբյուրներն արձանագրել են օտար ներխուժումների դեմ հայ ժողովրդի պայքարի շատ դրվագներ: Հայերի համառ դիմադրության վերաբերյալ փաստեր են թողել նաև օտար բանակներին ուղեկցող ու դրանց հաղթանակների մասին պատմող թուրք և օտարազգի պատմիչները (Էվլիա Չելեբի և այլք):

Սեփական ռազմական ուժերի աստիճանական նվազումը, առկա հնարավորությունները համախմբելու ու կենտրոնացնելու դժվարությունները, օտար բռնակալներից Հայաստանի ազատագրությունն իրականացնող ուժերի ոչ բավարար լինելը հայ գործիչներին մշտապես մղել են համագործակցելու բախտակից երկրների հետ:

Փոքր Ասիայի արևմտյան մասում թուրքական ցեղերից մեկի առաջնորդ Օսմանի հիմնադրած օսմանյան պետությունը (1299 թ.) հզորանալով գրավեց բյուզանդական հողերը, ապա Բալկանյան թերակղզին: 1453 թ.՝ Բյուզանդիայի մայրաքաղաք Կ. Պոլիսի գրավումից հետո, օսմանցիների ծավալումը դեպի Արևելք լուրջ վտանգ դարձավ Հայաստանի ազատագրման ճանապարհին: Ուստի եվրոպական երկրների ու Հռոմի պապի կողմից արդեն իսկ XV դ. երկրորդ կեսին ծրագրվող հակաօսմանյան դաշինքների մեջ, ի թիվս արևելյան այլ ժողովուրդների և երկրների (Պարսկաստան, Վրաստան և

Էջմիածնի Մայր տաճարի ժամանակակից տեսքը

այլն), Հայաստանի ընդգրկումը ևս միանգամայն օրինաչափ էր:

Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Ս. Էջմիածնում: Կիլիկիայում թագավորական իշխանության վերացումից հետո այնտեղ գտնվող կաթողիկոսական Աթոռը մնաց անպաշտպան: Կտրված լինելով բուն Հայաստանից՝ այն չէր կարող լիարժեքորեն իրականացնել իր համահայկական դերակատարումը: Կաթողիկոսական Աթոռն Էջմիածին վերադարձնելու անհրաժեշտությունը դառնում է Հայ եկեղեցու շատ գործիչների մտահոգության առարկան:

Հայ հոգևորականության ներկայացուցիչները մի քանի անգամ դիմեցին ***Գրիգոր*** կաթողիկոսին՝ առաջարկելով նստավայրը Սսից տեղափոխել Էջմիածին, սակայն մերժում ստացան: Այդ ժամանակ հրավեր ուղարկվեց հայ բարձրաստիճան հոգևորականներին՝ հավաքվելու և որոշելու կաթողիկոսության հարցը:

1441 թ. Թովմա Մեծոփեցու և ***Հովհաննես Հերմոնացու*** նախաձեռնությամբ ***Էջմիածնում*** գումարվում է մեծ ժողով, որին մասնակցում են Հայոց եկեղեցու

շատ ներկայացուցիչներ և հարցին տալիս են դրական լուծում: Այրարատյան նահանգի կառավարիչ նշանակված ***Յաղուբ բեկը***, որ կատարում էր ***Ջհանշահի*** (1437–1467) կարգադրությունը, նպաստավոր պայմաններ է ստեղծում ժողովականների համար: Նույն թվականին կաթողիկոս է ընտրվում ***Կիրակոս Վիրապեցին***:

Այդ իրադարձությունները հայ բնակչությանը մեծ հույս ներշնչեցին, ոգևորություն և ցնծություն պատճառեցին: Նման ազգային զանգվածային միջոցառմանը կարոտ ժողովուրդն այդ փաստն ընկալում էր որպես թագավորության վերականգնմանը հավասարազոր իրադարձություն:

Այսպիսով՝ շուրջ հազարամյա ընդմիջումից հետո ***Էջմիածինը կրկին դառնում է հայոց կաթողիկոսական նստավայրը***: Կաթողիկոսության փոխադրումն Էջմիածին ավելի բարձրացրեց Այրարատյան աշխարհի ազգային քաղաքական դերը և կարևոր նշանակություն ունեցավ բուն հայրենիքում հայ ժողովրդի հետագա համախմբման համար:

Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները: Ամենայան հայոց կաթողիկոսությունն իր գործունեությունն իրականացնում էր Հայաստանում և հարակից երկրներում հիմնված եկեղեցական կառույցների՝ նվիրապետական աթոռների միջոցով:

Հայոց եկեղեցու կարևոր կառույցներից էր դեռ VII դ. ստեղծված ***Երուսաղեմի հայոց պատրիարքությունը***: Այն մեծ դեր էր խաղում Մերձավոր Արևելքում հայ ժողովրդի կրոնական ու աշխարհիկ կյանքը կարգավորելու գործում:

XII դ. սկզբին հիմնադրվեց Հայոց եկեղեցու հզոր նվիրապետական կառույցներից մեկը՝ Աղթամարի կաթողիկոսությունը: Այն կարգավորում էր հիմնականում Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը: Զաքարիա կաթողիկոսը, որ վայելում էր Ջհանշահի աջակցությունը և ներկայանում որպես Գագիկ Արծրունի թագավորի սերունդ, ձգտում էր տիրանալու ողջ Հայաստանի հոգևոր առաջնորդությանը: Նրան այդ հաջողվում է, և Ջհանշահի օժանդակությամբ նա դառնում է Ամենայն հայոց կաթողիկոս: Զաքարիան միջամտում էր նաև երկրի քաղաքական կյանքին: Նա հաշտարարի դեր է ստանձնում անգամ մահմեդական ամիրայությունների միջև:

Աղվանից կոչվող եկեղեցին միավորում էր Այսրկովկասի արևելյան հատվածի ու հայկական Արցախ և Ուտիք նահանգների քրիստոնյա հայ բնակչությանը: XIV դարի վերջերից Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն դարձավ ***Գանձասարի վանքը***, և այդ կաթողիկոսությունը սկսեց անվանվել նաև ***Գանձասարի կաթողիկոսություն***: Այն ենթարկվում էր Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսությանը:

Էջմիածնում կաթողիկոսության վերահաստատումից հետո ***Կիլիկիայի կաթողիկոսական աթոռը*** շարունակեց իր գործունեությունը: Կիլիկիայի կաթողիկոսության իրավասության ներքո էր շրջակա տարածքների հայ բնակչության հոգևոր առաջնորդությունը:

XV դարում Հայ եկեղեցու կյանքում տեղի է ունենում ևս մեկ կարևոր իրադարձություն: 1461 թ. Կոստանդնուպոլսում հիմնադրվում է ***հայոց պատրիարքությունը***, որը պետք է տնօրիներ օսմանյան պետության տիրապետության սահմաններում գտնվող հայ համայնքի հոգևոր կյանքը: Պատրիարքները հաստատվում էին սուլթանների հրովարտակներով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն էր վիճակը Հայաստանում օտար տիրապետության շրջանում: Ներկայացրե՛ք անկախ պետականության կորստի բացասական հետևանքները:
2. Ինչո՞ւ էին հայ գործիչները փորձում Հայաստանը նվաճած օտարների դեմ պայքարում համագործակցել այլ պետությունների հետ:
3. Ինչո՞ւ Կիլիկիայի կաթողիկոսությունն այլևս ի վիճակի չէր իրականացնելու իր համահայկական դերակատարումը: Ե՞րբ և ո՞ր ժողովում որոշվեց կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխել Էջմիածին: Հայ ժողովրդի համար ի՞նչ նշանակություն ունեցավ այդ որոշումը:
4. Ներկայացրե՛ք Հայ եկեղեցու նվիրապետական աթոռները. ե՞րբ են հիմնադրվել, ո՞ր տարածաշրջանի հայ բնակչությանն էր ծառայում յուրաքանչյուրը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Թովմա Մեծոփեցին՝ կաթողիկոսական աթոռը Էջմիածին փոխադրելու մասին

…Այցելեցինք Դարոն գավառ, այնուհետև՝ Ակոռի, Խոր Վիրապ և եկանք գյուղաքաղաք Երևան: Այստեղ պետք էր տեսնել բոլոր մերայինների ուրախությունն ու ցնծությունը, որովհետև զանգակների ձայնն էր հնչում, երիտասարդներն էին գոչում, ծերերն աղաղակում էին և ցնծությամբ օրհնում էին Աստծուն, կանայք, երկրպագելով ու լալով, բոլորին զարհուրեցնում էին, իսկ անօրենները տեսնելով զարմանում էին: Եվ ինչպես Փրկչի՝ սուրբ Երուսաղեմ գալու օրը մեծ ուրախությամբ ընդառաջ ելան, նույնպես և այսօր հայերիս համար եղավ, որովհետև վաղուց ի վեր անտերունչ էին, և ոչ ոք չէր տեսել վարդապետների և եպիսկոպոսների այսպիսի հավաքված միաբանություն… Իսկ հաջորդ օրը հրաման եկավ Եաղուպ բեկ անունով բռնավորից, և գնացինք նրա մոտ, և նա, ինչպես քրիստոնյաների թագավոր՝ մեծ սիրով և պատվով ընդունեց մեզ: Եվ առավոտյան վերցնելով իր զորքն ու մեզ բոլորիս՝ նվագով ու թմբուկով ու զուռնայով բարձրաձայն գոչյուններով մտանք սուրբ քաղաք Վաղարշապատ: Հավատացյալներն ու Քրիստոսի հավատարիմ ժողովուրդը և անհավատները, ընդառաջ գալով, զարմանում էին…

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVI ԴԱՐՈՒՄ ԵՎ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Հայաստանը և թուրք-պարսկական հակամարտության ծավալումը: XVI դարի սկզբին թուրքմենական ցեղախմբերի տիրապետությանը Հայաստանում փոխարինելու եկան Օսմանյան և Սեֆյան հակամարտող տերությունների ծանր ու ավերիչ ժամանակները:

Ակ-կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք Թավրիզը 1502 թ. գրավելուց հետո Սեֆյանները հիմնադրեցին իրենց պետությունը, այնուհետև գրավեցին ամբողջ Իրանը, Հայաստանը և հասան մինչև Բաղդադ:

Օսմանյան սուլթան Սելիմ Ահեղը 1512 թ. մեծ զորքով արշավեց դեպի արևելք՝ կասեցնելու Սեֆյանների հաղթարշավը, և ***1514 թ. Չալդրանի ճակատամարտում*** պարտության մատնելով շահ Իսմայիլին՝ գրավեց Թավրիզը: Թավրիզից Կ. Պոլիս փոխադրվեցին մեծ թվով

ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

գերիներ, որոնց հիմնական մասն արհեստավորներ էին: Շուտով շահ Իսմայիլը կարողանում է խոշոր բանակ հավաքագրել և թուրքերին դուրս քշել Իրանից: Հետագա տարիներին երկարատև և արյունալի պատերազմական գործողություններն ընթանում էին հիմնականում Հայաստանի տարածքում: Ավերվում էին հայկական քաղաքներն ու գյուղերը, քայքայվում էր տնտեսությունը, գերեվարվում՝ բնակչությունը: Այդ պատերազմների ժամանակ ավելի մեծ թվով թյուրքական ու քրդական ցեղախմբեր հնարավորություն ստացան ներթափանցելու Հայաստան և բնակվելու բարեբեր երկրամասերում:

1550 թ. պարսիկները խոշոր բանակով արշավեցին Օսմանյան կայսրության դեմ: Նրանք որոշել էին ամայացնել այն բոլոր տարածքները, որտեղով թուրքական զորքերը կարող էին շարժվել Իրանի դեմ: Նրանց բանակն ավերակների վերածեց թուրքերի ճանապարհին ընկած հայկական գրեթե բոլոր բնակավայրերն ու ցանքատարածությունները:

1555 թ. Ամասիայում Օսմանյան և Սեֆյան տերությունների միջև կնքված հաշտության պայմանագրի համաձայն՝ պատերազմական գործողությունները դադարեցվում էին: Սահմանագիծն անցնում էր Հայաստանի տարածքով՝ այն բաժանելով երկու մասի: Արևմտյան մասն անցնում էր օսմանյան թուրքերին, իսկ Արևելյան Հայաստանում իրենց տիրապետությունն էին հաստատում պարսիկները: Կնքված հաշտությունը, սակայն, կարճատև էր:

Շուտով օսմանյան բանակները կրկին արշավեցին Իրանի տիրապետության ներքո գտնվող Այսրկովկաս և գրավեցին հսկայական տարածքներ: Իրանը չկարողացավ լուրջ դիմադրություն կազմակերպել, և գահ բարձրացած շահ Աբաս I–ը (1587–1629) շտապեց 1590 թ. հաշտություն կնքել օսմանցիների հետ՝ նրանց զիջելով գրաված բոլոր տարածքները, այդ թվում՝ Այսրկովկասն ու Ատրպատականը: Սակայն շահ Աբասը մտադիր չէր հրաժարվելու հետագա պայքարից, ուստի խաղաղ ժամանակահատվածն օգտագործեց նոր բանակ կազմավորելու, երկրի տնտեսությունը կարգավորելու և ապագա պատերազմական գործողությունների համար նոր դաշնակիցներ որոնելու համար: Նա առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի ու արևմտաեվրոպական երկրների հետ, անգլիական սպաների ու վարպետների օգնությամբ վերակազմեց ու վերազինեց պարսկական բանակը: Ձուլվեցին թնդանոթներ: Եվրոպական երկրներն իրենց հերթին օգնում և հրահրում էին շահ Աբասին օսմանցիների դեմ պատերազմի:

1603 թ. շահ Աբասը, փորձելով օգտագործել հարմար առիթը, ձեռնամուխ եղավ օսմաններին զիջած տարածքների վերագրավմանը: Խոշոր բանակով նա հարձակվեց Թավրիզի վրա և գրավեց այն: Անցնելով Արաքս գետը՝ շահը մտավ Ջուղա, այնուհետև գրավեց Նախիջևանը և պաշարեց Երևանի բերդը: Օսմանյան բանակի գլխավոր ուժերը փակվեցին Երևանի բերդում և երկար դիմադրեցին պարսիկներին: Երևանի բերդի վրա հարձակումների ժամանակ շահ Աբասը ճակատամարտի առաջին շարքեր էր քշում հայ բնակչությանը, նրանց էր պարտադրվում խրամատներ փորել, հողե պատնեշներ կանգնեցնել և այլն: Իրանի բանակի սնունդը ևս ապահովվում էր հայ բնակչությունից վերցված պարենով: Ինը

ամիս դիմադրելուց հետո Երևանի բերդը հանձնվեց պարսիկներին:

Հայ բնակչության բռնագաղթը: 1604 թ. օսմանյան սուլթանը նոր բանակ ուղարկեց շահ Աբասի դեմ: Խուսափելով օսմանյան բանակի հետ ընդհարվելուց՝ շահ Աբասը վճռեց ամայացնել նրա ճանապարհին ընկած բնակավայրերը՝ բնակչությանը փոխադրելով Իրանի խորքերը: Դրանով օսմանյան բանակը կզրկվեր պարենից ու օթևանի հնարավորությունից և այլևս չէր կարողանա շարունակել արշավանքը: Բռնագաղթի միջոցով որակյալ երկրագործներ ու արհեստավորներ փոխադրելով և բնակեցնելով Իրանի ներքին գավառներում՝ շահ Աբասը հույս ուներ զարկ տալու Իրանի տնտեսության զարգացմանը: Միաժամանակ հայ վաճառականությանը փոխադրելով Իրանի հարավային նահանգներ՝ նա որոշել էր իր տերության հյուսիսային մասերում զարգացած մետաքսի առևտուրը փոխադրել դեպի Պարսից ծոցի շրջան, որից օսմանյան պետությունը մեծ վնաս կկրեր:

Հայ բնակչության ***տեղահանությունը սկսվեց 1604 թ. օգոստոսին:*** Հրամայված էր հրդեհել բոլոր գյուղերը, շենները, խոտի և հացաբույսերի դեզերը: Գաղթեցվում էր մոտ ***300 հազար բնակչություն:*** Տեղահանությունից զերծ մնացին Հայաստանի այն նահանգների բնակիչները, որոնք հեռու էին օսմանյան արշավանքի երթուղուց: Հայ բնակչությունը բազմաթիվ փորձեր կատարեց՝ չենթարկվելու գաղթի հրամանին կամ խույս տալու գաղթից, սակայն ամենուրեք դա ավարտվում էր դաժան հաշվեհարդարով: Պարսկական զորքը դաժան հաշվեհարդար տեսավ Գառնի գյուղի հետ, որը փորձել էր դիմադրել գաղթի հրամանին:

Լուր ստանալով, որ օսմանյան բանակն արդեն մտել է Արարատյան դաշտ՝ շահ Աբասը հրամայում է գաղթեցվող բնակչությանն արագորեն փոխադրել Արաքսի մյուս ափը: Գետանցման ժամանակ մեծ թվով մարդիկ խեղդվում են գետում: Հայերը բնակեցվում են Իրանի տարբեր նահանգներում: ***Սպահանի մոտ*** բնակեցվում է Ջուղայի բնակչությունը, որտեղ շուտով հիմնվում է ***Նոր Ջուղա*** բնակավայրը:

Թուրք-պարսկական պատերազմների ավարտը և հետևանքները Հայաստանում: 1605 թ. Արարատյան դաշտ ներխուժած օսմանյան բանակը, չհամարձակվելով հետապնդել պարսիկներին, նախընտրում է ձմեռն անցկացնել Վասպուրականում: 1606 թ. վճռական ճակատամարտում պարտություն կրելով՝ օսմանյան կողմը համաձայնում է հաշտության պայմանագիր ստորագրել, որով վերահաստատվում էր Ամասիայի պայմանագրով նախատեսված սահմանագիծը, և Արարատյան դաշտը, Մասիս և Սիս լեռները ու Հայաստանի հյուսիսային նահանգներն անցնում էին Իրանի գերիշխանության ներքո:

Թուրքերի և պարսիկների միջև պատերազմներն ավարտվում են ***1638 թ.***, երբ օսմանյան բանակը գրավում է Բաղդադը, որից հետո հաշտություն են առաջարկում պարսիկները: 1639 թ. Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև կնքված Կասրե-Շիրինի պայմանագրով Հայաստանը կրկին վերաբաժանվում է երկու ախոյան պետությունների միջև: Այդ սահմանագիծը քիչ փոփոխություններով պահպանվեց մինչև XIX դ. սկիզբը:

Նոր ժամանակների նախաշեմին Հայաստանի երկատումը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի տնտեսական,

քաղաքական ու մշակութային հետագա զարգացման համար: Չնայած տարբեր պետությունների կազմի մեջ ևս անընդմեջ շարունակվում էր Հայաստանի երկու հատվածների միջև հայազգի բնակչության հաղորդակցումը, սակայն տարածքային երկատումը ծանր և անլուծելի խնդիրներ էր ստեղծում Հայաստանի ազատագրության հետագա շարժումների համար: Հայաստանի ազատագրման և հայոց պետականության վերականգնման խնդիրը անընդունելի էր միաժամանակ ինչպես օսմանյան պետության, այնպես էլ Իրանի համար, ինչը լուրջ խոչընդոտ էր հայ ազատագրական ուժերի համախմբման գործընթացի առումով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտեղ և ե՞րբ բախվեցին Սելիմ Ահեղի և շահ Իսմայիլի զորքերը: Ինչո՞վ ավարտվեց այդ բախումը: Ինչպե՞ս էին ընթանում ռազմական գործողությունները Պարսկաստանի և Թուրքիայի միջև 1550 թ.: Ի՞նչ էր նախատեսում Ամասիայի հաշտության պայմանագիրը:
2. Ինչո՞ւ 1590 թ. պայմանագրով շահ Աբաս I–ը օսմանցիներին զիջեց գրաված տարածքները: Ե՞րբ շահ Աբասը սկսեց զիջած տարածքների վերագրավումը: Նկարագրե՞ք Երևանի բերդի պաշարումը:
3. Ինչո՞ւ շահ Աբասը կազմակերպեց հայ ժողովրդի բռնագաղթը: Որքա՞ն բնակչություն տեղահանվեց: Իրանի ո՞ր նահանգներում բնակեցվեց Հայաստանից տեղահանված բնակչությունը: Ե՞րբ ավարտվեցին թուրք–պարսկական պատերազմները:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Շահ Աբասին դիմավորելը Ջուղայում

Ջուղայի բոլոր բնակիչները… ելան շահին ընդառաջ, ինչպես վայել է թագավորին…Գետեզրից մինչև խոջա Խաչիկի ապարանքը փռել էին զորգեր թագավորի ոտքերի տակ, թանկարժեք, մեծահարգի ու վայելուչ կերպասներ, որոնց վրայով թագավորն անցավ գնաց խոջա Խաչիկի տուն: Իսկ այնտեղ՝ տանը, խոջա Խաչիկը ոսկով լցրած ոսկե սկուտեղը իր որդու ձեռքով մատուցեց թագավորին, նույնպես և Ջուղայի բոլոր մեծամեծները ընծաներ մատուցեցին, ինչպես վայել է թագավորին: Շահն այնտեղ մնաց երեք օր, իսկ ջուղայեցիները պատվեցին նրան համադամ կերակուրներով ու ծաղկահամ գինով…

Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 69

Ջուղայի բռնագաղթը

…Պարսից անողորմ զորքերը, ժողովրդին քշելով, լցնում էին (Երասխ) գետը, իսկ սրանք գետի մեջ ավելի ու ավելի էին շատացնում աղաղակի ու ողբերի ձայները: Սրանցից ոմանք, բռնելով նավերի, ոմանք՝ արկղերի եզրերից, ոմանք՝ ձիերի, եզների ու գոմեշների պոչերից, ոմանք էլ, ինքնուրույն լողալով, անցնում էին: Իսկ նրանք, որոնք լողալ չգիտեին կամ ուժ չունեին՝ ծերեր, պառավներ, տղաներ, աղջիկներ, մատղաշ մանուկներ, լցված էին ջրի երեսը, և գետը քշած տանում էր նրանց՝ իբրև չոր ճյուղ գարնան ժամանակ…

Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 80–81

§ 3. ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ

Ազատագրական լեզենդը: Քրիստոնեական համերաշխության գաղափարը լայնորեն սկսեց շահարկվել XI դ. վերջերից՝ խաչակրաց արշավանքների սկզբնավորումով: Արևելյան ժողովուրդները սելջուկյան իշխանությունների հարձակումներին դիմակայելու գործում հույսի ակնկալիքով էին հետևում խաչակրաց արշավանքների ծավալմանը: Հայրենիքում անկախ պետականությունը կորցրած հայ ժողովրդին Արևմուտքի հետ համագործակցության մղելու նպատակով լայնորեն քարոզվում էր հայոց հնարավոր փրկության գաղափարը արևմտաեվրոպական քրիստոնյա թագավորների՝ ֆրանկների միջոցով: Ավելին՝ կաթոլիկության ընդունման անխուսափելիությունը հայ ժողովրդին ընդունելի դարձնելու նպատակով ստեղծվեցին ***«ախանդագրույցներ»***, թե իբր հայոց պետականության վերականգնումը արևմտյան երկրների և մասնավորապես Հռոմի օժանդակությամբ արդեն իսկ վաղ միջնադարում իրենց ***«Տեսիլներում»*** կանխատեսել–գուշակել էին Հայոց եկեղեցու խոշորագույն դեմքեր Սբ Գրիգոր Լուսավորիչը, Սբ Ներսես Մեծը, Սբ Սահակ Պարթևը և ուրիշներ: Այդ քարոզչությունը հաջողություններ արձանագրեց ոչ միայն Կիլիկյան Հայաստանում XIII–XIV դարերում, այլև XV–XVII դարերում և շարունակեց լայն տարածում ստանալ հայ բնակչության մեջ նաև բուն Հայաստանում: Արևմտաեվրոպական քարոզչամեքենան լայնորեն նպաստում էր այդ գաղափարների տարածմանը՝ գաղութային իր քաղաքականությունն ընդլայնելու, Արևելքում իր ազդեցությունը մեծացնելու նպատակով:

Հայոց թագավորության վերականգնման փորձը Աղթամարում: XIII–XIV դարերում մոնղոլ–թաթարական պետության թուլացման և այնուհետև Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակաշրջանում քոչվորական շատ ցեղեր էին ներթափանցում Հայաստան՝ ավերածությունների ու կողոպուտի ենթարկելով հայկական բնակավայրերն ու իշխանական կալվածքները: Թյուրքական ու քրդական այդ ցեղերի մի մասը հաստատվում էր Հայոց հայրենիքում: Հայկական առանձին իշխանական տների կողմից նրանց դեմ կազմակերպված պայքարի ծավալումը համակարգված ու արդյունավետ չէր, քանի որ իշխանական տները ևս այդ պայքարի ընթացքում աստիճանաբար թուլանում էին կամ դադարում գոյություն ունենալուց: Չնայած այդ հանգամանքին՝ Հայաստան մուտք գործած ցեղախմբերն անզիջում պայքար էին ծավալել միմյանց դեմ՝ փորձելով ամրապնդել իրենց տիրապետությունը երկրում: Նրանք միաժամանակ ստիպված էին համագործակցել հայ իշխանական տների հետ, ճանաչել նաև նրանց իրավունքները և ներկայանալ որպես ***Հայաստանի թագավոր*** (Շահ–ի Արման): Այդպիսի քաղաքականություն էին վարում կարա–կոյունլուների առաջնորդներ ***Կարա–Յուսուֆը, Իսքանդար կարա–կոյունլուն*** և այլք: Թեմուրյանների հաջորդների դեմ պայքարում կարա–կոյունլուների հիմնական հենարանը, այնուամենայնիվ, մնում էր հայ բնակչությունը: Շահ–ի Արման Իսքանդար կարա–կոյունլուի մահից հետո կարա–կոյունլուների գահն անցնում է վերջինիս հետ մրցակցող նրա եղբորը՝ ***Ջհանշահին:*** Ջհանշահը ևս շարունակում է զգալի չափով ապավինել հայ բնակչության օժանդակությանը, ուստի և նպաստում է հայոց

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին. 915–921 թթ.

կաթողիկոսարանի վերահաստատմանը Էջմիածնում: Քոչվորական ցեղախմբերի միջև ռազմական ընդհարումների ու արշավանքների ընթացքում, սակայն, մեծապես տուժում էր նաև հայ բնակչությունը, ավերվում ու կողոպտվում էին հայկական բնակավայրերը:

Հայոց պետականության վերականգնման ձգտումը կենդանի էր հայ իշխանական տների շառավիղների մոտ: Ջհանշահի կառավարման ժամանակաշրջանում Գեղարքունիքի, Վայոց ձորի, Արցախի, Սյունիքի, Գուգարքի և մի շարք այլ շրջանների հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանություններն ու վարչական կառավարումը և սկսեցին կոչվել ***մելիքներ***: ***Երևանը***՝ որպես կուսակալության կենտրոն, սկսեց վերելք ապրել: Պատահական չէ, որ Աղթամարի կաթողիկոսական գահին տիրող և իրենց Արծրունյաց թագավորական տոհմից սերված համարող ***Ջաքարիա*** և ***Ստեփանոս Աղթամարցի*** կաթողիկոսները հավակնում էին ոչ միայն Ամենայն հայոց կաթողիկոսի գահին, այլև փորձում էին վերականգնել հայոց թագավորությունը Վասպուրականում: ***1465 թ. Աղթամարի Ս. Խաչ*** եկեղեցում հանդիսավորությամբ հայոց թագավոր է օծվում Ջաքարիա կաթողիկոսի եղբորորդին՝ ***Սմբատ Արծրունին***:

Ռազմաքաղաքական իրավիճակը Հայաստանում, որը վերածվել էր աշխարհավեր ուժերի բախման թատերաբեմի, թեև անհնար էր դարձնում նորահռչակ թագավորության ամրապնդման հետագա գործընթացը, սակայն նրա կարճատև գոյությունն իսկ փաստում էր հայ բնակչության կենսունակությունն ու ազատագրության կամքը:

Ազատագրության պայքարի նոր փուլի սկզբնավորումը: Հայաստանը թեև զրկվել էր համահայկական պետականությունից, սակայն ազատության հասնելու նրա ձգտումը հայ ժողովրդի մեջ չէր մարել: Հայ ժողովրդի ծանր վիճակը XVI դ. հարկադրում էր ժամանակի հայ գործիչներին ելք որոնելու Հայաստանի ազատագրության համար: Սեփական ուժերի անբավարարությունը և հակառակորդների հզորությունը գրեթե անհնար էին դարձնում ձեռնարկել այդ ծրագրի իրագործումը: Այս է պատճառը, որ սկսվում է դաշնակիցների որոնումը: Հայ գործիչներին հույս էր ներշնչում այն փաստը, որ Հայաստանի զգալի մասը նվաճած օսմանցիները, գրաված լինելով նաև բալկանյան երկրները, սպառնալիք էին դարձել եվրոպական պետությունների համար:

1547 թ. Էջմիածնում Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը հրավիրում է գաղտնի խորհրդակցություն, որտեղ որոշվում է նրա գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Եվրոպա: Պատվիրակության խնդիրն էր եվրոպական երկրների հետ բանակցություններ վարել՝ օսմանցիների դեմ համատեղ պայքար կազմակերպելու նպատակով: 1549 թ.

պատվիրակությունը մեկնում է Եվրոպա, այցելում Վենետիկ, Հռոմ, Գերմանիա, լինում է Լեհաստանում: Պատվիրակների մեծ մասը առանց որևէ հաջողության 1551 թ. վերադառնում է Էջմիածին:

Միքայել Սեբաստացի կաթողիկոսը Սեբաստիայում 1562 թ. գումարած եկեղեցական գաղտնի ժողովի անունից ***Աբգար դպիր Թոխաթեցու*** ղեկավարությամբ պատվիրակություն է ուղարկում Հռոմ: Պատվիրակության հեղինակությունն ընդգծելու նպատակով Աբգար դպիրը և նրա որդի Սուլթանշահը ներկայացվում են որպես արքայական ծագում ունեցող անձնավորություններ: Պատվիրակության նպատակն էր համոզել եվրոպական երկրներին, որ օգնեն հայերին ազատագրվելու օսմանյան լծից: Աբգար Թոխաթեցու պատվիրակությունը ևս չի հասնում իր նպատակին:

Հայկական իշխանությունները՝ հայոց պետականության կրողներ: Օտար նվաճողները մշտապես ձգտել են ոչնչացնելու երկրի հայկական կիսանկախ կամ ինքնուրույն իշխանությունները: Հայ իշխանական տների որոշ ներկայացուցիչներ, չդիմանալով օտար նվաճողների ճնշումներին, արտագաղթել են Հայաստանից: Շատ հայ հողատերեր սեփական կալվածքներն ու տիրույթների մնացորդները փրկելու նպատակով դրանք կամովին հանձնել են եկեղեցուն, ապա ընդունելով հոգևոր կոչումներ՝ շարունակել են տիրել իրենց հողատարածքներին: Այդպիսիներին անվանել են ***պարոնտեր***: Չնայած դաժան պայմաններին՝ հայկական իշխանությունների մի մասն այնուամենայնիվ կարողացել է գոյատևել, պահպանել իր տիրապետությունը ինքնապաշտպանության համար նպաստավոր լեռնային երկրամասերում: Երբ անհնար է եղել դիմադրությունը, հայ ավատատերերից ոմանք հպատակվել են նվաճողներին և շարունակել իրենց գոյությունը:

Արևելյան Հայաստանում այդպիսի մի շարք իշխանություններ կային ***Սյունիք*** և ***Արցախ*** նահանգներում: Հայտնի էին ***Խաչենի, Վարանդայի, Ջրաբերդի, Դիզակի, Սյունիքի*** և ***Գեղամա*** երկրի մի շարք իշխանություններ, որոնք անվանվել են մելիքություններ, իսկ նրանց գլուխ կանգնած անձնավորությունները՝ մելիքներ:

Մելիքությունները եղել են ժառանգական: Մահացած մելիքին փոխարինել է ավագ որդին: Նրան ևս հաստատում էր շահը: Նրանք ունեցել են իրենց զորքը, իշխանությունը կենտրոնացած է եղել մելիքի ձեռքում: Ջորահրամանատարներ նշանակվում էին մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչները, որոնք կոչվում էին ***բեկ, հարյուրապետ*** (յուզբաշի), ***հազարապետ***: Դատավարության իրավունքը պատկանում էր մելիքին: Դատավարության համար հատուկ օրենսգիրք չկար, մելիքներն առաջնորդվում էին սովորութային իրավունքով: Նրանք վճռական դեր էին խաղում նաև հոգևոր գործերում: Մելիքները պարտավոր էին շահական գանձարան մուծել տարեկան հարկի այն քանակը, որ որոշված էր արքունիքի կողմից: Նրանք պարտավոր էին իրենց տիրապետության սահմաններում խռովարարներին ճնշել, պատերազմի ժամանակ իրենց զորքերով ներկայանալ շահին, պաշտպանել երկրի սահմաններն օտար հարձակումներից: Մելիքները նաև խոշոր կալվածատերեր էին: Նրանք ունեին հողային ընդարձակ տիրույթներ, որոնց եկամուտն ամբողջությամբ պատկանում էր իրենց:

Արևմտյան Հայաստանում հայ ավատատերերի այդպիսի մանր իշխանու-

թյուններն իրենց գոյությունը պահպանել էին ***Շատախում, Սասունում, Զեյթունում, Մոկսում*** և այլուր: Հայոց պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի ***Զեյթունը***: Զեյթունի հայերը չենթարկվեցին օսմանյան պետությանը: Երկար պայքարից հետո, որի ընթացքում զեյթունցիները քաջաբար պաշտպանում էին իրենց անկախությունը, XVII դ. առաջին կեսին միայն պարտավորվեցին սուլթանին վճարել տարեկան որոշակի հարկ՝ պահպանելով իրենց ներքին ինքնուրույնությունը:

Հայկական ինքնավար այդ իշխանությունները հետագայում մեծ դեր են խաղացել օտար տիրապետության դեմ մղած ազատագրական պայքարում: ***Դրանք հայկական պետականության բեկորներն էին: Նշանակում է՝ ողջ միջնադարի ընթացքում հայոց պետականությունն իսպառ չէր վերացել և հանդես էր գալիս զանազան դրսևորումներով՝ մելիքությունների, կիսանկախ իշխանությունների, լեռնային համայնքների և այլ ձևերով:***

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք խաչակրաց շարժման պատճառները: Ընդամենը քանի՞ խաչակրաց արշավանք է եղել: Ի՞նչ բարենպաստ պայմաններ էին ստեղծվել Արևելքում կաթոլիկություն տարածելու համար: Ի՞նչ միջոցներ էին կիրառվում կաթոլիկությունը հայ ժողովրդին ընդունելի դարձնելու համար:
2. Ձեր կարծիքով ինչո՞ւ արդյունավետ չէր Հայաստան ներթափանցած քոչվորական ցեղերի դեմ պայքարը:
3. Ե՞րբ և որտե՞ղ փորձ կատարվեց վերականգնելու հայոց պետականությունը:
4. 1547 թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունը ի՞նչ որոշում ընդունեց: Ի՞նչ նպատակով Եվրոպա մեկնեց Աբգար դպիր Թոխաթեցու պատվիրակությունը:
5. Ովքե՞ր էին կոչվում պարոնտեր: Կառավարման ի՞նչ ձև էր գործում հայկական մելիքություններում: Արևմտյան Հայաստանում ո՞ր իշխանությունները պահպանեցին իրենց գոյությունը: Դրանցից ո՞րն էր ամենակենսունակը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ XV–XVII ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: ՂՐԻՄԻ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Ընդհանուր բնութագիրը: Հայկական գաղութների առաջացումը հայության պատմական զարգացման կարևոր առանձնահատկություններից է: Պատմական մեծ անցյալ ունեցող ժողովուրդներից շատերին է բաժին ընկել օտար երկրներում գաղութներ ունենալը: Զանազան պատճառներով հայության առանձին զանգվածներ հարկադրված են եղել արտագաղթելու և հանգրվան գտնելու ուրիշ երկրներում: Հաճախ նրանք ենթարկվել են բռնագաղթի: Այդ եղանակով աշխարհի տարբեր երկրներում առաջացել են հայկական ***գաղութներ*** կամ ***համայնքներ***: Հարուստ պատմական անցյալ ունեցող հայ ժողովրդին վիճակվել է

դեռ վաղ ժամանակներից կրել արտագաղթի ծանրությունը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գաղթի հետևանքով ուրիշ երկրներում ապաստան գտած ամեն մի զանգված չէ, որ կարող է գաղութ ստեղծել: ***Գաղութ, գաղթավայր*** կամ ***գաղթօջախ*** ասելով՝ պատմագիտությունը նկատի ունի օտար երկրներում բնակություն հաստատած այն զանգվածներին, որոնք նոր միջավայրում ստեղծում են իրենց համայնքը: Նրանք ստանում են ***ինքնավարություն, պահպանում մայրենի լեզուն, ազգային սովորություններն ու դավանանքը***: Այսինքն՝ այդ զանգվածներն օտար շրջապատում պահպանում են ազգային նկարագիրը և իրենց հատկանիշներով ու համախումբ կյանքով առանձնանում տեղի ժողովուրդներից: Գաղութի առաջացման կարևոր հատկանիշներից է ***ազգային դպրոցի*** ու ***եկեղեցու*** առկայությունը: Սովորաբար գաղութ կամ գաղթավայր են անվանվում ինքնավարություն կամ այլ առանձնաշնորհում ստացած և պետության կողմից ճանաչված օտար ազգային միավորները: Այդ հատկանիշներից զուրկ, բայց ազգային նկարագիրը պահպանող համախումբ զանգվածները, որպես կանոն, կոչվում են ***համայնք***:

Հայկական գաղթավայրերի ընդհանուր պատմությունը բաժանվում է ***երեք փուլի՝ Միջին դարեր, Նոր շրջան, Նորագույն շրջան***:

Միջին դարերում գաղութները, որպես կանոն, օգտվում էին ինքնավարությունից և ապրում ինքնամփոփ կյանքով:

Նոր շրջանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով վերացան գաղութների ինքնաբավ կյանքն ու առանձնաշնորհումները: Դրա փոխարեն նոր շրջանում հիմնվեցին ազգային-բարեգործական հաստատություններ, մշակութային, կրթական այնպիսի օջախներ, որոնք արգասավորեցին հայկական գաղութների ազգային կյանքը:

Նորագույն շրջանում Մեծ եղեռնի հետևանքով աշխարհով մեկ ցրված հայությունը ստեղծում է ***հայկական Սփյուռքը***:

Դարեր շարունակ Հայաստանից դուրս են եղել ոչ միայն հայության ստվար զանգվածներ, այլև հասարակական-քաղաքական կյանքի հիմնական կենտրոնները, մշակույթի ու գիտության օջախները: Հայկական գաղթավայրերում պահպանվել են հայ գիրն ու գրականությունը, հայկական բարքերն ու սովորությունները, ազգային մշակույթի ավանդները, այլ խոսքով՝ ***հայ ինքնությունը***: Այնտեղ պատմագեղարվեստական գործեր, ձեռագրեր են ստեղծվել ու արտագրվել, մշակութային ձեռնարկումներ են կատարվել և մեծապես նպաստել հայ մշակույթի զարգացմանը: Հատկանշական է, որ հայ առաջին տպագիր գիրքը, հայկական առաջին պարբերականը ծնունդ են առել բուն երկրից դուրս՝ Եվրոպայի և Ասիայի հայկական գաղթօջախներում:

Գաղթավայրերը կապված են եղել մայր հայրենիքի հետ, ապրել են նրա պատմական ճակատագրով: Հայ ազատագրական շարժման գաղափարներն ու ծրագրերը ծնունդ են առել ու մշակվել Հնդկաստանի, Ռուսաստանի, Եվրոպայի հայկական գաղթավայրերում: Մյուս կողմից՝ գաղթավայրերում հայ զանգվածները շփվել են իրենց բնակության երկրների ժողովուրդների հետ, և հայ մշակույթը ներառել է այդ ժողովուրդների ազդեցությունը, փոխադարձաբար ազդել նրանց վրա: Հայկական գաղթօջախները մեծա-

պես նպաստել են տարբեր ժողովուրդների փոխըմբռնմանն ու համագործակցությանը: Հետևաբար ***գաղթավայրերի պատմությունը հայ ժողովրդի ամբողջական պատմության անքակտելի մասն է***: Մյուս կողմից՝ դա հայ ժողովրդի պատմական կապերի դրսևորման ցայտուն արտահայտությունն է:

Հայկական գաղութները գոյատևման տարբեր կենսակերպ են ունեցել: Նրանց մի մասը վերելք է ապրել միջնադարում, հետագայում թուլացել է ու մարել: Որոշ գաղութների աշխույժ կյանքն ընթացել է նոր շրջանում: Կան նաև գաղութներ, որոնք ձևավորվել են միջնադարում, բայց իրենց գոյությունը պահպանում են մինչև այժմ:

Ղրիմի հայությունը: Ղրիմ թերակղզին հայերին ծանոթ էր վաղնջական ժամանակներից, բայց հայերն այնտեղ մշտական բնակություն են հաստատում XI դարից: Հետագայում՝ հատկապես XIII–XIV դդ., մոնղոլական արշավանքների և տիրապետության հետևանքով մեծ թվով հայեր են տեղափոխվում Ղրիմ: Հայերը բնակվում էին Կաֆայում (Թեոդոսիա), Սուրխաթում (Հին Ղրիմ), Ակմեչիթում (Սիմֆերոպոլ), Կեռզլովում (Եվպատորիա), Օրբազարում (Արմյանսկ), այլ քաղաքներում և զուտ հայկական մի շարք գյուղերում:

Հայերի թիվն այնքան է աճում, որ նրանք թաթարներից հետո բնակչության քանակով զբաղեցնում էին երկրորդ տեղը: Բավական է հիշատակել, որ XV դ. Կաֆա քաղաքի 70 հազար բնակչից 46 հազարը հայեր էին: Իզուր չէ, որ թերակղզու հարավարևելյան շրջանը հաճախ անվանվում էր ***«Ծովային Հայաստան»***:

Ղրիմի քաղաքները խոշոր դեր են խաղացել Արևելքի և Արևմուտքի առևտրում: Հայ և մյուս ազգության վաճառականները թերակղզի էին ներմուծում գործվածքեղեն, մորթեղեն, պերճանքի առարկաներ, համեմունք և այլն: Ներմուծվող ապրանքների մի մասը վաճառվում էր տեղում, մյուս մասը՝ արտահանվում արտաքին շուկաներ: Ղրիմից արտահանվում էր հաց, ձուկ, մոմ, աղ, կաշվեղեն և այլն: Ղրիմահայ վաճառականները կապերի մեջ էին լեհական շրջանների, մասնավորապես Լվովի հետ, որտեղ ունեին իրենց առևտրական գործակալությունները: Ղրիմահայերը մասնակցում էին մերձսևծովյան շրջանների, ինչպես նաև Կովկասի և Հայաստանի հետ կատարվող առևտրին: Առևտրի գլխավոր ուղիներից մեկն էլ ձգվում էր դեպի Կ. Պոլիս, որտեղից ճյուղավորվում էր դեպի արևելյան երկրներ և Արևմտյան Եվրոպա: Հայերի առևտրական գործունեության մեջ նշանակալից էր ռուսական շրջանների, մասնավորապես Մոսկվայի հետ տարվող առևտուրը:

Օսմանյան պետության կողմից 1475 թ. Ղրիմը գրավվելուց հետո հայ բնակչության նկատելի հատվածներ արտագաղթեցին, սակայն կարճ ժամանակ անց ներհոսք կատարվեց, և հայությունը վերականգնեց նախկին վիճակը: Ռուսական կառավարության կազմակերպած գաղթի հետևանքով (1778 թ.) գաղութը թուլացավ և թեպետ շարունակեց գոյատևել, սակայն նախկին հզորությունը չունեցավ:

Կոստանդնուպոլսի հայությունը: Հայաստանի արևմտյան հարևան Բյուզանդիա և նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլիս բազմաթիվ հայեր էին տեղափոխվում: XIV դ. երկրի մայրաքաղաքում հայերն արդեն ունեին երկու

եկեղեցի: Հայերը դարձան կայսրության տնտեսության, մշակույթի և ռազմաքաղաքական կյանքի ակտիվ մասնակիցներ: Կ. Պոլսում բնակվող հայ հոգևորականները տնօրինում էին նաև գավառների հայ համայնքների հոգևոր գործերը: Հաստատվելով Կ. Պոլսում՝ հայերը շփվում էին միջնադարում քաղաքակիրթ դեր կատարող բյուզանդական մշակույթի հետ և կրում նրա բարերար ազդեցությունը:

Կ. Պոլիսը 1453 թ. գրավելուց հետո թուրքերը քաղաքի տնտեսությանը զարկ տալու համար Փոքր Ասիայից գաղթեցնում էին հույների, հրեաների և հայերի: Բռնագաղթվածներն ազատվում էին գլխահարկից, ստանում բնակարան, հողամաս: Թուրքական իշխանությունները մայրաքաղաքի բարեկարգման գործում գնահատում էին հայ արհեստավորների և վաճառականների դերը: Այդ պատճառով տարբեր վայրերից Կ. Պոլիս եկան մեծ թվով հայեր: Արդեն ասվել է, որ 1461 թ. ստեղծվեց հայ հոգևոր համայնքը՝ հայոց պատրիարքությունը, որին ենթակա էին Փոքր Ասիայի, Տրապիզոնի և Ղրիմի թեմերը: Պատրիարքները, փաստորեն, արևմտահայության գործերը տնօրինողներն էին և որպես այդպիսին ճանաչվում էին պետության կողմից: Պատրիարքը, հոգևոր գործերից զատ, տնօրինում էր եկեղեցիների ու վանքերի կառուցումը, դպրոցների բացումը, տպարանների հիմնումը, գրքերի հրատարակումը և այլն: Պատրիարքը նշանակվում էր սուլթանի հատուկ հրովարտակով:

Կոստանդնուպոլսի հայ համայնքի կազմում ծանրակշիռ դեր էին կատարում առևտրական և արհեստավորական շերտերը: XVI դ. ձևավորվում է մեծահարուստ հայ ***չելեբիների*** դասը: Չելեբի էին անվանվում այն երևելի հարուստները, որոնք զբաղվում էին վաշխառությամբ, ինչպես նաև առևտրով:

Կ. Պոլսի աշխարհագրական հարմար դիրքը մեծապես նպաստում էր առևտրին, ուստի այնայլ վայրերից դեպի իրեն էր ձգում հայ վաճառականներին: Նրանք քաղաքում ունեին խանութներ, իջևանատներ, պահեստներ: Գաղութի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին արհեստավորները, մանր ու միջին առևտրականները, օրավարձու մշակները: Արհեստավորները ստվար խավ էին և ընդգրկված էին իրենց շահերը պաշտպանող կազմակերպությունների՝ ***էսնաֆությունների*** (համքարությունների) մեջ: Էսնաֆություններն ունեին իրենց մշակված կանոնները, որոնք խստորեն պահպանվում էին: Պոլսահայ գաղութն այնքան ստվարացավ, որ դարձավ արևմտահայության մշակույթի կենտրոն: Մշակույթի բուռն զարգացումը, սակայն, տեղի ունեցավ նոր շրջանում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս են ձևավորվել հայկական գաղութները: Որո՞նք են գաղութը բնորոշող հատկանիշները: Քանի՞ փուլերի է բաժանվում հայկական գաղթավայրերի ընդհանուր պատմությունը: Ի՞նչ կարևոր ներդրումներ են ունեցել հայկական գաղթավայրերը հայոց պատմության մեջ:
2. Ե՞րբ են հայերը մշտական բնակություն հաստատել Ղրիմում: Ե՞րբ և ինչո՞ւ ստվարացավ Ղրիմի հայկական գաղթօջախը: Թվարկե՛ք Ղրիմի հայաբնակ քաղաքները:

Ինչո՞ւ էր Ղրիմի հարավարևելյան շրջանը կոչվում «Ծովային Հայաստան»: Ինչո՞վ էին զբաղվում հայերը Ղրիմում: Ո՞ր երկրների և քաղաքների հետ առևտրական կապեր ունեին ղրիմահայերը:

3. Ե՞րբ է ստեղծվել Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը, ո՞ր թեմերն էին նրան ենթակա: Ի՞նչ արտոնություններ և իրավունքներ ուներ հայոց պատրիարքը: Ովքե՞ր էին կազմում Կ. Պոլսի հայ բնակչությունը, ինչո՞վ էին նրանք զբաղվում:

§ 2. ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

Ուկրաինա և Լեհաստան: Ուկրաինայում և Լեհաստանում հայկական համայնքներ են ձևավորվել XIII–XIV դարերում: Կիևում XIII դ. կեսերին հայերեն է թարգմանվել կարևոր մի հուշարձան՝ ***«Բորիսի և Գլեբի վարքը»***: Կենտրոնական և Արևելյան Ուկրաինայի հայ համայնքները, նեղվելով մոնղոլական արշավանքներից ու հալածանքներից, գաղթեցին դեպի արևմուտք: Հետագայում՝ Կիլիկիայի հայկական պետության անկումից և Ղրիմը Թուրքիայի կողմից գրավվելուց հետո, գաղթագնացության նոր ալիք ուղղվեց Լեհաստան: Այնտեղ՝ ***Կամենեց-Պոդոլսկում, Լուցկում, Զամոստիեում, Ստանիսլավում*** և այլ բնակավայրերում, առաջացան հայկական գաղութներ:

Կամենեց-Պոդոլսկն ուներ ***հայոց դատարան***, որը վարում էր տեղի հայերի գործերը: Հայերին տրվեց առևտրական արտոնություն. այդ հանգամանքը նպաստեց համայնքի տնտեսական բարգավաճմանը և բնակչության աճին: XVII դ. կեսերին քաղաքում ապրող 1200 հայ ընտանիքները քաղաքի բնակչության մեծ մասն էին կազմում: Նրանց թույլատրվեց հիմնել իրենց առանձին ***մագիստրատը***՝ գաղութի գործերը վարող ինքնավար վարչական մարմինը: Հայ համայնքի միջոցներով քաղաքում կառուցվեցին դպրոց և հիվանդանոց: Թուրքերի կողմից քաղաքը գրավվելուց հետո (1672 թ.) հայությունը մեծապես տուժեց և այլևս չկարողացավ վերականգնել նախկին բարգավաճ դրությունը:

Ամբողջ Արևելյան Եվրոպայի հայկական գաղթավայրերի մեջ մեծ է եղել հատկապես ***Լվովի*** նշանակությունը: Այն XIV դ. դարձավ Հարավարևելյան Եվրոպայի հայության հոգևոր կենտրոնը: Լվովի շուկայի 60 խանութներից 44-ը պատկանում էր հայերին: Գդանսկի միջոցով Լվովը կապվում էր Բալթիկ ծովի հետ: Քաղաքից Հարավային Ռուսիայի միջոցով դեպի Արևելք էր ուղղվում առևտրական մի կարևոր ճանապարհ:

Հայերը աչքի ընկնող մասնակցություն են ունեցել երկրի քաղաքական կյանքում: Օսմանյան պետությունը ծավալվում էր դեպի Եվրոպա և մեծ վտանգ էր ներկայացնում Հարավարևելյան Եվրոպայի համար: Լեհաստանը ձգտում էր ստեղծելու հակաթուրքական ընդհանուր միություն: Հայազգի դիվանագետները մեծ ծառայություններ են մատուցել հակաթուրքական ճակատ ստեղծելու գործում: Այդ խնդիրը նրանք զուգակցում էին Հայաստանի ազատագրման ծրագրի հետ: ***Յան Սոբեսկու*** կառավարման ժամանակ լեհական արքունիքում ծրագրեր էին մշակվում հայկական թագավորությունը վերականգնելու ուղղությամբ: Հատկանշական էր, որ ***1683 թ.*** Վիեննայի ճակատամար-

տում թուրքերի դեմ տարած հաղթանակում Յան Սոբեսկու բանակում կռվում էին նաև մեծաքանակ հայեր:

Լեհահայ գաղութներում պահպանվել և առաջադիմել են մշակույթի որոշ ճյուղեր: Նշանակալի զարգացում ապրեցին մատենագրությունը, պատմագրությունը, թարգմանական գրականությունը: Հայկական գրեթե բոլոր գաղութներում կային դպրոցներ: 1616 թ. Լվովում հիմնվում է հայկական տպարան: Պատմամշակութային նշանավոր երևույթ էր ***լեհահայերի դատաստանագիրքը***, որը կազմվել է գերազանցապես Մխիթար Գոշի դատաստանագրքի հիման վրա:

Լեհական թագավորությունը XVII դ. թուլանում է, ուժեղանում են դավանական ճնշումները ոչ կաթոլիկ քրիստոնյաների նկատմամբ: Լեհահայերին հարկադրաբար կաթոլիկ դարձնելը, Էջմիածնի Մայր աթոռից կտրելը բացասական հետևանքներ են ունենում: Դավանափոխությունը, արտոնությունների վերացումը թուլացնում են հայկական գաղութները: Սկսվում է ազգային դիմագիծը կորցնելու և ձուլվելու գործընթացը, որը հանգեցնում է հայկական գաղութների մարմանը:

Ռումինիա: Տարբեր ժամանակներում Ռումինիայի կազմում են եղել Մոլդովան, Վալախիան, Բուկովինան և այլ երկրամասեր: Հայերը վաղուց ծանոթ էին Մոլդովային, սակայն XIV դ. ստեղծեցին իրենց համայնքները ***Բոտոշանում, Յաշում՝ կառուցելով իրենց եկեղեցիները:*** Լվովի թեմն իր հովանու տակ առավ նաև Մոլդովայի հայերին: Հետագայում հայությունն այնքան բազմամարդ դարձավ, որ երկրի մայրաքաղաք ***Սուչավայում*** հայերի համար հաստատվեց առանձին թեմ: Լեհաստանից XV դ. սկզբներին երեք հազար ընտանիք անցավ Մոլդովա և բնակվեց տարբեր քաղաքներում: Դեպի Մոլդովա հայերի գաղթը շարունակվեց նաև հետագայում: Թուրքերի կողմից Կ. Պոլիսը և ապա Ղրիմը գրավելուց հետո մեծ թվով հայեր անցան Մոլդովա և բնակություն հաստատեցին Սուչավա, Յաշ, Բոտոշան և այլ քաղաքներում:

Մոլդովայի հայաշատ կենտրոններն ունեին իրենց ինքնավարությունը՝ քաղաքապետական խորհուրդները: Հայկական դատարանը գլխավորում էր քաղաքագլուխը: Հայերն այստեղ ևս առաջատար դեր ունեին առևտրի, ինչպես նաև արհեստագործության մեջ: Այդ հանգամանքը հիմք է տվել ռումին գիտնականներին XV–XVII դարերը համարելու ***հայկական առևտրի տիրապետության շրջան:*** Նրանք Սև ծովի ավազանում, մասնավորապես Աքերմանում ունեին առագաստանավեր:

Հայ արհեստավորները Սուչավայում, Բուխարեստում և այլ խոշոր քաղաքներում ունեին իրենց համքարությունները: Այստեղ ևս հայերն օգտվում էին դավանական որոշակի ազատությունից: Սուչավայում, Յաշում նրանք ունեին իրենց թեմերը:

Մոլդովայի իշխանությունը XVI դ. անցավ ***Սերպեկա*** անվանվող հայազգի գերդաստանի ձեռքը: ***Յոան Հայը,*** նրա եղբայրները պայքարում էին տարբեր ազգերի ուժերը միավորելու և թուրքական առաջխաղացումը կասեցնելու համար: Նրանք նկատելի հաջողությունների հասան, բայց ի վերջո երեք եղբայրներն էլ զոհվեցին այդ անհավասար կռվում: Հայտնի են հայազգի ***Պետրու Վարդիկի՝*** Սուչավայի զորքերի հրամանատարի եռանդուն ջանքերը Եվրոպան թուրքական լծից ազատագրելու գործում:

Ռումինահայերը մի շարք համայնքներում ունեցել են ազգային դպրոցներ: Նրանք եկեղեցիներ ու տաճարներ են կառուցել, ստեղծել իրենց ժողովրդական երաժշտությունն ու բանահյուսությունը:

Իտալիա: Կիլիկյան Հայաստանից և Ղրիմից գաղթած հայերը Իտալիայում համայնքներ են ձևավորել XIII–XV դարերում: Կիլիկյան Հայաստանի թագավորները առևտրական արտոնություններ են տվել Վենետիկին, Ջենովային և այլ քաղաքների: Իտալական քաղաքների հետ ունեցած առևտրատնտեսական կապերի շնորհիվ մի շարք քաղաքներում հայկական փոքր համայնքներ են առաջանում: Դրանցից էր Հռոմը. այստեղ հայերը XIII դ. ունեին «Հայոց տուն» և երկու եկեղեցի:

Պիզայի հայ համայնքում այդ ժամանակ նստում էր Գրիգոր անունով եպիսկոպոսը: Համանման համայնքներ կային ***Ֆլորենցիայում, Միլանում*** և առևտրական այլ քաղաքներում: Կաթոլիկություն ընդունելու հետևանքով XV–XVI դդ. գրեթե բոլոր այդ համայնքները ձուլվում են տեղական բնակչությանը:

Խոշոր ու կենսունակ հայկական համայնք գոյություն ուներ Լիվոռնոյում: Հայկական այս համայնքի աշխուժացմանը նպաստում է 1591 թ. հրովարտակը, որով հայերին թույլատրվում է բնակվել այդ քաղաքում և ազատ առևտուր անել:

Իտալիայի ամենախոշոր ու նշանակալից համայնքը Վենետիկ քաղաքում էր: Հայ վաճառականների կենտրոնատեղին կոչվում էր «Հայոց տուն»: Դա Հայոց փողոցի վրա էր, իսկ մոտակայքում Հայոց կամուրջն էր: «Հայոց տունն» ընդարձակվում է, հայերը կառուցում են եկեղեցիներ: Վենետիկի հայկական գաղթօջախը XV–XVI դդ. դարձել էր կազմակերպված հայկական կենտրոն: Վենետիկում հաստատված հարուստ վաճառականներից նշանավոր էին Շեհրիմանյանները, Միրիմանյանները, Շահումյանները և ուրիշներ: Մեծահարուստ վաճառականներից բացի՝ Վենետիկում կային մանր ու միջին առևտրականներ, որոնք իրենց կրպակներն ունեին նշանավոր Սուրբ Մարկոսի հրապարակում:

Իտալիայի հայկական համայնքները և առաջին հերթին Վենետիկը նշանավոր էին ոչ այնքան առևտրափոխանակային հարաբերությամբ, որքան մշակութային առումով: Հայ մշակույթի ամենակարևոր նվաճումներից մեկը սկզբնավորվեց այնտեղ: 1512 թ. Վենետիկում է Հակոբ Մեղապարտը տպագրում առաջին գիրքը՝ «Պարզատումարը» («Ուրբաթագիրքը»)՝ հիմք դնելով հայ տպագրությանը:

Նիդերլանդներ: Հայերը Նիդերլանդներին ծանոթ են եղել XIV դարից: ***Բրյուգե*** նավահանգստային քաղաքում կար հայ բնակչություն: Նրանք կառուցել էին մի իջևանատուն, որը ***ազգային տուն*** էր տարբեր երկրներից այստեղ եկած հայերի համար: Շուտով Բրյուգեին փոխարինում է ***Ամստերդամը***: Հոլանդական այդ քաղաքը համաշխարհային շուկայի և մշակույթի կենտրոն էր և կոչվում էր «Եվրոպայի կայսրուհի»: Հայ վաճառականներն Ամստերդամում գործ էին ունենում ոչ միայն տեղի, այլև տարբեր երկրներից եկած առևտրականների հետ: Շուտով քաղաքում հիմնվում են հայկական առևտրական տներ: Աստիճանաբար ուժեղանում է առևտրական ընտանիքների հոսքը, և ձևավորվում է հայկական համայնքը, որը գոյություն ունեցավ շուրջ երկու դար: Այս համայնքն ուներ առևտրական և մշակու-

թային բնույթ: Ամստերդամի շաբաթաթերթերից մեկը, անդրադառնալով տեղի հայության կյանքին, գրում է. *«Հայկական գաղութի պատմությունը մի ոսկե էջ է Ամստերդամ քաղաքի պատմության մեջ»*:

Ամստերդամի որոշ հայ առևտրականներ ունեցել են իրենց սեփական նավերը, որոնք նավարկել են հոլանդական դրոշներով: 1653 թ. Ամստերդամից դեպի Զմյուռնիա է ճանապարհվել հինգ առևտրական նավ: Դրանցից երկուսը հայկական էին և կոչվում էին ***«Հայկական վաճառական»*** ու ***«Պարսկական վաճառական»***:

Հայկական առաջին տպարանն Ամստերդամում հիմնել է ***Մատթեոս Ծարեցին*** 1660 թ.: Նա հայոց կաթողիկոսի պատվիրակն էր և ուղարկվել էր տպագրության գործը կազմակերպելու համար: Նրա գործը շարունակում է ժամանակի նշանավոր մտավորականներից ***Ոսկան Երևանցին***:

Ամստերդամի գաղութը թուլանում է, երբ խաթարվում է միջազգային առևտուրը, և այն XVIII դ. վերջերից փաստորեն դադարում է գոյություն ունենալուց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ուկրաինայում և Լեհաստանում ե՞րբ են առաջացել հայկական համայնքները: Թվարկե՛ք լեհահայ նշանավոր գաղթօջախներ. ի՞նչ արտոնություններ ունեին այդ գաղութները: Ո՞ր փաստն է վկայում Լվովում հայ վաճառականների ազդեցիկ դերի մասին: Հակաթուրքական պայքարում ի՞նչ ներդրում ունեին լեհահայերը: Որո՞նք են լեհահայ գաղութների մարման պատճառները:
2. Մոլդովայի ո՞ր քաղաքներում և ե՞րբ են առաջացել հայ համայնքներ: Ի՞նչ արտոնություններ ունեին ռումինահայերը: Ի՞նչ գիտեք Յոան Հայի և Պետրու Վարդիկի մասին:
3. Ե՞րբ են առաջացել Իտալիայի հայ համայնքները: Իտալիայի ո՞ր քաղաքներում կային հայ համայնքներ: Ի՞նչը նպաստեց Լիվոռնոյի հայ համայնքի ուժեղացմանը: Պատմե՛ք Վենետիկի հայ համայնքի մասին: Հայ մշակույթի ո՞ր իրադարձությամբ է նշանավորվել Վենետիկը:
4. Ե՞րբ են հայերը հաստատվել Նիդերլանդներում: Ո՞ր փաստն է վկայում Ամստերդամի մեծահարուստ հայ վաճառականների գործունեության մասին: Հայ մշակույթի պատմության մեջ ինչո՞վ է նշանավորվել Ամստերդամը: Ե՞րբ և ինչո՞ւ վերացավ Ամստերդամի հայ գաղութը:

ԲԱԺԻՆ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՎ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ԴՊՐՈՑԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մշակույթի վերելքի պատմական պայմանները: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում հայկական մշակույթն անկում ապրեց: Իրավիճակը փոխվեց հայկական պետականության վերականգնման և Բագրատունյաց թագավորության հաստատման շրջանից: Դա կապված էր ոչ միայն հայկական պետականության վերելքի, այլև տնտեսական կյանքում տեղի ունեցող կարևոր տեղաշարժերի հետ: Գյուղատնտեսությունից արհեստագործության անջատման հետևանքով առաջացան միջնադարյան քաղաքները՝ որպես արհեստի և առևտրի կենտրոններ: Քաղաքային բնակչությունը, հիմնականում զբաղված լինելով արհեստագործությամբ և առևտրով, արդեն չէր բավարարվում գոյություն ունեցող կրթական համակարգով, որը հիմնականում տալիս էր աստվածաբանական գիտելիքներ: Քաղաքներում ապրող հարուստ առևտրականները և արհեստավորները սովորաբար իրենց ձեռքում կուտակված միջոցների մի մասը ծախսում էին եկեղեցիներ, առանձնատներ կառուցելու, դպրոցներին նյութական աջակցություն ցույց տալու և իրենց երեխաներին ավելի բարձր կրթություն տալու համար: Այդպիսի գործունեությամբ նրանցից հետ չէին մնում հայկական իշխանական և արքայական տների ներկայացուցիչները:

Մշակութային կյանքի հիմնական կենտրոններ դարձան Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին, ինչպես նաև Վանը, Դվինը, Կարսը, Արծնը, Սիսը, Տարսոնը, Աղանան:

X–XIV դդ. հայկական մշակույթի զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ մշակույթը վերելք էր ապրում ոչ միայն կենտրոնական Հայաստանում, այլև Կիլիկյան Հայաստանում և հայկական գաղթօջախներում: Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում և քաղաքական ու մշակութային տարաբնույթ միջավայրերում հայտնված հայությունն իր նույնականության խնդիրը հիմնականում լուծում էր հայկական մշակույթի պահպանման և զարգացման միջոցով:

Սելջուկների տիրապետության հաստատումից մինչև Զաքարյանների իշխանության շրջանը հայկական մշակույթը վերելք էր ապրում Կիլիկյան Հայաստանում: Իր գոյության ողջ ընթացքում Կիլիկյան Հայաստանը սերտ հարաբերությունների մեջ էր Խաչակրաց Արևելքի, Բյուզանդիայի և մուսուլմանական երկրների հետ: Դա մեծ ազդեցություն ունեցավ նաև հայկական մշակույթի զարգացման վրա, քա-

նի որ այն իր մեջ ներառեց տարաբնույթ մշակույթների որոշ հատկանիշներ: Այս պայմաններում համահայկական մշակութային կենտրոնի գործառույթն իր վրա վերցրեց հայոց կաթողիկոսությունը, որը, տեղից տեղ փոխադրվելով, հաստատվեց Հռոմկլայում (1151–1292), ապա՝ Սսում (1292–1441):

Կրթությունը: X–XIII դդ. նպաստավոր պայմաններ էին ստեղծվել կրթական նոր համակարգի առաջացման և զարգացման համար: Հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի աշխուժացումը նպաստում էր կրթական գործի բուռն վերելքին: Կրթության բնագավառում ի հայտ եկան նոր երևույթներ: Տնտեսության աճը կրթությանը նոր պահանջներ էր ներկայացնում. հասարակությանը անհրաժեշտ էին ոչ միայն կրոնափիլիսոփայական, այլև գործնական գիտելիքներ ունեցող մարդիկ:

Նախորդ ժամանակաշրջանից ժառանգվեց կրթության կազմակերպման և գիտելիքների հաղորդման այնպիսի կարևոր բաղադրիչ, ինչպիսին էր ***«յոթ ազատ արվեստների»*** համակարգը: Այն բաղկացած էր երկու ենթահամակարգերից՝ ***եռյակ*** և ***քառյակ***: Առաջինը ներառում էր քերականությունը, տրամաբանությունը, ճարտասանությունը, իսկ երկրորդը՝ աստղագիտությունը, թվաբանությունը, երկրաչափությունը, երաժշտությունը:

Դպրոցները, որոնք հիմնականում եկեղեցու տնօրինության տակ էին, բաժանվում էին ***ծխական, վանական*** և ***տաճարային*** տիպերի: Արդեն IX դ. վանական և տաճարային դպրոցների հիման վրա ձևավորվում էին նոր տիպի դպրոցներ՝ ***վարդապետարաններ***:

Քաղաքներում եկեղեցու իրավասությունից դուրս հիմնադրվում էին աշխարհիկ բնույթի դպրոցներ, որոնց մի մասը վերածվում էր բարձրագույն տիպի դպրոցների:

Կրթության կազմակերպման, կառուցվածքի, դասավանդվող առարկաների քանակի և բովանդակության հետ կապված խնդիրները որոշում էին ուսուցիչները:

Կրթական գործի արդյունավետ կազմակերպման համար դպրոցներին կից ստեղծվում էին ***մատենադարաններ***: Գիրքը ձեռագիր էր՝ գրված մագաղաթյա թերթերի վրա, ուստի բավական թանկ արժեր և պահվում էր հատուկ խնամքով:

X–XIV դդ. ուսումնագիտական գործը կազմակերպող նշանավոր գործիչներից էին ***Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը, Անանիա Նարեկացին, Ներսես Մշեցին, Եսայի Նշեցին, Ներսես Լամբրոնացին, Վահրամ Ռաբունին, Գրիգոր Տաթևացին***:

X–XIV դդ. կրթական համակարգը բաղկացած էր երկու՝ տարրական և բարձրագույն տիպի դպրոցներից: Բարձրագույն տիպի դպրոցում կամ վարդապետարանում ուսումը տևում էր 7–8 տարի: Դասընթացը հաջողությամբ յուրացրած շրջանավարտը ստանում էր ***վարդապետական գավազան*** (կոչում), որը նրան իրավունք էր տալիս զբաղվելու ուսուցչությամբ, քարոզչությամբ և գիտական գործունեությամբ:

Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կենտրոններից էին ***Սանահինի*** և ***Հաղպատի վարդապետարանները***: Իրենց գիտամանկավարժական գործունեությունն այստեղ են անցկացրել ժամանակի նշանավոր գործիչներ ***Դավիթ Արավկաորդին, Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին***:

Ժամանակի նշանավոր կրթական կենտրոններից էր նաև ***Նարեկի վարդապետարանը***, որն իր զարգացման բարձրակետին հասավ Անանիա Նարեկացու ուսուցչապետության տարիներին: Այստեղ է կրթություն ստացել հոգևորական, մեծ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին:

Եթե X–XI դդ. համարվում են բարձրագույն դպրոցի կազմակերպման ժամանակաշրջան, ապա XII դ–ից սկսվում է դրա վերելքի ժամանակաշրջանը: Դպրոցների մի մասը ձեռք է բերում համահայկական նշանակություն: Այս տեսակետից մեծ էր ***Անիի վարդապետարանի*** դերը, որի ուսուցչապետ Հովհաննես Իմաստասերը մշակեց վարդապետական կրթության նոր ծրագիր: Այն բաղկացած էր երկու բաժնից: Առաջինում ներկայացված էր դասավանդվող առարկաների ցանկը, իսկ երկրորդում՝ հանձնարարվող գրականությունը:

Հայկական մշակույթի զարգացման գործում նշանակալից դեր խաղաց նաև ***Նոր Գետիկի*** (Գոշավանք) վարդապետարանը, որն իր ծաղկումն ապրեց ուսուցչապետ ***Մխիթար Գոշի*** օրոք: Այստեղ է կրթություն ստացել նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին:

Հայ մշակույթի զարգացման մեջ թերևս ոչ մի ուսումնագիտական կենտրոն այնպիսի կարևոր դեր չի խաղացել, ինչպես ***Գլաձորի համալսարանը***: 1280–ական թթ. նշանավոր մատենագիր Ներսես Մշեցին հիմնադրում է ***Աղբերց վանքի*** դպրոցը, որը Եսայի Նչեցու ռաբունապետության տարիներին հայտնի է դառնում ***Գլաձորի համալսարան*** անվանումով: Ուսումնագիտական գործընթացի կազմակերպման տեսակետից այն նման էր միջնադարյան Եվրոպայի համալսարաններին: Համալսարանի ղեկավարը

Տաթևի վանք. IX–XIII դդ.

կոչվում էր ***ռաբունապետ***, իսկ դասախոսները՝ ***ռաբուններ***: Համալսարանն ուներ երեք բաժանմունք՝ գրչության արվեստի, հասարակական ու բնական գիտությունների և երաժշտության, որոնք կոչվում էին ուսումնարաններ:

Գլաձորի համալսարանը համահայկական ճանաչում ուներ: Բարձրագույն կրթություն ստանալու համար այստեղ սովորելու էին գալիս ինչպես Հայաստանի տարբեր շրջաններից, այնպես էլ հայկական գաղթավայրերից և Կիլիկյան Հայաստանից:

Հայ մշակույթի զարգացման մեջ մեծ դեր է խաղացել նաև ***Տաթևի համալսարանը***: Այն բեղմնավոր գործունեություն է ծավալել հատկապես XIV դ. երկրորդ կեսից մինչև XV դ. սկիզբը, երբ համալսարանի ուսումնագիտական աշխատանքները ղեկավարում էին նշանավոր գիտնականներ ***Հովհան Որոտնեցին*** և ***Գրիգոր Տաթևացին***:

Կրթական համակարգի և մշակույթի զարգացման գործում որոշակի դեր խաղացին նաև հայ հասարակության մեջ գործող կաթոլիկ քարոզիչների և նրանց հայ գործընկերների հիմնած հոգևոր–մշակութային կենտրոնները: Դրանցից առավել

Գեղարդավանք. XIII դ.

Սանահինի վանք. X–XIII դդ.

նշանակալից էին Արտազ գավառի Ս. Թադեոս առաքյալ վանքին կից գործող ***Ծործորի*** և Երնջակ գավառի ***Քոնայի վանքի*** դպրոցները: Դրանց ուսումնական ծրագրերը ներառում էին հայկական և արևմտաեվրոպական կրթական համակարգի հատկանիշներ: Ուսումնագիտական ինքնուրույն աշխատություններից բացի՝ այստեղ աշխատող գիտնականները մեծ ավանդ ներդրեցին արևմտաեվրոպական գիտական գրականությունը հայերեն թարգմանելու ուղղությամբ:

Կիլիկյան Հայաստանի վերելքին և Մերձավոր Արևելքում հայկական գաղթավայրերի ձևավորմանը զուգահեռ առաջանում էին հոգևոր–մշակութային և կրթական նոր կենտրոններ:

Կիլիկյան Հայաստանում կրթական գործի կազմակերպումը տնօրինում էր ոչ միայն Հայոց եկեղեցին, այլև պետությունը: Կիլիկիայում գործող բարձրագույն դպրոցների շարքում մեծ հռչակ էր վայելում ***Սսի համալսարանը***, որի հիմնադրմանն աջակցել էր նշանավոր մատենագիր Ներսես Լամբրոնացին: Սսի համալսարանում էին կրթություն ստանում Կիլիկյան Հայաստանի պետական գործիչները և գիտության նվիրյալները:

Հայ մշակույթի, մասնավորապես մանրանկարչության, գրչության արվեստի և երաժշտության զարգացման գործում մեծ դեր խաղաց ***Հռոմկլայի*** կաթողիկոսարանին կից ***դպրոցը***:

Կիլիկյան Հայաստանի վանական տիպի դպրոցների շարքում հատկապես մեծ դեր խաղաց ***Սկևռայի դպրոցը***, որն իր գոյությունը պահպանեց շուրջ 200 տարի: Այն հիմնադրել էր Ներսես Լամբրոնացին: Այստեղ դասավանդվող առարկաների շարքում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում մանրանկարչությունը, երաժշտությունը և գրչության արվեստը: Այստեղ է սովորել և աշխատել նշանավոր մանրանկարիչ ***Գրիգոր Մլիձեցին***:

Կիլիկյան Հայաստանում գործող բարձրագույն դպրոցներից էին նաև ***Մեծքարի, Դրազարկի*** և ***Ակների դպրոցները***, որոնց հովանավորում էր հայոց արքունիքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին այն պատմական պայմանները և գործոնները, որոնք նպաստեցին հայ մշակույթի վերելքին: Ի՞նչ գործառույթ ստանձնեց հայոց կաթողիկոսությունը:
2. Ի՞նչ գործոններ նպաստեցին կրթության բարելավմանն ու զարգացմանը: Ի՞նչ տիպի դպրոցներ էին գործում: X–XIV դդ. կրթական գործի ի՞նչ նշանավոր կազմակերպիչներ և ի՞նչ նշանավոր համալսարաններ գիտեք:
3. Ներկայացրե՛ք կրթական գործի կազմակերպումն ու նշանավոր ուսումնագիտական կենտրոնները Կիլիկիայում:

§ 2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

X–XIV դդ. հայ պատմագրությունը մեծ վերելք ապրեց: Դա պայմանավորված էր երկրի ներսում և միջազգային հարաբերություններում տեղի ունեցող իրադարձություններով: Հայ պատմագրությունը չէր կարող բավարարվել պատմության շարադրման այն ժանրերով, որոնք ժառանգություն էին մնացել նախորդ շրջանից: Ուստի առաջանում են նաև նոր ժանրեր, որոնց թվում էին ***տիեզերական (համաշխարհային) պատմությունը*** և ***տարեգրությունը (ժամանակագրությունը)***:

V–VIII դդ. պատմության շարադրման ամենատարածված ժանրը ***հայոց պատմության*** շարադրանքն էր, որն իր գոյությունը պահպանեց նաև X–XIV դդ.: Նոր պատմագիրը սովորաբար իր պատմության շարադրանքը սկսում էր այնտեղից, որտեղ ավարտվում էր նախորդի աշխատությունը:

Հայոց պատմության շարքը շարունակում է նշանավոր հասարակական–քաղաքական գործիչ, կաթողիկոս ***Հովհաննես Դրասխանակերտցին*** (897–929): Նրա գրչին է պատկանում «Պատմություն Հայոց» աշխատությունը, որտեղ հեղինակը դեպքերի ու իրադարձությունների շարադրանքը սկսում է Հայկի ու Բելի ավանդությունից և հասցնում 924 թ.: Մասնավորապես Սմբատ I–ի և Աշոտ Երկաթի ժամանակաշրջանի պատմությունը Դրասխանակերտցին շարադրում է մանրամասն՝ որպես իրադարձությունների մեծ մասի ականատես, իսկ որոշ դեպքերում նաև մասնակից: Պատահական չէ, որ նրա աշխատությունն այդ ժամանակաշրջանի հայոց պատմության հավաստի և փաստական հարուստ տեղեկություններ պարունակող ամենանշանավոր սկզբնաղբյուրն է:

Հայոց պատմության շարքի հաջորդ պատմագիրը ***Արիստակես Լաստիվերտցին*** է (XI դ.), որի «Պատմություն» աշխատությունը ներառում է 1000–1071 թթ. դեպքերը և իրադարձությունները: Այստեղ նա մանրամասնորեն անդրադառնում է Բյուզանդիայի արևելյան քաղաքականությանը՝ Անիի Բագրատունյաց թագավորության անկմանը, սելջուկների արշավանքներին, Թոնդրակյան շարժմանը:

XIII դ. պատմագիր ***Կիրակոս Գանձակեցու*** «Հայոց պատմությունն» ընդգրկում է քրիստոնեության ընդունումից մինչև 1265 թ. ընկած ժամանակահատվածը: Հեղինակը մանրամասն ներկայացնում է հայ–վրացական հարաբերություն-

ները, Զաքարյանների իշխանությունը, Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցած կարևոր դեպքերը, հայ–մոնղոլական առնչությունները:

Հայ պատմագրության մեջ համաշխարհային պատմության շարադրանքի ժանրը՝ որպես նոր ուղղություն, հիմնադրել է ***Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ)***, որն ապրել և ստեղծագործել է X դ. երկրորդ կեսից մինչև XI դ. սկիզբը: Նրա աշխատությունը կոչվում է ***«Տիեզերական պատմություն»*** և բաղկացած է երեք բաժնից: Առաջին բաժինն ընդգրկում է հնագույն շրջանից մինչև Հայաստանում հեթանոսության ավարտը: Երկրորդը ներառում է Հայաստանում քրիստոնեության ընդունումից մինչև Բագրատունյաց թագավորության հաստատումը: Այստեղ տեղեկություններ կան Սասանյան Պարսկաստանի, Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի մասին: Ամենաարժեքավորը աշխատության երրորդ բաժինն է, որն ընդգրկում է 885–1004 թթ., քանի որ հեղինակը Հայաստանի պատմությունը հանգամանալից շարադրում է՝ շաղկապված Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի պատմության հետ:

Համաշխարհային պատմություն շարադրելու երկրորդ փորձը կատարեց XIII դ. նշանավոր մանկավարժ, եկեղեցական գործիչ ***Վարդան Արևելցին***: Նրա աշխատությունը ևս կոչվում է «Տիեզերական պատմություն» և սկսվում է «անսկիզբ» ժամանակներից ու հասնում մինչև 1267 թ.: Մինչև մոնղոլական արշավանքներն ընդգրկող ժամանակաշրջանի պատմությունը շարադրված է համառոտ: Որպես ականատես և իրադարձությունների մի մասի մասնակից՝ Վարդան Արևելցին մանրամասն շարադրել է մոնղոլական ժամանակաշրջանի պատմությունը:

X–XIV դդ. հայ պատմագրության մեջ շարունակվում էր Հայաստանի առանձին տարածաշրջաններին նվիրված պատմության շարադրանքը: Այս ժանրի երևան գալը պայմանավորված էր նրանով, որ պետականության բացակայության դեպքում Հայաստանի որոշ տարածքներ ներառվում էին վարչաքաղաքական այլ միավորումների կազմում, կամ ստեղծվում էին տեղական թագավորություններ և իշխանություններ: Այս ժանրի հիմնադիրը VIII դ. պատմիչ ***Մովսես Կաղանկատվացին*** է:

Այս ժանրով ստեղծագործող պատմիչ էր ***Թովմա Արծրունին*** (IX դ. երկրորդ կես և X դ. սկիզբ): Նրա աշխատությունը կոչվում է ***«Արծրունիների տան պատմություն»*** և նվիրված է Վասպուրական նահանգի ու Արծրունիների տոհմի պատմությանը: Այստեղ հեղինակը ներկայացնում է Արծրունիների ծագումը, նրանց պատմությունը մարզպանության և Արաբական խալիֆայության շրջանում: Աշխատության ամենաարժեքավոր մասն ընդգրկում է 850 թ. մինչև X դ. սկիզբը՝ հեղինակի ապրած ժամանակահատվածը: Թովմա Արծրունու աշխատությունը շարունակել են այլ հեղինակներ և դեպքերի շարադրանքը հասցրել մինչև XIV դար:

XIII դ. երկրորդ կեսի նշանավոր եկեղեցական–քաղաքական գործիչ ***Ստեփանոս Օրբելյանի*** աշխատությունը՝ ***«Պատմություն նահանգին Սիսական»***, նվիրված է Սյունիք նահանգի պատմությանը: Աշխատության սկզբում հեղինակը ներկայացնում է Սյունիքի տեղագրությունը, Սյունյաց նախարարական տոհմի առաջացումը, թագավորության

հաստատումը, Օրբելյանների իշխանությունը և այլն:

Պատմության շարադրման տարեգրության (ժամանակագրություն) ժանրը հայ պատմագրության մեջ ձևավորվել է XI–XII դդ.: Ժամանակագրության մեջ դեպքերն ու իրադարձությունները սովորաբար շարադրվում են ըստ տարիների, այստեղից էլ՝ դրա մյուս անվանումը՝ տարեգրություն:

Հայ պատմագրության մեջ այս ուղղության հիմնադիրը ***Մատթեոս Ուռհայեցին*** է (XI–XII դդ.): Նրա «***Ժամանակագրությունը***» ներառում է 952–1136 թթ. դեպքերն ու իրադարձությունները: Հետագայում այն լրացվել և հասցվել է մինչև 1162 թ.: Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» տարածական լայն ընդգրկում ունի, քանզի ներառում է Առաջավոր Ասիայի ողջ տարածաշրջանի X–XII դդ. պատմությունը: Նրա ժամանակագրության մեջ կարևոր տեղեկություններ կան հայ–բյուզանդական հարաբերությունների, Կիլիկիայի և Մերձավոր Արևելքում առաջացած հայկական այլ պետությունների, սելջուկյան նվաճումների մասին:

Հայ պատմագրության մեջ հաջորդ նշանավոր ժամանակագիրը ***Սամուել Անեցին*** է (XII դ.): Նրա աշխատությունը սկսվում է արարչագործությունից և հասցվում մինչև 1180 թ.: Հետագայում այն լրացվել է տարբեր հեղինակների կողմից և հասցվել մինչև XVII դար: Քրիստոնեությունը մշակել էր ժամանակագրության շարադրման սեփական եղանակը, երբ աշխատությունը պետք է սկսվեր արարչագործությունից և հասցվեր հեղինակի ապրած օրերը: Սամուել Անեցին հետևել է ժամանակագրության շարադրման այս եղանակին: Ժամանակագրության մեջ առավել արժանահավատ ու փաստական հարուստ տեղեկությունները վերաբերում են միայն XII դ., քանզի դրանից առաջ շարադրվածը ուրիշ աղբյուրներից համառոտագրված տվյալներ են:

XIII դ. նշանավոր ժամանակագիր էր Կիլիկյան Հայաստանի պետական գործիչ, օրենսգիր ***Սմբատ Գունդստաբլը***: Նրա աշխատությունը, որը հայտնի է «***Տարեգիրք***» անվանումով, ներառում է 951–1272 թթ. իրադարձությունները: Ըստ տարիների՝ նա համառոտ շարադրում է Բագրատունյաց թագավորության շրջանի իրադարձությունները, իսկ առավել մանրամասն՝ Կիլիկյան Հայաստանի պատմությունը:

X–XIV դդ. հայ պատմիչների և ժամանակագիրների թողած աշխատությունները կարևոր սկզբնաղբյուրներ են ոչ միայն հայ ժողովրդի, այլև Առաջավոր Ասիայի երկրների պատմության ուսումնասիրության համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ գործոններ նպաստեցին հայ պատմագրության վերելքին, և որո՞նք էին նրա կարևոր խնդիրները:
2. Որո՞նք էին հայ պատմագրության հիմնական ուղղությունները և ներկայացուցիչները: Աղյուսակով ներկայացրեք այդ ուղղությունները և ներկայացուցիչներին՝ ավելացնելով աշխատության վերնագիրը, ընդգրկած ժամանակաշրջանը, ստեղծման ժամանակը:

§ 3. ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԲՆԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Իրավունքը: XII դ. սկսած՝ բուռն վերելք ապրեց նաև հայ իրավագիտությունը: Նախորդ ժամանակաշրջանում հայ հասարակության իրավական հարաբերությունները կարգավորվում էին սովորութային իրավունքով, «Կանոնագիրք հայոց» իրավունքի հավաքածուի մեջ ներառված կանոններով, որոնք հիմնականում մշակվել և ընդունվել էին եկեղեցու կողմից: Կիլիկյան Հայաստանում շրջանառության մեջ դրեցին նաև բյուզանդական և խաչակրաց օրենքները՝ ***ասիզներ*** անվանումով: Սակայն սրանք չէին բավարարում հայ հասարակության կյանքում առաջացած նոր երևույթների կարգավորմանը, ուստի անհրաժեշտություն էր զգացվում ստեղծելու օրենքների նոր ժողովածու: Հայկական ***առաջին դատաստանագիրքը*** ստեղծել է ***Դավիթ Ալավկառրդին*** մոտավորապես ***1130 թ.***: Այնտեղ ներառված են ինչպես եկեղեցական կանոններ, այնպես էլ աշխարհիկ օրենքներ: Դատաստանագիրքը («Կանոններ») բաղկացած է 97 հոդվածներից, որոնք կարգավորում էին հասարակության քաղաքացիական, ամուսնաբնտանեկան և այլ բնագավառներ: Դավիթ Ալավկառրդին հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ արեց իրավական մեկ համակարգի մեջ ներառելու եկեղեցական և աշխարհիկ իրավունքը և ստեղծելու միասնական օրենսդրություն:

Հայ իրավական մտքի հետագա զարգացման վրա որոշակի ազդեցություն ունեցավ նաև ***Ներսես Շնորհալի*** կաթողիկոսի (1166–1173) հեղինակած ***«Թուղթ ընդհանրականք»***, ուր արձանագրված են ամուսնաբնտանեկան իրավունքի որոշ նորմեր: Նրանում տեղ են գտել նաև կանոններ, որոնք կարգավորում էին հասարակության տարբեր խավերի մարդկանց վարքագիծը:

Միջնադարի հայ իրավական մտքի գլուխգործոցը ***Մխիթար Գոշի դատաստանագիրքն է («Գիրք դատաստանի»)***, որը կազմվել է 1184 թ.: Այդ ժամանակ Հյուսիսարևելյան Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը վերելք էր ապրում, ուստի հասարակական–քաղաքական հարաբերությունները վերափոխվում ու բարդանում էին: Անհրաժեշտ էր ստեղծել նոր դատաստանագիրք, որը կարգավորեր հասարակության կյանքի բոլոր բնագավառները: Կարիք կար նաև հայկական իրավական ավանդույթի հիման վրա ստեղծելու դատաստանագիրք, որը կարգավորեր հայության բոլոր հատվածների կյանքը և նրանց հեռու պահեր օտարերկրյա իրավունքի փոխառություններից: Մխիթար Գոշի դատաստանագիրքը ծառայեց այդ նպատակին շուրջ 700 տարի:

Կիլիկյան Հայաստանում 1265 թ. նոր դատաստանագիրք է գրում ***Սմբատ Գունդստաբլը***: Չնայած Սմբատի դատաստանագրքում տեղ են գտել օտարերկրյա ծագում ունեցող մի շարք իրավանորմեր, սակայն նրա հիմքում դրված է հայկական սովորութային իրավունքը, «Հայոց կանոնագիրքը» և Մխիթար Գոշի դատաստանագիրքը: Այն բաղկացած է 117 բաժիններից, որոնք կարգավորում էին Կիլիկյան Հայաստանի հասարակության իրավական հարաբերությունների բոլոր բնագավառները:

Մխիթար Գոշ

Չնայած դատաստանագրքերի երևան գալուն, որոնցում փորձեր էին արվում մեկ համակարգում ներառելու աշխարհիկ և եկեղեցական օրենսդրությունը, իրավահարաբերությունների որոշ բնագավառներ դեռևս կանոնակարգվում էին եկեղեցական կանոններով, որոնք ընդունվում էին եկեղեցական ժողովների կողմից: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ ***1243 թ. Սսի եկեղեցական ժողովը***, որն ընդունեց հասարակության ամուսնաընտանեկան և բարոյական կյանքը կարգավորող շուրջ երկուսուկես տասնյակ կանոններ:

Բնափիլիսոփայությունը: XI–XIV դդ. մեծ վերելք ապրեց նաև բնագիտությունը: Բագրատունյաց, ապա Զաքարյանների ժամանակաշրջանում Հայաստանում, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանում զարգացում ապրող քաղաքային կյանքը, արհեստը, առևտուրը, քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը և կրթական նոր համակարգը այլ խնդիրներ էին դնում բնագիտության առջև: Մինչ այդ գոյություն ունեցող հիմնական գիտության՝ փիլիսոփայության և գործնական գիտելիքների միջև համարյա ոչ մի կապ գոյություն չուներ, ուստի բնական գիտությունների զարգացումը կանոնակարգված չէր:

Մետաղագործության զարգացումը և ճյուղավորումը պահանջում էին քիչ թե շատ ճշգրիտ տվյալներ մետաղների ֆիզիկական և քիմիական հատկությունների ու համաձուլվածքների մասին: Ճշգրիտ մաթեմատիկական և երկրաչափական տվյալների կարիք ունեին ամրոցաշինությունը և քաղաքաշինությունը: Բնության, շրջակա միջավայրի և մարդու վերաբերյալ գիտելիքները ներառող, սակայն դեռևս լիովին չձևավորված գիտությունները (ֆիզիկա, քիմիա, բժշկություն) շարունակում էին զարգանալ փիլիսոփայության շրջանակներում: Գիտության այս ճյուղը ստացել էր ***բնափիլիսոփայություն*** անվանումը: Բնափիլիսոփայության շրջանակներում քննարկում էին նաև աստվածաբանության հետ կապված խնդիրները, ուստի նույն գիտնականը զբաղվում էր բնագիտությամբ, աստվածաբանությամբ և փիլիսոփայությամբ: Բնափիլիսոփաները աշխատում էին ոչ միայն աստվածաբանության, այլև փիլիսոփայության օգնությամբ հասկանալ Աստծուն, բացատրել, թե նա ինչու է արարել աշխարհը և մարդուն:

Հայ բնափիլիսոփայության ձևավորման ակունքների մոտ կանգնած է միջնադարի նշանավոր գիտնականներից մեկը՝ ***Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*** (մոտ 990–1058): Բնագիտության նկատմամբ աճող հետաքրքրությունն իր ազդեցությունն ունեցավ նաև նրա գիտական

գործունեության վրա: Նա հունարենից թարգմանեց Էվկլիդեսի «Տարերք երկրաչափության» աշխատությունը: Մագիստրոսի կարծիքով գիտելիքը կարելի է ձեռք բերել բանականության, զգայարանների, փորձի և հավատի միջոցով:

Բնափիլիսոփայության հետագա զարգացումը կապված էր ***Հովհաննես Սարկավագ Իմաստասերի*** (1045–1129) գործունեության հետ: Մաթեմատիկական, տոմարագիտական և աստղաբաշխական հաշվարկների հիման վրա նա ***1085 թ.*** բարեփոխեց հայկական տոմարը: Ընդունելով մարդու զգայարանների դերը գիտելիքների ձեռքբերման գործում՝ նա առավել կարևորում էր փորձի և գործունեության նշանակությունը:

Բնափիլիսոփայության ներկայացուցիչները փորձում էին ուսումնասիրել բնության տարբեր երևույթները, որպեսզի կարողանային գտնել ընդհանուր և մասնավոր օրինաչափությունները: Գ. Մագիստրոսը և Հ. Սարկավագը բնության մեջ գոյություն ունեցող չորս հիմնական տարրերի (ջուր, հող, կրակ, օդ) փոխներգործության մեջ էին որոնում շրջակա միջավայրում տեղի ունեցող երևույթների բացատրությունը:

Բնափիլիսոփայության հետագա զարգացման հիման վրա տեղի էր ունենում բնական գիտությունների ձյուղավորում և դրանցից յուրաքանչյուրի հիմնախնդիրների որոշակիացում: Այսպես նյութական աշխարհի և մարդու վերաբերյալ որոշ գիտելիքներ տեղ էին գտնում բժշկագիտությանը վերաբերող աշխատություններում:

Բնափիլիսոփայության ներկայացուցիչ կարելի է համարել նաև XII դ. նշանավոր բժիշկ ***Մխիթար Հերացուն***, որի ***«Ջերմանց մխիթարութիւն»*** աշխատության մեջ քննարկված են բժշկությանը վերաբերող տարբեր խնդիրներ: Նրա կարծիքով հիվանդությունները ոչ թե չար ուժերի ներգործության արդյունք են, այլ պայմանավորված են բնական, նյութական պատճառներով: Այսպես՝ հիվանդ մարդու բարձր ջերմությունը կապված է մարմնում առաջացած հիվանդագին երևույթների հետ:

XIII դ. նշանավոր գիտնական, Կիլիկյան Հայաստանի քաղաքական գործիչ ***Վահրամ Բաբունին*** թողել է փիլիսոփայությանը վերաբերող մի շարք աշխատություններ: Նրա կարծիքով՝ իրական աշխարհը գոյություն ունի անկախ մարդու գիտակցությունից: Մարդն այդ աշխարհի մասին առաջին հերթին իմանում է իր զգայարանների միջոցով, ապա բանականությամբ ստեղծում ընդհանուր հասկացություններ:

Հայ բնափիլիսոփայության մյուս ականավոր ներկայացուցիչը ***Հովհաննես Երզնկացին*** է (1250–1326): Նա համակարգեց հայ բնագիտության և փիլիսոփայության նվաճումները և մատնանշեց նրա զարգացման հեռանկարները:

XIV դ. հայ նշանավոր փիլիսոփա ***Հովհան Որոտնեցու*** աշխատությունները նվիրված են տրամաբանության և իմացաբանության խնդիրներին: Նա գտնում էր, որ բնության մեջ իրը գոյություն ունի անկախ այն հանգամանքից՝ մարդը զգայարանների միջոցով այն ընկալում է, թե ոչ: Սակայն Հ. Որոտնեցու կարծիքով մարդը չպետք է բավարարվի միայն զգայարանների միջոցով ձեռք բերած գիտելիքներով, այլ պետք է աշխատի դրանք ճշգրտել բանականության և փորձի միջոցով:

Միջնադարի նշանավոր փիլիսոփաներից էր ***Գրիգոր Տաթևացին*** (1340–1410): Նա թողել է գիտական հարուստ ժառան-

գություն, որոնց մեջ նշանավոր են *«Գիրք հարցմանց»*, *«Ամոան հատոր»*, *«Ձմոան հատոր»* աշխատությունները:

X–XIV դդ. հայ բնափիլիսոփայության զարգացումը հիմք դարձավ հետագա դարերի գիտական մտքի զարգացման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք հայ իրավագիտական մտքի պատմությունը: Ինչ նշանավոր գործիչներ գիտեք: Որոնք են նշված ժամանակաշրջանի իրավունքի նշանավոր հուշարձանները:
2. Բնագիտական ինչ գիտություններ էին շարունակում զարգանալ փիլիսոփայության շրջանակներում. ընդհանրական ինչ անունով է հայտնի գիտության այդ ճյուղը և ինչ խնդիրներ էր ուսումնասիրում:
3. Ներկայացրեք հայ բնագիտական և բնափիլիսոփայական ուղղությունների նշանավոր ներկայացուցիչներին և նրանց գործունեությունը:

§ 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Գրականությունը: Մինչև X դ. գեղարվեստական գրականությունն ինքնուրույն բնագավառ չէր և հանդես էր գալիս եկեղեցական ու պատմագիտական գրականության հետ միասնաբար: X դ. գրականությունը ոչ միայն անջատվեց դրանցից և դարձավ մշակույթի ինքնուրույն բնագավառ, այլև առաջացան գրականության տարբեր ժանրեր:

X–XIV դդ. զարգանում էր ժողովրդական բանահյուսությունը, մասնավորապես առակները և հերոսական էպոսը: Հայ ***առակագրության հիմնադիրը Մխիթար Գոշն*** է, որը հավաքել և գրի է առել շուրջ 190 առակ: Առակների միջոցով աշխատում են դաստիարակել, համախմբել և լուսավորել ժողովրդին: Դրանցում սովորաբար քննադատվում են հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները՝ անարդարությունը, շահամոլությունը, խարդախությունը և քծնանքը: Գոշի առակներում տեղ են գտել նաև ազգային ինքնագիտակցության և օտարների դեմ պայքարելու գաղափարներ:

Հայ առակագրության մյուս ներկայացուցիչը ***Վարդան Այգեկցին*** է (XII–XIII դդ.): Նրա առակների հիմնական թեման հասարակական կյանքն է՝ իր դրական ու բացասական կողմերով: Դրանցում նա սուր քննադատության է ենթարկում հասարակության արատները և գովաբանում առողջ ու ընդունելի կողմերը:

Պատմությունն ավանդվում էր ոչ միայն պատմիչների աշխատություններով, այլև ժողովրդական բանահյուսության, մասնավորապես նրա մի մասը կազմող հերոսական վիպերգերի միջոցով: Հերոսական վիպերգության նմուշներ եղել են նաև նախորդ դարաշրջանում, սակայն այս ժանրն իր զարգացման գագաթնակետին հասավ IX–X դդ., երբ ստեղծվեց ***«Սասնա ծռեր»*** էպոսը: Այն իր մեջ խտացրել և ամփոփել է հայ ժողովրդի հոգևոր կյանքի կարևորագույն կողմերն ու բարոյական արժեքները: Միջնադարյան հայ մշակույթի ոչ մի ստեղծագործության մեջ այնքան

ցայտուն ու խորիմաստ չի դրսևորվել հայ ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, որքան «Սասնա ծռեր» էպոսում: Էպոսի հիմնական թեման հայ ժողովրդի ազատագրական պայքարն է օտար տիրապետության դեմ: Քանի որ ժողովուրդն ի վիճակի չէր հիմնովին վերափոխելու աշխարհը, ապա վիպերգի հերոս Փոքր Միհրին ուղարկում է քարանձավ՝ հույսով, որ կգա աշխարհը վերափոխելու ժամանակը, և Փոքր Միհրը դուրս կգա քարանձավից:

Հայ գեղարվեստական գրականության առաջին նշանավոր դեմքը ***Գրիգոր Նարեկացին*** է (951–1003): Դարաշրջանին հուզող խնդիրները դարձան նրա գլխավոր ստեղծագործության՝ ***«Մատյան ողբերգության»*** պոեմի թեման: Բանաստեղծի համոզմամբ՝ մարդը պետք է առանց միջնորդության կապվի Աստծո հետ, մաքրվի և մերձենա նրան:

Հայ գրականության հետագա զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցան նաև Գ. Նարեկացու գրած շուրջ քսան տաղերը: Չնայած դրանց թեման հիմնականում վերցված է Աստվածաշնչից, սակայն դրանցում տեղ են գտել բնությանը, երկրային կյանքին նվիրված գեղեցիկ հատվածներ:

Հայ գրականության հետագա վերելքը կապված է ժամանակի նշանավոր հասարակական–քաղաքական գործիչ, կաթողիկոս ***Ներսես Շնորհալու*** (1100–1173) գրական ժառանգության հետ: Նրա գրական երկերն արձակ և չափածո են: Առաջիններն ընդգրկում են Ներսես Շնորհալու հասարակական–քաղաքական գործունեության հետ կապված թղթերը, նամակները, մասնավորապես ***«Թուղթ ընդհանրականը»***, իսկ երկրորդները՝ բանաստեղծությունները, պոեմները, հանելուկները: Բանաստեղծի ամենանշանավոր ստեղծագործությունը ***«Ողբ Եդեսիոյ»*** պոեմն է: Դրա ստեղծման առիթ է դարձել Եդեսիա քաղաքի գրավումը (1144 թ.) մուսուլմանների կողմից: Նրանում առաջ են քաշված ցրված հայությանը հայրենիքում համախմբելու, ներքին միասնություն ստեղծելու և օտար նվաճողների դեմ պայքարի գաղափարներ: Ներսես Շնորհալու ստեղծագործություններում աշխարհիկ թեման մեծ տեղ էր զբաղեցնում, ուստի նա դարձավ հայ գրականության աշխարհականացման հիմնադիրներից մեկը:

Գրիգոր Նարեկացի.
«Մատյան ողբերգության», 1173 թ.

Հայ միջնադարյան գրականության մեջ աշխարհիկ թեման առավել մեծ տեղ է զբաղեցնում ***Ֆրիկի*** (XIII–XIV դդ.) ստեղծագործություններում: Միջնադարի ոչ մի բանաստեղծ այդքան խորաթափանց ու հստակ չի նկարագրել մոնղոլ նվաճողների նկատմամբ հայ հասարակության մեջ առաջացած դժգոհությունը, որքան Ֆրիկն իր բանաստեղծություններում: Նրա ստեղծագործություններում մեծ տեղ է զբաղեց-

նում նաև սոցիալական թեման: Նա քննադատում է հասարակության մեջ գոյություն ունեցող անարդարությունը, անհավասարությունը, աշխատավոր բնակչության շահագործումը և հարստահարումը:

Ճարտարապետությունը և քանդակագործությունը: X–XIV դդ. մեծ վերելք էր ապրում ճարտարապետությունը: Հատկապես զարգանում են ***քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը*** և ***եկեղեցաշինությունը***:

X–XIV դդ. նոր քաղաքների հատակագծման և կառուցման ժամանակ մեծ կարևորություն էին տալիս տեղանքին, առևտրական ճանապարհների առկայությանը, ջրամատակարարման հնարավորություններին: Սովորաբար քաղաքը բաղկացած էր երեք մասից՝ ***միջնաբերդից, բուն քաղաքից (շահաստան), արվարձանից***: Անկախ իրենց զբաղեցրած տեղանքից՝ միջնաբերդը և շահաստանը պարսպապատվում էին, իսկ արվարձանը պարսպից դուրս էր և ամրացված չէր: Միջնաբերդը սովորաբար կառուցվում էր դժվարամատչելի տեղանքում: Այստեղ կառուցում էին թագավորական և իշխանական պալատներ, առանձին եկեղեցի, մթերքի շտեմարաններ և զենքի պահեստներ: Մայրաքաղաքի միջնաբերդում էր արքունի գանձարանը:

Քաղաքի շահաստանում էին վարչական ու պաշտամունքային շինությունները, արհեստանոցները, խանութները և հասարակական շենքերը: Արվարձաններում ապրում էին հասարակության ցածր խավի ներկայացուցիչները՝ օրավարձու աշխատողներ, մանր առևտրականներ, արհեստավորներ և գյուղացիներ:

Բագրատունյաց Հայաստանում, Զաքարյանների իշխանությունում, Կիլիկյան

Անիի Տիգրան Հոնենցի (Ս. Գրիգոր Լուսավորիչ) եկեղեցին, 1215 թ.

Հայաստանում մեծ վերելք էր ապրում նաև ամրոցաշինությունը: Այսպես՝ Կիլիկյան Հայաստանում կար շուրջ 112 բերդ: Սովորաբար ամրոցը բաղկացած էր երկու մասից՝ միջնաբերդից և բուն ամրոցից: Երկուսն էլ ունեին իրենց առանձին պարիսպները: Միջնաբերդում իշխանական դղյակն էր՝ իր օժանդակ շինություններով, իսկ բուն ամրոցում զինվորների համար նախատեսված շինություններն էին, արհեստանոցները և օժանդակ այլ շինություններ:

X–XIV դդ. մեծ վերելք էր ապրում նաև եկեղեցական ճարտարապետությունը: Կառուցում էին ոչ միայն առանձին եկեղեցիներ, այլև ***վանական համալիրներ (վանքեր)***: Դրանք բաղկացած էին ոչ միայն պաշտամունքային, այլև աշխարհիկ նշանակություն ունեցող շինություններից: Վանական համալիրում կային ուսումնագիտական կենտրոն, մատենադարան, ձեռագրատուն, արհեստանոց և այլ շինություններ: Վանական համալիրներից հատկապես նշանավոր էին Տաթևը, Սա-

նահինը, Հաղպատը, Սևանը, Սկևռան, Դրազարկը, Այրիվանքը (Գեղարդավանք), Գոշավանքը: Գեղարդավանքը զարմացնում է իր ճարտարապետական ինքնատիպությամբ: Այն իր մեջ ընդգրկում է եզակի եկեղեցական կառույցներ, որոնց մի մասը փորված է ահռելի ժայռի (այր) մեջ՝ երկու հարկով: Դրա համար էլ կոչվում է նաև ***Այրիվանք***:

Ճարտարապետության զարգացման գործում նշանակալից դեր խաղացին ***Մանուել*** և ***Տրդատ*** ճարտարապետները: Մանուելը նախագծել և կառուցել է ***Աղթամարի Ս. Խաչ*** եկեղեցին, իսկ Ոստան քաղաքում՝ Արծրունիների թագավորական պալատը: Բագրատունիների արքունի ճարտարապետ Տրդատը հիմնականում աշխատել և ստեղծագործել է Անի քաղաքում: Այնտեղ նրա նախագծով կառուցվել է մայր տաճարը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ զվարթնոցատիպ եկեղեցին, որի շինարարությունն ավարտվել է 1001 թ.:

Եկեղեցական ճարտարապետությունը մեծ վերելք էր ապրում նաև Բագրատունիներին ենթակա թագավորություններում և Կիլիկյան Հայաստանում:

X–XIV դդ. քանդակագործությունը զարգանում էր ճարտարապետությանը զուգընթաց: Քանդակները դրվում էին ոչ թե քաղաքների հրապարակներում, փողոցներում, շենքերի առջև, այլ տեղադրվում էին եկեղեցիների շենքերի պատերի վրա: Սովորաբար տեղադրում էին մարդկանց, կենդանիների, բույսերի, զանազան առարկաների պատկերներ և բարդ հյուսվածքներ (Աղթամարի Ս. Խաչ, Անիի Տիգրան Հոնենցի և Այրիվանքի եկեղեցիներ): Քանդակների համար ընտրում էին ոչ միայն աստվածաշնչյան–կրոնական, այլև աշխարհիկ թեմաներ: Այսպես՝ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու պատերին պատկերված է խաղողի մշակության ամբողջ ընթացքը՝ որթի տնկումից մինչև գինու ստացումը:

IX–X դդ. քանդակագործության մեջ ինքնուրույն ձյուղ դարձավ ***խաչքարային արվեստը***, որը յուրահատուկ է միայն հայկական մշակույթին: Խաչքարը պատվանդանի վրա կանգնեցված քարե սալ է, որի մի երեսին փորագրում էին քրիստոնեության խորհրդանիշ խաչը՝ շրջապատված տարբեր զարդաքանդակներով: Խաչքարերն ունեցել են տարբեր նշանակություն և կիրառություններ: Ամենից տարածվածը գերեզմանների վրա դրվող մահարձանն էր: XI–XIV դդ. խաչքարեր էին կանգնեցնում նաև որևէ նշանակալից իրադարձության առիթով, նշանավոր գործիչների հիշատակին: Սովորաբար խաչքարերի վրա թողնվում էին արձանագրություններ, որոնք բովանդակում էին խաչքարը ստեղծելու ժամանակը, վարպետի և հուշարձանը կանգնեցնելու վերաբերյալ տեղեկություններ: Նշանավոր խաչքարագործ վարպետներից էին ***Պողոսը*** (Գոշավանք) և ***Մոմիկը*** (Նորավանք): X–XIV դարերից մեզ են հասել տասնյակ հազարավոր խաչքարեր:

Նկարչությունը: XI–XIV դդ. մեծ վերելք ապրեցին նաև ***մանրանկարչությունը*** և ***որմնանկարչությունը***: Մանրանկարչությունը՝ որպես արվեստի ճյուղ, ծառայում էր ձեռագրերի ձևավորմանը և զարդարմանը: ***Մանրանկարներով զարդարված առաջին ամբողջական ձեռագիրը, որը հասել է մեզ, վերաբերում է 851 թ.***: Հայ մանրանկարչությունը հատկապես մեծ վերելք ապրեց XI–XIV դդ.: Այդ ժամանակաշրջանի ձեռագրերի մեծ քանակությունը վկայում է կրթական գոր-

ծի հետագա զարգացման մասին: Շատերը պատվիրում էին շքեղ ու նկարազարդ ձեռագրեր: Ձեռագիր պատվիրելը դարձել էր աստվածահաճո գործ և մեղքերի թողության երաշխիք: Մանրանկարչության բուռն վերելքը նպաստեց մի շարք դպրոցների առաջացմանը, որոնք միմյանցից տարբերվում էին ձեռագրի ձևավորման կանոններով և ընտրված թեմաներով: Դրանցից էին Սկևռայի, Դրազարկի, Հռոմկլայի, Վասպուրականի և Սյունիքի դպրոցները: Ինչպես քանդակագործները, այնպես էլ մանրանկարիչներն իրենց գործերի համար իբրև թեմա ընտրում էին և՛ աստվածաշնչյան, և՛ աշխարհիկ կյանքից վերցված կերպարներ: Այդ ժամանակաշրջանի նշանավոր մանրանկարիչներից էին ***Գրիգոր Մլիճեցին*** (Սկևռա), ***Թորոս Ռոսլինը*** (Հռոմկլա), ***Սարգիս Պիծակը*** (Սիս), ***Մոմիկը*** (Գլաձոր), ***Թորոս Տարոնեցին*** (Գլաձոր) և ուրիշներ:

Մանրանկարչությանը զուգահեռ X–XIV դդ. Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում զարգանում էր ***որմնանկարչությունը***: Բագրատունի, Արծրունի, Սյունի, Հեթումյան թագավորները և Զաքարյաններն իրենց կառուցած պալատների, ընդունելությունների դահլիճների և տաճարների ներսի պատերը զարդարել էին տալիս որմնանկարներով և զարդանախշերով:

Տաճարների ներսի որմնանկարների թեման որմնանկարիչները հիմնականում վերցնում էր Հին և Նոր Կտակարաններից: Որմնանկարներն արվում էին այնպիսի կանոններով, որ վերարտադրեն արարչագործությունից մինչև Հիսուս Քրիստոսի երկրային կյանքն ընկած ժամանակահատվածի կարևոր դրվագները: Այսպիսի կանոններով են կատարվել Աղթամարի Ս. Խաչ, Տաթևի, Անիի Տիգրան Հոնենցի և Ախթալայի եկեղեցիների որմնանկարները: Որոշ որմնանկարներում Աստվածաշնչից վերցված կերպարների կողքին հանդիպում են նաև պատմական գործիչների կերպարներ: Այսպես՝ Աղթամարի Ս. Խաչի որմնանկարներում պատկերված է Գագիկ Արծրունին, իսկ Տիգրան Հոնենցի եկեղեցում՝ Տրդատ III–ը և Գրիգոր Լուսավորիչը:

Երաժշտությունը: Հայաստանում և Կիլիկիայի հայկական պետությունում X–XIV դարերում զարգացման բարձր մակարդակի հասավ նաև հայ երգարվեստը: Ժողովրդական և գուսանական երաժշտությունը շարունակեց հնուց եկող ավանդույթները և հարստացավ նոր թեմաներով: Նախկինի պես տարածված էին սիրո, ուրախության, պատմական, փառաբանման, աշխատանքային, երգիծական երգերը: Առաջանում են պանդխտության երգերը, ավելանում են ողբի և կորուստի թեմաներով երգերը:

Կարևոր նորություն և նվաճում էր երգերի նոտագրումը ***խազագրերի*** միջոցով: Հայկական խազերը հատուկ ձայնանիշեր են, որոնցով գրառում էին երաշժտությունը: Ներմուծվում է նաև երաժշտության ***գործիքավորումը***: Ժամանակաշրջանի հայտնի գործիքներից էին սրինգը, շվին, թմբուկը, քնարը, սազը, տավիղը և այլն:

Ծաղկում է ապրում տաղերի արվեստը: Տաղերը ազատ ոճի մեղեդիով երգեր են: Այս բնագավառում աչքի է ընկել մեծ բանաստեղծ ***Գրիգոր Նարեկացին***, որի տաղերին բնորոշ է հուզականությունը և գունեղ երևակայությունը:

Վերելք է ապրում հայ հոգևոր երաժշտությունը: ***Ներսես Շնորհալին*** զարգացրեց ծիսական երաժշտությունը,

ստեղծեց երգի նոր՝ «*Սոակոտ յուտ*» կոչվող տեսակը: Այս տեսակի հոգևոր երգերը մեծ ժողովրդականություն էին վայելում: Բազմաթիվ հեղինակների կողմից գրվում են նոր շարականներ, որոնք հարստացնում են հայ երաժշտության միջնադարյան ժառանգությունը: Օրինակ՝ Հաղարծինի վանահայր *Խաչատուր Տարոնեցու* «Խորհուրդ խորին» շարականը հայ երգարվեստի անկրկնելի նմուշներից է:

Երգ-երաժշտությունը մեծ տեղ ուներ հայ հասարակությունում, այն մարդկանց առօրյա կյանքի բաղկացուցիչ մասերից մեկն էր: Երաժշտության հասարակական կարևոր դերը ամրագրվել էր հայ կրթական համակարգում: Որպես պարտադիր առարկա՝ այն դասավանդվում էր հայկական բարձրագույն տիպի դպրոցներում և համալսարաններում, իսկ Գլաձորի համալսարանի երեք բաժանմունքներից մեկը երաժշտականն էր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մինչև X դարը ինչպե՞ս էր հանդես գալիս գեղարվեստական գրականությունը: Համառոտ ներկայացրե՛ք գրականության ժանրերը և նշանավոր ներկայացուցիչներին ու ստեղծագործությունները:
2. Ի՞նչ գործոններ նպաստեցին ճարտարապետության վերելքին: Ճարտարապետության ո՞ր բնագավառները զարգացում ապրեցին: Նկարագրե՛ք քաղաքի և ամրոցի կառուցվածքը: Ինչի՞ց էին բաղկացած վանական համալիրները: Ի՞նչ նշանավոր ճարտարապետների գիտեք: Ի՞նչ են նրանք կառուցել: Քանդակներում ի՞նչ թեմաներ էին ներկայացվում: Ի՞նչ գիտեք խաչքարերի մասին:
3. Նկարչության ի՞նչ տարատեսակներ զարգացան: Ներկայացրե՛ք այդ ուղղությունները:
4. Ներկայացրե՛ք զարգացած միջնադարի հայ երաժշտական արվեստի նվաճումները և այս բնագավառի նշանավոր գործիչներին:

ԳԼՈՒԽ 2. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԴԺՎԱՐԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (XV ԴԱՐ — XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

§ 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մշակույթի պահպանման և զարգացման պայմանները: Ուշ միջնադարում Հայաստանում օտար տիրապետության հաստատումը, հայ իշխանական տների թուլացումը և տնտեսական անկումը լուրջ խոչընդոտներ էին նաև հայ մշակույթի ու գիտության զարգացման համար: Այլևս չկային նախորդ դարերի՝ մշակութային խոշոր ձեռնարկումներ իրականացնելու հնարավորություն ընձեռող տնտեսական միջոցները: Դժվարություններ էին առաջացել ոչ միայն ճարտարապետական նոր խոշոր կառույցներ ստեղծելու, այլև նախորդ ժամանակներում կառուցված հուշարձանների պահպանության և վերանորոգման հարցում:

XV–XVII դդ. հայկական մշակույթի ոլորտում իրենց զարգացման մակարդակով սկսում են գերակայել նվազ

ծախսատար բնագավառները՝ մանրանկարչությունը, գորգագործությունը, փայտագործությունը, խաչքարային արվեստը, մատուռների կառուցումը, վնասված եկեղեցիների վերանորոգումը, որմնանկարչությունը և այլն: Շինարարության ոլորտում կարևոր ձեռքբերումներ են արձանագրվում կամուրջների և քարավանատների կառուցման գործում:

Հայկական մշակույթի զարգացման համար կարևոր ***առանձնահատկություն էին հայկական գաղթավայրերում հայ մշակութային արժեքների ստեղծումն ու փոխադրումը բուն Հայաստանի տարածք***: Դա առավել ցայտուն դրսևորվեց հայ տպագրության ու կրթության ոլորտներում: Տարբեր գաղթավայրերում տպագրված գրքերի գրեթե ողջ տպաքանակը փոխադրվում էր Հայաստան և բաշխվում հայկական բնակավայրերում, վանքերում ու եկեղեցիներում: Այլևայլ երկրների հայկական գաղթօջախներում կրթություն ստացած հայ գիտության ու մշակույթի գործիչները վերադառնում էին հայրենիք և իրենց գիտելիքները փոխանցում Հայաստանի դպրոցներին, տարբեր լեզուներից հայերեն թարգմանում զանազան աշխատություններ և այլն:

Դպրոցը: Քաղաքական ծանր իրավիճակում ու նույնիսկ մեծամեծ կորուստների պայմաններում Հայաստանում փորձել են շարունակել նախորդ դարաշրջանների կրթական ավանդույթները: Բարձրագույն կարգի դպրոցները կամ համալսարանները եղել են նաև մատենագրական, գիտական ու մշակութային կյանքի կարևոր կենտրոններ:

XV դարասկզբին Հայաստանում կրթական կյանքի կարևոր կենտրոնի դերը պահպանում էր ***Տաթևի համալսարանը:*** Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու դասախոսությունները գրի են առնվել ու ձևավորվել որպես դասագրքեր, որոնք օգտագործվել են նաև հայկական այլ դպրոցներում: Առավել նշանավոր էին Գրիգոր Տաթևացու ***«Գիրք հարցմանց»*** և ***«Հանառօտ լուծումն Առաքինութեանցն Արիստոտելի»*** աշխատությունները: Դասավանդման համար օգտագործվում էին նաև մարդակազմության, թվաբանության, քերականության, աստղաբաշխության վերաբերյալ հայ և օտար հեղինակների աշխատությունները: Տաթևի համալսարանը եղել է վարդապետական աստիճան շնորհող առավել հեղինակավոր կենտրոն:

Սբ Գրիգոր Տաթևացին իր աշակերտների հետ. Սաղմոսների մեկնություն, 1449 թ., Մատ. 1203

1408 թ. Տաթևից շուրջ հարյուր ուսանողների հետ ***Մեծոփա վանք*** է փոխադրվում Գրիգոր Տաթևացին և նոր շունչ հաղորդում ***Հովհաննես Մեծոփեցու*** առաջնորդությամբ գործող նշանավոր դպրոցին: Մեծոփա դպրոցի առաջնորդությունը հետագայում ստանձնել են

Գրիգոր Խլաթեցին (Ծերենց), ***Հովհաննես*** և ***Թոխմա Մեծոփեցիները***: Դպրոցը գոյատևել է մինչև XV դարի կեսերը:

XV դ. առաջին կեսին Սյունիքում գործել է նաև ***Հերմոնի դպրոցը՝ Հովհաննես Հերմոնացու*** առաջնորդությամբ: Բուն Հայաստանում գործող ուսումնագիտական կենտրոններից հիշատակելի են Երզնկայի Ավագ և Կապոսի վանքերի, Այրիվանքի, Եղիվարդի վանքերին առընթեր դպրոցները և այլն:

Կապոսի վանքի ուսումնական հաստատությանը 1494 թ. չափածո ներբողում որակվում է որպես հայոց ազգային լուսատու:

XV դարում մոտ վաթսուն տարվա բեղմնավոր գործունեություն է ունեցել Ղրիմի Անտոնի անապատի հայոց դպրոցը, որի ուսուցչապետն էր ***Սարգիս*** փիլիսոփան: Դպրոցում ունկնդրել են Սարգիս վարդապետի դասախոսությունները Արիստոտելի ու Պորփյուրի փիլիսոփայության վերաբերյալ:

XV–XVII դարերում ղրիմահայոց կրթական կարևոր կենտրոն էր ***Սուրբ Խաչ վանքը***, որ ***Հակոբ Կաֆայեցու*** տաղերից մեկում անվանվում է ճեմարան: Այնտեղ դասավանդում էին ոչ միայն տեղի, այլև հրավիրված հեղինակավոր վարդապետներ: Դպրոցներ կային նաև Ղրիմի Ղարասուբազար և այլ քաղաքներում:

Հայաստանում դպրոցական ու կրթական համակարգի համար անբարենպաստ պայմաններ ստեղծեցին XVI դարում միմյանց հաջորդող թուրք–պարսկական պատերազմական գործողությունները, որոնց հետևանքով ոչ միայն քայքայվեց տնտեսությունը, անկում ապրեց մշակույթը, այլև դադարեցին գործելուց շատ դպրոցներ: Միայն Բաղեշի վանքի դպրոցն էր երբեմն գործում:

XVII դարի առաջին տասնամյակներից հայկական դպրոցները բազմանում են ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ գաղթօջախներում: Դպրոցներ էին գործում հոգևոր շատ կենտրոններում, որոնցից առավել կարևոր էին ***Էջմիածնի, Բաղեշի, Տաթևի, Խիզանի, Լվովի, Կաֆայի, Նոր Ջուղայի, Երուսաղեմի*** և այլ դպրոցներ:

XVII դ. սկզբներին է Սյունյաց աշխարհում հաստատվում Հարանց անապատի դպրոցը, որով սկիզբ է առնում Արևելյան Հայաստանի կրթական ու մշակութային առաջընթացը: Ուսուցչապետ ***Ներսես Մոկացին*** ժամանել էր Բաղեշի Ամիրդոլու վանքից և դասավանդում էր «արտաքին գիտություններ»:

Մովսես Տաթևացին 1620 թ. հիմնադրում է ***Երևանի Անանիա առաքյալի անապատը*** և մի քանի տարի անց՝ ***Հովհաննավանքի դպրոցը***: 1635–1637 թթ. Հովհաննավանքի դպրոցը փոխադրվում է Էջմիածին, սակայն Հովհաննավանքում ևս ուսուցումը չի դադարում. այնտեղ կային շատ ուսանողներ, որոնց թվում էր նաև Զաքարիա Քանաքեռցի պատմիչը:

Էջմիածնի վանական դպրոցն ուներ մոտ 50 աշակերտ: Այնտեղ դասավանդել են Մելքիսեդեկ Վժանեցին, Սիմեոն Ջուղայեցին, Ստեփանոս Լեհացին և այլք:

XVII դարում գիտակրթական աշխույժ գործունեություն է ծավալում ***Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցը***: Այն հիմնադրվել էր XVI դ. վերջին տասնամյակում: ***Վարդան Բաղիշեցու*** ուսուցչապետության ընթացքում աճում է ուսանողների թիվը, առանձնակի ուշադրության են արժանանում հայ մատենագրության ձեռա-

գիր հուշարձանները, հավաքվում և արտագրվում են մեծարժեք շատ ձեռագրեր: Հայերեն ձեռագրերի առաջին ցուցակը կազմել է հենց Վարդան Բաղիշեցին:

XVII դարի դպրոցական կյանքի կարևոր կենտրոն էր նաև ***Նոր Ջուղան***: Այնտեղ ***Խաչատուր Կեսարացու*** ջանքերով հիմնվում է դպրոց, որն ավելի քան հիսուն տարի կարևոր դեր է ունենում պարսկահայերի կրթական կյանքում: Իր գոյության տարիներին դպրոցը տվել է ավելի քան 250 շրջանավարտ: Այս դպրոցի շրջանավարտներից էին ***Ոսկան Երևանցին, Հովհաննես Մրքուզը, Հակոբ, Ստեփանոս և Աղեքսանդր Ջուղայեցի*** ու ***Ատվածատուր Համադանցի*** կաթողիկոսները և ուրիշ շատ անվանի գործիչներ: Ինչպես բոլոր դպրոցները, այն ևս եղել է գրչության կարևոր կենտրոն և ունեցել է իր մատենադարանը:

Տպագրության սկզբնավորումը և զարգացումը: Տպագրության գյուտը Եվրոպայում և հայերեն գրքերի տպագրության սկզբնավորումը թեև գործածությունից իսպառ չբացառեց ձեռագիր գրքերի անհրաժեշտությունը, սակայն նոր փուլ նախանշեց և անգնահատելի դեր ունեցավ XVI–XVIII դարերի հայկական մշակույթի զարգացման գործում:

Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ ***«Ուրբաթագիրքը»***, լույս տեսավ ***Վենետիկում 1512 թ. Հակոբ Մեղապարտի*** ջանքերով: Այնուհետև տպագրվեցին ևս չորս գրքեր:

Տպագրված առաջին գրքերն ակնհայտորեն հացեագրված էին ինչպես Վենետիկի հայկական գաղթօջախի, Հայոց եկեղեցու, այնպես էլ միջազգային առևտրի մեջ ներգրավված հայ վաճառականության կարիքների բավարարմանը: Մեր միջնադարյան հեղինակներից առաջին անգամ տպագրության են արժանացել Ներսես Շնորհալու, Մկրտիչ Նաղաշի, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու գործերը:

Երկու էջ Հակոբ Մեղապարտի տպագրած «Ուրբաթագրքից». Վենետիկ, 1512 թ.

Հայ տպագրության մեջ հաջորդ քայլը կատարում է ***1562 թ.*** դիվանագիտական առաքելությամբ Իտալիա ուղարկված ***Աբգար դպիր Թոխաթեցին***: Հռոմի թույլտվությամբ հայերեն նոր տպատառեր պատրաստելով՝ նա 1565 թ. անցնում է Վենետիկ: Այստեղ նա մեկ մեծադիր թերթի վրա տպագրում է ***«Խառնայինթուր տոմարի. զեղեցիկ և պիտանի»*** տոմարացույցը: Դրա վրա կար նաև երկու նկար. առաջինում պատկերված էր Աբգար դպիրն՝ իր որդու հետ, Հռոմի պապի և երեք կարդինալների առջև, հայերեն տպատառերը ձեռքին, իսկ մյուս նկարում Աբգարը կանգնած է Վենետիկի դոժի և խորհրդականների առջև ընդունելության ժամանակ: 1566 թ. Աբգար դպիրը Վենետիկում տպագրում է ***«Սաղմոսարան»***, որն ընդգրկում է 150 սաղմոս: Աբգար դպիրը, Վենետիկից տեղափոխվելով Կ. Պոլիս, 1568–1569 թթ. կազմակերպում է մի շարք գրքերի հրատարակություններ ևս՝

«Ս. Ժամագիրք–պատարագամատոյց», «Պարզատումար», «Տնտացոյց», «Տաղարան», «Մաշտոց»:

Այսպիսով՝ XVI դ. ընթացքում մշակույթի հայ գործիչները, օգտագործելով տպագրական գյուտի ընձեռած հնարավորությունները, ***նոր ուղի բացեցին հայ ժողովրդի մեջ լուսավորության տարածման համար***՝ տպագիր գիրքը դարձնելով հասու և մատչելի ընթերցողների ավելի մեծաքանակ շրջանակների համար:

XVII դարը հայ տպագրության զարգացման գործում ավելի մեծ նվաճումների ժամանակաշրջան էր: Տպագրությունը ոչ միայն ավելի մեծ չափեր ընդունեց Վենետիկում և Հռոմում, այլև տարածում ստացավ հայկական այլ գաղթօջախներում ևս՝ Լվով, Նոր Ջուղա, Միլան, Լիվոռնո, Պադուա, Փարիզ, Ամստերդամ, Կ. Պոլիս: Տպագրվեցին պատմական, հոգևոր, քերականագիտական, բնագիտական, աշխարհագրական և այլ բնույթի աշխատություններ: Սկզբնավորվեց անգամ ***հայատառ ղփչաղերեն*** գրքերի տպագրությունը: Հայերեն գրքեր տպագրվում էին ինչպես օտարներին պատկանող, այնպես էլ հայ գործիչների կողմից հիմնադրված տպարաններում: Տպագրվեց ավելի քան 160 անուն երկ, այդ թվում՝ Աստվածաշնչի հայերեն շքեղ հրատարակությունը:

Լվովում ***Հովհաննես Քարմատանենց*** երեցի ջանքերով տպագրվեցին «Սաղմոսարան» և «Բժշկարան» գրքերը: 1618 թ. լույս տեսավ հայատառ ղփչաղերեն «Աղոթագիրքը»:

1638 թ. Խաչատուր Կեսարացու ջանքերով հայկական տպարան է ստեղծվում նաև ***Նոր Ջուղայում:*** Այս տպարանը հիմնվել էր ոչ թե Եվրոպայից բերված տպագրական գործիքներով, այլ ամբողջությամբ ստեղծվել էր տեղում՝ չունենալով անգամ տպագրական գործի վարպետ կամ ուսուցիչ՝ ըստ էության կրկին հայտնագործելով տպագրության արվեստը: Այդ է պատճառը, որ այս հրատարակությունները տպագրական արվեստի առումով համեմատաբար պարզունակ են: Չնայած հետագա անդուլ ջանքերին՝ Նոր Ջուղայի տպարանը չվերածվեց հայերեն տպագրության աճող պահանջարկը բավարարող կենտրոնի, և Հայաստանին ու հայոց գաղթաշխարհին հայ գրքի հիմնական մատակարար կրկին մնացին եվրոպական քաղաքների տպարանները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայ մշակույթի և գիտության զարգացման համար XV–XVII դարերում ինչ խոչընդոտներ կային: Նշեք հայկական մշակույթի առանձնահատկություններն այս ժամանակաշրջանում:
2. XV դ. սկզբին որ համալսարանն էր դարձել կրթական կարևոր կենտրոն: Ովքեր են դասավանդել այնտեղ: Նշեք Գրիգոր Տաթևացու գրչին պատկանող մի քանի աշխատություններ: Մինչև ե՞րբ է գոյատևել Մեծոփա դպրոցը: Ի՞նչ նշանավոր մարդիկ են դասավանդել այնտեղ: Թվարկեք Հայաստանում XV դ. գործող ուսումնական կենտրոնները: Վերհիշեք Եվրոպայի միջնադարյան համալսարանները:
3. Քանի՞ տարի է գործել Անտոնի անապատի դպրոցը: XV–XVII դդ. Ղրիմում ի՞նչ հայկական կրթական հաստատություններ էին գործում: XVII դ. Հայաստանում ի՞նչ

նշանավոր կրթական հաստատություններ էին գործում: Ո՞վ և ե՞րբ է հիմնադրել Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցը:

4. Ո՞րն է հայերեն առաջին տպագիր գիրքը, ե՞րբ և որտե՞ղ է այն լույս տեսել: Ո՞ւմ անվան հետ է կապված հայկական տպագրության հաջորդ քայլը: Ի՞նչ նշանակություն ունեցավ տպագրության գյուտը հայ մշակույթի հետագա զարգացման գործում:

§ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Պատմագրություն: Ուշ միջնադարը ծանր ժամանակաշրջան էր նաև հայ պատմագիտության զարգացման համար: Օտար արշավանքները շատ ծանր ազդեցություն ունեցան տնտեսական ու քաղաքական իրադրության վրա: Հոռետեսական տրամադրություններ էին առաջանում մարդկանց մոտ, և դա իր արտացոլումն էր ունենում տարբեր ձեռագրերի հիշատակարանների մեջ: Պատահական չէ, որ նշված դարերում ավելի շատ գրվում են մանր ժամանակագրություններ, դեպքերի համառոտ արձանագրումներ, և խիստ նվազում են խոշորածավալ հանգամանալի «Պատմությունները»:

Այդ առումով մեծարժեք ստեղծագործություն է XV դ. խոշոր հոգևոր ու հասարակական–քաղաքական գործիչ ***Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Թամուր Լանկին և յաջորդաց իւրոց»*** աշխատությունը: Այդտեղ շարադրվել են XIV դ. վերջին քառորդում և XV դ. առաջին կեսին Հայաստանում ու հարակից երկրներում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները, Լենկ Թեմուրի և նրա հաջորդների ու կարա–կոյունլու և ակ–կոյունլու ցեղախմբերի միջև պատերազմական գործողությունները, այդ իրադարձությունների պատճառով Հայաստանի կրած տնտեսական ու քաղաքական արհավիրքները:

XVII դ. գրված կարևոր աշխատություններից է ***Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրությունը»***, որտեղ ականատես հեղինակը կարևոր տեղեկություններ է հաղորդում Օսմանյան կայսրության քաղաքական իրադարձությունների ու հայ բնակչության վիճակի վերաբերյալ:

Մեծարժեք ստեղծագործություն է ***Սիմեոն Լեհացու՝*** XVII դ. առաջին տասնամյակներին ուղեգրական տպավորությունների տեսքով հեղինակած աշխատությունը, որտեղ ներկայացված են արժեքավոր տեղեկություններ Արևելյան Եվրոպայի, Իտալիայի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի ու Եգիպտոսի հայկական շատ գաղթօջախների վերաբերյալ:

Բնագիտությունը և բժշկությունը: XV դ. գիտության խոշորագույն ներկայացուցիչներից էր ***Գրիգոր Տաթևացին***: Նրա ***«Հարցմանց գիրքը»*** բնագիտական ու հասարակագիտական բազում խնդիրների բացատրությունների, մեկնությունների հանրագիտարան է, որը կազմելու համար օգտագործվել են հայ և օտար բազմաթիվ գիտնականների աշխատություններ: Տաթևացին ինքնուրույն ստորաբաժանումներով է տեսակավորում բուսական ու կենդանական աշխարհը, ցուցադրում տարրերի նշանակությունը բնության երևույթների մեջ ու մարդկային կյանքում:

Նույն ժամանակի նշանավոր գիտնականներից էր ***Մատթեոս Ջուղայե-***

ցին: Գրիգոր Տաթևացու մահից հետո նա գլխավորել է Տաթևի համալսարանը: Նրա ինքնատիպ դատողություններով ու լուսաբանություններով առաջադրված մի շարք դրույթներ նոր փուլ էին բնության և մարդու առաջացման ուսումնասիրման ոլորտում: Գիտության բնագավառում ազգային ավանդույթների պահպանման, շարունակման ու զարգացման գործի ջատագով գիտնականն արժանապատվորեն նշում էր, թե օտար գիտական մտքին հետևելու հետ միաժամանակ անհրաժեշտ է չմոռանալ կամ չանտեսել սեփական ժողովրդի նվաճումները:

Գիտական մեծ վաստակով հայտնի են XV դ. առաջին կեսին ստեղծագործած ***Հակոբ Ղրիմեցին*** («Մեկնութիւն տոմարի» և «Յաղագս բնութեան») և Ս. Անտոնի վանքի միաբան ***Եսայի Ղրիմեցին*** («Տումար արեգական և լուսնի»): Նրանց հեղինակած աշխատությունները կատարել են նաև ուսումնական ձեռնարկների դեր:

Հայերենով ստեղծվում են տիեզերագիտական ու տոմարագիտական բազմաթիվ աշխատություններ Արեգակի, Լուսնի խավարման և այլևայլ աստղագիտական երևույթների վերաբերյալ:

XV դարի հայ նշանավոր գիտնականներից է կենսաբան ու բժիշկ, աստղագետ ***Ամիրդովլաթ Ամասիացին*** (մահացել է 1496 թ.): Նա իր ժամանակի գիտական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից էր, ունեցել է բուժող բժշկի համբավ, դարձել օսմանյան սուլթանի անձնական բժիշկը: Նրա ***«Անգիտաց անպէտ»*** աշխատությունը բնագիտական ու դեղագործական գիտելիքների շտեմարան է, որտեղ կարևոր տվյալներ ու հետազոտական աշխատանքի արդյունքներ են ամփոփված բուսական, կենդանական ու հանքային նյութերի և դրանց բուժիչ հատկությունների վերաբերյալ: Ժողովրդական լայն զանգվածներին մատչելի դարձնելու համար իր այս աշխատությունը նա գրել է ժամանակի խոսակցական հայերենով և համարվում է հայ գիտական մտքի խոշոր ներկայացուցիչներից մեկը:

XV դ. սկիզբ առած Աշխարհագրական մեծ հայտնագործություններն ու նրանց հետևանքով XVI–XVII դարերում գիտական մտքի զարգացման նոր փուլն իր մեջ ներառեց նաև Հայաստանը: Արևելք–Արևմուտք առևտրատնտեսական ու կրոնական–մշակութային փոխհարաբերություններում հայ բնակչության համագործակցությունը եվրոպական ու արևելյան շատ երկրների հետ նոր լիցք հաղորդեց Հայաստանում գիտության բոլոր բնագավառներում սերտ կապերի առաջացմանը:

Եվրոպական երկրներում և մասնավորապես Իսպանիայում իր ճանապարհորդությունների մասին էր պատմում ***Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացին***, որ վերադարձի ճանապարհին Իսպանիայում հայտնվել էր նոր երկրների հայտնաբերման համար հանդերձավորված նավերից մեկում և մոտ յոթանասուն օր նավարկել Ատլանտյան օվկիանոսում: Նրա ուղեգրությունը հետագայում բազմիցս ընդօրինակվել է և ուղեցույց ծառայել նոր ճանապարհորդությունների համար:

Առավել հետաքրքիր ճակատագիր էր վիճակվել տեր ***Եղիշե Սարբանկացուն***, որի գլխավորած արշավախումբը Մագելանից տասնամյակներ անց այցելել էր ***Հարավային Ամերիկա*** (Հրո երկիր):

Եվրոպական լեզուներից հայերեն են թարգմանվել աշխարհագրական, մաթե-

մատիկական և պատմափիլիսոփայական բնույթի շատ աշխատություններ:

1621 թ. Հովհաննես Անկյուրացին թարգմանել է գերմանացի քարտեզագիր և աշխարհագրագետ ***Պետրոս Ապիանի «Կոսմոգրաֆիա»*** աշխատությունը, որտեղ առաջարկվում էին աշխարհագրական երկայնության որոշման նոր եղանակներ: Հայերեն թարգմանության ձեռագրում նկարված է նաև մի հայ աստղաբաշխ՝ ***Կարապետ վարդապետը***, աստղաբաշխական քանոնի օգնությամբ դիտումներ կատարելիս:

Արվեստը: Հայաստանի տնտեսական ու քաղաքական ծանր վիճակն իր կնիքն էր թողել նաև արվեստի զարգացման վրա: Չնայած աննպաստ հանգամանքներին՝ արվեստի որոշ բնագավառներ, այնուամենայնիվ, շարունակել են որոշակի զարգացում ապրել: Հաջողություններն ակնառու էին հատկապես ձեռագիր մատյանների նկարչական ձևավորման (մանրանկարչության) բնագավառում:

Մեծ զարգացում է ապրել նաև կիրառական արվեստը, հատկապես գորգագործությունը: Հայկական գորգերն արտահանվում էին շատ երկրներ և մեծ հռչակ ունեին: Հայտնի էին հայկական ***վիշապագորգերը:*** Հայկական գաղթօջախներում հայտնի էին բարձրարվեստ ոսկերչությունն ու նկարչությունը:

Մեծ զարգացում է ապրել նաև խաչքարային արվեստը: Հայ խոջաները Ջուղայի գերեզմանատանը կանգնեցրել էին ավելի քան 10 հազար գեղեցիկ և ճոխ քանդակներով խաչքարեր և խոյանման տապանաքարեր: Հին Ջուղայում հայ բնակչության հետքերը ջնջելու նպատակով հայ մշակույթի այդ հսկա գանձարանը ադրբեջանցի ջարդարարների կողմից մեր օրերում անպատիժ կերպով ամբողջովին ոչնչացվել է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էին XV–XVII դդ. խոշորածավալ պատմություններն իրենց տեղը զիջել մանր ժամանակագրություններին: Ո՞ր իրադարձություններն են նկարագրված Թովմա Մեծոփեցու աշխատության մեջ: XVII դ. պատմական ի՞նչ աշխատություններ ստեղծվեցին և ո՞ւմ կողմից:
2. Գիտության ո՞ր բնագավառների հարցեր են արծարծվում Գրիգոր Տաթևացու աշխատության մեջ:
3. Ե՞րբ են գործել, ի՞նչ աշխատություններ են գրել և ի՞նչ հարցեր են արծարծել Մատթեոս Ջուղայեցին և Հակոբ Ղրիմեցին:
4. Ինչո՞վ է հայտնի Ամիրդովլաթ Ամասիացին:
5. Ի՞նչ էր նկարագրում Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացին իր աշխատության մեջ: Ի՞նչ ձեռքբերումներ կային աշխարհագրության բնագավառում:
6. Արվեստի ո՞ր բնագավառներն էին զարգանում XV–XVII դարերում: Ի՞նչ ճակատագիր ունեցան Ջուղայի ավելի քան 10 հազար խաչքարերը:

ՄԱՍ Գ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՀՐՁԱՆՈՒՄ

ԲԱԺԻՆ 1

ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ — XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

ԳԼՈՒԽ 1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII ԴԱՐՈՒՄ

§ 1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

Պայքարի աշխուժացման նախադրյալները: XVII դարի երկրորդ կեսը Հայաստանի պատմության մեջ նշանավորվեց ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության ծավալմամբ և պայքարի կազմակերպման ուղղությամբ գործնական քայլերի իրականացմամբ:

Հայաստանի ազատագրության համար շարժման աշխուժացումն ուներ իր ***ներքին և արտաքին*** նախադրյալները:

Ներքին նախադրյալների մեջ էականը հայերի ազգային ինքնագիտակցության մեջ դարեր առաջ կորցրած անկախ պետականության վերականգնման անհրաժեշտության զգացումի ուժեղացումն էր:

Հայ ժողովրդի մեջ առևտրաարհեստավորական խավի զարգացումը հանգեցրեց առևտրական բուրժուազիայի առաջացմանը: Վերջինս փորձում էր նպաստել հայոց ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը՝ հովանավորելով հոգևոր-մշակութային կյանքի զարգացումը: Հայաստանում դեռևս պահպանվող իշխանությունները, դիմագրավելով անընդհատ իրար հաջորդող արհավիրքներին, դժվարությամբ էին գլխավորում ազատագրական շարժումը:

Ազատագրական պայքարի նախադրյալների մեջ էական էր դավանանքի ու ազգային մշակույթի խաղացած դերը: Հայ ժողովուրդը մերժում էր օտարի հավատը՝ հավատարիմ մնալով Հայ առաքելական եկեղեցուն: Ազգային ինքնագիտակցությունն ու արժանապատվության զգացումը Հայաստանի ազատագրության գաղափարի շուրջ միավորում էին ոչ միայն հայրենաբնակ, այլև հայրենիքից արտագաղթած և տարբեր երկրներում համայնքային կյանքով ապրող հայությանը:

Արտաքին գործոններից կարևոր էր Հայաստանի մեծ մասը նվաճած պետության՝ Օսմանյան կայսրության համեմատական թուլացման գործընթացը, որն ազատագրական պայքարի հաջողության հույսեր էր ներշնչում հայությանը:

Կարևոր էին միջազգային հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները: Եվրոպական մի շարք երկրներ, որոնց ևս սպառնում էր օսմանյան Թուրքիան, առավել հզորանալով, պայքար էին սկսել այդ կայսրության դեմ: Նման երկրները դիտվում էին Հայաստանի ազատագրության համար հնարավոր և իրական դաշնակիցներ:

Կարևոր հանգամանք էր նաև հույների, ասորիների, վրացիների, նույնիսկ քրդերի և եզդիների՝ օտար տիրապետության

դեմ պայքարի պատրաստակամությունը: Այդ ժողովուրդների հետ համատեղ պայքարի կազմակերպումը կարող էր ցանկալի արդյունք ունենալ:

Շարժման արևմտաեվրոպական կողմնորոշումը: Օսմանյան պետության և Վենետիկի հանրապետության միջև 1645 թ. սկսվեց երկարատև պատերազմ, և թուրքերի հնարավոր պարտությունը օտարի լուծը թոթափելու մեծ հույսեր արթնացրեց թուրքահպատակ ժողովուրդների մոտ:

Պատերազմում Վենետիկի դաշնակիցները՝ պապական Հռոմը և Ֆրանսիան, ջանքեր էին գործադրում համախմբելու հպատակ ժողովուրդների հակաթուրքական պայքարը: Հայազգի գործիչները ևս իրենց հերթին կոչեր էին ուղղում Հռոմի պապին ու Ֆրանսիայի թագավորին՝ ուժեղացնելու Օսմանյան կայսրության դեմ պայքարը: Այդ առումով խոսուն է Սսի կաթողիկոս ***Խաչատուր Գաղատացու*** 1663 թ. նրանց հասցեագրած նամակը. *«Բարձրյալն Աստված թող ... Ձեր սրտի մեջ ներշնչի հավատի զգացումները՝ ազատելու համար բոլոր քրիստոնյաներին և հատկապես մեր ազգին: ... Հույս ու հավատ ունենք, որ Ձեր օրհնյալ ձեռքերով կկատարվի մեր փրկությունը»*: Խաչատուր Գաղատացին անգամ այցելեց պատերազմական գործողությունների թատերաբեմ ու բանակցություններ վարեց վենետիկյան բանակի հրամանատարության հետ:

Հայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները ևս մասնակցում էին հակաթուրքական պայքարի կազմակերպմանը: Մոտ երկու տասնամյակ ազատագրական ծրագրերի ու բանակցությունների մասնակիցներից էր բաղիշեցի հայազգի վաճառական ***մահտեսի Շահմուրատը:*** 1666 թ. նա ժամանել է Փարիզ և հավատիացրել ֆրանսիական արքունիքին, որ հայերը հույների հետ պատրաստ են ապստամբելու Օսմանյան կայսրության դեմ: Նման առաջարկով նա Լյուդովիկոս XIV–ին է դիմել նաև 1672 թ., իսկ 1683 թ. հայկական պատվիրակության կազմում կրկին ժամանել Փարիզ՝ բանակցությունները շարունակելու: Պատվիրակության կազմում էր նաև Աղթամարի նախկին կաթողիկոս ***Հովհաննես Թութունջին:*** Նա հետագայում ճանապարհորդել է Եթովպիա՝ այդ երկիրը ևս հակաթուրքական պայքարի մեջ ընդգրկելու համար:

Հայազգի գործիչները բազմազան միջոցների էին դիմում Արևմուտքի հակաթուրքական գործողություններն իրական հողի վրա դնելու համար: Նման փորձերից էր Արիստակես վարդապետի դիմումը Հռոմի պապին, որտեղ նա առաջարկում էր իր ծառայությունները՝ ստեղծելու և փորձարկելու Չինաստանում ուսումնասիրած զենքի նոր տեսակ:

Քաղաքական իրադրության փոփոխությունները նպաստավոր չեղան նման ծրագրերի իրականացման համար: Ավելին՝ Ֆրանսիան շուտով ստանձնեց Ավստրիայից և եվրոպական այլ պետություններից Թուրքիային պաշտպանելու քաղաքականություն: Հայ ազգային ուժերը ստիպված էին ապավինելու Ավստրիայի, Հունգարիայի, Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրության (Գերմանիա) ու Լեհաստանի հետ հակաթուրքական համագործակցությանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են XVII դարի երկրորդ կեսին հայ ազատագրական պայքարի աշխուժացման ներքին և արտաքին նախադրյալները:
2. Ի՞նչ գործնական քայլերով նշանավորվեց ազատագրական պայքարի այս շրջանը:
3. Ո՞ր իրադարձությունն ազատագրվելու հույսեր արթնացրեց թուրքահպատակ ժողովուրդների մեջ:
4. Ներկայացրե՛ք Խաչատուր Գաղատացու, մահտեսի Շահմուրատի, Հովհաննես Թութունջիի և Արիստակես վարդապետի գործունեությունը. ի՞նչ ընդհանրություններ կան նրանց գործունեության մեջ:
5. Հետագայում ի՞նչ նոր երկրների և ինչո՞ւ ապավինեցին հայ քաղաքական ուժերը:

§ 2. ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ

Հակոբ Ջուղայեցու պատվիրակությունը. Օրու գործունեության սկիզբը: Հայաստանի ազատագրության խնդիրը քննարկման առարկա էր ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Արևելյան Հայաստանի հոգևոր ու աշխարհիկ գործիչների համար: Ամենայն հայոց կաթողիկոս ***Հակոբ Դ Ջուղայեցին*** լավատեղյակ էր Եվրոպայում զարգացող քաղաքական իրադարձություններին: Ավստրիական կայսր Լեոպոլդ I-ին գրած նամակում նա հայտնում էր, որ հայերն իրենց ազատագրության հույսը կապում են Հաբսբուրգների օժանդակության հետ:

1677 թ. Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը Էջմիածնում գումարում է գաղտնի ժողով, որտեղ քննարկվում է Հայաստանի ազատագրության հարցը: Ժողովին մասնակցում էին հոգևոր ու աշխարհիկ 12 գործիչներ: Ներկա էին Սյունիքի ու Արցախի մելիքները: Որոշվում է դիմել եվրոպական պետությունների օգնությանը: Այդ նպատակով կազմված պատվիրակությունը 1678 թ. վերջին Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ հասնում է Կ. Պոլիս՝ Եվրոպա անցնելու նպատակով: Հռոմ այցելելու նախապատրաստության հետ մեկտեղ կաթողիկոսը 1679 թ. բանակցություններ է սկսում նաև Ռեչ Պոսպոլիտայի թագավոր ***Յան Սոբեսկու*** հետ: Մոտ երկու տարի մնալով Կ. Պոլսում՝ Հակոբ Ջուղայեցին մահանում է, իսկ պատվիրակությունը վերադառնում է Հայաստան:

Պատվիրակության հետ մեկնած երիտասարդ Իսրայել Օրին՝ Սյունիքի մելիք Իսրայելի որդին, Հայաստան չի վերադառնում, այլ Կ. Պոլսից ուղևորվում է Իտալիա, ապա անցնում է Ֆրանսիա, որտեղ մտնում է զինվորական ծառայության և ստանում սպայի աստիճան: Այնուհետև տեղափոխվում է Գերմանիա: ***Պֆալց*** երկրամասի կենտրոն ***Դյուսելդորֆ*** քաղաքում Օրին ներկայանում է կայսրընտիր իշխան ***Հովհան Վիլհելմին*** և նրա հետ քննարկում Հայաստանի ազատագրության մասին իր գաղափարները: Հովհան Վիլհելմը հետաքրքրվում է Իսրայել Օրու մտահղացումներով և խոստանում աջակցել:

Մոտ քսան տարի Իսրայել Օրին դեգերել էր Եվրոպայում: Հովհան Վիլհելմի խորհրդով նա որոշում է այցելել Հայաստան՝ հայրենիքում տիրող իրավիճակին

անձամբ ծանոթանալու և ազգային–քաղաքական ուժերի հետ բանակցություններ վարելու համար:

Անգեղակոթի ժողովը: Օրին ժամանում է Հայաստան, լինում Էջմիածնում, ապա ճանապարհվում է Սյունիք: Սյունիքի Անգեղակոթ գյուղում ***Մելիք Սաֆրազի*** և Օրու ջանքերով ***1699 թ.*** հրավիրվում է գաղտնի խորհրդակցություն: Որոշվում է լիազորել Իսրայել Օրուն բանակցություններ վարելու ինչպես եվրոպական երկրների, այնպես էլ ռուսական իշխանությունների հետ: Այդ նպատակով մելիքներն իրենց կնիքներով և ստորագրություններով հաստատված նամակներ են հանձնում Իսրայել Օրուն և նրան ուղեկցող կարգում ***Մինաս վարդապետ Տիգրանյանին:***

Հովհան Վիլհելմին ուղղված նամակում հայ մելիքներն ու զինվորականները խնդրում էին արագացնել Հայաստան զորք ուղարկելը: Նրանք միաժամանակ հայտնում էին, որ փոքրաթիվ օգնական զորքով Հայաստան ժամանելու պարագայում իրենք հայոց թագավորությունը վերականգնելու համար անմիջապես զինված ապստամբություն կբարձրացնեն: Ռազմական օգնության դիմաց մելիքները պատրաստակամ էին Հովհան Վիլհելմին ճանաչելու Հայաստանի թագավոր:

Պֆալցյան ծրագիրը: Վերադառնալով Եվրոպա՝ Իսրայել Օրին կազմում է Հայաստանի ազատագրության ծրագիր և ներկայացնում Հովհան Վիլհելմին: Այն հայտնի է ***Պֆալցյան*** անունով: Ծրագիրը բաղկացած էր 36 կետից: Այնտեղ թվարկվում էին այն ուղիներն ու միջոցները, որոնք անհրաժեշտ էին Հայաստանից պարսիկներին վտարելու համար: Ծրագրում կարևոր տեղ էր հատկացվում ինչպես Եվրոպայից սպասվող ուժերին, այնպես էլ Հայաստանում հայկական ապստամբական ուժերի մասնակցությանը: Ծրագրվում էր ապստամբությանը մասնակից դարձնել և ազատագրական շարժման մեջ ընդգրկել նաև օսմանյան լծի տակ գտնվող Արևմտյան Հայաստանին: Հովհան Վիլհելմը հավանություն է տալիս Իսրայել Օրու ծրագրին և առաջարկում գնալ Ֆլորենցիա և Ավստրիա՝ այնտեղի տիրակալների համաձայնությունը ևս ստանալու համար: Ֆլորենցիայում դուքսը խոստանում է զորք տրամադրել, իսկ Վիեննայի արքունիքում հրաժարվում են Հայաստանի ազատագրման գործին մասնակցելուց, քանի որ Ավստրիան Թուրքիայի հետ 1699 թ. կնքել էր հաշտության պայմանագիր:

Եվրոպայում երկար դեգերելուց և հաջողության չհասնելուց հետո Իսրայել Օրին համոզվում է, որ Օսմանյան կայսրության և Պարսկաստանի տիրապետության դեմ պայքարում Հայաստանի համար իրական դաշնակից այդ պահին կարող է լինել Ռուսաստանը:

Օրին Ռուսաստանում: XVIII դ. սկզբին Ռուսաստանը պայքար էր սկսել ինչպես Բալթիկ, այնպես էլ Սև և Կասպից ծովերի ափերին հաստատվելու համար: 1701 թ. ամռանը Իսրայել Օրին գալիս է Ռուսաստան և Պետրոս I–ին է ներկայացնում Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու իր ծրագիրը: Նախատեսվում էր կազմակերպել 25–հազարանոց բանակ, որի մի մասը՝ 10 հազարը, Հյուսիսային Կովկասից պետք է մտներ Վրաստան: Այնուհետև ռուս–վրացական զորքերին պիտի միանային նաև ապստամբ հայերի զինական ուժերը: Ենթադրվում էր

Արևելյան Հայաստանն ազատագրել շատ կարճ ժամանակում՝ հաշվի առնելով թուլացած Պարսկաստանի դիմադրելու անկարողությունը:

Պետրոս I–ը, որն այդ ժամանակ զբաղված էր Հյուսիսային պատերազմով, հուսադրում է Իսրայել Օրուն, թե Շվեդիայի դեմ սկսված պատերազմի ավարտից հետո կզբաղվի այդ հարցով: Միաժամանակ Պարսկաստանում և Անդրկովկասում տիրող իրավիճակին ծանոթանալու նպատակով ռուսաց թագավորը որոշում է դեսպանություն ուղարկել Պարսկաստան (Ռուսաստանի համեմատությամբ Կովկասի լեռնաշղթայից այն կողմ՝ հարավ, գտնվող այս երկրամասը ռուսներն անվանել են Անդրկովկաս: Մեզ՝ հայերիս համար, անշուշտ, նույն երկրամասն Այսրկովկաս է: Սա կախված է այն բանից, թե որ երկրի կամ ժողովրդի տեսանկյունից է այդ տեղանունը գործածված, ըստ այդմ էլ շարադրանքում շրջանառվում է տվյալ եզրույթը): Դեսպանության ղեկավար է նշանակվում Իսրայել Օրին, որին տրվում է ռուսական բանակի գնդապետի աստիճան: Դեսպանության նկատմամբ կասկածներ չհարուցելու նպատակով Իսրայել Օրին նախ մեկնում է Եվրոպա: Նա իր հետ վերցնում է նաև Հռոմի պապի նամակը՝ ուղղված պարսից շահին, որտեղ խնդրում էր քրիստոնյա բնակչության նկատմամբ թույլ չտալ հալածանքներ:

Պարսկական դեսպանությունը: Ռուսաստանում ստանալով Պետրոս I–ի հանձնարարություններն ու նամակները՝ Ի. Օրին մեկնում է դեպի Պարսկաստան: 1708 թ. նա հասավ Շամախի քաղաք: Ռուսական դեսպանության ղեկավարի հայազգի լինելու հանգամանքն Այսրկովկասում մեծ տպավորություն գործեց: ***1709 թ.*** Օրին շարունակեց իր ճանապարհը, եղավ Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանում և նույն թվականի կեսերին վերադարձավ Այսրկովկաս:

Երկար ժամանակ մնալով Արցախին սահմանակից Շամախիում՝ նա հանգամանորեն ծանոթացավ երկրամասի քաղաքական և տնտեսական իրավիճակին, ինչը կարևոր էր ապագա ազատագրական գործողությունների ծրագրման համար:

Անդրկովկասում Օրին կապեր հաստատեց ու հանդիպումներ ունեցավ Ղուբայի և Շամախիի խաների, ինչպես նաև Հայաստանի ազատագրության համար պայքարելու պատրաստակամություն հայտնած տարբեր գործիչների հետ: Նա մեծ աշխատանք կատարեց նաև Ռուսաստանի նկատմամբ համակրանք ստեղծելու ուղղությամբ:

Օրու գործունեության նշանակությունը: Ռուսաստան վերադառնալու ժամանակ Իսրայել Օրուն միացավ նաև Հայաստանի ազատագրության գործի նվիրյալ, Գանձասարի կաթողիկոս ***Եսայի Հասան-Ջալալյանը:*** Նա գործում էր Արցախի մելիքների հետ սերտ համագործակցությամբ և հաճախ միջնորդի դեր էր ստանձնում ու միավորում Արցախի մելիքների ուժերը: Ռուսական արքունիքի հետ բանակցություններ վարելու նպատակով Եսայի Հասան-Ջալալյանն Իսրայել Օրու հետ ուղևորվեց Ռուսաստան: Սակայն այդ ծրագիրը չիրականացավ, որովհետև Աստրախանում 1711 թ. Իսրայել Օրին անակնկալ մահացավ, իսկ Եսայի Հասան-Ջալալյանը վերադարձավ Արցախ:

Մեծ է Իսրայել Օրու գործունեության նշանակությունն հայ ազատագրական պայքարի պատմության մեջ: XVII դ. վերջի և XVIII դ. սկզբի հայ ազատագրական

շարժման զարթոնքը մեծապես կապված է նրա անվան հետ: Օրին գիտակցում էր ընդհանուր թշնամու դեմ բոլոր հնարավոր դաշնակիցներին համախմբելու նշանակությունը: Այդ պատճառով էլ բանակցություններ էր վարում ինչպես վրաց *Արչիլ* թագավորի, այնպես էլ պարսկական տիրապետությունից դժգոհ շրջակա մահմեդական տիրակալների հետ: Նա Հայաստանի ազատագրության հարցը դրեց գործնական հողի վրա, համախմբող դեր կատարեց հայ հասարակության տարբեր խավերի միջև, մարտական շունչ հաղորդեց պայքարին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ գիտեք Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի և Իսրայել Օրու գործունեության մասին: Ո՞ւմ խորհրդով Օրին այցելեց Հայաստան. ինչո՞ւ:
2. Ո՞ւմ ջանքերով և ե՞րբ է հրավիրվել Անգեղակոթի ժողովը: Ինչ կարևոր վճիռ կայացվեց: Ռազմական օգնության դիմաց ի՞նչ էին խոստանում մելիքները:
3. Ներկայացրեք Օրու Պֆալցյան ծրագիրը: Ինչ արդյունքներ ունեցավ Օրու այցը Ֆլորենցիա և Վիեննա: Ինչո՞ւ չիրականացավ նրա Պֆալցյան ծրագիրը:
4. Ինչը համոզեց Իսրայել Օրուն, որ Հայաստանի ազատագրության գործը կարող է իրականացվել Ռուսաստանի օգնությամբ:
5. Ո՞րն էր Իսրայել Օրու պարսկական դեսպանության նպատակը: Ինչ ընթացք և ավարտ ունեցավ նրա առաքելությունը: Վերհանեք Իսրայել Օրու դերը հայ ազատագրական պայքարի պատմության մեջ:
6. Բացատրեք «Անդրկովկաս» և «Այսրկովկաս» անվանումների տարբերությունը:

§ 3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՉԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում և Այսրկովկասում XVIII դարի սկզբին: Դեռևս Հյուսիսային պատերազմի (1700–1721 թթ.) ընթացքում Պետրոս I-ն ուշադիր հետևում էր Պարսկաստանում և Թուրքիայում տեղի ունեցող իրադարձություններին: 1715 թ. նա նոր դեսպանություն ուղարկեց Պարսկաստան՝ ***Ա. Վոլինսկու*** գլխավորությամբ: Նրան հանձնարարված էր հանգամանորեն ուսումնասիրել երկրում տիրող դրությունը և տեղեկություններ հավաքել Պարսկաստանի տիրապետության ներքո գտնվող ժողովուրդների մասին:

Հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական վիճակի մասին ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար Հայաստան ուղարկվեց Ռուսաստանում Իսրայել Օրու գործի շարունակող Մինաս վարդապետ Տիգրանյանը:

XVIII դ. առաջին երկու տասնամյակներին Պարսկաստանում դրությունը շարունակում էր վատթարանալ: Պարսկահպատակ ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, հարմար առիթի էին սպասում՝ թոթափելու պարսից տիրապետությունը: Ջենքի ուժով նրանց հնազանդ պահելու փորձերն այլևս հաջողություն չէին ունենում: Պարսկական տիրապետության դեմ առավել եռանդուն էին գործում աֆղանները, որոնց հաջողվեց 1722 թ. պա-

շարել և գրավել երկրի մայրաքաղաք Սպահանը: Պարսից պետության մայրաքաղաքում և երկրի կենտրոնական ու հարավային նահանգներում հաստատվեց աֆղանների տիրապետությունը: Աֆղանական գերությունից խույս տված Սեֆյան տոհմի գահաժառանգ ***Թահմասպը*** երկրի հյուսիսային նահանգներում հայտարարվեց շահ: Սակայն բավարար ուժեր չունենալով՝ նա չկարողացավ երկրում իր իշխանությունն ամրապնդել: Պարսից պետության թուլացումը հնարավորություն ընձեռեց հարևան Ռուսաստանին ու Օսմանյան կայսրությանը իրագործելու տարածաշրջանում իրենց ռազմաքաղաքական նվաճողական ծրագրերը:

Ռուսական զորքերի Կասպիական արշավանքը: Հյուսիսային պատերազմի ավարտից մեկ տարի անց Պետրոս I–ը ձեռնամուխ եղավ Կասպից ծովի արևմտյան երկրամասերի գրավմանը: Պարսից շահին ապստամբներից պաշտպանելու պատրվակով ռուսաց կայսրը ***1722 թ.*** արշավանք է կազմակերպում դեպի Անդրկովկաս: Սակայն Դերբենտը գրավելուց հետո ռուսական զորքն անակնկալ վերադառնում է Աստրախան՝ իր առաջխաղացումը դեպի Կասպից ծովի հարավային ափերը հետաձգելով հաջորդ տարվան:

Պարսկաստանում սկսված խառնակությունների ժամանակ Վրաստանի ազատագրման նպատակով ապստամբության նախապատրաստություններ էր տեսնում վրաց թագավոր Վախթանգ VI–ը: Նա բանակցություններ էր վարում Պետրոս I–ի հետ Ռուսաստանից օժանդակություն ստանալու համար: Պետրոսը նրան տեղեկացրել էր ռուսական զորքերի՝ Անդրկովկաս արշավելու մասին և խոստացել օգնել Վրաստանին պարսից տիրապետության դեմ պայքարում: Վախթանգն իր հերթին այդ ամենի մասին հայտնել էր Արցախի հայ ազատագրական ուժերին և առաջարկել համատեղ հանդես գալ պարսից լծի դեմ:

Արցախում մելիքները հավաքագրել էին բարձր մարտունակությամբ ավելի քան տասներկուհազարանոց զորք: Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան–Ջալալյանի, մելիքների ու զորահրամանատարների գլխավորությամբ հայկական այդ զինուժից 10 000–ը գնաց և ճամբար դրեց Գանձակի մոտակա ***Չորակ*** վայրում: Այստեղ էր եկել նաև Վախթանգ VI–ի բանակը, և հայկական ու վրացական զորքերը սպասում էին Պետրոս I–ի զորքերի ժամանելուն: Մոտ երկու ամիս մնալուց հետո՝ 1722 թ. աշնանը, լուր ստացվեց ռուսների՝ Դերբենտից վերադառնալու և արշավանքը հետաձգելու մասին: Վրացական բանակը վերադարձավ Թիֆլիս: Հայկական ուժերը, նույնպես տուն դառնալով, ձեռնամուխ եղան Արցախի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Զինված պայքարի սկիզբը: Հայ ազատագրական պայքարի առաջնորդները ստեղծված պայմաններում պետք է հոգային սեփական անվտանգության և ազատագրական պայքարի ծավալման մասին: Ազատագրական պայքարը ղեկավարելու համար հայ կամավորների ջոկատով Վրաստանից Սյունիք մեկնած Դավիթ բեկի շուրջ համախմբվեցին անկախության համար պայքարին պատրաստակամ ***Սյունյաց*** աշխարհի հայ բնակչության զինված ուժերը:

Ազատագրական շարժումը գործուն ընթացք ստացավ նաև ***Արցախում:*** Այստեղի ազատագրական պայքարի ոգեշնչողն ու կազմակերպիչը Գանձասարի

հայոց կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանն էր:

Պարսկաստանում առաջացած քաղաքական անկայուն և անվերահսկելի դրությունից օգտվելով՝ լեռնային լեզգիներն ասպատակում էին Շիրվանի և Արցախի բնակավայրերը: Այդ հարձակումներին դիմագրավելու համար Արցախի մելիքների զինված ջոկատները միավորվեցին: Ոգևորված ռուսական վերահաս արշավանքի լուրերով՝ Արցախի հայ բնակչությունը տրամադրված էր զինական օգնություն ստանալու դեպքում լիովին թոթափելու օտարի լուծը: Ազատագրական պայքարին օժանդակելու համար Շիրվանի հայկական բնակավայրերից Արցախ տեղափոխվեցին ռազմական գործի հմուտ կազմակերպիչներ ***Ական*** և ***Թարխան*** հարյուրապետերն իրենց համախոհներով:

Հույսը կտրելով դաշնակից ուժերի օժանդակությունից՝ արցախահայոց զինական ուժերը որդեգրեցին պաշտպանական մարտավարություն: Միասնական բանակն Արցախում անցավ պաշտպանական ամրությունների՝ ***աղնախների*** ստեղծմանը, որոնցից առավել հայտնի էին ***Գյուլիստանի, Շոշի (Շուշի), Ավետարանոցի, Ջրաբերդի և Քարագլխի*** աղնախները: Հայկական ուժերը կարող էին վարել ոչ միայն պաշտպանական, այլև միավորման դեպքում՝ նաև հարձակողական մարտեր: 1722 թ. վերջին ամբողջ Արցախն ազատագրվել էր պարսկական տիրապետությունից: Արցախում հաստատվեց հայկական իշխանություն:

Թուրքական զորքերի ներխուժումն Այսրկովկաս: Պարսկական պետության թուլացումը, ռուսների արշավանքն Անդրկովկաս և աֆղանների կողմից Սպահանի գրավումը հարմար առիթ էին Պարսկաստանի վաղեմի թշնամի Թուրքիայի համար: Նա անմիջապես ձեռնամուխ եղավ Պարսկաստանի արևմտյան նահանգների ու Անդրկովկասի նվաճմանը: Օսմանյան կայսրությունը նաև նպատակ ուներ ճնշելու հայ և վրաց ժողովուրդների ծավալած ազատագրական շարժումները: Միաժամանակ նա ձգտում էր խոչընդոտելու Անդրկովկասում Ռուսաստանի ազդեցության տարածմանը:

1723 թ. հունիսին թուրքական բանակը գրավեց Թիֆլիսը, ապա շարժվեց դեպի Գանձակ: Վախթանգ VI-ը հեռացավ մեծ շքախմբով Վրաստանից անցավ Ռուսաստան:

Հաջորդ տարի Էրզրումում (Կարինում) կազմավորվեց թուրքական նոր բանակ՝ Արևելյան Հայաստանի և Ատրպատականի վրա արշավելու համար:

Այսրկովկասի ու Պարսկաստանի համար պայքարի ելած Ռուսաստանի ու Թուրքիայի միջև մրցակցությունը չվերաճեց ռուս-թուրքական պատերազմի: Երկար բանակցություններից և փոխադարձ մեղադրանքներից հետո նրանք 1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքեցին պայմանագիր: Այդ պայմանագրի համաձայն՝ Թուրքիան ճանաչում էր Մերձկասպյան շրջանների միացումը Ռուսաստանին, իսկ ռուսական կողմը թուրքերի տնօրինությանն էր թողնում Շամախիից արևմուտք ընկած երկրամասերը: Ռուսական հրամանատարությունը, որը ստանձնած պարտավորությունների համաձայն, այլևս չէր կարող օգնության գալ հայ ազատագրական ուժերին, ցարին ուղղված զեկուցագրերում միայն զարմանք էր արտահայտում Արցախի հայ մարտիկների սխրագործությունների ու տոկունության կապակցու-

թյամբ: Այսպիսով՝ պայմանագրի կնքումն ավելի ազատեց Թուրքիայի ձեռքերը՝ Այսրկովկասում լայնաձակատ հարձակման անցնելու համար:

Երևանի հերոսական պաշտպանությունը: 1724 թ. գարնանը թուրքական բանակը ներխուժում է Արարատյան դաշտ և շարժվում դեպի Երևան: Թշնամուն 40 օր դիմադրություն են ցույց տալիս ***Կապրի*** գյուղի բնակիչները: Նրանք համաձայնում են զենքը վայր դնել միայն այն պայմանով, որ թուրքերի բանակը չմտնի Կարբի:

Նույն թվականի հունիսի 7–ին պաշարվում է ***Երևանը:*** Թուրքերի դեմ կռվի համար ոտքի է կանգնում ինչպես քաղաքի, այնպես էլ մերձակա հայկական գյուղերի բնակչությունը: Երևանը վերածվում է ռազմական ճամբարի: Քաղաքը պաշտպանող հայկական ուժերը բաժանված էին ջոկատների: Յուրաքանչյուր ջոկատ ուներ իր տեղամասն ու հրամանատարը:

Հակառակորդի գրոհներն ավարտվում էին անհաջողությամբ: Սուլթանի հրամանով Երևան է հասնում նաև Գանձակի ուղղությամբ արշավող թուրքական բանակը: Թշնամու ուժերը կրկնապատկվում են: Հայերը Հովհաննես Հունդիբեկյանի, Պողոս Քեչիբեկյանի և այլոց գլխավորությամբ հերոսաբար դիմադրում էին թշնամու հարձակումներին և նրան մեծ կորուստներ պատճառում: Երևանի պաշտպանությունը տևեց ավելի քան երեք ամիս: Քաղաքն այլևս չէր կարող դիմանալ պաշարմանը, որովհետև սպառվում էին պարենը և զինամթերքը: Երևանի խանը համաձայնվում է բանակցություններ վարել թուրքերի հետ: ***1724 թ. սեպտեմբերի 26–ին*** պաշարված քաղաքն անձնատուր է լինում: Թուրքերը միայն մեծ զոհերի գնով՝ ավելի քան 20 հազար զինվոր, կարողացան գրավել Երևանը:

Երևանի հերոսական պաշտպանությունը կասեցրեց թուրքերի առաջխաղացումը դեպի Սյունիք ու Արցախ:

Ջինված պայքարի ծավալումն Արցախում: Լեզգիների արշավանքներին հաջողությամբ դիմագրաված Արցախի հայկական զորամիավորումները կարևոր դեր կատարեցին այդ երկրամասը թուրքական զավթիչներից ևս պաշտպանելու գործում:

Հայոց պայքարին օժանդակելու ռուսական կայսեր խոստումներով ***1724 թ.*** սկզբին Արցախ էր ժամանել Պետրոս Մեծի անձնական ներկայացուցիչ հայազգի ***Իվան Կարապետը:*** Դա ավելի հուսադրեց հայկական ռազմաքաղաքական ուժերին: Արցախի մելիքությունները միասնական վճռականությամբ պատրաստ էին դիմագրավելու օտար հարձակումներին և ավերումներից պաշտպանելու սեփական երկիրն ու ժողովրդին:

Թուրքական արշավանքը սպառնալիք էր ոչ միայն հայոց, վրաց, այլև բուն պարսից իշխանությունների համար: Այդ է պատճառը, որ Արցախի մելիքների կողմից պատվիրակություն ուղարկվեց շահ ***Թահմասպի*** մոտ՝ թուրքական արշավանքի դեմ համատեղ պայքարի և համագործակցության առաջարկով: Ավելին՝ ***1724 թ.*** Արցախի ազատագրական ուժերը թուրքերի դեմ համատեղ պայքարի մասին պայմանագիր կնքեցին նաև Գանձակի մահմեդականների հետ:

1725 թ. մարտին թուրքական երեք զորամաս ներխուժեց Արցախի ***Վարանդա*** գավառ: Շուրջ 6000 թուրք զինվորների թույլ տալով տեղավորվել Արցախի 33 հայկական գյուղերում՝ հայ ինքնապաշտպա-

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ 1722–1730 ԹԹ.: ԽԱՄՍԱՅԻ (ԱՐՑԱԽ) ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Շուշիի բերդը

նական ուժերը գիշերային հանկարծակի գրոհով ոչնչացրին նրանց: Թուրքական երկու փաշաները սպանվեցին, իսկ երրորդը գերի վերցվեց: Թուրքական բանակի ոչնչացումը և հայկական ուժերի այդ կարևոր հաղթանակը մեծ արձագանք ունեցան ամենուրեք, բարձրացավ հայերի մարտական ոգին և վստահությունը սեփական ուժերի հանդեպ:

Անհաջողության է մատնվում նաև Արցախի դեմ թուրքական զորքերի հաջորդ արշավանքը: ***1726 թ. Շուշին*** գրավելու օսմանյան բանակի համառ գրոհները, հանդիպելով հայերի լուրջ հակահարվածներին, անհաջողության մատնվեցին: Թուրքերը կորցրին իրենց հրամանատարական կազմի և զինվորների զգալի մասը:

Այսպիսով՝ ձախողվեց Շուշիի բերդը պաշարված պահելու թուրքական բանակի փորձը: Ութօրյա մարտերից հետո կորցնելով 800 զինվոր՝ թուրքերը ստիպված վերադարձան Գանձակ: Կրած պարտություններից հետո թուրքական զինվորականությունն ընտրում է անակնկալ հարձակումների մարտավարությունը:

Պայքարի անկումը Արցախում: Օսմանյան բանակի դեմ Արցախի հայ ազատագրական ուժերի պայքարում 1728 թ. առավելությունն անցնում է թշնամուն: Ազատագրական ուժերի մի մասը, հուսախաբ լինելով ռուսական խոստումներից, հետագա արյունահեղությունները կանխելու համար գերադասում է թուրքերի հետ բանակցելու ուղին:

Նույն թվականին մահանում է Եսայի Հասան-Ջալալյանը, ով, տեղեկանալով ռուս-թուրքական պայմանագրի կնքման մասին, հակվել էր թուրքերի հետ հաշտվելու մտքին:

Քաղաքական այդ գիծը մերժող հայ զինվորականությունը 1729 թ. սկզբներին ***Ական*** և ***Թարխան*** հարյուրապետերի գլխավորությամբ նոր պատվիրակություն է ուղարկում ռուսական բանակ՝ օգնական զորք ստանալու նպատակով: Ռուսական հրամանատարությունը կրկին չի ընդառաջում հայ պատվիրակության խնդրանքին: Օգնություն չստանալով Ռուսաստանից՝ հայ պատվիրակությունն այլևս չի վերադառնում Արցախ: Թեև թուրքական նվաճողների դեմ պայքարի կազմակերպման համար Արցախում այլևս չկար միասնական հրամանատարություն, հայ ժողովուրդը, սակայն, շարունակում էր ազատագրական պայքարը: 1729–1731 թթ. թուրք զավթիչների դեմ պայքարում էր Գյուլիստանի սղնախը, որի հրամանատարն էր ***Աբրահամ սպարապետը:***

Արցախի ազատագրական զինված պայքարը մեծ արձագանք գտավ ողջ հայության մեջ: Այն ոգեշնչում էր նաև հայ ժողովրդի հաջորդ սերունդներին և հավատով լցնում սեփական ուժերի նկատմամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ իրավիճակ էր Պարսկաստանում XVIII դ. առաջին երեսնամյակին:
2. Ինչ էր առաջարկել Վախթանգ VI–ը Արցախի ազատագրական ուժերին. ո՞ւմ էր դա ձեռնտու: Որո՞նք էին ռուսների Կասպիական արշավանքի պատճառները և առիթը. ի՞նչ ընթացք և ավարտ ունեցավ այն:
3. Արցախի ազատագրական պայքարը կազմակերպելու գործում ի՞նչ դեր խաղաց Եսայի Հասան–Ջալալյանը: Ինչի՞ մասին է վկայում Վախթանգ VI–ի ներկայությունը Չոլակում:
4. Ինչո՞ւ էին միավորվում Արցախի մելիքների զորաջոկատները: Ինչո՞ւ արցախցիները պաշտպանական մարտավարության անցան: Թվարկե՛ք առավել հայտնի սղնախները:
5. Որո՞նք էին թուրքական զորքերի՝ 1723 թ. Այսրկովկաս ներխուժելու նպատակները: Ի՞նչ իրադարձություններ էին նպաստել թուրքական ներխուժմանը: Ի՞նչ ընթացք ունեցավ թուրքական արշավանքը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ Կ. Պոլսի պայմանագիրը:
6. Ինչպե՞ս ավարտվեց Կարբիի ինքնապաշտպանությունը: Նկարագրե՛ք Երևանի պաշտպանությունը. ի՞նչ նշանակություն ունեցավ այն:
7. Ազատագրական պայքարն արդյունավետ կազմակերպելու նպատակով ի՞նչ քայլեր ձեռնարկեցին արցախցիները: Ի՞նչ ավարտ ունեցավ թուրքական ներխուժումն Արցախ: Քաղաքական ի՞նչ կողմնորոշման էր հակվել Եսայի Հասան–Ջալալյանը և ինչո՞ւ: Ի՞նչ գիտեք Աբրահամ սպարապետի մասին:
8. Ցո՛ւց տվեք Արցախի զինված պայքարի նշանակությունը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Հայ և վրաց զորքերի՝ Գանձակի մոտ հանդիպման մասին

...Կարգավորելով ամեն ինչ, վերցնելով մոտ տասը հազար ընտիր սպառազեն ռազմիկ, որոնց հետ նաև քահանաների դասն ու մեր սպասավորներին, մեծ ճոխությամբ ու խնջույքներով հայոց իշխանությունը վերականգնված համարելով՝ գնացինք և իջևանեցինք Գանձակ քաղաքի մոտ՝ Չոլակ կոչվող վայրում: Վախթանգ թագավորը ևս իջևանել էր քաղաքի այն կողմում՝ Ղոչ-ղար գետի մոտ... Մենք գնացինք, և նրա բանակին մոտենալու պահին իր զորքերին հրամայեց ընդառաջ գալ մերայիններին և որպես թե դիմավորելու ողջույնով...

Որպես պատերազմի կարգն է, զորքերը դասավորվեցին դեմ դիմաց, և մեր քաջամարտիկ երիտասարդներն առաջանալով ճախրում էին արագընթաց երիվարներով ու սպառազեն զրահներով պարում էին զորքի առաջ: Հրացանների ձայնից որոտում և թնդում էր այն վայրը, և նրա փոշեխառն ծուխը, ինչպես կայծակնափայլ ամպ, ծածկում էր արեգակի ճառագայթները, որ մինչև անգամ հազիվ էինք իրար տեսնում...

Վախթանգը, տեսնելով մերայինների այսպիսի առաջադիմությունը, ուրախացավ հոգով ու մարմնով: Մեզ և հրամանատար կարգված տղաներին ու մելիքներին... քաջալերեց. *«Այսուհետև զորացե՛ք և քա՛ջ եղեք՝ որպես քաջարի զավակներ, և ոչ ոքից ու ոչնչից մի՛ երկնչեք, որովհետև ահա հասել է քրիստոնյաների փրկության ժամանակը»*:

Եսայի Հասան–Ջալալյան, Համառոտ պատմութիւն Աղուանից

§ 4. ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դավիթ բեկի ժամանումը Սյունիք և պայքարի սկիզբը: Սյունիքում հայ ազատագրական ուժերն անհրաժեշտ չափով համախմբված չէին, իսկ շրջակա պարսկամետ իշխանները զգալի ուժ էին ներկայացնում: Այդ խոչընդոտները հաղթահարելու և վրաց ազատագրական ուժերի հետ կապեր հաստատելու նպատակով Սյունիքից Վրաստան մեկնեց հայ առևտրական Ստեփանոս Շահումյանը: Նրա խնդրանքով Վախթանգ VI–ի ուղարկած հայ զորականները Դավիթ բեկի գլխավորությամբ 1722 թ. հասան Սյունիք: Նրանք հաստատվեցին ***Շինուհայր*** ավանում և իրենց շուրջ համախմբեցին տեղի զինական ջոկատներին: Դավիթ բեկի ղեկավարությամբ ստեղծվեց ռազմական խորհուրդ: Նա աչքի ընկած զորականներից ***Մխիթարին*** նշանակեց զորքերի ***սպարապետ***, իսկ առանձին զորաջոկատների հրամանատարներ դարձան ***տեր Ավետիսը, Փարսադանը, Թորոսը*** և ուրիշներ: Առաջին հաղթական մարտը տեղի ունեցավ նույն թվականի աշնանը ջևանշիր կոչվող քոչվոր ցեղի դեմ: Այդ հաղթանակը մեծ հեղինակություն բերեց Դավիթ բեկին:

Կարևոր նշանակություն ունեցավ մահմեդականություն ընդունած ***մելիք Բաղրին*** պատկանող՝ Տաթևի մոտ գտնվող ամրոցի գրավումը: Դավիթ բեկը, մելիք Բաղրին ձերբակալելով, բերում է Շինուհայր և հրամայում տասներկու օր եկեղեցում բոլորի ներկայությամբ բարձր ձայնով ասել. *«Լոյս Լուսավորչի հավատին, վա՜յ ուրացողին»*: Այնուհետև հրամայում է կտրել նրա գլուխը, իսկ ինքը գալիս և բնակվում Տաթևում: Սյունիքի ազատագրական շարժման դեմ հանդես եկան ու Կապանի ապստամբների վրա հարձակվեցին նաև շրջակա մահմեդական տիրակալները: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ ***1723 թ. Չավնդուրի*** մոտ, որտեղ հայ զորականներին հաջողվեց լիակատար հաղթանակ տանել:

Հայկական զորքերը Մխիթար սպարապետի և տեր Ավետիսի հրամանատարությամբ գրավեցին նաև ***Զևայի*** անառիկ բերդը՝ ջախջախելով տեղի մոտ 4000–անոց կայազորը:

Հաջորդ կարևոր հենակետը ***Որոտան*** բերդն էր, որի գրավման համար հայկական զորքերը մեծ ջանքեր գործադրեցին: Հակառակորդին հաջողվել էր հետ մղել հայկական զորքերի չորս գրոհները: Հերթական գրոհի ժամանակ հայերը կարողացան անցք փորել պատի մեջ և ներթափանցելով բերդ՝ գրավել այն:

Հայկական իշխանության կազմավորումը: Կապանում շուրջ մեկ տարվա հաղթական կռիվներից հետո երկրամասը ազատագրվեց օտար տիրապետությունից: Այնտեղ Դավիթ բեկի գլխավորությամբ 1724 թ. ստեղծվեց հայկական իշխանություն: Հայկական ուժերի կենտրոնատեղի դարձավ Դավիթ բեկի կողմից ամրացված ***Հալիձորի բերդը***: Թուրքական բանակների դեմ պայքարի հաջողությունն ամրապնդելու համար Դավիթ բեկը նվերներով պատվիրակություն ուղարկեց պարսից շահ հռչակված ***Թահմասպ II–ի*** մոտ՝ համագործակցության առաջարկությամբ: Շահը հավանություն տվեց դրան և, ի պատասխան, ուղարկեց հրովարտակ՝ ճանաչելու Դավիթ բեկի իշխանությունը՝

Դավիթ բեկի արձանը Կապանում

նրան դրամ հատելու իրավունք վերապահելով: Շահն իր շրջաբերականում կոչ էր անում շրջակա պարսկական կառավարիչներին համաձայնեցված գործելու Դավիթ բեկի հետ: Ավելին, երբ սկսվեց թուրքական բանակի առաջխաղացումը, շահը հրամայեց պարսիկ կառավարիչներին ռազմական օժանդակություն ցուցաբերելու հայկական իշխանությանը:

Թուրքական զորքերը Երևանի գրավումից հետո շարժվում են դեպի Սյունիք և Ատրպատական: 1726 թ. նրանք փորձում են գրավել Սյունիքը և վերջ տալ հայկական իշխանությանը: Շրջակա մահմեդական տիրակալների զինված ուժերը միանում են օսմանյան բանակին: Թշնամուն հաջողվում է գրավել մի շարք հայկական բնակավայրեր: Դավիթ բեկն իր զորքով ամրանում է Հալիձորի բերդում:

Հալիձորի պաշտպանությունը: ***1727 թ. մարտին*** թուրքերը պաշարում են ***Հալիձորը:*** Հայկական ուժերին հաջողվում է հետ մղել թշնամու համառ գրոհները: Հակառակորդը կրկին ծավալուն գրոհ է կազմակերպում պաշարման մեջ գտնվող Հալիձորի վրա: Թուրքական զորքերը, աստիճաններ մոտեցնելով բերդի պարիսպներին, փորձում են բարձրանալ պարիսպների վրա: Պաշարված հայ ռազմիկները մեծ թվով թուրքական զինվորներ են ցած գլորում պարիսպներից: Դավիթ բեկը որոշում է դուրս գալ շրջափակված ամրոցից և հակահարձակման միջոցով անակնկալի բերել թուրքերին:

Հակահարձակումը գլխավորող Մխիթարն ու տեր Ավետիսը դիմում են հայ զինվորներին. *«Արիացեք, մի՛ երկնչեք, հետևեցե՛ք մեզ, եթե հասել է մեր վախճանը, քաջաբա՛ր մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ՝ մեր աչքերի առաջ տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը»:* Երեք հարյուր զինյալներով, աննկատ դուրս գալով բերդից, նրանք հանկարծակի հարձակվում են թշնամու վրա: Խուճապի մատնված թշնամու զորքը, մեծ կորուստներ տալով, դիմում է փախուստի: Ընդհանուր առմամբ՝ Հալիձորի ճակատամարտում թուրքական բանակից զոհվեց 13 000 զինվոր: Թշնամուց խլվեց 148 դրոշ, նրանց բանակի ամբողջ կողոպուտն ու ունեցվածքը:

Հալիձորի հաղթանակն օսմանյան բանակների դեմ տարած հաղթանակներից ամենախոշորն ու նշանավորն էր: Բարձրանում է հայկական զորքերի մարտական ոգին: Հայերն սկսում են Կապանն արագորեն մաքրել թուրքական զորքերից: Նահանջելով թուրքերը կենտրոնանում են Մեղրիում: Հայկական զորքերը Մխիթար սպարապետի և տեր Ավետիսի հրամանատարությամբ հարձակման են անցնում Մեղրիի վրա: Հայերի մի ջոկատի հաջողվում է աննկատ թափանցել Մեղրի: Այն ժամանակ, երբ թուրքերը շարժվում էին դեպի Փոքր թաղ՝ դիմագրավելու հայերի գրոհին, Մխիթար սպարապետի և տեր

Ավետիսի ջոկատը թիկունքից գրոհում է թշնամու վրա: Անակնկալի գալով՝ թուրքերը շարժվում են դեպի Մեղրիի կիրճը, որի ելքը նախօրոք գրավել էին հայերը: Թուրքերը նախընտրում են շարժվել դեպի Արաքս և անցնել գետը: Հետապնդելով թշնամուն՝ հայկական զորքերը ազատագրում են Մեղրին և հակառակորդի դեմ լիակատար հաղթանակ տանում: Հալիձորի և Մեղրիի հաղթանակները նոր լիցք են հաղորդում հայկական զորքերին:

Մխիթար սպարապետ: 1728 թվականը շրջադարձային եղավ նաև Սյունիքի ազատագրական պայքարի համար. մահացավ Դավիթ բեկը: Կապանի զինվորական հրամանատարությունն անցավ Մխիթար սպարապետին, որը շարունակեց գլխավորել պայքարը թուրք զավթիչների դեմ:

Թուրքական բանակը, կրած պարտություններից ուշքի գալով և համալրվելով, կրկին հարձակվեց Սյունիքի վրա: Սակայն հայկական զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցավ պառակտում, որը բացասաբար անդրադարձավ պայքարի հետագա ընթացքի վրա: Երբ հակառակորդը կրկին պաշարեց Հալիձորի բերդը, Մխիթար սպարապետը պահանջեց շարունակել պաշտպանությունը և ուժասպառ անել թշնամուն: Տեր Ավետիսը նախընտրեց թուրքերի հետ բանակցելու ուղին: Մխիթար սպարապետը ստիպված էր գիշերով հեռանալ բերդից: Թուրքերը գրավեցին Հալիձորը, կողոպտեցին ու կոտորեցին տեղում մնացած հայ բնակչությանը: Հալիձորի անկումից հետո հայ զինվորականության միջև հակասությունները խորացան: Թեև Մխիթար սպարապետին հաջողվեց կարճ ժամանակով միավորել հայկական ուժերը և թուրքերի դեմ մի շարք հաղթանակներ տանել, սակայն ապստամբական ուժերի ջլատումը հնարավոր չեղավ կասեցնել:

1730 թ. թուրքերին Օրդուբադում պարտության մատնելուց հետո, Խնձորեսկ վերադառնալու ճանապարհին Մխիթար սպարապետը դավադրաբար սպանվեց: Սյունիքի ազատագրական պայքարի ելած ուժերը, միայնակ մնալով թշնամու գերակշիռ ուժերի դեմ և հետզհետե կազմալուծվելով, չկարողացան վերջնական հաղթանակի հասնել:

Այնուամենայնիվ, 1720-ական թթ. զինված պայքարի շնորհիվ Սյունիքում որոշակի ժամանակով վերականգնվեց հայկական ինքնիշխանությունը, իսկ Հայաստանի ազատագրության պայքարի պատմությունը հարստացավ փառավոր էջով՝ նոր սերունդներին մղելով հետագա հերոսական պայքարի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն էր Ստեփանոս Շահումյանի Վրաստան մեկնելու նպատակը: Ովքե՞ր էին Դավիթ բեկի զորականները: Ո՞րն էր նրա առաջին հաղթանակը, և ի՞նչ նշանակություն ունեցավ այն:
2. Ինչի՞ հետևանք էր Կապանում ստեղծված հայկական իշխանությունը: Ո՞րն էր հայկական ուժերի կենտրոնատեղին: Ձեր կարծիքով ինչո՞ւ շահը ճանաչեց Դավիթ բեկի իշխանությունը: Ի՞նչ կարևոր հենակետեր գրավեցին հայկական ուժերը:

3. Ներկայացրեք Հալիձորի հերոսական պաշտպանությունը: Գնահատեք Հալիձորի և Մեղրիի հաղթանակները:
4. Ո՞րն էր հայկական զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցած պառակտման պատճառը. ինչ հետևանք ունեցավ դա: Ձեր կարծիքով ո՞ւմ կողմնորոշումն էր ճիշտ:
5. Ինչ նշանակություն ունեցավ ազատագրական զինված պայքարը Սյունիքում:

§ 5. ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Զինված պայքարի արդյունքները: Հայկական ուժերը Սյունիքում և Արցախում տարան բազում հաղթանակներ, սակայն թշնամու գերակշիռ բանակների դեմ պայքարում նրանք ի վիճակի չեղան երկար ժամանակով պահելու պետական անկախությունը: Այդուհանդերձ, ազատագրական այդ հզոր շարժումը խոր հետք թողեց և մեծապես բարձրացրեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունն ու ազատասիրական ոգին, հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ: Պատահական չէ, որ պարսից պետությունը իր հետագա քաղաքականության մեջ շարունակեց հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, պահպանել նրանց իրավունքներն ու ինքնիշխանությունը:

Պարսկաստանում աֆղանների և թուրքերի դեմ սկսվել էր երկարատև պայքար, որի գլուխ էր կանգնել զորահրամանատար ***Նադիրը***: Նրան հաջողվում է պարտության մատնել աֆղաններին և դուրս քշել երկրից:

Մի շարք ճակատամարտերում պարսկական բանակը պարտության է մատնում նաև թուրքական զորքերին: Թուրքական զորքերի դեմ պայքարում Նադիրն օժանդակություն էր ստանում նաև Այսրկովկասի ժողովուրդների, մասնավորապես հայերի կողմից: Հայ ժողովրդի նկատմամբ իր բարյացակամությունն ընդգծելու համար Նադիրն այցելում է Էջմիածին և ներկա լինում պատարագին: Վանքի վերանորոգման համար նա հատկացնում է հազար թուման, իսկ տաճարին նվիրում է մոտ 15 կգ կշռող ոսկե ջահ: Միաժամանակ կարգադրում է Էջմիածին ուղարկել ընտիր գորգեր և այլ նվերներ: Նրա հրովարտակով վերահաստատվում են կաթողիկոսի և հայ հոգևորականության՝ հնուց սահմանված իրավունքները: Նադիրը՝ որպես հեռատես քաղաքական գործիչ ու դիվանագետ, լավ էր հասկանում տեղական բնակչության համակրանքը շահելու և նրա օգնության կարևորությունը հակաթուրքական պայքարում:

Պարսկական և օսմանյան զորքերի միջև ***1735 թ. հունիսին*** խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ ***Եղվարդ գյուղի*** մոտ, որտեղ օսմանցիները ծանր պարտություն կրեցին: Պարսկական բանակի կազմում թուրքերի դեմ մարտնչում էին նաև հայ զինվորներ ու աշխարհազորայիններ: Նադիրի բանակում էին նշանավոր գործիչներ ***Դիզակի մելիք Եգանը, Գեղարքունիքի մելիք Շահնազարը, Երևանի մելիք Հակոբջանը*** և ուրիշներ:

Եղվարդի ճակատամարտից հետո Նադիրն ասպատակեց Կարսից մինչև Կարին ու Բայազետ ընկած տարածքները: Թուրքական հրամանատարությունը համաձայնեց զորքերը դուրս բերել Երևանի, Թիֆլիսի և Գանձակի բերդե-

րից ու Այսրկովկասից: ***1736 թ. Էրզրումում*** Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր, որով Թուրքիան կրկին ճանաչում էր Պարսկաստանի տիրապետությունն Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում: Նադիրը 1736 թ. հռչակվեց Պարսկաստանի նոր շահ: Նրա տիրապետության ժամանակ Պարսկաստանը կրկին դարձավ Արևելքի հզոր պետություններից մեկը:

Հայկական ինքնավարությունն Արցախում (Խամսայի մելիքություններ): Շահ հռչակվելուց հետո Նադիրը դաժան հաշվեհարդար տեսավ այն ցեղերի հետ, որոնք օժանդակել էին թուրքական զորքերին: Արցախի հարթավայրից նա տեղահանեց և Խորասան աքսորեց այնտեղ բնավորված թուրքամետ ջևանշիր քոչվոր ցեղին: 1736 թ. Նադիրն Արցախն անկախ հայտարարեց Գանձակի խանությունից՝ այն դարձնելով առանձին վարչական միավոր: Նա վերահաստատեց Արցախի ներքին վարչական բաժանումն ու մելիքների ժառանգական իրավասությունները: Այնուհետև ***Արցախի (Ջրաբերդի, Գյուլիստանի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի)*** մելիքությունները սկսեցին անվանվել ***Խամսայի (հինգ) մելիքություններ***: Դրանց կառավարիչ նշանակվեց ***Դիզակի մելիք Եգանը***, որը միավորում էր նաև Արցախի մելիքների ռազմական ուժերը: Վերջինս ստացավ նաև խանի տիտղոս: Մելիք Եգանի մահից հետո կառավարչի պաշտոնն անցավ նրա որդի ***Արամին***, իսկ այնուհետև՝ վերջինիս եղբորը՝ մելիք ***Եսայուն***:

Նադիր շահի կառավարման ժամանակ Արցախի մելիքները պահպանեցին իրենց բոլոր նախկին իրավունքները: Յուրաքանչյուր մելիք ուներ իր զորքը, որն անհրաժեշտության դեպքում կարող էր հասնել ավելի քան 1000–1500 զինվորի: Արցախի մելիքությունների սահմանները տարածվում էին Գանձակի հարավային շրջաններից մինչև Արաքս գետը: Նադիր շահի մահից հետո ևս հայ մելիքները հաջողությամբ խափանում էին Արցախի հարևանությամբ հաստատվելու մահմեդականների բոլոր փորձերը և ավերում նրանց հիմնադրած ամրությունները: Արցախի հարթավայրային մասում մահմեդականները երկար ժամանակ զբաղված էին ավարառությամբ ու կողոպուտներով: Նրանք հաճախակի հարձակումներ էին գործում հայ մելիքների տիրույթների վրա:

Իրենց տիրապետությունը պահպանեցին նաև Սյունիքի և Ղարադաղի հայկական մելիքությունները: Սևանի հարավարևելյան մասում իշխող ***Մելիք-Շահնազարյան*** տոհմի ներկայացուցիչները Նադիրի իշխանության տարիներին ոչ միայն վերահաստատվեցին ու պահպանեցին իրենց գոյությունն ու իրավունքները, այլև ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը: Նրանք անկախ ճանաչվեցին Երևանի խանից: Արարատյան երկրի քալանթար նշանակվեց ***Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը***: Վերջինիս մահից հետո նրա որդի ***մելիք Մանուչարը*** նշանակվեց Երևանի ու Նախիջևանի զորահրամանատար: Մելիք Մանուչարը մեծ վստահություն էր վայելում Նադիրի մոտ: Նա իր զորամասով մասնակցել էր Նադիրի՝ Հնդկաստան կատարած արշավանքին:

Արցախի ինքնավարությունը մարմնավորվում էր նաև հոգևոր իշխանության՝ Գանձասարի կաթողիկոսության գոյությամբ: Վերջինս եռանդուն մասնակցություն էր ունենում ազատագրական շարժմանը: Այն Արցախի ոչ միայն հոգևոր,

այլև աշխարհիկ ուժերի համախմբման ու նրանց միասնականության համար պայքարի հիմնական կենտրոնն էր: XVIII դ. սկզբից ազատագրական եռանդուն գործունեություն էր ծավալել Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը (1701–1728 թթ), որը արցախցիների ոչ միայն հոգևոր, այլ նաև աշխարհիկ առաջնորդն էր զինված պայքարի տարիներին: Եսայի կաթողիկոսի մահից հետո էլ Գանձասարի կաթողիկոսարանը մնում էր հայոց ազատագրական գաղափարախոսության ու շարժման կարևոր կենտրոններից մեկը: Այնտեղ էին կազմակերպվում գաղտնի խորհրդակցություններ՝ քննարկելու Հայաստանի ազատագրության տարբեր ծրագրեր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ միջոցներով էր Նադիրը փորձում շահել հայերի համակրանքը: Ձեր կարծիքով ինչ նպատակ էր հետապնդում Նադիրի այդօրինակ վերաբերմունքն Էջմիածնի նկատմամբ:
2. Երբ է տեղի ունեցել Եղվարդի ճակատամարտը. ինչ ավարտ է այն ունեցել: Ինչով եք բացատրում այն հանգամանքը, որ Նադիրի բանակի կազմում թուրքերի դեմ մարտնչում էին նաև հայ զինվորներն ու աշխարհազորայինները:
3. Ինչու և ինչպես պատժվեց ջևանշիր քոչվոր ցեղը: Ինչ արտոնություններ շնորհեց Արցախին Նադիրը. ինչ իրավունքներ ունեին Խամսայի մելիքները: Որոնք էին Խամսայի մելիքությունները: Հայաստանի ուրիշ որ շրջաններում էին պահպանվել հայկական մելիքությունները:
4. Ինչ դեր է խաղացել Գանձասարի կաթողիկոսությունը հայ ազատագրական շարժման պատմության մեջ:

§ 6. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Պայքարի գաղութահայ կենտրոնները: XVIII դ. կեսերից հայ ազատագրական շարժման մեջ սկսում են աշխուժանալ գաղութահայ կենտրոնները: Դրանց մեջ առանձնահատուկ տեղ ուներ հնդկահայ գաղութը:

Հնդկաստանում հայերը հաստատվել էին դեռևս XVI–XVII դդ.: Նրանք զբաղվում էին գերազանցապես վաճառականությամբ: Հայկական խոշոր և ծաղկուն համայնքներ կային Հնդկաստանի շատ քաղաքներում: XVII դ. երկրորդ կեսին՝ եվրոպացիների՝ Հնդկաստան ներթափանցելուց առաջ, հայերն արդեն այնտեղ մեծ կշիռ ունեին և լուրջ մրցակից էին օտար վաճառականների համար: Անգլիական ***«Արևելահնդկական ընկերությունը»*** դյուրությամբ Հնդկաստան մուտք գործելու և միաժամանակ հայ վաճառականության մրցակցությունից խուսափելու նպատակով 1688 թ. պայմանագիր է կնքում նրանց հետ: Դրա համաձայն՝ հայերն իրենց ապրանքներն անգլիական նավերով փոխադրելու իրավունք են ստանում:

Ամրապնդվելով Հնդկաստանում՝ անգլիացիները ձգտում էին միայնակ տիրանալու հնդկական առևտրին և հետզհետե սահմանափակելու հայ վաճառականության իրավունքները: Անգլիացիներն

ունեին խոշոր նավատորմ, կանոնավոր բանակ և նպատակ ունեին տիրանալու ամբողջ Հնդկաստանին: Հնդկահայ բուրժուազիայի մի մասը և ազգային գործիչները սկսում են գիտակցել հայրենիքի, սեփական պետության ու բանակի անհրաժեշտությունն ու նշանակությունը: Հնդկահայ այդ գործիչներից էր Հովսեփ Էմինը:

Հովսեփ Էմին. գործունեության նշանակությունը: Էմինը ծնվել է 1726 թ. Պարսկաստանի Համադան քաղաքում, որտեղից նրանց ընտանիքը տեղափոխվել էր Կալկաթա: Նա ծանոթ էր ինչպես պարսկա-թուրքական լծին ենթակա հայ ժողովրդի վիճակին, այնպես էլ ականատես էր Հնդկաստանում հայ վաճառականության դժվարին կացությանը:

Երիտասարդ Էմինը որոշում է անցնել Անգլիա, սովորել ռազմական գործ և ձեռնամուխ լինել Հայաստանի ազատագրմանը: Նրան ոգևորում էին Արցախի և Սյունիքի ազատագրական հերոսական պայքարի մասին տեղեկությունները:

1751 թ. Էմինը, հակառակ հոր կամքին, որը նրան ուզում էր վաճառական դարձնել, ծառայության է մտնում բրիտանական մի նավում և ուղևորվում Անգլիա:

Անգլիայում Հովսեփ Էմինն ընդունվում է ***Վուլվիչի*** զինվորական ակադեմիան, ծանոթանում անգլիական քաղաքական ու պետական գործիչների հետ: Ակադեմիայում նա հմտանում է ռազմական գործի մեջ: Ուսումն ավարտելուց հետո նա մեկնում է Գերմանիա՝ մասնակցելու Ֆրանսիայի դեմ մղվող պատերազմին:

1759 թ. Հովսեփ Էմինը գալիս է Հայաստան, որտեղ մոտիկից ծանոթանում է տիրող իրավիճակին: Նա համոզվում է, որ թուրքական տիրապետության դեմ

Մշո Ս. Կարապետ վանքը

ազատագրական պայքար կարելի է սկսել միայն որևէ հարևան տերության օժանդակությամբ: Այդպիսի հնարավոր դաշնակից կարող էր լինել Ռուսաստանը կամ Վրաստանը:

Վերադառնալով Անգլիա՝ Էմինը ներկայանում է Լոնդոնում ռուսական դեսպան ***Գոլիցինին:*** Նրանից վերցնելով Ռուսաստանի վարչապետ ***Վորոնցովին*** ուղղված հանձնարարական նամակ՝ 1761 թ. ճանապարհվում է Սանկտ Պետերբուրգ (կարճ՝ Պետերբուրգ): Վորոնցովին Էմինը ներկայացնում է Հայաստանի ազատագրության իր ծրագիրը, ցանկություն հայտնում լինելու Վրաստանում: Նա մտադիր էր վրաց ***Հերակլ II*** թագավորի հետ դաշնակցած պայքարել թուրքական տիրապետության դեմ:

Վորոնցովն ընդառաջում է Էմինի խնդրանքը և Հերակլ II-ին ուղղված նամակով նրան ճանապարհում է Վրաստան: Մոսկվայում Հովսեփ Էմինին է միանում ***Մովսես Բաղրամյանը:*** Աստրախանում հավաքագրած կամավորների ջոկատն ուղեկցում է նրան: Վրաց թագավորը համաձայնում է օժանդակել Էմինի ծրագրերին և նրան հանձնարարում վրաց զորքերին վարժեցնել ըստ եվրոպական ռազմարվեստի կանոնների:

Հայաստանում ազատագրական շարժումը կազմակերպելու համար Էմինը

կապեր է հաստատում Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր ***Հովնանի*** հետ: Վերջինս մեծ աշխատանք էր տանում ջոկատներ հավաքագրելու և օսմանահպատակ քրդերի, ասորիների հետ համագործակցելու ուղղությամբ: Հովնանը պնդում էր, որ Էմինը Հայաստան գալիս ունենա վրաց թագավորի կողմից տրամադրված թեկուզև փոքրիկ մի զորաջոկատ: Դրանով թուրքերը կհամոզվեին, որ վրացիներն էլ հակաթուրքական պայքարում հայերի հետ են: Հերակլ II–ը, զգուշանալով Թուրքիայի հետ ընդհարումից, երկար ժամանակ տատանվում էր որոշակի խոստումներ տալուց:

1764 թ. Հ. Էմինը և Հերակլը խրախուսական նամակներ են ուղարկում Հովնանին, սակայն Երևանում խանի մարդկանց կողմից նամակատարը ձերբակալվում է: Տեղեկանալով այդ մասին՝ ***Սիմեոն Երևանցի*** կաթողիկոսը, որն առանց անհրաժեշտ նախապատրաստության անիրագործելի էր համարում Թուրքիայի և Պարսկաստանի դեմ հաղթանակի հասնելու գաղափարը, նամակով կշտամբում է Հերակլ II–ին՝ հայ ժողովրդի համար վտանգավոր և անշրջահայաց քայլերի համար: Զգուշանալով հետագա անախորժություններից՝ Հերակլը Հովսեփ Էմինից պահանջում է հեռանալ Վրաստանից:

Հ. Էմինն անցնում է Հյուսիսային Կովկաս, որտեղ մնում է ավելի քան մեկ տարի: 1766 թ. Էմինը վերադառնում է Հայաստան և հանգրվանում ***Գետաշենում՝ Գյուլիստանի մելիք Հովսեփի*** մոտ: Էմինը Գետաշենում մասնակցում է Գանձակի խանի անակնկալ արշավանքի դեմ մելիք Հովսեփի մղած ճակատամարտին: Հայկական զորքերը ջախջախիչ պարտության են մատնում խանի բանակին, հետապնդում մինչև Գանձակի դարպասները և պաշարում քաղաքը: Հերակլ II–ի միջնորդությամբ հայկական զորքը դադարեցնում է պաշարումը, իսկ մելիք Հովսեփը տեղափոխվում է Գյուլիստան: Մելիք Հովսեփի հետ Գյուլիստան է գնում նաև Հովսեփ Էմինը:

Արցախի իրադրությանը ծանոթանալու համար Հ. Էմինը Շուշիում այցելում է Իբրահիմ խանին, ապա մեկնում Գանձասար: Այստեղ նա տեղեկանում է, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը բանադրանքի սպառնալիքով հրամայել է չընդունել և չօժանդակել Էմինին: Համոզվելով, որ Արցախում կատարում են Սիմեոն Երևանցու հրամանը՝ որոշում է կրկին վերադառնալ Ռուսաստան: Շամախիում լսելով, որ Խոյի ու Սալմաստի քրիստոնյաները պատրաստ են իրեն տրամադրելու 18 հազար զինվոր, Էմինը ճանապարհվում է Խոյ: Սակայն պահանջվող գումարը չունենալով՝ նա չի կարողանում զորք վարձել:

Անհաջողությունները զգալի չափով հուսահատեցնում են նրան: 1770 թ. Էմինը վերադառնում է Հնդկաստան:

Մովսես Սարաֆյանի ազատագրական ծրագիրը: XVIII դ. երկրորդ կեսին Ռուսաստանում հայ բնակչությունը շարունակում էր արագորեն աճել: 1768 թ. սկսված ռուս–թուրքական պատերազմը և տարածվող լուրերը, թե ռուսները զորք են մտցնելու Անդրկովկաս, մեծ ոգևորություն առաջացրին հայերի շրջանում: Ռուս–թուրքական պատերազմը թվում էր՝ մոտեցնում է Հայաստանը թուրք–պարսկական լծից ազատագրելու պահը:

1769 թ. հունիսին Աստրախանի մեծահարուստ ***Մովսես Սարաֆյանը***, այլ գործիչների գիտությամբ, Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային (նախա-

ղարություն) է ներկայացնում Հայաստանի ազատագրման ծրագիր: Նա առաջարկում էր Ռուսաստանում բնակվող հայերից ու վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան: Ջորաջոկատների հրամանատարը պետք է լիներ հայազգի և ենթարկվեր ռուսական բանակի հրամանատարությանը: Սարաֆյանն առաջարկում էր հակաթուրքական պայքարի մեջ ընդգրկել նաև Արցախի մելիքներին՝ նրանց տրամադրելով ռազմական հանդերձանք և զենք: Սարաֆյանի համոզմամբ՝ ռուսական բանակը հեշտությամբ կարող էր տիրանալ Երևանին, որովհետև այնտեղ իշխող խանը կախման մեջ էր Հերակլ II–ից: Վերջինս կարող էր հայ, վրացի և ռուս զինվորներ ուղարկել Երևան և գահընկեց անել խանին: Ակնկալվում էր, որ Երևանի գրավումից հետո մեծ քանակությամբ հայ բնակչություն կտեղափոխվեր այնտեղ և կզինվորագրվեր ռուսական բանակին:

Մովսես Սարաֆյանն առաջարկում էր Թուրքիայի դեմ արշավանք սկսել Թիֆլիս–Ախալցխա–Կարս և Երևան–Բայազետ–Վան ուղղություններով: Մ. Սարաֆյանի ծրագրի համաձայն՝ Հայաստանն ազատագրելուց հետո պետք է ստեղծվեր հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկը դառնար Հայաստանի թագավոր:

Մովսես Սարաֆյանն առաջարկում էր նաև պատերազմի ավարտից հետո կնքվելիք հաշտության պայմանագրի մեջ մտցնել հատուկ կետ, որի համաձայն՝ Հայաստանը կհամարվեր Ռուսաստանի հովանավորության տակ գտնվող երկիր: Այդ կերպ Ռուսաստանը անհրաժեշտության դեպքում կկարողանար օգնություն ցուցաբերել նրան:

Հյուսիսային (Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի) ծրագիրը: Հայրենիքի ազատագրմամբ մտահոգ աշխարհասփյուռ գաղութների մեջ առանձնանում էին մասնավորապես ռուսահայ կենտրոնները: Դա պայմանավորված էր նրանով, որ դեպի հարավ տարածվելու Ռուսաստանի ձգտումները և Հայաստանն ազատագրելու հայոց շարժումներն ու ծրագրերը համահունչ էին:

XVIII դ. 80–ական թթ. հատկապես աշխուժացան հայոց պետականության վերականգնման համար դիվանագիտական բանակցություններն ու ազատագրական ծրագրի մշակումը: Դրան մեծապես խթանեց 1783 թ. Ռուսաստանի և Վրաստանի միջև Գեորգիևսկում կնքված դաշնագիրը: Դրանով Ռուսաստանն իր հովանավորության տակ էր առնում և զորք տրամադրում Վրաստանին: Այդ դաշնագիրը մեծ արձագանք գտավ հայկական շրջաններում: Դրա հետ մեծ հույսեր էին կապում ինչպես ***Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը*** Ռուսաստանում, այնպես էլ ***Շահամիր Շահամիրյանը*** Հնդկաստանում:

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Հովսեփ Արղությանը և Հովհաննես Լազարյանը 1780–ական թվականների սկզբին բանակցություններ էին վարում ռուսական պետական գործիչների հետ արշավանք կազմակերպելու և Հայաստանն ազատագրելու մասին:

Նրանք կազմում են նաև Հայաստանի ազատագրման և հայ–ռուսական դաշնագրի մի նախագիծ, որ բաղկացած էր 18 հոդվածից: Առաջին երեք հոդվածները նվիրված էին հայ և ռուս ժողովուրդների միջև կրոնական տարաձայնությունների

կարգավորմանը: Այնուհետև առաջարկվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել հավիտենական դաշինք, որի համաձայն՝ Հայաստանում լինելու էր սահմանափակ քանակությամբ ռուսական զորք՝ երկիրը հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար: Ռուսաց կայսրը կատարելու էր հայոց թագավորի ընտրությունը, որն այնուհետև պետք է օծվեր Էջմիածնում: Առաջարկվում էր Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին: Սահմանվում էին Հայաստանի դրոշը, զինանշանը, շքանշանները և այլն: Նախկին հողատերերին վերադարձնելու էին իրենց կալվածքները, սակայն առանց գյուղացիներին ճորտացնելու իրավունքի: Առաջարկվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել առևտրական պայմանագիր, իսկ Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ XVIII դարի կեսերից աշխուժացան հայ ազատագրական շարժման գաղութահայ կենտրոնները: Ի՞նչը նպաստեց հնդկահայ բուրժուազիայի մի մասի մոտ հայրենիքի, սեփական պետության ու բանակի անհրաժեշտության նշանակության գիտակցմանը:
2. Ո՞վ էր Հովսեփ Էմինը: Ինչո՞ւ Սիմեոն Երևանցին հանդես եկավ Էմինի և Հովնանի ծրագրերի դեմ: Ձեր կարծիքով ինչո՞ւ չիրականացան Էմինի ծրագրերը:
3. Ի՞նչ ազդեցություն թողեց հայերի շրջանում 1768 թ. սկսված ռուս–թուրքական պատերազմը: Ներկայացրեք Հայաստանի ազատագրման Մ. Սարաֆյանի ծրագիրը:
4. Հայաստանի ազատագրությամբ մտահոգ գաղութներում ինչով էին առանձնանում ռուսահայ կենտրոնները: Ի՞նչ գիտեք Հ. Լազարյանի և Հ. Արղությանի մասին. ներկայացրե՛ք նրանց կազմած ծրագիրը: Հատկապես ո՞ր հոդվածի առկայությունն եք կարևորում և ինչո՞ւ: Համեմատե՛ք այն Սարաֆյանի ծրագրի հետ:

§ 7. ՀՆԴԿԱՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի ազատագրությունը նախապատրաստելու համար Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ Մադրասում ստեղծվել էր խմբակ, որի անդամները XVIII դ. 70–80–ական թթ. կատարեցին դիվանագիտական ու կազմակերպչական մեծ աշխատանք:

Հնդկաստան վերադառնալով՝ Հովսեփ Էմինը շարունակեց իր հայրենասիրական քարոզչությունը՝ ոգեշնչելով նաև Մադրասի հայերին: Տարիներ անց նա հրատարակեց իր կյանքի պատմությունը՝ «Հովսեփ Էմինի կյանքը և արկածները» վերնագրով: Էմինի ու Մովսես Բաղրամյանի վերադարձը Հնդկաստան կարևոր նշանակություն ունեցավ գաղթօջախի կյանքում: Նրանք համոզեցին հնդկահայ գործիչների մի մասին, որ առանց ժողովրդի լայն աջակցության Հայաստանի ազատագրման գործում հնարավոր չէ հասնել հաջողության: Հետևաբար անհրաժեշտ է միավորել հայ երիտասարդությանը, նրան դաստիարակել հայրենասիրության ու ազգային արժանապատվության ոգով:

Հնդկահայերը, ոգևորված Էմինի քարոզչությունից, որոշում են նրա տրամադրության տակ դնել 12 հազար ռուփի՝ Հայաստանի ազատագրության համար բանակ ստեղծելու նպատակով: Իսկ մեծահարուստ ***Գրիգոր Խոջաջանյանը*** հայտնում է, որ ինքը պատրաստ է այդ գործի համար կտակել իր ունեցվածքի մեկ երրորդը, եթե ծրագրին հավանություն տա նաև Սիմեոն Երևանցի կաթողիկոսը:

Հայաստանի ազատագրությունը, ըստ Շ. Շահամիրյանի, պետք է նվաճվեր օտարի լծի դեմ համաժողովրդական ապստամբության շնորհիվ: Այն պետք է գլխավորեին Արցախի մելիքներն ու Էջմիածնի հոգևորականները: Հայ ժողովուրդը կարող էր օժանդակություն ստանալ Վրաստանից և Ռուսաստանից:

Մադրասում տպագրված ***«Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»*** և ***«Որոգայթ փառաց»*** գրքերը Շ. Շահամիրյանն ուղարկում է ոչ միայն Սիմեոն կաթողիկոսին, այլև Արցախի մելիքներին, Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին, Հերակլ II թագավորին: Շ. Շահամիրյանը նամակագրական աշխույժ կապ էր ստեղծել նրանց հետ: Նա կապված էր նաև Արցախի մելիքների, Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի, Հովհաննես Լազարյանի և այլոց հետ: Նրանց հղած իր նամակներում Շահամիրյանը շարադրել է Հայաստանի ճակատագրի մասին ազատագրական խմբակի տեսակետները և առաջարկներ արել այդ ծրագրի իրագործման համար: Նա առաջարկում էր դպրոցներ բացելու միջոցով լուսավորություն տարածել, զինել ժողովրդին, պատրաստվել ազատության համար պայքարին: Հերակլ II–ին առաջարկվում էր Վրաստանում կատարել բարեփոխումներ, որոնք կհզորացնեին երկիրը: Վրաստանն օգտակար կլիներ և օգնության կհասներ հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Վրաց թագավորին օգնելու նպատակով Շ. Շահամիրյանը թանկարժեք նվերներ էր ուղարկում և անգամ պատրաստակամություն հայտնում տեղափոխվելու Վրաստան:

Վրաց թագավորն իր հերթին Լոռու գավառը նվիրաբերում է Շ. Շահամիրյանին և նրան շնորհում իշխանի տիտղոս: 1790 թ. Հերակլ II–ը Շ. Շահամիրյանի առաջարկով հատուկ ուղերձ է հղում Պարսկաստան քշված հայ ժողովրդին՝ հրավիրելով բնակություն հաստատել Վրաց թագավորության կազմում գտնվող հայաբնակ գավառներում: Այդ ուղերձը 1792 թ. հայերենով տպագրվում է Մադրասում:

Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունները: Հայ ժողովրդի մեջ ազատագրական գաղափարների տարածման, երիտասարդությանը հայրենի երկրի պատմությանն ու մշակույթին ծանոթացնելու համար անհրաժեշտ էր գրականություն ունենալ: Նման գրքեր տպագրելու համար հնդկահայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը ***1771 թ.*** Մադրասում հիմնում է հայկական տպարան: 1772 թ. այդ տպարանում լույս է ընծայվում Մովսես Բաղրամյանի ***«Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»*** գիրքը:

Հայ իրականության մեջ այն առաջին քաղաքական–հրապարակախոսական տպագիր աշխատությունն էր, որը ներկայացնում է XVIII դ. հայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը՝

տոգորված ազատասիրությամբ և հայրենասիրությամբ, ինչը հայ ժողովրդին հորդորում է սթափվել, քանզի միայն զինված պայքարով է հնարավոր թոթափել պարսկական ու թուրքական լուծը:

Գրքում ներկայացվում են հայ ժողովրդի հերոսական անցյալը, նրա աշխարհագրական լայնարձակ սահմանները, և դրան հակադրվում է առկա վիճակը, երբ երկիրը կողոպտվում է օտարների կողմից: Գիրքը կոչ է անում հայ երիտասարդներին օտար բռնակալների լծից զենքի ուժով ազատագրվելու. *«Խիզախությամբ եղեք, եղեք նմանվողներ մեր նախահոր՝ քաջ Արամի որդիներին, որ միգուցե թե այդպիսով կարողանանք վերազտնել մեր հայրենիքն Արարատյան»*: «Նոր տետրակի» մեջ միապետական կարգը համարվում է հայոց պետականության անկման պատճառներից մեկը: Մեկ մարդն ի վիճակի չէ անսխալ կառավարելու, իսկ թագավորի սխալը դժբախտություն է երկրի համար: Ուստի առաջարկվում է ստեղծել սահմանադրություն և երկիրը կառավարել ժողովրդի ընտրովի ներկայացուցիչների միջոցով:

Ստանալով «Նոր տետրակը» և զգուշանալով ապստամբելու կոչերի ազդեցությամբ հայ երիտասարդների կողմից տարերային ու անժամանակ ելույթների և Օսմանյան կայսրության հնարավոր արձագանքի ու պատժիչ գործողությունների վտանգից՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը կարգադրում է հավաքել և այրել այդ գիրքը, փակել տպարանը և հեռացնել Մովսես Բաղրամյանին: Նրա սպառնալիքները, սակայն, չեն կասեցնում գրքի տարածումը:

1786 թ. «Նոր տետրակը» թարգմանվում է ռուսերեն և լույս է տեսնում Պետերբուրգում երկու հազար տպաքանակով, այնուհետև թարգմանվում է նաև վրացերեն:

Շարունակելով «Նոր տետրակի» գաղափարները՝ Մադրասի խմբակի անդամները կազմում և հրատարակում են ***«Որոգայթ փառաց»*** գիրքը: Այն ապագա հայկական պետության կառավարման օրենքների հավաքածու էր, յուրատեսակ «Սահմանադրություն», որը պետք է հիմք ծառայեր ապագա բուն սահմանադրության համար՝ Հայաստանը օտար լծից ազատագրվելուց հետո կիրառելու նպատակով:

Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ «Հայոց տունը», պետք է կազմվեր ժողովրդի կողմից ընտրված փոխանորդներից (պատգամավորներից): Հայաստանում պետք է իշխեր օրենքը: «Հայոց տունը» պարտավոր էր ստեղծել գործադիր իշխանություն (կառավարություն): Այդ նպատակով փոխանորդներից պետք է ընտրվեին տասներեք հոգի, որոնցից մեկը վիճակահանությամբ կարող էր դառնալ նախարար (նախագահ), իսկ մյուսները՝ նախարարի խորհրդակիցներ: Նախարարը լինելու էր օրենքների առաջին կատարողը և զորքի գլխավոր հրամանատարը: Հայաստանի բոլոր բնակավայրերը պետք է ունենային դպրոցներ:

«Որոգայթ փառաց»–ը սահմանադրական հանրապետություն ստեղծելու ծրագիր էր, հայ քաղաքական մտքի կարևոր նվաճումներից մեկը:

Հայաստանի ազատագրության Հարավային (Շահամիր Շահամիրյանի) ծրագիրը: Հայկական պետականությունը վերականգնելու՝ 20 հոդվածից բաղկացած նախագիծ էր կազմել Շահամիր Շահամիրյանը: Այս նախագծով Ռուսաստանի

օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով: Կառավարությունը պետք է գլխավորեր ազգությամբ հայ նախարարը: Հայաստանում 20 տարի ժամկետով պետք է մնար 6-հազարանոց ռուսական զորք: Հայոց պետությունը տարեկան հարկ պիտի վճարեր Ռուսաստանին և անհրաժեշտության դեպքում տրամադրեր նաև զորք: Առաջարկվում էր երկու երկրների միջև սահմանել ազատ երթևեկություն: Հայաստանի կառավարությունը Պետերբուրգում պիտի ունենար իր դեսպանը:

Հովսեփի Արղությանի ծրագրի օրինակով Ծ. Շահամիրյանի նախագիծը ևս ներկայացվել է ռուսական կառավարությանը, սակայն իշխանությունների կողմից երկու ծրագրերն էլ չեն քննարկվել:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայաստանի ազատագրության գործով ինչ քայլեր ձեռնարկվեցին Հնդկաստանում: Ըստ Ծ. Շահամիրյանի՝ ինչպես էր իրականանալու Հայաստանի ազատագրությունը:
2. Ինչ էր բովանդակում «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը: Համառոտ ներկայացրեք «Որոգայթ փառաց» գիրքը: Համեմատեք այն ՀՀ Սահմանադրության հետ: Ներկայացրեք ձեր մոտեցումները:
3. Ներկայացրեք Հայաստանի ազատագրության Շահամիրյանի ծրագիրը: Համեմատեք այն Արղությանի և Սարաֆյանի ծրագրերի հետ: Ձեր կարծիքով այդ ծրագրերից որն է նախընտրելի, որը՝ ավելի իրատեսական:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Հատված «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատությունից

«...Պարսիկները ոչ թե ինչ-որ քաջությամբ և ոչ էլ բնավ բռնությամբ մտան նրանց [Արցախի մելիքների] սահմանները, այլ [նրանք իրենք] պարսից իշխանին մտցրին իրենց երկիրը՝ հրապուրված սրանց հատուկ խորամանկ պատրանքներով, և այն օրվանից մինչև հիմա նա տիրում է իրենց: Բայց նրանք այն վիճակում չեն, ինչպես որոշ տեղերում մեր ազգակիցներից ոմանք, որոնք բացարձակապես հպատակ են դարձել, այլ տակավին փրկության հույս ունեն: Թեև նրանց տիրել է ուրիշը, սակայն սա [պարսիկը] առանց նրանց [հայ իշխանների] բան չի կարող անել, որովհետև ամեն ծառայություն մեր ազգի ձեռքին է, ինչ էլ կամենա, նրանց միջոցով է գլուխ բերում. հարկ է թե մաքս՝ նրանցից է հանում, նրանցով է պաշտպանվում, նրանցով է պատերազմում թշնամիների դեմ ու նրանցով է հասնում հաղթանակի. ամեն ինչ կատարում է նրանց միջոցով, մինչև իսկ նրա ապարանքի մշտական պահապանները կամ հսկիչները և սենեկապետները հայեր են, իսկ նրա զորքի զինվորները գլխավորապես հայ ազգից են: Ուստի վերոհիշյալ այդ իշխանների համար, եթե կամենան, դժվար չէ, այլ շատ հեշտ է մեջտեղից վերացնել պարսիկ իշխանին կամ վտարել ու հալածել իրենց սահմաններից և հարկերից ազատ լինել, ինչպես որ իրենցից սակավ ժամանակ առաջ իրենց նախնիներն էին, որոնք, ըստ ամենայնի, ունեին ամեն կարգի ընդարձակ ազատություն:

Ասացինք, որ այդ բանին նրանք հեշտ կարող են հասնել, բայց վերոհիշյալ մեր իշխանները մինչև մի սիրտ, մի հոգի և մի կամք դարձած չմիաբանվեն, հեշտ չի լինի...»:

«Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», Մադրաս, 1772 (հմմտ.՝ Երևան, 1991, էջ 103-104)

§ 8. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ

Պետականության բացակայության պայմաններում հայ ժողովրդի տարաբնակ հատվածները համախմբող կառույցը Հայոց եկեղեցին էր: Հայոց կաթողիկոսի հոգևոր հեղինակությունն ու աշխարհիկ իրավասություններն ընդունում էին նաև օտար գահակալները՝ մեծարելով նրան «խալիֆա» անվանումով: Հայոց եկեղեցին և Ամենայն հայոց կաթողիկոսը ոչ միայն պայքար էին մղում եկեղեցու միասնության, օտար դավանանքներից և աղանդներից հայ ժողովրդին զերծ պահելու համար, այլև ջանում էին հնարավոր քայլերի դիմել օտար տիրապետության պայմաններում հայ բնակչության տնտեսական ու իրավական շահերը պաշտպանելու ուղղությամբ:

XVIII դ. հայոց կաթողիկոսները (***Աստվածատուր Համադանցի, Աբրահամ Կրետացի*** և այլք) բազմիցս պահանջել են պարսից տիրակալներից հայ բնակչության մեջ մահմեդականություն ընդունած անձնավորություններին զրկել իրենց հարազատների ունեցվածքն առաջնահերթ ժառանգելու իրավունքից, որը հայտնի էր ***«Իման Ջաֆարի օրենք»*** անվանումով: Իսկ Աբրահամ Կրետացի կաթողիկոսի միջնորդությամբ պարսից տիրակալ Նադիրը չեղյալ է հայտարարել Թիֆլիսի հայերի մի մասին Խորասան տեղափոխելու վերաբերյալ իր իսկ հրամանը:

Նվիրված լինելով հայրենիքի և հայ ժողովրդի ազատության գործին՝ Հայոց եկեղեցու նշանավոր առաջնորդները միաժամանակ շրջահայաց քաղաքականությամբ ձգտում էին հոգալու և ապահովելու հայ բնակչության անվտանգությունն օտար հարձակումներից: Երևանի խանի կողմից Հերակլ II թագավորի նամակատարի ձերբակալման և նամակի բովանդակության հրապարակման առիթով ***Սիմեոն Երևանցի*** կաթողիկոսը մեղադրում և նախատում է Հերակլ թագավորին հայ բնակչության անվտանգության նկատմամբ անհոգության համար: Այդ է պատճառը, որ առանց անհրաժեշտ նախապատրաստության՝ Սիմեոն Երևանցին վտանգավոր է համարում ազատագրական պայքարի մասին լուրերի տարածումը և հայության վաղաժամ ապստամբությունը:

XVIII դ. իրատեսորեն գնահատելով տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը՝ Հայ եկեղեցու առաջնորդները հայոց ազատագրական պայքարի հնարավոր դաշնակից էին համարում հզորացող Ռուսաստանին, ուստի և փորձում էին ռուսական արքունիքի հետ հարաբերությունների հաստատումով նախադրյալներ ստեղծել Հայաստանի ազատագրության գործում օժանդակություն ստանալու համար:

1766 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից ռուսաց արքունիք ուղարկված դեսպանության շնորհիվ սկիզբ են առել ռուսական արքունիքի և Ամենայն հայոց կաթողիկոսարանի միջև պաշտոնական հարաբերությունները: Ստանալով Եկատերինա II կայսրուհու և կանցլեր Պանինի դրական պատասխանը՝ Սիմեոն Երևանցին մահմեդական շրջափակման պայմաններում համարձակորեն սահմանում է ռուսաց արքունիքին նվիրված ժամերգություն՝ ընդգծելու Ռուսաս-

տանի կողմից հայերին սատարելու իր ակնկալիքը:

Հայոց կաթողիկոսն իր ժողովրդի անվտանգության մտահոգությամբ դատապարտում էր աշխարհիկ իշխողներին՝ տարածաշրջանում օտար դավանանքների ներթափանցման դեմ նրանց կողմից անբավարար պայքարի, հանդուրժողականության կամ անտարբերության համար: Նա հաճախ միջնորդի դեր էր ստանձնում աշխարհիկ գահակալների միջև ռազմաքաղաքական հակամարտությունների և պատերազմական գործողությունների ընթացքում: Այսպես՝ 1765 թ., երբ Հերակլը մեծ բանակով ներխուժում է Արարատյան դաշտ՝ հարկի վճարումից խուսափելու համար Երևանի խանին պատժելու նպատակով Սիմեոն Երևանցուն հաջողվում է, միջնորդի դեր ստանձնելով, Երևանի խանից պարտավորություն կորզել հարկի վճարումը շարունակելու վերաբերյալ: Այդպիսով կանխվում է վրաց բանակի կողմից Արարատյան դաշտի հայկական գյուղերի բնակչության կողոպուտն ու հետագա հնարավոր արյունահեղությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ դեր էր ստանձնել Հայոց եկեղեցին պետականության բացակայության պայմաններում: Օտար տիրակալներն ինչ անունով էին մեծարում հայոց կաթողիկոսին:
2. Հայ եկեղեցու միասնությանը սպառնացող ինչ վտանգներ կային. եկեղեցին ինչ միջոցներով էր պայքարում դրանց դեմ:
3. Ինչո՞ւ էր Սիմեոն Երևանցին մեղադրում Հերակլին: Հիմնավորե՛ք Սիմեոն Երևանցու դիրքորոշման արդարացիությունը: Թվարկե՛ք Հայաստանի ազատագրության գործում XVIII դարում ներդրում ունեցած հայ հոգևորականների: Ինչ գիտեք նրանց մասին:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

§ 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Վարչաքաղաքական իրավիճակը: XIX դ. սկզբի դրությամբ Հայաստանը շարունակում էր մնալ բաժանված Օսմանյան կայսրության և Իրանի (Պարսկաստան) միջև: Այդ ժամանակ Արևելյան Հայաստանը և Այսրկովկասի մնացած տարածքները մասնատված էին ավատատիրական կիսանկախ մանր իշխանությունների: Արևելյան Հայաստանի մեծագույն մասը ենթակա էր շահական Իրանին և կազմում էր ***Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Գանձակի*** և ***Մակուի*** խանությունների տարածքը: Արևելյան Այսրկովկասի պարսկահպատակ Ղուբայի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի և Թալիշի խանություններում զգալի թիվ էին կազմում հայերը: Արևելյան Վրաստանն ընդգրկող Քարթլի–Կախեթի թագավորության սահմաններում էին Հայաստանի հյուսիսային մի քանի գավառներ՝ Լոռին, Փամբակը,

Շամշադինը, Ղազախի հարավային մասը (այժմյան Իջևանի շրջանը):

Երևանի խանությունը, որը հիմնականում ներառում էր Արարատյան դաշտն ու նրա հարակից շրջանները, բաժանված էր 15 գավառների՝ մահալների: Նրա կառավարիչ ***սարդարը*** (զորագլուխ, զորահրամանատար) օժտված էր ռազմավարչական մեծ իշխանությամբ և պարսից շահի հրամանով պիտի հսկեր նաև հարևան խանությունների կառավարիչների գործողությունները: Մահալների կառավարումը երբեմն իրականացնում էին հայ մելիքները: Որոշ ժամանակ Երևան քաղաքի հայ բնակչության կառավարումը եղել է ***մելիք Աղամալյանների*** ձեռքում:

Նախիջևանի խանությունը կազմված էր 10 մահալներից: Ղարաբաղի խանությունը զբաղեցնում էր պատմական Արցախի տարածքը և Ջանգեզուրի զգալի մասը: Երբեմնի Խամսայի հայկական ինքնիշխան մելիքությունների սահմաններում ձևավորված այս վարչամիավորը գերազանցապես հայաբնակ էր: Այստեղ հայ մելիքները շարունակում էին պահպանել իրենց ազդեցությունը:

Արևելյան Հայաստանում հողերը պետական, մասնավոր և եկեղեցական էին: Գյուղացիները, որ շարունակում էին ապրել գյուղական համայնքներով, բազմաթիվ հարկեր էին մուծում պետությանը, կալվածատերերին և մահմեդական ու հայ հոգևորականությանը: Նրանք պարտավոր էին կատարել նաև զանազան պարհակներ: Հայ բնակչությունը ենթարկվում էր ազգային, կրոնական ու սոցիալական դաժան հալածանքների:

Այդուհանդերձ, հայության առանձին խավեր որոշակի արտոնություններ ունեին: Հայ մելիքները, մեծահարուստները պահպանում էին իրենց արտոնությունները, իսկ պարսկական բանակում, այդ թվում՝ շահական և խանական թիկնազորներում, կար հայ զինվորականություն, որի նկատմամբ պարսկական իշխանությունները հատուկ վստահություն էին տածում:

Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերն էին բամբակագործությունը, հացահատիկի ու բրնձի մշակությունը, այգեգործությունը, խաղողագործությունը, անասնապահությունը: Արհեստագործության և առևտրի կենտրոններ էին Երևանը, Նախիջևանը, Շուշին: Միևնույն մասնագիտությամբ արհեստավորները միավորվում էին համքարություններում:

Երկրում ստեղծված անտանելի պայմանները հարկադրում էին հայերին ինչպես առանձին ընտանիքներով, այնպես էլ զանգվածաբար արտագաղթել այլ երկրներ: Հատկանշական է, որ Երևանի ու Նախիջևանի խանությունների ավելի քան հազար բնակավայրերի մոտ մեկ երրորդն ամայի ու անմարդաբնակ էր: Պարսկական իշխանություններն անընդհատ արտագաղթող հայերի բնակավայրերը բնակեցնում էին քոչվոր մահմեդական ցեղերով:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման սկիզբը: Հայ ազատագրական շարժման գործիչների մոտ գնալով ամրապնդվում էր այն մոտեցումը, որ միայն հարևան Ռուսաստանն է այն իրական ուժը, որի օգնությամբ քաղաքականապես երկփեղկված հայ ժողովուրդը կկարողանա ազատագրվել օտար տիրապետությունից, վերականգնել իր պետականությունը կամ ձեռք բերել ինքնավարություն:

XIX դ. սկզբին Ռուսաստանյան կայսրությունը, օգտագործելով Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների, առաջին հերթին՝ հայերի ազատագրական ձգտումները, փորձեց գործնականորեն իրականացնել երկրամասը գրավելու իր վաղեմի քաղաքական ծրագիրը:

1801 թ. ռուսական արքունիքը Քարթլի–Կախեթի թագավոր Գեորգի XII–ի մահվանից հետո թույլ չտվեց թագաժառանգի գահակալումը և Արևելյան Վրաստանը բռնակցեց Ռուսաստանին: Վրաց թագավորության հետ Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև հայկական գավառներ Լոռի–Փամբակը, Շամշադինը, Իջևանը:

Դարասկզբին Էջմիածնի կաթողիկոսական գահի շուրջ պայքար սկսեցին միաժամանակ կաթողիկոս հռչակված Դավիթ ու Դանիել եպիսկոպոսները: Ռուսական կառավարությունը, հասկանալով ամբողջ Անդրկովկասը խաղաղ ճանապարհով նվաճելու իր մտադրությունների համար հայոց կաթողիկոսի ազդեցության նշանակությունը, միջամտեց խնդրին և պաշտպանության տակ առավ ռուսական կողմնորոշում ունեցող Դավիթ կաթողիկոսին: Այդ հանգամանքն ավելի սրեց ռուս–պարսկական հարաբերությունները:

Պարսկաստանը ոչ միայն չէր հաշտվել Այսրկովկասում ռուսական ազդեցության տարածման հետ, այլև ձգտում էր Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս մղելու ռուսներին:

Վրաստանում տեղակայված ռուսական զորքերը գեներալ Պ. Ցիցիանովի հրամանատարությամբ 1804 թ. սկզբին դիմում են ռազմական գործողությունների և շեշտակի գրոհով գրավում Գանձակը (Գյանջա): Սկսվում է ռուս–պարսկական պատերազմը (1804–1813 թթ.): ***Հունիսի 10-ին*** ռուսները Փոքր Ղարաքիլիսա (այժմ՝ Ազատան) գյուղի մոտ հաղթանակ են տանում գերակշիռ պարսկական ուժերի նկատմամբ: Այդ հաղթանակի շնորհիվ գերությունից ազատվում է 400 հայ ընտանիք, և բացվում է ճանապարհը դեպի Արևելյան Հայաստանի ամենաուժեղ ամրոց՝ Երևանի բերդ:

Հունիսի վերջին Էջմիածնի մոտ պարսից գահաժառանգ Աբաս–Միրզայի ուժերը պարտություն են կրում ռուսական զորքերից: Սակայն շուտով պարենամթերքի պակասը, համաճարակային հիվանդությունների տարածումը և Օսիայում սկսված ապստամբության հետևանքով Հյուսիսային Կովկասից կտրվելու վտանգը ստիպում են Ցիցիանովին դադարեցնել Երևանի պաշարումն ու վերադառնալ Թիֆլիս:

1805 թ. ռուսական զորքերը վերսկսում են հարձակումը և գրավում ***Շորագյալի (Շիրակ)*** կենտրոն Արթիկը: Շիրակն անցնում է Ռուսաստանին: Չկարողանալով դիմադրել՝ նույն թվականին ***Ղարաբաղի խանությունը*** ևս հանձնվում է Ռուսաստանին:

Ռուսների ռազմական հաջողություններն անհանգստացնում են Ֆրանսիային, Անգլիային և Օսմանյան կայսրությանը, որոնք ձգտում են ընդհանուր դաշինք ստեղծելու Ռուսաստանի դեմ: Երկուստեք ծավալված դիվանագիտական պայքարը 1806 թ. վերջին հանգեցնում է ռուս–թուրքական պատերազմի (1806–1812 թթ.): Հաջորդ տարում պարսիկներն ու թուրքերը միաժամանակյա գործողություններ են ծավալում ռուսական զորքերի դեմ, սակայն հաջողություններ չեն ունենում:

1808 թ. սեպտեմբերին նոր գլխավոր հրամանատար գեներալ Ի. Գուդովիչի զորքերը երկրորդ անգամ արշավում են Երևանի վրա: Նոյեմբերին ձեռնարկված գրոհներին լավ նախապատրաստված լինելով՝ պարսիկները կատաղի դիմադրություն են ցույց տալիս և հետ մղում ռուսների գրոհները:

Հայերը 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմում: XIX դ. սկզբին Անդրկովկասի համար մղված պատերազմներում հայությունը հայտնվել էր երկընտրանքի առջև: Տեղի հայերի մի մասը ծառայում էր պարսկական զորքերում, մյուսները օտար լուծը թոթափելու հույսով միացել էին քրիստոնյա ռուսներին, և նրանք դատապարտված էին մարտնչելու իրար դեմ: Բայց հայության մեծ մասը, անշուշտ, հակվել էր դեպի ռուսներին օգնելու դիրքորոշումը: Ուստի հայությունը Ռուսաստանի հաջողությունների մեջ ունեցավ ծանրակշիռ ներդրում:

Հայերի ստեղծած աշխարհազորային ջոկատներն և՛ ինքնապաշտպանական մարտեր էին մղում իրենց բնակավայրերի համար, և՛ մասնակցում էին ռազմական գործողություններին:

Ռուսական զորակազմին մեծ օգնություն է ցույց տալիս Գյուլիստանի մելիք Աբովի որդու՝ ***Ռոստոմ (Ռոստամ)*** բեկի գլխավորած հայկական հեծյալ ջոկատը: Հայ աշխարհազորայիններից շատերն ընկնում են անհավասար մարտում, իսկ գերված Ռոստոմը մահապատժի է ենթարկվում Աբաս-Միրզայի հրամանով: Սպանված որդուն փոխարինում է ծերունազարդ հայրը՝ մելիք Աբովը:

Պարսիկ հրոսակախմբերի դեմ Բորչալուում, Ղազախում և Շամշադինում հերոսաբար մարտնչում էր ***Գրիգոր վարդապետ Մանուչարյանի*** գլխավորած 500-հոգանոց հեծյալ ջոկատը, որը որոշակի դեր խաղաց հայկական գյուղերը պարսկական հարձակումներից պաշտպանելու գործում: Մանուչարյանի ջոկատը մասնակցեց Գանձակի գրավմանը, երևանյան երկու արշավանքներին: Անվեհեր հոգևորականը պարգևատրվում է Գեորգիևյան 4-րդ աստիճանի խաչով և այլ շքանշաններով, նրա համար սահմանվում է տարեկան ռոճիկ:

Հայերից շատերը ռուսական զորքերին օժանդակում էին որպես ռազմական հետախույզներ ու կապավորներ: Հայ սուրհանդակներից իրենց համարձակությամբ ու խիզախությամբ Արցախում աչքի են ընկնում հարյուրապետ մելիք ***Վանի*** և ***Հակոբ Աթաբեկյան*** եղբայրները: Ցուցաբերած մեծ ծառայության համար Վանի Աթաբեկյանն արժանանում է շնորհակալության և գեներալ Ցիցիանովից ստանում նրա անձնական արծաթե ժամացույցը:

Երևանը պաշարած ռուսներին պարենով զգալի օգնություն է ցույց տալիս հայ գյուղացիությունը: Սայր աթոռը նրանց անհատույց տրամադրում է մեծ քանակությամբ հացահատիկ, ալյուր, ձավարեղեն և այլ մթերքներ:

Ռուսական զորքերին հայության ցույց տված այդ օգնությունը պետք է դիտել որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի արտահայտություններից մեկը. ազատության համար մարտնչող հայ ժողովուրդը տակավին լուրջ ակնկալիքներ ուներ Ռուսաստանից և ձգտում էր օտարների դեմ իր մղած պայքարը միաձուլելու ռուսական զենքի հաղթանակին:

Գյուլիստանի հաշտությունը: 1812 թ.՝ թուրքերի հետ հաշտություն կնքելուց և Նապոլեոնին ջախջախելուց հետո, ռուս-

ներն Այսրկովկասում պարսիկների դեմ անցնում են հարձակման: Աբաս–Միրզան Ղարաբաղում, Լենքորանում, Ասլանդուզում և Մեղրիում ծանր պարտություն է կրում, և պարսիկները հարկադրված ***1813 թ. հոկտեմբերի 12–ին*** Արցախի Գյուլիստան գյուղում կնքում են հաշտության պայմանագիր: Իրանը հրաժարվում է Արևելյան Վրաստանից, Դաղստանից և այսրկովկասյան մի շարք խանություններից: Ռուսաստանին է անցնում Արևելյան Հայաստանի մի զգալի հատված՝ Լոռի–Փամբակը, Շամշադինը, Գանձակը, Ղարաբաղը, Շիրակը: Երևանի և Նախիջևանի խանությունները շարունակում են մնալ պարսկական տիրապետության տակ:

Մինչև Արաքս գետն իր սահմաններն ընդարձակելու ռուսական արքունիքի ծրագիրը մնում է օրակարգում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական իրավիճակը: Այսրկովկասի ո՞ր երկրամասերում էին զգալի թվով հայեր ապրում: Հողատիրության ի՞նչ տեսակներ կային: Տնտեսության ո՞ր ճյուղերում էր զբաղված արևելահայությունը:
2. Անդրկովկասի նկատմամբ ի՞նչ նպատակներ ուներ Ռուսաստանը: Հայկական ի՞նչ գավառներ անցան Ռուսաստանին և ինչպե՞ս:
3. Ի՞նչ գիտեք Դավիթ և Դանիել եպիսկոպոսների վեճի մասին:
4. Ներկայացրեք հայերի մասնակցությունը 1804–1813 թթ. ռուս–պարսկական պատերազմին: Ի՞նչ ակնկալիքներ ունեին հայերը Ռուսաստանից:
5. Ի՞նչ ընթացք և ավարտ ունեցան ռուսական զորքերի երևանյան առաջին և երկրորդ արշավանքները: Ե՞րբ և ի՞նչ պայմաններով կնքվեց Գյուլիստանի հաշտության պայմանագիրը:

§ 2. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Վարչաժողովրդագրական իրավիճակը: Մեր հայրենիքի մյուս մեծ հատվածի՝ Արևմտյան Հայաստանի տարածքը XIX դ. սկզբին պարսկական սահմանից ձգվում էր մինչև պատմական Փոքր Հայք՝ Անտիտավրոսի լեռներ, հարավում՝ Հյուսիսային Միջագետք, հյուսիսում՝ Պոնտական լեռներ: Այն բաժանված էր Էրզրում (Կարին), Ախալցխա, Կարս, Վան, Դիարբեքիր և Սեբաստիա էյալեթների (նահանգ): Հայաշատ նահանգներ էին նաև Տրապիզոնը, Կեսարիան, Մալաթիան, Մարաշը, Ադանան, Ուրֆան և այլն: Էյալեթները բաժանվում էին սանջակների (գավառ):

Օսմանյան տերության արևելյան վարչամիավորների մեջ իր ընդարձակ տարածքով և ռազմաքաղաքական նշանակությամբ առանձնանում էր ***Էրզրումի*** նահանգը: Նահանգի կառավարիչ փաշան՝ վալին, որ համատեղում էր կայսրության արևելյան մարզերի զորքերի հրամանատարի՝ սերասկյարի պաշտոնը, կրում էր Հայաստանի կառավարչի տիտղոսը: Այս նահանգի մոտ հազար բնակավայրերում ապրում էր ավելի քան 400 հազար հայ: Կարին քաղաքում ապրում էր 27 հազար հայ:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ



Ախալցխայի նահանգը հյուսիս–արևմուտքում տարածվում էր մինչև Ջավախք գավառի Փարվանա լիճը և պարսկական տերության սահմանները՝ Շորագյալի սուլթանություն: Նախորդ դարերում հյուսիսկովկասյան լեռնականների հարձակումների, քրիստոնյաների կոտորածների, արտագաղթերի ու բռնագաղթերի, համաճարակների, զանգվածային մահմեդականացման հետևանքով այստեղ բնակչությունը նկատելիորեն նվազել էր:

Ախալցխայի նահանգից հարավ ընկած էր Արևմտյան Հայաստանի ամենափոքր նահանգը՝ ***Կարսի*** էյալեթը: Նրա հինգ սանջակներից ամենախիտ բնակեցված գավառը Կարսն էր: Վանի ընդարձակ էյալեթը հիմնականում ընդգրկում էր պատմական ***Վասպուրական, Մոկս*** և ***Տուրուբերան*** նահանգները: Վան քաղաքում ապրող մոտ 15 հազար հայեր զբաղվում էին ոսկերչությամբ, ջուլհակությամբ և այլ արհեստներով:

Արևմտյան Հայաստանի հարավ–արևմուտքում Աղձնիք և Ծոփք նահանգների տարածքն էր զբաղեցնում Դիարբեքիրի էյալեթը: Այն առավել մեծ չափերով էր ենթարկվել հարավից քրդական ցեղերի մշտական ներթափանցումներին: Հայաստանի արևմտյան մասում էր տարածվում Սեբաստիայի (Սվազ) ընդարձակ նահանգը:

XIX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում և հարակից նահանգներում, բացի քրիստոնյա հայերից, մեծ թիվ էին կազմում նախորդ դարերում մահմեդականացված հայերը: Նրանց զգալի մասին շարունակում էին կոչել «***կեսկեսներ***», այսինքն՝ կեսհայ–կեսմահմեդական: Նրանց ձնշող մեծամասնությունը չէր մոռացել ինչպես մայրենի լեզուն, այնպես էլ քրիստոնեական կրոնը: Այդպիսի բնակչություն կար Պոնտական լեռների լանջերին ձգվող Համշեն կիսանկախ գավառում, Բաբերդում, Սպերում, Երզնկայում և այլ վայրերում:

Ամբողջ Օսմանյան կայսրությունում ապրող մոտ 3 մլն հայերի (այդ թվում՝ «կեսկեսները») մեծ մասը (ավելի քան 2 մլն) բնակվում էր Արևմտյան Հայաստանում, մնացածը՝ Կ. Պոլսում, Կիլիկիայում և Փոքր Ասիայում: Սակայն հետզհետե ուժեղանում էր թյուրքալեզու և քրդալեզու ժողովուրդների ներհոսքը, ինչը հանգեցնում էր բուն հայրենիքում հայերի տեսակարար կշռի նվազմանը:

Ազգային և կրոնական հալածանքները: Հայերը և քրիստոնյա այլ ժողովուրդներ ազգային ամենաբիրտ ճնշումների, ազգային արժանապատվության ոտնահարման, ֆիզիկական բնաջնջման մշտական վտանգի պայմաններում էին: Բարձր դուռը հրապարակել էր մի օրենք, որը մահապատիժ էր նախատեսում մահմեդականացած բոլոր այն քրիստոնյաների համար, ովքեր կփորձեին վերադառնալ իրենց նախկին կրոնին: Պահպանվում էր «ղշլաղության» հայտնի համակարգը, որը թույլատրում էր կիսաքոչվոր քրդերին ձմեռելու հայկական գյուղերում: Հայ գյուղացին պարտավոր էր կերակրել քրդերին ու նրանց բազմաքանակ ոչխարների հոտերը:

Սուլթանական Թուրքիան շարունակում էր մնալ որպես հետամնաց ագրարային երկիր: Պահպանվում էին կայսրության ստեղծման ժամանակներից հայտնի հողատիրության ձևերը, հարկային քաղաքականության հնամենի սկզբունքները: Ոչ մահմեդական ժողովուրդների հողերը հայտարարված էին նվաճված հո-

ղեր և օգտագործողներին տրվում էին միայն ժամանակավորապես՝ պայմանական իրավունքով:

Հայկական կիսանկախ իշխանությունները: Օսմանյան Թուրքիայում առանձին կառավարիչներ, օգտվելով տեղերում սուլթանական կառավարության ազդեցության հետագա թուլացումից, ստեղծել էին կիսանկախ իշխանություններ: Դրանց միջև ընթացող միջցեղային բախումներից մեծապես տուժում էր հայ բնակչությունը:

Թուրքական կայսրության վարչական նման համակարգի պայմաններում որոշակի ինքնուրույնություն էին ձեռք բերել հայկական կիսանկախ իշխանությունները, որոնք անթեղված ձևով իրենց մեջ ***պահպանում էին հայկական պետականության մի շարք հատկանիշներ:*** Արևմտյան Հայաստանի տարածքում դեռ միջնադարից իրենց ինքնիշխանությունը պահպանող համայնքների մեջ առանձնանում էր ***Սասուն լեռնագագաթը:*** Այստեղի կիսանկախ իշխանության գլուխ շարունակում էին մնալ տեղի իշխանական տների շառավիղները:

Հայկական ազդեցիկ իշխանապետություններից էին նաև ***Մոկքը*** և ***Շատախը:*** Այստեղ վարչական և դատական ողջ իշխանությունը հայերի ձեռքում էր, որոնք արիաբար մարտնչում էին ոչ միայն իրենց գավառի, այլև ամբողջ Մոկսի նկատմամբ քուրդ բեյերի ոտնձգությունների դեմ՝ պահպանելով իրենց ազատությունը: Հայկական կիսանկախ իշխանություններ կային նաև ***Խնուսում, Մանազկերտում*** և այլուր:

Կիլիկիայում համայնքային ներքին ինքնավարությամբ աչքի էին ընկնում լեռնային Զեյթունի (Ուլնիա) մոտ 30 հայկական գյուղեր՝ շուրջ 28 հազար հայ բնակչությամբ: Այստեղի իշխանական տների՝ ***Յաղուբյանների, Սարենպանցների, Նորաշխարհիկանների (Ենի-Տունյաններ)*** և ***Շովրոյանների*** գլխավորությամբ թուրքական իշխանությունների դեմ պայքարը գրեթե միշտ պսակվում էր հաջողությամբ: Զեյթունցիները հաճախ հրաժարվում էին նաև հարկեր վճարելուց և ապստամբում էին:

Հայկական կիսանկախ իշխանությունները կորսված համահայկական պետականության յուրահատուկ դրսևորումներն էին: Բարենպատ քաղաքական պարմանների դեպքում դրանք կարող էին դառնալ հայկական պետականության վերաստեղծման հիմք:

1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը: XIX դ. սկզբին Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում իր տիրապետությունն ամրապնդելու ռուսական ծրագիրը սրեց նաև ռուս-թուրքական հարաբերությունները: Օսմանյան վտանգը չեզոքացնելու նպատակով ռուսական արքունիքը գործողության մեջ դրեց Ախալցխայի և Կարսի նահանգների նվաճման իր ծրագիրը: Պարսկաստանի դեմ տարած հաղթանակներից ոգևորված՝ 1806 թ. դեկտեմբերին ռուսները մարտական գործողություններ են սկսում նաև Թուրքիայի դեմ: Սկսվում է ռուս-թուրքական պատերազմը (1806–1812 թթ.):

Գեներալ Ի. Գուդովիչի զորքերը 1807 թ. մայիսի սկզբին Փարվանա լճի մոտ անցնում են ռուս-թուրքական նոր սահմանագիծը և պաշարում լավ ամրացված Ախալքալաքի բերդը: Տեղի կայազորը կատաղի դիմադրություն է ցույց տալիս՝ ռուսներին պատճառելով մեծ կորուստներ:

Սակայն ***հունիսի 18-ին*** Ախուրյանի ափին՝ ***Փոքր Ղարաքիլիսա*** գյուղի մոտ, ռուսական 7-հազարանոց զորքը հաղթանակ է տանում Էրզրումի սերասկյար Յուսուֆ փաշայի 20-հազարանոց զորախմբի նկատմամբ:

1810 թ. ռուսները վճռում են գրավել փաշայանիստ Ախալցխա քաղաքը, որն Անդրկովկասում ռուսական տիրապետության դեմ թուրքերի և վարձկան լեզգիների պայքարի գլխավոր հենակետերից էր: Նոյեմբերի սկզբին, գրեթե առանց լուրջ դիմադրության, տեղի հայերի ու վրացիների գործուն աջակցությամբ ռուսական զորքերն արագորեն գրավում են փաշայության տարածքի զգալի մասը: Սակայն զորքի մեջ սկսված համաճարակը հրամանատար գեներալ Տորմասովին ստիպում է դադարեցնել քաղաքի պաշարումը: Ռուս գեներալն իր կրած անհաջողությունը փորձում է «փոխհատուցել» յուրովի. Ախալցխայի գավառը ենթարկվում է սարսափելի թալանի: Չբավարարվելով նաև իրենց օժանդակած քրիստոնյաների կողոպուտով՝ ռուսական զորքերն ու նրանց ուղեկցող վրաց-մեգրելական աշխարհազորն Ախալցխայի նահանգի 1500 ընտանիքների, այդ թվում՝ քրիստոնյա հայերի ու վրացիների՝ իրենց 50 հազար անասուններով, տեղահան են անում և բռնագաղթեցնում Վրաստան: Այդ դեպքերի հետևանքով ավելի է նվազում Ախալցխայի և Ախալքալաքի տեղաբնիկ հայության թվաքանակը:

1811 թ. դեկտեմբերին ռուսական զորքը կտրուկ գրոհով գրավում է անառիկ համարվող Ախալքալաքի բերդը, ապա նաև ամբողջ գավառը:

Կովկասյան և Բալկանյան ճակատներում ռուսների տարած հաղթանակները հանգեցնում են ***1812 թ. մայիսի 16-ին Բուխարեստում*** հայ դիվանագետ ***Մանուկ բեյ Միրզայանի*** միջնորդությամբ հաշտության կնքմանը: Ռուսական արքունիքը, բանակցություններում նախապատվությունը տալով բալկանյան տարածքների միացմանը, թուրքերին հանձնեց Ախալքալաքի գավառը և Անդրկովկասում գրաված այլ տարածքներ: Այդ զիջումն արվեց՝ առանց հաշվի առնելու հայ բնակչության շահերը: Դժբախտաբար, նախապատվությունը եվրոպական խնդիրներին տալու, հայկական շահերը երկրորդելու նման գործելակերպը պահպանվեց նաև հետագա ռուս-թուրքական պատերազմների ժամանակ:

Ինչպես Բուխարեստի, այնպես էլ Գյուլիստանի պայմանագրերով Թուրքիային և Պարսկաստանին մնացած տարածքների, մասնավորապես Երևանի խանության, Ախալցխայի և Կարսի էյալեթների հայության մի զգալի մասը թուրքական վրեժխնդրությունից խուսափելու նպատակով բռնում է ռուսական նորահաստատ սահմաններն անցնելու դժվարին ճանապարհը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Արևմտյան Հայաստանի վարչաժողովրդագրական պատկերը XIX դարասկզբին: Ովքե՞ր էին «կեսկեսները»: Որքա՞ն հայ էր ապրում Օսմանյան կայսրությունում:
2. Ի՞նչ վիճակում էին թուրքահպատակ քրիստոնյաները. նրանց նկատմամբ ի՞նչ քաղաքականություն էր վարվում:

3. Հայկական կիսանկախ ինչ իշխանություններ կային. ինչպես էր արտահայտվում նրանց ինքնավարությունը:
4. Ներկայացրեք 1806–1812 թթ. ռուս–թուրքական պատերազմի սկիզբն ու ընթացքը: Երբ և որ պայմանագրով այն ավարտվեց: Ինչ հետևանքներ ունեցավ այս պատերազմը:

§ 3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՆՈՐ ՓՈՒԼԸ

Արևելյան Հայաստանը և ռուս–պարսկական նոր պատերազմի սկիզբը: Պարսկական արքունիքն ամեն կերպ ձգտում էր վերադարձնելու Գյուլիստանի պայմանագրով կորցրած տարածքները և Անգլիայի աջակցությամբ ռուսներին առհասարակ դուրս մղելու տարածաշրջանից: Գահաժառանգ Աբաս–Միրզան 60–հազարանոց բանակով ***1826 թ. հուլիսին*** ներխուժում է Ղարաբաղ և պաշարում Շուշիի բերդը: Միաժամանակ Երևանի խանի զինված ուժերը ներխուժում են Շիրակի և Փամբակի գավառները: Այսպես սկսվեց ռուս–պարսկական նոր պատերազմը (1826–1828 թթ.):

Անակնկալ հարձակմամբ պարսկական բանակներին հաջողվում է գրավել Գանձակ, Շամախի, Նուխի քաղաքները, Շորագյալ–Փամբակի մի մասը: Ռուսական հրամանատարությունը հարկադրված դիմում է պաշտպանության և ապավինում հայկական աշխարհազորային ջոկատների աջակցությանը: Այդ օրերին Ղազախ–Շամշադինում կրկին մարտական գործողությունների մեջ էր մտել փորձառու Գրիգոր Մանուչարյանի փառապանծ հեծյալ ջոկատը: Լոռի–Փամբակում սկսել էին գործել ***Մարտիրոս Վեքիլյանի*** աշխարհազորայինները:

Շուշիի ռուսական կայազորը և շրջակայքի հայկական 22 գյուղերից օգնության եկած 1500 աշխարհազորայիններն ավելի քան մեկուկես ամիս հերոսաբար դիմադրում են Աբաս–Միրզայի մեծաքանակ բանակին: Բերդի պաշտպանության գործում հայերի ունեցած դերի մասին կայազորի պետ գնդապետ Ռեուտը կովկասյան ռուսական զորքի հրամանատար գեներալ Երմոլովին գրում է. «*Ամրոցը պաշտպանող հայերի մասին պարտքս եմ համարում հայտնել, որ նրանց մատուցած ծառայությունն արժանի է ուշադրության, քանզի նրանք բոլորը գործում էին գերազանց քաջությամբ, դիմանում էին հակառակորդի բազմաթիվ գրոհներին ու մեծ կորուստներ պատճառելով՝ նրանց հետ էին շարտում, արհամարհում պարենի պակասը և ոչ մի անգամ չէին մտածում ամրոցի հանձնման մասին, նույնիսկ երբ վրա էր հասել բացարձակ սովը*»:

1826 թ. աշնանից պատերազմը թևակոխում է իր երկրորդ շրջափուլը, որը նշանավորվում է ռուսական զորքերի հաղթանակներով: ***Սեպտեմբերի 3–ին*** հայազգի գեներալ ***Վալերիան (Ռոստոմ) Մադաթովի*** 2000–անոց զորագունդը Շամքոր գետի ափին ջախջախում է Ամիր խանի 10 000–անոց բանակը և հետ գրավում Գանձակը:

Սեպտեմբերի 13–ին Գանձակի (Ելիզավետպոլ) մոտ տեղի է ունենում ավելի մեծ ու վճռական ճակատամարտ: Գեներալ Ի. Պասկևիչի գլխավորած 8000–անոց զորքը ջախջախիչ հարված է հասցնում

Աբաս-Միրզայի 35 000-անոց բանակին և դուրս շպրտում գրավված շրջաններից:

Հայերի մասնակցությունը պատերազմին և նրանց սպասելիքները: 1826 թ. վերջերին և 1827 թ. սկզբներին ռուսական զորքերը պատրաստվում են արշավելու Երևանի վրա: Ռուսների հաջողությունները ոգեշնչում են հայ բնակչությանը: Վիրահայոց թեմի հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս ***Ներսես Աշտարակեցու*** և զրող, մանկավարժ ***Հարություն Արամդարյանի*** հայրենասիրական կոչերը լայն արձագանք են գտնում ժողովրդի մեջ: Հայրենիքի ազատության գաղափարով տոգորված՝ բազմաթիվ երիտասարդներ ցանկություն են հայտնում զենք վերցնելու և ռուսական զորքի հետ մասնակցելու երևանյան արշավանքին: 1827 թ. գարնանը Թիֆլիսում, Ղարաբաղում և այլ վայրերում կազմակերպվում են կամավորական գումարտակներ (դրուժինաներ): Հայկական ջոկատները կարող էին ունենալ իրենց ազգային դրոշները, և հայ հրամանատարները հրամանները տալու էին հայերենով, կամավորականների ընտանիքներն օգտվելու էին զանազան արտոնություններից:

Հայության շրջանում տիրում էր համընդհանուր ոգևորություն: Օրեցօր աճում էր հայ կամավորականների թիվը: Այդ շարժումը պարսկական լծից հայերի ազատագրման պոռթկումի արտահայտություն էր: Թեև Հայաստանի ազատագրության վաղեմի ծրագրերը շարունակում էին մնալ ինքնակալության պահարաններում, սակայն հայ գործիչները փայփայում էին ռուսների հովանավորությամբ իրենց նվիրական նպատակին հասնելու հույսեր: «*Կուրի եզերքից մինչև Արաքսի ափերը հայք՝ հոգևորական և աշխարհական, կին և տղամարդ, մեծ ու փոքր՝ ամենքը,*— գրում էր Ներսես Աշտարակեցին,— *աշխատում էին մասնակից լինել այդ կռվին*»:

Գեներալ Պասկևիչ՝ «Գրաֆ Էրիվանսկի»

Ճիշտ են նկատել ժամանակի ռուս գործիչները, որ այդ կռվում հայությունը երազում էր ի վերջո հասնել կորսված ազգային պետության վերականգնմանը: Խոսելով ***շտաբս-կապիտան Սոմբատովի*** գլխավորած հայկական առաջին կամավորական դրուժինայի ոգևորության մասին՝ գեներալ Ն. Մուրավյովը վկայում էր. «*Թվում էր, թե մի նոր ոգի է թևածում բոլոր հայերի մեջ, որոնք հույս ունեին վերականգնված տեսնելու իրենց թագավորությունը*»: Անշուշտ, ռուսական իշխանությունները, հայերին ոգևորելով, միայն նպատակ ունեին օգտագործելու հայության ուժերը երկրամասը գրավելու համար:

Միաժամանակ, պարսկական բանակում, այդ թվում՝ շահական ընտիր սարբազական գնդում ծառայող բազմաթիվ հայ զինվորներ, որպես այդ երկրի հպատակներ, մարտնչում էին ռուսների դեմ: Պարսիկները հայերից կազմավորել էին զորաջոկատներ, որոնց հրամանատարությունը վստահվել էր հայ երևելի տոհմերից ***Աղամալյաններին*** և ***Գեղամյաններին:*** Ողբերգականն այն էր, որ պա-

տերազմող պետություններին ծառայագրված հայ զորայինները հարկադրված էին կռվելու միմյանց դեմ:

Օշականի ճակատամարտը: Երևանի գրավումը: 1827 թ. գարնանը վերսկսվում է ռուս–պարսկական պատերազմը: Հունիսի կեսերից պատերազմական գործողությունները ծավալվում են Երևանի և Նախիջևանի խանությունների սահմաններում: Ներսես Աշտարակեցու խոսքերով՝ մոտենում էր Արարատյան աշխարհի և հայ ժողովրդի ազատագրության ժամը:

Ռուսական զորքի նորանշանակ հրամանատար ***Պասկևիչը*** գեներալ Ա. Կրասովսկու դիվիզիային հանձնարարում է պաշարված պահել Երևանի բերդը, իսկ ինքը, կռիվներ մղելով Աբաս–Միրզայի զորքերի դեմ, գրավում է Նախիջևանը: 1827 թ. հուլիսին ռուսական զորքերը ջախջախիչ հարվածներ են հասցնում պարսիկներին և գրավում Աբասաբադի բերդը:

Աբաս–Միրզան հարկադրված զինադադար է խնդրում: Սակայն նա մերժում է ռուսների ներկայացրած հաշտության պայմանները և գաղտագողի հարձակվում Էջմիածնի կայազորի վրա: Ներսես Աշտարակեցին կազմակերպում է Էջմիածնի պաշտպանությունը և օգնություն խնդրում Արագածի ճամբարում գտնվող գեներալ Կրասովսկուց: ***1827 թ. օգոստոսի 17–ին Օշականի և Էջմիածնի*** միջև ընկած տարածքում հակառակորդները հանդիպում են միմյանց: Աբաս–Միրզան սկզբում կարողանում է մեծ կորուստներ պատճառել Ա. Կրասովսկու զորախմբին: Մարտի վճռական պահին պարսիկների բանակում ծառայող թնդանոթաձիգ ***Հակոբ Հարությունյանն*** իր հրանոթի փողն ուղղում է դեպի պարսկական զորքերը և խուճապ առաջացնում՝ հնարավորություն տալով ռուսներին կոտրելու հակառակորդի դիմադրությունը և մտնելու Էջմիածին: Հակոբը դիմում է փախուստի, բայց պարսիկները բռնում են և խոշտանգում նրան: Հերոսը հրաշքով ողջ է մնում: Ռուսական կառավարությունը նրան պարգևատրում է և նշանակում ցմահ տարեկան թոշակ: Օշականի ճակատամարտում զոհվածների հիշատակը հավերժացնելու համար 1834 թ. Էջմիածնի Մայր աթոռի միջոցներով հուշարձան կառուցվեց, որը մինչև օրս կանգուն է:

1827 թ. սեպտեմբերին ռուսական զորքերը գրավում են ***Սարդարապատը***, նորից պաշարում Երևանի բերդը: Հասան խանը մերժում է առանց կռվի հանձնվելու առաջարկը: Երևանի բերդը Արևելյան Հայաստանի ամենախոշոր ամրությունն էր: Հրազդան գետի կողմից այն պաշտպանված էր անմատչելի ժայռերով, մյուս կողմերից՝ բարձր ու հաստ կրկնակի պարիսպներով: Բերդն ամրացված էր անգլիական և ֆրանսիական հրանոթներով:

Սեպտեմբերի 30–ի գիշերը 40 հրանոթ մինչև լույս անընդհատ ռմբակոծում են բերդը, քանդվում են հարավային բուրգերն ու պարիսպները: ***1827 թ. հոկտեմբերի 1–ի*** առավոտյան ռուսական զորքերը, այդ թվում նաև հայ կամավորները, սրընթաց գրոհով մտնում են բերդ: Ընկնում է պարսկական բռնակալության հենակետը Հայաստանում: Գերի է վերցվում ավելի քան 3000 հոգի, այդ թվում՝ Հասան խանը:

Երևանի գրավումը ռազմական, տնտեսական ու քաղաքական խոշոր նշանակություն ուներ: Դա ռուսական զորքերի ամենամեծ հաղթանակն էր 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմում:

Նիկոլայ I ցարը գեներալ Պասկևիչին շնորհում է *«Գրաֆ (կոմս) Էրիվանսկի»* պատվատիտղոսը: Երևանի գրավումը մեծ խանդավառությամբ է ընդունվում հայության կողմից:

Թուրքմենչայի պայմանագիրը և արևելահայությունը: Երևանի ու Նախիջևանի գրավումից հետո ռուսական զորամասերն անցնում են Արաքս գետը և հոկտեմբերի 13-ին մտնում Թավրիզ: Տեղի հայերը աղ ու հացով են դիմավորում նրանց: Մինչև 1828 թ. սկզբները ռուսական զորքերը գրավում են Խոյը, Սալմաստը, Ուրմիան, Արդաբիլը և շարժվում դեպի Թեհրան: Շահը ստիպված հաշտություն է խնդրում:

1828 թ. փետրվարի 10-ին Թավրիզ-Թեհրան ճանապարհին գտնվող ***Թուրքմենչայ*** գյուղում հաշտության պայմանագիր է կնքվում: Ռուսների կողմից այն ստորագրում է գեներալ Պասկևիչը: Պայմանագրով Արևելյան Հայաստանի ևս մի մեծ հատված՝ Երևանի և Նախիջևանի խանությունները, անցնում են Ռուսաստանի տիրապետության տակ: Ռուս-պարսկական սահմանը մի հատվածով ձգվում է Արաքս գետով: Սակայն Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի և Ատրպատականի գավառները վերադարձվում են պարսիկներին:

Պայմանագրի 15-րդ հոդվածով պարսկահպատակ հայերին հնարավորություն էր ընձեռվում տեղափոխվելու ռուսական նորահաստատ սահմաններ: Նախապես ռուսական իշխանությունները ծրագրել էին գրավված տարածքները բնակեցնել 80 հազար ռուս կազակներով, սակայն ցարական արքունիքը հրաժարվեց ծախսատար այդ ծրագրից: Ընդառաջ գնալով նաև հայ գործիչների՝ Ներսես Աշտարակեցու, Լազարյանների և այլոց հորդորներին՝ ցարական արքունիքը վճռեց Արաքսի աջափնյակի հայության վերաբնակեցման հաշվին վերաշենացնել Երևանի ու Նախիջևանի խանությունների տարածքը: Այդ ծրագրի իրականացման համար Երևանում ստեղծվում է Վերաբնակեցման կոմիտե: Հայերի կողմից գործի կազմակերպումը դրվում է գնդապետ ***Եղիազար Լազարյանի*** գլխավորած հատուկ հանձնաժողովի վրա: Պարսկահպատակ հայերի վերաբնակեցման գլխավոր ոգեշնչողը դառնում է Ներսես Աշտարակեցին: Այդ գործին մեծապես նպաստում է նաև ռուս գրող և պետական գործիչ Ալեքսանդր Գրիբոյեդովը:

Թեև պարսկական իշխանությունները և տեղի հայ հոգևորականության որոշ ներկայացուցիչներ զանազան եղանակներով կարողանում էին հայ բնակչության որոշակի շերտերի հետ պահել իրենց բնակավայրերը լքելու քայլերից, այդուհանդերձ տասնյակ հազարավոր հայեր, չկամենալով մնալ մահմեդական տիրապետության տակ, 1828 թ. գարնանից ուղղվում են դեպի Ռուսական կայսրության տարածք: Երեքուկես ամսվա ընթացքում Արաքսի ձախ ափն է անցնում ***8 հազարից*** ավելի հայ ընտանիք՝ մոտ ***45 հազար մարդ*** Թավրիզի, Մակուի, Խոյի, Սալմաստի, Ուրմիայի, Արդաբիլի և այլ շրջաններից: Վերոհիշյալ գավառների բազմաթիվ բնակավայրեր հայաթափվում են, ծանրանում է տեղում մնացած հայության թե տնտեսական և թե քաղաքական կացությունը:

Սակայն ռուսական իշխանություններն այդ դժվարին խնդրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ չտրամադրեցին՝ հայ վերաբնակիչներին մատնելով

դժվարին կացության: Երևանի ու Նախիջևանի գավառներում, Վայոց ձորում և այլ վայրերում հաստատված մարդկանց զգալի մասը մեծ զրկանք կրելուց հետո հայտնվում է բաց երկնքի տակ՝ առանց բնակարանների: Թեև վերաբնակիչները 6 տարով ազատվում էին հարկերից, տուրքերից, բնակեցվում միայն պետական հողերի վրա, իսկ առավել աղքատները տներ կառուցելու համար ստանում էին դրամական օգնություն, այնուամենայնիվ, պահանջվեցին տարիներ՝ նոր բնակատեղիներում կրկին կյանքը կազմակերպելու, տնտեսությունը կարգավորելու և զարգացնելու համար:

Այդուհանդերձ, պարսկահայերի զանգվածային վերաբնակեցումը շրջադարձային նշանակություն է ունենում հայ ժողովրդի կյանքում: Ռուսահպատակ դարձած հայերը ձեռք են բերում անձի ու գույքի ապահովության, ազգային կյանքի կազմակերպման ավելի նպաստավոր պայմաններ: Պարսկական տիրապետության հետևանքով նկատելիորեն հայաթափված Արևելյան Հայաստանի տարածքի մեծ մասի վրա կրկին կատարվում է ազգահավաք գործընթաց, որը հետագայում հսկայական նշանակություն ունեցավ հայոց պետականության վերականգնման բաղձալի երազանքի իրականացման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի պատճառները: Ի՞նչ իրադարձությամբ սկսվեցին և ինչպե՞ս ընթացան ռազմական գործողությունները:
2. Ներկայացրե՛ք հայերի սպասելիքները պատերազմից և կամավորական շարժման ընթացքը: Հայերից ովքե՞ր և որտե՞ղ աչքի ընկան:
3. Ինչպե՞ս ընթացան ռազմական գործողությունները 1827 թվականին: Նկարագրե՛ք Օշականի ճակատամարտը: Ի՞նչ կարևոր իրադարձություններ հաջորդեցին այդ ճակատամարտին: Ի՞նչ նշանակություն ունեցավ Երևանի գրավումը:
4. Ե՞րբ և ի՞նչ պայմաններով կնքվեց Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը: Որքա՞ն հայ և ո՞ր շրջաններից ներգաղթեց Ռուսաստանյան կայսրության տարածք: Ի՞նչ արտոնություններ տրվեցին ներգաղթողներին: Ի՞նչ նշանակություն ունեցավ պարսկահայերի ներգաղթը:

§ 4. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 20–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայերի 1821–1823 թթ. բռնագաղթը: 1806–1812 թթ. պատերազմից հետո թուրքական իշխանությունները սաստկացրին ռուսներին օժանդակած արևմտահայության հալածանքները: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար հայ բնակչության նոր խմբեր, անցնելով ռուս–թուրքական սահմանը, հանգրվանում են ռուսներին անցած տարածքներում՝ Շիրակում, Լոռի–Փամբակում և այլուր:

1821–1823 թթ. պարսկա–թուրքական պատերազմի ընթացքում հայությունը նոր արհավիրքների ենթարկվեց: Կրկնելով մոտ 200 տարի առաջ շահ Աբասի քաղաքական ծրագիրը՝ Ֆաթհ Ալի շահն Արևմտյան Հայաստան ներխուժած պարսկական բանակներին հրամայում է

տեղահանել աշխատասեր հայ բնակչությանը և բռնագաղթեցնել իր տերության սահմաններում: Հայությունը դիմում է զենքի:

Բագրևանդի հայ գյուղացիության դիմադրական մարտերը գլխավորում է Ս. Հովհաննու վանքի վանահայր ***Խաչատուր վարդապետ Ատոմածատրյանը***: Հայկական զորաջոկատը Դիադինի գավառում հարձակվում է պարսիկների վրա և գերությունից ազատում բազմաթիվ հայ տարագիրների ու նրանց տեղափոխում պարսպապատ վանքի տարածք: Ս. Հովհաննու վանքի պաշտպանները, զինվելով հնարավոր ամեն ինչով, այդ թվում՝ ինքնաշեն թնդանոթով, 13 օր հերոսաբար հետ են մղում պարսիկների հարձակումները:

Ոգևորված այս հաղթանակներով՝ դիմադրական մարտեր է սկսում նաև Բայազետի նշանավոր ***Արծափ*** գյուղի բնակիչ ***Մանուկ Բանեթանի*** կամավորական ջոկատը: Վերջինիս համարձակ գործողությունների շնորհիվ ևս հաջողվում է փրկել բազմաթիվ հայ գերիների: Բանեյանն արժանանում է Ներսես Աշտարակեցու շնորհակալական նամակին: Ժողովրդական պայքարը նոր թափ է ստանում:

Պարսիկները ստիպված Երևանից օգնական զորքեր են ուղարկում Հասան խանի գլխավորությամբ: Խաբեությամբ Խաչատուր վարդապետին ձերբակալելուց ու սպանելուց հետո Հասան խանին հաջողվում է գրավել ու ավերել Ս. Հովհաննու վանքն ու հարևան մի շարք գյուղեր, դաժանորեն պատժել հայ պաշտպաններին: Ապա հազարավոր ալաշկերտցի, բայազետցի, բասենցի ու էրզրումցի հայեր բռնագաղթեցվում են Ատրպատական և այլ շրջաններ՝ համալրելով տեղի հայության շարքերը: Ի դեպ՝ պարսկա-

Վասիլ Բեհբութով

կան սահմաններ գաղթեցված այս արևմտահայերի զգալի մասը 1828–1829 թթ. պարսկահայերի հետ վերահաստատվում է Ռուսաստանին անցած շրջաններում, մասնավորապես Սևանի ավազանում:

1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի սկիզբը: 1820–ական թթ. վերջին օսմանյան Թուրքիայի համար առկա էին ներքին ու արտաքին անբարենպաստ պայմաններ. շարունակվում էր կայսրության տնտեսական ճգնաժամը, մեծ ծավալ էր ընդունել հույների և բալկանյան այլ ժողովուրդների ազատագրական պայքարը: Ռուսաստանը նպատակ ուներ տեր դառնալու ռազմավարական նշանակություն ունեցող սևծովյան նեղուցներին՝ Բոսֆորին ու Դարդանելին, ամրապնդելու իր դիրքերը Բալկաններում և Արևմտյան Հայաստանում: 1828 թ. ապրիլին Ռուսաստանը երկու ճակատով (Բալկանյան և Կովկասյան) պատերազմ սկսեց Օսմանյան կայսրության դեմ: Եփրեմ կաթողիկոսը հանդես եկավ արևմտահայությանն ուղղված կոնդակով, որում հայ ազգի ազատագրությունը կապելով Ռուսաստանի հետ՝ կոչ արեց ամեն կերպ

զորավիգ լինելու ռուսական բանակին, նպաստելու նրա հաղթանակներին:

Ռուսական հրամանատարությունը խնդիր է դնում գրավելու Ախալցխայի և Կարսի նահանգները: Անցնելով Ախուրյան գետը՝ ռուսական զորքերը, դրանց թվում մի քանի հազար հայ կամավորներ, պաշարում են ռազմավարական նշանակություն ունեցող Կարսի բերդը: Եռօրյա համառ մարտերից հետո՝ ***հունիսի 23-ին***, ռուսները գրոհով վերցնում են ***Կարսը***:

Այնուհետև ռուսների գլխավոր հրամանատարը զորքերն անակնկալ շրջում է դեպի հյուսիս՝ Ախալցխայի փաշայության տարածք: Հուլիսի 23-ի առավոտյան ռուսական ուժերը պաշարում են ***Ախալքալաքի*** բերդը, որի կայազորը բաղկացած էր մոտ 1000 ախալցխացի փորձառու զինվորներից և վարձկաններից: Ռուսներն անցնում են վճռական գործողությունների: Հուժկու հրետակոծությունից տեղ-տեղ քանդվում են պարիսպները, և ռուս զինվորները գրավում են բերդը: Թուրքական կողմից զոհվում է 600 մարդ, 300-ը գերի է ընկնում:

Ախալքալաքից հետո ռուսական զորքերը շարժվում են փաշայանիստ Ախալցխայի վրա: Օգոստոսի 15-ին Պասկևիչի զորքերը գրոհում են քաղաքը, սակայն զգալի կորուստներ են կրում կայազորի արձակած հրետանային կրակի հետևանքով: Ռուսների պատասխան կրակից քաղաքում հրդեհ է բռնկվում, տների մեծ մասն այրվում է, շատերը զոհվում են, այդ թվում՝ խաղաղ հայ և վրացի բնակիչներ: Միայն 700 զոհերի գնով են ռուսները կարողանում գրավել Ախալցխան:

Քաղաքի գրավման ժամանակ իրենց քաջությամբ աչքի են ընկնում մի շարք զինվորականներ, այդ թվում՝ հայազգի գեներալ ***Վասիլ Բեհբութովը***, զինվորականներ Կորգանյանը, մելիք Բեգլարյանը և ուրիշներ: Ախալցխայի գրավման հաջորդ օրը Բեհբութովը նշանակվում է Ախալցխայի փաշայության կառավարիչ և ձեռնամուխ լինում ավերված ու հրդեհված տների, բերդի պարիսպների վերաշինմանն ու ծայր աղքատության հասած տեղի բնակչության նվազագույն կարիքները հոգալուն:

Հայերը ռազմական գործողությունների ընթացքում: Ռուսական զորքերը լուրջ հաջողություններ են ունենում նաև ռազմաճակատի ձախ թևում՝ Երևան-Բայազետ ուղղությամբ, որտեղ կռվում էր գեներալ Ճավճավաձեի 2-հազարանոց զորաջոկատը: Ռուսներին միացել էր երևանյան հեծյալ աշխարհազորը: Բայազետի հայ գյուղացիությունը, որը կազմում էր բնակչության ճնշող մեծամասնությունը, մեծ աջակցություն է ցուցաբերում ռուսական զորքին: Արծափեցի Մանուկ Բանեյանը կրկին զինում և դուրս է բերում կամավորական մի ջոկատ: Ռուսական հրամանատարությանը գրած նրա նամակը, որտեղ Բանեյանը շարադրում էր ռուսների հետ համատեղ գործելու ծրագիրը, ընկնում է Բայազետի փաշայի ձեռքը: Վերջինիս հաջողվում է ենթաբար գերել հայ կամավորականին և մահապատժի ենթարկել:

Բայազետում կազմավորվում է նաև ***Մելիք-Մարտիրոսյանի*** 500 կամավորներից կազմված ջոկատը: *«Բայազետի հայերը,— կարդում ենք ռուսական աղբյուրներում,— չափազանց քաջ կռվողներ էին... Հայերը բացահայտորեն իրենց նպաստն էին բերում Ռուսաստանին, պատրաստ էին օգնելու նրան և հաց էին մատա-*

կարարում ու տեղեկություններ հաղորդում հակառակորդի մասին»:

Քաղաքի և գավառի հայ բնակչության ռուսամետ կեցվածքը ստիպում է տեղի փաշային ***1828 թ. օգոստոսի 28-ին*** Բայազետի բերդը հանձնել ռուսներին: Հայերին համակած ոգևորության մասին Ա. Գրիբոյեդովը գրում էր. *«Անհնարին է նկարագրել այստեղի բնակիչների, մեծ մասամբ՝ հայերի հրճվանքը, որոնք դուրս էին եկել դիմավորելու հաղթողներին՝ մուսուլմանների երկարատև, տանջալի լծից իրենց ազատագրողներին»*:

Երևանյան ջոկատում ընդգրկված սարդարապատցի հայ հեծյալները և նրանց միացած տեղացի հայերի ջոկատը շուտով գրավում են Դիադին վարչական կենտրոնը, իսկ սեպտեմբերի 12-ին՝ նաև Ալաշկերտը:

Հաջորդ տարի շարունակվեցին ռազմական գործողությունները: Թուրքական պետության հրահանգով Աջարիայի փաշան 1829 թ. փետրվարին գրոհում է Ախալցխան: Տեղի քրիստոնյաներից միայն 700 ընտանիք է հնարավոր լինում պատսպարել բերդի պարիսպներից ներս, որոնք Վ. Բեհբութովի ավելի քան 1500-հոգանոց կայազորի հետ անառիկ են պահում քաղաքը:

Թուրքերը հակահարձակման են անցնում նաև ***Բայազետի*** ուղղությամբ: Վանի փաշան հունիսին ներխուժում է Ալաշկերտի դաշտ՝ ճանապարհին թալանելով ու առևանգելով հայ գյուղացիներին: Թուրքերին հաջողվում է մտնել Բայազետ: Սակայն բերդի ռուսական կայազորը գեներալներ Պոպովի և Պանյուտինի գլխավորությամբ համառ դիմադրություն է կազմակերպում: Մարտերին ամենագործուն մասնակցություն են ունենում բայազետցի հայ կամավորները: *«Հայերը,— ինչպես վկայում է գեներալ Պոպովը,— կռվում և մեռնում էին իբրև հերոսներ: Նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»*: Շուտով ռուսական կայազորն անցնում է հակահարձակման և փախուստի մատնում Վանի փաշայի զորքերին:

Էրզրումի գրավումը և Ադրիանապոլսի հաշտությունը: 1829 թ. հունիսի 24-ին Պասկևիչի գլխավորած ռուսական հիմնական ուժերը գրավում են Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան կալան: Արշավանքին մասնակցող ռուս մեծ գրող Ա. Պուշկինի խոսքերով՝ այս բերդը դառնում է «Արզրումի [Էրզրում] բանալին»: Ռուսներն ընդհուպ մոտենում են Էրզրումին:

Համոզված լինելով, որ հայերը կարող են անցնել ռուսների կողմը՝ սերասկյարն սկսում է տեղահանել շրջակայքի տասնյակ հայկական գյուղերի բնակիչներին և քշել Էրզրում: Թուրք զինվորների հսկողությամբ նրանք հարկադրված խրամներ են փորում և ամրացնում քաղաքի պարիսպները: Ամենուր մահմեդական մոլլաները հայերին կոտորելու կոչեր են անում: Հալածանքների է ենթարկվում Էրզրումի հայոց հոգևոր թեմի առաջնորդ ***Կարապետ արքեպիսկոպոս Բազրատունին:*** Նա կարողանում է մի գաղտնի նամակ ուղարկել կոմս Պասկևիչին, որում ներկայացնում է հայերի համար ստեղծված ծանր վիճակը և խորհուրդներ տալիս քաղաքը դյուրությամբ գրավելու ուղիների վերաբերյալ:

Հունիսի 27-ին ռուսական բանակն առանց մարտի մտնում է Էրզրում: Կարապետ արքեպիսկոպոսը դիմավորում է ռուսական զորքին և օրհնում նրանց մուտքը Արևմտյան Հայաստանի ամենամեծ քա-

ղաքը: Հայերը, նույն Ա. Պուշկինի խոսքերով, իրենց ընդունում են իբրև քրիստոնյա ազատարարների:

Ռուսական զորքերը գրավում են նաև Օլթին, Խնուսը, Մուշը, Քղին, Դերջանը, Բաբերդը և այլ բնակավայրեր: Թուրքերը կատաղի դիմադրություն են ցույց տալիս հատկապես Բաբերդի շրջանում: Մարտերից մեկում զոհվում է գեներալ Բուրցովը: Քաղաքի գրավումից հետո Պասկևիչը դաժան դատաստան է տեսնում Բաբերդի պաշտպանների հետ: Տուժում են նաև զգալի թվով բաբերդցի հայեր: Այսպես Արևմտյան Հայաստանի մի խոշոր հատված գրավվում է ռուսական զորքերի կողմից:

1829 թ. ամռանը Բալկանյան ճակատում ևս ռուսական զորքերը տանում են խոշոր հաղթանակներ: Սուլթան Մահմուդ II–ը ստիպված հաշտություն է խնդրում: Սակայն Ռուսաստանը չի կարողանում օգտվել հաղթանակի պտուղներից: Անգլիան, Ֆրանսիան և Ավստրիան, որոնք դեմ էին Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը, ստիպում են հաղթող կողմին համաձայնվել հաշտության ավելի համեստ պայմաններին:

1829 թ. սեպտեմբերի 2–ին Ադրիանուպոլսում կնքվում է հաշտության պայմանագիր, որով Ռուսաստանին են անցնում Անդրկովկասի սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով, ինչպես նաև Ախալցխա ու Ախալքալաք քաղաքները: Արևմտյան Հայաստանում ռուսների գրաված մյուս ընդարձակ գավառները վերադարձվում են օսմանյան Թուրքիային: Թուրքական տիրապետությունից ազատագրվելու արևմտահայերի սպասելիքները կրկին չեն իրականանում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ռուսներին օժանդակած արևմտահայերի նկատմամբ ինչ հալածանքներ գործադրվեցին: Ներկայացրեք Ֆաթհ Ալի շահի իրականացրած բռնագաղթի պատմությունը: Ի՞նչ գիտեք Խաչատուր վարդապետի և Մանուկ Բանեյանի մասին:
2. Որո՞նք էին 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի պատճառները: Ներկայացրե՛ք ռազմական գործողությունների սկիզբը Կովկասյան ճակատում:
3. Ինչ մասնակցություն ունեցան հայերը ռազմական գործողություններին. ովքե՞ր աչքի ընկան:
4. Լուսաբանե՛ք ռազմական գործողությունների հետագա ընթացքը և Էրզրումի գրավումը: Արևմտյան Հայաստանի ուրիշ ինչ քաղաքներ գրավվեցին:
5. Ինչպե՞ս ավարտվեց ռուս–թուրքական պատերազմը. ինչո՞ւ ռուսները չօգտվեցին հաղթանակի պտուղներից: Ե՞րբ և ինչ պայմաններով ստորագրվեց Ադրիանուպոլսի հաշտության պայմանագիրը. ինչ հետևանքներ ունեցավ այն:

§ 5. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ 30–40–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայաստանի ազատագրության նոր ծրագիրը: Անդրկովկասում ռուսական նվաճողական քաղաքականությունը, որը որոշ կողմերով համընկնում էր հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին, հայերի հասարակական–քաղաքական շրջանակներում մեծ աշխուժություն էր առաջացրել: 1826–1828 թթ. ռուս–պարս-

կական պատերազմի օրերին մի խումբ հայ մտավորականներ՝ ***Խաչատուր Լազարյանը, Ալեքսանդր Խուդաբաշյանը*** և ***Կարապետ Արղությանը***, հետևելով նախորդ գործիչների օրինակին, մշակում և ռուսական արքունիքին են ներկայացնում Հայաստանի ազատագրության նախագիծը: Կարապետ Արղությանը, որը XVIII դ. վերջի նշանավոր գործիչ ***Հովսեփ Արղությանի*** թոռն էր, ծրագրում ընդգրկել էր գաղափարներ իր նշանավոր պապի կազմած հայտնի նախագծից: Համանման ծրագիր է կազմում նաև Ներսես Աշտարակեցին:

Ըստ հեղինակների՝ ռուսական արքունիքը պետք է ապահովեր հայկական թագավորության վերականգնումը Ռուսաստանի հովանու ներքո: Հայոց պետության մեջ ընդգրկվելու էին Հին Հայաստանի գրեթե բոլոր նահանգները: Այսինքն՝ խոսքը միացյալ Հայաստանի մասին էր՝ իր արևելյան և արևմտյան հատվածներով: Անհրաժեշտ էր համարվում, որ Ռուսաստանի կայսր Նիկոլայ I–ը կրեր նաև «Հայոց թագավոր» տիտղոսը, որը պիտի մեծ տպավորություն թողներ համայն հայության վրա, օտար ափերում դեգերող բազմահազար հայերին մղեր դեպի տունդարձի ու վերածննդի ուղին:

Հայ հայրենասերները կարևորում էին սեփական բանակի խնդիրը, որը պիտի կազմավորվեր հայ կամավորականների հավաքագրման միջոցով: Սպայակույտը պիտի կազմվեր գերազանցապես հայերից, մասամբ՝ վրացիներից: Հայկական բանակն աստիճանաբար սահմանների վրա փոխարինելու էր ռուսական զորքերին: Հայաստանը պետք է ունենար իր օրենքները, զինանշանը և ազգային դրոշը:

Նախագծի հեղինակները մոռացության չէին տվել նաև սոցիալական հարցերը: Նրանք անթույլատրելի էին համարում, որ Ռուսական կայսրության, այդ թվում՝ հարևան Վրաստանի տարածքում գոյություն ունեցող գյուղացիության ճորտացումը, առուվաճառքը տեղ գտնեն նաև Հայաստանում: Դա կարող էր զանազան անկարգությունների պատճառ դառնալ:

Հայկական մարզը: Ցարական վարչակազմը, առաջնորդվելով իր մեծապետական ծավալապաշտական շահերով, բնականաբար ընթացք չտվեց Հայաստանի ազատագրության այս նախագծին: Գրավելով Արևելյան Հայաստանի մեծագույն մասը՝ նա թույլ չտվեց այնտեղ հայկական պետականության ստեղծում: Դրա փոխարեն Նիկոլայ I–ի ***1828 թ. մարտի 21–ի*** հրամանագրով Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների տարածքի վրա կազմվեց վարչական նոր միավոր՝ ***Հայկական մարզ***: Այն ունենալու էր իր դրոշը և զինանշանը: Նման խաբուսիկ քայլով ռուսական արքունիքը փորձում էր որոշ բավարարություն տալ հայ բնակչության ազատագրական ձգտումներին և հայկական ինքնավարության պատրանք ստեղծել: Դրանով պիտի բացատրել նաև այն փաստը, որ մարզի կառավարչի պաշտոնում 1830 թ. վրացի գեներալ Ճավճավաձեին փոխարինում է հայազգի գեներալ ***Վասիլ Բեհբութովը:*** Նա զգալի աշխատանք կատարեց հին խանական հետամնաց օրենքներն ու վարչաձևերն աստիճանաբար ռուսական օրենքներով ու վարչաձևերով փոխարինելու համար:

Իրականում Հայկական մարզը հայերի համար ինքնավարության նշույլ իսկ չէր պարունակում: Մարզային վարչությունում մեծամասնություն էին կազմում ռուս չինով-

նիկները, իսկ հայերը, որոնց մինչև 1833 թ. ներկայացնում էր Սահակ Մելիք-Աղամալյանը, տեղի մահմեդականների նման ունեին միայն մեկ ձայն: Ռուսական ինքնակալությունը, հայությանն արած իր «զիջումը» համարելով վտանգավոր, դրա մեջ տեսնելով ազգային պետականությունը վերականգնելու հնարավորություն, 12 տարի անց վերացնում է Հայկական մարզը:

Արևմտահայության 1830 թ. զանգվածային վերաբնակեցումը: Ադրիանուպոլսում կնքված ռուս-թուրքական հաշտության պայմանագրով ոչ միայն ի չիք են դառնում արևմտահայության ազատագրության հույսերը, այլև թուրքերին վերադարձվող տարածքների հայությունը հայտնվում է մահմեդականների վրեժխնդրության վտանգի առջև: Օգտվելով հայերի համար ստեղծված սպառնալից իրավիճակից՝ ռուսական արքունիքն ամեն կերպ խթանեց նրանց վերաբնակեցումը:

Պատերազմի ավարտից հետո սկսվեց արևմտահայերի տեղափոխությունը ռուսական տերությանն անցած տարածքներ, իսկ 1830 թ. մայիսին սկսվեց զանգվածային վերաբնակեցում: Արևմտահայաստանի տարբեր գավառներից վերաբնակիչների համար նախատեսվում է բնակության որոշակի շրջան: Կարսեցիները հատատվում են Գյումրիում, Շիրակի դաշտում և Թալինի շրջակայքում, բայազետցիներն ու ալաշկերտցիները՝ Սևանա լճի ավազանում, մասամբ նաև՝ Սուրմալուում, Դարաչիչակում, Ապարանում և Փամբակում: Կաթոլիկ հայերի գաղթի ղեկավարությունը ստանձնում է Վենետիկի Մխիթարյան վարդապետ Եփրեմ Սեթը (Սեթյան):

Էրզրումից և նրա կենտրոնական գավառներից հայ վերաբնակիչների հոծ խմբերը, որոնց թիվը հասնում էր մոտ 7 հազար ընտանիքի, Ռուսաստանին անցած տարածքներ և Ծալկայի շրջան հասնում են միայն մի քանի ամիս անց: Էրզրումահայերի համար Ախալցխայի ու Ախալքալաքի ընտրության հարցը պատահական չէր: Այդ գավառներն իրենց բնակլիմայական, աշխարհագրական պայմաններով հար և նման էին Էրզրումին և մինչ այդ ենթակա լինելով Կարնո թեմին՝ առաջնորդ Կարապետ Բագրատունուն ավելի ծանոթ ու հոգեհարազատ էին:

Ինչպես պարսկահպատակ, այնպես էլ արևմտահայ վերաբնակիչները ստացան որոշ արտոնություններ, դրամական օգնություն: Վերաբնակիչների թիվը մեծ էր՝ մոտ 75 հազար մարդ, իսկ ռուսական արքունիքի տրամադրած միջոցները՝ չնչին, ուստի ցուցաբերված օգնությունը չէր կարող նկատելի լինել: Ռուսական սահմաններ գաղթեցին զգալի թվով հույներ, որոնք հիմնականում հաստատվեցին Ծալկայի շրջանում:

Ինչ հետևանքներ ունեցավ արևմտահայերի զանգվածային վերաբնակեցումը: Նախ՝ այն գաղթ չէր, այլ վերաբնակեցում էր, քանի որ մեր հայրենիքի մի հատվածի հայությունը քաղաքական հանգամանքների բերումով վերաբնակվում էր հայրենիքի մեկ այլ հատվածում: Երկրորդ՝ այդ իրադարձության հետևանքներն աղետալի էին Էրզրումի, Բասենի, Ալաշկերտի, Բայազետի, Կարսի և արևմտահայ մի քանի այլ գավառների համար: Էրզրում ու Կարս քաղաքները զրկվում էին հայ առևտրականներից և արհեստավորներից, որոնք, ինչպես հայտնի է, օսմանյան Թուրքիայում մեծ դեր ունեին տնտեսության զարգացման գործում: Միայն

Էրզրում քաղաքից հեռացածների թիվը կազմում էր 3200 ընտանիք, այսինքն՝ մոտավորապես 20 հազար մարդ:

Բացի այդ, տեղի թուրք և քուրդ կառավարիչները կրած տնտեսական զգալի կորուստները հատուցելու համար սկսում են զավթել հայերի լքյալ հողերը, շեշտակի բարձրացնում տեղում մնացած հայերից գանձվող հարկերը, ուժեղացնում կրոնական և ազգային ճնշումները: Անկում են ապրում արհեստներն ու առևտուրը, անմշակ վիճակում են թողնվում հազարավոր հեկտար հողատարածություններ:

Միաժամանակ Այսրկովկասի, այդ թվում՝ Ռուսաստանին անցած Ախալքալաքի ու Ախալցխայի կիսավեր դարձած գավառների համար նույն վերաբնակեցումն ունենում է կարևոր նշանակություն: Այնտեղ շեշտակի աճում է հայ բնակչության տեսակարար կշիռը, վերականգնվում նախորդ ժամանակներին բնորոշ ժողովրդագրական իրավիճակը: Միայն Ախալքալաքի գավառում էրզրումահայերը վերաշինում են կամ հիմնադրում շուրջ 50 գյուղ:

Արևմտահայերի վերաբնակեցման շնորհիվ կրկին հայաշատ են դառնում նաև օտար տիրապետությունների ու պատերազմների հետևանքով ամայացած Արևելյան Շիրակը, Գեղարքունիքը, Թալինը և այլ շրջաններ: Հին բայազետցիները հիմնադրում են Նոր Բայազետ քաղաքը, կարսեցիները կենդանություն են տալիս ավերված Գյումրիին:

Յարիզմի գաղութային քաղաքականությունն Արևելյան Հայաստանում: 1830–1840-ական թթ. ռուսական իշխանությունները նոր քայլեր են կատարում՝ Անդրկովկասում իրենց իշխանությունն ամրապնդելու նպատակով: Իրականացվում են մի շարք վարչական փոփոխություններ: 1840 թ. ապրիլի 10-ին վերացվում է Հայկական մարզը: Ստեղծվում է երկու վարչամիավոր՝ Վրացահիմերեթական նահանգ և Կասպիական մարզ՝ Թիֆլիս և Շամախի կենտրոններով: Արևելյան Հայաստանի տարածքը կամայականորեն մտցվում է այդ միավորների մեջ՝ առանց հաշվի առնելու հայ բնակչության շահերը: ***1844 թ. հիմնվում է Կովկասի փոխարքայությունը:*** 1846 թ. Անդրկովկասը բաժանվում է նահանգների: ***1849 թ. հիմնվում է Երևանի նահանգը***, որի մեջ մտնում են Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառները:

Հայ առաքելական եկեղեցուն, որը մեծ ազդեցություն ուներ ոչ միայն արևելահայության, այլև արևմտահայության ու գաղութահայության մեջ, հսկողության տակ պահելու նպատակով ռուսական իշխանությունները ձեռնամուխ են լինում նրա բարեփոխմանը:

1836 թ. մարտի 11-ին հրապարակված եկեղեցական կանոնադրությամբ («Պոլոժենիե») սահմանվում են Հայ եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու և կառավարության փոխհարաբերությունները: Հայ եկեղեցին չէր խառնվելու պետական գործերին, այլ զբաղվելու էր միայն դպրոցի, ծեսերի և այլ հարցերով: Դրանով ցարիզմը սահմանափակում էր Հայ առաքելական եկեղեցու իրավունքները: Սակայն մյուս կողմից ռուսական արքունիքը Հայ եկեղեցուն չէր զրկում Օսմանյան կայսրությունում ապրող միլիոնավոր հայերի գերագույն հոգևոր իշխանության կարգավիճակից: Ընդհակառակը՝ փորձում էր նրա միջոցով իր ազդեցությունը պահպանել նաև հայության այդ հատվածի վրա:

Պոլոժենիեն թեև Հայ եկեղեցուն դնում էր կախվածության մեջ ռուսական պետությունից, սակայն հայությանը տալիս էր որոշ հոգևոր-մշակութային ինքնավարություն: Հայ ժողովուրդը ձեռք էր բերում կրոնական ինքնուրույն համայնքի կարգավիճակ, իրավունք էր ստանում պահպանելու սեփական լեզուն, դպրոցը, եկեղեցական-ծիսական համակարգը: Ռուսական կայսրության տարածքում ստեղծվում էր հայկական հոգևոր 6 թեմ, որոնց ղեկավարումն իրականացնելու էին կաթողիկոսի կողմից առաջադրված և պետության կողմից հաստատված թեմական առաջնորդները:

Հայ եկեղեցու գլուխ նախկինի նման մնում էր հայոց կաթողիկոսը: Հայ ժողովրդի ներկայացուցիչների ընդհանուր ժողովն առաջադրելու էր կաթողիկոսի երկու թեկնածու, որոնցից մեկին պիտի ընտրեր ռուսական ցարը: Դրանով Ռուսաստանը վերացնում էր նախկին կարգը, որի համաձայն՝ կաթողիկոսին հաստատում էին պարսկական շահերը կամ օսմանյան սուլթանները: Այժմ այդ իրավունքը վերապահվում էր միայն ցարին: Հոգևոր գերագույն մարմինը՝ սինոդը, նույնպես լիովին հայտնվում էր կառավարության վերահսկողության ներքո:

Եկեղեցական կանոնադրությունը դժգոհությամբ է ընդունվում հայության կողմից: Գաղութահայերը քանիցս բողոքում են Հայ եկեղեցու իրավունքները սահմանափակելու ցարիզմի այդ քայլի դեմ, սակայն ամեն ինչ մնում է անփոփոխ:

Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքը, անշուշտ, կանգնում է զարգացման նոր ուղու վրա: Սկսում են զարգանալ առևտուրն ու հանքարդյունաբերությունը: Աճում ու ընդլայնվում են պղնձի և աղի արդյունահանումն ու արտադրությունը: Աճում է նաև քաղաքների բնակչությունը: 1850 թ. Երևանի բնակչության թիվը կազմում է 12 600, իսկ Ալեքսանդրապոլինը՝ 11 300 մարդ:

Կառավարության վարած մեծապետական քաղաքականությունն Անդրկովկասում օրեցօր սաստկանում է: Չկարողանալով տանել այդ ճնշումները՝ գյուղացիները հաճախ պայքարի էին ելնում իրենց ճնշողների դեմ:

Արևմտահայությունը 1830-1840-ական թթ.: Ռուս-թուրքական պատերազմներից հետո Արևմտյան Հայաստանի և արևմտահայերի քաղաքական ու տնտեսական դրությունն ավելի վատթարացավ:

Թուրքիայում հայերը մնում էին իրավազուրկ վիճակում: Առանձնապես ծանր էր բնակչության 90 տոկոսից ավելին կազմող գյուղացիության դրությունը: Օսմանյան իշխանությունները բազմաթիվ ու բազմապիսի հարկեր և տուրքեր էին գանձում ժողովրդից: Հարկային բեռն ընկած էր գերազանցապես գյուղացիների վրա: Գլխավոր հարկը աշարն էր, որն օրենքով կազմում էր բերքի 1/10 մասը, բայց իրականում հասնում էր կրկնակի, եռակի չափերի: Գանձում էին նաև գլխահարկ, անասնահարկ, ճանապարհների, արոտների, զբաղմունքի և բազմաթիվ այլ հարկեր ու տուրքեր: Արևմտյան Հայաստանից մեծ թվով հայերի հեռանալուց հետո արհեստներն ու առևտուրը առժամանակ անկում ապրեցին:

Երկրի ընդհանուր ճգնաժամը կանխելու նպատակով սուլթանական կառավարությունը ***1839 թ.*** հրապարակեց ***թանզի-***

մաթը՝ բարենորոգումների հրովարտակը՝ ազդարարելով ազգերի իրավահավասարություն, հարկերի, դատական գործի բարելավում և այլն: Սակայն այդ բարենորոգումները մնացին թղթի վրա:

Կ. Պոլիսը աստիճանաբար վերածվել էր արևմտահայերի հասարակական–քաղաքական և մշակութային ամենախոշոր կենտրոնի: Այնտեղ ապրում էր սոցիալական տարբեր խավերի պատկանող ավելի քան 200 հազար հայ: Նրանց մեծ մասը պանդուխտներ էին՝ աշխատանք գտնելու հույսով Արևմտյան Հայաստանի գավառներից ժամանած մարդիկ: Պոլսում շարունակում էր գործել արևմտահայերի հոգևոր կենտրոնը՝ Հայ առաքելական եկեղեցու պատրիարքարանը: Համայնքի գործերի կազմակերպմանը որոշ չափով մասնակցում էր 1844 թ. ստեղծված ***Ազգային ժողովը***, որի անդամների մեծ մասը հայ մեծահարուստ ամիրաներն էին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Հայաստանի ազատագրության նոր ծրագիրը. ովքե՞ր էին հեղինակները, ի՞նչ էր բովանդակում: Համեմատեք Հայաստանի ազատագրության նախորդ ծրագրերի հետ: Ինչո՞ւ դրանք չիրականացան:
2. Ե՞րբ է ստեղծվել Հայկական մարզը: Հիմնավորեք, որ Հայկական մարզն ընդամենը ինքնավարության պատրանք էր: Ե՞րբ և ինչո՞ւ այն վերացվեց:
3. Որո՞նք էին արևմտահայության զանգվածային վերաբնակեցման պատճառները: Ե՞րբ սկսվեց վերաբնակեցումը և ո՞ր շրջաններից: Որտե՞ղ հիմնավորվեցին վերաբնակները, որքա՞ն էր նրանց թիվը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ արևմտահայերի զանգվածային վերաբնակեցումը:
4. Վարչական ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Անդրկովկասում: Հայ առաքելական եկեղեցուն իր հսկողության տակ պահելու նպատակով ի՞նչ ձեռնարկեց ցարիզմը: Պարզաբանե՛ք եկեղեցական կանոնադրությունը և դրա հետևանքները:
5. Ներկայացրե՛ք արևմտահայության վիճակը 1830–1840-ական թվականներին: Ի՞նչ դեր էր խաղում Կ. Պոլսի հայ համայնքը:

ԲԱԺԻՆ 2

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Փոփոխություններ տնտեսության մեջ, արդյունաբերության զարգացումը: Ռուսական կայսրության կենտրոնական շրջաններում XIX դ. կեսերին տեղի ունեցավ արդյունաբերական հեղաշրջում: Երկրի զարգացումն արագացավ հատկապես Ալեքսանդր II կայսեր կողմից 1860–1870-ական թթ. իրականացված ազատական բարեփոխումների շնորհիվ: Կայսրության ազգային երկրամասերը վերածվել էին էժան հումքի աղբյուրների և արդյունաբերական ապրանքների իրացման շուկաների, բայց տնտեսության արդիականացման գործընթաց սկսվեց նաև այդ շրջաններում:

Թափանցելով կայսրության ազգային ծայրագավառներ՝ ռուսական, ինչպես նաև արտասահմանյան կապիտալը տնտեսության մեջ առաջադիմական դեր էր կատարում: Անդրկովկասում արդյունաբերության և առհասարակ տնտեսական կյանքի զարգացմանը նպաստեց երկաթուղու շինարարությունը, որը սկսվեց XIX դ. 60-ական թթ. և շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: ***1899 թ.*** գործարկվեց ***Թիֆլիս–Ալեքսանդրապոլ–Կարս երկաթուղին:*** 1902 թ. շարք մտան դրանց Ալեքսանդրապոլ–Երևան, հետագայում՝ ***Ուլուխանլու–Ջուլֆա*** և ***Կարս–Սարիղամիշ*** հատվածները: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Հայաստանի երկաթուղիների երկարությունը կազմում էր 380 կմ: Արևելյան Հայաստանում կառուցվեցին նաև խճուղային ճանապարհներ:

Խոր հետք թողնելով երկրամասի, այդ թվում Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի վրա՝ երկաթուղին միաժամանակ արագացրեց գյուղի ավանդական կացութաձևի քայքայումն ու շերտավորումը, պայմաններ ստեղծեց կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացման համար:

Հաղորդակցության ուղիների ընդլայնումը և կապի միջոցների, տեխնիկայի ներդրումը նպաստեցին Ռուսաստանի կենտրոնական արդյունաբերական նահանգների և Արևելյան Հայաստանի միջև ապրանքաշրջանառության վերելքին:

Արևելյան Հայաստանում արդյունաբերության հիմնական ճյուղը պղնձի արտադրությունն էր, որի ձեռնարկությունները Ալավերդիում և Կապանում էին: XX դ. սկզբին Հայաստանի ձեռնարկություններում ձուլվել էր 71,5 հազար փութ

Շուստովի կոնյակի գործարանի շենքը Երևանում

պղինձ, իսկ 1913 թ. այդ ցուցանիշը հասել էր 342,8 հազար փութի:

Հայաստանում իր տեսակարար կշռով երկրորդ տեղն էր գրավում սպիրտ–կոնյակի արտադրությունը, որը կենտրոնացված էր գլխավորապես ***Երևան*** քաղաքում, մասամբ էլ՝ նահանգում: 1907 թ. Երևանի նահանգում կոնյակի գործարանների թիվը հասավ 10–ի: Արևելյան Հայաստանը կոնյակի և օղու արտադրությամբ Անդրկովկասում գրավում էր առաջին, իսկ գինու արտադրությամբ՝ երկրորդ տեղը՝ զիջելով Վրաստանին: Սպիրտը և կոնյակը Հայաստանից արտահանում էին Պետերբուրգ, Մոսկվա, Վարշավա, Ռիգա, Պարսկաստան և այլուր: Ն. Շուստովի գործարանի՝ ***«Արարատ»*** մակնիշով վաճառահանվող ***կոնյակը*** մեծ պահանջարկ էր վայելում:

XX դ. սկզբին որոշ բարելավումներ կատարվեցին աղի արտադրության բնագավառում: Հատկապես նշանավոր էին մեծ պաշարներով հարուստ ***Կողբի*** և ***Կաղզվանի*** աղահանքերը: Կողբում ներդրվեցին սարքավորումներ, հանքահորերում տեղադրվեցին ներարտադրական երկաթգծեր: Դրա շնորհիվ կտրուկ աճեց աղի արտադրությունը:

Երևանի և Ելիզավետպոլի նահանգների, հատկապես Օրդուբադի և Շուշիի գավառներում նոր թափ ստացավ մետաքսաթելի արտադրությունը: Այդ գործարանները սերտ կապեր էին հաստատել մետաքսի առևտրով զբաղվող ռուսական խոշոր ընկերությունների հետ: Արտադրված մետաքսաթելն ուղարկվում էր Մոսկվա, Վարշավա և այլ քաղաքներ:

Դարավերջին Արևելյան Հայաստանի մանր ու միջին ձեռնարկություններում, որոնց մեջ գերակշռում էր գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը, որոշակի աշխուժություն էր նկատվում: Շոգեշարժ սարքերն աստիճանաբար դուրս էին մղում ձեռքի աշխատանքը և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը: Արևելյան Հայաստանի քաղաքներում՝ Երևանում, Շուշիում, Ալեքսանդրապոլում, Կարսում, կային արդյունաբերական որոշ ձեռնարկություններ, բայց դրանք հիմնականում առևտրի կենտրոններ էին: Երևանը, որը նահանգի վարչական կենտրոնն էր, գտնվելով հարմար ճանապարհների վրա, տարանցիկ առևտրում մեծ դեր էր խաղում:

Գյուղատնտեսության վիճակը: Եթե Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ շոշափելի փոփոխություններ էին կատարվում, ապա գյուղական վայրերում առաջընթացը դանդաղ էր: Դրա հիմնական պատճառը բարեփոխումների ձգձգումն էր և գյուղացիության սակավահողությունը:

1870 թ. մայիսի 14–ի ցարական օրենքն Արևելյան Հայաստանում հողի սեփականատեր ճանաչեց կալվածատերերին, իսկ նրանցից կախյալ գյուղացիներին իրավունք տրվեց միայն օգտվելու հողից: Օրենքը չէր վերաբերում գյուղական բնակչության մոտ 72%–ը կազմող պետական գյուղացիական տնտեսություններին: Միայն 1912 թ. դեկտեմբերի 20–ի օրենքով գյուղացիներին թույլատրվեց և

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Սև ծով
Կասպից ծով
Դոն գետ
Ռուսական կայսրություն
Օսմանյան կայսրություն
Պարսկաստան
Ռուսական կայսրության կազմում գտնվող Հայաստանի մասերի վարչական բաժանումը
Օսմանյան կայսրության կազմում գտնվող Հայաստանի մասերի վարչական բաժանումը
Գավառների սահմանները
Գավառների անունները
Գավառների կենտրոնները
Գավառների կենտրոնների անունները
Գավառների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառակներ
Գավառակների սահմանները
Գավառակների անունները
Գավառակների կենտրոնները
Գավառակների կենտրոնների անունները
Գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ
Գավառների և գավառակների սահմանները
Գավառների և գավառակների անունները
Գավառների և գավառակների կենտրոնները
Գավառների և գավառակների կենտրոնների անունները
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Օսմանյան կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Պարսկաստանի կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Ռուսական կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Ռուսական կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Ռուսական կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Ռուսական կայսրության կազմում
Գավառների և գավառակների կենտրոնների անունները, որոնք հանդիսանում են գավառներ և գավառակներ, որոնք գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի կազմում, բայց գտնվում են Օսմանյան կայսրության կազմում, բայց գտնվում են Ռուսական կայսրության կազմում, բայց գտնվում են Պարսկաստանի

պարտադրվեց հետ գնել իրենց հողերը՝ որպես մասնավոր սեփականություն:

XX դ. սկզբին գյուղատնտեսության զարգացումն արագացավ ստոլիպինյան վերափոխումների շնորհիվ: Արդյունքում հայկական գյուղը դանդաղորեն, բայց մուտք գործեց շուկայական հարաբերությունների ոլորտ:

Դարասկզբին վերելք ապրեց բամբակենու մշակումը: Արևելյան Հայաստանը, մասնավորապես Երևանի և Ելիզավետպոլի նահանգները դարձան բամբակի հումքի շտեմարան: Եթե բամբակի հումքն Արևելյան Հայաստանում 1900 թ. կազմում էր 382 հազար փութ, ապա 1914 թ. միայն Երևանի նահանգում մթերվեց 700 հազար փութ բամբակ: Ստացված բամբակի հումքի մեծագույն մասը նախնական մշակումից՝ սերմազտումից հետո արտահանվում էր Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության շրջաններ:

Ցարական կառավարությունը, ելնելով իր ռազմավարական քաղաքականությունից, շարունակում էր Ռուսաստանի կենտրոնական նահանգներից Այսրկովկաս, այդ թվում նաև Հայաստան փոխադրել ռուս վերաբնակիչների: Կառավարությունն անտեսում էր այն փաստը, որ երկիրն առանց այդ էլ սակավահող էր:

Այսպիսով՝ հետռեֆորմյան շրջանում որոշ զարգացում ապրեց նաև գյուղատնտեսությունը, թեև այստեղ դեռ գերիշխում էր ավանդական տնտեսավարումը: Ընդհանուր առմամբ՝ Արևելյան Հայաստանը շարունակում էր մնալ որպես թույլ զարգացած ագրարային երկրամաս արդյունաբերականացող Ռուսաստանի կազմում:

Բնակչության սոցիալական տեղաշարժերը: Տնտեսության զարգացումը և ազատական բարեփոխումները փոփոխություններ առաջացրին արևելահայերի սոցիալական կյանքում: Ընդհանրապես Անդրկովկասի վարչական բաժանման և կառավարման ցարական քաղաքականության նպատակն էր առաջին հերթին սահմանափակել տեղական ժողովուրդների ինքնուրույնության փորձերը, երկրամասի տնտեսական կյանքը հարմարեցնել կայսրության ընդհանուր պահանջներին:

1867 թ. վարչական փոփոխությամբ Անդրկովկասը բաժանվեց հինգ նահանգների, իսկ 1874 թ. օրենքով այդ նահանգներից մեկը՝ ***Երևանի նահանգը***, տրոհվեց յոթ գավառների՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի, Սուրմալուի և Շարուր–Դարալագյազի: Ելիզավետպոլի նահանգի մեջ մնացին հայկական Արցախը, Գանձակը, Զանգեզուրը, իսկ Լոռին ու Ջավախքն ընդգրկվեցին Թիֆլիսի նահանգի կազմում: 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմից հետո Ռուսաստանին անցած տարածքներից ստեղծվեցին Կարսի և Բաթումի մարզերը:

XIX դ. երկրորդ կեսից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակն Արևելյան Հայաստանում մոտ 2,5 անգամ աճեց քաղաքային բնակչության թիվը: 1910 թ. տվյալներով համեմատաբար մեծ քաղաքներ էին ***Շուշին (42 հազար), Ալեքսանդրապոլը (35 հազար), Երևանը (32 հազար), Կարսը (30 հազար)***:

Ագրարային բարեփոխումից հետո հողաբաշխությունն ավելի զգալի դարձավ: Բազմաթիվ հարկերն ու պարհակները, հողի վաճառքը, վարձակալությունը և առևտրափոխանակային հարաբերությունների զարգացումը քայքայում էին

գյուղացիական տնտեսությունները: Գյուղացիների արտագնացությունը XIX դ. 90-ական թթ. և XX դ. սկզբներին զանգվածային բնույթ ընդունեց: Նրանք գնում էին ոչ միայն Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի քաղաքներ, այլև Ռուսաստան և նույնիսկ արտասահման:

Ձևավորվեցին հայ բանվորական և կապիտալիստական դասակարգերը: Նրանց մեծ մասը կենտրոնացած էր արդյունաբերական Բաքվում, Բաթումում և փոխարքայության կենտրոն Թիֆլիսում:

Արևելյան Հայաստանում և երկրամասի մյուս վայրերում բանվորների (պրոլետարներ) շարքերը, բացի բանվորացած գյուղացիներից, համալրում էին նաև արհեստավորները: XX դ. սկզբին Արևելյան Հայաստանում բանվորների թվաքանակը՝ առանց գյուղական բանվորության, կազմում էր 20–22 հազար մարդ:

Հայ ձեռներեցներից շատերը, չնայած ցարիզմի խտրական քաղաքականությանը, որոշակի հաջողությունների հասան տնտեսական մրցակցության մեջ և Անդրկովկասում դարձան նշանավոր ձեռնարկատերեր: Արդյունաբերության և առևտրի ոլորտում հայտնի էին ***Ա. Մանթաշյանը, Միրզոյան եղբայրները, Ղուկասյան եղբայրները, Մ. Արամյանցը, Ա. Էնֆիաջյանցը*** և ուրիշներ: Հայ գործարարների զգալի մասը նաև մեծահամբավ բարեգործներ էին: Նրանց անձնական միջոցներով բացվում էին դպրոցներ, հիվանդանոցներ, կառուցվում էին եկեղեցիներ, նյութական օգնություն էր ցույց տրվում թատրոններին, մշակույթի գործիչներին: Հայ բարերարները միջոցներ էին տրամադրում նաև շնորհալի երիտասարդներին, որպեսզի նրանք ուսանեն Եվրոպայի ու Ռուսաստանի առաջատար համալսարաններում և դառնան հայրենիքի ու ազգի ապագան կերտող մասնագետներ:

Այսպիսով՝ Ռուսաստանյան կայսրության մեջ տեղի ունեցող տնտեսական ու սոցիալական տեղաշարժերը նպաստեցին նրա ազգային ծայրամասերի, այդ թվում՝ Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի վերելքին: Արդյունաբերականացման գործընթացի արդյունքում էականորեն փոխվում էր բնակչության սոցիալական կառուցվածքը, փոփոխվում էր մարդկանց աշխարհայացքն ու կենցաղը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ռուսական կայսրությունում ե՞րբ տեղի ունեցավ արդյունաբերական հեղաշրջումը: Ի՞նչ հետևանքներ ունեցան Ալեքսանդր II-ի բարեփոխումները:
2. Ներկայացրե՛ք հաղորդակցության ուղիների զարգացման ընթացքն Արևելյան Հայաստանում: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն: Արդյունաբերության ո՞ր ճյուղերն էին զարգացած Արևելյան Հայաստանում: Ինչո՞ւ էին հատկապես այդ ճյուղերը զարգանում:
3. Ի՞նչ էր նախատեսում 1870 թ. մայիսի 14-ի ցարական օրենքը: Ի՞նչը նպաստեց գյուղատնտեսության զարգացմանը: Ի՞նչ փոփոխություններ արձանագրվեցին գյուղատնտեսության բնագավառում:
4. Վարչական ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Անդրկովկասում. ի՞նչ նպատակ էին դրանք հետապնդում: Ներկայացրե՛ք արևելահայ բնակչության սոցիալական տեղաշարժերի ընդհանուր պատկերը և հետևանքները:

§ 2. ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Պայքար ազգային ճնշման դեմ: Կովկասում գոյություն ունեցող փոխարքայության համակարգը 1882 թ. վերափոխվեց կառավարչապետության: Արևելահայության նկատմամբ հետզհետե ձևավորվեց անվստահության մթնոլորտ: Նոր կայսր Ալեքսանդր III–ը և նրա շրջապատը շատ սառը, նույնիսկ թշնամական վերաբերմունք դրսևորեցին այդ տարիներին Հայկական հարցի հնարավոր լուծման խնդրում: Հայ ինքնությունը պահպանող կառույցների՝ եկեղեցու, ազգային դպրոցների և մշակութային հաստատությունների դեմ էլ ցարական արքունիքն ուղղեց իր առաջին հարվածը:

1884 թ. Ալեքսանդր III–ը հաստատեց ***«Հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին կանոնները»***: Հայկական դպրոցների գործունեությունը սահմանափակող կանոններից ամենախիստը տարրականից բարձր հայկական դպրոցներ ունենալու արգելքն էր: Բայց կառավարությունը հանդիպեց անսպասելի դիմադրության. Էջմիածնի սինոդը հրաժարվեց նոր կանոններն ընդունելուց: Այնուամենայնիվ, ցարական իշխանությունները գործադրեցին այդ որոշումը. 1885 թ. Կովկասի երկրամասում, Նոր Նախիջևանում և Բեսարաբիայում փակվեցին 300 հայկական դպրոցներ:

Համաժողովրդական բողոքի ալիք բարձրացավ: Թիֆլիսում գործող հայ հեղափոխական նարոդնիկական կազմակերպությունը հրատարակեց ***«Հայ եղբայրներ և հայ քույրեր»*** խորագրով թռուցիկը: *«Մեր դպրոցները փակվում են ավիների օգնությամբ, թող դա լինի բռնակալների միակ մխիթարությունը»*,— գրված էր թռուցիկում: Այս թռուցիկը տարածվեց երկրամասի հայկական ու հայաշատ քաղաքներում: Արտասահմանի հայությունը ևս խիստ դատապարտեց ցարական կառավարության քաղաքականությունը:

Հայկական դպրոցներին վերաբերող թռուցիկի հեղինակները հետագայում դարձան ազգային–ազատագրական շարժման գործիչներ: Դրանք էին Ք. Միքայելյանը, Ս. Ջավարյանը, Խ. Մալումյանը, Գ. Ղարաջյանը (Արկոմեդ) և ուրիշներ:

Հայության պայքարը տվեց իր արդյունքները. 1886 թ. նոր ուսումնական տարվանից վերաբացվեցին հայկական դպրոցները: Սակայն ցարական աստիճանավորները պահանջում էին հայկական դպրոցներում արգելել հայոց պատմության և աշխարհագրության դասավանդումը, իսկ պետական դպրոցներում պարտադրում էին հայոց կրոնը դասավանդել ռուսերենով:

Նույնիսկ այսպիսի մթնոլորտում հայ կրթական կյանքը սկսում է աստիճանաբար աշխուժանալ: 1895 թ. Անդրկովկասում, Աստրախանում, Նոր Նախիջևանում և Բեսարաբիայում միասին գործում էր 253 դպրոց:

Շարունակելով հայ ազգային դպրոցը վերացնելու քաղաքականությունը՝ ցարական իշխանությունները ***1896 թ. հունվարին*** նորից փակեցին հայկական դպրոցները: Այդքանով նրանք չսահմանափակվեցին: Հարվածի թիրախ դարձան նաև հայկական բարեգործական,

մարդասիրական, հրատարակչական ընկերությունները: Սաատկացան հպաճանքները հրատարակչական գործի և հատկապես հայ մամուլի նկատմամբ:

Կովկասի իշխան Գոլիցինի կառավարչապետության տարիներին ռուսական մամուլում հոդվածներ տպագրվեցին, որոնցում հայերին դավանափոխության կոչ էր արվում: Հակահայկական մոլուցքը Գոլիցինին հանգիստ չէր տալիս: 1898 թ. նախարարների կոմիտեի հատուկ նիստում նա առաջարկեց հայ ժողովրդի մի մեծ զանգված Կովկասից արտաքսել Սիբիր:

Կառավարչապետի հակահայկական սադրանքների սուր ծայրն ուղղված էր նաև 1894–1896 թթ. կոտորածներից հետո Անդրկովկաս հասած արևմտահայ փախստականների դեմ: Կառավարության համաձայնությամբ 1901 թ. նոյեմբերին Գոլիցինը 50 հազարի հասնող այդ մարդկանց վերաբերյալ հատուկ շրջաբերական հրապարակեց: Գործադրված ճնշումների հետևանքով արևմտահայերի մի մասը վերադարձավ հայրենիք, մյուս մասն անցավ Պարսկաստան: Բայց Գոլիցինի ձեռնարկած հակահայկական գործողությունների նոր՝ ավելի ծանր ալիք էր սպասվում:

Հասարակական շարժումները: XIX դ. վերջին տասնամյակում Ռուսաստանում ազգային շարժումներին զուգահեռ տեղի էին ունենում նաև սոցիալական բնույթի ելույթներ: Անդրկովկասի և Հայաստանի բանվորների տարերային բռնկումներ եղան Թիֆլիս–Կարս, Ալեքսանդրապոլ–Երևան երկաթուղու շինարարությունում: Պահանջները հիմնականում տնտեսական էին՝ աշխատավարձի բարձրացում, աշխատաժամանակի կրճատում, աշխատանքային ու կենցաղային պայմանների բարելավում և այլն:

Ստեփան Շահումյան

Բանվոր դասակարգի պայքարին միանում է Հայաստանի գյուղացիությունը: Գյուղացիական հուզումներ են տեղի ունենում Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Զանգեզուրի, Դարալագյազի գավառներում և երկրամասի հայաբնակ այլ վայրերում: Լոռու Հաղպատ գյուղում գյուղացիների նկատմամբ զենք գործադրվեց. եղան սպանվածներ ու վիրավորներ:

Սկզբնական շրջանում բանվորական և գյուղացիական ընդվզումների նկատմամբ հայկական ազգային կուսակցությունները գործուն վերաբերմունք չէին դրսևորում՝ համարելով, որ դրանք կարող են հայ հասարակության ուշադրությունը շեղել Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժումներից: Այս առումով եռանդուն գործունեություն ծավալեցին միայն ***սոցիալ–դեմոկրատական*** ուժերը:

Ռուսաստանում սկիզբ առած սոցիալ–դեմոկրատական շարժումը XIX դ. վերջերին և XX դ. սկզբին տարածվում է նաև Այսրկովկասում ու Հայաստանում: Թիֆլիսի մի խումբ բանվորներ 1898 թ. ստեղծեցին հայ բանվորների առաջին սոցիալ–դեմոկրատական խմբակը՝ «Բանվորական միությունը»:

Եվրոպայում գործող հնչակյաններն առաջինն էին, որ հայերեն թարգմանեցին և տարածեցին մարքսիստական գրականություն: Մարքսիստական գաղափարների տարածման գործում խոշոր դեր է խաղացել սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կուսակցության նշանավոր գործիչ ***Ստեփան Շահումյանը***: Արևելյան Հայաստանում սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակը ստեղծվել է 1899 թ. Ջալալօղլիում (Ստեփանավան) նրա կողմից: 1903 թ. Կովկասի սոցիալ-դեմոկրատական բոլոր կազմակերպությունները միավորվեցին Կովկասյան միության մեջ: Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը ևս միաձուլվեց նրան:

1903 թ. հուլիսին Լոնդոնում հրավիրվեց ***Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՌՍԴԲԿ)*** երկրորդ համագումարը, որին Կովկասից մասնակցում էին նաև հայ պատգամավորներ ***Բոգդան Կնունյանցը*** և ***Արշակ Զուրաբյանը***: Ծրագրային և կազմակերպական հարցերում համագումարում խոր տարաձայնություններ էին առաջացել: Համագումարում Վլադիմիր Լենինի կողմնակիցները ստացան ***մեծամասնականներ*** (բոլշևիկներ), իսկ մյուսները՝ ***փոքրամասնականներ*** (մենշևիկներ) անունը: Բոլշևիկների և մենշևիկների միջև պայքարն Անդրկովկասում նույնպես առանձնակի սուր բնույթ կրեց:

Այսպիսով՝ արդյունաբերական հասարակության ձևավորման շրջանում հայկական միջավայրում ազգային կուսակցությունների կողքին գործունեություն էին ծավալել նաև սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քաղաքականություն էր վարում ռուսական կառավարությունը Այսրկովկասում. որն էր դրա նպատակը: Ինչո՞ւ էր այդ քաղաքականությունն ուղղվում հատկապես Հայոց եկեղեցու և հայ դպրոցի դեմ: Ներկայացրեք Ալեքսանդր III-ի հաստատած «Կանոնները» և դրանց հետևանքները: Ինչ քաղաքականություն էր վարում Կովկասի կառավարչապետ Գոլիցինը. որն էր այդ քաղաքականության գլխավոր նպատակը:
2. Հայ բանվորներն ու գյուղացիները սոցիալական ինչ շարժումներ ծավալեցին Այսրկովկասում: Ինչ պահանջներ էին նրանք առաջադրում: Ինչ վերաբերմունք ունեին հայ ազգային կուսակցությունները և ինչո՞ւ: Քննարկեք և մեկնաբանեք, թե ինչու էին այլ վերաբերմունք որդեգրել սոցիալ-դեմոկրատական ուժերը: Սոցիալ-դեմոկրատական ինչ կազմակերպություններ ստեղծվեցին Արևելյան Հայաստանում և Այսրկովկասի արդյունաբերական կենտրոններում:

§ 3. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան կայսրությունը տնտեսական, քաղաքական ու մշակութային առումով շարունակում էր մնալ հետամնաց պետություն: Այդ բռնապետությունն այլևս չուներ երբեմնի հզորությունը և անկասելի անկում էր ապրում: Թուրքական տիրապետության ծանր պայմաններում գտնվող ազգերը հերոսական պայքար ծավալեցին իրենց բռնաղատված իրավունքներն ու

անկախությունը վերականգնելու համար: Նրանցից շատերը հաղթանակով ավարտեցին ազգային–ազատագրական պայքարը և հասան բաղձալի արդյունքների: Այլ էր իրավիճակը մեր հայրենիքի բռնազավթված մասում՝ Արևմտյան Հայաստանում:

Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը, բնակչությունը: XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին թուրքական կառավարությունը մի քանի անգամ փոխեց Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը: Դա արվում էր այն սկզբունքով ու դիտավորությամբ, որ ոչ մի նահանգում հայերը մեծամասնություն չկազմեին: Արևմտյան Հայաստանը բաժանված էր վեց նահանգների՝ ***Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի ու Սեբաստիայի***: Յուրաքանչյուր նահանգ տրոհվում էր գավառների (սանջակ), գավառը՝ գավառակների (կազա), իսկ գավառակը՝ գյուղախմբերի: Վարչական բաժանումներում արգելված էր գործածել ***Հայաստան*** անունը: Սուլթանական կառավարությունը մշտապես ոտնահարում էր հայերի իրավունքները: Պաշտոնները ձեռք էին բերվում կաշառքով, և նշանակումից հետո աստիճանավորներն անխնա կողոպտում էին բնակչությանը, առաջին հերթին՝ հայերին:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի 1876 թ. տվյալներով՝ Օսմանյան կայսրությունում ապրում էր ***3 միլիոն հայ***, որից ***մոտ երկու միլիոնը՝ Արևմտյան Հայաստանում***: Իսկ այդ ժամանակ աշխարհում հաշվվում էր շուրջ ***5 միլիոն հայ***:

Արևմտյան Հայաստանում ապրում էին նաև քրդեր, թուրքեր, ասորիներ, հույներ, չերքեզներ, հրեաներ և այլն: Քանակությամբ երկրորդը քրդերն էին, իսկ երրորդը՝ թուրքերը: Սակայն օսմանյան պետության ազգային խտրականության ու հայահալած քաղաքականության հետևանքով աստիճանաբար պակասում էր հայերի թիվը, իսկ մահմեդականներինը՝ ավելանում: Հայերի համար մեծ չարիք դարձան նախ Կովկասից, ապա Բալկաններից հայկական հողերում վերաբնակեցվող մահմեդականները՝ չերքեզները և մուհաջիրները: Նրանց տրվում էին զանազան արտոնություններ, ինչը կտրուկ սրում էր ազգամիջյան հարաբերությունները հայկական նահանգներում:

Արևմտյան Հայաստանի բնակչության միայն 10 տոկոսն էր ապրում քաղաքում: Իրենց հայրենիքից հայերին դուրս մղելու թուրքական քաղաքականության հետևանքով հայության թիվը հատկապես խոշոր քաղաքներում օրեցօր նվազում էր:

Հայ գյուղացիության հողազրկումը: Օսմանյան կայսրությունում պահպանվում էին միջնադարից եկող հողատիրության ձևերը՝ պետական, մասնատիրական և հոգևոր հաստատություններին պատկանող (վակուֆային): Թուրքական կառավարությունը իր սոցիալական հենարանն ուժեղացնելու համար թույլատրեց քուրդ ավատատերերին ամրանալ հայկական հողերի վրա: Քուրդ աղաները հայ գյուղացիների զգալի մասին հողազուրկ դարձրին: ***Հողազուրկ գյուղացիները***, որոնց անվանում էին ***մարաբա***, ենթարկվում էին դաժան շահագործման:

Հայ գյուղացիության վիճակը գնալով ավելի անտանելի էր դառնում: Նրանց համար իսկական պատուհաս էին հարկահանության կիրառվող համակարգը, ավազակային հարձակումները, կողոպուտն ու անձնական անապահովությունը:

Արևմտյան Հայաստանում գերիշխող էր ավատատերերին վճարվող բնամթե-

ռային հարկը՝ տասանորդը, կային նաև պետական զանազան հարկեր: Քրիստոնյաներից ծառայության փոխարեն վերցնում էին նաև զինվորական հարկ: Հարկերը հավաքվում էին ամենայն խստությամբ, հաճախ այն ավարտվում էր ունեցվածքի բռնագրավմամբ:

Այսպիսով՝ ի տարբերություն արևելահայերի, որոնք կյանքի և ունեցվածքի ապահովություն ունեին, արևմտահայերն ապրում էին իրավազուրկ և անապահով պայմաններում, ենթարկվում էին ազգային խտրականության, հալածանքների, իսկ դարավերջից՝ նաև ցեղասպանական քաղաքականության:

Մանուֆակտուրային արդյունաբերության զարգացումը: Օսմանյան կայսրությունում գերիշխող ավատատիրական հետամնաց վարչակարգն արգելակում էր երկրի զարգացումը: Եվրոպական զարգացած տերություններն իրականացնում էին Օսմանյան կայսրության գաղութացման և նրանից գերշահույթներ ստանալու քաղաքականություն: Աստիճանաբար արտասահմանյան կապիտալն ամրապնդվում էր երկրի տնտեսության մեջ, ստեղծվում էին արդյունաբերական ձեռնարկություններ, կառուցվում երկաթուղիներ:

XIX դ. վերջերին, երբ զարգացած արդյունաբերական երկրներում հիմնվում էին գերհզոր ձեռնարկություններ ու մենատիրություններ, հայկական նահանգներում նոր միայն սկիզբ էր առնում ու զարգանում մանուֆակտուրային արտադրությունը:

Վանում, Կարինում, Արաբկիրում, Խարբերդում, Բիթլիսում, Երզնկայում հիմնվում են տեքստիլ և սննդի արդյունաբերության մանուֆակտուրաներ: Զարգանում է սպիրտային խմիչքների արտադրությունը. Կարինում արտադրում էին օղի, իսկ Խարբերդում՝ գինի: Գինեգործությունը զարգանում էր նաև հայկական գյուղերում:

Կարինում հիմնվեցին ծխախոտի, Երզնկայում՝ լուցկու արտադրության ձեռնարկություններ: Միևնույն ժամանակ ստեղծվեցին նաև առաջին գործարանները: Խարբերդում հիմնվեցին մետաքսամշակման և կիսամեքենայացված մեքենաշինական գործարաններ: Մեքենաշինական նման գործարան ստեղծվեց նաև Վանում:

Այսպիսով՝ XIX դարավերջին հայկական նահանգներում դեռևս տիրապետող էին արտադրության կազմակերպման հին ձևերը, սակայն սկզբնավորվում և դանդաղորեն սկսում էր ծավալվել մանուֆակտուրային ու գործարանային արդյունաբերությունը:

Քաղաքները, արհեստները և առևտուրը: Արևմտյան Հայաստանի քաղաքները նույնպես դանդաղ էին վերափոխվում. նոր ժամանակների շունչն այնքան խոր չէր, որքան կայսրության մայրաքաղաքում և արևմտյան ծովափնյա քաղաքներում: Տնտեսական հարաբերությունների, առևտրի ու արհեստների մեջ, մարդկանց ապրելակերպում գերիշխող էր ավանդականը: Այդուհանդերձ, հայկական նահանգներում նույնպես դրսևորվում էր շուկայական հարաբերությունների և արդիական մշակույթի ազդեցությունը:

Տեղաշարժեր էին նկատվում Արևմտյան Հայաստանի համեմատաբար խոշոր քաղաքներում: 1893 թ. տվյալներով՝ Կարինում ապրում էր 40 000, Վանում՝ 30 000, Բիթլիսում՝ 30 000 մարդ: Հայ բնակչությունը զբաղվում էր առևտրով, արհեստներով ու արդյունաբերական արտադրությամբ, իսկ թուրքերը՝ պետական պաշտոնավարությամբ, զինվորական ծա-

Կարինի ընդհանուր տեսքը

ռայությամբ և մասամբ՝ առևտրով ու արհեստներով:

Հայկական նահանգներում որոշ չափով զարգացան արհեստները և առևտուրը: Կարինի հայ արհեստավորները հայտնի էին պողպատի վրա արվող փորագրություններով ու որակյալ կողպեքներով, Վանն ավանդաբար մեծ հռչակ ուներ իր ոսկերիչների գեղեցիկ արտադրանքով, Մուշի արհեստավորները պատրաստում էին ոսկեզօծ զարդանախշերով կաճուճներ: Խարբերդի հայերը հռչակված էին գորգագործությամբ:

Շուկայական հարաբերությունները մուտք գործեցին արհեստի ոլորտ, և հայ արհեստավորները դարձան մանր ապրանք արտադրողներ: Նրանք անձամբ կամ միջնորդ առևտրականների միջոցով իրացնում էին իրենց ապրանքը տեղական և հեռավոր շուկաներում: Հայ առևտրականները, բացի արհեստագործական արտադրանքից, շուկայում իրացնում էին արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքներ:

Արդյունաբերության, արհեստների, առևտրի ու գյուղատնտեսության որոշակի աշխուժացումը հանգեցրեց արևմտահայության սոցիալական կյանքի փոփոխությունների: Արևմտահայ ձեռներեցները (հատկապես մայրաքաղաքում ապրող) ձևավորեցին հայ վաշխառուական և առևտրական կապիտալը: Աստիճանաբար նեղվելով օտարերկրյա կապիտալի մրցակցությունից՝ հայ ձեռներեցները սկսեցին իրենց հիմնական միջոցները ներդնել հայկական միջավայրում և կայսրության մյուս ազգային երկրամասերում: Պատահական չէ, որ արդյունաբերության որոշ ճյուղերում գերիշխում էր հայկական կապիտալը:

Հայկական կապիտալը ներդրվում է նաև արտադրական ոլորտում. երկրի կենտրոնում ու հայկական նահանգներում սկսում են կառուցել նավաշինարան, արդյունաբերական գործարաններ, հիմնում դրամատներ և այլն: Շուտով հայտնվեց նոր մրցակից՝ թուրքական կապիտալը: Այդուամենայնիվ, 1914 թ. դրությամբ կայսրության արդյունաբերական ձեռնարկությունների ***50%-ը*** պատկանում էր ***հույներին***, ***20%-ը՝ հայերին*** և միայն ***15%-ը՝ թուրքերին***:

Ձևավորվում է նաև հայ բանվորությունը: Նրանց մեծագույն մասը նախկին գյուղացիներ, արհեստավորներ ու մանր ապրանք արտադրողներ էին, որոնք, աղքատանալով և ունեզրկվելով, համալրում էին արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների շարքերը: Օսմանյան իշխանությունների վարած տնտեսական և սոցիալական քաղաքականության հետևանքով հայերի ստվար զանգվածներ թողնում էին հայրենիքը, և ժամանակավոր կամ մշտական բնակության մեկնում կայսրության արևմտյան քաղաքներ, հատկապես Կ. Պոլիս: Այսպես կոչված պանդխտությունը կամ գաղթականությունը մեծ չարիք դարձավ հայության համար՝ բուն հայրենիքում պակասում էր հայության թիվը, տկարանում էր ազգային ներուժը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ էր Օսմանյան կայսրությունը նոր ժամանակների ավարտական փուլում: Վարչական ինչ փոփոխություններ կատարվեցին Արևմտյան Հայաստանում, ինչ սկզբունքով էին դրանք իրագործվում: Ներկայացրեք Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը և տեղաշարժերը: Օգտվելով քարտեզից՝ ներկայացրեք Արևմտյան Հայաստանի որևէ նահանգի վարչական բաժանումը և նշանավոր պատմաաշխարհագրական օբյեկտները:
2. Հողատիրության ինչ ձևեր կային Օսմանյան կայսրությունում: Ներկայացրեք արևմտահայ գյուղացիության վիճակը: Համեմատեք արևելահայ և արևմտահայ գյուղացիության դրությունը:
3. Ինչ տնտեսական քաղաքականություն էին վարում եվրոպական զարգացած երկրներն Օսմանյան կայսրության նկատմամբ: Ձեր կարծիքով ինչո՞ւ էր արդյունաբերությունը զարգանում Օսմանյան տերության հատկապես ծովափնյա շրջաններում: Ներկայացրեք Արևմտյան Հայաստանի արդյունաբերության ընդհանուր պատկերը:
4. Ինչ դեր ունեին հայերն Օսմանյան կայսրության առևտրաարհեստագործական կյանքում: Ինչ գործոններ նպաստեցին արևմտահայության սոցիալական կյանքի փոփոխություններին: Ինչ հետևանքներ դրանք ունեցան, նշեք մի քանի դրական և բացասական հետևանքներ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

§ 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԻ ՍՐՈՒՄԸ: 1877–1878 ԹԹ. ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Արևելյան հարցը և Ղրիմի պատերազմը: XIX դ. կեսերին եվրոպական տերությունների միջև նորից սրվեց պայքարը Օսմանյան կայսրությունում ազդեցություն տարածելու համար: Միջազգային հարաբերություններում այդ հիմնախնդիրը, որն առաջ էր եկել դեռ XVIII դարի վերջերին, ստացել էր ***Արևելյան հարց*** անվանումը: Արևելյան հարցի մի դրսևորումն էլ Օսմանյան կայսրությունում գտնվող Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների (կաթոլիկ, ուղղափառ, Հայ առաքելական) միջև ընթացող վեճն էր, որը միջազգային քննարկման հարց դարձավ: Ֆրանսիայի կայսր ***Նապոլեոն III–ը***՝ որպես կաթոլիկ երկրի տիրակալ, ավելի լայն իրավունքներ պահանջեց կաթոլիկ եկեղեցու համար, իսկ Ռուսաստանը հանդես եկավ ուղղափառ եկեղեցու շահերի պաշտպանությամբ: Սուր վեճը, որն առաջին հայացքից ընթանում էր սրբազան վայրերի համար, վերածվեց Թուրքիայից զանազան զիջումներ կորզելու՝ տերությունների միջև պայքարի:

Հարաբերությունների հետագա սրումը 1853 թ. աշնանը հանգեցրեց ռուս–թուրքական պատերազմի, որը հայտնի է ***Ղրիմի*** կամ ***Արևելյան պատերազմ*** անունով:

1854 թ. օսմանյան Թուրքիային միացան Անգլիան, Ֆրանսիան և Սարդինական թագավորությունը: Ռուսական հրամանատարությունը խնդիր էր դրել գրավելու Բոսֆորի և Դարդանելի նեղուցները, Բալկաններն ու Արևմտյան Հայաստանը, իսկ Թուրքիան՝ Անդրկովկասը:

Կովկասյան ճակատում ռուսական զորքերը տանում են խոշոր հաղթանակներ: 1853 թ. նոյեմբերին ***Բաշկադըկլարի***, իսկ հաջորդ տարվա հուլիսին՝ ***Քյուրուկդարայի*** մոտ նշանավոր ռազմական ու պետական գործիչ գեներալ Վ. Բեհբութովի զորքերը ջախջախիչ պարտության են մատնում մեծաքանակ թուրքական բանակը: 1855 թ. նոյեմբերին ռուսական զորախումբը գրավում է Հայաստանի նշանավոր կենտրոն Կարսը: Ղրիմի պատերազմը ազատագրության նոր հույսեր է արթնացնում արևմտահայերի մեջ: Սակայն այս անգամ էլ նրանց իղձերը չեն իրականանում:

Իսկ Ղրիմ թերակղզում ռուսական բանակը ծանր պարտություններ է կրում: ***1856 թ. մարտին Փարիզում*** կնքված հաշտության պայմանագրով կատարվում է գրավված տարածքների փոխանակում. Ղրիմը հետ բերելու համար Ռուսաստանը կրկին հրաժարվում է Արևմտյան Հայաստանում գրաված տարածքներից և կորցնում միջազգային ասպարեզում իր ազդեցիկ դերը: Անգլիան և Ֆրանսիան հասնում են իրենց դիրքերի ամրապնդմանը սևծովյան նեղուցներում, Բալկաններում և Փոքր Ասիայում: Ակնհայտ է դառնում, որ Արևելյան հարցը մեծ տերությունների համար իրականում Օսմանյան կայսրության վրա իրենց ազդեցությունը տարածելու միջոց է: Արևմտյան Հայաստանի խնդիրը, որ մշտապես հետաքրքրել էր տերություններին, ուղղակիորեն դառնում է Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը և շուտով ***Հայկական հարց*** անունով հայտնվում միջազգային դիվանագիտության կիզակետում:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի պաճառները և սկիզբը: Ղրիմի պատերազմում կրած անհաջողությունից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրները դարձան սևծովյան տարածաշրջանում և Բալկանյան թերակղզում իր թուլացած դիրքերի ամրապնդումն ու միջազգային հեղինակության վերականգնումը: Այդ նպատակով ռուսական արքունիքը 1870-ական թվականների կեսերին կանգնեց օսմանյան տիրապետության դեմ ապստամբած բալկանյան ժողովուրդների պաշտպանության դիրքերում:

Արևմտաեվրոպական երկրներն իրենց հերթին չհապաղեցին օգտվել Օսմանյան կայսրության համար ստեղծված անբարենպաստ իրավիճակից: Հանդես գալով Բալկաններում Օսմանյան կայսրության դիրքերի պահպանման օգտին՝ նրանք փաստորեն հակադրվեցին Ռուսաստանին և սլավոնական ժողովուրդներին: Այսպես կրկին սրվեց Արևելյան հարցը:

1876 թ. գահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ II-ը փորձեց Օսմանյան տերությունը ճգնաժամից դուրս բերելու ելք գտնել: Հանդիսավորությամբ ազդարարվեց երկրում սահմանադրության ընդունումը, որով կայսրությունն անվանապես դարձավ սահմանադրական միապետություն: Նույն ժամանակ եվրոպական դեսպանների՝ Կ. Պոլսում սկսված ժողովը սուլթանից պահանջեց կայսրության քրիստոնյա ժողովուրդների համար բարեփոխումների անհապաղ իրագործում:

Կ. Պոլսի հայ ազգային-հասարակական շրջանակները փորձեցին ***Արևելյան հարցի*** շուրջ ստեղծված իրավիճակն օգտագործել արևմտահայերի համար ևս բարեփոխումներ պահանջելու նպատակով: Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովն իշխանություններին ներկայացրեց վերջին քսան տարում գավառահայության հարստահարությունների վերաբերյալ մի փաստաթուղթ, որը «Տեղեկագիրք գավառական հարստահարությանց» վերնագրով լույս տեսավ առանձին գրքույկով:

Աբդուլ Համիդը, ստանալով Մեծ Բրիտանիայի աջակցությունը, մերժեց մյուս տերությունների պահանջը՝ պատճառաբանելով, որ այդ քայլը նախ՝ միջամտություն է իր երկրի ներքին գործերին, և երկրորդ՝ սահմանադրության ընդունումով տերությունում լուծվում են ոչ միայն քրիստոնյաների, այլև ամբողջ բնակչության հիմնախնդիրները: Բնականաբար, դրանով մերժվում էր նաև հայ գործիչների պահանջը արևմտահայերի իրավունքների հարգման վերաբերյալ: Տեղի ունեցածն ավելի սրեց ռուս–թուրքական հարաբերությունները, որին իրենց նպաստը բերեցին Մեծ Բրիտանիան և Գերմանիան: Այս ամենն ի վերջո հանգեցրեց ռուս–թուրքական նոր պատերազմի:

1877 թ. ապրիլի 12–ին Ռուսաստանը պատերազմ սկսեց օսմանյան Թուրքիայի դեմ: Ռուսական կայսրությունը ձգտում էր իր ազդեցությունը տարածելու Բալկանների, սևծովյան նեղուցների և Արևմտյան Հայաստանի վրա: Եվրոպական տերությունները հույս ունեին, որ պատերազմող երկրներն ավելի կթուլանան. Ռուսաստանը վերջնականապես դուրս կմղվի ռազմավարական նշանակություն ունեցող վերոհիշյալ տարածաշրջանից, իսկ թուրքական կառավարությունը հարկադրված իրենց օգտին նոր զիջումներ կանի:

Պատերազմական գործողությունները ծավալվեցին միաժամանակ ***Բալկանյան*** և ***Կովկասյան*** ճակատներում: Պատերազմի գլխավոր թատերաբեմը Բալկանյան թերակղզին էր: Այստեղ 185–հազարանոց ռուսական զորակազմը, բուլղարների, սերբերի և սլավոնական այլ ժողովուրդների զինական ուժերի հետ համագործակցած, խոշոր հաղթանակներ տարավ թուրքական 160–հազարանոց բանակի դեմ: Անցնելով Դանուբ գետը՝ ռուսական զորքերը ձեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և մտան Բուլղարիայի տարածք: 1878 թ. սկզբին ռուսները մտան ***Սոֆիա***, ապա՝ ***Պլովդիվ*** և մոտեցան Ադրիանուպոլսին ու Կ. Պոլսի մատույցներին:

Պատերազմը Կովկասյան ճակատում: Հայերի մասնակցությունը և ակնկալիքները: Պատերազմում հաղթանակի հասնելու գործում վճռական նշանակություն ունեցան նաև Կովկասյան ճակատում ռուսական զորքերի տարած հաղթանակները: Այդ ուղղությամբ կռվող 70–հազարանոց ռուսական բանակի առջև խնդիր դրվեց շեշտակի հարվածներով հնարավորինս մխրճվելու Արևմտյան Հայաստանի խորքերը և դրանով իսկ հակառակորդին ստիպելու Բալկանյան ճակատից զորքեր տեղափոխել Արևելյան ճակատ:

Այս ճակատում հիմնական հարվածող ուժը հայազգի գեներալ ***Միխայիլ Լոռիս–Մելիքովի (Լոռու Մելիքյան)*** հրամանատարությամբ գործող 52–հազարանոց Կովկասյան կորպուսն էր, որն իրականացնում էր գլխավոր հարձակումը ռազմաճակատի կենտրոնական մասով՝ Ալեքսանդրապոլ–Կարս ուղղությամբ: Կորպուսի Երևանյան ջոկատը գործում

Մ. Լոռիս-Մելիքով

էր ռազմաճակատի ձախ թևում՝ հայազգի նշանավոր մեկ այլ հրամանատարի՝ գեներալ ***Արշակ Տեր-Ղուկասովի*** (Տեր-Ղուկասյան) գլխավորությամբ:

Սլավոնական ժողովուրդների ազատագրական պայքարը և սկսված պատերազմը ոգևորության ալիք են առաջացնում հայերի շրջանում: Արևմտահայությունը կրկին փորձում է իր ազատագրությունը կապել Ռուսաստանի հաղթանակի հետ: Այդ նպատակով հայության լայն զանգվածներ իրենց եռանդուն մասնակցությունն են բերում պատերազմին: Նրանք զինվորագրվում են ռուսական բանակին, պարեն մատակարարում զորքերին, իրականացնում հետախուզական աշխատանքներ, հանգանակություններ կատարում: Հայերը հատկապես ոգեշնչվում էին այն հանգամանքով, որ ռուսական բանակի հրամանատարական կազմում զգալի թիվ էին կազմում ազգությամբ հայ ականավոր զորավարները: Մ. Լոռիս-Մելիքովի և Ա. Տեր-Ղուկասովի կողքին մարտնչում էին գեներալներ ***Հովհաննես Լազարևը, Բեհբութ Շեկոմնիկովը, Հակոբ Ալիազովը, Լևոն Մելիքովը, Ստեփան Քիշմիշևը*** և տարբեր աստիճաններ ունեցող բազմաթիվ զինվորականներ:

Երևանյան ջոկատն ապրիլի 30-ին գրավում է Բայազետը, ապա նաև Դիադինն ու Ալաշկերտը: Հաղթական կռիվներ մղելով թուրքական զորքերի դեմ՝ Տեր-Ղուկասովի ջոկատը, սակայն, աջ թևում գործող ռուսական զորամասի պարտության պատճառով հունիսին նահանջի հրաման է ստանում: Երևանյան ջոկատի հրամանատարը նահանջը կատարում է մեծ վարպետությամբ՝ միաժամանակ փրկելով թուրքերի ձիրաններում հայտնված բազմահազար հայ գաղթականների:

Հակառակորդը, մեծ ուժեր կենտրոնացնելով, պաշարում է ***Բայազետի բերդը***: Ավելի քան 10 հազար հոգուց բաղկացած թուրքական զորքերը կատաղի գրոհներ են գործում բերդի վրա, բայց գրավել չեն կարողանում: Գտնվելով թշնամու օղակում, անհավասար մարտեր մղելով հակառակորդի դեմ՝ Բայազետի կայազորը, որի պետը կապիտան ***Ֆյոդոր Շտոկվիչն*** էր, սպառում է իր նյութական և ռազմական պաշարները: Միակ փրկությունը դրսի օգնությունն էր: Պաշտպանների՝ իրենց օրհասական դրության մասին Տեր-Ղուկասովին քանիցս տեղեկացնելու փորձերն անհաջողության են մատնվում: Վերջապես հայ կամավորներից ***Սամսոն Տեր-Պողոսյանը*** (Ռաֆֆու «Խենթը» վեպի հերոս Վարդանը), քրդական տարազով ծպտյալ անցնում է թշնամու օղակով և լուր հասցնում Տեր-Ղուկասովին: Երևանյան ջոկատը օգնության է հասնում Բայազետի կայազորին և համառ մարտերից հետո ազատագրում տեղի ուժերին 23 օրվա պաշարումից: Բայազետի հերոսական պաշտպանությունն իր գեղարվեստական արտացոլումն է գտել ռուս գրող Վ. Պիկուլի «Բայազետ» վեպում:

Մ. Լոռիս-Մելիքովի կորպուսը մայիսի 5-ին գրոհով վերցրել էր Արդահանը: Տա-

ղանդավոր զորավարը թուրքական զորքերի դեմ հաջորդ հաղթանակը տանում է ***հոկտեմբերի 15-ին*** Անիի ավերակներից ոչ հեռու՝ ***Արջո-Սոիմ (Ալաջա)*** լեռան ստորոտին: Թուրքերի հրամանատարը հազիվ է փրկվում գերվելուց:

Սակայն Կարսի մատույցներում մղված երկարատև մարտերը ռուսներին հաջողություն չեն բերում: Նրանք կրում են ծանր կորուստներ: Այդ ամրոցի գրավման գործը հանձնարարվում է Հովհաննես Լազարևին: Նա, ի պատասխան Լոռիս-Մելիքովի նահանջի հրամանին, ասում է. *«Հայտնեք կորպուսի հրամանատարին, որ ես գրոհում եմ անվերադարձ: Եթե Կարսը չգրավեմ գիշերը, ապա կվերցնեմ ցերեկը կամ կշարունակեմ գրոհը մինչև հաջորդ գիշեր»*: Եվ իրոք, նոյեմբերի 6-ին հայ կամավորականների առաջապահ ջոկատի ուղեկցությամբ ընթացող Լազարևի զորամասի վճռական գրոհն ավարտվում է կատարյալ հաղթանակով:

Կարսի անկումից հետո թուրքական հրամանատարությունն այլևս ի զորու չեղավ ցուցաբերելու լուրջ դիմադրություն: 1878 թ. հունվարին կնքված զինադադարով թուրքական կողմը ճանաչեց իր պարտությունը: Ռուսներն առանց կռվի փետրվարին մտան Կարին:

Ռուս-թուրքական պատերազմին մասնակցեցին Անդրկովկասի զանազան շրջաններում կազմավորված հեծյալ և հետևակային ութ կամավորական ջոկատներ, որոնք հիմնականում համալրված էին հայերով: Դրանց մեծ մասը զինվել էր սեփական միջոցներով: Կամավորական շարժումն այնպիսի լայն ծավալ էր ստացել, որ ռուսական իշխանությունները ստիպված էին դադարեցնել ջոկատների հետագա հավաքագրումը:

Ռուսաստանի հաջողությանն իրենց արժանի նպաստը բերեցին նաև բազմաթիվ արևմտահայեր: Հայոց պատրիարք ***Ներսես Վարժապետյանն*** ու Ազգային ժողովի երեսփոխանները (պատգամավորները) պաշտոնապես հանդես եկան կայսրությանը հավատարիմ մնալու կոչերով: Սակայն եղան համարձակ գործիչներ, ովքեր բացահայտորեն իրենց բողոքի ձայնը բարձրացրին Ալաշկերտի և Արևմտյան Հայաստանի այլ գավառների հայության նկատմամբ քրդերի ու թուրքերի վայրագ գործողությունների կապակցությամբ: Ազգային ժողովում Պոլսի հայոց նախկին պատրիարք ***Մկրտիչ Խրիմյանը*** պահանջեց այդ կոտորածների մասին հատուկ տեղեկագիր կազմել և հանձնել մեծ տերություններին:

Բարձր դուռը՝ թուրքական կառավարությունը, վախենալով, որ պատերազմում իրենց պարտությունը կարող է իրատեսական դարձնել նաև Արևմտյան Հայաստանի ինքնավարացման կամ անկախացման ծրագիրը, հայերին սիրաշահելու քայլեր կատարեց. սպանված ալաշկերտցիների համար պաշտոնական ցավակցություն հայտնվեց, հայերին բարեփոխումների խոստումներ տրվեցին: Սակայն Օսմանյան կայսրության պարտությունից ոգեշնչված՝ անգամ արևմտահայ զգուշավոր գործիչները սկսեցին ավելի համարձակորեն խոսել հայկական խնդրի լուծման մասին և այդ նպատակով դիմումներ հղեցին Ռուսաստանին ու մյուս մեծ տերություններին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պարզաբանեք «Արևելյան հարցի» էությունը: Որո՞նք էին Ղրիմի կամ Արևելյան պատերազմի պատճառները: Ներկայացրեք ռազմական գործողությունների ընթացքը Կովկասյան ճակատում: Ե՞րբ և ո՞ր պայմանագրով ավարտվեց Ղրիմի պատերազմը: Ի՞նչ հետևանքներ այն ունեցավ:
2. Ի՞նչ փոփոխություն կրեց Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Ղրիմի պատերազմից հետո: Որո՞նք էին Արևելյան հարցի սրման պատճառները 1870-ական թվականների կեսերին: Օսմանյան կայսրությունը ճգնաժամից դուրս գալու ի՞նչ քայլեր ձեռնարկեց: Ի՞նչ ակնկալիքներ ունեին ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանը և մեծ տերությունները:
3. Ներկայացրեք ռազմական գործողությունների ընթացքը Կովկասյան ճակատում: Պատերազմին մասնակցած ի՞նչ նշանավոր հայ ռազմական գործիչներ գիտեք: Նրանցից որևէ մեկի մասին գրեք փոքրիկ հոդված: Ռուսների հաղթանակի գործում ի՞նչ ներդրում ունեցան հայերը: Ի՞նչ ակնկալիքներ ունեին հայերը այս պատերազմից:

§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և Հայկական հարցը: Պատերազմի ավարտին հաշտության պայմանների շուրջ կրկին սրվեց միջազգային իրադրությունը: Հնարավորինս քիչ կորուստներով հաշտության հասնելու նպատակով սուլթանական կառավարությունն ապավինեց Անգլիայի աջակցությանը: Վերջինս շտապեց օգտվել պատեհ իրավիճակից և դարձավ ռուս-թուրքական բանակցային գործընթացում գլխավոր թելադրող կողմը:

Ռուսաստանն ինչպես նախորդ, այնպես էլ այս պատերազմում առաջնակարգ համարեց իր դիրքերի ամրապնդումը առաջին հերթին եվրոպական տարածքներում: Մինչդեռ Արևմտյան Հայաստանում գրաված հողերը ռուսական դիվանագետները համարում էին «խիստ հետամնաց, ճանապարհազուրկ և զարգացման համար մեծ միջոցներ պահանջող» տարածք: Գեներալ Մ. Լոռիս-Մելիքովը, ծանոթանալով զինադադարի ռուսական նախագծին, արտահայտում է տրամագծորեն հակառակ կարծիք: Նա ընդգծում էր Կաղզվանի աղահանքերի, Սողանլուղի անտառային հարստությունների, Կարսի և Բայազետի ռազմավարական կարևորությունը Ռուսաստանի համար: Նման մոտեցումները ստիպեցին ռուսական դիվանագիտությանը արևմտահայ մի շարք գավառների պատկանելության հարցում լինել ավելի վճռական:

1878 թ. փետրվարի 19-ին կնքվեց ռուս-թուրքական հաշտությունը Կ. Պոլսից ոչ հեռու գտնվող ***Սան Ստեֆանո*** ծովափնյա ավանում՝ հայ մեծահարուստ ***Առաքել Դադյանի*** (արևմտահայերեն՝ Տատեան) ամառանոցում: Օսմանյան Թուրքիան ճանաչում էր Սերբիայի, Ռումինիայի, Չեռնոգորիայի անկախությունը, Բուլղարիայի ինքնավարությունը: Ռուսաստանին էին անցնում Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի և Բայազետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝

Բաթում նավահանգստով: Էրզրումը և Բասենը վերադարձվում էին Օսմանյան կայսրությանը: Տերության ասիական մասում տարածքների կորուստը թուրքական պատվիրակության նախագահ ***Սաֆվեթ փաշային*** հարկադրեց բողոքել ռուսական կողմին՝ իրենց ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական տարածքներից զրկելու համար:

Սան Ստեֆանոյի պայմանագրում արծարծվեց նաև XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական–քաղաքական կյանքի հիմնական առանցքը կազմող ***Հայկական հարցը***: Այն, կազմելով Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը, այդ ժամանակաշրջանում վերաբերում էր արևմտահայության ազատագրության կամ ինքնավարության խնդրին: 1877–1878 թթ. պատերազմից հետո այդ հարցը դարձավ մեծ տերությունների քննարկման խնդիր և ներառվեց միջազգային դիվանագիտության օրակարգում: Հարցի բարձրացման գործում որոշակի դեր ունեցավ հաշտության կնքման նախօրեին արևմտահայ հասարակական շրջանների ծավալած եռանդուն գործունեությունը:

Արևմտահայ գործիչները՝ հոգևորականներ, արևմտահայերի Ազգային ժողովի երեսփոխաններ, այդ թվում՝ ժողովի ատենապետ ***Ստեփան փաշա Ապրանյանը*** և անգամ Սաֆվեթ փաշայի խորհրդական, դիվանագետ ***Սարգիս Համամջյանը***, Հայկական հարցի լուծման ակնկալությամբ հանդիպումներ ունեցան ռուսական պատվիրակության ղեկավար կոմս ***Նիկոլայ Իգնատևի*** հետ:

Գործիչների մեծ մասի կարծիքով հաշտության պայմանագրում հայերին հարկավոր էր շնորհել նույն իրավունքները, ինչ բալկանյան ժողովուրդներին: Ջգուշավոր գործելակերպով հայտնի հայոց պատրիարք ***Ներսես Վարժապետյանը*** ևս ռուսական պատվիրակությունից պահանջում էր պայմանագրում համապատասխան կետ մտցնել Ռուսաստանի հովանավորության տակ Արևմտյան Հայաստանում ինքնավարություն ստեղծելու կամ գրաված շրջանները Ռուսաստանին միացնելու վերաբերյալ:

Սան Ստեֆանոյի պայմանագրում տեղ գտան Հայաստանին և հայերին վերաբերող առանձին հոդվածներ ու ձևակերպումներ, որոնց դրույթները միայն մասնակիորեն էին համընկնում հայ հասարակական շրջանների առաջադրած պահանջներին: ***16–րդ հոդվածով*** Բարձր դուռը պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում ռուսների գրաված և կրկին Օսմանյան կայսրությանը վերադարձվելիք գավառներում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: 25–րդ հոդվածն իրավունք էր տալիս ռուսական զորքերին 6 ամիս ժամկետով մնալու Հայաստանում: 27–րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր չհալածելու պատերազմում ռուսներին աջակցած քրիստոնյաներին:

Անկասկած, այս ձևակերպումներում կային շատ անորոշություններ. համաձայն 16–րդ հոդվածի՝ ստացվում էր, որ Օսմանյան կայսրությունում հայերի հալածանքների մեղավորները ոչ թե թուրքական իշխանություններն են, այլ քրդերն ու չերքեզները: Նման ձևակերպումը ոչ թե կերաշխավորեր հայերի անվտանգությունը, այլ կսրեր նրանց հարաբերությունները հարևանների հետ: Դա, անշուշտ, ձեռնտու էր սուլթանին: Պարզ չէր նաև, թե ռուսական զորքերն ընդամենը 6 ամսում ինչպես պետք է ներազդեին բարեփոխումների իրագործման վրա, ինչ իրական

երաշխիքներ կային ռուսներին աջակցած հայերի անվտանգության համար և այլն:

Այդուհանդերձ, պայմանագիրը պարունակում էր նաև հայերի համար դրական կետեր. նախ՝ Արևմտյան Հայաստանի մի զգալի հատված անցնում էր ռուսական տիրապետությանը: Երկրորդ՝ պայմանագրում ***Հայաստան*** բառի առկայությամբ սուլթանական կառավարությունն առաջին անգամ դիվանագիտական մակարդակով ստիպված էր ընդունել, որ կայսրության կազմում, ի թիվս նվաճված այլ երկրների, գոյություն ունի նաև ***հայերի հայրենիք Հայաստանը***, կա այնտեղ բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն: Եվ վերջապես՝ Հայկական հարցը, դառնալով միջազգային հարց, նոր լիցք էր հաղորդում հայ ազգային–ազատագրական պայքարի հետագա ծավալմանը:

Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում: Բալկաններում և Արևելքում Ռուսաստանյան կայսրության դիրքերի ամրապնդումն առաջին հերթին առաջացնում է Մեծ Բրիտանիայի և Ավստրո–Հունգարիայի դժգոհությունը: Նրանք պահանջեցին կնքված պայմանագրի կետերն ամբողջությամբ համաձայնեցնել իրենց հետ, հակառակ դեպքում սպառնում էին պատերազմով: Ռուսական կառավարությունը ստիպված գնում է զիջումների՝ համաձայնելով հարցը մեծ տերությունների հետ քննարկելուն: Որոշվում է Գերմանիայի կանցլեր ***Օտտո Բիսմարկի*** նախագահությամբ Բեռլինում վեհաժողով գումարել: Տերությունների միջև ծավալվում է սուր դիվանագիտական պայքար:

Հայկական հարցի միջազգայնացումն աշխուժություն է առաջացնում հայ հասարակական շրջաններում: Ամենուր խոսում էին Հայաստանի ինքնավարության

Բեռլինի վեհաժողովի հայ պատվիրակությունը Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ. 1878 թ.

մասին: Ավելի համարձակներն անկախ Հայաստանի ծրագրեր էին մշակում: Նույնիսկ առաջադրվեցին անկախ հայրենիքի կառավարիչների թեկնածություններ՝ Ստ. Ալանյան, Մ. Լոռիս–Մելիքով և ուրիշներ: Բարձր դուռը փորձում է իր հսկողության տակ վերցնել հայերի գործողությունները: Սուլթանը Կ. Պոլսի հայոց պատրիարքին նույնիսկ առաջարկում է պատվիրակություն ուղարկել վեհաժողով: Այդ քայլով նա ցանկանում է հայկական պահանջները հակադրել բուլղարների շահերին և դրանով խառնել Ռուսաստանի ծրագրերը: Հայոց պարիարքը որոշում է առիթն օգտագործել և հայերի պահանջները ներկայացնել վեհաժողովին:

Ազգային գործիչ Գրիգոր Օտյանի առաջարկությամբ կազմվում է Եվրոպա մեկնող պատվիրակություն, որի մեջ մտնում են Մկրտիչ Խրիմյանը, Խորեն Նարբեյը, Մինաս Չերազը և Ստեփան Փափազյանը՝ հայության շրջանում մեծ հեղինակություն վայելող ***Մկրտիչ Խրիմյանի*** գլխավորությամբ: Հոգևոր գործիչ ***Խ. Նարբեյին*** հանձնարարվում է մեկնել Սանկտ Պետերբուրգ՝ ռուսական

արքունիքի հետ հայերի պահանջները համաձայնեցնելու համար: Հայ պատվիրակները լինում են Իտալիայում և Ֆրանսիայում, հանդիպում այդ երկրների արտգործնախարարների հետ և ստանում որոշ հուսադրող խոստումներ: Փարիզում նրանք արտաքին գործերի նախարարին են հանձնում ապագա ինքնավար Հայաստանի քարտեզը և արևմտահայ նահանգների բնակչության վիճակագրության վերաբերյալ տեղեկանք:

Լոնդոնում լորդ ***Ջեյմս Բրայսի*** գլխավորած հայասիրական շրջանները, ի պաշտպանություն Հայկական հարցի, մեծ հանրահավաք են կազմակերպում: Սակայն Մեծ Բրիտանիայի արտգործնախարար ***Սոլսբերին*** Մ. Խրիմյանին և Մ. Չերազին տալիս է խուսափողական պատասխան:

Դիվանագիտական խարդավանքներից հեռու կանգնած հայ պատվիրակները չգիտեին, որ անգլիական դիվանագիտությունն արդեն լուրջ աշխատանք էր տարել վեհաժողովում թուրքերի շահերը պաշտպանելու համար: ***Մայիսի 18-ին Լոնդոնում*** կնքվում է ռուս-անգլիական համաձայնագիր, որը նախատեսում է Սան Ստեֆանոյի պայմանագրի մի շարք կետերի վերանայում: Դրանք վերաբերում են նաև Հայկական հարցին: Անգլիական դիվանագիտությունը լուրջ հաջողության է հասնում նաև Բարձր դռան հետ հարաբերություններում: Վեհաժողովի նախօրյակին՝ ***մայիսի 25-ին***, կնքված անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրով Մեծ Բրիտանիան թուրքերից ստանում է Կիպրոս կղզին՝ փոխարենը խոստանալով պաշտպանել թուրքական պահանջները: ***1878 թ. հունիսի 1-ին Բեռլինում*** սկսված վեհաժողովն ընթանում է Մեծ Բրիտանիայի մշակած ծրագրով:

Խ. Նարբեյը Պետերբուրգում Ալեքսանդր II կայսրին Հայաստանի ինքնավարության ծրագիրը հանձնելուց հետո մեկնում է Բեռլին և միանում Մ. Խրիմյանին ու Մ. Չերազին: Ինքնավարության նախագիծը և այլ փաստաթղթեր հանձնվում են վեհաժողովի մասնակից 6 երկրների պատվիրակներին: Ըստ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կազմած նախագծի՝ ռուսների կողմից Արևմտյան Հայաստանում գրավված, բայց կրկին Թուրքիային վերադարձվող տարածքում, որը գերազանցապես հայաբնակ (2 միլիոն բնակչությունից 1,3 միլիոնը հայ էր) տարածք էր, հայերին պետք է տրվի ինքնավարություն՝ հայ նահանգապետի կառավարման իրավունքով:

Անհանգստացած հայերի օրեցօր ավելի համարձակ դարձող պահանջներից՝ Բարձր դուռը հայոց պատրիարքից պահանջում է Բեռլինից հետ կանչել հայկական պատվիրակությանը: Բայց Ն. Վարժապետյանը համարձակորեն մերժում է սուլթանի պահանջը: Բեռլինում մեծ տերությունների ներկայացուցիչները ոչ միայն ուշադրության չեն արժանացնում հայ պատվիրակների պահանջները, այլև նրանց թույլ չեն տալիս մասնակցել վեհաժողովին: Այսպես Հայկական հարցը հատկապես Անգլիայի քաղաքականության հետևանքով վճռվում է առանց հայերի մասնակցության:

16-րդ հոդվածի փոխարեն Բեռլինի պայմանագրում մտցվում է նոր հոդված՝ 61-րդը, որով Հայկական հարցի լուծման հեռանկարը դառնում է ավելի մշուշապատ ու անիրական: Հայաստանի ինքնավարության ծրագիրը լիովին մերժվում է: Այդ հոդվածը ևս թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր հայերի

համար բարեփոխումներ անցկացնել, ապահովել նրանց անվտանգությունը: Բայց բարեփոխումների իրագործման հսկողությունն այժմ, բացի Ռուսաստանից, դրվում էր նաև վեհաժողովի մասնակից մյուս տերությունների վրա: Դա վերջիններիս հնարավորություն էր տալիս միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Քանի որ Ռուսաստանն իր զորքերն անհապաղ դուրս էր բերելու գրաված տարածքներից, ոչ մի երաշխիք չէր մնում բարեփոխումների կենսագործման համար: ***Հարաստան*** հասկացությունը փոխարինվում էր ***հայաբնակ մարզեր*** բառակապակցությամբ: Նշանակում է՝ պայմանագիրը ստորագրող երկրների համար Հայաստանն արդեն դիտվում էր ոչ թե հայերի հայրենիք, այլ սոսկ հայերով բնակեցված տարածք: Ալաշկերտն ու Բայազետը, ինչպես Անգլիան խոստացել էր Թուրքիային, վերադարձվեցին Օսմանյան կայսրությանը: Ռուսաստանին էր մնում միայն Կարսը՝ շրջակա գավառներով: Կարս բերդաքաղաքը շուտով դարձավ նորաստեղծ Կարսի մարզի կենտրոնը, դրա մեջ մտան ***Կարսի, Արդահանի, Կաղզվանի*** և ***Օլթիի*** գավառները (օկրուգներ): Այն մտցվեց Կովկասի փոխարքայության կազմը՝ որպես առանձին վարչական միավոր: Ռուսաստանը զիջումների գնաց նաև բալկանյան հարցերում:

Վեհաժողովի որոշումները խոր հիասթափություն առաջացրին հայության մեջ: Մ. Խրիմյանն ու Մ. Չերազը վեհաժողովի վերջին օրը՝ հուլիսի 1-ին, բողոք ներկայացրին մեծ տերություններին: Խրիմյան Հայրիկը վեհաժողովը պատկերավոր ձևով նմանեցրեց հարիսայի ճաշկերույթի, որին երկաթե շերեփներով ներկայացած մասնակիցները կարողանում էին տանել իրենց բաժինը: Բայց քանի որ ինքը միայն թղթե շերեփ ուներ, այն էլ մնաց հարիսայի մեջ, ստիպված էր ձեռնունայն վերադառնալ: Պատահական չէ, որ ինչպես Խրիմյանը, այնպես էլ բազմաթիվ այլ գործիչներ Բեռլինից հետո հասկացան, որ օտար տերությունների հետ իրենց հույսերը կապելու փոխարեն անհրաժեշտ է կազմակերպել սեփական ժողովրդի զինված ազատագրական պայքարը: Ահա թե ինչու Խրիմյան Հայրիկը կոչ է անում հայերին. *«Ձեր բարեկամաց և ազգականաց իբրև պարգև մէկ-մէկ զէնք տարեք, զէնք առեք և դարձեալ զէնք: Ժողովուրդ, ամենէն առաջ քո ազատութեան յոյսը քո վրայ դիր, քո խելքին և բազկին ոյժ տուր...»*: Հայ ժողովուրդը Հայկական հարցը առաջին հերթին հասկանում էր որպես արևմտահայության ազատագրության հարց և դրան նա նվիրեց իր ուժերի մեծ մասը XIX դ. վերջին և XX դ. սկզբին:

Մեծ տերությունների միջև եղած հակասությունների հետագա սրման պայմաններում այդ հարցը գնալով ավելի խճճվեց և նորանոր դժբախտություններ բերեց հայ ժողովրդին: Մեծ տերությունները բազմիցս հանդես եկան հայկական բարեփոխումներն իրականացնելու պահանջներով՝ նպատակ ունենալով օսմանյան Թուրքիայից զիջումներ կորզելու իրենց երկրների համար: Սուլթանական կառավարությունն օտար երկրների մշտական միջամտություններից ազատվելու համար նախընտրեց Հայկական հարցի լուծման ուրույն ուղի՝ հայերին ցեղասպանելու քաղաքականությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հիմնական հոդվածները: Ո՞րն էր Հայկական հարցի էությունը: Արևմտահայ հասարակական շրջաններն ի՞նչ գործունեություն ծավալեցին հօգուտ Հայկական հարցի լուծման: Ներկայացրեք և գնահատեք Սան Ստեֆանոյի պայմանագրում Հայաստանին և հայերին վերաբերող հոդվածներն ու ձևակերպումները:
2. Ներկայացրեք հայ հասարակական շրջանների և հայկական պատվիրակությունների գործունեությունը: Համեմատեք Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերում Հայաստանին և հայերին վերաբերող հոդվածներն ու ձևակերպումները՝ նշելով ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Ո՞ր գավառներից էր կազմված Կարսի մարզը:
3. Ի՞նչ դասեր քաղեցին հայերը Բեռլինի վեհաժողովից: Ինչո՞ւ էին մեծ տերությունները ժամանակ առ ժամանակ հանդես գալիս որպես Հայկական հարցի ջատագովներ:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԵԼՔԸ

§ 1. ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

XIX դ. կեսերին Հայաստանում տեղի ունեցած սոցիալ–տնտեսական ու քաղաքական փոփոխությունները, Արևմտյան Եվրոպայում ծավալված հեղափոխությունները, ռուսական քաղաքական մտքի վերելքը լուրջ տեղաշարժեր առաջացրին հայ հասարակական–քաղաքական կյանքում: Հայ իրականության մեջ սկսեցին լայնորեն քննարկվել Հայաստանի ապագայի, հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրության, Հայ եկեղեցու, հայոց լեզվի դերի և այլ կենսական հարցեր: Այդ բուռն քննարկումների արդյունքում հայկական միջավայրում ձևավորվեցին ***հասարակական–քաղաքական հոսանքներ***:

Հայկական պահպանողականություն: XIX դ. 50–70–ական թթ. ձևավորված բազմաբնույթ ուղղությունների մեջ ավելի հստակորեն զանազանվեցին ***պահպանողական*** ու ***ազատական*** (ազատամտական, լիբերալ) հոսանքները: Պահպանողականների կարծիքով՝ հայ ժողովրդի կենսունակության աղբյուրը միջնադարյան ավանդական արժեքային համակարգի մեջ է: Ուստի նրանք հայության համար կենսական խնդիր էին համարում կործանված հայկական միապետական համակարգի վերականգնումը, Հայոց եկեղեցու և հայ նահապետական ընտանիքի բարոյական նկարագրի, հայոց լեզվի (նկատի ունեին գրաբարյան հայերենը) անաղարտության պահպանումը: Ազգային արժեքների պահպանմանն ուղղված նրանց գործունեությունը հիմք էր տալիս այդ հոսանքի ներկայացուցիչներին անվանելու ***ազգային պահպանողականներ***:

Այդ հոսանքն սկսեց ավելի եռանդուն գործել, երբ արևմտաեվրոպական առաջադիմական, լուսավորյալ գաղափարների ազդեցությամբ հայ հասարակություն

ներթափանցեցին նոր, ազատական (լիբերալ) գաղափարներ:

Հայ իրականությունը փոխելու, այն «եվրոպականացնելու» ազատականների հայացքներն ազգավնաս համարելով՝ ազգային–պահպանողականները նրանց դեմ սուր պայքար էին ծավալել: Նրանք մի կողմից՝ չէին ժխտում հողի մշակման եվրոպական մեթոդների, տնտեսության մեջ գիտատեխնիկական նոր եղանակների կիրառման օգտակարությունը, մյուս կողմից՝ ազգի համար սպառնալիք էին համարում կապիտալիստական հարաբերությունների արմատավորումը:

Պահպանողականները հանդես էին գալիս ամբողջ ազգի անունից, թեև ամենից առաջ արտահայտում էին գյուղական ազգաբնակչության և քաղաքի արհեստավորության ու մանր առևտրականների շահերը: Նրանք ձգտում էին ազգային հաստատությունների՝ եկեղեցու և դպրոցի միջոցով ազգի համար կրթված անհատներ պատրաստել: Պատահական չէ, որ այս հոսանքը ներկայացնող գործիչների մեջ կային բազմաթիվ գիտնականներ, հրապարակախոսներ, գրողներ, բարձրաստիճան հոգևորականներ, թերթերի խմբագիրներ ու թարգմանիչներ:

Այս հոսանքի ճանաչված դեմքերից ***Գաբրիել վարդապետ Այվազովսկին*** (նկարիչ Հովհ. Այվազովսկու եղբայրը) հրատարակում էր «Մասյաց աղավնի», ***Մարկոս Աղաբեկյանը***՝ «Կռունկ հայոց աշխարհին», ***Հովհաննես Չամուռճյան–Տերոյենցը***՝ «Երևակ» պարբերականները: Այդ ժամանակ ազդեցիկ էին նաև «Արարատ», «Մեղու Հայաստանի», «Արծվի Վասպուրական» պարբերականները: Պահպանողականների ազգանպաստ հայացքները կիսում էին պատմաբաններ Ս. Պալասանյանը, Ա. Երիցյանը, գրող Ծերենցը և ուրիշներ:

Հայ պահպանողականներն ազգային ու կրոնական ճնշումների համար հաճախ քննադատում էին ինչպես սուլթանական կառավարությանը, այնպես էլ ռուսական ցարիզմին: Ավելի համարձակ գործիչները գտնում էին, որ Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանը վերածվել է հումքի կցորդի, 1836 թ. եկեղեցական կանոնադրությամբ սահմանափակվել են Հայոց եկեղեցու և դպրոցի իրավունքները, վտանգվել է հայի ազգային ինքնությունը: Արևմտահայ գործիչներն էլ իրենց քննադատության սլաքն ուղղում էին թուրքական կառավարության դեմ: Հակառակ աշխարհաբարի, որն ուներ երկու ճյուղ՝ արևմտահայերեն և արևելահայերեն, պահպանողականները գրաբարի մեջ էին տեսնում ազգի հոգևոր–լեզվական միասնության պահպանումը:

Ընդհանուր առմամբ՝ ազգային–պահպանողականները դեմ էին հասարակության մեջ կտրուկ, հեղափոխական փոփոխություններին, ուստի հույսեր էին կապում օսմանյան Թուրքիայում ընդունված 1839 թ. և 1856 թ. հրովարտակների, Ռուսաստանում ազատական բարեփոխումների հետ: Նրանցից Հ. Չամուռճյանը արևմտահայ սահմանադրական շարժման հակառակորդ էր: Նրա կարծիքով արևմտահայության կյանքի ղեկավարման համար ստեղծվող մարմինները կարող են նսեմացնել Հայոց եկեղեցու դերը:

Ազատականությունը հայ իրականության մեջ: Հայ ազատամտական հոսանքը ձևավորվեց եվրոպական ազատականության ազդեցությամբ և աչքի ընկավ իր բազմազանությամբ: Այդ հոսանքը հանդես եկավ հայության հասարակական ու

մշակութային կյանքը եվրոպականացնելու, ավանդական դպրոցը, եկեղեցին բարեփոխելու գաղափարներով: Ազատամիտ գործիչների անխնա քննադատության հիմնական թիրախը հայ իրականության նահապետական բարքերի ու բարոյականության կրող հաստատությունն էր՝ եկեղեցին:

Սակայն այդ քննադատությունը երբեմն հասնում էր ծայրահեղության. հայ ազատական քննադատները, պահանջելով եկեղեցու ազատականացում, մոռանում էին նշել նաև նրա ունեցած հսկայական քաղաքական ու մշակութային դերը մեր ժողովրդի պատմության մեջ:

Ազատամիտները պահպանողականներին հակադրվեցին նաև լեզվի հարցում՝ պնդելով, որ պետք է հրաժարվել գրաբարից և անցնել ամբողջ ժողովրդի համար հասկանալի աշխարհաբարին:

Հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների կյանքի փոփոխություններն ազատականները հիմնականում կապում էին օսմանյան Թուրքիայի և Ռուսաստանի քաղաքական համակարգերի արդիականացման հետ: Տնտեսության զարգացման հարցում կարևորում էին արդյունաբերական արտադրության ստեղծումը: Նրանց մեծ մասը դեմ էր հեղափոխական, ապստամբական գործողություններին:

Ազատականների գաղափարախոսության մեջ առանձնահատուկ տեղ ուներ *ազգի ինքնորոշման*, այսինքն՝ իր սեփական կամքով ապագան կերտելու հարցը: Այս կարևոր խնդրում ազատամիտների մոտեցումները միանման չէին: Հայ ազատականության նշանավոր դեմքերից մեկը՝ ***Ստեփանոս Նազարյանցը***, որի խմբագրությամբ 1858 թ. Մոսկվայում լույս էր տեսնում ***«Հյուսիսափայլ»*** ամսագիրը, գտնում էր, որ ազգի խնդիրների լուծման համար հարկ չկա առաջադրելու քաղաքական ինքնորոշման պահանջներ: Դրա փոխարեն նա պաշտպանում էր մշակութային ինքնավարության գաղափարը, հատկապես կարևորում առաջադիմական դպրոցի ու լուսավորության նշանակությունը:

Համարձակ մտքեր էին արտահայտում «Արևելք», «Արևմուտք», «Ծաղիկ», «Մասիս» և այլ պարբերականների շուրջ համախմբված արևմտահայ ազատականները՝ ***Ստեփան Ոսկանյանը, Գրիգոր Օտյանը, Գրիգոր Չիլինկիրյանը, Նահապետ Ռուսինյանը*** և այլք: Սուլթանական բռնատիրության պայմաններում նրանք պոլսահայ վերնախավից և թուրքական իշխանություններից պահանջում էին արևմտահայությանը շնորհել համընդհանուր ընտրական իրավունք, որին հասնելու համար նրանք ծավալել էին սահմանադրական շարժում:

Պոլսահայ ազատականների շարքում առանձնանում էին երգիծական ժանրի երկու խոշոր դեմքեր՝ «Մեղու» հանդեսի խմբագիր ***Հարություն Սվաճյանը*** և գրող, հրապարակախոս, երգիծաբան ***Հակոբ Պարոնյանը***: Նրանք ծաղրուծանակի էին ենթարկում ազգի շահերի կեղծ պաշտպաններին, սուլթանական իշխանության կամակատար հայ մեծահարուստ ամիրայական դասին, ազգային կյանքի կազմակերպման գործում պահանջում էին արևմտահայության լայն խավերի մասնակցություն:

1872 թ. ***Գրիգոր Արծրունու (1845–1892)*** հիմնադրած ***«Մշակ»*** թերթը շուտով դարձավ ոչ միայն հայկական լիբերալիզմի, այլև առհասարակ հայ ազգային–հասարակական մտքի յուրահատուկ դարբնոցը:

Միքայել Նալբանդյան

Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի փաստական տապալումից հետո շատ «մշակականներ» իրենց զգուշավոր հայացքները փոխարինեցին ազատագրական պայքարի ազգայնական համարձակ մտքերով:

Ազգայնականությունը և սոցիալիզմը հայ իրականության մեջ: XIX դ. երկրորդ կեսին հայ հասարակական–քաղաքական կյանքում աստիճանաբար ամրակայվեցին ազգայնական և սոցիալիստական ուղղությունները:

Հասարակության հեղափոխական վերափոխման կողմնակից էր ***Միքայել Նալբանդյանը (1829–1866)***՝ հայ քաղաքական մտքի ազգային հեղափոխական–ժողովրդավարական ուղղության հիմնադիրը: Իր բուռն գործունեությամբ ու տեսական հարուստ ժառանգությամբ Նալբանդյանը մնաց որպես եզակի դեմք հայ հասարակական–քաղաքական կյանքում: Նա սերտ կապեր ուներ ռուսական և արևմտաեվրոպական առաջադեմ գործիչների հետ, հանդես էր գալիս հայ ազգային արժեքները եվրոպական արժեքային համակարգին համահունչ դարձնելու և զարգացնելու գաղափարներով: Հետևելով ռուս ժողովրդավար–հեղափոխականների օրինակին՝ Նալբանդյանը պաշտպանում էր ժողովրդական ապստամբության միջոցով ռուսական և եվրոպական երկրների քաղաքական համակարգերի տապալման դրույթը: Ըստ նրա տեսակետի՝ դրա շնորհիվ հնարավոր կդառնար սոցիալական, համաեվրոպական արդար հասարակարգի ստեղծումը, որի հետ էլ նա կապում էր իր ժողովրդի երկու հատվածների ազատագրությունը: Փաստորեն, սոցիալապես իրավահավասար, արդար հասարակության՝ սոցիալիզմի հասնելու նրա ծրագրերն իրատեսական չէին:

1870–1880–ական թթ. հայ ազատական միտքը նոր բարձրության հասավ ***Մատթեոս Մամուրյանի, Գրիգոր Արծրունու*** և հատկապես ***Ռաֆֆու*** (Հակոբ Մելիք–Հակոբյան, 1835–1888) շնորհիվ ու թևակոխեց իր ***ազգայնականության*** փուլը: Դա նշանակում է, որ հայ ժողովրդի, հատկապես արևմտահայության վիճակի վատթարացմանը զուգընթաց ազգի սոցիալական վիճակի բարելավման մասին ազատականների մտքերը փոխարինվում էին ազգի ազատագրության գաղափարով:

Մ. Մամուրյանը ջերմորեն ողջունեց Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, հանգանակություններ կազմակերպեց հերոս զեյթունցիներին օգնելու համար, կոչ արեց ազատագրական պայքարում հույսը դնելու սեփական ժողովրդի վրա: Ջինված ապստամբության ճանապարհով հայության ազատագրության գաղափարախոսությունն իր գագաթնակետին հասավ խոշոր տեսաբան ու մեծանուն գրող Ռաֆֆու գրական ու հրապարակախոսական ստեղծագործություններում:

Ազգայնական և սոցիալիստական ուղղությունների տարածումը հայ իրականության մեջ ի վերջո հանգեցրեց ազգային կուսակցությունների և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչի՞ հետ էին կապված XIX դ. կեսերին հայ հասարակական–քաղաքական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը: Հիմնական գծերով ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք հայ պահպանողականների գաղափարները: Ո՞ր պարբերականներում էին նրանք հրապարակախոսությամբ հանդես գալիս:
2. Հիմնական գծերով ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք հայ ազատականների գաղափարները: Ովքե՞ր էին հայ ազատականների նշանավոր ներկայացուցիչները: Ո՞ր պարբերականներում էին նրանք հրապարակում իրենց տեսակետները:
3. Ներկայացրե՛ք և գնահատե՛ք Մ. Նալբանդյանի հասարակական–քաղաքական հայացքները: Ի՞նչ է ազգայնականությունը: Ովքե՞ր էին այս ուղղության առաջին նշանավոր ներկայացուցիչները:
4. Համեմատե՛ք հայ ազատականների, պահպանողականների և ազգայնականների գաղափարներն ու տեսակետները. նշե՛ք դրանց առանձնահատկություններն ու ընդհանրությունները:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Մատթեոս Մամուրյանը՝ սեփական ուժերով ազատագրվելու անհրաժեշտության մասին

Հուսալ, որ օտար ազգ մը Հիսուսի ըրած հրաշք պիտի գործէ, ցնորք է: Սպասել, որ արտաքին փրկիչներ գան և հայ ժողովրդեան սև պատանքը քակեն՝ հիմարութիւն է: Հեք և ստրուկ ժողովրդեան մը առաջին և միակ ազատարարն ինքն է, իր աշխատութիւնն է, իր ներքին ուժն է, իր լոյսն է, միութիւնն ու հաստատ կամքն է:

«Արևելյան մամուլ», 1876 թ.

§ 2. ԱԶԳԱՅԻՆ–ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Արևմտահայերի ազգային սահմանադրությունը: Ղրիմի պատերազմից հետո էլ շարունակվեց Օսմանյան կայսրության հետագա քայքայման գործընթացը: Թուրքահպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները կանխելու նպատակով սուլթանական կառավարությունն Անգլիայի ու Ֆրանսիայի խորհրդով ձեռնամուխ եղավ որոշ բարեփոխումների իրականացմանը: Փարիզի հաշտության նախօրյակին՝ 1856 թ. փետրվարին, Բարձր դուռը հրապարակեց բարեփոխումների նոր հրովարտակ, որը, ինչպես 1839 թ. թանզիմաթը, սին խոստումներից բացի (հպատակ ազգերին քաղաքացիական իրավունքների շնորհում, հոգևոր խորհուրդներ ստեղծելու իրավունք և այլն), ոչինչ չտվեց:

Քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում արևմտահայության իրավազուրկ վիճակը պահպանվում էր: Կ. Պոլսում

տեղի հայ մեծահարուստ ամիրայական դասը, օգտագործելով սուլթանական իշխանությունների հետ իր սերտ կապերը, միանձնյա տնօրինում էր մայրաքաղաքի ու գավառահայության եկեղեցական, դպրոցական, տնտեսական ու իրավական կյանքը: Չհանդուրժելով ստեղծված վիճակը՝ լուսավորյալ հայացքներ ունեցող մի խումբ պոլսահայ մտավորականներ արևմտահայ լայն զանգվածների իրավունքների հաստատման համար ամիրայական դասի դեմ պայքար ծավալեցին:

1857 թ. Կ. Պոլսի Ուսումնական խորհրդի անդամներ ***Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), Նիկողայոս Պալյանը*** և ուրիշներ մշակում են արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն և ներկայացնում համայնքի ընդհանուր ժողովի հաստատմանը: Առաջադրված նախագիծը, կղերականներից՝ հոգևորականներից բացի, որոշակի իրավունքներ էր տալիս նաև աշխարհիկ վարչությանը: Սակայն ամիրաներն ու հոգևոր դասի ներկայացուցիչները, դրանում տեսնելով իրենց իրավունքների նկատմամբ ոտնձգություն, իշխանությունների աջակցությամբ հասնում են նոր հանձնաժողովի ստեղծմանը: 1859 թ. դեկտեմբերին հանձնաժողովը ներկայացնում է բարեփոխված կանոնադրությունը: Հետադիմական ուժերը, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում պահպանողական հոսանքի ներկայացուցիչները, ընդդիմանում են նաև նախագծի այս տարբերակին: Ծավալվում է սուր պայքար: Ժողովրդական նորանոր զանգվածներ են միանում շարժմանը: Առաջադիմական պայքարի գլուխ կանգնում են արևմտահայ ազատական գործիչները: Ի վերջո առաջադեմ ուժերը հաղթում են: ***1860 թ. մայիսի 24-ին*** Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատում է կանոնադրությունը: Ն. Ռուսինյանի առաջարկությամբ այն կոչում են «***Ազգային սահմանադրություն***»:

Սահմանադրությունն Արևմտյան Հայաստանի ու ամբողջ կայսրության հայ բնակչության կրթամշակութային կյանքը կարգավորող իրավական կարևոր փաստաթուղթ էր: Սակայն այն գործադրելու համար դեռ սուլթանի կողմից պիտի հաստատվեր: Հայ կղերականներն ու ամիրաները հատկապես դժգոհ էին, որ համայնքի ընտրովի վարչական մարմիններում իրենց կողքին տեղ էին գրաղեցնելու նաև չքավոր արհեստավորական էսնաֆությունների ներկայացուցիչները: Սուլթանական վարչակարգը պահանջում է վերանայել 1860 թ. կանոնադրությունը: «Պետության մեջ պետություն չի կարող լինել». այս էր իշխանությունների և նրանց ձայնակցող հայ պահպանողական Հ. Զամուռճյանի մտահոգությունը:

Հետադիմական և սահմանադրական ուժերի միջև պայքարը թեժանում է: 1862 թ. օգոստոսի սկզբին կայսրության մայրաքաղաքի փողոցներում և պատրիարքարանում հակառակորդների միջև բախումներ են տեղի ունենում: Դրանք կանխվում են ոստիկանության միջամտությամբ: Վերջապես ***1863 թ. մարտի 17-ին*** սուլթանը վավերացնում է կանոնադրությունը:

Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվում էին արևմտահայության կյանքը կազմակերպող մարմիններ՝ ***Ազգային ժողով*** (Երեսփոխանական ժողով), ***Ազգային կենտրոնական վարչություն***, տարբեր բնագավառներ սպասարկող խորհուրդներ: Ազգային ժողովը՝ որպես օրենսդիր մարմին, ընտրվում էր ամբողջ ազգի կողմից: Պատրիարքը և

Ազգային կենտրոնական վարչությունը գործադիր իշխանությունն իրականացնելու էին ազգային խորհուրդների (ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանքերի) և հոգաբարձությունների (ելևմտից, կտակաց, հիվանդանոցի) միջոցով:

1860 թ. նախագծի համեմատությամբ նոր կանոնադրությունն անհամեմատ չափավոր էր: Նախկին 150 հողվածներից թողնվել էր 99-ը: Հատուկ հողվածով ընդգծվում էր, որ պատրիարքը «տերության հրամանաց գործադրության միջնորդն է»: Ազգային ժողովի երեսփոխանների թիվը կրճատվում էր: Քանի որ մայրաքաղաքի հայությանը հսկողության տակ պահելն ավելի հեշտ էր, իշխանությունները հոգ էին տարել, որ երեսփոխանների մեջ մեծ թիվ կազմեն պոլսահայերը. 140 տեղից նրանց բաժին էր հանվել 100-ը, իսկ ամբողջ 2,5 մլն գավառահայությունն ունենալու էր միայն 40 երեսփոխան:

Այսպիսով՝ համառ ու տևական պայքարից հետո արևմտահայ ժողովրդավարական խավերին հաջողվում է ամիրաներին զրկել ազգային գործերը տնօրինելու մենաշնորհ իրավունքից, ինչպես Մ. Նալբանդյանն է ասում՝ *«ազատելով ազգը մի քանի բռնակալ թշվառականների լծից»*:

Ազգային սահմանադրությամբ կյանքի կոչված վերոհիշյալ մարմինները, ինչ խոսք, ժողովրդավարական իշխանության լիարժեք մարմիններ չէին: Իսկ սահմանադրությունն էլ իրականում միայն արևմտահայության ներքին կյանքը կազմակերպող իրավական փաստաթուղթ էր: Սուլթանական բռնապետական կարգերում այլ բան չէր էլ կարող լինել: Ճանաչված հայասեր, իրավաբան ***Ռոլեն Ժեքմենը*** հետագայում պատկերավոր գրել է, որ եվրոպական սահմանադրությունների սկզբունքներով կազմված այս կարևոր փաստաթղթում ամեն ինչ կա՝ բացի սուլթանական բռնատիրության ճիրաններից հային պաշտպանելու երաշխիքներից:

Այդուհանդերձ, Ազգային սահմանադրությունը, որն ընդհատումներով գործեց հետագա տասնամյակներին, դրական դեր կատարեց հայ հասարակական-քաղաքական կյանքում: Այն նոր լիցք հաղորդեց հայ ազատական շարժմանը: Մկրտիչ Խրիմյանի շնորհիվ, ով 1869 թ. դարձել էր Կ. Պոլսի հայոց պատրիարք, սահմանադրությունը գործադրվեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում: 1872 թ. Ազգային ժողովի անունից իշխանություններին ներկայացվեց տեղեկագիր գավառահայության բիրտ հարստահարումների մասին:

Զեյթունի 1862 թ. ապստամբությունը: Կիլիկիայի հյուսիս-արևելքում՝ Տավրոսի լեռներում գտնվող ***Զեյթունի*** հայությունն իր ինքնավար կարգավիճակը պահպանում էր XIX դ. կեսերին: Կիսանկախ վիճակը պահպանելուն նպաստում էր նրա աշխարհագրական դիրքը: Երկաթի ու կապարարծաթի լեռնահանքերը հնարավորություն էին տալիս զենք ու վառոդ արտադրելու, իսկ անտառները՝ բավարարելու շինանյութի և վառելափայտի պահանջները: Կենտրոնավայր Զեյթուն գյուղաքաղաքի և շրջակա գյուղերի շուրջ 35-40 հազար հայության զբաղմունքը՝ հողի մշակումը, անասնապահությունը և արհեստագործությունը, փակ տնտեսությամբ գոյատևելու պայմաններ էին ստեղծում:

Զեյթունն անվանապես էր ենթարկվում Մարաշի փաշայությանը, պարզապես իշխանություններին տարեկան որոշ քանակությամբ հարկեր էր վճարում: Համայնքը

նախկինի նման ղեկավարում էին չորս տանուտերերը: Կառավարման այս ձևը արդեն մի քանի դար հաստատել էր իր կենսունակությունը:

1830–1850-ական թթ. Զեյթունը հպատակեցնելու՝ Մարաշի փաշաների փորձերն ապարդյուն անցան: Ըմբոստ լեռնագավառն իրեն ենթարկելու կառավարության ջանքերն ավելի եռանդուն դարձան, երբ Կովկասից ներգաղթած չերքեզները բնակեցվեցին Մարաշի շրջակայքում: Չերքեզների ավազակային ջոկատների ուղեկցությամբ թուրքական 10-հազարանոց բանակը 1860 թ. արշավեց Զեյթունի վրա, բայց լեռնցիները ջախջախեցին նրանց և հետ շպրտեցին: Գավառը ստիպված էին լքել նաև չերքեզները:

Մարաշի նորանշանակ ***Ազիզ փաշան*** խնամքով նախապատրաստվել էր հերթական ոտնձգությանը: Նրա սադրանքով 1862 թ. ամռանը Զեյթունի հայ և մահմեդական բնակչության միջև հողային վեճեր ծագեցին: Հուլիսի վերջին դրանց հետևեցին հրետանիով զինված օսմանյան 12-հազարանոց զորքի և չերքեզական, թուրքմենական ու թուրքական խուժանի հարձակումները:

Թուրքական զորքերի ճանապարհին ընկած հայկական գյուղերն իրենց վրա ընդունեցին առաջին հարվածը և առժամանակ կասեցրին թշնամու առաջխաղացումը: Սակայն հետո հակառակորդի գերակշիռ ուժերի ճնշման տակ շրջակա գյուղերի բնակչությունը նահանջեց և կենտրոնացավ Զեյթուն գյուղաքաղաքում՝ պատրաստվելով դիմադրության: Ապստամբությունը գլխավորեցին Շովրոյան, Սուրենյան, Յաղուբյան և Նորաշխարհյան տոհմերի տանուտեր իշ-

Զեյթուն. Կոտորածի ձոր

խանները: Ընդհանուր ղեկավարությունը ստանձնեց ***Մկրտիչ Յաղուբյանը***:

Ազիզ փաշան, շրջապատելով Զեյթունը, պահանջեց անհապաղ վճարել հարկը: Զեյթունցիները մերժեցին նրա պահանջը: Մարտերը շարունակվեցին ինչպես գյուղաքաղաքում, այնպես էլ լեռնային այլ վայրերում:

Հուլիսի 29-ի գիշերը ինքնապաշտպանության ղեկավարները խորհրդակցություն են հրավիրում Ս. Աստվածածնի վանքում: Մոտ 5 հազար ռազմիկներին նրանք բաժանում են խմբերի, նշանակում հրամանատարներ և հրահանգում հերոսաբար մարտնչել, չնահանջել, անգամ կյանքի գնով պահել դիրքերը:

Օգոստոսի 2-ի առավոտյան Ազիզ փաշայի զորքերը մի քանի ուղղություններով Զեյթունի վրա լայնածավալ գրոհ են ձեռնարկում: Գրոհն ուղեկցվում է թնդանոթային սաստիկ հրետակոծությամբ: Զեյթունցիները, այդ թվում՝ կանայք ու ծերեր, միահամուռ ուժերով հերոսական դիմադրություն են ցույց տալիս: Հետ

են մղվում թուրքերի բոլոր գրոհները: Ս. Աստվածածնի վանքի մատույցներում, որտեղ դիրքավորվել էին մահտեսի ***Գրիգոր վարդապետի*** գլխավորած քաջարի ռազմիկները, թշնամին թողնում է հարյուրավոր զոհեր, չորս դրոշակ և մեծ քանակությամբ զինամթերք:

Զեյթունցիներից շատերն այդ մարտերում քաջության օրինակներ են տալիս: Երիտասարդ ***Մարկոս Թաշճրանը***, տեսնելով, որ հակառակորդի մի հրանոթ շատ է վնասում իրենց, որոշում է անցնել թշնամու դիրքերը և շարքից հանել հրանոթաձիգին: Նա կարողանում է սեփական կյանքի գնով կատարել այդ դժվարին խնդիրը:

Զեյթունցիները, օգտագործելով բնական պայմանները, անմատչելի լեռներն ու կիրճերը, հաճախ թակարդներ են սարքում և մեծ կորուստներ պատճառում հակառակորդին: Մի անգամ նրանցից 1500 հոգի Նորաշխարհյանի գլխավորությամբ կռվի են բռնվում թուրքերի հետ, ապա կեղծ փախուստի դիմում: Թուրքական զորքերը, ոգևորված իրենց հաղթանակով, հետապնդում են նրանց: Երբ թշնամին մտնում է Զեյթունի ձորը, հանկարծ հնչում են եկեղեցու զանգերը, և ժայռերի երկու կողմերում դիրքավորված զեյթունցիները հանկարծակի կրակ են տեղում ու քարեր գլորում: Ծուղակն ընկած թշնամին, կորցնելով ավելի քան 750 հոգի, խուճապահար փախուստի է դիմում: Զեյթունցիներն այդ ձորն անվանում են ***Կտտորածի ձոր***:

Զեյթունը գրավելու բոլոր ջանքերն անցնում են ապարդյուն: Թուրքերը, կորցնելով ավելի քան 2000 մարդ և իրենց ունեցած հրանոթները, փախուստի են դիմում: Այս հաղթանակին լեռնականները հասնում են շուրջ 600 քաջորդիների արյան գնով:

Սուլթանական կառավարությունը որոշում է նոր արշավանք կազմակերպել: Անփառունակ Ազիզ փաշային փոխարինում է իր դաժանությամբ հայտնի ***Աշիր*** փաշան: Նա Զեյթունի պաշարումը դադարեցնելու դիմաց պահանջում է հետաքննության նպատակով իր մոտ ուղարկել 4 տանուտերերին: Վերջիններս, հաշվի առնելով, որ սննդամթերքի սպառվելու պատճառով կարող է սով սկսվել, ժամանում են նախ՝ Մարաշ, ապա՝ Կ. Պոլիս: Իշխանությունները նրանց ձերբակալում են:

Գործին միջամտում են Պոլսի հայոց պատրիարքը և Ֆրանսիայի դեսպանը: Ֆրանսիան փորձում է օգտագործել պատեհ առիթը Թուրքիայում իր ազդեցությունն ամրապնդելու համար: Զեյթունի վերնախավի ներկայացուցիչները համաձայնում են ֆրանսիական օգնության դեպքում կաթոլիկություն ընդունել: Նապոլեոն III կայսեր անունից Ֆրանսիայի դեսպանը պահանջում է դադարեցնել լեռնագավառի պաշարումը:

Բարձր դուռը, վախենալով եվրոպական միջամտությունից, գնում է փոխզիջման: Հաշտության կնքմանը նպաստում է նաև հայոց պատրիարքը, որին անհանգստացրել էր հայերի կաթոլիկություն ընդունելու պատրաստակամությունը: Վերացվում է շրջափակումը, ազատ են արձակվում տանուտերերն ու մյուս ձերբակալվածները: Զեյթունցիները պարտավորվում են վճարել հարկերը: Ամենածանր պայմանն այն էր, որ հայերը պետք է համակերպվեին Զեյթունում զորք տեղակայելու՝ կառավարության որոշման հետ: Գավառակը կորցնում է իր նախկին կիսանկախ վիճակը, բայց համայնքի ներքին գործերում հայերը պահպանում են ինքնուրույնությունը:

Զեյթունի 1862 թ. ապստամբությունը խոշոր ազդեցություն ունեցավ հայ ազատագրական շարժման հետագա ողջ ընթացքի վրա, աննախընթաց չափերով բարձրացավ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը: Մ. Նալբանդյանը, Հ. Սվաճյանը, Ծերենցը, Մ. Պեշիկթաշլյանը կապեր են ունեցել ապստամբների հետ, նրանց օգնություն են ցույց տվել: Պեշիկթաշլյանը գրել է իր երգերի հանրահայտ զեյթունյան շարքը՝ ուրվագծելով ազատության համար իր կյանքը նվիրաբերող զեյթունցու հերոսական կերպարը: Հայ նշանավոր բանաստեղծ Ս. Շահազիզը «հայկական քաջասրտության փառավոր ապացույց» համարեց ապստամբությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ սուլթանական կառավարությունը ձեռնամուխ եղավ բարեփոխումների իրականացմանը: Ովքե՞ր և ի՞նչ միջոցներով էին տնօրինում պոլսահայության կյանքը: Ընդհանուր գծերով ներկայացրե՛ք արևմտահայ սահմանադրական շարժման պատմությունը: Վերհանե՛ք ազգային սահմանադրության նշանակությունը:
2. Որտե՞ղ էր Զեյթունը: Ի՞նչ գիտեք նրա մասին: Ովքե՞ր գլխավորեցին Զեյթունի 1862 թ. ապստամբությունը: Ներկայացրե՛ք ապստամբության ընթացքը: Ո՞րն էր Զեյթունի ապստամբության նշանակությունը: Ձեր կարծիքով զեյթունցիները հաղթեցի՞ն, թե՞ պարտվեցին: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

§ 3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Զինված պայքարի գաղափարախոսության ձևավորումը: XIX դ. երկրորդ կեսը հայ ժողովրդի պատմության մեջ բուռն քաղաքական, տնտեսական ու մշակութային վերելքի ժամանակաշրջան էր: Տնտեսության մեջ հատկանշական էր ազատ շուկայական (կապիտալիստական) հարաբերությունների արմատավորումը, իսկ մշակույթի բնագավառում՝ աննախադեպ զարթոնքը: Քաղաքական կյանքում առաջնայինը օտար տիրապետությունից հայ ժողովրդի ազատագրության խնդիրն էր: Պատահական չէ, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Հայկական հարցը կազմեց հայ հասարակական–քաղաքական մտքի զարգացման հիմնայունը, հայրենիքի ազատագրության ուղիների որոնման փորձաքարը:

Հայ քաղաքական մտքի աննախընթաց վերելքը կապված էր ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների հետ: Մի կողմից՝ Եվրոպայում ընթացող հեղափոխությունները, սլավոնական ժողովուրդների ազատագրական շարժումները, մյուս կողմից՝ հայոց ազգային–հասարակական կյանքի զարթոնքը սկիզբ դրին նոր մտածողության՝ զինված պայքարի գաղափարախոսության:

Դրա ամենավառ ապացույցը Զեյթունի 1862 թ. ապստամբությունն էր: Այն հայրենասիրական հզոր լիցք հաղորդեց հայ հասարակական ամենատարբեր շերտերին, նրանց մեջ խորացրեց ազգային միասնության անհրաժեշտության գիտակցությունը: Զեյթունի հերոսամարտը հայերի մեջ ամրապնդեց ազգային իրա-

վունքները զինված պայքարով պաշտպանելու մտայնությունը: Պատահական չէ, որ ապստամբության օրերին Կ. Պոլսում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքներում հնչում էին զեյթունցի եղբայրներին միանալու համարձակ կոչեր:

Սակայն զինված պայքարի նոր ծլարձակած գաղափարախոսությունը 1860–ական թթ. կեսերից նահանջ ապրեց: Զեյթունի ապստամբության անհաջողությունից հետո շատ գործիչներ իրենց հույսը բացառապես կապեցին արևմտահայերի ազգային սահմանադրության գործադրման հետ: Շատերը կարծում էին, որ սահմանադրութամբ ստեղծված մարմինների՝ Ազգային ժողովի և վարչության միջոցով հնարավոր կլինի իշխանությունների առջև բարձրացնել և լուծել ազգային շատ խնդիրներ: Դրանք էին՝ ազգային ու կրոնական խտրականության վերացում, մշակութային ինքնավարության ու քաղաքացիական իրավունքների շնորհում և այլն:

Զինական պայքարի նոր դրսևորումները: Խաղաղ եղանակներով գործելու գաղափարը 1870–ական թթ. կիսում էին ոչ միայն իրենց չափավորությամբ աչքի ընկնող պահպանողականները, այլև ազատական այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսիք էին Գ. Արծրունին, Մ. Խրիմյանը, Ծերենցը, Ռ. Պատկանյանը, Ս. Շահազիզը, Ռաֆֆին: Սակայն նրանց մոտեցումներում կային նաև լուրջ տարբերություններ, որոնք, Հայկական հարցի զարգացման հետ մեկտեղ, ավելի խորացան:

Կրկին զինական պայքարի դիմելու կամ գոնե համարձակ քաղաքական պայքար տանելու մտքերը հաճախակի դարձան 1877–1878 թթ. պատերազմի նախօրյակին և ընթացքում: Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների անմարդկային վերաբերմունքը շատ շատերին կողմնորոշեց դեպի զինված պայքարի մտածողությունը, որի առաջին ազդարարողը եղավ Խրիմյան Հայրիկը: Վերադառնալով Կ. Պոլիս՝ նա դիմեց արևմտահայությանը՝ հայրենի գավառներ վերադառնալու, «թղթե շերեփի»՝ խնդրագրերի քաղաքականությունը երկաթե շերեփով՝ զենքով փոխարինելու, ազատաշունչ զեյթունցիների օրինակին դիմելու կոչերով:

Անվանի գրող–հրապարակախոսներ ***Ռաֆֆին, Ծերենցը, Մուրացանը*** հայ ժողովրդին պայքարի էին մղում իրենց գրական ստեղծագործություններում հայոց հերոսական անցյալի գեղարվեստական մարմնավորման միջոցով: Ծերենցի պատմավեպերի («Երկունք Թ դարու», «Թեոդորոս Ռշտունի» և այլն) հերոսները հայրենիքի ազատագրության համար մեռնելու պատրաստ նվիրյալներ էին, որոնց պիտի ընդօրինակեին ներկա սերունդները՝ ապահովելով ազգի «Երկունքը»՝ Հայաստանի անկախության վերականգնումը:

Մուրացանին գրական ճանաչում բերած «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ» դրամայի և «Գևորգ Մարզպետունի» վեպի դրական կերպարները միջնադարյան Հայաստանի պատմության հերոսական դրվագների օրինակով երիտասարդությանը ոգեկոչում էին նոր խիզախումների, անձնազոհության ու բարոյականության:

Բեռլինի վեհաժողովն արմատապես փոխում է Ռաֆֆու և նրա համախոհների աշխարհայացքային մոտեցումները: Բարեփոխումների հետ հույսեր կապող գործիչները հայ ժողովրդի ազատագրման հարցը սկսում են կապել Ռուսաստանի աջակցությամբ զինված պայքար ծավալելու հետ: Ռաֆֆու մտածողության փոփո-

Ռաֆֆու «Խենթը» վեպի գլխավոր հերոսն իր խմբով

խությունը հստակ երևում է նրա պատմական վեպերում («Ջալալեդդին», «Խենթը», «Կայծեր», «Դավիթ բեկ», «Սամվել»):

Նոր մարտավարության պաշտպանների շարքերում էին նաև Մ. Մամուրյանը, Ռ. Պատկանյանը, Գ. Սրվանձտյանցը, Ս. Շահազիզը և ուրիշներ: Սակայն 1880-ական թթ. Հայկական հարցի շուրջ ստեղծված անբարենպաստ միջազգային իրավիճակը, բարենորոգումների խնդրի նկատմամբ եվրոպական երկրների, մասնավորապես Ռուսաստանի անտարբերությունը դարձյալ հուսախաբ են անում պայքարի զինված ուղին նախընտրած հայ գործիչների մի մասին: Շատերը վերադառնում են բարենորոգչական, օտարի տիրապետությանը հարմարվելու, Թուրքիայի կազմում մշակութային ինքնավարություն ունենալու համար պայքարի ավանդական ձևերին: Պատահական չէ, որ նոր իրադրության պայմաններում պահպանողական հոսանքը բռնում է մարման ուղին, իսկ հայ ազատականությունը տրոհվում է զանազան խմբավորումների: 1880-ականների կեսերից այդ երկու հասարակական հոսանքներն իրենց սպառում են:

Զինված պայքարի կոչերն իրենց արձագանքն էին գտնում արևմտահայության շրջանում: Դրանց առաջին շարքերում կրկին քաջարի զեյթունցիներն էին, որոնք չէին հաշտվել իրենց փաստական անկախության կորստյան հետ: Աներևակայելի է, որ 1877–1878 թթ. պատերազմի օրերին նոր ապստամբության դրոշ բարձրացրած լեռնցիների պատվիրակները, կտրելով երկար ճանապարհ, հասել էին ռուսական զորքերին և գեներալ Հ. Լազարևից պահանջում էին թուրքերի դեմ մարտնչելու համար իրենց զենք տրամադրել:

Չստանալով օգնություն՝ անվեհեր զեյթունցիները չեն ընկճվում և իշխան ***Պապիկ Նորաշխարհյանի*** ղեկավարությամբ թուրքական կանոնավոր զորքերի դեմ կռվում են մինչև 1878 թ. վերջը: Թշնամին գերի է վերցնում մի քանի հարյուր հայ խաղաղ բնակչի, որոնց մի մասին խոշտանգումների է ենթարկում, այդ թվում՝ Պապիկի մորը և կնոջը: Անակնկալ հարձակումով ապստամբները գերում են գավառակի գրեթե բոլոր թուրք պաշտոնյաներին: Կնքվում է հաշտություն: Զեյթունցիները զենքը վայր են դնում և ազատ արձակում գերված պաշտոնյաներին, իսկ իշխանությունները վերադարձնում են հայ պատանդներին: Զեյթունի հայությանը կրկին տրվում են որոշ արտոնություններ (հարկերի թեթևացում, հայազգի պաշտոնյաների նշանակում և այլն): Չբավարարվելով ձեռք բերվածով՝ Պապիկ Նորաշխարհյանի ջոկատները պայքարը շարունակում են լեռնային անմատչելի վայրերում: Մարաշի փաշան շուտով ստիպված է լինում Պապիկ իշխանին ճանաչել Զեյթունի քաղաքագլուխ:

1880–ական թվականների սկզբներին զեյթունցիներին զինված ելույթներով արձագանքում են Վասպուրականի, Մոկսի, Սասունի, Ալաշկերտի և արևմտահայ այլ շրջանների բնակիչները: Զինված պայքարի գաղափարախոսությունը հետզհետե գործնական կիրառություն է ստանում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ նշանավորվեց XIX դ. երկրորդ կեսը հայ ժողովրդի պատմության մեջ: Ի՞նչ գործոններով էր պայմանավորված հայ քաղաքական մտքի վերելքը: Հայ իրականության մեջ ի՞նչ հետևանքներ ունեցավ Զեյթունի 1862 թ. ապստամբությունը: Ի՞նչ փոփոխություններ կրեց պայքարի գաղափարախոսությունը 1860–ական թթ. կեսերից:
2. Ովքե՞ր էին խաղաղ եղանակներով գործելու մարտավարության կողմնակիցները: Ո՞վ էր զինված պայքարի մտայնության առաջնեկը: Ովքե՞ր և ո՞ր ստեղծագործություններում արծարծեցին ազատագրական պայքարի գաղափարախոսությունը: Ո՞րն էր հայ գործիչների մի մասի դիրքորոշման փոփոխման պատճառը. ի՞նչ հետևանքներ դա ունեցավ: Ներկայացրե՛ք զեյթունցիների նոր ապստամբության ընթացքն ու արդյունքները:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Մ. Մամուրյանը՝ իրական հայրենասիրության մասին

Հայաստանը սիրողը չխոսիր, չողբար, այլ անոր դարավոր վրեժը կլուծե… սուրը սրով վանել պետք է, երբ իրավանց ձայնը տկար և անլսելի է:

Սև լեռին մարդը, Աթենք, 1932, էջ 30, 52

§ 4. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազատագրական խմբակների ձևավորումը: Հայ հասարակության մեջ զինված պայքարի գաղափարախոսության տարածման և դրա գործնական կիրառման համար անհրաժեշտ էին ազատագրական շարժման կազմակերպման նոր՝ ավելի արդյունավետ ձևեր: Այդ նպատակով թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ իրականության մեջ հանդես են գալիս ազատագրական խմբակներ: Սկզբնական փուլում դրանք ձևավորվում են զանազան լուսավորական, մշակութային ու բարեսիրական ընկերությունների կազմում, ապա վերածվում ինքնուրույն կազմակերպությունների:

Ռուսական տիրապետության տակ արևելահայության ձնշումները չէին դադարում: Սակայն արևմտահայության վիճակն անհամեմատ ծանր էր: Ուստի պատահական չէ, որ ամբողջ հայ հասարակական միտքն առաջին հերթին սևեռված էր Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրի վրա:

Ազգի ճակատագրով մտահոգված մի խումբ երիտասարդներ ուսուցիչ ***Արսեն Կրիտոյանի*** և զինագործ ***Պետրոս Հայկազունու*** գլխավորությամբ ***1869 թ. Ալեքսանդրապոլում*** ստեղծում են ***«Բարենպատակ ընկերությունը»***: Խմբակի մեջ ընդգրկված էր ավելի քան 40 մարդ՝ ուսուցիչներ, աշակերտներ, ծառայողներ, ար-

հեստավորներ: Նրանց վրա առանձնակի ազդեցություն էին թողել Խ. Աբովյանի ու Մ. Նալբանդյանի հայացքները: Խմբակը կապեր է հաստատում պոլսահայ գործիչների հետ, հայրենիքի «կենտրոնին»՝ Արևմտյան Հայաստանին տեր դառնալու հայրենասիրական կոչեր է հղում համայն հայությանը: Վեց տարի գործելուց հետո «Բարենպատակը» հայտնաբերվում է Երևանի նահանգի ժանդարմական վարչության կողմից և դադարում գործելուց:

1874 թ. Ալեքսանդրապոլի գավառի ***Մեծ Ղարաքիլիսա*** (այժմ՝ Վանաձոր) քաղաքում «արիական հայազգի զավակները» ստեղծում են ***«Հայրենիքի սիրո գրասենյակ»*** խմբակը: Վերջինիս ղեկավարներից էր ***Համբարձում Բաղասանյանցը***: Մոտ մեկ տարի գործելուց հետո այն ևս բացահայտվում է: Վերոհիշյալ երկու խմբակները միմյանց հետ կապեր են պահպանել: Իշխանություններին զայրացրել էր այն հանգամանքը, որ խմբակները նպատակ էին դրել ոչ միայն ազատագրելու Արևմտահայաստանը, այլև հասնելու ազգի երկու հատվածների միավորմանը:

Արևմտյան Հայաստանում ստեղծված առաջին խմբակներից հայտնի է ***1872 թ. Վանում*** հիմնադրված ***«Միություն ի փրկություն»*** գաղտնի ընկերությունը: Խմբակի անվանումը հուշում է, որ նրա անդամներն ազգի փրկությունը տեսնում էին միավորվելու մեջ: Ուստի միության անդամներից ***Հակոբ Կարդյանը*** և ուրիշներ կապեր են հաստատում արևելահայերի հետ: Հայտնի է, որ խմբակն իր մասնաճյուղերն է ունեցել Վանի նահանգի տարբեր բնակավայրերում և գործել մոտ երկու տարի:

Հայկական հարցի հանդես գալը նոր խթան էր ազատագրական խմբակների ու կազմակերպությունների ստեղծման, դրանց գաղափարական հաստատման համար: Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձտյանցի, նշանավոր ուսուցիչ Մ. Փորթուգալյանի և այլոց գաղափարական ազդեցությամբ հայահոծ Վան–Վասպուրականը դառնում է ազատագրական պայքարի նախապատրաստման գլխավոր դարբնոցներից մեկը: Այստեղ էլ 1878–1879 թթ. ձևավորվում է ***«Սև խաչ»*** գաղտնի կազմակերպությունը, որոշ ժամանակ անց՝ նաև ***«Ջինակիրը»***:

Այս խմբակների անդամների կարծիքով իրավազուրկ ժողովրդին փրկելու միակ ուղին զինված պայքարն էր: «Սև խաչի» կանոնադրությամբ՝ գաղտնիության սկզբունքը խախտողների, ազգի դավաճանների վրա «սև խաչ» պիտի դրվեր, այսինքն՝ նրանք դատապարտվելու էին մահապատժի: Կազմակերպությանն աջակցում էր Վանի ռուսական փոխհյուպատոս, հայազգի Կոնստանդին Կամսարականը: Նա, ելնելով Վանում ստեղծված հեղափոխական իրավիճակից, Կ. Պոլսի ռուսական դեսպանին գրում է. *«Եթե Հայկական հարցը դրականորեն չլուծվի, ապա հայերի կողմից ապստամբական շարժումները թուրքական կառավարության դեմ անխուսափելի են»*:

Վանի խմբակները հայրենասիրական թեմաներով դասախոսություններ էին կազմակերպում, բեմադրում ներկայացումներ, բայց առավելապես գաղտնի նախապատրաստվում էին զինված երթերի ու ելույթների, իրենց գաղափարները տարածում Հայաստանի զանազան վայրերում:

Ազատագրական կազմակերպությունները 1880-ական թթ.: 1880-ական թթ. սկզբին Աբդուլ Համիդ II-ը հայկական բարենորոգումների իրականացման փո-

Գրիգոր Արծրունի

խարեն դիմեց բացահայտ բռնությունների: 1880 թ. օգոստոսին Բարձր դռան հատուկ հրամանով արգելվեց «Հայաստան» անվան գործածությունը, հայկական դպրոցների ծրագրերից հանվեց «Հայոց պատմություն» առարկան, փակվեցին պարբերականներ, եղան ձերբակալություններ: Սակայն այդ քայլերն իրականում ավելի շիկացրին քաղաքական մթնոլորտը և նորանոր մարդկանց մղեցին դեպի զինված ելույթները: Ի հայտ եկան ավելի զորեղ գաղտնի կազմակերպություններ:

1881 թ. մայիսին Կարինում ***Խաչատուր Կերեքցյանի*** ջանքերով հիմնադրվեց ամենաազդեցիկ կազմակերպությունը՝ ***«Պաշտպան հայրենյացը»***: Այն իր բուն նպատակները չբացահայտելու համար պաշտոնապես հանդես էր գալիս «Երկրագործական ընկերություն» անունով, իսկ իրականում զբաղված էր հայ ժողովրդի ապստամբական պայքարի կազմակերպմամբ: Ընկերության անդամները գործում էին խիստ գաղտնիության սկզբունքով: Նույնիսկ չէին ճանաչում ինչպես կազմակերպության ղեկավարներին, այնպես էլ անդամների մեծ մասին: Շփվում էին միայն իրենց տասնապետների հետ, որոնց մոտ հավատարմության երդում էին տվել:

«Պաշտպան հայրենյացի» շարքերը համալրում են բազմաթիվ երիտասարդներ, Կարինի Սանասարյան վարժարանի սաներ, արհեստավորներ ու գյուղացիներ: Կազմակերպությունն ուներ տպագրական սարք, որով տպագրում և տարածում էր հայրենասիրական կոչեր, անդամակցության տոմսեր: Հայտնի է, որ տպագրված 2400 անդամատոմսից 400-ը ուղարկվել է Վան: Նշանակում է՝ ընկերությանն անդամակցել են հազարավոր մարդիկ, այդ թվում՝ վանեցիներ:

Կարինի կազմակերպությունը փորձել է իր մասնաճյուղերը ստեղծել կայսրության ողջ տարածքում՝ Վանից մինչև Կ. Պոլիս ու Զեյթուն, ստացել է աջակցություն Մ. Խրիմյանից ու Գ. Արծրունուց: Նրանց ղեկավարներից ***Կարապետ Նշկյանը*** զենք ու դրամական միջոցներ հայթայթելու նպատակով ուղարկվել է Արևելյան Հայաստան, քրդերի հետ հակաթուրքական զինակցություն ստեղծելու փորձեր են արվել:

1882 թ. նոյեմբերի վերջերին թուրքական ոստիկանությունը հայտնաբերում է միությունը, բանտարկում շուրջ 70 մարդու: Ջորք է մտցվում Կարինի հայկական թաղամաս: Շնորհիվ գաղտնիության սկզբունքի՝ շատերը խուսափում են ձերբակալությունից: Հաջորդ տարվա ապրիլին Կարինում տեղի է ունենում դատավարություն, որին անձամբ հետևում էր սուլթան Համիդ II-ը: Դա փաստորեն առաջին քաղաքական դատավարությունն էր Օսմանյան կայսրությունում: Մեղադրական եզրակացությունում ասվում էր, որ «Պաշտպան հայրենյացը» նպա-

տակ է ունեցել ապստամբության միջոցով կայսրությունից անջատելու Էրզրումը և շրջակայքը: Դատապարտված 40 հոգուց 5-ի նկատմամբ մահապատժի վճիռ է կայացվում: Սակայն վախենալով հայերի ըմբոստացումից՝ մահվան դատավճիռը (այդ թվում՝ Խ. Կերեքցյանի և Կ. Նշկյանի նկատմամբ) փոխարինվում է երկարաժամկետ բանտարկությամբ:

«Պաշտպան հայրենյացը» խոր հետք է թողել Հայաստանի ազատագրության և պետականության վերականգնման պայքարի պատմության մեջ:

1882 թ. Մոսկվայում մի խումբ հայ ուսանողներ հիմնում են ***«Հայրենասերների միությունը»***: Միությունը գաղտնի կերպով տպագրում է առաջին հայ քաղաքական լրագիրը՝ ***«Ազատության ավետաբեր»*** թերթը, որի փաստական խմբագիրը ***Ներսես Աբելյանն*** էր: Միության անդամներից ոմանք կապեր ունեին Ռուսաստանի հեղափոխական գործիչների հետ: 1883 թ. «Հայրենասերների միությունը» հայ ժողովրդին դիմում է կոչով՝ հորդորելով հույս չդնել Եվրոպայի վրա և Հունաստանի օրինակով ապստամբությամբ ազատագրվել թուրքական լծից: Կոչի բնաբանն ընտրված էր Մ. Նալբանդյանի հայտնի ***«Ազատություն»*** բանաստեղծության տողերից: Կազմակերպությունը 1884 թ. դադարում է գործելուց:

Երևանում 1882 թ. ձևավորվում է ***«Հայասեր-ազգասեր»*** խմբակը: Ըստ ռուսական ոստիկանության տվյալների՝ այս կազմակերպությունն ունեցել է մոտ 30 անդամ, փորձել է զենք առաքել «թուրքահայ եղբայրներին»: Հայոց լեզվի ու դպրոցի պահպանումը, Հայաստանը ցարական ու սուլթանական լծից ազատագրելը միության անդամները համարել են իրենց գլխավոր խնդիրը: Մեկ տարի անց Երևանում խուզարկություններ ու բանտարկություններ են կատարվել, և խմբակի անդամներից շատերին քաղաքից աքսորել են:

Նույն՝ 1882 թ., Թիֆլիսում մի խումբ հայ երիտասարդներ ***Գ. Արծրունու*** գլխավորությամբ հիմնում են գաղտնի խմբակ, որի գլխավոր նպատակը նույնպես Հայկական հարցի լուծումն էր: 1885 թ. հայկական դպրոցների փակման առիթով խմբակը հակացարական թռուցիկ է հրապարակում: Կազմակերպության անդամներին իրենց գործունեությամբ ոգեշնչում էին Ռաֆֆին, Գ. Սունդուկյանը և ուրիշներ: Արևմտահայ գործիչների հետ կապերը սերտացնելու և քարոզչական աշխատանք տանելու նպատակով Արծրունու խմբակի ղեկավար անդամներից շատերն անցնում են Արևմտահայաստան: Այդ խմբակը գոյատևում է մինչև 1886 թ.:

1880-ական թթ. ազգային-ազատագրական կազմակերպությունները հող նախապատրաստեցին ազգային-քաղաքական կուսակցությունների ձևավորման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հիմնավորե՛ք ազատագրական խմբակների և կազմակերպությունների առաջացման անհրաժեշտությունը: Ինչո՞ւ էր կարևորվում հատկապես Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը: Ներկայացրե՛ք ազատագրական խմբակների ու կազմակերպությունների առաջացման և գործունեության պատմությունը:

2. Ներկայացրեք «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության գործունեությունը: Ուրիշ ինչ խմբակներ ու կազմակերպություններ էին գործում 1880–ական թթ.: Ինչ կարևոր նշանակություն ունեցավ ազատագրական խմբակների և կազմակերպությունների գործունեությունը:
3. Համեմատեք ազատագրական խմբակների ու կազմակերպությունների գործունեությունը՝ նշելով ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

§ 5. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կուսակցությունների առաջացման պատմական պարմանները: XIX դ. վերջին քառորդին Հայաստանի սոցիալ–տնտեսական և հասարակական–քաղաքական կյանքում տեղի ունեցան արմատական տեղաշարժեր: Ազատ շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում հայ ազգային բուրժուազիան, որը հիմնականում գործում էր հայրենիքից դուրս, ավելի ու ավելի էր ներգրավվում ազգային ազատագրության, հայկական պետականության վերականգնման խնդիրների մեջ՝ համոզված լինելով, որ իր տնտեսական գործունեության հաջողությունը կապված է այդ հիմնահարցերի լուծման հետ: Հայ արդյունաբերողները ոչ միայն ֆինանսական աջակցություն էին ցուցաբերում ազգային խնդիրներին, այլև առևտրաարդյունաբերական դասից սերված շատ զավակներ դառնում էին ազգային շարժման նշանավոր դեմքեր:

Եվրոպական հասարակական մտքի ազդեցությամբ արևմտահայ և արևելահայ մտավորական շրջանակները՝ մանկավարժներ, պարբերականների խմբագիրներ, գրական դեմքեր, միավորվում էին ազգային–ազատագրության գաղափարի շուրջը: Նրանց ոգեշնչում էին արևմտահայերի զինված պայքարի, մասնավորապես Զեյթունի հայության հերոսական կռիվների նորանոր դրվագները: Զինված ճանապարհով ազատագրվելու մտայնությունը դառնում էր տիրապետող:

Հայ ազգային–քաղաքական շարժման աշխուժացմանը նպաստում էր այն հանգամանքը, որ Հայկական հարցը դարձել էր մեծ տերությունների հետաքրքրության առարկա: Որքան էլ Արևմտյան Հայաստանում իրականացվելիք բարենորոգումներն անիրական թվային, դրանց հսկողությունը քրիստոնյա Եվրոպային հանձնելը խնդրի լուծման որոշակի հույսեր էր ներշնչում հայ հասարակական շրջաններին: Նրանք կարծում էին, թե սուլթանական կառավարությանը ոչինչ չի մնում, քան բարենորոգումների իրագործումը: Ցավոք, այս հարցում մոռացության էր տրվում այն իրողությունը, որ տերությունների համար Հայկական հարցը ոչ թե արևմտահայության ազատագրության խնդիր էր, ինչպես դա ընկալում էր հայ ժողովուրդը, այլ հետզհետե թուլացող Օսմանյան կայսրությունից շարունակաբար զիջումներ կորզելու միջոց:

Որքան էլ հայ ազատամարտի ծավալման հարցում մեծ լիներ հայ մտավորականության շահագրգռությունը, այն չէր կարող հաջողություններ արձանագրել, եթե Արևմտյան Հայաստանում շարժման համար չլինեին նախադրյալներ: 61–րդ հոդվածը, որը «միջազգային երաշխիքներով» կոչված էր բարելավելու արևմտահայության վիճակը, իրականում

Մկրտիչ Ավետիսյան

դարձավ նրա վիճակի վատթարացման ու բազմաթիվ դժբախտությունների պատճառ: Սուլթանական վարչակարգն ավելի սաստկացրեց ազգային ու սոցիալական ճնշումները: Նման պայմաններում արևմտահայության լայն զանգվածներին մնում էր դիմել պայքարի բոլոր՝ խաղաղ ու զինված ձևերին, իսկ հասարակական–քաղաքական շրջանակներին՝ ուղղություն տալ և առաջնորդել այդ շարժումը:

Հայաստանի տարբեր շրջաններում և գաղթօջախներում ձևավորված գաղտնի ազատագրական խմբակները հիմք դարձան 1880–ական թթ. կեսերից ավելի հասուն մարտական ու գաղափարական քաղաքական կազմակերպությունների՝ ազգային կուսակցությունների առաջացման համար:

Արմենական կուսակցություն: 1870–1880–ական թթ. հայ ազատագրական շարժման նշանավոր կենտրոններից էր Վան քաղաքը, որտեղ գործող վարժարանների, հոգևոր–մշակութային հաստատությունների շուրջ համախմբվել էր երիտասարդ մտավորականների մի ողջ սերունդ: Նրանց գաղափարական ոգեշնչողներն էին ***Խրիմյան Հայրիկը***, ուսուցիչ ***Մկրտիչ Փորթուգալյանը*** և երիտասարդ մտավորական ***Մկրտիչ Ավետիսյանը (Թերլեմեզյան)***՝ ժողովրդի մեջ հայտնի «նշանավոր երեք Մկրտիչները»:

Մ. Խրիմյանի խորհրդով Մ. Փորթուգալյանը և նրա 12 սաները ստեղծում են մի միություն, որը կազմում է ապագա կուսակցության կորիզը: Վտանգավոր համարելով Փորթուգալյանի գործունեությունը՝ 1885 թ. մարտին թուրքական իշխանությունները նրան վտարում են Վանից: Վերջինս հաստատվում է Ֆրանսիայի Մարսել քաղաքում, որտեղ հրատարակում է «Արմենիա» թերթը, զբաղվում հայրենասիրական գաղափարների տարածմամբ:

Հայրենիքում Փորթուգալյանի համախոհներն իրենց գործունեությունը չեն դադարեցնում: Հեղափոխականների շրջանում մեծ հարգանք վայելող Մ. Ավետիսյանը ***1885 թ. աշնանը*** Վան քաղաքում հիմնադրում է առաջին հայ ազգային կուսակցությունը: Մ. Փորթուգալյանը չի անդամակցում կուսակցությանը: Անկախ դրանից՝ նրա աշակերտները, որ շարունակում էին հետևել «Արմենիայի» ուղղությանը, իրենց կոչում են «Արմենական», այստեղից էլ՝ կուսակցության անվանումը: ***Արմենական*** կուսակցությունը ծնունդ առավ բուն հայրենիքում՝ Վանում, հույժ գաղտնիության պայմաններում:

Արմենականները պայքարում էին արևմտահայերին լուսավորելու և թուրքական բռնակալությունից ազատագրելու համար: Հայկական հարցի լուծումը նրանք կապում էին Արևմտյան Եվրոպայի ու Ռուսաստանի օգնության, համաժողովրդական ապստամբության հետ

և պահանջում անհապաղ գործադրել Բեռլինի վեհաժողովի 61–րդ հոդվածով նախատեսված բարեփոխումները: Արմենականները Հայաստանի ազատագրությունը համարում էին առաջնակարգ խնդիր, իսկ հասարակական հավասարություն ստեղծելու գաղափարը՝ ապագայի հարց: Նրանք տնտեսության զարգացման կարևոր նախապայման էին համարում մասնավոր սեփականությունը: Այդ դրույթները տեղ գտան կուսակցության ծրագրի առաջին՝ 1894 թ. տարբերակում և մասնակի փոփոխություններով հետագայում տպագրվեցին մամուլում:

Արմենականների գործունեության մեջ կարևոր տեղ ուներ առանց աղմուկի ու ցուցամոլության զենքի հայթայթման ու կուտակման, ժողովրդին համահայկական ապստամբության նախապատրաստելու գործը: 1880–ականների վերջին նրանք հսկում էին Պարսկաստանից Վան և Արևմտյան Հայաստանի այլ գավառներ տանող զինատար ուղիները: Այդ դժվարին գործն իրականացնելիս արմենական խմբերը նաև բախվում էին թուրքական զորքերի հետ: Արմենականների մեջ շուտով ամրապնդվում է զինված պայքարի մարտավարությանն անցնելու համոզմունքը: Պատահական չէ, որ XIX դ. 90–ական թթ. սկզբին նրանք, որ հիմնականում դեմ էին պայքարի անհատական ձևերին, կողմնորոշվում են դեպի հայդուկային պայքարը, համագործակցում նորաստեղծ դաշնակցության հետ:

Հայդուկային զինապայքարում միջկուսակցական համագործակցության խնդիրը դրվում է ***Արմենակ Եկարյանի*** վրա: Նշանավոր արմենական, նկարիչ ***Փանոս Թերլեմեզյանը*** Տարոնում հանդիպումներ է ունենում հայդուկապետ

Ավետիս Նազարբեկյան

Արաբոյի հետ, ձեռք բերում համաձայնություն թուրք–քրդական ավազակային ջոկատների դեմ համատեղ պայքարելու վերաբերյալ:

Արմենականների շարքերն արագորեն աճում են: Նրանք շուտով Վան–Վասպուրականում դառնում են ամենաազդեցիկ քաղաքական ուժը: Մինչև 1890–ական թթ. սկիզբը միայն Վանի նահանգում հիմնվում են 150–ից ավելի կազմակերպական խմբեր: Յուրաքանչյուրում հաշվվում էր 12–ական անդամ, այսինքն՝ տվյալ նահանգում նրանց թիվը հասնում էր մոտ 2 հազար մարդու: Միաժամանակ Վանի և Շատախի գյուղերում ստեղծվում են շուրջ 90 մարտական խմբեր: Հատկանշական է, որ կուսակցությանը համակրում կամ անդամակցում են զգալի թվով կանայք: Նրանց մեծ մասը տեղի Սանդուխտյան վարժարանի սաներ էին, որոնց մեջ աչքի էր ընկնում երիտասարդ գործիչ ***Զարուհի Տերոյանը***:

Կուսակցության գաղափարները լայն արձագանք են գտնում արևմտահայ գավառներում՝ մասնավորապես Տարոնում, Բաղեշում, Տրապիզոնում, ինչպես նաև Անդրկովկասի տարբեր քաղաքներում,

հեռավոր Եգիպտոսում, Բուլղարիայում ու ԱՄՆ–ում: Ամենուր ստեղծվում են տեղական մարմիններ: Շնորհիվ կազմակերպական ուժեղ կառույցի և այլ քաղաքական ուժերի հետ համագործակցության՝ 1896 թ. հունիսին արմենականները դառնում են Վանի հերոսական պաշտպանության ղեկավար ուժը: Սակայն այն բանից հետո, երբ թուրքական իշխանությունները դավաղրաբար իրականացնում են դեպի Պարսկաստան հեռացող 1500 վանեցի պաշտպանների դավադիր սպանդը, կուսակցությունը կորցնում է իր եռանդուն անդամների զգալի մասին և թուլանում: Արմենականների մի մասը շարունակում է գործել նույն անունով, մյուսները համալրում են քաղաքական այլ ուժերի շարքերը կամ մասնակցում նոր կազմակերպությունների ստեղծմանը:

Արմենականները, լինելով հայրենի հողի վրա ստեղծված առաջին ազգային կուսակցությունը, թուրքական բռնատիրության դեմ պայքարում ցույց տվեցին կազմակերպված քաղաքական ու զինված պայքարի վառ օրինակներ և խոր հետք թողեցին հայ ազատագրական շարժման պատմության մեջ:

Հնչակյան կուսակցություն: XIX դ. 80–ական թթ. եվրոպական համալսարաններում սովորող հայ ուսանողությունը կրում էր ժամանակի գաղափարական ազդեցությունը: Այդ շրջանում Եվրոպայում մեծ տարածում ուներ սոցիալիստական (ընկերվարական) գաղափարախոսությունը, որի գլխավոր բովանդակությունը արդար, իրավահավասար հասարակության ստեղծումն էր: Սակայն հայ երիտասարդությանը որքան էլ հրապուրիչ թվար սոցիալիզմը, հայության համար կենսական համարվող Հայկական հարցի լուծումը շարունակում էր մնալ առաջնային խնդիր: Ահա այսպիսի գաղափարական երկակի մթնոլորտում ***1887 թ. օգոստոսին*** Շվեյցարիայում ***Ժնևի*** համալսարանի մի խումբ արևելահայ ուսանողներ՝ ***Ավետիս Նազարբեկյանը*** (Նազարբեկ), ***Ռուբեն Խանազատը, Գաբրիել Կաֆյանը, Մարո Վարդանյանը*** (Նազարբեկյան), ստեղծում են հայ իրականության մեջ երկրորդ քաղաքական կուսակցությունը:

Հետևելով ռուս հեղափոխական Ա. Գերցենի «Կոլոկոլ» թերթի օրինակին՝ նրանք 1887 թ. վերջին հիմնադրած իրենց պաշտոնաթերթը կոչում են ***«Հնչակ»***, որից էլ շուտով կուսակցությունը ստանում է «Հնչակյան» անունը: Հնչակյանները կրում էին ռուսական նարոդնիկության և Ժնևում գործող ռուս նշանավոր հեղափոխական Գ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» խմբակի գաղափարական ազդեցությունը: Ընդօրինակելով նարոդնիկների պայքարի ահաբեկչական ձևերը՝ հնչակյանները փորձում էին Արևմտյան Հայաստանում դրանք կիրառել ատելի թուրք և քուրդ պաշտոնյաների նկատմամբ: Նրանց հայացքներում առանձնակի տեղ ուներ սոցիալիզմի գաղափարը, որին հասնելու միջոցը նրանք համարում էին գյուղական համայնքը: Կուսակցության անդամների ջանքերով թարգմանվում են կոմունիստական (համայնավար) գաղափարախոսության հիմնադիրներ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մի շարք աշխատություններ:

1888 թ. աշնանը «Հնչակ» թերթում հրատարակվում է կուսակցության ծրագիրը: Որպես հեռավոր նպատակ՝ սահմանվում է մարդու կողմից մարդու շահագործման վերացումը և սոցիալիզմի կառուցումը, իսկ մոտակա խնդիր՝ հայրենիքի մեծագույն մասի՝ Արևմտյան Հա-

յաստանի ազատագրումը թուրքական բռնապետությունից: Ապագա հայկական անկախ պետականության կազմում հնչակյան գործիչները տեսնում էին ոչ միայն Արևմտահայաստանը, այլև ռուսական և պարսկական տիրապետությանը ենթակա հայկական հողերը: Փաստորեն ազգային կուսակցություններից առաջինը հնչակյաններն են Հայկական հարցի լուծում համարել ամբողջական հայրենիքում հայկական անկախ պետականության վերաստեղծումը:

Հնչակյանների կարծիքով համաժողովրդական ապստամբություն սկսելու համար ամենահարմար պահը պետք է լինի Օսմանյան կայսրության դեմ Բեռլինի վեհաժողովի մասնակից երկրներից մեկի սկսած պատերազմը: Ի տարբերություն արմենականների՝ հնչակյանները կարևորում էին թուրքահպատակ ժողովուրդների հետ համագործակցության հարցը:

1889 թ. արևմտահայ գավառներ ուղարկված Ռ. Խանազատի և Գ. Կաֆյանի ջանքերով ստեղծվում են Կարինի և Տրապիզոնի հնչակյան մասնաճյուղերը: Ապա կուսակցական կառույց է հիմնվում Կ. Պոլսում, որին անդամակցում են հայտնի գործիչներ ***Միհրան Տամատյանը, Համբարձում Պոդաճյանը*** (Մեծն Մուրադ), նշանավոր գրող, հրապարակախոս ***Արփիար Արփիարյանը***: Վերջիններս խանդավառվում են հնչակյան գաղափարներով, սակայն ընդդիմանում են ծրագրում տեղ գտած սոցիալիզմի մասին դրույթին՝ այն համարելով արևմտահայ իրականության համար օտար գաղափար և հեռավոր ապագայի խնդիր:

Կազմակերպչորեն ամրապնդվելուց հետո հնչակյաններն անցնում են Արևմտյան Հայաստանում գործնական քայլերի իրականացմանը: 1890 թ. հունիսին Կարինում զենք փնտրելու պատրվակով տեղի թուրքական իշխանությունները խուզարկում են Սանասարյան վարժարանն ու հայկական եկեղեցին: Այդ գործողությունները հանդիպում են ժողովրդի դիմադրությանը, որին ուղղություն են տալիս հնչակյանները: Եղան զոհեր: Մեղավորներին պատժելու պահանջով կուսակցությունը 1890 թ. հուլիսին Կ. Պոլսում կազմակերպում է հայտնի ***Գում Գափուի*** ցույցը: Եկեղեցում հնչակյան գործիչ ***Հ. Ճանկուլյանը*** պատից պոկում է սուլթանական զինանշանն ու ջարդուփշուր անում: Ապա ցուցարարները կառավարությունից պահանջում են դատապարտել հայերի նկատմամբ բռնությունները և Հայաստանին շնորհել ինքնավարություն: Ոստիկանության միջամտությունն ավարտվում է նոր զոհերով:

1890–ականների սկզբին կուսակցությունն իր գործունեության առանցքն է դարձնում հայդուկային շարժմանն աջակցելը: Հատկապես Սեբաստիայի նահանգում ստեղծվում են հնչակյան հայդուկային խմբեր: Հնչակյանները կարևոր դեր են ունենում Սասունի 1894 թ. ինքնապաշտպանության, 1895 թ. Բաբը Ալիի ցույցի և Զեյթունի 1895–1896 թթ. ապստամբության կազմակերպման գործում:

1896 թ. Լոնդոնի առաջին համագումարում Հնչակյան կուսակցությունը պառակտվում է երկու թևի՝ սոցիալիստական և ազգային: Սոցիալիստական թևը՝ Ա. Նազարբեկյանի ղեկավարությամբ, որը կարևոր խնդիր էր համարում սոցիալական ազատագրությունը և սոցիալիզմի համար պայքարը, կազմում է փոքրամասնություն, իսկ ազգայինը՝ մեծամասնություն: Վերջիններս Ա. Արփիար-

յանի գլխավորությամբ հեռանում են կուսակցությունից և 1898 թ. հանդես գալիս *«Վերակազմյալ հնչակյաններ»* անունով: Իրենց ղեկավարի գլխավորությամբ ազգային թևի ներկայացուցիչներին հաճախ անվանում էին նաև *«Արմիարականներ»*: Հետագայում Նազարբեկյանի կողմնակիցները, որոնք դեմ էին սոցիալիզմի մասին կետը ծրագրից հանելուն, մեծ մասամբ հարեցին սոցիալ-դեմոկրատական ուղղության կազմակերպություններին:

Հնչակյան կուսակցությունը նույնպես խոշոր ավանդ է ունեցել հայ ազգային-ազատագրական շարժման գործում:

Հայ հեղափոխական դաշնակցություն: 1880-ական թթ. երկրորդ կեսին հայ ազատագրական շարժման վերելքը, որը հետևանք էր նաև արդեն ստեղծված ազգային կուսակցությունների գործունեության, տրամաբանորեն հանգեցնում է հակաթուրքական պայքարում միավորման նոր փորձերի ձեռնարկմանը: Այդ հարցում առանձնակի ջանքեր է գործադրում ռուս նարոդնիկական և եվրոպական սոցիալիստական գաղափարներով տոգորված արևելահայ հեղափոխական երիտասարդությունը, որի զգալի մասը համախմբվել էր Թիֆլիսում գործող մի քանի կազմակերպությունների շուրջը: Դրանց ներկայացուցիչների միջև եղած գաղափարական տարակարծությունները հաղթահարելու նպատակով սկսվում են միավորիչ ժողովներ, որոնց մասնակցում են *«Երիտասարդ Հայաստան»* կազմակերպության անդամներ, ազգային նարոդնիկներ, Գ. Արծրունու շուրջը համախմբված մտավորականներ, հնչակյաններ, մոսկվահայ ուսանողության ներկայացուցիչներ:

Օսմանյան իշխանությունների կողմից օրեցօր սաստկացող բռնությունների դեմ

Քրիստափոր Միքայելյան

ընդհանուր ճակատ ստեղծելու, միավորվելու, միմյանց հետ դաշնակցելու հրամայականն այդ ուժերին ստիպում է առժամանակ մի կողմ դնել առկա գաղափարական վեճերը: ***1890 թ. Թիֆլիսում*** ընթացող հիմնադիր ժողովները ***հուլիս-օգոստոսին*** հանգեցնում են հայ ազգային ավելի ազդեցիկ կուսակցության՝ *«Հայ յեղափոխականների դաշնակցութեան» (ՀՅԴ)* ստեղծմանը, որի կորիզը ***Քրիստափոր Միքայելյանի*** գլխավորած *«Դրոշակ»* խմբավորումն էր: Կուսակցության հիմնադրման գործընթացում, որը շարունակվում է երկու տարի, առաջնակարգ դեր են կատարում ***Ք. Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Ստեփան Զորյանը*** (Ռոստոմ), ***Խաչատուր Մալումյանը, Հովհաննես Լոռու-Մելիքյանը*** և ուրիշներ:

1890 թ. սեպտեմբերին *«Դրոշակ»* թռուցիկ-թերթի անդրանիկ համարում հրապարակված հռչակագրով, որն սկսվում էր ժողովրդին ուղղված՝ «Հայեր» վերտառությամբ կոչով, դաշնակցությունն Արևմտյան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատագրությունն ազդարարում է իր գլխավոր խնդիրը:

Շարունակվում է կուսակցությանն անդամակցած տարբեր հոսանքների դիրքորոշումների հստակեցման գործընթացը: Սկսվում են հնչակյանների հետ միավորվելու բանակցություններ: 1891 թ. սկզբին կնքված համաձայնագրով Հնչակյան կուսակցությունը միանում էր ՀՅԴ–ին, «Հնչակ» թերթը դառնում էր միացյալ կուսակցության տեսական, իսկ «Դրոշակը»՝ մարտական պաշտոնաթերթ: Ցավոք, շատ չանցած՝ Ավետիս և Մարո Նազարբեկյան ամուսինները «Հնչակում» տպագրած մի հայտարարությամբ ժխտում են միավորման փաստը, որից հետո կողմերը, փաստորեն դեռ չմիավորված, պառակտվում են:

Սակայն ՀՅԴ ձևավորման առաջին շրջանում կուսակցությունն ընդհանուր հեղափոխական պաթոսի պայմաններում կարողացավ իր կազմակերպական կառույցները ստեղծել Արևմտյան Հայաստանում, Կ. Պոլսում, Կիլիկիայում, Այսրկովկասում, Ռուսաստանի այլ շրջաններում և Եվրոպայի մի շարք երկրներում:

1892 թ. Թիֆլիսում հույժ գաղտնի պայմաններում տեղի ունեցավ ***առաջին ընդհանուր ժողովը***՝ համագումարը: Հաշվի առնելով, որ հայ ժողովուրդն իր հայրենիքում տարբեր երկրների տիրապետության տակ է և սփռված է աշխարհով մեկ, կուսակցության կազմակերպական ձև ընտրվեց ***ապակենտրոն սկզբունքը***: Դա նշանակում է, որ տարբեր վայրերի կազմակերպական կառույցները պիտի ունենային իրավիճակին համապատասխան գործելու ազատություն և կենտրոնացված սկզբունքով գործեին միայն գաղափարական հարցերում: Այդ սկզբունքը կարևոր նշանակություն ունեցավ կուսակցության շարքերն ամրապնդելու և տեղերից մշտապես օգտակար նախաձեռնություններով հանդես գալու գործում: Ընդհանուր ժողովը կուսակցությունը վերանվանեց ***«Հայ յեղափոխական դաշնակցութիւն»***:

1894 թ. «Դրոշակ»–ում տպագրվեց ՀՅԴ ծրագիրը: «Նպատակ» բաժնում ասվում էր, որ ապստամբության ճանապարհով անհրաժեշտ է հասնել Արևմտյան Հայաստանի ազատությանը, որի տակ այդ փուլում հասկացվում էր հայկական նահանգների ինքնավարության հաստատումը: «Միջոցներ» բաժինը նախատեսում էր ժողովրդի զինում, մարտական խմբերի ձևավորում, ապստամբական և ահաբեկչական գործողությունների իրականացում:

Ապակենտրոն սկզբունքի պայմաններում տարբեր կառույցների գործունեությունը համակարգելու համար ստեղծվեցին հատուկ մարմիններ՝ ***բյուրոներ***, մեկը՝ Թիֆլիսում, մյուսը՝ Թավրիզում:

ՀՅԴ ձևավորումն ի սկզբանե ընթանում էր նրա անդամների կողմից իրականացրած զինված գործողություններով: Արդեն 1890 թ. սեպտեմբերին դաշնակցականները երկիրն ազատագրելու նպատակով կազմակերպում են ***Սարգիս Կուկունյանի*** արշավանքը Արևելյան Հայաստանից Արևմտյան Հայաստան: Արշավանքը թեև ձախողվում է, սակայն զինված պայքարի քայլերը շարունակվում են: ՀՅԴ նշանավոր շատ դեմքեր զինվորագրվում են թուրքական բռնակալության դեմ ծավալված ժողովրդական–պարտիզանական պայքարին՝ հայդուկային շարժմանը: Որոշ ժամանակ անց հայդուկային ջոկատների մեծ մասն անցնում է ՀՅԴ հսկողության ներքո:

1896 թ. օգոստոսի 14–ին մոտ 30 հայ երիտասարդներ, ***Բաբկեն Սյունու*** և ***Արմեն***

Գարոյի գլխավորությամբ, ներխուժում են Կ. Պոլսի ***Օտտոմանյան բանկը***, պահանջում անհապաղ գործադրել Բեռլինի 61–րդ հոդվածը՝ սպառնալով պայթեցնել դրամատունը: 1897 թ. ամռանը դաշնակցությունը կազմակերպում է ***Խանասորի*** արշավանքը և պատժում մեկ տարի առաջ վանեցիների կոտորածը նենգաբար իրականացրած քրդական մազրիկ ցեղին: XIX դ. 90–ական թթ. կեսերին ՀՅԴ–ն դառնում է ամենաազդեցիկ ազգային–քաղաքական կուսակցությունը հայ իրականության մեջ և շուտով ծանրակշիռ դեր ստանձնում նաև արևելահայության ազգային–սոցիալական պայքարի կազմակերպման գործում:

Դժվար չէ նկատել, որ հայ ազգային կուսակցություններն իրենց գործելակերպով և ծրագրային դրույթներով տարբերվել են միմյանցից: Սակայն բոլորն էլ՝ և՛ արմենականները, և՛ հնչակյանները, և՛ դաշնակցականները, օսմանյան դժնդակ տիրապետությունից արևմտահայության ազատագրությունը համարել են իրենց առաջնային խնդիրը: Այդ նպատակին հասնելու համար նրանք գործի են դրել հնարավոր բոլոր միջոցները, առաջին հերթին՝ զինված պայքարը: Ճիշտ է, անհավասար պայքարում կուսակցությունների համարձակ գործողությունները միշտ չէ, որ պսակվել են հաջողությամբ, սակայն դրանց շնորհիվ հնարավոր է եղել որոշ չափով մեղմել ժողովրդի հարստահարությունը, կազմակերպել նրա ինքնապաշտպանությունը, ուղղորդել և ղեկավարել ազատագրական շարժումները, պահպանել ազգային ոգին և սերունդներին նախապատրաստել ավելի վճռական պայքարի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ընդհանուր գծերով ներկայացրեք պատմական այն իրականությունն ու պայմանները, որոնք ծնունդ տվեցին ազգային կուսակցություններին: Ինչո՞ւ էր հայ ազգային բուրժուազիան շահագրգռված Հայաստանի ազատագրության ու պետականության վերականգնման խնդիրներով:
2. Որո՞նք էին Արմենական կուսակցության հիմնական տեսակետները: Համամի՞տ եք արդյոք այդ տեսակետներին. պարզաբանեք ձեր պատասխանը: Ներկայացրեք արմենականների հետագա գործունեությունը:
3. Ո՞ւմ գաղափարական հետևորդներն էին հնչակյանները: Ի՞նչ դրույթներ էին առաջ քաշում և ի՞նչ գործունեություն ծավալեցին նրանք: Համամի՞տ եք արդյոք հնչակյանների ծրագրային հիմնական դրույթներին. պարզաբանեք և հիմնավորեք ձեր պատասխանը: Ե՞րբ և ինչո՞ւ պառակտվեց Հնչակյան կուսակցությունը:
4. Ո՞րն էր ՀՅԴ կուսակցության հիմնական նպատակը: Ի՞նչ դրույթներ ամրագրվեցին ՀՅԴ–ի ծրագրում: Ո՞րն էր ապակենտրոն սկզբունքի էությունը. գնահատեք այն ու հիմնավորեք դրա անհրաժեշտությունը:
5. Աղյուսակի տեսքով ներկայացրեք հայ ազգային կուսակցությունները՝ առանձին սյունակներում գրելով հիմնադրման տարեթիվը, վայրը, հիմնադիրների և նշանավոր անդամների անունները, կուսակցությունների ծրագրերի և գործունեության ընդհանրություններն ու առանձնահատկությունները, կարևոր այլ տվյալներ:

ԳԼՈՒԽ 4. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԶԻՆՎԱԾ ՓՈՒԼԸ

§ 1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ: ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Հայդուկային շարժման առաջացման պատճառները: XIX դ. 80-ական թթ. սկզբին Հայկական հարցի լուծման համար ստեղծվել էր ծայրաստիճան անբարենպաստ իրավիճակ: Բեռլինի վեհաժողովում Թուրքիայից ստանալով որոշակի զիջումներ՝ մեծ տերություններն ամենևին մտադիր չէին նրա վրա ճնշում բանեցնելու՝ հայկական բարենորոգումները կատարել տալու համար: Օսմանյան կառավարությունը, օգտվելով առիթից, արևմտահայության նկատմամբ սաստկացրեց բռնությունները: Քաղաքական հալածանքները հասան աննախադեպ չափերի, նոր թափ ստացավ արևմտահայությանը հողազրկելու, հայրենիքից դուրս մղելու և երկիրը ներգաղթող մահմեդականներով բնակեցնելու պետական քաղաքականությունը:

Մինչհայ մտավորական շրջանակները զբաղված էին համիդյան վարչակարգին հակազդելու ուղիների որոնմամբ, արևմտահայ գյուղացին ինքնաբուխ նախընտրեց ընդվզելու իր ճանապարհը՝ անհատական-պարտիզանական, վրեժխնդրական պայքարը: Ինչպես ուշ միջնադարում թուրքահպատակ հունգար և սլավոնական ժողովուրդները, այնպես էլ այժմ հայությունը տարերայնորեն, անկազմակերպ դուրս եկավ կենաց ու մահու կռվի՝ իր ապրելու իրավունքն ու արժանապատվությունը պաշտպանելու համար: Ազատագրական պայքարի այդ ձևը հայտնի է ***հայդուկային*** կամ ***ֆիդայական շարժում*** անունով:

Հայդուկները (հունգարերեն՝ հեյդուկ) և ***ֆիդայիները*** կամ ֆեդայիները (արաբերեն՝ զոհ, այսինքն՝ ինքնազոհ) ժողովրդական վրիժառուներ էին: Նրանք, հրաժարվելով կյանքի հաճույքներից, երդվում էին ամբողջովին նվիրվել իրենց ժողովրդի պաշտպանությանն ու ազատագրությանը: Զենքը ձեռքներին հեռանում էին լեռներն ու անտառները, անհատապես կամ փոքրիկ խմբերով իրականացնում պատժիչ գործողություններ ատելի թուրք և քուրդ պաշտոնյաների, ինչպես նաև դավաճան հայերի նկատմամբ: Հայդուկների խիզախ գործողություններով ոգեշնչված՝ Ռաֆֆին նրանց հետ էր կապում արևմտահայության ապագան:

Այս շարժման հանդես գալն Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ծանր ու օրհասական վիճակի հետևանք էր, այսինքն՝ ուներ իրական պատճառներ: Այնպես որ, անհիմն են այն թուրք պատմաբանների ու քաղաքագետների պնդումները, թե ֆիդայական շարժումը դրսից՝ Այսրկովկասից ներմուծված խորթ երևույթ էր, և դրա համար Օսմանյան կայսրությունում նախադրյալներ չկային: Այդ կապակցությամբ ***Հովհաննես Թումանյանը*** հստակ նշել է. *«Սխալ են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են, թե էս ամենը կարող էր անցնել առանց ծայրահեղ դժգոհության բռնկումի, առանց հեղափոխության: Այլև սխալ են նրանք, որոնք կարծում են, թե հեղափոխությունը դրսեցիները՝ ռուսահայերն են սկսել Տաճկաստանում»*:

Աղբյուր Սերոբ

Գևորգ Չավուշ

Հայդուկային պայքարի առաջին քայլերը: Առաջին հայ ֆիդայական խմբերը հանդես են եկել 1880–ական թթ. կեսերին Փոքր Հայքում, Տարոնում և Վասպուրականում: Դրանց ղեկավարներից հայտնի են Մարգար Վարժապետը, Արաբոն, Կարապետը, Ռուբեն Շիշմանյանը (Դերսիմի Քեռի), Արամ Աչրգբաշյանը և ուրիշներ: Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել ***չելլոներ*** կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում: Դրանով նրանք փորձել են նաև համագործակցության եզրեր գտնել քրդերի հետ: Կեսարիայի շրջանում հայտնի «Մեծ չելլոյի» առաջնորդը խիզախ գործիչ ***Թորոս Տաճարկանն*** էր: Հետզհետե չելլոները վերածվել են գրեթե ամբողջապես հայերից բաղկացած զինված, վրեժխնդրական խմբերի:

1880–ական թթ. վերջին հայդուկների մեջ մեծ հեղինակություն է վայելել ֆիդայական շարժման նահապետ ***Արաբոն*** (Առաքել Մխիթարյան, 1863–1893) ջոկատը: Արաբոն ծնվել է Սասունի ***Կոռթեր*** գյուղում: Սկզբում հանդես է եկել իբրև անհատ վրիժառու և 1885 թվականից քրդի անվան տակ զինված հարձակումներ է գործել թուրքական հարկահավաքների վրա: Թուրքերին հաջողվում է ձերբակալել Արաբոյին, սակայն նա կարողանում է փախչել Այսրկովկաս: 1892 թ. մտնելով դաշնակցության շարքերը՝ նա մասնակցել է կուսակցության առաջին ընդհանուր ժողովին՝ իբրև Սասունի ներկայացուցիչ: 1893 թ. Արաբոն 16 հոգով կրկին անցնում է Արևմտյան Հայաստան և կռվի բռնվելով քրդերի ու թուրքերի դեմ՝ իր ընկերների հետ հերոսաբար զոհվում է: Երկար ժամանակ ժողովուրդը չի հավատացել իր սիրելի առաջնորդի մահվանը և սպասել է նրա վերադարձին՝ նոր առասպելներ հյուսելով հերոսի անվան շուրջ:

Շարժման վերելքը: Ֆիդայական շարժումը լայն թափ է ստանում հատկապես 1890–ական թթ., երբ ընկնում է քաղաքական կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության ազդեցության ու հսկողության տակ: Ուժեղ խմբեր են ստեղծվում Սասունում, Վանում և Սե-

բաստիայում: Ֆիդայիները երդվում էին. «*Այսուհետև իմ բարձը լինելու են Հայաստանի լեռները, իսկ բաղձալի երազանքը՝ հայրենիքի համար մեռնելը*»: Բազմաթիվ հայ երիտասարդներ, թողնելով ընտանիքը, զինվորագրվում են հայրենիքի ազատագրության գործին:

1890–ական թթ. սկզբներին մեծ համբավ ու ժողովրդականություն են ձեռք բերում ***Աղբյուր Սերոբը, Մեծն Սուրաղը, Գևորգ Չավուշը, Հրայր Դժոխքը, Գուրգենը, Վազգենը*** և ուրիշներ:

Աղբյուր Սերոբը (Սերոբ Վարդանյան, Աղբյուր՝ կյանք պարգևող) ծնվել է 1864 թ. Խլաթի ***Սոխորդ*** գյուղում: Պատանի տարիքում սպանում է մի քրդի և ստիպված լինում ընտանիքով տեղափոխվել Կ. Պոլիս: 1891 թ. նա անցնում է Ռումինիա, այնտեղ մտնում դաշնակցության շարքերը: Ռումինիայից Սերոբը գալիս է Բաթում, ապա՝ Կարին, իսկ 1895–ին՝ հայրենի Խլաթ: Շուտով նա ստանձնում է Արևմտյան Հայաստանում գործող ֆիդայական ջոկատների ընդհանուր հրամանատարությունը և կարողանում է համիդյան կոտորածների օրերին հաջողությամբ կազմակերպել բազմաթիվ գյուղերի խաղաղ բնակչության ինքնապաշտպանությունը: Մի շարք մարտերում, հատկապես 1898 թ. հոկտեմբերի 20–ին նշանավոր ***Բաբշենի կռվում*** տարած հաղթանակների շնորհիվ Սերոբը դառնում է հայ ժողովրդի ազատարարի խորհրդանիշը: Նրան անվանում էին ***Նեմրութի հսկա*** կամ ***Նեմրութի ասպան***: Դրանից անհանգստացած՝ թուրքական իշխանությունները որոշում են ամեն գնով վերացնել Աղբյուր Սերոբին:

1899 թ., երբ Սերոբը Սասունի Գելիեգուզան գյուղում էր, քուրդ ցեղապետ Բշարե Խալիլը թունավորել է տալիս նրան, իր զորամասով շրջապատում է այն տունը, որտեղ Սերոբն էր, սպանում ֆիդայապետին, նրա թիկնապահներին ու 12–ամյա որդուն՝ Հակոբին: Սերոբի քաջարի կինը՝ ***Սոսեն***, շարունակում է ամուսնու հայրենանվեր գործը: 1900 թ. Սերոբի հավատարիմ զինվորներ Գևորգ Չավուշն ու Անդրանիկը վրեժխնդիր են լինում թշնամուց՝ սպանելով Բշարե Խալիլին և նրան օգնած դավաճան հային:

Ֆիդայական շարժման հայտնի դեմքերից է ***Հրայրը*** (Արմենակ Ղազարյան), որին թշնամին ***Դժոխք*** մականունն է տվել: Նա ծնվել է 1864 թ. Սասունի ***Միարոնք*** գյուղում, սովորել է Մշո Ս. Կարապետ վանքի դպրոցում, զբաղվել ուսուցչությամբ: Նրա կարծիքով կուսակցությունները միայն միջոց են ժողովրդի ազատագրական պայքարը կազմակերպելու համար: Նա հույսեր չէր կապում եվրոպական երկրների սին խոստումների հետ:

Հրայրը պարտիզանական, անհատական պայքարին դեմ էր և հաղթանակի հասնելու միակ ուղին համարում էր ժողովրդին համաժողովրդական ապստամբությանը նախապատրաստելը: Նա զգալի աշխատանք է տարել հայ–քրդական դաշինք ստեղծելու ուղղությամբ: Հրայրի համոզմամբ՝ օսմանյան բռնատիրությունից ազատագրումը հնարավոր էր միայն կայսրության բոլոր ժողովուրդների համատեղ պայքարի շնորհիվ: Հրայր Դժոխքը եղել է Սասունի 1894 և 1904 թվականների ապատամբությունների ղեկավարներից: Իրականում դեմ լինելով տեղայնական բնույթի գործողություններին՝ նա, այնուամենայնիվ, միացել է Սասունի 1904 թ. ապատամբության մասնակից հայդուկ ընկերներին և զոհվել ***ապրիլի 13–ի*** արյունալի կռվում: Մարտա-

կան ընկերները նրան հողին են հանձնել Սերոբի կողքին՝ *Գելիեզուզանում*:

Գևորգ Չավուշը ծնվել է 1870 թ. Սասունի ***Մկդենք*** գյուղում: Ծնողները նրան ուղարկում են Մշո Ս. Առաքելոց վանք՝ ուսանելու: Սակայն կյանքն այլ դեր էր վերապահել Գևորգին: Տակավին երիտասարդ՝ նա Արաբոյի ջոկատում էր, ապա Միհրան Տամատյանի և Համբարձում Պոյաճյանի (Բոյաջյան) հետ ղեկավարում էր Սասունի ինքնապաշտպանական մարտերը: 1896 թ. փախչելով բանտից՝ նա միանում է Սերոբի ու Հրայր Դժոխքի ջոկատներին, 1901 թ. մասնակցում Առաքելոց վանքի հայտնի կռվին և Սասունի 1904 թ. ապստամբությանը:

Ֆիդայական շարժման պայծառ դեմքերից է ***Անդրանիկ Օզանյանը***: Նա ծնվել է 1865 թ. փետրվարի 25-ին ***Շապին Կարահիսար*** քաղաքում, սովորել է տեղի Մուշեղյան վարժարանում: Վրեժխնդիր է եղել հայատյաց քրդերից ու թուրքերից և տեղափոխվել Կ. Պոլիս՝ խուսափելով հետապնդումներից: Սկզբում կռվել է Վազգենի ու Գուրգենի խմբերում, ապա Գուրգենի հետ միացել Աղբյուր Սերոբին: 1900 թ. Բշարե Խալիլին սպանելուց հետո Անդրանիկը մեծ համբավ է ձեռք բերել և դարձել հայտնի ֆիդայապետերից մեկը: 1901 թ. նոյեմբերին Գևորգի հետ նա ղեկավարել է Առաքելոց վանքի կռիվը, Սասունի 1904 թ. ապստամբությունը, Աղթամարի կռիվը: 1906 թ. Անդրանիկը հեղինակել է հայդուկային պայքարի իսկական դասագիրք հանդիսացող նշանավոր ***«Մարտական հրահանգներ»*** կանոնագիրքը: 15 բաժիններից բաղկացած այս գրքում շարադրված են պարտիզանական կռիվների մարտավարության բոլոր մանրամասները՝ ջոկատների թվաքանակից մինչև հայդուկի անձնական հատկությունների հաշվառումը: Նա 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ իբրև կամավոր կռվել է թուրքերի դեմ բուլղարական բանակի կազմում, Առաջին համաշխարհային պատերազմում գլխավորել առաջին կամավորական գունդը: Անդրանիկ Օզանյանը դարձել է հայ ժողովրդի պատմության մեջ առավել սիրված ժողովրդական հերոսներից մեկը:

Հայ ժողովուրդը տվել է հայդուկների մի ողջ համաստեղություն, որի մեջ էին նաև ***Սպաղանցի Մակարը, Վարդանը*** (Սարգիս Մեհրաբյան), ***Իշխանը*** (Հովսեփ Արղության), ***Նիկոլ Դումանը*** (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) և ուրիշներ:

Հայդուկային շարժումը և կուսակցությունները: Հայդուկային շարժումը 1890-ական թվականներից սերտորեն կապվում է ազգային կուսակցությունների գործունեության հետ: ՀՅԴ գործիչները 1890 թ. սեպտեմբերին փորձում են համոզել Պետերբուրգի համալսարանի ուսանող Սարգիս Կուկունյանին՝ հրաժարվել իր 78-հոգանոց զինված ջոկատով Կարսի մարզից Արևմտյան Հայաստան անցնելու արկածախնդրական մտադրությունից և ընտրել պայքարի ավելի խոհեմ ձևեր: Սակայն ***սեպտեմբերի 22-ին Կուկունյանի*** հայդուկ-կամավորներն անցնում են ռուս-թուրքական սահմանը, մարտի բռնվում թուրքերի ու քրդերի հետ և, տալով զոհեր, կրկին նահանջում ռուսական տարածք՝ ընկնելով ռուս սահմանապահների ձեռքը: Արշավանքը ձախողվում է, սակայն մեծ տպավորություն է թողնում ինչպես կուսակցությունների, այնպես էլ հայդուկային շարժման վրա:

Հայդուկների գործունեության անբաժան մասն է դառնում նաև Արևելյան

Հայաստանից ու Պարսկահայքից զենքի տեղափոխումը Արևմտյան Հայաստան: Ջինատար խմբերի երթուղիներից մեկն անցնում էր նշանավոր *Դերիկի* վանքով: Թավրիզում 1891 թ. դաշնակցության հիմնադրած «Խարիսխ» զինագործական արհեստանոցը վերածվում է զենքի արտադրության կարևոր կենտրոնի: 1890–ականների սկզբին հայդուկների մի մասը հարում էր հնչակյաններին ու դաշնակցությանը, մասամբ՝ արմենականներին: 1890–ական թթ. կեսերին հայդուկապետերի մեծ մասն արդեն դաշնակցական էր, հետևաբար՝ ջոկատները հիմնականում գործում էին ՀՅԴ հովանու ներքո: Հատկանշական է, որ հայդուկների մեջ հավասարապես կային և՛ արևմտահայեր, և՛ արևելահայեր: Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարը միավորել էր հայ ժողովրդի երկու հատվածներին:

XIX դ. վերջին հայդուկները նորանոր էջեր գրեցին հայ ազատագրական պայքարի պատմության մեջ, կարևոր դեր կատարեցին հայկական կոտորածների ժամանակ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում: Նրանց պայքարը վերջնական արդյունքի չհանգեցրեց: Անհատական պարտիզանական կռիվներով հնարավոր չէր հասնել ազգի ազատագրությանը: Սակայն շարժման անհաջողությունները ստիպում էին անցնել նոր մարտավարության, սովորել նախորդների սխալների վրա: Ֆիդայիների մեջ օրեցօր հասունանում էր համաժողովրդական ապստամբության գաղափարը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք պատմական այն ժամանակաշրջանը, որում առաջացավ հայդուկային շարժումը: Ովքեր էին հայդուկները: Հայդուկային շարժման ծագման վերաբերյալ ինչ տեսակետներ կան:
2. Որտեղ և երբ են հանդես եկել առաջին ֆիդայական խմբերը: Ներկայացրեք հայդուկների գործունեությունը 1880–ական թթ.:
3. Երբ և ինչո՞ւ վերելք ապրեց շարժումը: Ովքե՞ր էին նշանավոր հայդուկապետերը. ինչ գիտեք նրանց մասին: Ուրիշ ինչ հայդուկներ են հայտնի ձեզ:
4. Ինչ դրսևորումներով է արտահայտվել հայ ազգային կուսակցությունների և ֆիդայական շարժման կապը: Ինչ արձագանք ունեցավ Ս. Կուկունյանի արշավանքը: Ինչ նշանակություն ունեցավ հայդուկային շարժումը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Հատված Անդրանիկի «Մարտական հրահանգներից»

Ես չեմ, որ կհրավիրեմ ձեզ, արտասահմանյան հայ երիտասարդներ, այլ դժբախտ հայրենիքին հողն ու քարը իրենց արյունով ներկած մեր նահատակներն ու պաշտելի հերոսներն են, որ կոչ կընեն ձեզի՝ զենքի, զինավարժության ու վրեժխնդրության: Լսեցեք անոնց ձայնը, որ մեր կյանքի ձայնն է:

§ 2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Արևմտահայերի ցեղասպանության աբդուլհամիդյան ծրագիրը: 1880-ական թթ. սուլթանական կառավարությունը շարունակում էր զանազան պատրվակներով ձգձգել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով ստանձնած բարեփոխումների իրագործումը: Եվրոպական տերությունները չէին հապաղում օգտվել պատեհ առիթից՝ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար: Սուլթան Աբդուլ Համիդ II-ը ոչ միայն մտադիր չէր կենսագործելու բարենորոգումները, այլև այն համարելով զուտ Թուրքիայի ներքին գործ՝ ուղիներ էր փնտրում Հայկական հարցից «ազատվելու» համար:

Սուլթան Համիդը մշակեց Հայկական հարցի լուծման ուրույն ուղի՝ հայերի ֆիզիկական բնաջնջումը: Այդ ծրագիրն իրականացնելու համար գործի դրվեցին և՛ գաղափարական, և՛ գործնական միջոցներ: Իր հրեշավոր ծրագրին տերության մահմեդական բնակչությանը նախապատրաստելու համար նա պաշտոնական գաղափարախոսություն դարձրեց ***պանիսլամիզմը*** (համաիսլամականություն) և ***պանթյուրքիզմը*** (համաթյուրքականություն): Առաջինը ենթադրում էր իսլամադավան բոլոր ազգերի, երկրորդը՝ թյուրքալեզու բոլոր ժողովուրդների միավորում օսմանյան Թուրքիայի դրոշի ներքո և սրբազան պատերազմ (ջիհադ) բոլոր անհավատների՝ գյավուրների դեմ: Վերջինների թվում առաջինը նկատի էր առնվում հայ ժողովուրդը: Թուրքիայի մեծ վեզիր ***Քյամիլ փաշան*** լկտիաբար հայտարարում էր, որ Եվրոպայում իրենք, օձ սնուցելով, զրկվեցին Բուլղարիայից, և որպեսզի նույնը տեղի չունենա Ասիայում, անհրաժեշտ է բնաջնջել հայությանը:

Քաղաքական գրաքննությունն ավելի խստացվեց. արգելվեց եկեղեցական արարողությունների ժամանակ խոսք ասել Հայաստանի ու հայերի մասին, առհասարակ գործածել բնակավայրերի հայկական անվանումներ (Կարին, Բաղեշ, Բաբերդ, Տիգրանակերտ և այլն): Բանակից հեռացվեցին հայ բժիշկները, արգելվեց բազմաթիվ հայկական ընկերությունների գործունեությունը, փաստորեն դադարեց գործելուց Ազգային սահմանադրությունը:

Հայ-քրդական հակամարտություն հրահրելու և Հայկական հարցի «լուծմանը» քրդերին մասնակից դարձնելու նպատակով սուլթանը անհնազանդ քրդական ջոկատներից 1891 թ. ստեղծեց մոտ 30 հեծելագնդեր, որոնք իր անունով կոչվեցին ***համիդիե***: Դրանց ստեղծման գործը դրվեց Զեքի փաշայի վրա: Այդ գնդերը պետությունից ռոճիկ, զենք ու զինամթերք էին ստանում և օգտվում զանազան արտոնություններից: Նրանց թույլատրվում էր նույնիսկ հարկեր հավաքել, բնակություն հաստատել հայկական գյուղերում, անպատիժ թալանել հայ բնակչությանը: Համիդիեների ստեղծումով Բարձր դուռը լուծում էր երկու խնդիր. նախ՝ քրդերին հեռու էր պահում հակակառավարական գործողություններից և վերցնում էր հսկողության տակ, երկրորդ՝ նրանց ուղղորդում էր հայերի դեմ: Պատահական չէ, որ 1890-ական թթ. հայ-քրդական համագործակցություն ստեղծելու հայ և քուրդ գործիչների ջանքերն

ապարդյուն անցան: Ավելին՝ իշխանությունների դրդմամբ շատ քրդեր ուղղակի մասնակցություն ունեցան հայերի զանգվածային կոտորածներին:

Այսպիսով՝ Օսմանյան կայսրության պատմության ընթացքում հայ և այլ քրիստոնյա ժողովուրդների պարբերաբար կրկնվող կոտորածների դարավոր քաղաքականությունը XIX դ. վերջին տասնամյակում բարձրացվեց ***պետական մակարդակի***. խնդիր դրվեց ծրագրված կերպով բնաջնջելու հայ ժողովրդին ու նրան զրկելու իր հայրենիքից:

1890–ական թթ. սկզբից սուլթանական վարչակարգը ձեռնամուխ եղավ այդ քաղաքականության կենսագործմանը: Սկզբում հայկական կոտորածները կրում էին տեղային բնույթ, ապա ընդգրկեցին ամբողջ Արևմտահայաստանն ու կայսրության տարածքը:

Ամենուր իշխանությունները սկսեցին հայերի դեմ գրգռել մահմեդականներին: Տարածվեցին կեղծ լուրեր, թե հայ բնակչությունը զինվում է և կայսրությունը կործանելու նպատակով նախապատրաստվում է ապստամբության: Այդպիսի խոշոր սադրանք կազմակերպվեց Կարինում 1890 թ. հունիսին: Հայկական զինապահեստ հայտնաբերելու պատրվակով ոստիկանությունն անակնկալ ներխուժեց քաղաքի Սանասարյան վարժարանի, Հայոց առաջնորդարանի շենքերը, Ս. Աստվածածին եկեղեցին և սկսեց խուզարկություններ կատարել: Հունիսի 18–ին եկեղեցու բակում պատարագի եկած բազմությունը ճանաչված գործիչ Խ. Կերեքցյանի և հնչակյան երիտասարդների ղեկավարությամբ ընդդիմացավ ոստիկանությանը: Ջորքերը կրակ բացեցին ժողովրդի վրա և սպանեցին ու վիրավորեցին շուրջ 20 մարդու: Երկու օր անց Կարինի հայկական թաղամաս մտած կանոնավոր զորքերը խաղաղ բնակչության նոր ջարդեր իրականացրին:

Այդ հանցագործության, ինչպես և Հայկական հարցի վրա մեծ տերությունների ուշադրությունը հրավիրելու նպատակով հնչակյանները ***1890 թ. հունիսին Պոլսի Գում Գափու*** թաղամասում կազմակերպեցին խաղաղ ցույց: Իշխանությունները չհապաղեցին առիթն օգտագործել «անհնազանդ» հայերին պատժելու համար: Սուլթանի պալատ շարժվող ցուցարարները հայտնվեցին ոստիկանության արձակած գնդակների տարափի տակ: Եղան նոր զոհեր ու ձերբակալություններ: Կ. Պոլսից Երուսաղեմ աքսորվեց Մ. Խրիմյանը:

Կարինի և Գում Գափուի դեպքերը բողոքի ալիք առաջացրին հայության շրջանում, պայքարի մղեցին նորանոր երիտասարդների: Այս ամենին հետևեց Ս. Կուկունյանի արշավանքը, նոր թափ ստացավ հայդուկային շարժումը: Շուտով ամբողջ կայսրությունում սկսվեց հայերի հալածանքների աննախադեպ ալիք: 1892–1893 թթ. տեղի ունեցան զանգվածային ձերբակալություններ: Բանտերը լցվեցին բազմաթիվ հայ գործիչներով: Այդ մասին Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Կ. Ֆորդը 1893 թ. մարտին գրել է. *«Ավելի քան հինգ հարյուր հայեր Կեսարիայի բանտում են: Մյուսներին դեռ բերում են գյուղերից, և տեղավորելու համար կառուցվել են փայտե ժամանակավոր կացարաններ... Յոզղաթի բանտերը լեցուն են հայերով, տեղացի ավելի քան 60 մեծահարուստ հայեր բանտարկված են ռազմական կացարաններում՝ բանտերում տեղ չլինելու պատճառով»*:

Իշխանությունները ջանքեր չխնայեցին հայդուկային շարժման նշանավոր դեմքերին վերացնելու համար: Կախաղան բարձրացվեցին Թորոս Ծառուկյանը, Տարոնում մեծ հեղինակություն վայելող Մարգար վարժապետը և Մեծն Մուրադի եղբայր Ժիրայրը:

1894–1896 թթ. զանգվածային կոտորածները: Օսմանյան իշխանությունները 1894 թ. անցան զանգվածային կոտորածների կազմակերպմանը: Համիդեական ջոկատները նետվեցին Արևմտյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների վրա: Առաջին հարվածն ուղղվեց ազատատենչ ***Սասունի*** դեմ: Այնտեղ բռնկված ժողովրդական ապստամբությունը ճնշվեց արյան մեջ: Գավառ ներխուժած զորքերը, համիդիե ջոկատներն ու զանազան ավազակախմբեր մինչև օգոստոսի վերջը կոտորեցին Սասունի 40 հայկական գյուղերի 10 հազար խաղաղ բնակիչների: Ապա ջարդարարներն իջան Մշո դաշտ և շարունակեցին հայ գյուղացիների կոտորածը:

Իր զեկուցագրերից մեկում Զեքի փաշան Սասունում ստեղծված վիճակի մասին գրում էր. *«Մենք այնպես մաքրազարդեցինք այդ շրջանը, որ ապագայում այնտեղ (հուզումներ) ... այլևս տեղի ունենալ չեն կարող»*: Կատարված գործողության համար Զեքի փաշան սուլթանից ստացավ շքանշան, իսկ քրդական չորս ցեղապետեր պարգևատրվեցին կառավարական մետաքսե դրոշներով:

Մեծ տերությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով ուղարկվեց Սասուն, որը փաստահավաք աշխատանքի շնորհիվ կարողացավ վերհանել ոճրագործության մանրամասները: Սակայն ի պատասխան 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագիրը կատարելու՝ տերությունների պահանջի՝ իշխանություններն իրականացրին հայերի զանգվածային նոր կոտորածներ:

Սուլթանական կառավարությունը, անտեսելով եվրոպական երկրների կարծիքը, հայկական կոտորածներ իրականացրեց նաև մայրաքաղաքում: ***1895 թ. սեպտեմբերի 18-ին*** Կ. Պոլսում հնչակյանները կազմակերպեցին 4-հազարանոց խաղաղ ցույց: Նրանք շարժվեցին դեպի կառավարության նստավայրը՝ ***Բաբը Ալի***՝ «Մայիսյան բարենորոգումների» ոգով կազմած իրենց նախագիծը սուլթանին հանձնելու նպատակով: Ցուցարարների վրա կրակ բացվեց, սկսվեցին նոր ջարդեր: Կ. Պոլսում զոհվեց երկու հազար մարդ:

Կ. Պոլսի ջարդերի ալիքն անմիջապես տարածվեց գավառներում: Հստակ երևում էր, որ կոտորածներն իրականացվում են կազմակերպված՝ ըստ նահանգների: Նախ տեղերում ոտքի էին հանում մոլեռանդ մահմեդական հոգևորականությանն ու նրան հետևող ամբոխին, ապա ջարդերին միանում էին քրդական ջոկատները, ոստիկանությունն ու զորքը: Նույն սցենարը հետո գործում էր հարևան նահանգում, ուր տեղափոխվում էին համիդիեներն ու զորքը: Արդեն սեպտեմբերի վերջին զազազած ամբոխի ու զորքերի ջարդերի թիրախ դարձավ Տրապիզոնի և Բաբերդի, ապա գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանի հայությունը: Տրապիզոնում բազմաթիվ հայերի նավերով դուրս բերեցին բաց ծով և ջրասույզ արեցին: Այդ ոճրագործության տպավորության տակ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին վրձնեց «Հայերի ջարդը Տրապիզոնում. 1895 թ.», «Նավերի բեռնումը» և այլ կտավներ: Բաբերդում շատ

կանայք իրենց երեխաների հետ նետվում էին Ճորոխ գետը:

Հոկտեմբերի սկզբին բռնություններն ընդգրկեցին Էրզրումի նահանգի գավառները: Երբ Երզնկայում ձերբակալված 70 հայ գործիչներ հրաժարվեցին հայերի նկատմամբ «բարյացակամ» վերաբերմունքի համար սուլթանին շնորհակալական ուղերձ հղելուց, բանտում տանջամահ արվեցին:

Հոկտեմբերի երկրորդ կեսին ջարդարարներն անցան հարևան Սեբաստիայի ու Խարբերդի նահանգներ, Մալաթիա, Եդեսիա: Նոյեմբերին Դիարբեքիրի նահանգում տեղի ունեցած կոտորածներին զոհ գնացին նաև ասորիներ ու հույներ, ավերվեց ու կողոպտվեց շուրջ 120 հայկական գյուղ: Բիթլիսի նահանգում իշխանությունները լուրեր տարածեցին, թե քանի որ հայերը պատրաստվում են ավերելու մզկիթները, անհրաժեշտ է արագացնել նրանց կոտորածները: Երբ ոգևորված ամբոխը մի քանի ժամում կողոպտեց Մուշի հայկական խանութներն ու արհեստանոցները, թուրքական պաշտոնյաները դժգոհեցին իրենց հավատակիցներից, որ փոխանակ հայերին սպանելու, միայն զբաղված են թալանով: Այդուհետ՝ կողոպուտն ուղեկցվեց սպանություններով:

Ինքնապաշտպանության դիմած հայերին ապակողմնորոշելու նպատակով իշխանությունները հաճախ բռնությունները վերագրում էին անկառավարելի խուժանին: Իբր կարգ ու կանոն հաստատելու պատրվակով նրանք կանոնավոր զորքեր էին մտցնում հայկական թաղամասեր և ավարտին էին հասցնում խառնամբոխի կիսատ թողածը: Այդպես թուրքերը կարողացան զինված ջոկատներ մտցնել Ուրֆա (Եդեսիա), Արաբկիր, Երզնկա, Տրապիզոն և այլ քաղաքներ:

Օսմանյան իշխանությունների լկտիությունը հասավ այն աստիճանի, որ ի պատասխան ոճրագործներին պատժելու վերաբերյալ եվրոպական տերությունների պահանջներին՝ կայսրության տարբեր վայրերում կազմակերպեցին դատական նիստեր, որոնց ընթացքում կեղծ փաստաթղթերի հիման վրա մեղադրվեցին հայ գործիչները և դատապարտվեցին մահապատժի: Նրանք այդպես վարվեցին Բաբերդի երևելի գործիչների նկատմամբ 1896 թ. հոկտեմբերին:

Որոշ վայրերում, ինչպես, օրինակ՝ ***Մոկսում***, տեղի առանձին քրդեր ու թուրքեր կոտորածներից փրկեցին բազմաթիվ հայերի: Ցավոք, նման դեպքերը մեծ թիվ չէին կազմում:

1890-ական թթ. օսմանյան Թուրքիայում ոչնչացվեց շուրջ 300 հազար հայ: Բազմահազար արևմտահայեր արտագաղթեցին տարբեր երկրներ, մոտ 100 հազար՝ Ռուսաստան, 200 հազար՝ Եվրոպա և Ամերիկա: Ջարդերից խուսափելու նպատակով շատերն ընդունեցին իսլամ: Կոտորածների հետևանքով արևմտահայ բազմաթիվ գավառներ հայաթափվեցին և բնակեցվեցին թուրքերով ու քրդերով:

Օսմանյան Թուրքիայում հայերի՝ 1890-ական թթ. իրականացված զանգվածային բնաջնջումը աշխարհում առաջին ցեղասպանություններից էր (***գենոցիդ*** — հունարեն *գենոս՝* ցեղ, լատիներեն՝ *ցիդո՝* սպանում եմ): ***Ցեղասպանությունը (գենոցիդը) որևէ ազգի, կրոնական համայնքի ամբողջական կամ մասնակի բնաջնջմանը նպատակառուղղված ծրագիր և գործողություն է:***

Հայերի ինքնապաշտպանական կռիվները և մասամբ եվրոպական տերությունների միջամտությունները Համիդ II–ին թույլ չտվեցին ավարտին հասցնել հայությանն ամբողջապես բնաջնջելու իր դիվային ծրագիրը: Սակայն պաշտոնական մակարդակի հասցրած այդ քաղաքական ծրագիրը երբեք չհանվեց օրակարգից և հետագայում օգտագործվեց ոչ միայն սուլթանական վարչակարգի, այլև նրան փոխարինած թուրքական ազգայնամոլ մյուս ուժերի կողմից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քաղաքականություն էր վարում աբդուլհամիդյան վարչակարգը 1880–ական թվականներին: Ներկայացրեք պանիսլամիզմի և պանթյուրքիզմի էությունը: Երբ և ինչ նպատակով ստեղծվեցին համիդիե գնդերը: Ինչ արտոնություններ ունեին դրանք: Ինչ քաղաքականություն որդեգրեց սուլթանական վարչակարգը 1890–ական թվականների սկզբից: Ինչ իրադարձություններ տեղի ունեցան 1890 թ. Կարինում: Ովքեր և ինչ նպատակով կազմակերպեցին Գում Գափուի ցույցը. ինչ ընթացք և հետևանքներ այն ունեցավ:
2. Ներկայացրեք 1894–1896 թթ. արևմտահայերի զանգվածային կոտորածների ընթացքը: Հիմնավորեք, որ այդ ջարդերն ունեին կազմակերպված բնույթ: Ինչ հետևանքներ ունեցան 1890–ական թթ. հայերի կոտորածները:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Քաղվածք Կ. Պոլսում ռուսական ռազմական գործակալի զեկուցագրից (19 օգոստոսի, 1896 թ.)

Կոստանդնուպոլսում երկու օրում սպանված են ավելի քան 5500 անպաշտպան հայեր, ինչպես և շատ այլ քրիստոնյաներ: Հաստատապես ապացուցված է, որ ջարդերն իրականացրել են կառավարության կողմից նախապես կազմված ավազակախմբերը՝ ոստիկանական աստիճանավորների ղեկավարությամբ:

§ 3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 1894–1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սասունի 1894 թ. հերոսամարտը: Հայկական կոտորածները շատ ավելի մեծ ծավալներ կընդունեին, եթե արևմտահայությունը չդիմեր ինքնապաշտպանական գործողությունների: Զանգվածային ջարդերի օրերին հայ ազգային կուսակցությունները, հայդուկային խմբերը ինչպես կազմակերպեցին դիմադրական մարտեր, այնպես էլ տարբեր վայրերում իրականացրին ապստամբական ու ահաբեկչական գործողություններ:

Բիթլիսի վիլայեթի լեռնային գավառներից Սասունը՝ 35 հազար հայ բնակչությամբ, շարունակում էր պահպանել իր կիսանկախ վիճակը: 1890–ական թթ. այն դարձել էր ֆիդայական շարժման կենտրոններից մեկը: Երբ 1891–1892 թթ. համիդիե ջոկատներն ու կանոնավոր զորքերը ներխուժեցին Սասուն, հատկապես Շենիկ, Սեմալ, Տալվորիկ ու Գելիեգուզան գյուղերում հանդիպեցին ուժեղ դիմադ-

ության՝ հայդուկներ ***Հովանի, Սպարանցի Մակարի*** և այլոց ղեկավարությամբ: Համոզված լինելով, որ թուրքական հարձակումները շարունակվելու են, հայդուկների նորանոր խմբեր տեղափոխվեցին Սասուն: Այստեղ էին Միհրան Տամատյանը, Մեծն Մուրադը, Հրայրը, Գևորգ Չավուշը և ուրիշներ: Նրանք համոզում էին բնակչությանը չվճարել հարկերը, կոչ էին անում ամեն վայրկյան պատրաստ լինել՝ հակահարված տալու թշնամու նոր ոտնձգություններին:

Թուրքական իշխանությունները կարողացան ձերբակալել Մ. Տամատյանին և ավելի քան երկու տասնյակ սասունցիների: Մեծն Մուրադը ստանձնեց պաշտպանության ընդհանուր ղեկավարությունը:

Հայկական կոտորածներն անարգել իրագործելու համար Բարձր դուռը որոշեց նախ ճնշել Սասունի դիմադրական ներուժը: 1894 թ. ամռանը լեռնցիների վրա շարժվեց ***Զեքի փաշայի*** 12–հազարանոց զորքը՝ հրետանու ուղեկցությամբ: Նրան միացան այլ զորամասեր Դիարբեքիրից, Էրզրումից, Երզնկայից: Արշավանքին մասնակցեցին համիդիե 3–հազարանոց մի զորագնդի և բազմաթիվ այլ ջոկատների բաշիբոզուկներ: Այս հսկա բանակի (ավելի քան 40 000) դեմ սասունցիները կռվեցին մոտ 2 հազար քաջերով՝ կայծքարե հրացաններով, դաշույններով ու կացիններով:

1894 թ. հուլիսին Շենիկի գյուղապետ ***Գրգոյի (Գրիգոր Մոսկան)*** տանը հրավիրված ինքնապաշտպանական ժողովը հանձնարարականներ տվեց պաշտպանական գոտիների վերաբերյալ: Հուլիսի 27–ին թուրքերի ձեռնարկած գրոհը ենթարկվեց ուժեղ հակահարվածի: Օգոստոսի սկզբին թշնամին անցավ ավելի լայնածավալ հարձակման: Արյունալի մարտերից հետո պաշտպանները ստիպված թողեցին Գելիեգուզանը և քաշվեցին Անդոկի լանջերը: Թուրքերն առաջարկեցին բանակցություններ սկսել: Սասունցիների մեծ մասը դրան չհավատաց և շարունակեց պայքարը: Սակայն շուրջ 150 հոգի ***Հովհաննես քահանայի*** առաջնորդությամբ փորձեց բանակցությունների մեջ մտնել թշնամու հետ, բայց հայտնվեց ծուղակի մեջ և անխնա կոտորվեց: Տղամարդկանց հետ կողք կողքի հերոսաբար կռվում էին նաև կանայք, ծերունիներ և պատանիներ: Թշնամու ձեռքը չընկնելու համար բազմաթիվ կանայք իրենց նետում էին անդունդը: Մարտերից մեկում քաջաբար զոհվեց Գրգոն, ձերբակալվեցին Մեծն Մուրադը և Չավուշը: Միայն ***օգոստոսի վերջին*** թշնամին կարողացավ մտնել Սասունի գյուղերը:

Զեյթունի 1895–1896 թթ. ապստամբությունը: Հայերի ինքնապաշտպանական ուժը կոտրելու համար իշխանությունները կարևորում էին նաև Զեյթունի հպատակեցումը: Այդ հանգամանքը լավ հասկանալով՝ հայ ազգային ուժերը, մասնավորապես՝ հնչակյանները, միջոցներ ձեռնարկեցին լեռնագավառն ամրացնելու ուղղությամբ: 1895 թ. ամռանը Զեյթուն տեղափոխվեցին հնչակյան ***Գարուն Աղասին*** (Կարապետ Թուր–Սարգսյան), մշեցի հայդուկ ***Միտ Շահենը*** (Մխիթար Սեֆերյան) և ուրիշներ: ***Հոկտեմբերի 12–ին Արեգին գյուղում*** հրավիրված ժողովում որոշվեց ժողովրդի ոգին բարձրացնելու և գավառը թշնամուց պաշտպանելու համար զենքի դիմել: Այսպես սկսվեց ապստամբությունը, որի փաստական ղեկավար դաձավ ***Նազարեթ Չավուշը*** (Նորաշխարհյան):

Պետո (Ալեքսանդր Պետոյան)

75–ամյա ***Ղազար Շովրոյանի*** և Աղասու գլխավորությամբ զեյթունցիները մինչև հոկտեմբերի 18–ի լուսաբացը զինաթափեցին թուրքական 700–հոգանոց կայազորը, գրավեցին 600 հրացան, գերմանական 2 հրանոթ և մեծ քանակությամբ այլ զինամթերք: Ջորանոցի վրա բարձրացվեց ապստամբների կարմիր դրոշը՝ «Զեյթունի անկախ իշխանութուն» վերտառությամբ: Կազմվեց Զեյթունի ժամանակավոր կառավարություն՝ Աղասու նախագահությամբ:

1895 թ. նոյեմբերին դեպի Զեյթուն շարժվեց թուրքական երկու բանակ: Դեկտեմբերի սկզբին ընթացող անհավասար մարտերում հայերը ծանր կորուստներ պատճառեցին թշնամուն: Հատկապես արյունալի մարտեր տեղի ունեցան ***Ֆոնուզ*** գյուղի մերձակայքում: Տասնյակ հազարավոր զինվորներով գրոհող թուրքերին հաջողվեց հասնել Զեյթուն գյուղաքաղաք և հրետանային սաստիկ կրակ բացել: Ապստամբներից ոմանք սկսեցին նահանջել: Այդ պահին նժույգի վրա երևաց ալեզարդ իշխան ***Կարապետ Բասիկոսյանը*** և, կոչ անելով կռվել մինչև վերջին շունչը, կարողացավ մարտիկներին գոտեպնդել ու կրկին տանել գրոհի: Անակնկալի եկած թշնամին, տալով ավելի քան հազար սպանված, նահանջեց: Օսմանյան զորքում սկսվեցին հիվանդություններ, ոմանք դիմեցին դասալքության:

Իրեն չարդարացրած թուրքական զորքի հրամանատարը փոխվեց, սակայն թշնամու նոր գրոհները ևս պսակվեցին անհաջողությամբ: Ուղղակի անհավատալի էր, որ շրջապատված չորս կողմից, զինամթերքի ու սննդամթերքի փաստական բացակայության պայմաններում լեռնականներն արդեն չորս ամիս շարունակում էին անհավասար կռիվը:

Զեյթունի հերթական այս հերոսամարտի լուրը հասնում է նաև Եվրոպա: Մեծ տերությունների միջամտությամբ ***1896 թ. հունվարի 30–ին Հալեպում*** կնքվում է հաշտություն: Կառավարությունը պարտավորվում է զորքերը հետ քաշել Զեյթունից, ներում շնորհել ապստամբներին՝ ապահովելով նրանց կյանքն ու գույքը: Զեյթունում պետք է նշանակվեր եվրոպացի կառավարիչ, տեղական պաշտոնյաները լինելու էին հայեր: Այս լուրջ զիջումների դիմաց զեյթունցիները հանձնելու էին զենքերը, իսկ հնչակյան գործիչները պետության ծախսով հեռանալու էին կայսրությունից:

Ակնհայտ է, որ այս պայքարն ավարտվել էր զեյթունցիների հաղթանակով: Պատահական չէ, որ վախենալով կիլիկիահայերի նոր ըմբոստացումից՝ իշխանություններն այդպես էլ չհամարձակվեցին զանգվածային կոտորածներ իրականացնել Զեյթունում և Կիլիկիայի այլ վայրերում: Այս հաղթական պայքարի շնորհիվ տարածաշրջանը համեմատաբար քիչ տուժեց:

Վանի 1896 թ. հերոսական ինքնապաշտպանությունը: 1895 թ. աշնանը՝ հայկական կոտորածների օրերին, պաշտ-

պանական կռիվների մեջ առանձնացավ Մալաթիայի հերոսամարտը: Այստեղ ***Եղիշե քահանա Խաչատրյանի*** գլխավորությամբ տեղի հայերը ջարդեցին թուրք ոստիկաններին և թուրքական խուժանին ու վտարեցին քաղաքից: Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան Մուշում, Դիարբեքիրում, Շատախում, Ուրֆայում և այլուր:

Պաշտպանական կռիվների մեջ իր ուրույն տեղն ունի ***Վանի 1896 թ. հերոսամարտը***: Արդեն 1895 թ. վերջին նկատելի էր, որ իշխանությունները նախապատրաստվում են գործողությունների Վան–Վասպուրականում: Բարենորոգումների իրագործման պատրվակով մեկը մյուսի հետևից այստեղ էին ժամանում թուրք պաշտոնյաներ: Դրանց թվում էր սուլթանի հանձնակատար ***Սաադէդդին փաշան***:

Հայ բնակչությունը, որ քաջատեղյակ էր այլ նահանգներում տեղի ունեցող արյունալի իրադարձություններին, սկսեց նախապատրաստվել ինքնապաշտպանության: Սալմաստից ժամանեցին հայդուկային խմբեր: Մկրտիչ Ավետիսյանը ստանձնեց տեղի արմենականների ղեկավարությունը, որոշ քանակությամբ զենք բերվեց Վան և շրջակա գյուղեր:

Թուրք զինվորների և քուրդ ավազակների միջև սկսված ընդհարման մեջ հայերին ներքաշելուց հետո իշխանությունները ***1896 թ. հունիսի 3–ին*** համիդեական գնդերին հրահանգեցին ներխուժել Վանի հայկական թաղամասեր: ***Կազմվեց բոլոր ուժերի միասնական ձակատ՝ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ***: Արմենականներին միացան հնչակյանները ***Մարտիկի*** (Մարտիրոս Սարուխանյան) և դաշնակցականները՝ ***Պետոյի*** (Ալեքսանդր Պետրոսյան) ղեկավարությամբ:

Ջինվորական մարմնի որոշմամբ՝ 500 երիտասարդներ մոտ 30 դիրքեր կազմեցին Այգեստանին հարակից մահմեդական թաղամասերի դիմաց: Հնգօրյա մարտերում պաշտպանները մնացին անսասան: Նրանք նույնիսկ անցան հակագրոհի և թշնամուց խլեցին երկու հրանոթ: Սկզբում պաշտպանները մերժեցին Վանում Մեծ Բրիտանիայի հյուպատոս ***Ռիչյամսի*** միջնորդությունը զենքը վայր դնելու վերաբերյալ: Սակայն հաշվի առնելով զինամթերքի պակասը, գյուղերից փախստականների օրեցօր ուժեղացող ներհոսքի պատճառով ստեղծված անմխիթար վիճակը՝ ընդունեցին զինադադարի պայմանները: Սաադէդդինը խոստացավ զենքը վայր դնելու դիմաց թույլատրել ապստամբներին անարգել անցնել Պարսկաստան:

Սակայն հունիսի 8–ին, երբ 1500 վանեցիներ փորձեցին անցնել Պարսկաստան, սահմանազլխին՝ Ս. Բարդուղիմեոս վանքից ոչ հեռու, նրանց վրա հարձակվեցին կանոնավոր զորքերն ու քրդական մազրիկ ցեղի հրոսակները: Փրկվեց միայն 30 մարդ: Ջոհվեցին նաև Մ. Ավետիսյանը, Պետոն ու Մարտիկը: Թուրքերը դաժան դատաստան տեսան նաև Վանում մնացած հայերի հետ:

Վանեցիների դավադիր սպանդը ծանր տպավորություն գործեց ամբողջ հայության վրա: Ազատագրական պայքարի մի խումբ գործիչներ որոշեցին կենսագործել Նիկոլ Դումանի մտքում հղացած գաղափարը՝ վրեժխնդիր լինել Վանի հերոսների արյան դիմաց: ՀՅԴ–ն հավանություն տվեց այդ ծրագրին և ձեռնամուխ եղավ դրա իրագործմանը: ***1897 թ. հուլիսի 25–ին*** Հայաստանի տարբեր ծայրերից եկած շուրջ

250 հայդուկներ Վարդանի, Իշխանի, Ն. Դումանի, Սևքարեցի Սաքոյի և այլոց գլխավորությամբ անցան պարսկաթուրքական սահմանը և *Խանասորի* դաշտում անակնկալ հարձակվեցին քրդական մազրիկ ցեղի վրա ու կոտորեցին շատերին: Այդ վրեժխնդրական գործողությունը հայ ազատամարտի պատմության մեջ է մտել *Խանասորի արշավանք* անունով:

Այսպիսով՝ 1894–1896 թթ. համիդյան ջարդերի շրջանում հայ ազատագրական պայքարի կազմակերպումն ունեցավ բացառիկ նշանակություն: Խիզախ դիմադրական մարտերի շնորհիվ շատ վայրերում հնարավոր եղավ խուսափել զանգվածային ջարդերից, հարկադրել մեծ տերություններին քայլեր անել կոտորածները կանխելու, հայկական բարեփոխումների խնդիրը կրկին արծարծելու ուղղությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ նշանակություն ունեին արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները: Ի՞նչ գիտեք Սասունի մասին: Ովքե՞ր կազմակերպեցին և գլխավորեցին 1894 թ. Սասունի հերոսամարտը: Ներկայացրե՛ք այդ հերոսամարտի ընթացքը:
2. Ինչո՞ւ էին թուրքերը կարևորում Զեյթունի հպատակեցումը: Ովքե՞ր և ի՞նչ ձեռնարկեցին Զեյթունն ամրացնելու ուղղությամբ: Ներկայացրե՛ք 1895–1896 թթ. Զեյթունի ապստամբության ընթացքը: Ի՞նչ նշանակություն և հետևանքներ ունեցավ ապստամբությունը:
3. Ի՞նչ գիտեք Մալաթիայի հերոսամարտի մասին: Ուրիշ ո՞ր վայրերում տեղի ունեցան ինքնապաշտպանական կռիվներ: Ներկայացրե՛ք 1896 թ. Վանի հերոսամարտի ընթացքը: Ի՞նչ ավարտ ունեցավ այն: Գնահատե՛ք Խանասորի արշավանքը: Հիմնավորե՛ք ձեր վերաբերմունքը:
4. Ի՞նչ նշանակություն ունեցան ինքնապաշտպանական մարտերը: Աղյուսակի միջոցով ներկայացրե՛ք ինքնապաշտպանական կռիվների վայրերը, ժամանակը, արդյունքները, ղեկավարներին:

§ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ

Մայիսյան բարենորոգումների ծրագիրը: Եվրոպական տերությունները, որ մոռացության էին տվել Հայկական հարցը, այն կրկին հիշեցին համիդյան կոտորածների օրերին: Հերթական առիթը ներկայացավ Թուրքիայի վրա ճնշում բանեցնելու համար: Սասունի 1894 թ. դեպքերի մասին Եվրոպայում առաջինը լուր ստացվեց Վանում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսից, ապա այդ մասին գրեցին աշխարհի բազմաթիվ ազդեցիկ թերթեր: Բրիտանական կառավարությունը, որն ամեն կերպ ձգտում էր իր ազդեցությունն ուժեղացնելու Հայաստանում, պահանջեց իր փոխհյուպատոսին թույլատրել մեկնել Սասուն: Քանիցս հերքելով կոտորածների փաստը՝ սուլթանը մերժեց այդ պահանջը և իր հերթին անգլիացիներին մեղադրեց ապստամբներին քաջալերելու մեջ: Բրիտանացիների խնդրանքով իրենց պահանջին միացան Ռուսաստանը

և Ֆրանսիան: Համիդը ստիպված որոշում ընդունեց Սասունի դեպքերը հետաքննող հանձնաժողով կազմելու վերաբերյալ: Հանձնաժողովի կազմում, բացի երեք երկրների փոխհյուպատոսներից, ընդգրկվեցին նաև թուրք զինվորականներ, որոնց սուլթանը հրահանգեց հետաքննել Սասունի «հայ ավազակների հանցագործ վարքը»:

Հանձնախումբը սկսեց աշխատել սուլթանական իշխանությունների հարուցած դժվարությունների, նույնիսկ հայերի հանդեպ վերսկսված բռնությունների պայմաններում: Այդուհանդերձ, լսելով շուրջ 200 վկաների, 1895 թ. հուլիսին իր ներկայացրած եզրակացության մեջ հանձնաժողովն արձանագրեց, որ Սասունի շրջանում իրապես տեղի է ունեցել հայ բնակչության համատարած ջարդ՝ կանոնավոր թուրքական բանակի մասնակցությամբ: Համաձայն զեկուցագրի՝ հայերի ապստամբական գործողությունների մասին փաստերը հետաքննությամբ չէին հաստատվել: Հանձնաժողովի եզրակացությունը գործնական հետևանք չունեցավ, և մեղավորներն այդպես էլ մնացին անպատիժ:

Համաշխարհային հասարակայնության ճնշման տակ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, օգտագործելով Սասունի ոճրագործության բացահայտման հանգամանքը, փորձեցին կյանքի կոչել հայկական բարենորոգումների խնդիրը: ***1895 թ. մայիսի 11-ին*** նրանք սուլթանին հանձնեցին մի նախագիծ, որը ստացավ ***Մայիսյան բարենորոգումների ծրագիր*** անունը: Այն բաղկացած էր 13 գլուխներից և 40 հոդվածներից:

Ծրագրի համաձայն՝ հայկական 6 նահանգներում (Կարին, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր և Սեբաստիա) սուլթանի կողմից նահանգապետեր պիտի հաստատվեին միայն տեղական բնակչության համար ցանկալի մարդիկ՝ առանց ազգային ու կրոնական խտրականության: Եթե նահանգապետը մահմեդական էր, տեղակալը պետք է լիներ քրիստոնյա և հակառակը: Գավառապետերին ևս պիտի նշանակեր սուլթանը: Հայաշատ գավառներում այդ պաշտոնը զբաղեցնելու էին քրիստոնյաները:

Տեղերում տարբեր ազգերի ներկայացուցիչներից հավաքագրված ոստիկանները ենթարկվելու էին տեղական խորհուրդներին: Համիդիե հեծելազորին արգելվում էր առանց կանոնավոր զորքերի ուղեկցության մասնակցել որևէ գործողության: Մնացած դեպքերում նրանք զրկվում էին զենք ու համազգեստ կրելու իրավունքից: Ծրագիրը նախատեսում էր նաև Հայաստանում հողային, հարկային, դատական գործի բարելավում:

Եվրոպայի նոր միջամտությունները և դրանց հետևանքները: Եվրոպական բոլոր տերությունները պաշտոնապես հանդես էին գալիս հայկական կոտորածների դեմ և պաշտպանում էին բարենորոգումների ծրագիրը: Նրանց միջև նույնիսկ ընթանում էր յուրահատուկ մրցակցություն, թե ով է ավելի եռանդուն ջանքեր գործադրում հայերին պաշտպանելու համար: Բայց մասնավոր հարցերում անմիջապես նկատելի էր, որ երկրների միջև առկա են լուրջ տարաձայնություններ:

Համոզված լինելով, որ մայիսյան ծրագիրը սուլթանի կողմից ձախողվելու է, Մեծ Բրիտանիան Ռուսաստանին առաջարկեց ավելի գործուն միջոցներ կիրառել՝ ընդհուպ մինչև նեղուցներ նավատորմ մտցնելն ու Հայաստանում բարենորոգումները հսկող մշտական հանձնախումբ պահելը: Ռուսաստանն ու Ֆրանսիան,

զգուշանալով, որ նման քայլերը կարող են մեծացնել Անգլիայի ազդեցությունը Թուրքիայում, դեմ արտահայտվեցին այդ առաջարկներին:

Ոգևորված հատկապես բրիտանական հասարակական–քաղաքական շրջաններում հնչող հայասիրական ելույթներից՝ 1895 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում հնչակյանները կազմակերպեցին Բաբը Ալիի ցույցը: Ցուցարարները եվրոպական դեսպաններին նախապես իրազեկել էին, որ ցույցը խաղաղ բնույթ է կրում և ի լրումն մայիսյան նախագծի՝ նպատակ ունի սուլթանին հանձնելու նաև հայկական պահանջները: Սակայն, ինչպես հայտնի է, ցույցն ավարտվեց գնդակոծությամբ և հազարավոր զոհերով: Եվրոպական վեց տերությունների դեսպանները բավարարվեցին սեպտեմբերի 21–ին արված համատեղ հայտարարությամբ, որով դատապարտում էին հայերի նկատմամբ ոստիկանության և մոլեռանդ ամբոխի դաժան գործողությունները և իշխանություններից պահանջում քաղաքում կարգ ու կանոնը վերականգնել միմիայն կառավարական ուժերի միջոցով: Բայց այդ բողոքները ևս մնացին անպատասխան, իսկ մայիսյան բավականին համեստ նախագիծը չիրագործվեց: Փոխարենը տեղի ունեցան նոր կոտորածներ:

1895 թ. նոյեմբերին արդեն Ռուսաստանն առաջարկեց քննարկել տերությունների ռազմանավերը նեղուցներ մտցնելու հարցը: Նրա համոզմամբ՝ դա կարող էր ազդեցություն գործել սուլթանի վրա և կանխել ինչպես կոտորածները, այնպես էլ երաշխիք դառնալ եվրոպացի դիվանագետների ու քաղաքացիների անվտանգության համար: Մի քանի օր անց բոլոր տերություններն իրենց համաձայնությունը տվեցին ռուսական առաջարկին: Սկզբում սուլթանն ընդդիմացավ, հետո համաձայնեց միացյալ առաջարկին. դեկտեմբերի կեսերին Միջերկրական ծովից Մարմարի ծով մտան եվրոպական երկրների ռազմանավերը և ջարդարարների վրա ազդեցություն գործելու համար ցուցադրաբար անցան նեղուցներով: Բայց այդ քայլը միայն ժամանակավորապես կատարեց իր դերը: Նավերի հեռանալուց հետո կոտորածները կրկնվեցին:

Եվրոպական տերությունները հետագայում ևս միջամտեցին տեղի ունեցած այլ իրադարձությունների: Ինչպես գիտեք, 1896 թ. հունվարին նրանց միջնորդությամբ Զեյթունում հաշտություն էր կնքվել, իսկ ապստամբության կազմակերպիչ հնչակյանները հեռացել էին Թուրքիայից: Հունիսի 8–ին Վանի անգլիական հյուպատոսի միջնորդությամբ երաշխավորվեց 1500 կռվող վանեցիների անվտանգ անցումը Պարսկաստան, սակայն գրեթե բոլոր կռվողները դավադրաբար սպանվեցին: Օգոստոսին հայ երիտասարդների կողմից Օտտոմանյան բանկի գրավման լուրը ստանալուց անմիջապես հետո գործին միջամտեց Կ. Պոլսում ռուսական դեսպանության թարգմանիչ Ն. Մաքսիմովը: Ներկայանալով դրամատան պայթեցումից անհանգստացած մյուս երկրների դեսպանների անունից՝ նա կարողացավ դաշնակցականներին համոզել հրաժարվել իրենց հանդուգն ծրագրից և դեսպանների երաշխավորությամբ անցնել Ֆրանսիա: Դրամատան ազատումից անմիջապես հետո Կ. Պոլսում և գավառներում անցավ հայկական ջարդերի հերթական ալիքը: Անգլիացիները նույնիսկ առաջարկեցին զորք մտցնել օսմանյան մայրաքաղաք: Սակայն սուլթանը կարողացավ ճարպկորեն օգտվել մեծ տերությունների հակասություններից և ի չիք դարձնել Կ. Պոլիսը գրավելու ծրագիրը:

Մեծ տերությունները և հատկապես այդ երկրների հայասեր հասարակական շրջանակները 1894–1896 թթ. քայլեր կատարել են հայկական ջարդերը կանխելու, բարենորոգումների ծրագիրը գործողության մեջ դնելու, հայ գաղթականությանն օգնելու ուղղությամբ: Սակայն այդ ջանքերը գործադրվել են ոչ այնքան հայ ժողովրդի շահերի պաշտպանության, որքան Օսմանյան կայսրությունում սեփական երկրի համար նպաստավոր դիրքեր ապահովելու նպատակով: Անգլիայի նպատակը Եգիպտոսում իր ազդեցության ամրապնդումն էր: Ֆրանսիան ձգտում էր չվնասելու Թուրքիայում կատարած իր ֆինանսական ներդրումները: Ռուսաստանը ջանք չէր խնայում Արևմտյան Հայաստանում, սնծովյան նեղուցներում ու Բալկաններում Անգլիայի ուժեղացումը կանխելու համար: Ռուս–անգլա–ֆրանսիական կողմի հակառակորդ Գերմանիայի ծրագրերում ուրվագծվում էր Բեռլին–Բաղդադ երկաթգծի շինարարության հեռանկարը, որի համար նա պատրաստ էր զոհաբերելու այդ ծրագրի ճանապարհին կանգնած արևմտահայության կենսական շահերը: Ժամանելով Թուրքիա՝ Գերմանիայի կայսր Վիլհելմ II–ը ողջունեց արյունոտ սուլթանի ոճրագործ քաղաքականությունը և սկսեց ռազմական ու տնտեսական օգնություն ցուցաբերել Օսմանյան կայսրությանը:

Ջուր էին հայ ազգային–քաղաքական մարմինների և գործիչների հույսերը եվրոպական ճնշումների միջոցով Հայկական հարցում հաջողության հասնելու համար: Առանձին դեպքերում կուսակցությունները հասկանում էին այդ միջամտությունների վտանգները, սակայն դարձյալ դրանք կրկնում էին՝ օսմանյան բռնատիրության դեմ պայքարում «դաշնակիցներ» ձեռք բերելու ակնկալությամբ: Չհասնելով հաջողության՝ ազատագրական շարժման գործիչները հետզհետե հրաժարվում էին անհատական–պարտիզանական պայքարից, օտարների միջամտությունից և հակվում դեպի սեփական ուժերին ապավինելու, համաժողովրդական ապստամբություն նախապատրաստելու մարտավարությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ նպատակ էր հետապնդում բրիտանական կառավարության պահանջը: Ինչպես ձևավորվեց Սասունի դեպքերը հետաքննող հանձնաժողովը և ինչ աշխատանքներ կատարեց: Ներկայացրեք Մայիսյան բարենորոգումների ծրագրի բովանդակությունը: Գնահատեք այդ ծրագիրը:
2. Ինչ վերաբերմունք ունեին մեծ տերությունները հայերի կոտորածների և բարենորոգումների նկատմամբ: Ովքեր և ինչ նպատակով կազմակերպեցին Բաբը Ալիի ցույցը: Ինչ ավարտ և հետևանքներ ունեցավ այն:
3. Ներկայացրեք մեծ տերությունների վարած քաղաքականությունը Հայկական հարցի լուծման ուղղությամբ: Ինչ քայլեր ձեռնարկեցին նրանք հայերի ջարդերը կանխելու և բարենորոգումներ իրականացնելու ուղղությամբ: Իրականում ինչ նպատակներ էին հետապնդում մեծ տերությունները: Ինչու՞ և ինչ մարտավարության էին հակվում ազատագրական շարժման գործիչները:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Բարենորոգումների ծրագրի կապակցությամբ Շապին Կարահիսարից շուրջ 500 հայերի նամակը Ռուսաստանի դեսպան Նելիդովին (25 հունիսի, 1895 թ.)

Բարենորոգումների ծրագրի հարցը նոր չէ, և մենք հաճախ ենք հուսախաբ եղել մեր արդար սպասելիքներում, որոնք, թվում է, վաղուց պիտի կենսագործված լինեին... Նորից հայկական բարենորոգումների իրականացման ծրագիրը նորին սուլթանական մեծությանը հանձնարարելը ծաղր չէ՞ արդյոք մեր հանդեպ: Մեզ համար արդեն պարզ է, որ մեր չսպիացած վերքերից պիտի առավել արյուն հոսի. մի կողմից՝ տնտեսական ճգնաժամը, մյուս կողմից՝ հալածանքներն ու աներևակայելի տանջանքները մեզ վերջնական անկման կհասցնեն:

ԳԼՈՒԽ 5. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

§ 1. ՊԱՅՔԱՐ ՑԱՐԻԶՄԻ ՀԱԿԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը: Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի փոփոխությունները պայմանավորված էին Ռուսաստանյան կայսրությունում արդյունաբերական հասարակության զարգացմամբ: Ռուսաստանի ազգային երկրամասերը վերածվել էին էժան հումքի, հիմնականում՝ թերև արդյունաբերական արտադրության շրջանների, ինչպես նաև ապրանքների իրացման շուկայի:

Հաղորդակցության արդիական ուղիների շնորհիվ Արևելյան Հայաստանի գլխավոր քաղաքներն ու տնտեսական շրջանները կապվեցին միմյանց, ինչպես նաև Անդրկովկասի ու Ռուսաստանի տարբեր քաղաքների և շուկաների հետ: XX դ. սկզբներին շարունակվող արդյունաբերական բուռն վերելքը խթանում էր երկրամասի արդիականացման գործընթացը:

Այս ամենի արդյունքում շոշափելի զարգացում ապրեցին Արևելյան Հայաստանի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Հասարակության զարգացման խթան դարձան ստոլիպինյան վերափոխումները, որոնց շնորհիվ հայկական գյուղը դանդաղորեն, բայց մուտք էր գործում շուկայական հարաբերությունների ոլորտ:

XX դ. սկզբին Ռուսաստանի զարգացած նահանգներում և հետամնաց ազգային երկրամասերում խորացան սոցիալական հակասությունները, վերելք ապրեց ժողովրդավարական ու ազգային իրավունքների համար պայքարը: Սակայն հայության համար ազգային պայքարը գերակա էր մյուս խնդիրներից: Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ արևմտահայության ազատագրության պայքարում ներգրավված էին նաև արևելահայության կարող ուժերը: Այս ամենի հետևանքով հայկական միջավայրում դասակարգային պայքարը հազվադեպ է սուր դրսևորումներ ունեցել:

Հայ ժողովրդի պայքարը Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման դեմ: XX դ. սկզբին հայերի նկատմամբ ռուսական միապետության գաղութային քաղաքականությունը նոր ուժով արտահայտվեց: Դեռ XIX դ. վերջին 230 հայկական

տարրական դպրոցներ եկեղեցու տնօրինությունից հանձնվել էին լուսավորության նախարարությանը, մայրենիով թույլատրվել էր միայն հայոց լեզվի ու կրոնագիտության ուսուցումը: Հայոց եկեղեցուն մնացել էին միայն թեմական դպրոցները:

Ցարիզմի հակահայ քաղաքականության վճռական քայլը ձեռնարկեց Կովկասի կառավարչապետ ***Գոլիցինը***, որը կազմել էր Հայ առաքելական եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագիրը: Այդ ունեցվածքից ստացվող եկամուտների հաշվին էին պահվում հայկական դպրոցները: Ծրագրի գործադրումը կնշանակեր նաև հայկական դպրոցների փակում: Գոլիցինը կարողացավ համոզել Նիկոլայ II կայսրին և ***1903 թ. հունիսի 12-ին*** ընդունվեց օրենք, ըստ որի՝ Հայ առաքելական եկեղեցու ունեցվածքը՝ կալվածքները, գույքը, ավանդները, փոխանցվում էր համապատասխան նախարարությունների տնօրինությանը: Եկեղեցու տնօրինմանն էին թողնվում այն հողերը, որոնց վրա կառուցվելու էին վանքեր ու եկեղեցիներ:

Ռուսական իշխանությունների այդ որոշումը մեծ վրդովմունք առաջացրեց հայության շրջանում: Մայր աթոռն ու հայ ազգային ուժերը, հասկանալով ցարիզմի հետադիմական վարչակարգի ծրագրի ամբողջ վնասակարությունը, կազմակերպեցին ժողովրդի դիմադրությունը: Այդ նպատակով Թիֆլիսում ստեղծվեց ***Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե***, որտեղ վճռական դեր ուներ ազգային հայտնի գործիչ ***Ռոստոմը***:

Ամենայն հայոց կաթողիկոս ***Մկրտիչ Խրիմյանն*** իր շուրջը համախմբեց հոգևորականներին, ցուցում տվեց Էջմիածնի միաբանությանը և թեմական առաջնորդներին ոչ մի մասնակցություն չունենալու

Նիկոլ Դուման

բռնագրավման գործընթացին: Նա փորձում էր համոզել կառավարությանը հետ կանգնել այդ քայլից, սակայն ցարիզմը չէր զիջում: Ուստի Մայր աթոռ Ս. Էջմիածինը սկսեց ոգևորել ազգային իրավունքների պաշտպանության համար մղվող շարժումը:

Հայ ժողովրդի պայքարը ծավալվեց և համատարած բնույթ ընդունեց: Առաջին ցույցը տեղի ունեցավ ***հուլիսի 29-ին Ալեքսանդրապոլում***, իսկ օգոստոսին՝ Երևանում և Ախալքալաքում: ***Գանձակում*** տեղի ունեցած առաջին զինված ընդհարման ժամանակ զոհվեցին ցուցարարներ: Հետագայում հայերի ու կառավարական ուժերի միջև բախումներ եղան Թիֆլիսում, Բաքվում, Լոռիում, Նոր Նախիջևանում և այլուր:

Պայքարի ձևերից մեկն էլ դարձավ ցարական հայատյաց պաշտոնյաների ահաբեկումը, որն իրականացնում էին ազգային-հեղափոխական կուսակցությունները: 1903 թ. հոկտեմբերին հնչակյանները Գ. Գոլիցինի դեմ մահափորձ կազմակերպեցին. հարձակվելով կառավարչապետի կառքի վրա՝ դաշույնի հար-

Իլարիոն Վորոնցով–Դաշկով

վածներ հասցրին նրան, սակայն վերջինս կենդանի մնաց: Հայերի հանդեպ հալածանքներն ավելի սաստկացան, հարյուրավոր մարդիկ աքսորվեցին: Կառավարությունը փորձեց ավարտին հասցնել Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագիրը:

Ցարիզմի հակահայ քաղաքականությունը ոտքի հանեց նաև հայության մյուս հատվածներին: Պոլսահայությունը, պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի գլխավորությամբ բուռն գործունեություն ծավալեց ամենահայերի շրջանում՝ ի պաշտպանություն Մայր աթոռի ավանդական իրավունքների: Իր բողոքն ու համերաշխությունը հայտնեց նաև Եվրոպայի ու Ամերիկայի գաղթավայրերի հայությունը: Եվրոպայի հայ ուսանողների միությունից ստացված հեռագիրն ավարտվում էր այսպիսի կոչով. *«Ցույց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգա ստրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարվում են մեր անկապտելի իրավունքները»*:

Հայության պայքարը շարունակվեց երկու տարի և ի վերջո պսակվեց հաջողությամբ: Հայերին ատելի կառավարչապետը հեռացվեց պաշտոնից: ***1905 թ. օգոստոսի 1–ին***, արդեն սկսված ռուսաստանյան առաջին հեղափոխության պայմաններում, Ռուսաստանի կայսրը չեղյալ հայտարարեց իր իսկ հաստատած հակահայ օրենքը: Այս գործում որոշ դեր ունեցավ նաև վերականգնված Կովկասի փոխարքայության նորանշանակ փոխարքա ***Իլարիոն Վորոնցով–Դաշկովը***: Հայ առաքելական եկեղեցուն վերադարձվեցին բռնագրավված հողերը, գույքը, դրամը, իսկ հայկական տարրական դպրոցները նորից հանձնվեցին եկեղեցու տնօրինությանը:

Հայ–թաթարական (ադրբեջանական) ընդհարումները: Ցարական հետադիմական վարչակարգի հակահայ քաղաքականությունն ավելի վատթար դրսևորում ունեցավ ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին:

Ժողովրդավարական այդ հեղափոխությունը սկսվեց 1905 թ. հունվարի 9–ին կայսրության մայրաքաղաք ***Պետերբուրգում*** բանվորների խաղաղ ցույցի գնդակոծությամբ: Երկրի առաջադիմական ուժերի նպատակն էր տապալել ցարիզմը և երկրում հաստատել ժողովրդավարական կարգեր: Հեղափոխությունն աստիճանաբար ընդգրկեց ամբողջ Ռուսաստանը:

Հեղափոխական շարժման մեջ ներգրավվեցին նաև Արևելյան Հայաստանը և Կովկասի փոխարքայության մնացած տարածքները: Հեղափոխությունը հետզհետե հուժկու թափ էր ստանում: Դա սարսափեցնում էր ցարական միապետությանը, որը երկրի հետագա արդիականացման ու քաղաքակրթական վերելքի գլխավոր խոչընդոտն էր:

Նիկոլայ II–ը, սակայն, մտադիր չէր հեշտությամբ զիջելու իր իրավունք-

Արմեն Գարո

Վարդան

ները: Հեղափոխության ուժերը մասնատելու նպատակով ցարական իշխանություններն իրականացրին մի հրեշավոր ծրագիր, որով թշնամանք և բախումներ հրահրեցին Անդրկովկասի հայերի ու թաթարների միջև:

Ազգամիջյան կռիվը սկիզբ առավ Բաքվում ***1905 թ. փետրվարի 6-ին***: Բաքվի նահանգապետ ***Նակաշիձեի*** հրահրումով մի քանի օր անընդհատ տեղի ունեցան հայ-թաթարական ընդհարումներ: Իրենց «առաջնորդների» հեղինակությունն անվերապահորեն ընդունող թաթարների հետամնաց խավերը հեշտությամբ էին ենթարկվում հարևան հայերին կոտորելու և նրանց ունեցվածքը թալանելու կոչերին: Խաղաղ հայ բնակչությունն առաջին օրերին անակնկալի եկավ և մեծ թվով զոհեր տվեց, սակայն շուտով նշանավոր հայդուկապետ ***Նիկոլ Դումանի*** գլխավորությամբ հայությունը կազմակերպվեց և հակառակորդին արժանի հակահարված տվեց:

Ազգամիջյան բախման կրակը տարածվեց երկրամասի այլ նահանգներում: ***Փետրվարի 18-ին*** ընդհարումներ սկսվեցին Երևանում, որտեղ բախումները կրկնվեցին մայիսի վերջերին և սեպտեմբերին: Կատաղի ընդհարումներ եղան Նախիջևանում, Գանձակի գավառում և ընդհանրապես այն վայրերում, որտեղ հայ և թաթարական բնակչությունը շերտընդմեջ էր բնակվում: Շուշիի՝ օգոստոսի կեսերին սկսված կոտորածին արձագանքեց Բաքուն, որտեղ ընդհարումներն ուղեկցվում էին հայերին պատկանող նավթահանքերի և նավթագործարանների հրդեհումով:

Աշնանը Բաքվում նորից ազգամիջյան բախումներ եղան, ապա այնտեղից Թիֆլիս ու Արևելյան Հայաստանի գավառներ հասավ կռիվների նոր ալիք:

Արյունալի ընդհարումները շարունակվեցին մինչև 1906 թ. սեպտեմբերը: Այդ ժամանակ հեղափոխությունն անկում էր ապրում, և ցարական իշխանությունները որոշեցին, որ երկրամասում դրությունն ապակայունացնելու անհրաժեշտություն չկա: Ուստի մոտ երկու տարի տևած հայ-թաթարական կռիվներն ավարտվեցին:

Արևելահայությունը ստեղծված պայմաններում ստիպված էր ապավինել սեփական ուժերին ու կազմակերպվել: Հայ

բնակչության ինքնապաշտպանության ղեկավարումն իր ձեռքն էր վերցրել Հայ հեղափոխական դաշնակցությունը: Նիկոլ Դումանը Բաքվից հետո ղեկավարեց Երևանի նահանգի, Վարդանը՝ Ղարաբաղի, Արմեն Գարոն՝ Թիֆլիսի ինքնապաշտպանությունը: Կռիվներում աչքի ընկան Քեռին, Սևքարեցի Սաքոն, Համազասպը, Դրոն, Հակոբ Կոտոյանը, Սմբատը, Մուրադը, Սեպուհը, Առաքելը և շատ ուրիշներ: Կովկասի առավել հայատյաց գործիչների նկատմամբ դաշնակցությունը մահապատիժ իրականացրեց: Դրոն Բաքվում սպանեց Մ. Նակաշիձեին: Նման պատժի արժանացան նաև Նախիջևանի կոտորածների կազմակերպիչ գեներալ Դ. Ալիխանով-Ավարսկին և այլ հակահայ պաշտոնյաներ:

Ինքնապաշտպանության կազմակերպման գործում զգալի ներդրում ունեցավ նաև Հնչակյան կուսակցությունը, որի կազմած խմբերը մասնակցեցին Նախիջևանի, Էջմիածնի, Զանգեզուրի և այլ գավառների հայության ինքնապաշտպանությանը: Զանգեզուրում էր մարտնչում Փարամազի խումբը: Այս դժոխային օրերին իրենց հայրենակիցներին օգնության էին շտապել արևմտահայերը: Արևելահայ և արևմտահայ ազատամարտիկներին մեկտեղել էր ազգային միասնության և ազգապահպանության վեհ գաղափարը:

Այս ծանր ժամանակաշրջանում իր ժողովրդի կողքին էր և նրան ամեն կերպ աջակցում էր Հայոց եկեղեցին՝ Ամենայն հայոց կաթողիկոս ***Խրիմյան Հայրիկի*** գլխավորությամբ: Ալեզարդ վեհափառը Թիֆլիսում բանակցեց մուսուլմանների հոգևոր առաջնորդների հետ, սակայն հնարավոր չեղավ վերջ տալ բախումներին: Դրանից հետո եկեղեցին սկսեց նաև նյութապես օգնել ինքնապաշտպանության կազմակերպման գործին՝ տրամադրելով դրամ՝ զենք ու զինամթերք գնելու նպատակով: Փոխարքայի հետ հանդիպման ժամանակ Հայոց կաթողիկոսը շեշտում է, որ իշխանությունների փաստացի անգործության պայմաններում հայերին այլ ելք չի մնացել, քան զենքը ձեռքին պաշտպանել իրենց կյանքն ու պատիվը:

1905–1906 թթ. կովկասյան իշխանությունների կողմից հայ-թաթարական ընդհարումների վայրեր գործուղված զինվորական ու ոստիկանական միավորումներն իբր չեզոք պետք է լինեին և վերջ տային բախումներին, սակայն կառավարական ուժերի հրամանատարների մեծ մասը հակահայկական դիրքորոշում ուներ: Դեռ ավելին՝ հարձակվող թաթարական կողմը մի քանի անգամ գերազանցում էր հայկական կողմի թվաքանակը: Բայց այս ամենը չեզոքացվեց հայերի արիության ու անձնազոհության շնորհիվ, և ընդհարումները հիմնականում ավարտվում էին նրանց հաղթանակով ու թաթարների մեծ կորուստներով:

Այսպիսով՝ ազգամիջյան բախման ժամանակ արևելահայությունը, ճիշտ է, մարդկային և նյութական զգալի կորուստներ ունեցավ, սակայն այդ կռիվները կարևոր նշանակություն ունեցան: 1905–1906 թթ. հայությունը մարտական լուրջ փորձ ձեռք բերեց: Ավելի գերիշխող դարձավ հայ ժողովրդի երկու հատվածների միասնության գաղափարը: Բարձրացավ հայերի վստահության աստիճանը. նրանք պատրաստ էին հակահարված տալու իրենց ոչբարյացակամ հարևաններին և պայքարելու սեփական իրավունքների ու գերակա նպատակների համար:

Հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը: Ազգամիջյան կռիվների ավարտին հայ հասարակական–քաղաքական շրջանակներում սկսեցին արծարծել երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և Ռուսաստանի կազմում տարածքային ինքնավարություն ստեղծելու գաղափարը: Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ հրավիրվեց Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական ***Կենտրոնական ժողով***: Ժողովը բացվեց ***1906 թ. օգոստոսի 17–ին*** Էջմիածնի ճեմարանի հիվանդանոցի մեծ դահլիճում, որին մասնակցում էր 46 պատգամավոր: Ժողովի նախագահ ընտրվեց նշանավոր ազգային գործիչ ***Սիմոն Զավարյանը:*** Դաշնակցության ավագ սերնդի ներկայացուցիչները, խոսելով ժողովի սահմանադիր լինելու մասին, բնավ չէին բացառում եկեղեցու դերը, այլ գտնում էին, որ այն կաթողիկոսի գլխավորությամբ պետք է դառնա ժողովրդի կամքը իրականացնող գործադիր մարմին: Կովկասյան իշխանության ներկայացուցիչներն աչալուրջ հետևում էին ժողովի ընթացքին և հեղափոխական տրամադրություններ նկատելով պատգամավորների ելույթներում՝ օգոստոսի 30–ին փակեցին այն: Չնայած դրան՝ Կենտրոնական ժողովն իրավամբ կարելի է համարել հայկական պետականության ստեղծմանը միտված միջոցառում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Արևելյան Հայաստանի սոցիալ–տնտեսական ընդհանուր վիճակը XX դարասկզբին: Ո՞րն էր արևելահայ իրականության գերակա խնդիրը:
2. Ինչ քայլեր ձեռնարկեց ցարիզմը Հայոց եկեղեցու իրավունքները սահմանափակելու և կրթալուսավորչական գործունեությունը վերահսկելու նպատակով: Ձեր կարծիքով ո՞րն էր 1903 թ. հունիսի 12–ի օրենքի իրական նպատակը: Ներկայացրեք այդ օրենքի գործադրման ընթացքն ու հետևանքները: Ինչ ավարտ ունեցավ հայության միահամուռ պայքարը:
3. Որո՞նք էին Անդրկովկասում ազգամիջյան բախումների պատճառները: Ներկայացրեք հայ–թաթարական ընդհարումների սկիզբը և հետագա ընթացքը: Ովքե՞ր աչքի ընկան ինքնապաշտպանական կռիվներում: Ինչ դիրքորոշում ուներ և ինչ գործունեություն ծավալեց Հայոց եկեղեցին: Ձեր կարծիքով ինչ հետևանքներ ունեցան հայ–թաթարական ընդհարումները:
4. Ե՞րբ է տեղի ունեցել Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը: Ինչ նշանակություն ունեցավ այն:

§ 2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1907–1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ցարական հետադիմության շրջանը: Ռուսաստանյան առաջին հեղափոխության կարևորագույն նվաճումներից էր օրենսդիր ընտրովի մարմնի՝ Պետական դումայի ստեղծումը: Այսինքն՝ երկիրը գնում էր սահմանադրական միապետության հաստատման ուղիով: Սակայն երկրի միապետական–հետադիմական ուժերն այնքան էլ հակված չէին այդ ընթացքին: 1906 թ. գարնանն ընտրված ***Պետական***

առաջին դումայի ընդդիմադիր կազմ ուներ, և Նիկոլայ II–ը ցրեց այն: ***1907 թ. հունիսի 3–ին*** նույն ճակատագրին արժանացավ նաև Պետական երկրորդ դումա: Փաստորեն, այդ օրը տեղի ունեցավ պետական հեղաշրջում, որը համարվում է ռուսական առաջին հեղափոխության ավարտը:

Չնայած հետադիմության տարիներին ևս արևելահայության ուշադրությունը բևեռված էր արևմտահայերի ազատագրության պայքարի վրա, այնուամենայնիվ, Արևելյան Հայաստանում չդադարեց սոցիալական ու ժողովրդավարական շարժումը:

1907 թ. գործադուլ սկսվեց Երևանի տպարաններում, Կարսում տեղի ունեցավ զանգվածային ելույթ: Տնտեսական գործադուլների ալիքը հասավ Ալեքսանդրապոլ: Գյուղացիական հուզումներ եղան Էջմիածնի, Երևանի, Նոր Բայազետի գավառներում, իսկ Զանգեզուրի գյուղացիները 1908 թ. ամռանը զինված ելույթի դիմեցին, միայն ոստիկանական ուժերի օգնությամբ հաջողվեց զսպել գյուղացիներին և ձերբակալել շարժման ղեկավարներին:

Այս տարիներին մեծ թափ հավաքեց ռուսական մեծապետական ազգայնամոլությունը (շովինիզմ), ուժեղացավ ոչ ռուս ժողովուրդների ազգային–գաղութային ճնշումը: Երկրի ծայրահեղ հետադիմական մամուլը հակահայկական ալիք բարձրացրեց: Ցարական վարչակարգն իրականացրեց ազգային–քաղաքական գործիչների և հայ մտավորականության հալածանքներ ու բանտարկություններ: Կառավարության ազգայնամոլական քաղաքականության դեմ բողոքեցին ու պայքարեցին հայ մտավորականության, հասարակական կազմակերպությունների բազմաթիվ ներկայացուցիչներ և ազգային կուսակցություններ:

«Դաշնակցության գործը»: Ուժեղացան ցարական կառավարության հետապնդումներն ու հալածանքները նաև դաշնակցության դեմ: Կուսակցության մարմիններն անցան ընդհատակ Այսրկովկասում և Ռուսաստանի մյուս շրջաններում: Շատերը ձերբակալվեցին ու բանտարկվեցին: Դաշնակցական գործիչների մի մասը հարկադրված հեռացավ արտասահման: Մեկը մյուսի հետևից փակվեցին կուսակցության թերթերը, հրատարակչությունները, արհմիությունները, արգելվեցին հանրահավաքները:

Կեղծ մեղադրանքների հիման վրա Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության նկատմամբ ***1908 թ.*** դատական գործ հարուցվեց: Դաշնակցական խմբապետ Միհրանը պահանջում էր կուսակցության ղեկավարությունից զբաղվել միայն արևմտահայության հարցով: Միհրանը վտարվեց ՀՅԴ շարքերից: Նրա մատնությամբ մի քանի հարյուր մարդ ձերբակալվեց: Իր այդ քայլի համար Միհրանը սպանվեց:

Հետաքննությունը տարիներ տևեց: Հատուկ գործերով դատական քննիչ Ն. Լիժինը հավաքած կեղծ նյութերով ՀՅԴ–ին ներկայացրեց շինծու մեղադրանքներ: Ռուսական հետադիմական մամուլում տպագրվում էին նյութեր, որոնց համաձայն՝ ՀՅԴ–ն իբր ծավալում է հակառուսական գործունեություն, կոչ է անում գոյություն ունեցող կարգերը բռնի ուժով տապալել, Անդրկովկասը անջատել Ռուսաստանից և այլն:

Չորս տարում ձերբակալվեց և հարցաքննվեց 2 հազարից ավելի մարդ: ***1912 թ. հունվար–մարտ*** ամիսներին

Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցավ դատավարություն: Մեղադրվում էր 159 մարդ, այդ թվում՝ ճանաչված գործիչներ և մտավորականներ Ավետիս Ահարոնյանը, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Համո Օհանջանյանը, Ավետիք Սահակյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Հովհաննես Քաջազնունին: Մեղադրվում էին նաև հայ գործարարներ Ա. Մելիք-Ազարյանը և ուրիշներ: Դատավարության ընթացքում բացահայտվեցին հետաքննության կեղծիքները:

Ի վերջո դատարանը նախատեսված խստագույն պատիժներից ստիպված էր հրաժարվել: 1912 թ. մարտի 19-ին հրապարակված դատավճռով անմեղ ճանաչվեց 94 մարդ: Տաժանակիր աշխատանքի դատապարտվեց 4 մարդ՝ 4-6 տարի ժամկետով, մնացածներն ազատազրկվեցին ավելի կարճ ժամկետներով: Տաժանակիր աշխատանքի դատապարտվածների թվում էր նաև Հ. Օհանջանյանը, որը շղթայակապ աքսորվեց Սիբիր: Շնորհիվ բժշկի մասնագիտության, որի կարիքը մեծ էր աքսորավայրում, նրան ազատեցին շղթաներից:

Ցարական կառավարության պատրաստած մեծ դատավարությունը, որ հայտնի դարձավ «Դաշնակցության գործ» անունով, դասվում է Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական մեծ ու աղմկալի դատավարությունների թվին: Գործի համեմատաբար «խաղաղ» վերջաբանն ուներ իր պատճառները: Դա Ռուսաստանի արտաքին քաղաքականության աշխուժացումն էր բալկանյան երկրներում: Ռուսական կառավարությունը, իր նվաճողական պլաններին հետամուտ, 1912 թ. մեղմեց վերաբերմունքը ՀՅԴ-ի հանդեպ և ստանձնեց Հայկական հարցի հովանավորությունը:

Ժողովրդավարական շարժման վերելքն աշխարհամարտի նախօրեին: XX դ. սկզբին ճգնաժամ ապրող Ռուսաստանի տնտեսությունը 1910 թ. նկատելի աշխուժություն ապրեց ու բռնեց վերելքի ուղին, որը շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Առանձնապես արագ զարգացավ երկրի ծանր արդյունաբերությունը, առաջադիմեց նաև գյուղատնտեսությունը, զարգացան շուկայական հարաբերությունները: Ռուսաստանը հաստատուն քայլերով դառնում էր արդյունաբերական երկիր: Տնտեսական աճն ակնբախ էր նաև ազգային երկրամասերում: Չնայած գաղութային իրավիճակին՝ Այսրկովկասում, այդ թվում նաև Արևելյան Հայաստանում նույնպես առաջընթաց տեղաշարժեր են արձանագրվում:

Հետադիմության շրջանը բարեբախտաբար երկար չշարունակվեց:

Հայաստանում ևս հեղափոխական շարժումը վերելք ապրեց, որը նշանավորվեց բանվորական և գյուղացիական մի շարք ելույթներով: 1910 թ. ամռանը գործադուլ արեցին Ալավերդու պղնձաձուլական գործարանի մոտ 200 բանվորներ, նաև Երևան ու Ուլուխանլու (այժմ՝ Մասիս) կայարանների երկաթուղայինները: Հաջորդ տարի գործադուլ բռնկվեց Կողբի աղահանքերում: Բանվորների գործադուլներն առավելապես տնտեսական բնույթ ունեին: Հեռավոր Սիբիրում 1912 թ. ապրիլին Լենայի ոսկու հանքերի բանվորների գնդակոծումն ալեկոծեց ամբողջ Ռուսաստանը: Ի պաշտպանություն նրանց՝ երկրով մեկ ծավալվեցին քաղաքական գործադուլներ ու ցույցեր: Արևելյան Հայաստանում ևս տեղի ունեցան բողոքի ցույցեր, կազմակերպվեցին հան-

ռահավաքներ Ալեքսանդրապոլում, Կարսում, Ալավերդիում և այլ վայրերում:

Սակայն ի տարբերություն Ռուսաստանի կենտրոնի՝ Արևելյան Հայաստանում 1910–1914 թթ. տեղի ունեցած ժողովրդավարական շարժումները ցարական վարչակարգը կարողանում էր հեշտությամբ ճնշել: Սկսված համաշխարհային պատերազմի պատճառով Ռուսաստանի ժողովրդավարացման համար մղվող պայքարը մի պահ դադար առավ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ճակատագիր ունեցան Պետական առաջին և երկրորդ դումաները: Ներկայացրե՛ք սոցիալական և ժողովրդավարական շարժումների ընթացքն ու հետևանքներն Արևելյան Հայաստանում:
2. Ի՞նչ քաղաքականություն էր վարում ցարիզմը ՀՅԴ–ի նկատմամբ: Ներկայացրե՛ք «Դաշնակցության գործի» էությունը, ծագումն ու հետագա ընթացքը: Ինչո՞ւ հետագայում ցարիզմը փոխեց ՀՅԴ–ի նկատմամբ իր վերաբերմունքը:
3. Ի՞նչ փոփոխություններ կրեց Ռուսաստանի տնտեսությունը 1909–1910 թթ.: Ի՞նչ դրսևորումներ ունեցավ գործադուլային շարժումը Հայաստանում: Ի՞նչ բնույթ ունեին դրանք:

§ 3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Արևմտահայերի վիճակը: XX դարասկզբին արևմտահայությունը շարունակում էր ապրել ծանր սոցիալ–տնտեսական ու քաղաքական պայմաններում: Աբդուլ-համիդյան վարչակարգը չդադարեցրեց իր հայահալած քաղաքականությունը: Օգտվելով մեծ տերությունների միջև առկա հակասություններից՝ Օսմանյան կայսրությունը, հայկական նահանգներում բարեփոխումներ անցկացնելու փոխարեն, ինչպես հանձն էր առել մեծ տերությունների առջև, ավելի սաստկացրեց ճնշումներն արևմտահայության նկատմամբ:

Հայերը նախկինի պես չունեին անձի և գույքի ապահովություն, զենք կրելու իրավունք: Հայդուկներ որոնելու պատրվակով ցանկացած հայկական գյուղ կարող էին մտնել թուրքական զորքեր, քրդեր ու ոստիկաններ: Դրան հետևում էին ձերբակալությունները, կողոպուտն ու գազանությունները: Կառավարությունը հայկական գյուղերում տեղակայում էր զորքեր, որոնք, ապրելով հայերի հաշվին, պատուհաս էին դառնում նրանց համար:

Իսկական չարիք էր հայկական հողերի վրա Կովկասից և Բալկաններից եկած մահմեդականների բնակեցումը, որը սկիզբ էր առել դեռևս 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմից առաջ և հետևողականորեն շարունակվում էր: Վերաբնակեցված մահմեդականներից բացի՝ հայ գյուղացիության հողերը բռնազավթում էին թուրք և քուրդ ավատատերերը: Հայ բնակչության մի զգալի հատված հարկադրված թողնում էր հայրենիքը և գաղթում կայսրության այլ վայրեր կամ արտասահման:

Շարունակվող հայ ազգային–ազատագրական պայքարում ծագեց ***նոր***

մարտավարության անհրաժեշտություն: Թիֆլիսում ***1898 թ.*** գումարված ***երկրորդ ընդհանուր ժողովի*** որոշմամբ ՀՅԴ–ն անցավ ընդհանուր՝ համահայկական ապստամբության համար ***Երկրի (Արևմտյան Հայաստան)*** ուժերի կազմակերպմանը: Արևմտյան Հայաստանում մարտական ուժերի և ռազմամթերքի կենտրոնացման վայրեր են ընտրվում ***Վասպուրականն*** ու ***Սասունը***:

Նման մարտավարություն ընդունեց նաև Հնչակյան կուսակցությունը: Նրանք կազմակերպում են դրամի հանգանակություն, գնում զենք ու զինամթերք, ստեղծում զինված խմբեր և նախապատրաստվում ընդհանուր ապստամբության, որի կենտրոն էր դառնալու, ըստ նրանց ծրագրի, Կիլիկիան: Դա բացատրվում էր Կիլիկիայի աշխարհագրական դիրքով, հատկապես Եվրոպայի հետ ունեցած ծովային կապով:

Այսպիսով՝ առաջնահերթ դարձավ ժողովրդին կազմակերպելու, զինելու և նրան ընդհանուր ապստամբության նախապատրաստելու խնդիրը: Հին ֆիդայական մեթոդներով այդ խնդրի իրականացումը հնարավոր չէր: Անհրաժեշտ էր Արևելյան Հայաստանից ու այլ վայրերից զենքի ու զինամթերքի փոխադրության նոր ուղիներ ու ձևեր գտնել: 1900 թ. սկսած՝ զենքի փոխադրումն իրականացվում էր երեք հիմնական ուղղություններով՝ Ատրպատականից դեպի Վասպուրական, Կարս–Բասեն–Խնուս և Երևան–Ալաշկերտ–Խլաթ–Սասուն ուղիներով:

Ս. Առաքելոց վանքի կռիվը: Թուրքական կառավարությունը որոշել էր իսպառ վերացնել հայ ազատագրական պայքարը: Արևմտահայության մոտ ստեղծվել էր ընդհանուր հուսահատական վիճակ:

Նման պայմաններում խիստ դժվարանում էր հին՝ հայդուկային պայքարի մարտավարությունից հրաժարվելը: Ընդհանուր ապստամբության կազմակերպման կողմնակիցները՝ ***Հրայրը (Սասուն–Տարոնում), Վարդգեսը (Վասպուրականում)*** և ուրիշներ, անդուլ աշխատանք էին տանում ժողովրդին կազմակերպելու, զինելու և վճռական ելույթի պատրաստելու համար:

Իսկ հայդուկային պայքարի շարունակման կողմնակիցներ ***Անդրանիկը, Գևորգ Չավուշն*** ու նրանց համախոհները փորձում էին պարտիզանական ու վրեժխնդրական ձեռնարկներով կանխել բռնությունները և ոգևորել ժողովրդին: Արդյունքում՝ հայդուկային պայքարը որոշակի վերելք ապրեց: Կարևոր նշանակություն ունեցավ Աղբյուր Սերոբին սպանած քուրդ ցեղապետ Բշարե Խալիլի ահաբեկումը, որը բարձրացրեց Անդրանիկի և մյուս հայդուկների հեղինակությունը: Սակայն հայդուկային պայքարի ամենանշանավոր դրվագն այս շրջանում Ս. Առաքելոց վանքի կռիվն էր:

Տարոնի ժողովուրդը հավաքվել էր Մշո առաջնորդարանի մոտ և պահանջում էր տիրող ծանր վիճակից ելք գտնել: Նշանավոր հայդուկ ***Հակոբ Կոտոյանն*** առաջ է քաշում զինված խմբով Առաքելոց վանք մտնելու և ինքնապաշարման դիմելու գաղափարը: ***1901 թ. նոյեմբերի 3–ին Անդրանիկը*** մոտ 37 հայդուկների և 20 զինված գյուղացիների հետ մտնում է Մուշից հարավ–արևելք ընկած Ս. Առաքելոց վանքը և այն վերածում ինքնապաշտպանական ամրոցի: Երեք օր անց սկսվում է կռիվը, որը տևում է մինչև նոյեմբերի 27–ը: Ինքնապաշտպանության օրերին վանքում

գտնվողների թվաքանակը հայդուկների հետ միասին կազմել է 140 մարդ:

Պաշարման 11-րդ օրը թուրքական զորքերի հրամանատար Բիթլիսի նահանգապետը բանակցություններ է սկսում՝ հայդուկների պահանջներն իմանալու համար: Անդրանիկը, Գևորգ Չավուշն ու Հակոբ Կոտոյանը պահանջում են ներում շնորհել քաղաքական բանտարկյալներին, զինաթափ անել ու պատժել հայկական գյուղերն ավերող քրդական զինված ավազակախմբերին, հայերին վերադարձնել զավթված հողերը, վերացնել հայերից տուրք գանձելու քուրդ ցեղապետերի իրավունքը և այլն: Այս պահանջներից մասամբ բավարարվում է միայն առաջինը:

Կատաղի մարտերը վերսկսվում են: Պաշարվածների զինամթերքը սպառվում էր: ***Նոյեմբերի 27-ի*** գիշերը հայդուկները տեղացած ձյան պայմաններում սպիտակ սավաններով աննկատ հեռանում են վանքից:

Այս հերոսական կռիվը մեծ տպավորություն գործեց հայության վրա, միաժամանակ արձագանք գտավ արտասահմանում: Հայդուկներն այդ ձեռնարկով փորձեցին մեծ տերություններին հիշեցնել, որ հայկական բարենորոգումները կյանքի չեն կոչվել, և որ անհրաժեշտ է դրանք իրագործել: Կարևոր էր նաև այդ ելույթի շնորհիվ ժողովրդի բարոյական և մարտական ոգու բարձրացումը:

Սասունի 1904 թ. ապստամբությունը: Հայդուկային ելույթներն Առաքելոց վանքի կռվից հետո գրեթե դադարեցին, և շուրջ երկու տարի Արևմտյան Հայաստանում կազմակերպչական եռանդուն գործունեություն ծավալեցին ***Հրայրն*** ու ***Վարդգեսը***: Ընդհանուր ապստամբությունը նախատեսված էր սկսել 1905 թ. ամռանը: Այն պետք է ընդգրկեր Տարոնը, Բիթլիսը, Վասպուրականը և Կարինի որոշ շրջաններ:

Դա աննկատ չմնաց սուլթանական կառավարության հսկողությունից, որը 1902 թ. սկսեց ուժեր կենտրոնացնել Սասունի մատույցներում: Կովկասահայության շրջանում ծավալվեց Սասունին օգնելու շարժում: Այդ նպատակով վերադարձ է կատարվում զինված արշավախմբերի կազմակերպման գործելակերպին: Առաջինը ***Թորգոմի «Մրրիկ»*** ձիավոր խումբն էր, որը, դուրս գալով Կարսից և հաղթահարելով մեծ դժվարություններ, 1903 թ. ամռան սկզբներին անվնաս հասավ Սասուն՝ մեծապես բարձրացնելով ժողովրդի տրամադրությունը: Սակայն ուղարկված մեկ տասնյակից ավելի հայդուկային մյուս խմբերը, ընդհարվելով թուրք-քրդական միացյալ ուժերի հետ, այդպես էլ նպատակակետին չհասան:

Զգուշությունն արդեն ավելորդ էր, և Հրայրն ու տեղի մյուս գործիչները նոր օգնություն էին ակնկալում Կովկասից և աշխատում էին հնարավորինս շատ մարտական ուժեր հավաքել տեղում: Սակայն ընդհանուր ապստամբության նախապատրաստումը լիովին չավարտվեց: Թուրքական իշխանությունների նախահարձակ լինելու պայմաններում հայերը դիմեցին ինքնապաշտպանության: 1903 թ. աշնանը Սասունի հայտնի ***Գելիեզուզան*** գյուղում ստեղծվեց ինքնապաշտպանության զինվորական մարմին՝ ***Անդրանիկի*** գլխավորությամբ:

1904 թ. հունվարին թուրքական զորքերը գրավեցին Սասունի ճանապարհները՝ կտրելով այն Մուշից: Գարնան սկզբներին թուրքական 10-հազարանոց

զորքը սկսեց իր առաջխաղացումը: Բացի կանոնավոր զորքերից՝ Սասունի դեմ դուրս բերվեցին նաև մի քանի հազար զինված քրդեր: Նրանց դիմագրավում էին 200 փորձված հայդուկներ և շուրջ 1000 զինված սասունցիներ:

Ապրիլի 1-ին թշնամին հարձակում է սկսում հարավային կողմից, որի պաշտպանությունը հանձնված էր ***Գ. Չավուշին***: Այստեղ էին մարտնչում նաև Սպաղանաց Մակարը և Սմբատ Բորոյանը (Մախլուտո): Հակառակորդին հաջողվում է գրավել մի քանի հայկական գյուղեր: Թուրքերը երկու ուղղությամբ գրոհ են սկսում նաև հյուսիսային ճակատից, որի հրամանատարը ***Հրայրն*** էր: Թուրքական հեծելազորը, հանդիպելով հայերի համառ դիմադրությանը, նահանջում է:

Թուրքական հրամանատարությունն առաջարկում է զենքը վայր դնել: Անդրանիկն ու Հրայրը հայտարարում են, որ զենքը վայր կդնեն 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի իրականացման դեպքում:

Թշնամին վերսկսեց հարձակումը: ***Ապրիլի 13-ի*** կատաղի կռիվներում զոհվեց ***Հրայրը***: Ընկերները նրան հողին հանձնեցին Գելիեզուզանում՝ Աղբյուր Սերոբի կողքին: Անդրանիկի, Գևորգ Չավուշի և Սեբաստացի Մուրադի մարտիկների անձնուրաց գրոհները, սակայն, ստիպեցին մեծ կորուստներ տված թշնամուն նահանջել: ***Գելիեզուզան*** գյուղի մոտ սկսվեց մեծ կռիվ: Ապրիլի 20–22-ը թշնամին, շարունակելով գրոհել, նոր զոհերի գնով կարողացավ գրավել հայերի ինքնապաշտպանության կենտրոնը: Հետո թշնամին մտավ նաև ***Տարվորիկ***: Սակայն կռիվները շարունակվեցին մինչև ***մայիսի կեսերը***:

Ապստամբության ղեկավարների համար պարզ էր, որ հնարավոր չէ երկար դիմադրել՝ բավարար զենք ու զինամթերք չունենալու պատճառով: Սեբաստացի Մուրադը 115 զինյալներով Սասունի անզեն բնակչությանը և վիրավորներին իջեցնում է Մշո դաշտ և տեղավորում հայկական գյուղերում: Նրան հանձնարարվել էր նաև զինամթերք ձեռք բերել պայքարը շարունակելու համար:

Թշնամին հաշվեհարդար տեսավ Սասունում մնացած խաղաղ բնակչության հետ: Սուլթանը ցանկանում էր նաև տեղի հայությանը վերաբնակեցնել Մշո դաշտում, բայց, ի վերջո, տեղի տալով սասունցիների սպառնալիքներին ու մեծ տերությունների հյուպատոսների միջամտություններին՝ նա հրաժարվեց այդ քայլից:

Այսպիսով՝ Սասունի 1904 թ. հերոսական ապստամբությունն ավարտվեց պարտությամբ: Այն ցույց տվեց, որ մասնակի ընդհարումներով հնարավոր չէ լուծել արևմտահայության ազատագրման խնդիրը: Այդ ժամանակ ընդհանուր երույթի համար դեռ պատրաստ չէր նաև Երկրում ուժերի ու ռազմամթերքի կենտրոնացման երկրորդ շրջանը՝ Վասպուրականը:

Սասունի անկումով պայքարը չդադարեց: Կռիվների ասպարեզ դարձավ նաև ***Մշո դաշտը***: ***1904 թ. մայիս–հուլիս*** ամիսներին, պարտիզանական մարտավարությանն ապավինելով, հայդուկները բազմաթիվ կռիվներ մղեցին թուրք-քրդական կանոնավոր ու անկանոն զորամասերի դեմ: Նրանց գործողությունները հատկապես ակտիվացան հուլիսին, երբ Վասպուրականից զինամթերքի զգալի պաշարով վերադարձավ Սեբաստացի Մուրադը: Հե-

Սուլուհի կամուրջը Արածանի գետի վրա

րոսական նոր մաքառումներն այլևս չկարողացան բեկում մտցնել դեպքերի անընպատակ զարգացման մեջ:

Ազատագրական պայքարի ղեկավարները, Մշո դաշտի հայությանը չվտանգելու մտահոգությամբ, որոշում են դադարեցնել պարտիզանական գործողությունները և հայդուկներին դուրս բերել Երկրից: Սեպտեմբերի վերջերին սկսվում է այդ գործընթացը: Հայդուկների մի մասը գնաց Պարսկաստան, մյուս մասը՝ Արևելյան Հայաստան և Այսրկովկասի այլ շրջաններ, որտեղ, ինչպես հայտնի է, հայ–թաթարական կռիվների ժամանակ կարևոր դեր խաղացին հայության ինքնապաշտպանության գործում: Որոշվում է նաև ժողովրդի պայքարի ոգին պահելու և կազմակերպական աշխատանքները շարունակելու նպատակով Գևորգ Չավուշին մի փոքր խմբով հետ ուղարկել Մուշ և Սասուն:

Պայքարի շարունակումը 1905–1907 թվականներին: Մինչ Արևմտահայաստանում տարվում էր ուժերի կենտրոնացման աշխատանք, Կ. Պոլսում նախապատրաստվում էր մահափորձ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի դեմ: Այն նախաձեռնել էր դաշնակցությունը: Քրիստափոր Միքայելյանը գլխավորեց այդ նպատակով ստեղծված խումբը: Սուլթանի ահաբեկումը և դրան հաջորդող գործողություններն Իզմիրում, ըստ ծրագրի, խառնաշփոթ վիճակ պետք է ստեղծեին Օսմանյան կայսրությունում և հանգեցնեին միջազգային միջամտության, որը կապահովեր նաև Հայկական հարցի դրական ընթացքը: Սակայն Քրիստափորին վիճակված չէր անձամբ իրականացնել իր մտահղացումը. 1905 թ. մարտի 17–ին Սոֆիայի մոտ՝ *Վիտոշ* լեռան լանջերին, նա նահատակվեց նռնակներ փորձարկելիս: Այնուամենայնիվ, ***1905 թ. հուլիսի 21–ին*** մահափորձն իրականացվեց: Սուլթանը հրաշքով կենդանի մնաց. մզկիթից դուրս գալուց հետո նա մի պահ զրույցի էր բռնվել, ինչն էլ փրկեց նրա կյանքը: Չնայած միջազգային մեծ արձագանքին՝ ձեռնարկը փաստորեն իր վերջնական նպատակին չհասավ:

1905 թ. հետո դաշնակցությունը նորից որոշում է նախապատրաստել ընդհանուր ապստամբություն արևմտահայությանը ազատագրելու նպատակով: Տարոնում գործող Գևորգ Չավուշը նոր քաղաքական ուղեգծի պայմաններում հայտնվել էր բարդ կացության մեջ. հայդուկային պայքարը, որպես ազատության հասնելու միջոց, իրեն արդեն սպառել էր: Որոշվում է Գևորգին նույնպես ուղարկել Այսրկովկաս: Սակայն ***1907 թ. մայիսի 27–ին Սուլուխ*** գյուղի մոտ տեղի ունեցած կռվում Չավուշը մահացու վիրավորվում է և գոհվում:

Այս ժամանակաշրջանում Վանում գտնվող ***Արամ Մանուկյանը*** և ***Իշխանը*** նախապատրաստվում էին գալիք իրադարձություններին: Սակայն թուրքական իշխանություններին հաջողվում է մատնությամբ 1908 թ. բռնագրավել Վանի

գաղտնի պահեստների զենքերի մի մասը, ձերբակալել Ա. Մանուկյանին:

Այսպիսով՝ XX դարասկզբին հայ ազատագրական պայքարը շարունակվում էր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ իրավիճակում էր արևմտահայությունը XX դարասկզբին: Ինչ մարտավարություն նախընտրեց հայ ազգային–ազատագրական շարժումը: Ո՞րն էր հայ ազատամարտի առաջնահերթ խնդիրը:
2. Ովքե՞ր և ի՞նչ աշխատանքներ էին տանում Սասունում ու Վասպուրականում: Որո՞նք էին պարտիզանական և վրիժառուական ձեռնարկումների նպատակները: Ներկայացրե՛ք Մշո Ս. Առաքելոց վանքի կռվի սկիզբն ու ընթացքը: Ինչ հետևանքներ ունեցավ այն:
3. Ե՞րբ էր նախատեսված սկսել ընդհանուր ապստամբությունը: Ո՞ր շրջաններն այն պետք է ընդգրկեր: Կովկասահայության շրջանում ի՞նչ շարժում էր ծավալվել. ի՞նչ հետևանքներ այն ունեցավ: Ինչո՞ւ նախատեսված ընդհանուր ապստամբությունը շուտ սկսվեց: Ներկայացրե՛ք Սասունի ապստամբության ընթացքը: Ձեր կարծիքով ինչո՞ւ այն ավարտվեց պարտությամբ:
4. Ի՞նչ մարտավարությամբ էր ընթանում պայքարը 1904–1905 թթ.: Ե՞րբ իրականացվեց ու ի՞նչ ավարտ ունեցավ սուլթանի դեմ մահափորձը: Ի՞նչ հետևանքներ այն ունեցավ: Ի՞նչ փոփոխություն կրեց ՀՅԴ–ի մարտավարությունը 1905 թ. հետո: Հայդուկներին նվիրված գեղարվեստական, փաստավավերագրական ի՞նչ ստեղծագործություններ և երգեր գիտեք:

§ 4. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Երիտթուրքերի հեղաշրջումը: Օսմանյան կայսրությունում XX դ. սկզբին ուժեղացավ ազատական հայացքներ ունեցող թուրքական ընդդիմադիր ուժերի պայքարը: Ընդդիմադիր շարժման մեջ ազդեցիկ դիրք ուներ 1889 թ. ստեղծված երիտասարդ թուրքերի (երիտթուրքեր) ***«Միություն և առաջադիմություն»*** կազմակերպությունը:

ՀՅԴ–ն անհրաժեշտ համարեց սուլթանական բռնակալության դեմ պայքարում համագործակցել Օսմանյան կայսրությունում գործող բոլոր հակահամիդյան ուժերի՝ այդ թվում երիտթուրքերի հետ: Դաշնակցությունն իր նոր (1907 թ.) ծրագրում առաջադրեց Արևմտյան Հայաստանի (հայկական վեց վիլայեթներում) լայն ինքնավարության պահանջը և, միաժամանակ, ավելի ընդգծեց կուսակցության սոցիալիստական (ընկերվարական) գաղափարախոսությունը:

1907 թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցավ կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը: Որոշվեց մինչև 1909 թ. զինված ապստամբության միջոցով տապալել Համիդյան բռնատիրությունը և երկրում հաստատել սահմանադրական կարգեր: Այսպիսով՝ հայ ազատագրական ուժերը Աբդուլ Համիդին ընդդիմադիր ուժերի հետ համատեղ պայ-

1909 թ. Կիլիկիայի ջարդերից փրկված հայեր

քարի մեջ էին մտել իշխող բռնատիրական վարչակարգը տապալելու համար:

Հեղաշրջումը կատարվեց ծրագրված ժամկետից շուտ: ***1908 թ. հուլիսին տեղի ունեցավ պետական հեղաշրջում***: Շարժման կենտրոնը դարձավ Սալոնիկը, իսկ շարժիչ ուժը՝ թուրքական բանակը: Հուլիսի 23-ին զորքի գլուխ անցած երիտթուրք սպաները Մակեդոնիայից շարժվեցին Կ. Պոլիս՝ սուլթանից պահանջելով վերականգնել 1876 թ. սահմանադրությունը: Ահաբեկված սուլթանը հաջորդ օրը հրապարակեց հրամանագիր սահմանադրության վերականգնման մասին: Երկիրը ***հռչակվեց սահմանադրական միապետություն***:

Հայերի ոչնչացման պետական ծրագրի շարունակումը: Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդները մեծ հույսեր էին կապել հեղաշրջման հետ: Մեծ էր ոգևորությունը նաև հայկական միջավայրում: Հայերը նույնպես ճանաչվեցին օսմանյան տերության «իրավահավասար» քաղաքացիներ: Տևական արգելքից (1891 թ.) հետո վերաբացվեց արևմտահայերի Ազգային ժողովը, որի պահանջով հրաժարական տվեց պահպանողականի համարում ունեցող պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը: Նրա տեղը կարգվեց Եղիշե եպիսկոպոս Դուրյանը:

Աշխուժացավ հայ գրական շարժումը, առաջադիմեց կրթամշակութային կյանքը: Տարագիր և վտարանդի շատ հայեր Այսրկովկասից ու այլ վայրերից վերադարձան Արևմտահայաստան: 1909 թ. սկզբներին արտասահմանից միայն Տարոն վերադարձավ 5 հազար մարդ:

Սկզբում երիտթուրք առաջնորդները հմտորեն թաքցնում էին իրենց ազգայնամոլ էությունը՝ ներկայանալով որպես Օսմանյան կայսրության մեջ ապրող ժողովուրդների իրավունքների պաշտպան: Ֆրանսիական հեղափոխությունից ընդօրինակված ***«ազատություն, հավասարություն, եղբայրություն»*** կարգախոսներն այդպես էլ մնացին թղթի վրա: Շուտով հայերին ու մյուս ազգերին համակեց լիակատար հիասթափությունը:

1908 թ. հեղաշրջումը չարդարացրեց հայ քաղաքական կուսակցությունների և գործիչների հույսերը: Անշուշտ, ՀՅԴ-ի շարքերում կային գործիչներ՝ Ռոստոմը, Արամը, Իշխանը, Վ. Փափազյանը, ինչպես

նաև Անդրանիկը և փորձառու շատ ֆիդայիներ, ովքեր թերահավատ էին երիտթուրքական «հեղափոխության» հանդեպ:

Երիտթուրքերը, սուլթանական վարչակարգին ընդդիմադիր մյուս ուժերի օգնությամբ գրավելով իշխանությունը, ոչ միայն սահմանադրական էական բարեփոխումներ չիրագործեցին, այլև ավելի վատթար կերպով շարունակեցին սուլթան Աբդուլ Համիդի հակահայ քաղաքականությունը: Երիտթուրքերի իշխանության գալուց դեռ մեկ տարի չանցած՝ ***1909 թ. ապրիլին***, կենտրոնական ու տեղական իշխանությունների թողտվությամբ ***Ադանայի նահանգում*** տեղի ունեցավ 30 հազար հայերի կոտորած: Կիլիկիայի դեպքերը ցույց տվեցին, որ երիտթուրքերը որդեգրել են հայերի բնաջնջման աբդուլհամիդյան պետական ծրագիրը:

Պանթյուրքիզմը՝ պետական քաղաքականություն: Հեղաշրջումից հետո հայ ազատագրական ուժերը սկզբնական շրջանում փոխել էին իրենց մարտավարությունը: Զիջումների գնալով՝ հայ քաղաքական կուսակցությունները ձանաչեցին օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Դադարեցրին իրենց ընդհատակյա գործունեությունը, լուծարեցին հայդուկային խմբերը: Օրակարգից հանվեց արևմտահայությանը ընդհանուր զինված ապստամբության նախապատրաստելու հարցը: Թվում էր՝ ստեղծվել է պատմական հնարավորություն՝ առանց արտաքին ուժերի միջամտության համատեղ որոնելու Արևմտյան Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ փոխադարձ ընդունելի տարբերակ: Կյանքը, սակայն, ցույց տվեց, որ երիտթուրքերը մտադիր չեն զիջելու Հայկական հարցում:

XIX դ. կեսերից օսմանյան կառավարող շրջանների գլխավոր մտահոգությունը կայսրության փլուզման արգելակումն էր, նրա ամբողջականության պահպանումը: Այդ նպատակով կյանքի կոչվեցին բազմաթիվ հետադիմական գաղափարախոսություններ՝ օսմանիզմը, պանիսլամիզմը: Իսկ XX դարի սկզբներին օսմանյան պետությունը որդեգրեց թուրքիզմը և պանթյուրքիզմը, որոնք դարձան երիտթուրքական կառավարության ներքին և արտաքին քաղաքականության առանցքը:

Պանթյուրքիզմի ազգայնամոլական գաղափարախոսության գերնպատակը մեկ միասնական թուրքական պետության՝ Մեծ Թուրանի մեջ թյուրքալեզու բոլոր ժողովուրդների համախմբումն էր: Ըստ էության ստեղծվելու էր թյուրքալեզու կայսրություն, որն ընդգրկելու էր Բոսֆորից մինչև Չինաստան և Հյուսիսային սառուցյալ օվկիանոս ընկած տարածքը: Մեծ Թուրանի ստեղծումը պետք է իրագործվեր երեք փուլով.

1. ***Թուրքիզմի փուլ,*** որը ենթադրում էր թուրքացնել Օսմանյան կայսրությունը: Քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում՝ հայերը, կամ պետք է ձուլվեին, կամ ոչնչացվեին:

2. ***Օղուզական պետության ստեղծման փուլ,*** որն իր մեջ պետք է ընդգրկեր օսմանյան Թուրքիան, Կովկասի մեծ մասը, Թուրքմենստանը: Փաստորեն նախատեսում էին նվաճել նաև Արևելյան Հայաստանը և ոչնչացնել արևելահայությանը:

3. ***Պանթյուրքիզմի փուլ,*** որով պետք է ստեղծվեր Մեծ Թուրան կայսրությունը:

Որդեգրելով պանթյուրքիզմի ծրագիրը՝ երիտթուրքերը գնացին ազգային հիմնախնդիրները, առաջին հերթին՝

Հայկական հարցը ամենավայրագ եղանակով լուծելու ճանապարհով:

Հայ ազգային կուսակցությունների դիրքորոշումը: Երիտթուրքական հեղաշրջումից հետո քաղաքական ասպարեզ մտան ազգային նոր կազմակերպություններ: Դրանցից էր 1908 թ. հոկտեմբերին Եգիպտոսի ***Ալեքսանդրիա*** քաղաքում ստեղծված ***Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը***: Ռամկավար կուսակցությունն իր ծրագրում նշում էր, որ այլևս չկա հեղափոխական կուսակցությունների գոյության անհրաժեշտությունը: Ռամկավարները գործում էին գլխավորապես Վան–Վասպուրականում, որտեղ գրեթե բոլոր արմենականներն ընդգրկվեցին նրանց շարքերը:

1908–1914 թվականները համարվում են հայ ազգային կուսակցությունների, մասնավորապես ***Հայ հեղափոխական դաշնակցության*** պատմության բարդ ժամանակաշրջաններից մեկը: Դաշնակցության այդ տարիների գործունեությունը կարելի է բաժանել երկու փուլի՝ 1908–1911 թթ. և 1912–1914 թթ.: Առաջին փուլում ՀՅԴ–ն համագործակցեց երիտթուրքերի և թուրքական կառավարության հետ: Հրաժարվելով դրսի միջամտությունից՝ Հայկական հարցի լուծումը նա կապում էր սահմանադրական միապետության ժողովրդավարացման հետ: Սահմանադրության և հայտարարված «ազատության» շրջանակներում ՀՅԴ–ն օրինականորեն գործելու հնարավորություն ստացավ: Բանտերից ազատվեցին բոլոր քաղբանտարկյալները: 1908 թ. հոկտեմբերին բացվեց երկրի խորհրդարանը (մեջլիսը), որտեղ հայերը զբաղեցրին 10 պատգամավորական տեղ (230 տեղից):

Իսկ երկրորդ փուլում, երբ բացահայտվեց նոր իշխանության իրական դեմքը, նա դադարեցրեց համագործակցությունը երիտթուրքերի հետ: Ելնելով արևմտահայերի դրության աստիճանական վատթարացման իրողությունից և կարևորելով ինքնապաշտպանության միջոցների ուժեղացման անհրաժեշտությունը՝ դաշնակցությունը վճռեց պայքարել կառավարության հակահայ քաղաքականության դեմ: Հայկական հարցի լուծումը դաշնակցությունը նորից կապեց մեծ տերությունների, առաջին հերթին՝ Ռուսաստանի աջակցության հետ: Սակայն ՀՅԴ–ն, պայքարի նախորդ շրջանի փորձից ելնելով, առանձնապես մեծ ակնկալիքներ չուներ արտաքին ուժերից: Կուսակցության կառույցներն առանձին վայրերում ինքնապաշտպանության նպատակով ստեղծում էին ռազմամթերքի պահեստներ, զինավարժեցնում երիտասարդությանը, արտասահմանից զենք ու զինամթերք էին գնում և տարբեր ուղղություններով գաղտնի տեղափոխում Արևմտյան Հայաստան:

1912 թ. մայիսին ՀՅԴ–ն պաշտոնապես խզեց իր հարաբերությունները երիտթուրքերի հետ: Ի հակազդեցություն խզման՝ երիտթուրքերն ուժեղացրին ահաբեկման մարտավարությունը, սկսեցին հայերին պաշտոնազրկել, բռնազավթել նրանց հողերը, մահմեդական մոլեռանդ ամբոխին գրգռել նրանց դեմ, ավելի հաճախացնել բռնություններն ու սպանությունները:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո ***հնչակյան*** կուսակցության ղեկավարները վերադարձան Կ. Պոլիս: Նրանք հայտարարեցին, որ հրաժարվում են կայսրությունից Հայաստանի անջատման պահանջից, քանի որ տապալվել է բռնապետական վարչակարգը, և երկրում հաստատվել

են սահմանադրական կարգեր: Այդուհետ իրենք պայքարելու են հանուն բոլոր ազգերի համագործակցության: Սակայն երիտթուրքերի հակահայկական քաղաքականության պատճառով հնչակյանները փոխեցին իրենց մարտավարությունը:

Այսպիսով՝ հայ ազգային-քաղաքական կուսակցությունները համոզվեցին, որ երիտթուրքերը, պանթուրքիզմը դարձնելով պետական քաղաքականություն, շարունակում են հայերին ոչնչացնելու աբդուլհամիդյան ծրագիրը: Հայ ազատամարտի ղեկավար ուժերը նորից փոխեցին իրենց դիրքորոշումը և վերսկսեցին պայքարը Հայկական հարցի լուծման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է ստեղծվել երիտթուրքերի կազմակերպությունը: 1907 թ. դեկտեմբերին Փարիզում կայացած համաժողովն ի՞նչ որոշումներ ընդունեց: ՀՅԴ-ն ինչո՞ւ համագործակցեց հակահամիդյան ուժերի հետ: Ե՞րբ տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումը:
2. Ի՞նչ մարտավարություն ընտրեցին հայ ազատագրական ուժերը հեղաշրջումից անմիջապես հետո: Նշե՛ք երիտթուրքերի նկատմամբ անվստահության և հիասթափության առաջացման պատճառները:
3. Ներկայացրե՛ք պանթուրքիզմի էությունը և քաղաքական ծրագիրը: Հայկական հարցը լուծելու ի՞նչ ուղի նախընտրեցին երիտթուրքերը:
4. Որո՞նք էին հայ քաղաքական կուսակցությունների և ուժերի ծրագրերի ու մարտավարության փոխվելու պատճառները 1912–1914 թթ.: Ե՞րբ և որտե՞ղ է ստեղծվել Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը: Որո՞նք էին ՀՅԴ-ի գործունեության առանձնահատկությունները 1908–1914 թթ.: Ի՞նչ քաղաքականություն էին վարում հնչակյանները 1908 թ. հեղաշրջումից հետո:
5. Համեմատե՛ք հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումն ու գործելակերպը 1908–1914 թթ.: Նշե՛ք ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Գնահատե՛ք և մեկնաբանե՛ք նրանց գործունեությունը:

§ 5. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912–1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայկական հարցի վերաբացումը: Բալկանյան երկրները (Սերբիա, Բուլղարիա, Հունաստան, Չեռնոգորիա) 1912 թ. ամռանը ստեղծեցին ռազմական դաշինք՝ նպատակ ունենալով թուրքերին վերջնականապես դուրս մղելու իրենց տարածաշրջանից: Հոկտեմբերին նրանք պատերազմ սկսեցին օսմանյան Թուրքիայի դեմ՝ ***Բալկանյան առաջին պատերազմը***, որն ավարտվեց1913 թ. մայիսի 30-ին:

Բալկանյան ժողովուրդների հաղթանակները պատերազմում ոգևորեցին արևմտահայությանը: Հայկական հարցի վերաբացման համար առաջացավ նպաստավոր միջազգային իրավիճակ: Հատկապես մեծ դեր խաղաց այդ ժամանակահատվածում Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/ntgd/



Պողոս Նուբար փաշա

Գևորգ Ե Սուրենյանց

Հայ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ Թիֆլիսում տեղի ունեցան մի քանի հանդիպումներ, որոնց արդյունքում ***1912 թ. հոկտեմբերին*** ձևավորվեց համազգային նոր կազմակերպություն՝ ***Հայոց ազգային կենտրոնական բյուրո*** (կրճատ՝ ***Հայոց ազգային բյուրո***): Այս նորաստեղծ մարմնի գործունեության գլխավոր նպատակը Հայկական հարցի լուծմանը նպաստելն էր:

Արտահայտելով ամբողջ հայ ազգի իղձերը՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն 1912 թ. հոկտեմբերի 2-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմեց ռուսաց կայսրին՝ հայերին պաշտպանելու խնդրանքով:

Թուրքիայում կարճ ժամանակով իշխանության եկած ***«Ազատություն և համաձայնություն» (Հյուրիեթ վե իթիլաֆ)*** կուսակցությունը, անհանգստանալով Ռուսաստանի հնարավոր միջամտությունից, փորձեց համաձայնություն ձեռք բերել հայերի հետ՝ առաջարկելով բարենորոգումների ծրագիր: Այն չէր ենթադրում եվրոպական հսկողություն, բացի այդ՝ տարածվելու էր հայկական վեց վիլայեթներից միայն չորսի վրա: Իթթիլաֆականներն իրականում ոչինչ չէին պատրաստվում անելու արևմտահայերի դրությունը բարելավելու համար: Նրանք այդ քայլով փորձում էին հայկական բարենորոգումների հարցը հանել օրակարգից:

Հայ ազգային կազմակերպությունները սկսեցին ավելի եռանդուն գործունեություն ծավալել: 1912 թ. նոյեմբերի 10-ի կոնդակով ***Պողոս Նուբար փաշան*** նշանակվեց Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ: Պողոս Նուբարի գլխավորությամբ ստեղծվեց ***Ազգային պատվիրակություն***: Պատվիրակությունը հուշագիր պատրաստեց Բալկանյան առաջին պատերազմի արդյունքներն ամփոփող Լոնդոնի խորհրդաժողովին ներկայացնելու համար, որում նկարագրվում էր արևմտահայության ծանր վիճակը և շեշտվում էր հայկական բարենորոգումներն իրագործելու անհրաժեշտությունը:

Հայոց կաթողիկոսը կրկին դիմեց Ռուսաստանի կայսրին՝ խնդրելով, որ Լոնդոնում ընթացող խորհրդաժողովում քննության առնվի նաև Հայկական հարցը՝ հայկական 6 նահանգներում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը: Հայկական հարցը միջազգային օրակարգ

242 von 354 15.02.2021, 10:38

մտցնելու խնդրով Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի որոշմամբ Կ. Պոլսում մեծ տերությունների դեսպաններին այցելեց հայոց պատրիարքը:

Մեծ Բրիտանիան որևէ ակտիվություն չցուցաբերեց Հայկական հարցի վերաբացման ուղղությամբ: Ֆրանսիան և ԱՄՆ–ը նույնպես որևէ գործնական քայլ չարեցին՝ ի պատասխան հայերի դիմումների:

Ռուսները հայերին խորհուրդ տվեցին սպասելու, մինչև որ Բալկանյան պատերազմից հետո Հայկական հարցի կապակցությամբ կիրավիրվի առանձին խորհրդաժողով: Տվյալ իրավիճակում Հայոց կաթողիկոսը հեռագրեց Փարիզ՝ Պողոս Նուբար փաշային պատվիրելով նպաստավոր տրամադրություն ստեղծել եվրոպական դիվանագիտական շրջաններում, որպեսզի Ռուսաստանը ստանձնի հայկական բարենորոգումների իրագործման նախաձեռնությունը:

Դիվանագիտական պայքարը Հայկական հարցի շուրջ: Ռուսաստանը, գիտակցելով Հայկական հարցի լուծման հետ կապված բարդությունները, Անտանտի իր դաշնակիցներ Մեծ Բրիտանիային ու Ֆրանսիային առաջարկեց միասնաբար գործել: Իր հերթին անգլիական կողմն առաջարկեց խաղաղություն հաստատել բալկանյան պետությունների և Թուրքիայի միջև:

Այդ իրադրությունում երիտթուրքերը, որ իշխանության էին վերադարձել, հրապարակ նետեցին ամբողջ կայսրության մեջ բարենորոգումներ իրականացնելու սեփական նախագիծը: Դիմելով բազմիցս փորձված միջոցի՝ ընդհանուր բարենորոգումներ հայտարարելուն, երիտթուրքերը նպատակ ունեին խուսափելու օտարերկրյա միջամտությունից և հայկական ինքնավարություն ստեղծելուց:

1913 թ. մայիսի 24–ին Ռուսաստանի արտգործնախարարությունը մեծ տերությունների ուշադրությունը հրավիրեց Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների և դրանց իրագործման անհրաժեշտության վրա: Կ. Պոլսում ռուսական դեսպանության թարգմանիչ ***Անդրեյ Մանդելշտամը*** կազմեց հայկական բարենորոգումների նախագիծ, որը քննարկվեց Անտանտի երեք երկրների դեսպանների կողմից և հավանության արժանացավ:

Ըստ Ա. Մանդելշտամի նախագծի՝ հայկական վեց նահանգներից՝ Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա, կազմվելու էր մեկ նահանգ: Այդ նահանգի գերագույն կառավարիչը՝ նահանգապետը, պետք է լիներ թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի, որին տերությունների առաջարկությամբ նշանակելու էր սուլթանը: Նահանգի ներկայացուցչական ժողովը կազմվելու էր հավասարապես մահմեդականներից և քրիստոնյաներից: Ազգային հավասարության սկզբունքը կիրառվելու էր նաև վարչական, դատական և ոստիկանական մարմիններում: Թուրքերենը, հայերենը և քրդերենը ճանաչվելու էին որպես պաշտոնական լեզուներ:

Նահանգի տարածքում արգելվում էր բնակեցնել մուհաջիրներին: Խաղաղ պայմաններում զինապարտները ծառայությունն անցկացնելու էին նահանգի տարածքում: Քրդական հեծելազորը («համիդիեն») արձակվելու էր: Նահանգապետի նախագահությամբ ստեղծվելիք հանձնաժողովը որոշելու էր այն պայմանները, որով հայերը հետ էին ստանալու իրենցից

հափշտակված հողերը կամ դրանց դիմաց փոխհատուցումը: Մեծ տերություններն իրենց հսկողության տակ էին վերցնելու այդ բարենորոգումների կենսագործումը:

1913 թ. հունիսի 30-ին վեց տերությունների դեսպանների մասնակցությամբ Կ. Պոլսում սկսվեց խորհրդաժողով: Հայկական հարցի քննարկումը ժամանակագրական առումով զուգադիպեց Բալկաններում ծագած նոր ճգնաժամին՝ նախորդ օրը սկսվել էր ***Բալկանյան երկրորդ պատերազմը*** (ավարտվել է օգոստոսի 10-ին): Հայկական հարցի լուծման համար առաջացավ միջազգային անբարենպաստ իրավիճակ:

Եռյակ միության ներկայացուցիչները պահանջեցին ռուսական նախագծի հետ հավասարապես քննարկել նաև թուրքական նախագիծը: Այն արմատապես տարբերվում էր բարենորոգումների ռուսական ծրագրից: Կողմերն ընդհանուր եզրակացության չհանգեցին: Գերմանական, ավստրոհունգարական և իտալական դեսպանությունների ներկայացուցիչները հրաժարվեցին բարենորոգումների ռուսական նախագծի կարևոր դրույթներն ընդունելուց:

Այսպես 1913 թ. ամռանը Հայկական հարցը կրկին դարձավ տերությունների դիվանագիտական պայքարի առարկա:

Գերմանական կառավարությունը պատրաստակամություն հայտնեց ռուսական կողմի հետ առանձին քննարկելու հայկական նահանգներում բարենորոգումներ իրականացնելու հարցը: Տեղի ունեցան երկկողմ բանակցություններ: Ռուսական դիվանագիտությունը, ոչ մի աջակցություն չստանալով Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից, ստիպված էր գնալու փոխզիջման: ***1913 թ. սեպտեմբերի 10-ին*** Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան ***Մ. Գիրսը*** և Գերմանիայի դեսպան ***Հ. Վանգենհայմը*** Արևմտյան Հայաստանի համար կազմեցին 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագիր: Այն նախատեսում էր կազմել երկու վարչական միավոր. առաջինը՝ Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, իսկ երկրորդը՝ Էրզրում, Սեբաստիա ու Տրապիզոն նահանգներից: Դրանք ղեկավարվելու էին տերությունների համաձայնությամբ նշանակվող եվրոպացի երկու տեսուչների կողմից: Մեծ տերություններին իրավունք էր վերապահվում դեսպանների և հյուպատոսների միջոցով հսկելու բարենորոգումների գործադրումը: Ծրագիրը ստացավ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների հավանությունը, սակայն սկզբից ևեթ հանդիպեց թուրքերի դիմադրությանը:

Ռուս-թուրքական համաձայնագիրը: 1913 թ. հոկտեմբերի վերջերին գերմանական կողմը հրաժարվեց Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագրի քննարկումներին անմիջականորեն մասնակցելուց, և բանակցությունների նոր փուլ սկսվեց ռուսական ու թուրքական կողմերի միջև:

Վերջապես Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև կայացավ համաձայնություն: ***1914 թ. հունվարի 26-ին*** ստորագրվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիր:

Ըստ համաձայնագրի՝ յոթ նահանգներից կազմվում էին երկու վարչական միավորներ՝ Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր կազմերով: Դրանք կառավարվելու էին երկու օտարերկրյա ընդհանուր տեսուչների կողմից: վերջիններս

իրավունք էին ստանում նշանակելու և պաշտոնանկ անելու ապաշնորհ կամ օրինազանց պաշտոնյաներին: Հողային հարցերը պետք է վճռվեին տեսուչի անմիջական վերահսկողությամբ:

Համեմատելով կարող ենք նշել, որ ռուս–թուրքական համաձայնագիրը Բեռլինի պայմանագրի 61–րդ հոդվածից մեկ քայլ առաջ էր: Այն առավելություն ուներ նաև 1895 թ. բարենորոգումների մայիսյան ծրագրի նկատմամբ, որում խոսք չկար հայկական նահանգներ ստեղծելու, դրանց համար քրիստոնյա կառավարիչ նշանակելու և այդ կապակցությամբ տերությունների համաձայնության մասին:

Նորություն էին նաև պաշտոնական հարաբերություններում ազգային լեզուներին տեղ տալու և խաղաղ ժամանակ բնակության վայրում զինվորական պարտականությունները կատարելու վերաբերյալ կետերը:

Միաժամանակ հունվարի 26–ի համաձայնագիրը որոշակի նահանջ էր բարենորոգումների ռուսական սկզբնական՝ Մանդելշտամի ծրագրից: Կրճատվել էին հայերի իրավունքները: Դրանում չէր խոսվում միասնական Հայկական նահանգի մասին, այլ հիշատակվում էր Արևելյան Անատոլիա, և այն պետք է բաժանվեր երկու մասի: Դրանցում ընդգրկվում էին ինչպես հայկական, այնպես էլ ոչ հայկական նահանգների՝ մահմեդականներով բնակեցված շրջանները, ինչը խախտում էր դրանց ժողովրդագրական իրական պատկերը: Համիդիե զորագնդերը լուծարվելու փոխարեն փաստորեն պահպանվում էին: Համաձայնագրի մեջ տեղ չգտան նաև հայերից բռնագրավված հողերը վերադարձնելու, հայկական նահանգներում մուհաջիրների բնակեցումն արգելող հոդվածները:

Միաժամանակ ռուս–թուրքական համաձայնագիրը գործնական առումով չէր ապահովում հայերի ոչ անձնական անվտանգությունը, ոչ էլ գույքի և սեփականության անձեռնմխելիությունը:

Հայ հասարակության և քաղաքական ուժերի վերաբերմունքն այդ համաձայնագրին հակասական էր: Լավատես էր Պողոս Նուբար փաշան, որը հույս էր հայտնում, թե արևմտահայությունն այսուհետ կապրի «արդարադատ և ապահով վարչության ներքո»: Ոմանք էլ կարծում էին, որ թեև համաձայնագիրը Հայկական հարցի լուծումը չէ, սակայն ապագայում կարող է նպաստել հարցի լուծմանը: Ազգային կուսակցությունները հիմնականում հիասթափություն արտահայտեցին ռուս–թուրքական համաձայնագրի կապակցությամբ: Այդ փաստաթուղթը Հայաստանին տալիս էր ոչ թե ինքնավարություն, այլ ընդամենը բարենորոգումներ՝ առանց միջազգային երաշխիքների:

Երիտթուրքական կառավարությունը ձգձգում էր ռուս–թուրքական համաձայնագրի կատարումը: Հետաձգելու հարմար առիթ էր ընդհանուր տեսուչների ընտրության ու նշանակման հարցը: Վերջապես 1914 թ. ապրիլին տեսուչներ ընտրվեցին հոլանդացի դիվանագետ ***Լ. Վեստենենկը*** և նորվեգացի գնդապետ ***Ն. Հոֆը***: Վեստենենկը նշանակվեց Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ (նստավայրը՝ Էրզրում), իսկ Հոֆը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ (նստավայրը՝ Վան): Հոֆը նոր էր

եկել Արևմտյան Հայաստան, իսկ Վեստենենկը դեռ չէր ժամանել, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Օգտվելով առիթից՝ Թուրքիան չեղյալ համարեց բարենորոգումների ծրագիրը և կասեցրեց եվրոպացի տեսուչների աշխատանքը:

Այսպիսով՝ հայկական բարենորոգումների հերթական ծրագիրը կրկին չիրագործվեց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բալկանյան ո՞ր երկրները ստեղծեցին ռազմական դաշինք և ի՞նչ նպատակ էին հետապնդում: Ներկայացրե՛ք Հայկական հարցի վերաբացմանն ուղղված հայ ազգային և հոգևոր ուժերի գործունեության արդյունքները:
2. Հիմնական գծերով լուսաբանե՛ք Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը: Ի՞նչ բարեփոխումներ էին նախատեսվում Ա. Մանդելշտամի նախագծով. գնահատե՛ք այն: Համեմատե՛ք բարենորոգումների ռուսական և ռուս–գերմանական նախագծերը. նշե՛ք ընդհանրությունները և առանձնահատկությունները:
3. Ինչո՞ւ բանակցությունների նոր փուլ սկսվեց ռուսական և թուրքական կողմերի միջև: Ե՞րբ է ստորագրվել ռուս–թուրքական համաձայնագիրը: Պարզաբանե՛ք դրա բովանդակությունը, գնահատե՛ք այդ փաստաթուղթը: Ի՞նչ վերաբերմունք ունեին հայ հասարակությունը և քաղաքական ուժերը համաձայնագրի նկատմամբ: Ե՞րբ և ովքե՞ր ընտրվեցին տեսուչներ: Ինչո՞ւ չիրականացավ բարենորոգումների այդ ծրագիրը:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայոց պատմության մեջ առանձնահատուկ փուլ են Առաջին համաշխարհային պատերազմի տարիները: Այդ դժվարին ժամանակաշրջանի ավարտին մարդկային, նյութական և տարածքային ծանր կորուստների կողքին հայ ժողովրդին հաջողվեց վերականգնել անկախ պետականությունը՝ ստեղծել Հայաստանի Հանրապետությունը:

Առաջին աշխարհամարտը սկսվել է ***1914 թ. հուլիսի 19–ին,*** նոր տոմարով՝ օգոստոսի 1–ին (այս գլխում մինչև Անդրկովկասում նոր տոմարի ընդունումը տարեթվերը տրված են հին տոմարով): Պատերազմն իր բնույթով անարդարացի, ծավալապաշտական (իմպերիալիստական) էր, ոմանց համար գլխավոր նպատակն էր պահպանել, ոմանց համար էլ՝ փոփոխել հին աշխարհակարգը: Քողարկելով իրենց զավթողական ծրագրերը՝ տերություններից յուրաքանչյուրը հայտարարում էր, թե կռվում է «փոքր» ազգերի իրավունքների և հակառակորդի բռնակալ տիրապետությունից նրանց ազատագրելու համար. որպես օրինակ նշում էին սերբերին, հայերին, լեհերին, հրեաներին:

§ 1. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ

Օսմանյան կայսրության և Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը Մերձավոր Արևելքում: Օսմանյան կայսրությունը միառժամանակ հետաձգեց իր մուտքը համաշխարհային կռվի թատերաբեմ: Նախորդ տարիներին սկսված ռազմական նախապատրաստությունները հնարավորինս ավարտուն տեսքի բերելու նպատակով երիտթուրքական իշխող վերնախավը երեք ամիս վարում էր առերևույթ չեզոքության քաղաքականություն:

Երիտթուրք կառավարիչները վերջին ճշգրտումներն էին կատարում իրենց ծավալապաշտական ծրագրում: Պատերազմը պատեհ առիթ էր Ռուսաստանի և բալկանյան երկրների հետ դարավոր «հաշիվները մաքրելու» համար: Գլխավոր պատճառը, որ դրդեց երիտթուրքերին ներքաշվելու պատերազմի մեջ, Ռուսաստանի հետ հակամարտությունն էր: Նրանք մտադիր էին Ռուսաստանյան կայսրությունում բնակվող թյուրքալեզու, ինչպես նաև մահմեդական մյուս ժողովուրդներին օգտագործել ռուսների դեմ և ապագայում միավորել նրանց Մեծ Թուրանի մեջ: Այդ ծրագրի իրագործման ճանապարհին լուրջ խոչընդոտ էին հայերն ու Հայաստանը: Հետևաբար Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելու նպատակներից էր նաև «հայկական խոչընդոտի» վերացումը:

Այսպիսով՝ երիտթուրքերի ռազմաքաղաքական ծրագիրը նպատակաուղղված էր գլխավորապես դեպի Ռուսաստան: Ահա թե ինչու այս անգամ Կովկասյան ճակատը դարձավ ռուս–թուրքական հերթական պատերազմի գլխավոր ռազմաբեմը:

Գերմանիային հաջողվեց Թուրքիային դարձնել իր դաշնակիցը՝ խոստանալով ամենագործուն աջակցություն Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի դեմ պատերազմի դեպքում: 1914 թ. օգոստոսի սկզբին Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքվեց գաղտնի ռազմական դաշինք:

Ռուսաստանը ևս մեծ ակնկալիքներ ուներ թուրքերի դեմ հերթական պատերազմից: Ցարական կառավարությունը ձգտում էր ընդլայնելու իր ազդեցության ոլորտները, լուծելու Ռուսաստանի բազմադարյան հիմնախնդիրը՝ տեր դառնալ սևծովյան նեղուցներին և Կ. Պոլսին, ազատորեն դուրս գալ դեպի Միջերկրական ծով, նվաճել Արևմտյան Հայաստանը, ամրապնդել իր դիրքերն Իրանում, որը հնարավորություն կտար հաստատվելու Մերձավոր Արևելքի շահութաբեր տարածաշրջանում:

Պատերազմի ընթացքը Կովկասյան ճակատում 1914–1916 թվականներին: Օսմանյան բանակի տեղաբաշխման պատկերը պատերազմի նախօրեին վկայում էր, որ թուրքական հրամանատարությունը Կովկասյան ճակատին վճռորոշ նշանակություն է տալիս: Այսպես՝ Անդրկովկասի և Իրանի ուղղությամբ կենտրոնացվել էր թուրքական 3–րդ բանակը, որի գլխավոր շտաբն Էրզրումում էր, իսկ զինվորների ընդհանուր քանակը հասնում էր 300 հազարի: Գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերը 1914 թ. հոկտեմբերի 16–17–ը թուրքական ռազմանավերի հետ միասին անսպասելիորեն հարձակումներ գործեցին Ռուսաստանի

սևծովյան նավահանգիստներ Օդեսայի, Սևաստոպոլի, Թեոդոսիայի և Նովոռոսիյսկի վրա:

Ռուսաստանի պատասխանը չուշացավ. ***1914 թ. հոկտեմբերի 21-ին*** Նիկոլայ II-ը պաշտոնապես պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը: Կովկասի փոխարքա, հետևազորի գեներալ Վորոնցով-Դաշկովը նշանակվեց մոտ 182-հազարանոց կովկասյան ռուսական բանակի գլխավոր հրամանատար: 1914 թ. աշնան վերջին պատերազմի ճակատային գիծը Բաթումի մոտից հասնում էր մինչև Ուրմիա լճից արևելք ընկած վայրերը՝ կազմելով 720 կմ:

Պատերազմի սկզբնական փուլի ամենանշանավոր իրադարձությունը ***1914 թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ն*** ընթացած ***Սարիղամիշի ճակատամարտն*** էր:

Թուրքական 3-րդ բանակը, որի հրամանատարությունը ստանձնել էր Էնվեր փաշան, կարողացավ գրավել Օլթին, Արդվինն ու Արդահանը, ընդհուպ մոտենալ Բաթումին և հայտնվել ռուսական զորքերի թիկունքում՝ Կարս-Սարիղամիշի շրջանում: Սակայն ռուս զինվորների ու հայ կամավորների հերոսական կռիվների շնորհիվ օսմանյան 90-հազարանոց բանակը գլխովին ջախջախվեց: Հազիվ փրկվելով գերի ընկնելուց՝ Էնվերը ճողոպրեց դեպի Էրզրում, այնտեղից էլ՝ Կ. Պոլիս, իսկ թուրքական 9-րդ կորպուսի հրամանատարը մոտ 200 սպաների հետ գերի ընկավ: Միայն 12 000 հոգի՝ օսմանյան զորքի մնացորդները, հասան Էրզրում, մնացած 78 հազարը սպանվեց, ցրտահարվեց կամ գերի ընկավ: Թվական մեծ գերակշռություն ունեցող թուրքական զորքի ջախջախումն ի դերև հանեց երիտթուրքերի ռազմական գլխավոր նպատակը՝ գրավել Այսրկովկասը, ապա ներխուժել Հյուսիսային Կովկաս և Իրան:

1915 թ. գարնանը կովկասյան բանակի հրամանատարությունն առաջադրանք ստացավ Վանի ուղղությամբ վճռական հարված հասցնելու թուրքերին:

Թուրքական կողմը կարողացավ վերականգնել իր 3-րդ բանակը, չնայած որ օսմանյան զորքերի մեծ մասն այդ ժամանակ կենտրոնացվել էր նեղուցների շրջանում առաջացած ***Գալիպոլիի ճակատում***: Կ. Պոլիսը գրավելու նպատակով 1915 թ. փետրվար-մարտ ամիսներին անգլո-ֆրանսիական ռազմական ուժերն իրականացրին այսպես կոչված Դարդանելի գործողությունը: Դրա անհաջող ավարտից հետո Ռուսաստանի դաշնակիցները ***ապրիլի 12-ից*** (նոր տոմարով՝ 25-ից) դեսանտային ուժեր ափ հանեցին Գալիպոլի թերակղզում: Այստեղ կռիվները շարունակվեցին մինչև դեկտեմբեր, սակայն անգլոֆրանսիական ուժերին այդպես էլ չհաջողվեց գրավել Կ. Պոլիսը:

Թուրքական զորքերը պատերազմի սկզբից հարձակման էին անցել նաև Իրանի հյուսիսային շրջանում: Նպատակն էր տեղի մահմեդական բնակչության օգնությամբ գրավել այդ տարածքը ռուսներից, ինչպես նաև Իրանին ներքաշել պատերազմի մեջ՝ ընդդեմ Ռուսաստանի: Օսմանյան կանոնավոր ուժերը և տեղական թուրք-քուրդ-թաթարական խաժամուժը հաշվեհարդար տեսան Ատրպատականի հայերի նկատմամբ: 1915 թ. հունվարի դրությամբ այդ վայրերից մոտ 50 000 հայեր էին անցել դեպի Այսրկովկաս՝ փրկվելով կոտորածից:

1915 թ. գարնանն ու ամռանը Կովկասյան բանակը հաղթական կռիվներից հե-

տո գրավեց Թավրիզը, Ուրմիայի շրջանը, Վանը: Շարժվելով Վանա լճի հարավային և արևմտյան ափերով՝ ռուսական զորամասերը, նրանց հետ միասին նաև հայկական կամավորական ջոկատները հասան Մուշի և Բիթլիսի մատույցները, բայց չկարողացան գրավել այդ շրջանները, թեև նշված քաղաքներից 20–30 կմ հեռավորության վրա էին:

Անսպասելիորեն Վանի ռուսական զորախումբը 1915 թ. հուլիսի 9-ին սկսեց նահանջել Արևմտյան Հայաստանում գրաված տարածքներից և մի քանի օրում հասավ ռուսական տերության սահմաններին: Այդ նահանջը կարճատև եղավ. ռուսական զորքը հուլիսի վերջին վերստին նվաճեց նախկին դիրքերը Վանի նահանգում, Բայազետ–Մանազկերտի շրջանում: Իսկ մինչ այդ Բիթլիսի, Խնուսի, Մուշի և Սասունի հայության մեծագույն մասը զոհ գնաց սկսված Մեծ եղեռնին:

Անգլոֆրանսիական զորքերը, Գալիպոլիի ճակատում ծանր պարտություն կրելով, 1916 թ. հունվարին էվակուացվեցին Եգիպտոս: Դա հնարավորություն տվեց օսմանյան բանակին ևս 250 հազար զինվոր փոխադրելու Կովկասի ու Միջագետքի ճակատներ: Իր հերթին ամրապնդվելով, ռուսական բանակը 1915 թ. աշնանն առաջին անգամ Կովկասյան ճակատում թվային շոշափելի առավելություն ստացավ թշնամու նկատմամբ:

Իր դաշնակիցներին օգնելու նպատակով ռուսական հրամանատարությունը նախատեսված ժամկետից շուտ սկսեց Էրզրումի ռազմական գործողությունը: Ռուսական զորքերը ձմռան դաժան սառնամանիքի պայմաններում ***1916 թ. փետրվարի 3-ին*** գրավեցին ***Էրզրումը***: Իր ռազմաքաղաքական նշանակությամբ Էրզրումի գրավումը Ռուսաստանի համար Կովկասյան ճակատում ունեցած ամենախոշոր հաղթանակն էր:

1916 թ. սկզբից մինչև ամառ ժամանակահատվածում ռուսական զորքերը հաջորդաբար գրավեցին Խնուս, Մուշ, Բիթլիս, Տրապիզոն, Դերջան, Երզնկա և Բաբերդ քաղաքները: Նվաճելով Արևմտյան Հայաստանի գերակշիռ մասը՝ Ռուսաստանն ամրացավ Մերձավոր Արևելքում: Ռազմաճակատի որոշ տեղամասերում գործող բանակի կորպուսները խորացել էին ռուսական պետական սահմանից մինչև 600 կմ, իսկ ճակատային գծի երկարությունն արդեն կազմում էր 2500 կմ՝ Սև ծովից ձգվելով մինչև աֆղանա–իրանական սահմանը: Ռուսական գործող բանակի կենտրոնակայանը 1916 թ. փետրվարին Կարսից տեղափոխվեց Էրզրում. վերջինս դարձավ Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված տարածքի ռազմավարչական կենտրոնը:

Սայքս–Պիկոյի համաձայնագիրը: Անգլիան և Ֆրանսիան, անհանգստանալով Կովկասյան ճակատում ռուսների տարած հաղթանակներից, փորձեցին կանխել Ռուսաստանի հնարավոր միայնակ մուտքը Կ. Պոլիս և նեղուցների գոտի: Գալիպոլիի պարտությունից հետո դաշնակիցները ծրագրեցին նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնել Միջագետքի ուղղությամբ: Մի քանի ամիս ընթացած անգլո–ֆրանսիական գաղտնի բանակցություններն ավարտվեցին Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ համաձայնության ստորագրմամբ: Այն հայտնի է ***«Սայքս–Պիկոյի համաձայնագիր»*** անունով (կազմել էին դիվանագետներ անգլիացի ***Սայքսը*** և ֆրանսիացի ***Պիկոն***):

Մինչ այդ համաձայնության նախնական տարբերակը Սայքսը և Պիկոն 1916 թ. մարտի 9–ին Պետրոգրադում հանձնեցին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովին: Փոխզիջումների միջոցով երեք կողմերը վերջնական տեսքի բերեցին Օսմանյան կայսրության տարածքների բաժանման ուրվագիծը: Ռուսաստանին էին անցնելու նեղուցները, Կ. Պոլիսը և Արևմտյան Հայաստանի մեծագույն մասը: Դրա դիմաց ռուսները համաձայնեցին Կիլիկիայի, Փոքր Հայքի և արաբական տարածքների անգլո–ֆրանսիական բաժանմանը: Այդ ամենից հետո միայն՝ ***1916 թ. մայիսի 16–ին***, Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքվեց վերոհիշյալ համաձայնագիրը: Փաստորեն, ռուսական բանակը 1916 թ. ամռան վերջին դուրս էր եկել այս համաձայնագրով որոշված սահմանաբաժան գիծը և գրաված տարածքում մնաց մինչև 1917 թ. վերջը:

Յարիզմի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի գրավված տարածքում: Նվաճելով իրեն հասանելիք տարածքները՝ ռուսական իշխանությունները զբաղվեցին դրանց վարչատնտեսական կյանքի կարգավորմամբ և ռուսական զորքի համար հուսալի թիկունքի ստեղծմամբ:

1916 թ. հունիսի 5–ին Նիկոլայ II–ը հաստատեց Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված տարածքի կառավարման ժամանակավոր կարգը: Արևմտյան Հայաստանում ստեղծվեց հատուկ գեներալ–նահանգապետություն: Ստեղծվեցին 29 շրջաններ (օկրուգներ), որոնք միավորվեցին չորս մարզերի մեջ՝ ***Վանի, Խնուսի, Էրզրումի*** և ***Տրապիզոնի***:

Արևմտյան Հայաստանի մեծ մասի գրավումից հետո ռուսական կառավարությունը Մեծ եղեռնի հետևանքով հայաթափված այդ մարզերը պահելու և յուրացնելու գործում կարևոր տեղ էր տալիս քրդերին: Նա ծրագրել էր նաև հայկական տարածքը վերաբնակեցնել ռուս կազակներով: Ճիշտ է, այդ քաղաքականությունը սպասվող արդյունքները չտվեց, բայց մեծ հիասթափություն առաջացրեց հայերի մեջ: Իրավիճակը փոխվեց միայն 1917 թ. փետրվարից հետո:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք Առաջին համաշխարհային պատերազմի պատճառները: Ինչ բնույթ ուներ այն: Ներկայացրեք Օսմանյան կայսրության և Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը Մերձավոր Արևելքում: Ինչո՞ւ Թուրքիան դարձավ Գերմանիայի դաշնակից:
2. Ինչպե՞ս ծավալվեցին ռազմական գործողությունները ռուս–թուրքական ճակատում: Լուսաբանե՛ք պատերազմի ընթացքը և գլխավոր արդյունքները Կովկասյան ճակատում 1914–1916 թթ.:
3. Ե՞րբ և ո՞ւմ միջև է կնքվել Սայքս–Պիկոյի համաձայնագիրը: Ներկայացրե՛ք Օսմանյան կայսրության տարածքային բաժանման ուրվագիծն՝ ըստ համաձայնագրի:
4. Ինչ քաղաքականություն էր վարում ցարական կառավարությունը Արևմտյան Հայաստանի՝ պատերազմի իրավունքով գրաված տարածքում: Ձեր կարծիքով ո՞րն էր ռուսների ոչ հայանպաստ գործելակերպի գլխավոր պատճառը:

§ 2. ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Պատերազմի նախապատրաստվելով՝ Ռուսաստանը և Օսմանյան կայսրությունը կարևոր նշանակություն էին տալիս հայերին իրենց կողմը ներգրավելու խնդրին: Իսկ հայ ժողովրդի և նրա ղեկավար մարմինների առջև այդ օրերին ծառացել էին դժվարին հարցեր՝ ինչ դիրքորոշում բռնել, ինչ գործելակերպի հետևել հայության, առաջին հերթին՝ արևմտահայության անվտանգությունն ապահովելու համար:

Կամավորական շարժման առաջացումը և ծավալումը: Կովկասի ռուսական իշխանությունը 1914 թ. աշնան սկզբներին դիմեց որոշակի քայլերի՝ հայերի վերաբերմունքը Թուրքիայի դեմ պատերազմի պարագայում պարզելու համար: Վորոնցով–Դաշկովի և Հայոց ազգային բյուրոյի ներկայացուցիչներ ***Մեսրոպ եպիսկոպոսի*** (ազգային բյուրոյի պատվավոր նախագահ, Վիրահայոց թեմի առաջնորդ), ***Սամսոն Հարությունյանի*** (բյուրոյի նախագահ), ***Ակեբաանդր Խատիսյանի, Հակոբ Զավրյանի*** միջև տեղի ունեցած մի քանի հանդիպումների արդյունքում պարզվեցին երկու կողմերի դիրքորոշումները: Հայերը կամավորական խմբերով պետք է աջակցեին ռուսական զորամասերին: Հայ ղեկավար ուժերը հույս ունեին ռուսական զորքի օգնությամբ իրականացնելու հայկական նահանգների ու Կիլիկիայի ինքնավարության հաստատումը Ռուսաստանի հովանու ներքո:

Այսպիսով՝ Հայոց ազգային բյուրոյի քաղաքական մերձավորագույն նպատակն էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության հաստատումը:

Այդ օրերին կովկասահայության մեջ տիրում էր ընդհանուր ոգևորություն: Կազմակերպվում էին բազմահազարանոց հավաքներ, ցույցեր, երիտասարդությունը պահանջում էր ստեղծել կամավորական ջոկատներ: Գրեթե ոչ ոք կասկած չուներ ռուսական բանակի արագ հաղթանակի հարցում: Գերիշխում էր այն մտայնությունը, որ մի քանի ամսում ռուսական բանակը կգրավի Վանը, Էրզրումը, Բիթլիսը, և արևմտահայերը կազատագրվեն թուրքական դարավոր տիրապետությունից:

Այսպիսի իրավիճակում Հայոց ազգային բյուրոն գլխավորեց հայ կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքները: Ստեղծվեց բյուրոյի ***գործադիր*** (կարգադրիչ) ***մարմինը՝ Հոմսեի Արդությանի*** ղեկավարությամբ: Դրա մեջ մտան նաև Հ. Ջավրյանը, Նիկոլ Աղբալյանը, Արմեն Գարոն, Աբրահամ Գյուլխանդանյանը, Սիմոն Վրացյանը, իսկ 1915 թ.՝ նաև Ռոստոմը:

Կամավորական շարժման գլխավոր նպատակն էր ռուսական զորքի օգնությամբ իրականացնել հայկական նահանգների ու Կիլիկիայի ինքնավարության հաստատումը Ռուսաստանի հովանու ներքո: Հայկական կամավորական խմբերը պետք է աջակցեին ռուսական զորամասերին:

Աստիճանաբար Թիֆլիսում կենտրոնացան հայդուկային պայքարի քաջարի հրամանատարներն ու մարտիկները: Հայ կամավորական շարժումը չդադարող հոսքով համալրվում էր. գալիս էին Ռուսաստանից, Բալկաններից և հեռավոր ԱՄՆ–ից:

Հայրենասիրական բուռն վերելքի պայմաններում 1914 թ. նոյեմբերի սկզբին արդեն ձևավորվել էին կամավորական չորս ջոկատներ (կոչվել են նաև խմբեր, դրուժիններ): Առաջին ջոկատը Սալմաստում էր, որի հրամանատարն ***Անդրանիկն*** էր: Անդրանիկի ջոկատը կազմավորվեց Իրանի հյուսիսային տարածքում, որտեղ մինչև ռուս–թուրքական ճակատում պատերազմական գործողությունների սկսվելը ցարական կառավարությունը զորքեր էր մտցրել: Երկրորդ ջոկատը կազմավորվեց ***Իգդիրում***, հրամանատարն էր ***Դրոն***: ***Համազասպի*** հրամանատարությամբ երրորդ ջոկատը ստեղծվեց Կաղզվանում: Սարիղամիշում ձևավորվեց չորրորդ ջոկատը՝ ***Քեռու*** գլխավորությամբ:

Պահեստային ուժերի հիման վրա շուտով կազմավորվեց V ջոկատը՝ ***Վարդանի*** գլխավորությամբ:

Կարսի մարզում ձևավորվեց VI ջոկատը, որի ապահովումը և կամավորների հավաքագրումը ստանձնեց Հնչակյան կուսակցությունը: Հրամանատարը և շտաբի պետն էր ***Աղանիկ Ջանփոլադյանը***, իսկ հետագայում նրա օգնականը դարձավ Ամերիկայից ժամանած ***Պանդուխտը*** (Միքայել Սեֆերյան), շտաբի կառավարիչն էր ***Հայկ Բժշկյանցը***:

1915 թ. ամռանը ***Հ. Արղությանի*** գլխավորությամբ հավաքագրվեց ***VII*** ջոկատը՝ 1300–հոգանոց անձնակազմով: Աշնանը ստեղծվեց պահեստային ***VIII*** ջոկատը՝ ***Նիկոլ Աղբալյանի*** ղեկավարությամբ:

Հայկական ջոկատների մասնակցությունը մարտական գործողություններին: Առաջինը դեպի ռազմի դաշտ շարժվեց Անդրանիկի խումբը 1914 թ. նոյեմբերի 5–ին: Հաջորդ օրը մեկնեց Դրոյի խումբը,

Ալեքսանդր Խատիսյան

մի քանի օր անց՝ նաև Համազասպի և Քեռու խմբերը: Հայ կամավորները կռվի առաջին իսկ օրերից խիզախորեն և անձնուրացաբար էին մարտնչում օսմանյան զորքի դեմ:

Կամավորական խմբերի զինվորական կենտրոնականը Թիֆլիսից տեղափոխվեց ***Երևան***՝ ճակատին ավելի մոտ, որով աճեց շարժման անմիջական ղեկավարման արդյունավետությունը: Դրոյի, Համազասպի և Քեռու խմբերը ***1915 թ. ապրիլի սկզբին Քանաքեռում*** միավորվեցին Վարդանի խմբի հետ՝ կազմելով ***Արարատյան գունդը***: Հայկական միացյալ զորամիավորը գլխավորեց ***Վարդանը***, իսկ գնդի հեծյալ մասի պետ նշանակվեց ***Խեչոն*** (Խաչատուր Ամիրյանց):

Արարատյան գունդը Երևան–Էջմիածին–Իգդիր ճանապարհով հասավ կռվի դաշտ: Ճանապարհին ամենուրեք հայ բնակչությունը խանդավառությամբ էր ընդունում և ուղեկցում կամավորներին, իսկ ***Էջմիածնում*** նրանց բարի մաղթանքի խոսքեր ասաց և օրհնեց կաթողիկոս ***Գևորգ Ե–ն***: Բայազետ հասնելով՝ գունդն ընդգրկվեց գեներալ Նիկոլաևի զորաջոկատի մեջ, որն առաջադրանք էր ստացել հարձակվելու Վանի ուղղությամբ:

Դրաստամատ Կանայան

Վանի հայերի հերոսական պայքարը թուրք–քրդական գերակշիռ ուժերի դեմ սկսվել էր ***1915 թ. ապրիլի 7–ին***: Սակայն հայերը երկար դիմակայել չէին կարող: Ապրիլի 24–ին հայոց գունդն անցավ հարձակման՝ Վանի պաշտպաններին օր առաջ օգնության հասնելու բուռն ձգտումով: Տեղեկանալով այդ մասին՝ թուրքական զորքերը նահանջեցին Վանից: Խեչոն և նրա 150 հեծյալները՝ որպես առաջամարտիկներ, ***մայիսի 5–ին*** մտան հայոց հինավուրց մայրաքաղաք, իսկ հաջորդ օրը Վան հասան մնացած հայկական ուժերը և ռուսական զորամասերը: Արարատյան գունդը շուտով ազատագրեց նաև Շատախի և Մոկսի շրջանները:

Այս նույն ժամանակահատվածում Անդրանիկի ջոկատը մի շարք հաղթական կռիվներ մղեց թուրքական ուժերի դեմ: Հատկապես նշանավոր էր ***1915 թ. ապրիլի 16–18–ը*** տեղի ունեցած ***Դիլմանի ճակատամարտում*** նրա տարած փայլուն հաղթանակը: Այնուհետև Անդրանիկն իր ջոկատով անցավ Վանի նահանգ և հունիսի վերջերին միացավ Արարատյան գնդին:

Կովկասյան բանակի կռվող զորամասերի հետ շարունակելով հաղթարշավը՝ Արարատյան գունդը մոտեցավ Բիթլիսի և Մուշի սահմաններին: Սակայն 1915 թ. հուլիսի կեսերին ռուսական զորքերն անսպասելի նահանջեցին: Ընդհանուր նահանջի ժամանակ Վանի ողջ հայ բնակչությունը գաղթեց կանոնավոր զորքի հետ: Ստիպված էին նահանջել նաև հայ կամավորական ուժերը: 1915 թ. հուլիսի վերջին ռուսական զորամասերը վերագրավեցին Վանը, իսկ հայ բնակչությունը սկսեց աստիճանաբար վերադառնալ հայրենի բնակավայրերը:

Վանի նահանջից հետո տիրող հիասթափությունից որոշ ժամանակ անց կամավորական շարժումը կրկին թափ հավաքեց, և կամավորների ընդհանուր թիվը կռվող յոթ ջոկատներում ու պահեստի մեկ ջոկատում միասին 1915 թ. վերջին և 1916 թ. սկզբին հասավ ***10 հազարի***: Հայ կամավորները կրկին մեկնեցին ռազմի դաշտ և փառքով պսակեցին իրենց ու ազգի պատիվը:

Դրոյի II ջոկատը կռվեց Խնուս–Մուշի շրջանում. այդ ժամանակ նրա կազմում կար ավելի քան 1200 մարտիկ: 1916 թ. հունվարի 13–ին ջոկատը գրավեց ***Խնուսը***, իսկ փետրվարի 2–ին Դրոյի հեծյալներն առաջինը մտան ***Մուշ***:

I կամավորական ջոկատը կռվում էր Արճեշի շրջանում: 1916 թ. փետրվարի 7–ին ***Անդրանիկն***, իր 1500 կամավորներով և 200 հեծյալ կազակների աջակցությամբ հարձակման անցնելով, գրավեց ***Բիթլիսը***:

III ջոկատը ***Համազասպի*** հմուտ գործողությունների շնորհիվ մեծ հաջողությունների հասավ ***Վանի***, ապա ***Խիզանի*** շրջանում: 1916 թ. մարտի 11–ին նրա կամավորները գրավեցին Խիզանը և թուրքական գերությունից ազատեցին ջարդերից ողջ մնացած 5000 հայերի:

IV և VII ջոկատները մարտնչում էին թշնամու զորքերի դեմ Ուրմիայից հարավ ընկած ճակատային տեղամասում: ***1916 թ. մայիսի 15-ին Ռևանդուզի մոտ*** տեղի ունեցած արյունալի կռիվներից մեկում զոհվեց IV ջոկատի հրամանատար, նշանավոր հայդուկ ***Քեռին***: ***Վարդանի*** ջոկատը 1916 թ. սկզբին Երևանից մեկնեց Ատրպատական, որտեղ կռվեց մինչև ամռան սկզբները: Էրզրումի գրավմանը մասնակցեց նաև հայկական VI ջոկատը:

Հայ կամավորական զորամիավորները կարևոր ավանդ ներդրեցին ռուսական կովկասյան զորքի տարած մի շարք փայլուն հաղթանակների գործում: Հայ կամավորները ստացան մոտ 500 Գեորգիևյան խաչեր և մեդալներ, իսկ Դրոն, Ղազարը, Սմբատը՝ Գեորգիևյան խաչի բոլոր չորս աստիճանները: Հայ քաջարի կամավորներից մոտ 800 հոգի զոհվեց հայրենիքի ազատագրման համար:

Կամավորական ջոկատների վերածումը կանոնավոր զինուժի: Հայ կամավորական շարժումը, աստիճանաբար թափ հավաքելով, դուրս էր եկել ցարիզմի թույլատրելիության շրջանակներից: Հայոց ազգային բյուրոն, սակայն, կարողացավ իրավունք ձեռք բերել կամավորական ջոկատներից ստեղծելու ***հայկական հրաձգային գումարտակներ***:

1916 թ. մարտ-օգոստոս ամիսներին տեղի ունեցավ կամավորական ութ ջոկատների վերակազմակերպումը վեց գումարտակների, որոնք մտան ռուսական բանակի կազմը: Դրանց հրամանատարներից էին փորձառու զինվորականներ Պ. Բեժանբեկը, Ս. Սամարցյանը, Պ. Բեկ-Փիրումյանը և ուրիշներ: Հայկական 6 գումարտակներում 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ կար մոտ 6000 մարտիկ:

Վանի նահանգապետ Արամ Մանուկյան

Կովկասյան ճակատում երկու տարի մարտնչած հայ կամավորական զինուժը, այսպիսով, վերակազմավորվեց կանոնավոր ազգային մարտական ուժի, որն արժանիորեն շարունակեց կամավորների ռազմական տարեգրությունը:

Հայ քաղաքական ուժերի վերաբերմունքը պատերազմին և կամավորական շարժմանը: Կամավորական շարժումը հայ քաղաքական ուժերի և կազմակերպությունների կողմից ամենատարբեր գնահատականի է արժանացել: Սակայն անժխտելի է, որ այն Հայաստանի ազատագրության զինված պայքարի հաղթական ու փառավոր էջերից է: Անկախ այն հանգամանքից՝ կամավորական ջոկատները կստեղծվեին, թե ոչ, երիտթուրքերը վաղօրոք ծրագրել էին Հայաստանի և Օսմանյան կայսրության հայության ցեղասպանությունը:

Այսրկովկասում ձևավորված հայ ***ազատականների հոսանքը***, պաշտպանելով Անտանտի տերություններին, համաշխարհային պատերազմում նրանց հաղթանակի ջերմ կողմնակիցն էր: Իրենց գլխավոր պաշտոնաթերթ «Մշակում» նրանք հստակորեն արտահայտեցին սե-

փական տեսակետը՝ Անտանտի կողմից պատերազմն արդարացի է, արևելահայերը պետք է աջակցեն Ռուսաստանի կառավարությանը, օգնեն նաև արևմտահայերին ինքնապաշտպանության համար:

Հնչակյան կուսակցությունը, պաշտպանելով Անտանտի տերություններին, նրանց հաղթության հետ էր կապում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ազատագրության գործը: Հնչակյանները պահանջում էին Հայաստանի ինքնավարություն՝ դաշնակից երկրների հովանու ներքո:

Հայ կամավորական շարժման վերաբերյալ տրամագծորեն հակառակ մոտեցում ունեին հայ բոլշևիկները: Պատերազմը բնորոշելով որպես անարդարացի՝ նրանք չէին ընդունում, որ հայ ժողովուրդը ևս ազատագրվելու իրավունք ունի: Ուստի նրանք բացասական վերաբերմունք դրսևորեցին հայ կամավորական շարժման հանդեպ:

1914 թ. հուլիսի կեսերին Էրզրումում գումարված ***ՀՅԴ VIII ընդհանուր ժողովի*** կայացրած որոշման համաձայն՝ սպասվող ռուս–թուրքական պատերազմում հայերը պետք է չեզոք դիրք բռնեին. որպես իրենց երկրների հպատակներ՝ և՛ արևելահայերը, և՛ արևմտահայերը պետք է կատարեին իրենց զինվորական պարտականությունը: Դաշնակցությունը, այդուհանդերձ, միանշանակ վերաբերմունք չուներ ռուս–թուրքական պատերազմին հայերի մասնակցության հարցի շուրջ: Արևմտյան Հայաստանում գործող դաշնակցական կազմակերպությունները որոշել էին չեզոքություն պահպանել, իսկ Կովկասում տիրապետող դարձավ կամավորական խմբերով ռուսների կողմում հանդես գալու տեսակետը:

Հայաստանի ինքնավարության հաստատումը, ըստ դաշնակցության, առաջին քայլն էր, որից հետո դրվելու էր ***Հայաստանի անկախության*** հարցը: Այդ ծրագրի մի մասն էր կազմում կամավորական ջոկատների միջոցով ապագա անկախ Հայաստանի ազգային բանակի հիմքերի ստեղծումը:

Անժխտելի է այն փաստը, որ հայ կամավոր զինուժի հետ միասին Հայաստանի ազատագրվող տարածք մուտք գործեց ազգային վարչական կառույցը: ***1915 թ. մայիսի 7-ին*** ռուսական հրամանատարությունը ***Վանի նահանգապետ*** է նշանակում հայտնի ազգային–քաղաքական գործիչ ***Արամ Մանուկյանին***: Կարճ ժամանակում ստեղծվում են ազատագրված գավառների և Վան քաղաքի կառավարման մարմինները՝ նահանգային խորհուրդը և վարչությունը, կրթական և ոստիկանական տեսչությունները, քաղաքապետարանը, դատարանը և այլն: Ժամանակակիցներից մեկի բնորոշմամբ՝ *«Վանը, լոելյայն, բոլորի մեջ դառնում է հայոց առաջին մայրաքաղաքը, ուր կա հայ իշխանություն, հայ բանակ, հայ վարչական կազմ... Հայոց անկախության առաջին ճառագայթն է այս»*:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ ակնկալիքներ ունեին հայերը սկսված աշխարհամարտից: Ինչպես սկիզբ առավ ու ծավալվեց կամավորական շարժումը: Առաջին փուլում որ ջոկատները կազմվեցին. թվարկեք դրանց հրամանատարական կազմը:

2. Ներկայացրեք կամավորական շարժման ընթացքը 1915–1916 թթ.: Նշանավոր ինչ ճակատամարտերի մասնակցեցին հայ կամավորները: Ովքեր աչքի ընկան:
3. Ինչու՞ կամավորական ջոկատները վերածվեցին կանոնավոր զորամիավորների:
4. Վերլուծեք հայ քաղաքական ուժերի դիրքորոշումը պատերազմի և կամավորական շարժման հարցում: Վերհանեք հայ կամավորական շարժման նշանակությունը: Ինչ դիրքորոշում կորդեգրեիք, եթե այն օրերի մասնակիցը լինեիք: Ինչ համեմատություն կարող եք անել մերօրյա Արցախյան պայքարի հետ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Դրոյի պատասխանը ցարին (ըստ Ա. Խատիսյանի հուշերի)

Պատերազմի առաջին օրերին Կովկասի փոխարքայության կյանքում տեղի ունեցավ մի արտասովոր իրադարձություն. 1914 թ. նոյեմբերի 26–ին Թիֆլիս ժամանեց Նիկոլայ II ցարը: Նույնիսկ խաղաղ ժամանակներում ռուսական միապետերը հազվադեպ էին այցի արժանացնում իրենց հպատակներին, իսկ այդժամ ցարը եկել էր Կովկաս՝ ոգևորելու տեղի ժողովուրդներին: Չորս օր Թիֆլիսում մնալուց հետո նա մեկնեց ճակատ, եղավ անգամ Սարիղամիշի ճակատային առաջավոր դիրքերում… Փոխարքայության նստավայրում գտնվելու օրերին ցարն այցելեց նաև Թիֆլիսի քաղաքային հիվանդանոց՝ քաղաքապետ Ա. Խատիսյանի ուղեկցությամբ: Վերջինս ցարին տարավ այն հիվանդասենյակը, ուր պառկած էր Բայազետի կռիվներում վիրավորված Դրոն: Այցի մասնակից գեներալ Յուդենիչը փայլուն գնահատական է տալիս կամավորական երկրորդ ջոկատի հրամանատարին, որից հետո ցարը, շրջվելով դեպի Դրոն, հարցնում է. «*Դուք որտեղ եք ստացել ձեր զինվորական կրթությունը*»: Հետևում է պատասխանը. «*Հեղափոխական գործի մեջ, Ձերդ մեծություն*»: Նման պատասխանից մի պահ ցարն այլայլվեց («հեղափոխություն» բառը միշտ էլ նրան սարսափեցնում էր), սակայն Դրոն կարողացավ շտկել իրավիճակը՝ «*Մեր հեղափոխական գործը կատարվում էր Թուրքիայում*»: Ռուսական ինքնակալը հանդարտվեց, ապա հայ ռազմիկի «շապկի վրա կպցրեց Գեորգիևյան խաչը»:

§ 3. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերի պետական ծրագիր: Ինչպես արդեն գիտեք, արևմտահայերի ցեղասպանությունը սկսվել էր աբդուլհամիդյան վարչակարգի կողմից: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը ժառանգեց այդ ցեղասպանական քաղաքականությունը:

Եվրոպայից դուրս քշվելուց հետո թուրքերը գերխնդիր էին դարձրել թուրքական նոր հայրենիքի ստեղծումը: Առաջին հերթին այդ «հայրենիքի» տարածքի մեջ ներառվեց Հայաստանը: Պատահական չէ, որ երիտթուրքերն ավելի կատարելագործեցին ու ընդլայնեցին հայերի ոչնչացման ծրագիրը՝ տարածելով այն ամբողջ հայության վրա: Քաղաքական այդ ուղեգիծը «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հաստատել էր 1910–1911 թթ. Սալոնիկում կայացած գաղտնի խորհրդակցությունների և ժողովների ընթացքում:

Այսինքն՝ հայերի հայրենազրկման և ոչնչացման ծրագիրը պետականորեն մշակվել և նախապատրաստվել էր օսմանյան Թուրքիայի կողմից մինչև Առաջին աշխարհամարտը: Հայերի բնաջնջումով, ըստ երիտթուրքերի ծրագրի, կփակվեր նաև Հայկական հարցը:

Հայերի ցեղասպանության պատճառների շարքում որոշակի դեր է խաղացել նաև տնտեսական գործոնը: Հայ արդյունաբերողներն ու դրամատերերն իրենց ձեռներեցության ու բնատուր տաղանդի շնորհիվ կարողացել էին խոշոր կապիտալ կուտակել: Հայերի բնաջնջմամբ թուրքերը հնարավորություն էին ստանում ազատվելու անցանկալի մրցակիցներից ու տիրանալու նրանց ֆինանսական միջոցներին և ունեցվածքին:

Օգտագործելով պատերազմական իրադրությունը՝ երիտթուրքերը հնարավորություն ստացան որոշակիացնելու և գործադրելու իրենց դիվային ծրագիրը:

1914 թ. հոկտեմբերին ստեղծվեց հատուկ մարմին՝ ***Երեքի գործադիր կոմիտե***: Նրանում ընդգրկվեցին երիտթուրքերի կուսակցության առաջնորդներից Նազիմը, կուսակցության գաղափարախոս ***Բեհաէդդին Շաքիրը*** և լուսավորության նախարար ***Միդհատ Շյուքրին***: Արտակարգ լիազորություններով օժտված այս կոմիտեին հանձնարարվեց կազմակերպել և իրականացնել կայսրության հայերի բռնագաղթն ու կոտորածները: Շաքիրի անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց ***«Թեշքիլաթը մահսուսե»*** («Հատուկ կազմակերպություն») մարմինը: Այստեղ հիմնականում ընդգրկվեցին բանտերից ազատված և քրեական անցյալ ունեցող հանցագործներ: Եռյակի գործունեության հսկողությունը դրվեց ներքին գործերի նախարար ***Թալեաթ փաշայի*** վրա:

Մեծ եղեռնը: Հայերի ոչնչացման թուրքական պետական ծրագիրն աշխարհամարտի առաջին երկու տարիներին գործադրվեց ամբողջ արևմտահայության նկատմամբ: ***Հայոց ցեղասպանության այս նոր փուլը հայտնի է Մեծ եղեռն անունով:***

Երիտթուրքական իշխանությունները հայերի բնաջնջման ծրագիրն իրականացրին քայլ առ քայլ: Սկզբնական ամիսներին հայերի կոտորածներ տեղի ունեցան Կովկասյան ճակատի մերձակա գոտում, այդ թվում նաև Իրանին ու Ռուսաստանին ենթակա մի քանի շրջաններում, որտեղ ներխուժել էին թուրքական զորքերը: 1915 թ. հունվարի դրությամբ ճակատային այդ շրջաններից Կովկասի փոխարքայության տարածք էր գաղթել ջարդերից խուսափած 100 հազար հայ:

Կայսրության հայ բնակչության բնաջնջումը դյուրացնելու նպատակով թուրքական իշխանությունները վճռել էին նախ և առաջ վերացնել հայերի կռվելու ունակ ներուժը: Ջորահավաքի ընթացքում օսմանյան բանակ զորակոչվեցին 18–45 տարեկան ***ավելի քան 300 հազար հայեր***: 1915 թ. փետրվարի 25–ի հրամանով հայ զինծառայողներին արգելվեց նշանակել հրամանատարական պաշտոններում և ծառայել ռուս–թուրքական ճակատային գծում: Այսպես սկսվեց հայ զինվորների ճնշող մեծամասնության զինաթափումը: Նրանց ներգրավելով թիկունքային գումարտակների կազմում՝ ստիպում էին կատարել ճանապարհներ, կամուրջներ, ամրություններ կառուցելու, բեռներ փոխադրելու և այլ ֆիզիկական ծանր աշխատանք: Շուտով նրանց մեկուսացնում են և խումբ առ խումբ վերացնում:

Օսմանյան կայսրության հայկական նահանգներում և հայաբնակ շրջաններում կատարվող անօրինականությունները գաղտնի պահելու նպատակով օսմանյան իշխանությունները խոչընդոտներ և արգելքներ էին հարուցում դաշնակից և չեզոք տերությունների քաղաքացիներին Արևմտյան Հայաստան և Փոքր Ասիա ուղևոր-

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ
ԶՈՐԱՆԻՇՆԵՐ
ՍԱՍՈՒՆ
ՄՈՒՇ
ՎԱՆ
ԱՐՏԱՇԱՏ
ԵՐԵՎԱՆ
ԳԱՆՁԱԿ
ԿԱՐՍ
ԱՐԴԱՀԱՆ
ԱԼԱՇԿԵՐՏ
ԲԱՅԱԶԵՏ
ԱՐԱՐԱՏ
ԱՐԱՍ գետ
ՎԱՆԱ ԼԻՃ
ՈՒՐՄԻԱՅԻ ԼԻՃ
ԿԱՍՊԻ ԾՈՎ
ՍԵՎ ԾՈՎ
ԱԶՈՎ ԾՈՎ
ՍԱՄԱՐԱ
ԲԱԳԴԱԴ
ՍԱՄԱՐԱ
ԿԱՅԱՐԱՆ (Թրք. Խաղաղության գյուղ)
ՍԱՄԱՐԱ
ՄԻՋԱԳԵՏՔ
ՍԱՄԱՐԱ
ՍԱՄԱՐԱ
ՍԱՄԱՐԱ

վելու: Արգելվել էր թշնամի տերությունների լեզուներով և հայերենով նամակագրությունը: 1915 թ. ապրիլի 5–ին օսմանյան կառավարությունը հատուկ օրենքով արգելեց տերության քաղաքացիների մուտքն ու ելքը կայսրությունից: Փակվեցին հայկական դպրոցները և մամուլը:

Մյուս քայլով երիտթուրքերը նպատակադրվել էին վերացնել հայության ազգային, քաղաքական և հոգևոր ղեկավար ուժերին ու գործիչներին: Հայկական նահանգներ և հայաբնակ շրջաններ են ուղարկվում «Թեշքիլաթը մահսուսեի» անդամներ, որոնք պետք է ղեկավարեին տեղական իշխանությունների գործողությունները:

Առաջին ձերբակալությունները տեղի ունեցան տակավին ***1914 թ. հոկտեմբերին***: Զեյթունում դաժանորեն խոշտանգվելով՝ սպանվում է ***Նազարեթ Չավուշը***: Կալանվում են գյուղաքաղաքի ևս 60 և շրջակա գյուղերի 30 աչքի ընկնող հայ ներկայացուցիչներ: Դեկտեմբերին սպանվում է Սեբաստիայի նահանգի առաջնորդական տեղապահ Սահակ վարդապետ Օղաբաշյանը: Վանի նահանգապետ Ջևդեթ փաշան 1915 թ. ապրիլի սկզբներին դավադրորեն հաշվեհարդար է տեսնում Վասպուրականում մեծ հեղինակություն վայելող գործիչներ Իշխանի և Վռամյանի հետ:

Հայ ղեկավար ուժերին և մտավորականությանը գլխավոր ու անսպասելի հարվածը հասցվեց հենց կայսրության մայրաքաղաքում: ***1915 թ. ապրիլի 11–ին*** (նոր տոմարով՝ ապրիլի 24–ին) և հաջորդած մի քանի օրերին Կ. Պոլսում, վաղօրոք կազմված ցուցակների համաձայն, ոստիկանությունը կալանեց 2300–ից ավելի մարդ (ըստ թուրքական պաշտոնական տվյալների): Նրանց թվում էին օսմանյան խորհրդարանի պատգամավորներ ***Գրիգոր Զոհրապը, Վարդգեսը***, բանաստեղծներ ***Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը***, երգահան ***Կոմիտասը***, հրապարակախոսներ Նազարեթ Թագվորյանը, Սմբատ Բյուրատը, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը, գիտնականներ և մշակույթի այլ հայտնի դեմքեր: Մայրաքաղաքից աքսորված հայ մտավորականների մեծամասնությունը դաժանորեն սպանվեց Չանկրիի, Չորումի և Այաշի ճանապարհին: Քչերը միայն փրկվեցին: Իսկ Կ. Պոլսի կենտրոնական հրապարակներից մեկում հունիսի 15–ին կախաղան բարձրացվեցին Հնչակյան կուսակցության 20 նշանավոր գործիչներ՝ Փարամազի գլխավորությամբ:

1915 թ. ապրիլից սկսվեց նաև ցեղասպանական մեծածավալ գործողությունը: Արևմտահայությունը ենթարկվեց համատարած կոտորածների, բռնի տեղահանության և աքսորի: Զրկված ամենատարրական գոյատևման միջոցներից՝ աքսորականները հրոսակների հսկողության ներքո քշվում էին Միջագետքի անապատային շրջանները:

Ջևդեթի հրամանով կազմակերպվում է Վասպուրականի հայերի կոտորածը: Ավերվում են մոտ 400 հայկական գյուղեր:

1915 թ. ապրիլի 15–ին կայսրության նահանգային իշխանավորներին ուղարկվեց Թալեաթի, Էնվերի և Նազիմի կողմից ստորագրված հրամանը, որով նրանց հրահանգվում էր խստորեն գործադրել հայերի ոչնչացման ծրագիրը: Իսկ ով *«կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն*

հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

Հարյուր հազարավոր հայերի կոտորեցին իրենց հայրենի նահանգներում: Մեծ թվով բռնի տեղահանվածներ սպանվեցին աքսորի ճանապարհին: Ողջ մնացածները հասան Միջագետքի և Սիրիայի համակենտրոնացման ճամբարներ՝ Ռաս ուլ Այն, Դեր Զոր, Ռաքքա և այլն: Թուրքական կառավարության հրամանով սկսվեց աքսորավայրերում ողջ մնացած հայ տարագիրների մի մասի ոչնչացումը: Հայերի ցեղասպանությունը շարունակվեց նաև հաջորդ տարվա ընթացքում: Երիտթուրքական իշխանություններն իրականացնում էին նաև հայերի, առաջին հերթին՝ երեխաների բռնի մահմեդականացում:

Այսպիսով՝ ***հայերի Մեծ եղեռնը փաստացի սկսվել էր 1914 թ. հոկտեմբերի վերջին և շարունակվել մինչև 1916 թ. ամառը***: Արևմտյան Հայաստանում և կայսրության մյուս նահանգներում ապրող ավելի քան 2,5 միլիոն հայերից 1,5 միլիոնը դարձավ Մեծ եղեռնի զոհ: Երիտթուրքերն իրականացրին Հայաստանը հայազրկելու և հայերին հայրենազրկելու իրենց դիվային ծրագրի մեծ մասը:

Հայերի ինքնապաշտպանական մարտերը: Արևմտյան Հայաստանում և կայսրության հայկական այլ բնակավայրերում հայերը կարողացան կազմակերպվել ու զենքը ձեռքին պայքարել թուրքական ջարդարարների դեմ:

Առաջին ինքնապաշտպանական կռիվները տեղի ունեցան ***Վանի նահանգում***: Կատաղի մարտեր ընթացան ***Շատախ գավառում***: Տեղի մի քանի գործիչների ձերբակալությունը և նահանգում կատարվող բռնություններն ու ջարդերը ստիպեցին շատախցիներին զենքի դիմել: Գավառի կենտրոնը՝ Թաղը, բաժանվեց ութ դիրքերի՝ 114 մարտիկներով: Ստեղծվեց ***զինվորական մարմին***, որի ղեկավար ընտրվեց ***Բաղդիկ Սիմոնյանը***: Ապրիլի 1-ին սկսվեց ինքնապաշտպանությունը: Չնայած բացառիկ ծանր իրավիճակին՝ հայերը չկորցրին ոգու արիությունը և պայքարեցին, մինչև որ մայիսի 14-ին Դրոյի գլխավորած երկրորդ կամավորական ջոկատը մտավ Թաղ:

Հզոր ինքնապաշտպանություն կազմակերպվեց ***Վան քաղաքում***: Հայերը բնակվում էին Այգեստան (20 հազար հոգի) և Քաղաքամեջ (2500 հոգի) թաղամասերում, որոնք միմյանցից 5-6 կմ հեռավորության վրա էին: Այդ միջանկյալ տարածքում հիմնականում թուրքեր էին բնակվում: Ջնդեթ փաշան չէր թաքցնում, որ իր նպատակը հայության ոչնչացումն է: Վանեցիներին ոչինչ չէր մնում, քան զինված պայքար մղելը:

1915 թ. ապրիլի 5-ին Այգեստանում կազմվում է զինվորական մարմին: Դրա կազմում էին ***Արմենակ Եկպյանը*** (ղեկավար), ***Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Փանոս Թերլեմեզյանը*** և ***Արամ Մանուկյանը***: Քաղաքամեջ թաղամասի ինքնապաշտպանության կազմակերպման համար ստեղծվում է առանձին զինվորական մարմին՝ ***Հայկակ Կոտոյանի*** ղեկավարությամբ: Իսկ Վանի ինքնապաշտպանության ***ընդհանուր կազմակերպիչը և ոգեշնչողը Արամ Մանուկյանն*** էր:

Վանի ինքնապաշտպանությունը, արդեն ասվել է, սկսվեց ***ապրիլի 7-ին*** և տևեց մոտ մեկ ամիս: Ռուսական զորքի առաջխաղացումը ստիպեց թուրքերին նահանջել: ***Մայիսի 5-ին*** առաջինը Վան մտան հայ կամավորները:

Վանի ինքնապաշտպանությունը 1915 թ.

Կամախի կիրճը

Վանի և ազատագրված շրջանների նահանգապետ նշանակվեց ***Արամ Մանուկյանը***: Քաղաքը և ազատագրված գավառներն աստիճանաբար բնականոն հունի մեջ դրվեցին: Արևելահայ զանազան հասարակական–բարեգործական կազմակերպություններ և Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն սկսեցին կազմակերպել անհրաժեշտ օգնության առաքումը Վան: Սակայն ռուսական զորքի հուլիսյան նահանջի պատճառով Վանի հայկական իշխանությունը դադարեց գործելուց: ***Այնուամենայնիվ, այս փորձն ապարդյուն չէր. այն օգտագործվեց Ա. Մանուկյանի կողմից 1917 թ. վերջին և 1918 թ. առաջին կեսին Երևանի նահանգում:***

1915 թ. գարնանը սկսվում է ***Մուշ–Տարոնի*** հայ բնակչության մասնակի կոտորածը, որը գնալով ահագնանում է: Հունիսի 28–ին սկսվում է ***Մուշի*** հայության ինքնապաշտպանությունը: Տեղի 12 հազար բնակիչներից բացի՝ Մուշում ապաստան էին գտել նաև շրջակա հայկական գյուղերի 10 հազար բնակիչներ: Հայ մարտիկները ***Հակոբ Կոտորանի*** գլխավորությամբ արիաբար մարտնչեցին մինչև վերջին փամփուշտը:

1915 թ. մարտից սկսած՝ թուրքական բանակի որոշ ստորաբաժանումներ և քրդական ջոկատներ հարավից շարժվեցին դեպի ***Սասուն***: Այնտեղ կար մոտ 50 հազար հայություն՝ ներառյալ այլ վայրերից ապաստանածները: Սասունի ինքնապաշտպանությունն իրականացնում էին 600 մարտիկներ: Մուշի հայության հետ հաշվեհարդար տեսնելուց հետո թուրքական հրամանատարությունն ազատված ուժերին տեղափոխում է Սասուն: Անդոկի և Ծովասարի լեռներում մարտերը շարունակվում են մինչև օգոստոսի սկիզբը:

1915 թ. հունիսի 3–ին սկսվում է ***Շապին Կարահիսար*** քաղաքի հայկական թաղամասի ինքնապաշտպանությունը: Հայերը քշում են թուրքական ուժերին և գրավում քաղաքի հարևանությամբ գտնվող հինավուրց բերդը: Տեղի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար կազմակերպվում է զինվորական խորհուրդ, որը գլխավորում է ***Ղուկաս Տեռիկեթյանը***: Որոշվում է դիմադրության վայր ընտրել գրաված բերդը, ուր պատսպարվում են 5000–ից ավելի հայեր: Հունիսի վերջին իրադրությունը դառնում է սպառնալից: Զինվորական խորհուրդը վճռում է՝ քանի

դեռ սովը ուժասպառ չի արել մարդկանց, ձեղքել հակառակորդի պաշարումը: Հունիսի 29-ի ուշ գիշերը հայկական ջոկատը մի քանի ուղղություններով գրոհում է թշնամու վրա և ձեղքում շրջափակումը:

1915 թ. հուլիսի վերջերին թուրքական իշխանությունները հրամայում են Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափին ընկած *Սուեդիա* գավառակի հայությանը տարագրվել: Տեղի զուտ հայկական վեց գյուղերի 4200-ից ավելի բնակիչներ վճռում են չենթարկվել և բարձրանալ մոտակա Մուսա լեռը: Կազմվում է ղեկավար մարմին՝ ***Տիգրան Անդրեասյանի*** գլխավորությամբ: Օգոստոսի սկզբից սկսվում է հերոսական դիմադրությունը: Շրջափակման մեջ գտնվող հայերի համար փրկության միակ ելքը Միջերկրական ծովն էր, որտեղ պարեկություն էին կատարում բրիտանական և ֆրանսիական ռազմանավերը: Սեպտեմբերի 5-ին ֆրանսիական «Գիշեն» հածանավն անսպասելիորեն հայտնվում է Մուսա լեռան ափամերձ ջրերում: Կապ է հաստատվում նավապետի հետ, որը խոստանում է մի քանի օրից գալ օգնության: Սեպտեմբերի 10-ին հասնում է բաղձալի օգնությունը, իսկ երկու օր հետո սկսվում է հայերի տարհանումը: Փրկված 4058 հայերը տեղափոխվում են Եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաքը:

Հերոսական ինքնապաշտպանություն կազմակերպվեց նաև *Ուրֆայում (Եդեսիա)*: Քաղաքի 100 հազար բնակչից 35 հազարը հայեր էին: ***Սեպտեմբերի 29-ին*** սկսվում է հերոսամարտը: Ստեղծվում է զինվորական խորհուրդ՝ ***Մկրտիչ Յոթնեղբայրյանի*** գլխավորությամբ: Հայերին զենքի կոչելով՝ դողանջում են Հայ առաքելական եկեղեցու զանգերը: Ինքնապաշտպանները հաջողությամբ հետ են մղում թուրքական հետևակի և քրդական անկանոն ջոկատների բազմաթիվ գրոհները: Թաքնվելով տների նկուղներում, փլատակներում և թաքստոցներում՝ ուրֆացիները արիաբար դիմադրում են մինչև նոյեմբերի կեսերը:

Այսպիսով՝ հայերը կարողացան որոշ քաղաքներում և գյուղերում զինված դիմադրություն կազմակերպել ու արժանի հակահարված տալ թուրքական ջարդարարներին: Այդ դիմադրական մարտերի արդյունքում տասնյակ հազարավոր հայեր փրկվեցին: Զենքի դիմած հայերն իրենց գիտակցված մահով փրկում և արբագործում էին ազգային արժանապատվությունը: Իսկ Վանի հայության ինքնապաշտպանությունն ավարտվեց փայլուն հաղթանակով, և Վանի նահանգում թեև կարճատև, բայց գոյություն ունեցավ ազգային տեղական իշխանություն՝ երեք տարի անց վերականգնված հայոց անկախության ավետաբերը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երիտթուրքերն ինչ էին որոշել Հայկական հարցը փակելու համար: Երբ և որտեղ էր կայացվել այդ որոշումը: Պարզաբանեք հայերի ցեղասպանության պատճառները: Ձեր կարծիքով ինչը նպաստեց երիտթուրքերի հայաջնջման ծրագրի իրագործմանը: Ինչ դեր ունի Երեքի կոմիտեն հայկական ջարդերի իրագործման մեջ:
2. Պարզաբանեք Մեծ եղեռնի իրականացման փուլերը: Երբ սկսվեցին համատարած կոտորածներն ու տեղահանությունը:

3. Թվարկեք Արևմտյան Հայաստանի և կայսրության այն բնակավայրերը, որտեղ տեղի ունեցան ինքնապաշտպանական մարտեր: Նկարագրեք Վանի, Տարոնի, Շապին Կարահիսարի ինքնապաշտպանությունը: Ներկայացրեք Սուեդիայի և Ուրֆայի հայության ինքնապաշտպանությունը: Վերհանեք հայերի ինքնապաշտպանության պատմական նշանակությունը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Երիտթուրքերի գաղտնի խորհրդակցությունում Նազըմի հնչեցրած մտքերից

Անհրաժեշտ է գործել արագ: Եթե բավարարվենք մասնակի կոտորածով, ինչպես եղավ 1909 թ. Ադանայում և այլ շրջաններում, ապա դա օգուտի փոխարեն վնաս կբերի, քանի որ վտանգ կստեղծենք արթնացնելու այն տարրերին, որոնց նույնպես մտադիր ենք վերացնել ճանապարհից՝ արաբներին և քրդերին: Հայ տարրը պետք է հիմքից արմատախիլ անել, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր հողում, և մոռացվի բուն այդ անունը: Հիմա պատերազմ է. այսպիսի հարմար առիթ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունն ու համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ եթե նրանք իմանան էլ, կկանգնեն կատարված փաստի առաջ, և դրանով իսկ հարցը կսպառվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է հայերի համընդհանուր բնաջնջման բնույթ կրեն: ...Ես ուզում եմ, որ այս հողի վրա ապրի ու լիակատար տեր ու տնօրեն լինի թուրքն ու միայն թուրքը: ...Մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից:

§ 4. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ

Մեծ եղեռնի հետևանքները: Մեծ եղեռնը ոչ միայն հայոց, այլև համաշխարհային քաղաքակրթության դեմ ուղղված ամենածանր ոճրագործություններից է: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական վարչակարգի կողմից հայերի ոչնչացումն իր դաժանությամբ պատմության մեջ նախադեպը չունեցող ցեղասպանություն էր, որին զոհ գնաց մեկուկես միլիոն մարդ: Ցեղասպանությունն իրագործվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև կայսրության բոլոր հայաբնակ վայրերում: Բնաջնջումից մասնակիորեն փրկվեցին Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայերը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ այդ քաղաքներն ունեին միջազգային նշանակություն, և երիտթուրքերը զգուշանում էին օտարերկրացիների ներկայությունից:

Ցեղասպանության ***ծանրագույն հետևանքը*** մեր հայրենիքի մեծագույն մասի՝ ***Արևմտյան Հայաստանի հայաթափումն էր, հայերի հայրենազրկումը:*** Ողջ մնացած հայերի մի ստվար հատված Միջագետքի արաբական անապատների աքսորավայրերում էր: 1916 թ. փետրվարի տվյալներով՝ նրանց թիվը շուրջ 600 հազար էր: Երիտթուրքերը հրամայեցին նրանց ևս ոչնչացնել. նույն թվականի գարնանը զարհուրելի ջարդերին զոհ գնաց ավելի քան 300 հազար տարագիր: Ժամանակակից թուրք պատմաբաններն ու քաղաքական գործիչները, կրկնելով երիտթուրք պարագլուխներին, պատճառաբանում են, թե հայերի տեղահանությունը պատերազմական իրավիճակից բխող անհրաժեշտ միջոցառում էր: Արաբական անապատներ աքսորված արև-

մտահայ տարագիրների կոտորածները, սակայն, վկայում են, որ արևմտահայերի տեղահանության բուն նպատակը հայ ժողովրդի բնաջնջումն էր:

Մեծ եղեռնից փրկված հայերը տարբեր ճակատագիր ունեցան: Մոտ 250 հազար մարդ՝ հիմնականում կանայք և երեխաներ, մնաց բուն երկրում՝ հայոց բնօրրանում, և բռնի մահմեդականացվեց:

Եղեռնից փրկված մոտ 300 հազար հայեր ապաստան գտան Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի տարբեր շրջաններում:

Հարյուր հազարավոր հայեր, սփռվելով աշխարհով մեկ, բնակություն հաստատեցին տարբեր երկրներում և սկսեցին մաքառել գոյատևման ու ազգապահպանության համար:

Այսպիսով՝ ցեղասպանության ակնառու հետևանքներից էր հայկական սփյուռքի առաջացումը:

Վիթխարի էր նաև հայ ժողովրդի ***նյութական կորուստը՝ առնվազն 20 միլիարդ ֆրանկ ոսկի:*** Ժամանակի համար դա ահռելի գումար էր. բավական է նշել, որ Առաջին աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի պատերազմական ծախսերը կազմել են ընդամենը 9–10 միլիարդ ֆրանկ: Հայերի ոչնչացումից կամ բռնագաղթից հետո նրանց շարժական և անշարժ գույքն անցավ տեղական իշխանություններին կամ յուրացվեց թուրքերի և քրդերի կողմից: Երիտթուրքերի պարագլուխներից Թալեաթի լկտիությունը հասավ այնտեղ, որ ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին առաջարկեց իրենց տալ ամերիկյան բանկերում պահվող օսմանահպատակ հայերի ավանդները:

Ոչնչացվեցին կամ սեփականաշնորհվեցին հայության ստեղծած պատմամշակութային արժեքները, քանի որ դրանք նյութական վկաներն էին մարդկության բնօրրաններից մեկում՝ Հայաստանում, հազարամյակներ ապրած հայ ազգի: Թալանվեց ու յուրացվեց նաև Հայ առաքելական եկեղեցուն պատկանող ունեցվածքը: Հայկական 2350 եկեղեցիներ և վանքեր ավերվեցին կամ կողոպտվեցին: Վերացվեցին 1500 հայկական դպրոց ու վարժարան: Ոչնչացվեցին 20 հազարից ավելի հայկական ձեռագրեր և հնատիպ գրքեր: ***Մշակութային ցեղասպանությունը շարունակվեց նաև հետագա տասնամյակներում: Այսօր էլ այն ընթացքի մեջ է ոչ միայն Թուրքիայում, այլև Ադրբեջանում:***

Եվ վերջապես՝ ցեղասպանությունը ծանր հետք է թողել հայության բոլոր սերունդների կենսագործունեության, բնավորության, ազգային նկարագրի և նպատակների ձևավորման վրա:

Տերությունների և միջազգային հանրության վերաբերմունքը: Առաջին համաշխարհային պատերազմը սանձազերծող տերությունները տարբեր կերպ արձագանքեցին հայերի Մեծ եղեռնին: Անտանտի երկրները, որ պատերազմի գաղափարական արդարացման նպատակով հռչակել էին, թե կռվում են ճնշված ազգերի՝ լեհերի, հայերի, հրեաների և այլոց ազատագրության համար, դատապարտեցին երիտթուրքերի կառավարության հանցավոր քաղաքականությունը:

Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան արդեն ***1915 թ. մայիսի 11-ին*** հանդես եկան համատեղ հայտարարությամբ: Նրանք նախազգուշացրին, որ պատասխանատվության են կանչելու ցեղասպանության կազմակերպիչներին և մասնակիցներին. «*Հաշվի առնելով Թուրքիայի կողմից կատարված այս նոր*

Ֆրիտյոֆ Նանսեն

հանցագործությունները մարդկության ու քաղաքակրթության դեմ՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարությունները սույնով հրապարակավ հայտնում են Բարձր դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնապես պատասխանատու են համարելու թուրքական կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև կառավարության տեղական այն ներկայացուցիչներին, ովքեր մասնակից են եղել կոտորածներին»:

Հայկական նահանգներում և Օսմանյան կայսրության մյուս շրջաններում գործունեություն ծավալած ամերիկյան միսիոներներն իրենց հերթին միջազգային հանրությանը տեղեկացրին, թե իրականում ինչ է կատարվում հայերի հետ: ԱՄՆ–ը, որ այդ պահին դեռևս չեզոք երկիր էր, փորձեց ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա: 1916 թ. փետրվարին ԱՄՆ–ի կառավարությունն իր բողոքը հայտնեց հայերի նկատմամբ իրականացվող բռնությունների դեմ, բայց դա չսաստեց ոճրագործներին:

Մեծ Բրիտանիայի վարչապետ ***Լլոյդ Ջորջը*** ասում էր, որ հաշտության պայմանագրով հայկական հողերը պետք է վերջնականորեն ազատագրվեն թուրքերից: 1916 թ. անգլիացի պատմաբան լորդ ***Ջեյմս Բրայսը*** հրատարակեց փաստաթղթերի և նյութերի ժողովածու, հայերի կոտորածների մասին աշխատություն գրեց անգլիացի հայտնի պատմաբան ***Առնոլդ Թոյնբին***:

Գերմանիան և Ավստրո–Հունգարիան գործնական լուրջ քայլերի չդիմեցին՝ կանխելու կամ արգելակելու իրենց դաշնակցի կողմից կատարվող եղեռնագործությունը: Եթե նման փորձեր էլ արվում էին, ապա դրանք անտեսվում էին երիտթուրք պարագլուխների կողմից: Հատկապես ազդեցիկ կարող էր լինել Գերմանիայի միջամտությունը: Սակայն գերմանական պետական և քաղաքական շրջանակները, չնչին բացառությամբ, աջակցում էին երիտթուրքերին կամ անտարբեր կեցվածք էին որդեգրել: Հայապաշտպան գործունեություն ծավալեց Գերմանա–հայկական ընկերության նախագահ, արևելագետ ***Յոհաննես Լեփսիուսը***, որի համար նա ենթարկվեց ճնշումների ու հարկադրված հեռացավ իր երկրից:

Հայոց եղեռնը դատապարտվեց ժամանակի հասարակական–քաղաքական և պետական նշանավոր շատ գործիչների կողմից՝ Ա. Ֆրանս, Ռ. Ռոլան, Ֆ. Նանսեն, Մ. Գորկի, Վ. Բրյուսով, Վ. Վիլսոն, Դ. Լլոյդ–Ջորջ, Ջ. Քերզոն, Ա. Բրիան, Ժ. Կլեմանսո, Հ. Մորգենթաու և շատ ուրիշներ: Ցավոք, Մեծ եղեռնից շատ չանցած՝ մարդկությունը մի քանի տասնամյակ շարունակ մոռացության տվեց թուրքերի կատարած մեծ հանցագործությունը:

«Յեղասպանություն» հասկացությունը: XX դարի սկզբներին, երբ իրականացվում էր հայերի բնաջնջման թուրքական պետական ծրագիրը, միջազգային իրավունքի մեջ դեռ ձևակերպված չէր

«ցեղասպանություն» հասկացությունը: Միայն ***1948 թ. դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության ընդունած «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայով*** տրվեց դրա իրավական ձևակերպումը: Այս բանաձևի հիմքում ընկած էր լեհական հրեա իրավաբան ***Ռաֆայել Լեմկինի*** առաջարկած նախագիծը, որը կազմվել էր հայ ժողովրդի հետ 1915–1923 թթ. տեղի ունեցած իրադարձությունների վերլուծության հիման վրա:

Ըստ այդ հիմնարար փաստաթղթի երկրորդ հոդվածի՝ *«ցեղասպանություն են համարվում որևէ ազգային, ռասայական, էթնիկական կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման նպատակով իրականացվող հետևյալ գործողությունները՝*

ա) այդպիսի խմբի անդամների սպանությունը,

բ) խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածք կամ մտավոր խանգարում հասցնելը,

գ) որևէ խմբի համար դիտավորյալ այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որի նպատակն է նրա մասնակի կամ լիակատար ոչնչացումը,

դ) խմբի ներսում ծնունդաբերության կանխմանն ուղղված միջոցառումները,

ե) երեխաների բռնի հանձնումը մարդկային մի խմբից մյուսին»:

Անհերքելի իրողություն է, և նույնիսկ կասկած չկա, որ հայության նկատմամբ թուրքերն իրագործել են ՄԱԿ-ի կոնվենցիայով ցեղասպանությունը բնութագրող բոլոր հինգ գործողությունները: Այդ կոնվենցիայով և հետագայում ընդունված միջազգային այլ փաստաթղթերով սահմանված են, որ ցեղասպանական արարքները պատժելի են և վաղեմության ժամկետ չունեն:

Առաջին քայլերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ առաջին քայլերը պետք է համարել իրադարձությունների թարմ հետքերով պետությունների ղեկավարների, օրենսդիր ու գործադիր բարձրագույն մարմինների, անհատ քաղաքական ու հասարակական հայտնի գործիչների հայտարարությունները, բողոքի նոտաները, ելույթները:

Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Անտանտի երկրները, հաշվի առնելով համաշխարհային առաջադեմ հանրության կարծիքը և հետամուտ լինելով 1915 թ. մայիսի 11-ի հայտարարությամբ նշված պատասխանատվության կանչելու հարցին, երիտթուրքերին փոխարինած թուրքական նոր կառավարությունից պահանջեցին դատական գործ բացել: 1919 թ. հունվարին հիմնված ռազմական ատյանները դատական հետաքննության ենթարկեցին նախկին կառավարության ղեկավարներին, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին, հատուկ կազմակերպության ղեկավարներին: Նրանք բոլորը հայկական ջարդերի անմիջական կազմակերպիչներն ու իրականացնողներն էին: Հայերի կոտորածների վերաբերյալ մեղադրական հսկայական ապացույցներ հավաքվեցին:

Երիտթուրքերի ղեկավարներին հաջողվել էր նախքան Մուդրոսի զինադադարը ձողոպրել երկրից և ապաստան գտնել տարբեր երկրներում: Սակայն դա չազատեց նրանց պատասխանատվությունից: Դատավարությունն ընթացավ 1919 թ. ապրիլից մինչև հունիսը և իր վճիռն արձակեց ***1919 թ. հուլիսի 5-ին***: Անգամ

Սողոմոն Թեհլիրյան

թուրքական դատարանը հարկադրված էր ընդունել երիտթուրքերի ծանր հանցանքները: Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և Նազիմը հեռակա դատապարտվեցին մահվան: Հետագայում նման պատժի արժանացան նաև Բեհաէդդին Շաքիրը, Ջեմալ Ազմին և Նայիմ բեյը, իսկ շատերն էլ դատապարտվեցին տարբեր ժամկետներով ազատազրկման:

Այսպիսով՝ քաղաքական-իրավական տեսանկյունից Հայոց ցեղասպանության ճանաչման և դրա համար պատժելու առաջին լուրջ քայլը կատարել է հենց թուրքական կառավարությունը:

Երիտթուրքերի պարագլուխների դատավճիռը հնարավոր չեղավ ի կատար ածել, որովհետև հանցագործները երկրից դուրս էին: Տեսնելով, որ թուրքական կառավարությունը և դաշնակից երկրները հետևողական չեն այդ հարցում, դատավճռի իրականացմանը ձեռնամուխ եղան անձնազոհ հայ վրիժառուները: Նրանք գործում էին ՀՅԴ կողմից 1919 թ. խիստ գաղտնի պայմաններով կյանքի կոչված «*Նեմեսիս*» (Նեմեսիս՝ հին հունական դիցաբանության մեջ վրեժի աստվածուհին) ծրագրի շրջանակներում:

1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանը իրականացրեց Մեծ եղեռնի ամենագլխավոր պատասխանատու Թալեաթի մահապատիժը: Գերմանական դատարանը, հանգամանորեն և անաչառորեն քննելով հարցը, դրա հետ կապված՝ նաև Հայոց ցեղասպանության հանգամանքները, Ս. Թեհլիրյանին ազատ արձակեց:

1921 թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանի գնդակից սպանվեց Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սայիդ Հալիմը:

1922 թ. ապրիլի 17-ին դարձյալ Բեռլինում Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանն իրականացրին Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը:

1922 թ. հուլիսի 25-ին Պետրոս Տեր-Պողոսյանը, Արտաշես Գևորգյանը և Ստեփան Ծաղիկյանը Թիֆլիսում ի կատար ածեցին Ջեմալի մահապատիժը: Նույն թվականի օգոստոսին Միջին Ասիայում Հակոբ Մելքումովի գլխավորած զորամասերի դեմ մղված մարտերում զոհվեց Էնվերը: Նազիմը ավելի ուշ (1926 թ.) կախաղան բարձրացվեց հանրապետական Թուրքիայի նախագահ Մուստաֆա Քեմալի դեմ կազմակերպված դավադրությանը մասնակցելու համար:

Այսպես իրականացվեց Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուների դատավճիռը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը մտավ նոր հունի մեջ: Արդի փուլում աշխարհի երկու տասնյակից ավելի պետություններ ճանաչել ու դատապարտել են հայ ազգի հանդեպ թուրքական պետության կատարած ոճրագործությունը:

Մեր օրերում հայ–թուրքական հարաբերությունների ապագան մեծապես կախված է նրանից, թե արդյոք թուրք ժողովուրդն իր մեջ ուժ կգտնի ճանաչելու և դատապարտելու Հայոց ցեղասպանությունը: Սակայն իրար հաջորդող կառավարությունների գործելակերպը, պետական ու քաղաքական գործիչների հայտարարությունները մեծ ոճրից նույնիսկ 100 տարի անց վկայում են, որ պաշտոնական Թուրքիայի դիրքորոշման հիմքում առայժմ ընկած են ժխտողականությունը և ուրացումը: Իսկ ***Մեծ եղեռնից փրկված հայերի սերունդները, ընդհանրապես ամբողջ հայությունը շարունակում են պայքարել ոչ միայն ճանաչման, այլև արժանի հատուցման և ամբողջական հայրենիքի վերականգնման համազգային նպատակի համար:***

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Հայոց ցեղասպանության հետևանքները:
2. Մեկնաբանեք մեծ տերությունների վերաբերմունքը Մեծ եղեռնի նկատմամբ: Ձեր կարծիքով որո՞նք էին այդ վերաբերմունքի իրական պատճառները: Ի՞նչ վերաբերմունք ունեին ժամանակի հասարակական–քաղաքական և պետական նշանավոր գործիչները: Ովքե՞ր էին նրանք, ի՞նչ գիտեք նրանց մասին:
3. Ե՞րբ և ո՞ւմ կողմից է տրվել «ցեղասպանության» իրավական ձևակերպումը: Ըստ այդ փաստաթղթի՝ ո՞ր գործողություններն են համարվում ցեղասպանություն: Ձեր կարծիքով արդյո՞ք ընդգրկուն և համապարփակ են այդ ձևակերպումները: Ուրիշ ի՞նչ ժողովուրդներ գիտեք, որոնց նկատմամբ նույնպես իրականացվել է ցեղասպանություն:
4. Որո՞նք են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը միտված առաջին քայլերը: Ի՞նչ ընթացք և ավարտ ունեցավ Մեծ եղեռնի կազմակերպիչների դատավարությունը: Ներկայացրե՛ք և գնահատե՛ք «Նեմեսիս» ծրագիրն ու արդյունքները:
5. Ձեր կարծիքով ի՞նչ նշանակություն և հետևանքներ կունենա Հայոց ցեղասպանության միջազգային, այդ թվում՝ Թուրքիայի կողմից, ճանաչումը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

1. Միավորված ազգերի կազմակերպության 1948 թ. դեկտեմբերի 9–ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիա

Հոդված 3. Պատժելի են հետևյալ արարքները՝

ա) ցեղասպանությունը,

բ) ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,

գ) ցեղասպանություն կատարելու ուղղակի և հրապարակային հրահրումը,

դ) ցեղասպանություն կատարելու փորձը,

ե) հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

2. Հատվածներ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրից»

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, համախորհուրդ ափյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերի հետ՝

...

1. Ոգեկոչում է Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը և երախտագիտությամբ խոնարհվում կյանքի ու մարդկային արժանապատվության համար պայքար մղած նահատակ և վերապրած հերոսների առջև:

2. Վերահաստատում է Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար:

...

5. Դիմում է ՄԱԿ-ի անդամ պետություններին, միջազգային կազմակերպություններին, բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից, միավորել իրենց ջանքերը պատմական արդարությունը վերականգնելու և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու համար:

6. Արտահայտում է Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

7. Դատապարտում է Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերվող հակահայկական կեցվածքը և միջպետական հարաբերությունների կարգավորման համար նախապայմանների առաջադրումը՝ դրանք գնահատելով որպես Հայոց ցեղասպանության, Մեծ Եղեռնի՝ մինչ օրս անպատիժ մնալու հետևանք:

8. Կոչ է անում Թուրքիայի Հանրապետությանը՝ ճանաչելու և դատապարտելու Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը և մարդկության դեմ իրագործված այդ սոսկալի ոճրի զոհերի հիշատակը ոգեկոչելու միջոցով առերեսվելու սեփական պատմության ու հիշողության հետ՝ հրաժարվելով կեղծարարության, անհերքելի իրողության ժխտման և հարաբերականացման քաղաքականությունից: ...

9. Հույս է հայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը կարևոր մեկնակետ կդառնան հայ և թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար:

...

11. Դիտարկում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը որպես կարևոր հանգրվան պատմական արդարության համար մղվող պայքարը «Հիշում եմ և պահանջում» կարգախոսով շարունակելու գործընթացում:

12. Կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին՝ հայրենասեր, գիտակից և ուսյալ կեցվածքով պաշտպան կանգնելու հայրենի արբազան ժառանգությանը, աննահանջ պայքարով ծառայելու հանուն՝

- առավել հզոր Հայրենիքի՝ ազատ և ժողովրդավար Հայաստանի Հանրապետության,
- անկախ Արցախի առաջընթացի ու զորացման,
- աշխարհասփյուռ հայության գործուն համախմբման, համայն հայության դարավոր նվիրական նպատակների իրականացման:

29 հունվարի, 2015 թ., ք. Երևան

§ 5. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Փետրվարյան հեղափոխությունը և նոր իշխանության ձևավորումը: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Ռուսաստանում առաջացել էր համընդհանուր ճգնաժամ: ***1917 թ. փետրվարի 27-ի*** հաղթական հեղափոխությունը վերջ դրեց միապետական կարգերին: Երկրում առաջացավ քաղաքական մի յուրօրինակ իրադրություն, որը հայտնի է ***երկիշխանություն*** անունով: Պետրոգրադի բանվորական և զինվորական պատգամավորների միացյալ խորհրդի ձեռքում էր իրական իշխանությունը: Սակայն այդ խորհրդում մեծամասնություն կազմող էսէռներն ու սոցիալ-դեմոկրատ մենշևիկները պետական իշխանության ղեկավարումը կամովին հանձնեցին առաջադեմ բուրժուազիային՝ իրենց վերապահելով վերջինիս հանդեպ վերահսկողության իրավունքը: ***Մարտի 2-ին*** ձևավորվեց ***Ժամանակավոր կառավարություն,*** որն էլ ստանձնեց բարձրագույն գործադիր իշխանության ղեկը Ռուսաստանում: Կառավարության նախագահ նշանակվեց իշխան Գեորգի Լվովը:

Հեղափոխական ալիքը մի փոքր ուշացումով հասավ Անդրկովկաս, տարածվեց նաև Հայաստանում: Բոլորը ողջունում էին ժողովրդավարական հեղափոխությունը, պահանջում հաստատել իրական քաղաքացիական ազատություններ և իրավունքներ, մտցնել կարգուկանոն հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

Աստիճանաբար նոր կառավարության վարչական մարմինները հաստատվեցին նաև Անդրկովկասի սահմաններում: Ժամանակավոր կառավարության կողմից կազմվեց երկրամասի իշխանության նոր մարմին՝ ***Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ԱՀԿ):*** ԱՀԿ-ն ձևավորվել էր ***մարտի 9-ին*** Պետական IV դումայի կովկասյան հինգ պատգամավորներից: Նախագահն էր կադետ ***Վ. Խատիսովը:*** Հայերից ԱՀԿ-ում ընդգրկված էր կադետ ***Միքայել Պապաջանյանը:***

Իր գործունեության ողջ ընթացքում, սակայն, ԱՀԿ-ն իրական իշխանություն չդարձավ և այդպես էլ հեղինակություն չվաստակեց Անդրկովկասում:

Երկրամասի ներքաղաքական կյանքում հետփետրվարյան շրջանում մեծ կշիռ ձեռք բերեցին ***բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդները,*** որոնք միավորվելով կազմեցին Երկրամասային խորհուրդների կենտրոնը: Այս նոր մարմինն ավելի ազդեցիկ տեղական քաղաքական ուժ էր, քան ԱՀԿ-ն:

Առաջին համաշխարհային պատերազմը դեռ ընթացքի մեջ էր, սակայն 1917 թ. ռուս-թուրքական ճակատում նշանակալի իրադարձություններ տեղի չունեցան: Ապրիլի դրությամբ Կովկասյան ճակատի հայկական հատվածում կռվում էր ռուսական հինգ, իսկ պարսկական հատվածում՝ երկու կորպուս: Դրանցում կար մոտ 232 հազար կռվող ուժ:

Ժամանակավոր կառավարությունը և Արևմտյան Հայաստանը: Ռուսաստանի նոր կառավարությունը իր գոյության ութ ամիսների ընթացքում այդպես էլ չբացահայտեց իր ամբողջ ծրագիրը Հայաստանի ապագայի հարցում, այնուհանդերձ, նրա որոշակի քայլերը լավատեսորեն էին տրամադրել հայ քաղաքական շրջանակներին:

1917 թ. մարտին արտգործնախարար ***Պ. Միլյուկովը*** նշել էր, որ Ռուսաստանի նոր իշխանությունն Արևմտյան Հայաստանում որդեգրելու է նոր մոտեցում, որը բխելու է նաև հայերի շահերից: Նույն ամսվա վերջերին տեղի ունեցած ***կադետների (սահմանադիր ժողովրդավարներ)*** VII համագումարում բարձրաձայնվեց այն միտքը, որ Ռուսաստանը ձգտում է ազատագրելու Հայաստանը, խլելու այն Թուրքիայից: Ինքնավար Հայաստանի ստեղծումը, նշվում էր, բռնակցում չէ, իսկ *«Թուրքական սուլթանի իշխանությունը, ավազակության և սպանությունների արյունոտ իշխանությունը մարդկության խայտառակությունն է...»*:

1917 թ. ապրիլի 26-ին հրապարակվեց Ժամանակավոր կառավարության որոշումը գրավված տարածքում կառավարման նոր ձև մտցնելու մասին: Առաջին անգամ պաշտոնապես ճանաչվեց և ձևակերպում ստացավ Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը՝ որպես վարչական առանձին միավոր՝ ***«Թուրքահայաստան»*** անունով:

Արևմտյան Հայաստանի և պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված մյուս մարզերի քաղաքացիական կառավարումն անմիջականորեն դրվեց Ժամանակավոր կառավարության ենթակայության տակ: Մինչև Արևմտյան Հայաստանի կարգավիճակը վերջնականորեն որոշելը գրավված տարածքում ստեղծված երեք հայկական մարզերը՝ ***Էրզրում, Խնուս, Վան***, կառավարվելու էին գեներալ-կոմիսարի և նրա երկու օգնականների միջոցով: Գեներալ-կոմիսար նշանակվեց գեներալ ***Ավերյանովը***, քաղաքացիական գծով տեղակալ՝ ***Հակոբ Զավրյանը***:

1917 թ. հունիսին էսէռական Ա. Կերենսկին պարզորոշ արտահայտվեց, որ ռուսական զորքը չի կարող հեռանալ Հայաստանից, քանի որ այդ դեպքում նրանից *«ոչինչ չի մնա. նա կկորչի քրդերի և թուրքերի սրի ու հրի տակ»*:

Այսպիսով՝ արմատապես փոխվեց ռուսական նոր իշխանության վերաբերմունքը Արևմտյան Հայաստանի և հայերի նկատմամբ, որն սկսեց հայանպաստ քաղաքականություն իրականացնել: Դրա վկայությունն են նաև Արևմտահայաստանի գեներալ-կոմիսարին վարչապետ Լվովի և նոր արտգործնախարար Տերեշչենկոյի կողմից 1917 թ. մայիսի 15-ին տրված գաղտնի ***«Ղեկավար հրահանգները»***: Ժամանակավոր կառավարությունը երկրամասի իշխանություններին հրահանգում էր՝ բոլոր հայերին, ովքեր *«այս պատերազմի ժամանակ կամ էլ դրանից առաջ փախել են»* այդ տարածքից, ինչպես նաև նախկին թուրքահպատակ հայերին, թույլատրել վերաբնակվելու հայկական երեք մարզերում: Իսկ մինչև հատուկ որոշում կայացնելը՝ թուրքերին, լազերին, քրդերին, որոնք փախել էին թուրքական զորքի հետ, արգելվում էր վերադառնալ այդ մարզերը:

Այդ հրահանգների մասին Կովկասյան ռազմաճակատի հրամանատար ***Պրժևալսկին*** տեղեկացնում է հայկական մարզերում գտնվող ռուսական բանակի հրամանատարությանը: Նա խորհուրդ էր տալիս այդ ցուցումների մասին գաղտնի իրազեկել հրամկազմին և *«միջոցներ ձեռնարկել, որպեսզի հայերի նկատմամբ թշնամական արարքներ այսուհետ չթույլատրվեն՝ ում կողմից էլ որ լինի»*: Հանձնարարվում էր պարզաբանել բոլորին, որ հեղափոխությունը *«ռուսական զինվորության վրա մեծ խնդիր է դնում՝ բուժել մարդ-*

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ ԵՎ ՃԱԿԱՏԱՅԻՆ ԹԻԿՈՒՆՔԸ (1917 Թ. ՄԱՅԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ)

Անդրանիկ Օզանյան

կության դեմ ուղղված ամենաարտասովոր հանցագործության հետևանքները»:

Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծումը: Ժամանակավոր կառավարության հայանպաստ քայլերը մեծ հույսեր առաջացրին հայության երկու հատվածների ղեկավար կազմակերպությունների մեջ: Իսկ Անդրկովկասում ապաստան գտած մոտ 300 հազար արևմտահայ գաղթականությունը սկսեց կազմակերպվել:

Երևանում 1917 թ. մայիսի 2–11–ը կայացավ ***արևմտահայերի առաջին համագումարը***, որին մասնակցում էին 80 պատգամավորներ և մոտ 400 հյուրեր: Ընդունվեցին որոշումներ մի շարք կարևոր հարցերի՝ փախստականներին օգնելու, հայրենիքում արևմտահայերի վերաբնակեցման, Հայաստանում ազգային վարչություն կազմակերպելու, Ռուսաստանում եղած արևմտահայ մոտ 3500 ռազմագերիներին ազատ արձակելու, հայկական մարզերի տնտեսության վերականգնման վերաբերյալ:

Ընտրվեց կենտրոնական ղեկավար մարմին՝ 15–հոգանոց ***Արևմտահայ ազգային խորհուրդը***: Խորհրդի անդամներ դարձան Անդրանիկը, Սմբատը, Ջապել Եսայանը, Լ. Շանթը, Սեպուհը, Վ. Փափազյանը և ուրիշներ: Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ ընտրվեց ***Վահան Փափազյանը (Կոմս)***, իսկ պատվավոր նախագահ՝ ***Անդրանիկը***:

Վանի, Խնուսի և Էրզրումի մարզերում կարճ ժամանակ անց ձևավորվեցին և սկսեցին գործել Արևմտահայ ազգային խորհրդի տեղական կազմակերպությունները: Ս. Վրացյանը գրում է. *«Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարման մեքենան արդեն պատրաստ էր»*:

Հայրենիքի վերականգնման ջանքերը: 1917 թ. հայկական կազմակերպությունները մեծ գործ կատարեցին ավերված բնակավայրերը վերականգնելու և վերաբնակեցնելու ուղղությամբ: Աշնան վերջերին հայկական մարզերում մոտ 300 հազար հայ բնակչություն կար: Ժամանակավոր կառավարությունը միջոցներ տրամադրեց Հայաստանի վերաշինության գործի համար, քանի որ դա ռազմական կարևոր նշանակություն ուներ Կովկասյան ռազմաճակատի մերձակա թիկունքի անվտանգությունն ապահովելու և զորքերի պարենային մատակարարման դժվարացած խնդիրը կարգավորելու տեսանկյունից:

Այսպիսի պայմաններում հայ կամավորական նախկին խմբապետերի և մարտիկների մի մասը ցանկություն հայտնեց վերադառնալու զինվորական ծառայության: Նրանց իրավունք տրվեց մտնելու ռուսական բանակի շարքերը՝ պայմանով, որ պետք է ծառայեն ընդհանուր հիմունքներով և մինչև պատերազմի ավարտը:

Արևմտահայ գավառներում կազմակերպվում էին նաև ժողովրդական միլիցիայի ջոկատներ ու կամավորական

խմբեր տեղի հայ բնակչությունից: Նրանց գլխավոր խնդիրն էր ապահովել հասարակական կարգը և պաշտպանել բնակչությանը քրդական ավազակախմբերից:

Ինքնապաշտպանական–ժողովրդական այդ զորամիավորները գլխավորեցին քաջահամբավ հայդուկները: ***Վանի*** մարզում, որի ***կոմիսարն էր Կոստի Համբարձումյանը***, տեղական զինված խմբերը ղեկավարում էին ***Լևոն Շաղոյանը*** և ***Բոլղարացի Գրիգորը***: ***Բաբերդում*** ձևավորված ջոկատի պետն էր ***Սեպուհը***, ***Երզնկայի*** ջոկատինը՝ ***Սեբաստացի Մուրադը***, ***Խնուսի*** և ***Մուշի*** ջոկատները գլխավորում էին ***Մանուկը*** և ***Մուշեղը***: Ալաշկերտի զինվորական շրջանի ոստիկանապետ էր նշանակվել ***Համազասպը***, իսկ ոստիկանական ջոկատի պետ՝ ***Սմբատը***: 1917 թ. ամռան վերջին այդ բոլոր ջոկատներում կար մոտ 5 հազար մարդ: Նրանց թվաքանակն աստիճանաբար աճում էր՝ հուսալի հենարան դառնալով Հայաստանի վերաստեղծման նվիրական գործի համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Ռուսաստանում Փետրվարյան հեղափոխության արդյունքում: Ի՞նչ տեղաշարժեր եղան Այսրկովկասում: Ներկայացրե՛ք իրավիճակը Կովկասյան ճակատում 1917 թ.:
2. Ի՞նչ դիրքորոշում ուներ Ժամանակավոր կառավարությունը ազգային հարցի նկատմամբ: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Ժամանակավոր կառավարությունը Հայկական հարցի լուծման ուղղությամբ: Համեմատե՛ք հայերի նկատմամբ միապետական Ռուսաստանի և Ժամանակավոր կառավարության վարած քաղաքականությունը: Մեկնաբանե՛ք «Ղեկավար հրահանգների» բովանդակությունը:
3. Ի՞նչ գործոններ նպաստեցին Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծմանը: Ներկայացրե՛ք Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծման նշանակությունը:
4. Ինչո՞ւ էր Ժամանակավոր կառավարությունը միջոցներ տրամադրում Հայաստանի վերականգնման համար: Հայաստանի վերականգնման նպատակով ի՞նչ քայլեր իրագործվեցին: Ի՞նչ արդյունքներ դրանք ունեցան:

§ 6. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ազգային–հասարակական կյանքի վերելքը: Հայ ժողովուրդն օգտվեց Փետրվարյան հեղափոխության ընձեռած ժողովրդավարական ազատություններից և արագ կազմակերպվեց: Բուռն վերելք ապրեց հայ հասարակական–քաղաքական կյանքը: Պայքար ծավալվեց դպրոցների ազգայնացման, աշխարհիկ կրթության հաստատման համար: Հայ ուսուցիչների նորաստեղծ միությունն առաջնահերթ սկսեց զբաղվել այդ խնդրով:

Յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն ձգտում էր երիտասարդների միջոցով ուժեղացնելու իր շարքերը և ազդեցությունը: 1917 թ. մայիսի սկզբին Բաքվում կայացած հայ ուսանողության համագումարին մասնակցում էին Ռուսաստանի 12 համալսարանական քաղաքների պատվիրակները:

Հայ հասարակական կյանքի կարևոր իրադարձություններից էր ***Հայ եկեղեցական համագումարը***, որը կայացավ ***Էջմիածնում 1917 թ. հունիսի 12–25-ը***: Այն անդրադարձավ Հայոց եկեղեցու բարեռորոգումների խնդրին, Հայկական հարցին, հայոց ազգային խորհրդաժողովի հրավիրման, կրթական և այլ հարցերի: Կաթողիկոս Գևորգ Ե-ն Ժամանակավոր կառավարությանը հղած մարտի 23-ի իր ուղերձում հույս էր հայտնել, որ վերանորոգված Ռուսաստանը քաջարի դաշնակիցների համաձայնությամբ արևմտահայ նահանգներում կստեղծի ազատ Հայաստան:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Հայ ազգային կուսակցությունները սկսեցին օրինական գործունեություն ծավալել և հստակեցրին իրենց ծրագրային նպատակները նոր պայմաններին համապատասխան:

Հայ հեղափոխական դաշնակցությունը ցարական հետադիմական վարչակարգի տապալումից հետո հետամուտ եղավ ժողովրդավարական ու ազգային իրավունքների հաստատման համար պայքարին՝ պահանջելով գործնականում ապահովել ազգերի իրավահավասարությունը, ինքնորոշման իրավունքը, պայմաններ ստեղծել ազգային կրթական և մշակութային կյանքի ազատ զարգացման համար:

Դաշնակցության առաջնահերթ նպատակը Հայկական հարցի լուծումն էր: Ըստ ՀՅԴ առաջադրած նախագծի՝ Արևելյան Հայաստանը Վրաստանի և երկրամասի թաթարների հետ միասին կազմելու էր մեկ պետական–ինքնավար դաշնային միավոր հանրապետական դաշնային Ռուսաստանի կազմում: Արևմտյան Հայաստանը լիովին ազատագրվելու էր թուրքական բռնակալությունից, իսկ անկախ Հայաստանի տարածքը կազմելու էին հայկական վեց նահանգները և Կիլիկիան: ***Հայաստանի չեզոքությունը պետք է երաշխավորվեր միջազգայնորեն, իսկ թուրքական կառավարությունը պետք է հատուցեր հայերի վնասները:*** Արևելյան Հայաստանի անկախության մասին դեռևս խոսք չկար:

Հնչակյան կուսակցությունը, ողջունելով ռուսական հաղթական հեղափոխությունը, կոչ արեց աջակցելու Ժամանակավոր կառավարությանը: Հնչակյաններն առաջնահերթ զբաղվեցին իրենց շարքերի համալրման և երկրամասում կուսակցական մարմինների ստեղծման գործով: Թիֆլիսում համախմբվեցին Մ. Նազարբեկյանը, Ռ. Խանազատը և ուրիշներ: Հնչակյան կուսակցությունը մի կողմից պաշտպանում էր սոցիալիստական հեղափոխության գաղափարը, իսկ մյուս կողմից կոչ էր անում շարունակելու պատերազմը մինչև հաղթական ավարտ: Այնուհանդերձ, Հնչակյան կուսակցության գործունեությունը հիմնականում կենտրոնացած էր Հայկական հարցի շուրջ, որի լուծումը նրանք կապում էին Թուրքիայից անջատ ինքնավար Հայաստանի ստեղծման հետ:

Հայ ազգային–քաղաքական կյանքի նորություններից էր ազատական ուղղության կուսակցության ձևավորումը: Երկրամասի հայ իրականության մեջ ազգային ազատական–ժողովրդավարական ուղղության ներկայացուցիչները համախմբվել էին «Մշակ» թերթի շուրջը: Մշակականները կամ հայ կադետները փորձում էին ղեկավարի դիրք նվաճել հայ գաղափարական ու քաղաքական կյանքում: 1917 թ. մարտին նրանք ստեղծում են ***Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ)***: Նորաստեղծ կուսակցության՝ ապրիլի սկզբին հրապա-

ռակված հռչակագրում նշվում էր, որ մինչև Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի գումարումը չպետք է առաջադրվեն ազգային, տնտեսական, դասակարգային և կրոնական պահանջներ, որոնք կջլատեն Ռուսաստանի տարբեր ազգերի ու դասակարգերի միության ուժը: Կուսակցությունը ղեկավարում էին ***Մ. Պապաջանյանը, Ս. Հարությունյանը*** և ***Հ. Առաքելյանը***:

Ազգային հարցում ՀԺԿ–ն նախատեսում էր, որ երկրամասի հայաբնակ շրջաններում հայերը պետք է ստանան քաղաքական, տարածքային լայն ինքնավարություն՝ մնալով Ռուսաստանի կազմում: ՀԺԿ–ն համարում էր, որ Հայկական հարցը միջազգային հարց է, ուստի կարող է լուծում ստանալ միջազգային վեհաժողովում՝ համաձայն արևմտահայերի ձգտումների:

Հեղափոխությունից հետո երկրամասում քաղաքական լուրջ դերակատարություն ստանձնեց նաև ***Սոցիալիստ հեղափոխականների (Էսէռներ)*** կուսակցությունը: Այն մեծ ազդեցություն ուներ Կովկասյան ճակատում և երկրամասի քաղաքներում տեղակայված բանակային զորամասերում: Ազգային հարցը հայ սոցիալիստ հեղափոխականները կապում էին Սահմանադիր ժողովի հրավիրման հետ:

Քաղաքական լուրջ հակադրություն և պայքար էր ընթանում ռուսական սոցիալ–դեմոկրատիայի երկու թևերի՝ ***բոլշևիկների*** ու ***մենշևիկների*** միջև: Մենշևիկները գրեթե միշտ խուսափում էին ազգային հարցի արծարծումից, սպասում էին աշխարհամարտի ավարտին: Իսկ բոլշևիկները առաջ էին քաշում գրավված բոլոր տարածքներից զորքերի դուրսբերման, տերությունների կազմում բռնությամբ պահվող երկրամասերին, ինչպես նաև գաղութներին ազատ ինքնորոշվելու հնարավորություն տալու պահանջները:

Արևելահայ ազգային խորհրդի ստեղծումը: Ռուսաստանի ազգային բոլոր երկրամասերում հասարակական–քաղաքական ուժերը ստեղծում էին տարաբնույթ կազմակերպություններ, որոնք իրենց ձեռքն էին վերցնում ազգային կյանքի տնօրինումը: Այս միտումից անմասն չմնացին նաև հայերը:

Երկարատև նախապատրաստությունից հետո տեղի ունեցավ նաև արևելահայերի ներկայացուցչական համաժողովը՝ Հայոց ազգային համախորհրդակցությունը: Այն գումարվեց ***Թիֆլիսում 1917 թ. սեպտեմբերի 29–ից մինչև հոկտեմբերի 13–ը***: Մասնակցում էին քաղաքական և հասարակական տարբեր կազմակերպությունների 228 պատգամավորներ, որոնց կեսից ավելին դաշնակցականներ էին:

Բազմազան էր համախորհրդակցության քննարկած հարցերի շրջանակը՝ ճակատի պաշտպանության, պարենային, փախստականության գործերի, Անդրկովկասում ինքնակառավարման մարմինների՝ զեմստվոների հաստատման մասին և այլն:

Երկրամասում լուրջ հիմնախնդիր էր սահմանների հարցը: Անհրաժեշտ էր կարգի բերել Այսրկովկասի աղավաղված ազգագրական–վարչական քարտեզը: Այդ գործում ամենից ավելի շահագրգռված էին հայերը, քանի որ նրանք բոլորից շատ էին տուժել ինքնակալության նման քաղաքականությունից: Պետրոգրադում և Թիֆլիսում տեղի ունեցած բազմաթիվ քննարկումներից հետո հրապարակ եկավ Անդրկովկասի վարչա-

կան սահմանափոխության վերաբերյալ, այսպես կոչված, ***նախարարական ծրագիրը***: Ըստ այդ ծրագրի՝ հայկական գավառներից կազմվելու էին 3 նահանգներ՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Գանձակի, որոնցում ընդգրկվելու էր երկրամասի 1,786 մլն հայերի մոտ 73 տոկոսը՝ 1,3 մլն մարդ: Հայոց համախորհրդակցությունը միաձայն հավանություն տվեց ***նախարարական ծրագրին***, որը նախատեսում էր Անդրկովկասում սահմանափոխության իրականացում և տեղական ինքնակառավարման մարմինների՝ զեմստվոների ստեղծում: Սակայն ***այդ հարցում գերակշռեց վրաց-թաթարական համագործակցությունը, և այդ ծրագիրն այդպես էլ չիրագործվեց, իսկ երկրամասի տարածքային անարդար սահմանագծումը՝ որոշ սրբագրումներով, պահպանվում է մինչ օրս***:

Համախորհրդակցության ավարտից քիչ անց, ըստ նրա որոշման, ձևավորվեց նոր մարմին՝ 35 անդամներից կազմված ***Ազգային ժողով***: Այն իր կազմից ընտրեց 15-հոգանոց գործադիր մարմին՝ ***Հայոց ազգային խորհուրդ***: Խորհրդի նախագահն էր ***Ավետիս Ահարոնյանը***, քարտուղարը՝ ***Ն. Աղբալյանը***:

Ազգային խորհրդի կազմը բազմակուսակցական էր, կային նաև անկուսակցականներ: Մեծամասնություն էին կազմում ՀՅԴ անդամները: Ազգային քաղաքական նոր մարմինների ստեղծումով ավարտվեց Հայոց ազգային բյուրոյի (1912–1917 թթ.) գործունեությունը:

Հայոց ազգային խորհրդի նստավայրը Թիֆլիսն էր: Հայաստանի վարչական կենտրոններում և Այսրկովկասի հայաբնակ քաղաքներում ձևավորվեցին ազգային խորհրդի տեղական մարմիններ:

Հայոց ազգային խորհրդին բախտ էր վիճակված դառնալու հայության գործնական կյանքը տնօրինող մի կազմակերպություն, որի հիման վրա հետագայում ձևավորվեցին Հայաստանի Հանրապետության պետական մարմինները:

Հայկական կանոնավոր զինուժի ամրապնդումը: Ժամանակավոր կառավարությունը կարևոր դեր էր հատկացրել բանակի ազգայնացման քաղաքականությանը: Դա նշանակում էր գոյություն ունեցող ազգային զորամասերի ընդլայնում և նոր զորամասերի ստեղծում: Սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին ազգայնացումը գործադրվեց ռուսաստանյան ամբողջ բանակի մասշտաբով՝ որպես պատերազմող ռուսական զորքը վերջնական փլուզումից փրկելու արմատական միջոցառում:

Հայոց ազգային խորհուրդը և ***Հայ զինվորական միությունը*** (ստեղծվել է 1917 թ. մայիսին Թիֆլիսում) եռանդուն աշխատանք ծավալեցին հայկական զորամասերի ծավալման, նոր զորամիավորների ստեղծման և, ի վերջո, հայկական բանակային կորպուսի ձևավորման նպատակով:

Դեռ 1917 թ. հունիսին Ռուսաստանի նոր իշխանությունները թույլատրել էին գոյություն ունեցող հայկական վեց հրաձգային գումարտակները վերակազմավորել վեց գնդերի: Հոկտեմբերին այդ գնդերից ստեղծվեց երկու բրիգադ, որոնց հիման վրա մեկ ամիս անց սկսվեց հայկական երկու դիվիզիաների ձևավորումը:

Այսպիսով՝ հայ քաղաքական կյանքը արձանագրեց կարևոր ձեռքբերումներ: Ստեղծվեցին ազգային երկու կենտրոնական խորհուրդներ, հայ զինվորության ղեկավար կազմակերպություն, հայկական միջավայրում սկսեց արմատավորվել ժո-

ղովրդավարությունը: Զգալի աշխատանք կատարվեց Հայկական հարցի լուծման ուղղությամբ. դրվել էր անկախ Հարաստանի ստեղծման գործընթացի սկիզբը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայ ժողովրդի հասարակական կյանքում ինչ նշանակալի իրադարձություններ տեղի ունեցան Փետրվարյան հեղափոխության ընձեռած պայմաններում:
2. Ներկայացրեք հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումն ու ծրագրային փոփոխությունները պատմական նոր իրադրության մեջ: Համեմատեք և մեկնաբանեք հայ քաղաքական կուսակցությունների տեսակետները:
3. Ներկայացրեք Արևելահայ ազգային խորհրդի ստեղծման գործընթացը և հետագա գործունեությունը: Ինչ նշանակություն ունեցավ Հայոց ազգային խորհուրդը:
4. Ո՞րն էր ռուսական բանակի ազգայնացման քաղաքականության նպատակը: Ինչ գործունեություն ծավալեցին այդ ուղղությամբ Հայոց ազգային խորհուրդը և Հայ զինվորական միությունը:
5. Համեմատեք և գնահատեք Արևելահայ և Արևմտահայ ազգային խորհուրդների գործունեությունը հետփետրվարյան ժամանակաշրջանում: Ինչ արդյունքներ ունեցավ այդ գործունեությունը:

§ 7. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Իրադրությունը Այսրկովկասում: 1917 թ. աշնանը Ռուսաստանը հայտնվել էր խորը ճգնաժամի մեջ: Բոլշևիկների կուսակցությունը Պետրոգրադում հաջողությամբ իրականացրած հեղաշրջման շնորհիվ ***1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին)*** կարողացավ իշխանությունը վերցնել իր ձեռքը: Բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինի գլխավորությամբ ստեղծվեց կառավարություն՝ ***ժողովրդական կոմիսարների խորհուրդը:*** Ընդունվեցին հաշտության, հողի, Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին օրենքներ (դեկրետներ՝ հրովարտակներ): Այսպես սկիզբ դրվեց Ռուսաստանի պատմության խորհրդային շրջանին:

Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքական ուժերը բոլշևիկյան հեղաշրջումը համարեցին դավաճանական քայլ: Նրանց կարծիքով երկիրը շեղվեց զարգացման ժողովրդավարական ուղուց:

Ռուսաստանի կենտրոնում կատարված իշխանափոխությամբ Այսրկովկասում առաջացավ իշխանական ճգնաժամ: Այն հաղթահարելու նպատակով Թիֆլիսում 1917 թ. նոյեմբերին գումարվեց երկրամասի քաղաքական և ռազմական ուժերի ներկայացուցիչների խորհրդակցություն: ***Նոյեմբերի 15-ին*** կազմավորվեց գործադիր նոր մարմին, որը կոչվեց ***Անդրկովկասյան կոմիսարիատ***, իսկ ԱՀԿ-ն լուծարվեց: Անդրկոմիսարիատի նախագահ ընտրվեց մենշևիկ ***Գեգեչկորին:*** Կոմիսարիատում գլխավոր պաշտոնները զբաղեցնում էին վրացի մենշևիկները, էսէռների և թաթար մուսավաթականների ներկայացուցիչները: Անդրկոմիսարիատի 12 կոմիսարներից

երեքը (Խ. Կարճիկյան, Հ. Օհանջանյան, Գ. Տեր-Ղազարյան) հայեր էին:

Ընդհանուր առմամբ նոր գործադիր մարմինը չկարողացավ բարելավել երկրամասի իրավիճակը: Յուրաքանչյուր ազգի գործերի տնօրինությունն անցավ իր ազգային խորհրդի ձեռքը, որով վերջնականապես անզորացավ, հեղինակազրկվեց Անդրկոմիսարիատը: Վերջինս ըստ էության դարձավ լոկ վրացի մենշևիկների կամակատարը:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո Այսրկովկասում ձևավորվել էր ռազմաքաղաքական չափազանց բարդ իրադրություն: Վրացի մենշևիկների, ինչպես նաև նրանց աջակից մուսուլմանական ուժերի գործելակերպը ծանր հետևանքներ ունեցավ: Անդրկոմիսարիատը հաշտության բանակցություններ սկսեց Թուրքիայի հետ: ***1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում ստորագրվեց զինադադարի համաձայնագիր***. ռազմական գործողությունները դադարեցվում էին մինչև վերջնական հաշտության կնքումը:

Զինադադարից հետո կովկասյան ռուսական զորքերը սկսեցին լքել իրենց դիրքերը, և շատ արագ ճակատային գիծը փլուզվեց: Եթե 1917 թ. դեկտեմբերի 1-ին ռուսական կովկասյան զորքի մարտակազմում առկա էր մոտ 158 հազար զինվորական, ապա մեկ ամիս անց ճակատի հայկական հատվածի պաշտպանական դիրքերում մնացել էր ընդամենը 17 հազար զինվորական: Կովկասյան ճակատի պաշտպանության գործը, այսպիսով, մնաց միայն հայկական ազգային զորամիավորումների հույսին:

«Թուրքահայաստանի մասին» հրովարտակը: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ***1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը***: Դեռևս նոյեմբերին ստեղծվել էր հանձնաժողով, որի կազմում էին տարբեր կուսակցությունների հայազգի գործիչներ՝ բոլշևիկներ Վառլամ Ավանեսյանը, Վահան Տերյանը, Սարգիս Լուկաշինը, ձախ էսէռ Պողոս Պողոսյանը (Պերճ Պողոսյանի որդին), ՀՅԴ ներկայացուցիչ Ռոստոմը: Այդ հանձնաժողովն էլ մշակեց Արևմտյան Հայաստանի մասին հրովարտակի նախագիծը:

Բոլշևիկյան կառավարությունը, ըստ հրովարտակի, պաշտպանում էր պատերազմի ժամանակ գրավված հայկական մարզերի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն: Դրա իրագործումը հնարավոր էր համարվում միայն մի շարք նախնական երաշխիքների դեպքում՝ ռուսական զորքերի դուրսբերում Արևմտյան Հայաստանից, հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմավորում և բռնագաղթված հայության վերադարձ հայրենի եզերք: ***Ստեփան Շահումյանին***, որը դեկտեմբերի 16-ին նշանակվել էր ***Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար***, հանձնարարվում էր ամեն տեսակի օգնություն ցույց տալ գրավված մարզերի հայ բնակչությանը: Հրովարտակի դրական նշանակությունը թերևս այն էր, որ Խորհրդային Ռուսաստանը պաշտոնապես ճանաչում էր հայ ժողովրդի ազատ ինքնորոշման և ազգային անկախ պետություն ունենալու իրավունքը:

Սակայն Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև 1917 թ. դեկտեմբերի սկզբներից ընթացող հաշտության բանակցությունների պայմաններում, երբ ռուսական կողմը պարտվողական կեցվածք էր ընդունել, այս հրովարտակը

վերածվեց ձևական փաստաթղթի: Իսկ Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրսբերումը զրոյի էր հավասարեցնում բոլշևիկյան հրովարտակը. փաստացի դա նշանակում էր հայկական մարզերի վերադարձ օսմանյան Թուրքիային:

Արևմտահայ զորամիավորման ստեղծումը: Կովկասյան ռազմաճակատի ռուսական հրամանատարությունը, հանդես գալով ռուսական մեծապետական շահերի պաշտպանության դիրքերից, ձեռնարկեց քայլեր, որպեսզի պահպանի երեք տարվա ընթացքում ռուսական զորքերի նվաճած բնագծերը Հայաստանում: Այդ տեսանկյունից կովկասյան բանակի հրամանատարության դիրքորոշումը համընկնում էր հայության կենսական շահերին: Գլխավոր հրամանատար ***Պրժևալսկու 1917 թ. դեկտեմբերի 7-ի*** գաղտնի հրամանի համաձայն՝ սկսվեց նվաճված մարզերի հայ բնակչությունից չորս գնդերի կազմավորումը:

Մի քանի օր անց Արևմտահայ խորհուրդը որոշում կայացրեց ստեղծել ***արևմտահայ զորաբաժին (դիվիզիա)***: Այս գործի համար ստեղծվեց գործադիր նոր մարմին՝ ***Հայաստանի ապահովության խորհուրդը:*** Արևմտահայերից կազմակերպվող դիվիզիայի հրամանատար նշանակվեց ***Անդրանիկ Օզանյանը***: Նրան շնորհվեց գեներալ-մայորի աստիճան:

Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և հայկական հողերի բռնակցումը Թուրքիային: Խորհրդային Ռուսաստանը յուրատիպ մոտեցումներ դրսևորեց արտաքին քաղաքականության բնագավառում: Խզելով իր հարաբերությունները դաշնակից Անտանտի տերությունների հետ՝ բոլշևիկները 1917 թ. դեկտեմբերի սկզբին Բրեստ-Լիտովսկում զինադադար կնքեցին Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ: Դրանից հետո հաշտության բանակցություններ սկսվեցին նրանց միջև:

Այս ամենն ուներ գաղափարական հիմնավորում՝ հրահրել համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն և աշխարհամարտն ավարտել արդարացի հաշտության պայմանագրով: Բոլշևիկների համար Արևմտյան Հայաստանի խնդիրը երկրորդական էր, թեև Հայկական հարցը քննարկման առարկա էր բանակցությունների ողջ ընթացքում: Խորհրդային Ռուսաստանը նախ պարտավորվեց իր զորքերը դուրս բերել Ավստրո-Հունգարիայի, Օսմանյան կայսրության և Իրանի տարածքներից:

Բանակցությունների երկրորդ փուլում (1918 հունվար-փետրվար) գերմանական կողմը հրաժարվեց բոլշևիկների առաջ քաշած «հաշտություն առանց բռնակցումների և ռազմատուգանքների» սկզբունքը ընդունելուց: Խորհրդային պատվիրակության նոր ղեկավար, արտաքին գործերի ժողկոմ ***Լև Տրոցկին*** հայտարարեց հաշտության կնքումից հրաժարվելու և խորհրդային իշխանությանը ենթակա բանակի լիակատար զորացրման մասին: Գերմանական պատվիրակությունը Տրոցկու կողմից հաշտության պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելը համարեց զինադադարի ընդհատում: Եվ Քառյակ միությունը չհապաղեց օգտվելու պատեհ առիթից. Գերմանիան հարձակման անցավ Պետրոգրադի ուղղությամբ, իսկ թուրքական զորքը ***1918 թ. հունվարի 28-ին (նոր տոմարով՝ փետրվարի 10-ին)*** վերսկսեց պատերազմը Կովկասյան ճակատում:

Բանակցությունների ժամանակ գերմանական դաշինքի պատվիրակները Ժողկոմխորհի ներկայացուցիչներից պահանջեցին ճանաչել Անդրկովկասի անկախությունը: Միաժամանակ անկախանալու խնդիր դրվեց նաև Անդրկովկասի կոմիսարիատի առջև: Կոմիսարիատն ընդունեց հակասական մի որոշում, որով երեք շաբաթ ժամանակ էր խնդրում. հարցի պատասխանը պետք է տար գումարվելիք Սեյմը: Իսկ թուրքական զորքերը շարունակում էին իրենց առաջխաղացումը:

Ի վերջո՝ շուրջ երեք ամիս տևած բանակցությունների արդյունքում ***1918 թ. մարտի 3-ին*** (նոր տոմարով) ***Բրեստ-Լիտովսկում*** ստորագրվեց հաշտության պայմանագիր Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև: Անտանտի նախկին անդամ Ռուսաստանը, անջատ հաշտություն կնքելով, դուրս եկավ Առաջին աշխարհամարտից:

Հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածով և ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի համաձայն՝ օսմանյան Թուրքիային անցան Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերը: Ռուսաստանը պարտավորվեց իր զորքերը շուտափույթ դուրս հանել ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Կարսի և Բաթումի մարզերից: Ըստ լրացուցիչ պայմանագրի՝ Ռուսաստանը պարտավորվում էր նախկին պետական սահմանից որոշակի հեռավորության վրա գտնվող տարածքից հանել բոլոր ուժերը, զորացրել հայկական կամավորական ջոկատները, Կովկասում պահել ընդամենը մեկ դիվիզիա: Իսկ օսմանյան Թուրքիան իր բանակը պահելու էր պատերազմական վիճակում, քանի որ Անտանտի դեմ պատերազմը շարունակվում էր:

Այսպիսով՝ Բրեստի հաշտության պայմանագրով ոտնահարվեցին հայ ժողովրդի իրավունքները, բոլշևիկները գործարքի գնացին Ռուսաստանի երեկվա թշնամիների հետ, որպեսզի պահպանեն իրենց իշխանությունը: Երբ ստորագրվեց այդ չարաբաստիկ պայմանագիրը, ռուսական զորքն արդեն լքել էր Կովկասյան ճակատը: Վրաց ազգայնական մենշևիկներն ու պանթյուրքիստ մուսավաթականները, գործելով միասնաբար, փաստորեն Հայաստանը և հայ ժողովրդին թողեցին միայնակ թուրքական վտանգի առջև:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղաշրջումը: Ինչ փոփոխություններ տեղի ունեցան Ռուսաստանում: Ինչպես ընդունվեց հեղաշրջման փաստն Այսրկովկասում և ինչ փոփոխություններ կատարվեցին երկրամասում:
2. Երբ կնքվեց և ինչ էր նախատեսում Երզնկայի զինադադարը: Ներկայացրեք և մեկնաբանեք Կովկասյան ճակատի մերկացման գործընթացը: Ինչ գործոններով էր այն պայմանավորված, ինչ հետևանքներ ունեցավ:
3. Երբ է ընդունվել «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը, ովքեր էին կազմել: Արդյո՞ք այն իրագործելի էր. ինչո՞ւ: Հիմնավորեք ձեր պատասխանները: Ինչ իրատեսական առաջարկներով կլրացնեիք այդ փաստաթուղթը:
4. Ներկայացրեք արևմտահայ զորամիավորման ձևավորման գործընթացը:

5. Ինչ մոտեցումներ ցուցաբերեց Խորհրդային Ռուսաստանն իր արտաքին քաղաքականության մեջ: Ներկայացրեք և մեկնաբանեք Բրեստ–Լիտովսկի հաշտության բանակցությունները: Ինչ հետևանքներ ունեցավ Բրեստ–Լիտովսկի պայմանագիրը: Գնահատեք այն:

§ 8. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՍԿԶԲԻՆ

Իշխանության համար պայքարը երկրամասում: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում իշխանության համար կատաղի պայքար էր ընթանում, որն ընդունեց ավելի շատ ազգամիջյան, քան գաղափարական ու քաղաքական պայքարի երանգավորում:

Վրացի մենշևիկներն ու բոլշևիկները նպատակադրվել էին Կովկասում հաստատել վրացական գերիշխանություն: Երկրամասում ձևավորված վրաց–թաթարական դաշինքի համար առավել վտանգավոր մրցակից էր դիտվում ՀՅԴ-ն: Նա էր տնօրինում Կովկասյան ճակատում առկա և շարունակաբար ամրապնդվող իրական ռազմական ուժը՝ ի դեմս հայկական կանոնավոր զինուժի: Ոչ պակաս վտանգ էին ներկայացնում նաև երկրամասի բոլշևիկների առաջնորդ Ս. Շահումյանը և նրա համախոհները: Բոլշևիկների համար Բաքվից հետո օրակարգի խնդիր էր դարձել իշխանության գրավումը նաև Թիֆլիսում: Սակայն այդ հարցում նրանք հաջողություն չունեցան:

Այս իրավիճակում երկրամասի իշխանության կառուցվածքում տեղի ունեցավ փոփոխություն: Ռուսաստանի Սահմանադիր ժողովի տեղական պատգամավորներից կազմվեց երկրամասի օրենսդիր բարձրագույն մարմին՝ ***Սեյմը***, որը սկսեց գործել ***1918 թ. փետրվարի 10-ից***: Սեյմի կազմում կար՝ 36 մենշևիկ, 30 մուսավաթական, 27 դաշնակցական, 19 էսէռ և այլն: Սեյմի նախագահն էր մենշևիկ ***Չխեիձեն***, իսկ գործադիր մարմնի՝ նորակազմ կառավարության նախագահը՝ նույն ***Գեգեչկորին***: Սեյմը չճանաչեց Ռուսաստանի խորհրդային կառավարությունը:

Վրացի մենշևիկները իշխանությունը Թիֆլիսում գրավելու մեղադրանք ներկայացրեցին երկրամասի բոլշևիկների առաջնորդ Ս. Շահումյանին և հետապնդում սկսեցին նրա դեմ: Վերջինս, խուսափելով ֆիզիկական հաշվեհարդարից, մարտի սկզբներին հարկադրված էր վերադառնալ Բաքու:

Հայկական միասնական ճակատի ստեղծման խնդիրը: Երկրամասում խորհրդային իշխանության հաստատման խնդիրը սերտորեն կապված էր նաև Արևմտյան Հայաստանի հարցի հետ: Շահումյանը ռուսական բանակի կողմից ռազմաճակատը լքելու իրադրությունում առաջարկեց դաշնակցությանը ***միասնական ճակատով*** հանդես գալ ընդդեմ թուրքերի: 1918 թ. հունվարի սկզբներին Թիֆլիսում այդ խնդրի շուրջ բանակցեցին ՀՅԴ ներկայացուցիչներ Ռ. Տեր–Մինասյանը, Հ. Ջավրյանը, Ա. Ջամալյանը և հայ բոլշևիկներ Ս. Շահումյանը, Ս. Կասյանը, Դ. Շահվերդյանը: Այդ ընթացքում Երևանից ստացվեց Արամի, իսկ Բաքվից՝ Ռոստոմի կարծիքը: Հայ գործիչները համաձայնության եկան՝ ստեղծել անկախ

Գեներալ Հակոբ Բագրատունի

Գեներալ Մովսես Սիլիկյան

Արևմտյան Հայաստան, իսկ Կովկասում՝ հայկական ինքնավարություն: Կողմերը մշակեցին նաև համատեղ գործողությունների ծրագիր:

Միասնական հայկական ճակատ գործնականում ստեղծվեց Բաքվում, որտեղ Ռոստոմը, գեներալ Հակոբ Բագրատունին, Համազասպը, Սեբաստացի Մուրադը և տեղի ***Հայոց ազգային խորհուրդը*** համագործակցեցին ***Շահումյանի*** գլխավորած խորհրդային իշխանության հետ: 1918 թ. սկզբներից թուրք–թաթարական ուժերի կողմից շրջափակվել էր Բաքու–Թիֆլիս երկաթուղին: Այդ պատճառով ռուսական Արևմտյան ճակատից զորացրված կամ հայկական զորամասերում ծառայելու համար երկրամաս ժամանած հազարավոր հայ զինվորներ կուտակվեցին Բաքվում: Ս. Շահումյանի և Բաքվի Հայոց ազգային խորհրդի միջև կնքված համաձայնությամբ տեղում կազմավորված հայկական 15–հազարանոց զինուժը միացավ Բաքվի կոմունայի զորքին: Հայկական զորամասերի շնորհիվ է, որ թուրքերը մինչև 1918 թ. սեպտեմբերի կեսերը չէին կարողանում գրավել Բաքուն:

Հայկական միասնական ճակատի մյուս ուսանելի օրինակը տվեց Երևանի նահանգը:

Հայկական կանոնավոր զորքի ստեղծումը: Հայաստանի ապագայով մտահոգ ազգային քաղաքական ու զինվորական մարմինները դեռ Ժամանակավոր կառավարության օրոք բարձրացրել էին հայկական բանակային կորպուս ստեղծելու հարցը: Երկարատև ջանքերի շնորհիվ հաջողվեց ձեռք բերել այդ իրավունքը: Ռուսական բանակի գերագույն շտաբի ***1917 թ. նոյեմբերի 16–ի*** հրամանով Կովկասյան ճակատում թույլատրվեց կազմավորել ***Հայկական կորպուս:*** Հրամանատար նշանակվեց գեներալ ***Թոփման Նազարբեկյանը,*** իսկ ***Դրոն՝*** գոյություն ունեցող և ստեղծվելիք հայկական բոլոր զորամասերի կոմիսար: Հայ ազգային և զինվորական բոլոր կազմակերպությունները եռանդուն գործունեություն ծավալեցին հայ զինվո-

ությանը Կովկասյան դատարկվող ճակատում կենտրոնացնելու ուղղությամբ:

Հայոց ազգային խորհուրդը ***1917 թ. դեկտեմբերի վերջին*** Թիֆլիսից Երևան գործուղեց ***Արամ Մանուկյանին՝ օժտելով նրան արտակարգ լիազորություններով***: Երևանի Հայոց ազգային խորհրդի նիստում ունեցած ելույթում Արամը, անդրադառնալով ընթացիկ իրավիճակին, նշեց. *«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար... Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»*:

Երևանի ազգային խորհուրդն ընտրեց արտակարգ լիազորություններով օժտված ***Հատուկ կոմիտե***՝ երեքամսյա ժամկետով: Հատուկ կոմիտեն դարձավ Երևանի նահանգի միակ իրական իշխանությունը:

Հայկական կորպուսի ճակատային և պահեստային զորամասերի կազմավորման գլխավոր վայրը դարձավ Երևանի նահանգը: 1918 թ. հունվարի երկրորդ կեսին Երևան ժամանեց գեներալ ***Մոխսա Սիլիկյանը*** և ստանձնեց կորպուսի առաջին դիվիզիայի զորամասերի ու սպայակույտի ձևավորման ղեկավարությունը: Երևան եկավ նաև ***Դրոն***:

Միմյանց հետ սերտորեն համագործակցելով՝ Արամը, գեներալ Սիլիկյանը և Դրոն կարողացան շոշափելի գործ կատարել: Դրոյի անմիջական ջանքերով ստեղծվեցին պատժիչ զորաջոկատներ՝ Երևանի նահանգում եղած դասալիքներին հայտնաբերելու և կորպուսի շարքերը համալրելու համար: Հայկական զորամասերի մի զգալի մասը հարկադրված էր զբաղվել նահանգի մուսուլմանների խռովությունները ճնշելով և Ալեքսանդրապոլ–Ջուլֆա երկաթուղու ապաշրջափակմամբ: Ճակատային տեղամաս չկարողացավ տեղափոխվել նաև կորպուսի ***երկրորդ դիվիզիայի*** (հրամանատար՝ գեներալ ***Մ. Արեշյան***) սպայակույտը: Այն կայանեց Ալեքսանդրապոլում: 1918 թ. փետրվարի 25–ին Թիֆլիսից այդտեղ հասավ նաև Հայկական կորպուսի սպայակույտը:

Պատերազմի վերսկսումը Կովկասյան ճակատում: Բրեստի հաշտության բանակցությունների շրջանում, ինչպես գիտեք, թուրքերը, օգտվելով դաշնակից Գերմանիայի աջակցությունից և հետևելով նրա օրինակին, խախտեցին զինադադարը Կովկասյան ճակատում: Թուրքական զորամասերը 1918 թ. հունվարի 28–ին անցան ճակատային գիծը ***Երզնկայի*** ուղղությամբ և հարձակվեցին հայկական ուժերի վրա: Շուտով նրանք մոտեցան Երզնկային, որտեղ կար մոտ 3 հազար հայ զինվոր՝ գնդապետ Ն. Մորելի հրամանատարությամբ: Համառ դիմադրությունից հետո զորքը և հայ բնակչությունը նահանջեցին դեպի Էրզրում:

Գնահատելով Էրզրումի ռազմավարական նշանակությունը՝ Հայոց ազգային և Հայաստանի ապահովության խորհուրդներն ***Անդրանիկին*** նշանակեցին տեղի պաշտպանական շրջանի ղեկավար: Փետրվարի 10–ին Անդրանիկը ժամանեց ***Էրզրում***, ինչը ոգևորեց քաղաքի և շրջանի հայ բնակչությանը: Սակայն հայկական զորամասերին չհաջողվեց թշնամու գերակշիռ ուժերին հետ մղել: ***Փետրվարի 27–ին*** թուրքերը գրավեցին ***Էրզրումը***:

Էրզրումի անկումից հետո հայկական մյուս զորամասերը նահանջեցին նաև Խնուսից, Մանազկերտից ու Ալաշկերտից,

իսկ մարտի վերջերին՝ Վանի շրջանից: Թուրքիան սկսեց անմիջապես սպառնալ Արևելյան Հայաստանին:

Մեր հայրենիքի արևմտյան մասը հնարավոր չեղավ պաշտպանել նախ և առաջ Խորհրդային Ռուսաստանի բրեստյան պարտվողական քաղաքականության և մենշևիկների ու մուտավաթականների հակահայկական դաշինքի պատճառով:

Երբ վերսկսվեց պատերազմը Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում, հայկական կանոնավոր զորամասերի համալրումը դեռ չէր ավարտվել, իսկ նրանց զգալի մասն էլ ճակատային թիկունքում էր: Այդ պատճառով դեռևս սակավաթիվ հայկական ուժերը չկարողացան միայնակ պահել 400 կմ երկարությամբ ճակատային գիծը (նախկինում այն պահում էին ռուսական հինգ կորպուսներ):

Հայկական զորքի վերակազմակերպումը: Այսրկովկասի իշխանությունները պատերազմի վերսկսման շրջանում անհրաժեշտ քանակությամբ կռվող ուժ չէին ապահովել: Երկրամասում ձևավորվող ազգային չորս կորպուսները, բացառությամբ հայկականի, լուրջ մարտական ուժ չէին ներկայացնում:

Թշնամու առաջխաղացման պայմաններում տեղի ունեցավ հայկական ուժերի վերակազմակերպում: 1918 թ. մարտի 1–ին Հայկական կորպուսի և Հատուկ հավաքական ջոկատի միավորմամբ ստեղծվեց ***Առանձին հայկական կորպուսը՝ Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ:*** Գեներալ Նազարբեկյանը միաժամանակ նշանակվեց Արևմտյան Հայաստանից մինչև Սև ծով ձգվող ճակատի գլխավոր հրամանատար՝ փոխարինելով ապաշնորհ գեներալ Օղիշելիձեին:



Հովհաննես Քաջազնունի

Անդրանիկը ձևավորեց նոր ջոկատ՝ ***Հայկական առանձին հարվածային զորամասը,*** որի կազմը շատ արագ հասավ 3500–ի: Առանձին հայկական կորպուսի շարքերը շուտով համալրեցին նաև փոքրաքանակ ռուսական, էստոնական, հունական և մի քանի այլ ազգային ջոկատներ, տարբեր ազգությունների սպաներ, զինվորներ: Այսպիսով՝ հայկական զորքի կազմում թուրքերի դեմ կռվում էին նախկին ռուսական բանակի ոչ հայազգի հարյուրավոր զինվորականներ:

Նազարբեկյանն իր կորպուսի զորամասերով զբաղեցրեց ճակատի ամենամեծ տեղամասը՝ ***Օլթի–Նախիջևան–Մակու*** հատվածը: Վրացական կորպուսին հանձնարարվեց պաշտպանել Օլթի–Բաթում հատվածը:

1918 թ. մայիսի սկզբներին Կովկասյան ճակատում ռուսական զորքին փոխարինած հայկական զորքի թիվը հասնում էր ***42–43 հազարի:*** Դրանից Առանձին հայկական կորպուսի կազմում էր մոտ 25 հազարը, Բաքվի կոմունայի զորքերի կազմում՝ 15 հազարը, իսկ Իրանի տարածքում՝ 2–3 հազարը:

Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից: Անդրկովկասի Սեյմը չճանաչեց Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագիրը և որոշեց օսմանյան Թուրքիայի հետ առանձին հաշտություն կնքել: Սեյմի հաստատած պատվիրակության նախագահն էր ***Ա. Չխենկելին***: Հայերից դրա կազմում ընդգրկված էին ***Հովհաննես Քաջազնունին*** և ***Ալեքսանդր Խատիսյանը***: Բանակցությունների վայր ընտրվեց արդեն թուրքերի կողմից գրավված ***Տրապիզոնը***:

Տրապիզոնի բանակցությունները որոշ ընդմիջումներով ընթացան ***1918 թ. մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը***: Հենց սկզբից ակնհայտ դարձավ օսմանյան Թուրքիայի զավթողական կեցվածքը: Թուրքերը պնդում էին Բրեստ–Լիտովսկի պայմանների ճանաչումը և Անդրկովկասի անկախության հռչակումը: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցին, ապա թուրքերը դա համարում էին իրենց ներքին խնդիրը և կտրականապես դեմ էին դրա քննարկմանը: Նման իրավիճակում Անդրկովկասի Սեյմն ընդհատեց բանակցությունները և ***ապրիլի 1-ին*** երկրամասը հայտարարեց ռազմական դրության մեջ: Փաստացի դա նշանակում էր ***պատերազմի հայտարարում Թուրքիային***:

Սակայն թուրք–անդրկովկասյան պատերազմն ընթացավ թուրքերի օգտին: Թուրքական զորամասերը շուտով անցան 1914 թ. պետական սահմանը և գրավեցին Բաթումը: Վրացական կորպուսը, որ այդ պահի դրությամբ արդեն ուներ 10–12 հազար մարտիկ, չկարողացավ կանգնեցնել թշնամուն: Իսկ Այսրկովկասի թաթարները և պանթյուրքիզմով առաջնորդվող նրանց ղեկավար մուսավաթականները բացահայտ թշնամական դիրք բռնեցին հայերի հանդեպ:

Ռազմաքաղաքական ծանր դրության մեջ ***Ալեքսանդրապոլում 1918 թ. ապրիլի 6-8-ը*** տեղի ունեցավ հայ ազգային–քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն: Այն նվիրված էր ճակատի պաշտպանության, Անդրկովկասի անկախության և այլ կենսական հարցերի քննարկմանը: Խորհրդակցության մասնակիցների մեծամասնությունը հանդես եկավ Անդրկովկասն անհապաղ անկախ հռչակելու թուրքական պահանջի դեմ: Սակայն Սեյմը, ուր գերակշռում էր վրաց–թաթարական խմբավորումը, ***1918 թ. ապրիլի 9(22)-ին*** հայտարարեց Ռուսաստանից երկրամասը անջատելու և անկախ հռչակելու մասին: Ստեղծվեց ***Անդրկովկասի Ժողովրդապարական Դաշնային Հանրապետությունը (ԱԺԴՀ)***, որի մեջ մտան նախկին ցարական Ռուսաստանի կազմում գտնվող հայկական, վրացական և արևելաանդրկովկասյան տարածքները: Հաստատվեց ԱԺԴՀ–ի կառավարություն՝ Ա. Չխենկելու գլխավորությամբ: Վերջինս հրամայեց ամբողջ ճակատի երկայնքով դադարեցնել ռազմական գործողությունները: Որոշվեց Բաթումում Թուրքիայի հետ վերսկսել ընդհատված բանակցությունները:

Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից ավելի սանձարձակ դարձրեց թուրքերի գործողությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ցո՛ւյց տվեք Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո երկրամասում ձևավորված քաղաքական պայքարի գլխավոր առանձնահատկությունը: Ե՞րբ սկսեց գործել Սեյմը, ներկայացրե՛ք նրա կազմը:
2. ՀՅԴ–բոլշևիկներ բանակցությունների արդյունքում ի՞նչ որոշվեց միասնական հայկական ճակատ ստեղծելու ուղղությամբ: Ձեր կարծիքով ինչո՞ւ այն ամբողջապես հնարավոր չեղավ իրականացնել:
3. Ե՞րբ և պատմական ի՞նչ պայմաններում ձեռք բերվեց Հայկական կորպուս կազմավորելու իրավունքը: Ովքե՞ր նշանակվեցին կորպուսի հրամանատար և ընդհանուր կոմիսար: Ի՞նչ լիազորություններով էր օժտված Երևանի Հատուկ կոմիտեն:
4. Ձեր կարծիքով ինչո՞ւ Անդրանիկը նշանակվեց Էրզրումի պաշտպանական շրջանի ղեկավար: Ինչո՞ւ հնարավոր չեղավ Արևմտյան Հայաստանի պաշտպանությունը:
5. Ո՞ր ուժերից ձևավորվեց Առանձին հայկական կորպուսը: Ներկայացրե՛ք կորպուսի կառուցվածքը և հրամանատարական կազմը: Ձեր կարծիքով ինչո՞ւ հայկական կորպուսը համալրվեց նախկին ռուսական բանակի այլազգի զինվորականներով: Որքա՞ն էր Կովկասյան ճակատում ստեղծված հայկական զորքի ընդհանուր թիվը:
6. Ինչո՞ւ ձախողվեցին Տրապիզոնի բանակցությունները: Ձեր կարծիքով ինչո՞ւ անդրկովկասյան զորքը անհաջողության մատնվեց պատերազմի սկզբնական շրջանում: Ի՞նչ որոշում կայացրեց Ալեքսանդրապոլում տեղի ունեցած հայ ազգային քաղաքական ուժերի խորհրդակցությունը: Ե՞րբ երկրամասն անջատվեց Խորհրդային Ռուսաստանից:

§ 9. 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

Թուրք–անդրկովկասյան պատերազմի վերաճումը թուրք–հայկականի: Օսմանյան Թուրքիան, օգտվելով Կովկասյան ճակատում ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունից, շարունակում էր հետամուտ լինել իր պանթյուրքական ծրագրին: 50–հազարանոց թուրքական «Կարս» զորամիավորումն առաջադրանք էր ստացել նվաճելու ամբողջ Արևելյան Հայաստանը, հասնելու Բաքու, Դաղստան և Հյուսիսային Իրան:

Հայկական զորքը մնացել էր միայնակ թուրքական բանակի, քուրդ, թուրք և թաթար ավազակախմբերի դեմ, որոնք հարվածում էին թե՛ ճակատից, թե՛ թիկունքից: Երեքշաբաթյա համառ մարտերից հետո՝ 1918 թ. ապրիլի 10–ին, թուրքական զորամասերը գրավեցին ***Սարիղամիշը***, այնուհետև ուղղություն վերցրին դեպի Կարս: ԱԺԴՀ–ի կառավարությունն ընդունեց թուրքական կողմի պայմանները և համաձայնվեց դատարկել Կարսի մարզը, զորքերը հետ քաշել մինչև Ախուրյան գետը: ***Ապրիլի 12(25)–ին Կարսն*** առանց կռվի հանձնվեց թուրքերին (1918 թ. ապրիլի 18–ից Այսրկովկասում ներդրվեց նոր տոմարը. այդ օրը համարվեց մայիսի 1–ը: Այդուհետ ամսաթվերը տրված են նոր տոմարով): Այդ կարևորագույն հենա-

Սարդարապատի ջոկատի հրամանատար Դանիել Բեկ–Փիրումյան

կետի հանձնումը թշնամուն ռազմաքաղաքական խոշոր սխալ էր:

Անդրկովկասի իշխանությունները վերսկսեցին թուրքերի հետ հաշտության բանակցությունները, որոնք այս անգամ ընթացան ***Բաթումում 1918 թ. մայիսի 11–ից մինչև հունիսի 4–ը***: Բանակցություններին մասնակցում էին Գերմանիայի, Օսմանյան կայսրության, Անդրկովկասի Հանրապետության և Հյուսիսային Կովկասի լեռնականների միության պատվիրակությունները:

Թուրքերը, խախտելով բոլոր պայմանավորվածությունները, պահանջեցին իրենց տնօրինմանը հանձնել Կարս–Ալեքսանդրապոլ–Ջուլֆա երկաթուղին: ***Մայիսի 14–ի՝ լույս 15–ի գիշերը*** թուրքերը վերջնագիր ներկայացրին Ալեքսանդրապոլում տեղակայված հայկական զորքի հրամանատարությանը: Պահանջվում էր երեք ժամվա ընթացքում հանձնել քաղաքը և զորքը 25 կմ հեռացնել երկաթուղուց: Ալեքսանդրապոլի բերդապահ զորքի թիվն անցնում էր 6 հազարից, կար 100 գնդացիր և 134 հրանոթ: Չսպասելով վերջնագրի պատասխանին՝ թուրքերը առավոտյան սկսեցին հարձակումը և առանց լուրջ դիմադրության գրավեցին քաղաքը: Իր դաշնակցի այս քայլից դժգոհեց նույնիսկ Գերմանիան:

Սակայն թուրքական զորքը շուտով հանդիպեց հայկական զորքի ամուր դիմակայությանը: Առաջին հաղթական մարտերը թշնամու դեմ տեղի ունեցան ***Ջավախքում*** և ***Շիրակում***:

Մայիսի 7–ին թուրքերը Ջավախք ներխուժեցին հարավ–արևմուտքից: Ախալքալաքի գավառի հայկական ջոկատները կազմակերպեցին դիմադրություն: ***Ախալքալաքում*** դեռ 1918 թ. հունվարին ստեղծվել էր հայկական կորպուսի հրաձգային գունդ: Հայերը հատկապես համառ դիմադրություն ցուցաբերեցին ***Սաթխա*** գյուղի մատույցներում: Հայկական ուժերն ապահովեցին գավառի բնակչության տեղափոխումը հարևան շրջաններ:

Թուրքական զորամասերը շրջափակել էին ***Ախալցխան***: Ախալցխայի հայկական գումարտակը և շրջանի հայ ու վրացի բնակչությունը դիմեց ինքնապաշտպանության: Այն գլխավորում էր Ախալցխայի քաղաքապետ և Հայոց ազգային խորհրդի նախագահ ***Զորի Զորյանը***: Թուրքերին այդպես էլ չհաջողվեց գրավել Ախալցխան, մարտերը շարունակվեցին մինչև հունիսի 6–ը:

1918 թ. թուրք–հայկական պատերազմի վառ էջերից է ***Շիրակի գոյամարտը***: Այստեղ ձևավորվեց դիմադրական ճակատ: Տեղի բնակչությանը միացան Շիրակի և Արագածոտնի գյուղերում ապաստանած արևմտահայ հազարավոր գաղթականներ: Մայիսի 5–ին Տարոնի 500 կամավորները ***Սասունցի Մանուկի*** և ***Մուշեղի***

Բաշ Ապարանի ճակատամարտին նվիրված հուշահամալիրը Ապարանում

գլխավորությամբ գրավեցին ***Ներքին Թալինի*** բերդը: Նրանք կարողացան Արագածի լեռնազանգվածը մաքրել խռովարար թուրք–թաթարներից ու քրդերից, ինչը մեծ դեր խաղաց օրեր անց Սարդարապատի հաղթանակի գործում: ***Շիրակում՝ Սոգությունի (Սառնաղբյուր)*** ճակատում, հայկական ուժերի հաղթական կռիվները թուրքերի դեմ տևեցին մայիսի 16–27–ը:

Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերը: Ալեքսանդրապոլի գրավումից հետո թշնամու զորքը մտավ Արարատյան դաշտ և ուղղություն վերցրեց դեպի Երևան: Տեղում հայ բնակչությունը և Առանձին հայկական կորպուսի ***Երևանյան զորախումբը*** (հրամանատար՝ Մ. Սիլիկյան) կարողացան համախմբվել և կենաց–մահու մարտեր մղել թշնամու դեմ: Դեռ 1918 թ. մարտի 24–ին Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից Արամ Մանուկյանը հաստատվել էր Երևանի նահանգի դիկտատոր: Նա մեծ գործ կատարեց հայության ռազմական դիմակայության կազմակերպման և հայկական անկախ պետության վերաստեղծման համար:

Թշնամու հայտնվելն Արարատյան դաշտում սկզբում առաջ բերեց խուճապ և տարերային գաղթ: Ա. Մանուկյանը մեկնեց Վաղարշապատ և Ամենայն հայոց կաթողիկոսին առաջարկեց տեղափոխվել Բյուրական: ***Գևորգ Ե Սուրենյանցը***, սակայն, նախընտրեց մնալ իր ժողովրդի հետ և շարունակել պայքարը: Նրա կարգադրությամբ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի գլխավորած հոգևորականների ջոկատը մեկնեց կռվի դաշտ:

Թշնամու դեմ ոտքի էին կանգնել հայ հասարակության բոլոր խավերը՝ գյուղացին ու հոգևորականը, մտավորականն ու ռազմիկը՝ հեծյալ ջոկատի հրամանատար, ապագա մարշալ Հովհաննես Բաղրամյանը, գրող Ակսել Բակունցը, լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը և ուրիշներ:

Մայիսի 19–ին սկսվեց թուրքերի առաջխաղացումը դեպի Սարդարապատ–Երևան: Նրանց 5–րդ դիվիզիան ներխուժեց Սուրմալու: Նպատակն էր Կարակալայի ու Մարգարայի կամուրջներով դուրս գալ Երևանյան զորախմբի թիկունքը: Որոշ դիմադրությունից հետո հայկական ուժերը հետ քաշվեցին դեպի Իգդիր: Հաջորդ օրը նրանք Մարգարայի կամրջով անցան Արաքսի ձախ ափը և միացան Սարդարապատի ջոկատին: Պայթեցվեցին վարարած Արաքսի վրայի կամուրջները, և Սուրմալուն գրաված թուրքերը կտրված մնացին Սարդարապատի ռազմաբեմից:

Երևանյան զորախմբի կազմում այդ պահի դրությամբ կար մոտ ***10 հազար մարտիկ***, որից ***Սարդարապատի*** ուղղությամբ կռվում էր 5500–ը: Սիլիկյանի կենտրոնակայանը տեղակայված էր ***Վաղարշապատում*** Գևորգյան ճեմարանի շենքում: Միայն երկաթգծի երկայնքով հարձակվող թշնամին ուներ 6 հազար կանոնավոր զորք և 1500 քրդական հեծելազոր:

Մայիսի 21–ին Սարդարապատ կայարանի մոտ տեղի ունեցավ կատաղի

մարտ: Հայկական ուժերը նահանջեցին՝ հանձնելով Սարդարապատ կայարանն ու գյուղը: Գեներալ Նազարբեկյանը Ղարաքիլիսայից Մ. Սիլիկյանին կարգադրեց Էջմիածնի շրջանում կենտրոնացնել հայկական ուժերը և հակահարձակման միջոցով կանխել թուրքերի առաջխաղացումը դեպի Երևան:

Գնդապետ ***Դանիել Բեկ-Փիրումյանն*** իր զորամասերին նախապատրաստեց հակահարձակման: Մարտից առաջ կրակոտ ճառ ասաց Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը: Մայիսի 22-ի առավոտյան ժամը վեցին հայկական զորքը հարձակման անցավ և այդ օրն առաջացավ 15-20 կմ: Հաջորդ օրը հայկական զորքը հետ գրավեց ***Սարդարապատը***:

Առաջին հաղթանակը մեծ ոգևորություն առաջացրեց բնակչության ու զորքի մեջ: Մ. Սիլիկյանն իր սպայակույտով մշակեց թուրքերի շրջապատման և ջախջախման ծրագիր: Պատերազմի ճակատային այս հատվածում գործող հայկական ուժերը միավորվեցին ***Սարդարապատի ջոկատի*** մեջ՝ գնդապետ Դ. Բեկ-Փիրումյանի հրամանատարության ներքո: Մայիսի 23-ից Սիլիկյանն իր մարտակազմի մի մասն ուղարկեց Բաշ Ապարանի ճակատ: Սարդարապատի ջոկատում մնացել էին գնդապետ Պավել Բեկ-Փիրումյանի՝ մահապարտների 5-րդ գունդը, հեծյալ երկու գնդեր, Թռուցիկ Հովսեփի և Պանդուխտի հեծյալները (1000 ձիավոր), աշխարհազորայինների նորակազմ վաշտերը (ավելի քան հազար կռվող) և այլ զորամասեր: Փոխգնդապետ ***Կարապետ Հասանփաշայանի*** ղեկավարությամբ ստեղծվել էր 800-հոգանոց գունդ, որը Կոշ-Թալիշ ուղղությամբ հարվածեց հակառակորդի թիկունքին:

Սարդարապատի ճակատամարտի օրերին՝ ***մայիսի 22-ից մինչև 28-ը, թշնամին կորցրեց 3500 զինվոր և նահանջեց մոտ 60 կմ***: Թուրքերը խուճապահար անցան Ախուրյանի արևմտյան ափը: Առջևում Ալեքսանդրապոլն ու Կարսն էին:

Մայիսի 29-ին թուրքերը կարողացան հակահարձակում ձեռնարկել Արագած կայարանի վրա. տեղի ունեցան թեժ կռիվներ: Այդ օրը գեներալ Սիլիկյանը հանդես եկավ Ալեքսանդրապոլը գրավելու կոչով, սակայն հաջորդ օրը կորպուսի հրամանատար Նազարբեկյանի հրամանով հարձակումը կասեցվեց, իսկ հունիսի 2-ից դադարեցվեցին ռազմական գործողությունները հայկական և թուրքական զորքերի միջև:

Այսպիսով՝ Սարդարապատի ճակատամարտն ավարտվեց հայկական զորքի փայլուն հաղթանակով: Թուրք-հայկական պատերազմում թշնամին կրեց առաջին խոշոր պարտություն:

Մյուս հաղթական ճակատամարտը տեղի ունեցավ ***Բաշ Ապարանի*** ճակատային հատվածում: Մայիսի 20-ին գրավելով Համամլուն՝ թուրքական 39-րդ դիվիզիան, որն ուներ 9-10 հազար կռվող, Ղարաքիլիսայի փոխարեն շարժվեց դեպի Բաշ Ապարան: Նրա նպատակն էր դուրս գալ Աշտարակ-Եղվարդ-Կոտայք գիծը և Քանաքեռի գրավմամբ փակել օղակը Երևանի շուրջ:

Գեներալ Սիլիկյանը Երևանյան զորաջոկատի ուժերից 5 հազար հոգու ուղարկեց Բաշ Ապարանի ճակատային տեղամասը պահելու: Ջոկատի հրամանատար նշանակվեց Դրաստամատ Կանայանը: ***Մայիսի 23-ին*** Դրոն հասավ ռազմական գործողությունների վայր, տվեց առաջին հաղթական մարտը: Մայիսի 26-ին թուրքական զորամասերն անցան ընդհանուր հարձակման: Կատաղի մարտերը Բաշ

Գարեգին Նժդեհը իր զինակիցներով

Ապարանի ճակատում շարունակվեցին մինչև ***մայիսի 29-ը***: Ի վերջո հայկական ուժերը պարտության մատնեցին թշնամուն, որի զորամասերը նահանջեցին դեպի հյուսիս և արևմուտք: ***Բաշ Ապարանի հաջողությունը հայոց զորքի երկրորդ խոշոր հաղթանակն էր***:

Ղարաքիլիսայի հերոսամարտը: Թուրք-հայկական պատերազմի վճռական տեղամասերից էր ***Ղարաքիլիսայի ճակատը***:

Ալեքսանդրապոլի անկումից հետո գեներալ Նազարբեկյանը գեներալ Արեշյանին հրամայել էր կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի Ղարաքիլիսա, սակայն դա իրագործել չհաջողվեց: Թուրքերը, օգտվելով հայկական զորամասերի նահանջից, ***մայիսի 20-ին*** գրավեցին ***Ջաջուռը***, ինչպես նաև մահմեդական անկանոն զորախմբերի օգնությամբ՝ ***Վորոնցովկան***: Մայիսի 22-ին Առանձին հայկական կորպուսի հրամանատարը և կենտրոնակայանը գաղթականության հետ նահանջեցին ***Դիլիջան***: Անդրանիկը, որին հանձնարարված էր պահել Ղարաքիլիսայից հյուսիս ընկած հատվածը, հետ մղելով թուրքական երեք հարձակում, գաղթականության հետ անցավ Դսեղ: Թուրքական հեծելազորն առաջացավ դեպի Համամլու:

Դիլիջանում ստանալով Սարդարապատի առաջին հաղթանակի լուրը՝ ժողովուրդն ու հայկական զորամասերը ոգևորվում են: Եկեղեցու բակում տեղի է ունենում բազմամարդ հանրահավաք: Հայկական զորամասերի ու գաղթականության առջև պայքարի կոչով հանդես են գալիս Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, կապիտան Նժդեհը, գեներալ Գամազյանը:

Մայիսի 25-ին հայկական մարտական ուժերի միջոցով կազմակերպվում է ***Ղարաքիլիսայի ճակատը***: Այստեղ հայկական կողմն ուներ 7 հազար զինվոր ու սպա, 20 գնդացիր, 12 հրանոթ: Այստեղ էին 2-րդ գունդը (գնդապետ՝ Սերոբ Սամարցյան), գնդապետ Ն. Ղորղանյանի երկու հազար հեծյալները և այլ զորամասեր: Այդ բոլոր ուժերը ներկայացնում էին հայկական կորպուսի ***առաջին դիվիզիան***, որի հրամանատար նշանակվեց գնդապետ ***Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյանը***: Ղարաքիլիսայի ճակատում թուրքերն ունեին 10 հազար զինվոր ու սպա, 40 գնդացիր, 70 հրանոթ:

Առաջինը մարտի նետվեց ***Գարեգին Նժդեհը***. մայիսի 25-ին նա իր 40 հեծյալներով հարձակվեց թշնամու հեծյալների ու հետևակի մեծ ուժերի վրա: Այդպես սկսվեց Ղարաքիլիսայի հերոսամարտը: Մայիսի 26-ին Ա. Բեյ-Մամիկոնյանին հաջողվեց շրջանցել թուրքերի աջ թևը, իսկ թշնամին նահանջեց: Ն. Ղորղանյանի միաժամանակյա հարձակման հետևանքով ոչնչացվեց 200 թուրք զինվոր: Ջորքի հետ պայքարի էին դուրս եկել շրջակա գյուղերից կամավորներ, ինչպես նաև կարսեցի, շիրակցի և արևմտահայ գաղթական-

1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ



ներ: Մայիսի 28–ին թուրքերն ընդհանուր հարձակման անցան և միայն երկու օր անց գրավեցին Ղարաքիլիսան: Առանձին հայկական կորպուսի սպայակույտը հարկադրված էր Դիլիջանից տեղափոխվել Ներքին Ախտա (այժմ՝ Հրազդան): Թուրքերը շարունակեցին իրենց ցեղասպանական ծրագիրը՝ տեղի հայ խաղաղ բնակչությանը ենթարկելով զանգվածային կոտորածի:

Թուրքերը, սակայն, կրելով մեծ կորուստներ, չշարունակեցին հարձակումը Դիլիջան–Ղազախ ուղղությամբ: Թշնամին փոխեց իր հարձակման ուղղությունը դեպի Շուլավեր–Թիֆլիս: Վեհիբ փաշան 1918 թ. մայիսի 31–ին՝ Բաթումում հայկական պատվիրակության հետ հանդիպման ժամանակ, խոստովանեց. *«Դա հազվագյուտ մարտ էր այս պատերազմի պատմության մեջ... Հայերը Ղարաքիլիսայի մարտով ցույց տվեցին, որ իրենք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»*:

Մայիսյան ճակատամարտերի պատմական նշանակությունը: Դժվարին և օրհասական պայմաններում Մեծ եղեռնի և պատերազմի պատճառած մարդկային, նյութական և հոգևոր ահռելի կորուստներից ղեռևս ուշքի չեկած հայությունը կամքի մեծ ուժ դրսևորեց և ինքնակազմակերպվեց:

Հայ ժողովրդի տարբեր հատվածների, խավերի, ռազմական ու քաղաքական մարմինների միջև հաստատված միաբանության շնորհիվ ձեռք բերվեցին փառահեղ հաջողություններ: Հայ քաջարի մարտիկները, համախմբվելով մեկ զորքի մեջ, կռվեցին հարազատ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովման, Հայաստանի ազատության և անկախության համար: ***Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի շնորհիվ բնաջնջումից փրկվեց արևելահայությունը, ինչպես և Մեծ եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր արևմտահայեր: Դա հայ ժողովրդի Հայրենական պատերազմն էր:***

Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում 1918 թ. ապրիլի սկզբից պատերազմն իրականում վերաճել էր թուրք–հայկական զինված բախման: Հայկական կողմի տարած հաղթանակները ստիպեցին թուրքական կողմին Բաթումի բանակցություններում մեղմացնել իրենց պահանջները և նորահռչակ Հայաստանի Հանրապետության հետ ***1918 թ. հունիսի 4–ին կնքել հաշտության պայմանագիր***:

Այսպիսով՝ սրընթաց փոխվող իրադրությունում հայ ռազմաքաղաքական ուժերը ստանձնեցին Կովկասյան ճակատի պաշտպանության ծանր բեռը, և պատերազմի արդյունքում նորաստեղծ հայկական պետությունը փաստացի դարձավ Առաջին աշխարհամարտի մասնակից կողմ: Հետագայում այս հիմքի վրա է, որ Հայաստանի Հանրապետությունը մասնակցեց աշխարհամարտի արդյունքներն ամփոփող Փարիզի խորհրդաժողովին, իրավական (դե յուրե) ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից և իր տարածքային ու քաղաքական իրավունքները ձևակերպեց Սևրի պայմանագրով:

Մայիսյան հերոսամարտերով դրվել է ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք իրավիճակը Կովկասյան ճակատում Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում: Ինչ առաջադրանք էր ստացել թուրքական «Կարս» զորամիավորումը: Ինչո՞ւ ԱԺԴՀ–ի կառավարությունը Կարսը հանձնեց թուրքերին: Ինչ պահանջներ ներկայացրեց թուրքական կողմը մայիսի 14–ի վերջնագրով, ինչ հետևանքներ ունեցավ այն:
2. Ներկայացրեք Զավախքում տեղի ունեցած դիմադրական մարտերը: Վերհանեք Շիրակի գոյամարտի պատմական նշանակությունը:
3. Ձեր կարծիքով ինչո՞ւ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ն հրաժարվեց Բյուրական տեղափոխվելուց: Ներկայացրեք Սարդարապատի ճակատի ռազմական գործողությունները: Ցո՛ւց տվեք Սարդարապատի ճակատամարտի ռազմական նշանակությունը:
4. Նկարագրեք Բաշ Ապարանի ճակատամարտի ընթացքը և արդյունքները:
5. Ինչպիսի՞ն էր թուրք–հայկական ուժերի հարաբերակցությունը թուրք–հայկական պատերազմի՝ Ղարաքիլիսայի ճակատային հատվածում: Նկարագրեք Ղարաքիլիսայի հերոսամարտի ընթացքը, ներկայացրեք նրա նշանակությունը:
6. Ձեր կարծիքով ինչո՞ւ հայկական զորքը միայնակ պատերազմեց թուրքական զորքի դեմ Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում:
7. Վերհանեք Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը:

ԲԱԺԻՆ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

§ 1. ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII ԴԱՐՈՒՄ

Հայկական մշակույթի զարգացման պայմանները: Մշակույթի զարգացման համար նոր ժամանակների սկզբնական փուլում հայրենիքից դուրս՝ գաղթօջախներում, առաջացել էին նպաստավոր պայմաններ:

Առավել մեծ ծավալ է ընդունում գրատպությունը: Մասնավորապես տպագրվում է թարգմանական և ազգային աշխարհիկ գրականություն: Հանդես են գալիս հրապարակախոսական աշխատություններ, որոնք քննարկման են դնում հայրենիքի ազատագրության ուղիների հարցը:

Գաղութահայության հայացքն ու ուշադրությունն ավելի մեծ չափով է ուղղվում դեպի հայրենի երկիր: Մշակութային նախորդ կենտրոններին ավելանում են

ռուսահայ և հնդկահայ կենտրոնները: Կարևոր դեր է ստանձնում Հայ եկեղեցին:

Հայկական լուսավորականություն: XVIII դարի հայ գրական–հրապարակախոսական ու քաղաքական մտքի, առաջադիմական մտածողության ձևավորման և տարածման գործում կարևոր դերակատարում ունեցավ Մադրասի խմբակը: Եվրոպայի լուսավորական շարժման ազդեցությամբ հնդկահայ գործիչները՝ Հ. Էմինը, Մ. Բաղրամյանը, Շահամիր և Հակոբ Շահամիրյանները ձևավորեցին հայ լուսավորական գաղափարախոսությունը: Լուսավորության և կրթության, ազգային–ազատագրական պայքարի և հանրապետության մեջ տեսնելով հայրենիքի ապագան՝ նրանք մերժում էին միապետական կարգերը: Նրանց հրատարակած գրքերում տեղ են գտել ժամանակի առաջադիմական շատ գաղափարներ: Ըստ Շ. Շահամիրյանի՝ միակ իշխանությունը պետք է լինի օրենքի իշխանությունը: Օրենքը որոգայթ է բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն չարաշահել իրենց պաշտոնեական դիրքը և կկատարեն ինքնակամ, ազգային–պետական շահերին հակասող գործողություններ:

Դպրոցները: XVII դարի երկրորդ կեսին հայկական մշակութային օջախները, պահպանելով հայոց ազգային ավանդույթները, միաժամանակ առավել սերտորեն էին առնչվում եվրոպական քաղաքակրթության նվաճումների հետ: Դա բարերար ազդեցություն էր գործում հայ մշակույթի հարստացման վրա:

XVII–XVIII դարերում, չնայած քաղաքական ծանր իրավիճակին ու մեծամեծ կորուստներին, Հայաստանում ոչ միայն փորձել են շարունակել նախորդ դարաշրջանների կրթական ավանդույթները, այլև օգտագործվել են նոր հնարավորություններ: Հայաստանի բուն տարածքից դուրս՝ հայկական համայնքներում ևս, աշխուժացավ կրթական գործը, որ պայմանավորված էր նաև հայկական գաղթօջախների ստվարացմամբ:

Հովհաննավանք

Շարունակեցին իրենց գործունեությունը նաև Հովհաննավանքի, Բաղեշի և Նոր Ջուղայի դպրոցները:

Տպագրությունը: Հայ տպագրությունը նոր փուլ նախանշեց XVII–XVIII դարերի հայկական մշակույթի զարգացման բնագավառում: Առավել նշանավոր և արդյունավետ էր Ամստերդամում հիմնադրված տպարանը: Այն սկսում է լիարժեք գործել 1664 թ.՝ շնորհիվ ***Ոսկան Երևանցու*** և ***Կարապետ Անդրիանցու*** համատեղ ջանքերի: Աստվածաշնչի ամբողջական նկարազարդ ու հատուկ խնամքով իրականացված տպագրությունը հայ տպագրության խոշոր նվաճումն էր: Ոսկան Երևանցին ունեցավ նաև աշակերտներ, որոնք նույն ոգով նվիրվեցին տպագրության միջոցով լուսավորության տարածման գործին:

1695 թ. Ամստերդամում հրատարակվում է կիսագնդերի աշխարհագրական

մի մեծադիր քարտեզ՝ *«Համատարած աշխարհացոյց»*: Քարտեզը փորագրական արվեստի նշանավոր գործ էր: Նույն տարում հրատարակվում է նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», այնուհետև՝ Ղուկաս Վանանդեցու կազմած գիրքը չափերի ու կշռի մասին: Ամստերդամի հայկական տպարանը գոյատևում է մինչև 1717 թ.:

XVII–XVIII դդ. հայկական գրահրատարակչությունը մեծ առաջադիմություն է արձանագրում Կ. Պոլսում: 1677 թ. այստեղ տպարան է հիմնադրում *Երեմիա Չելեպի Քեռմուրճյանը*: Կ. Պոլսում առաջին անգամ լույս է տեսնում Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հռչակավոր երկը:

XVIII դարը հայ տպագրության համար դարձավ ծաղկման շրջան: Հայերեն գրքեր էին տպագրվում Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Հռոմում, Լիվոռնոյում, Վենետիկում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, Աստրախանում, Մադրասում, Կալկաթայում, Էջմիածնում, որոնք միաժամանակ վերածվել էին հայ մշակույթի նշանավոր կենտրոնների:

Հայ տպագրության մեջ մեծ է *Մխիթարյան միաբանության* հրատարակչական գործունեության նշանակությունը: Հրատարակվեց Մխիթար Սեբաստացու կազմած քերականությունը, որը գրված էր թուրքախոս հայերին կրկին հայոց լեզու սովորեցնելու համար:

Հնդկահայոց մեջ տպագրության սկզբնավորումը պայմանավորված էր օտարի լծից հայ ժողովրդի ու Հայաստանի ազատագրության գործի կազմակերպման մտահոգությամբ: Մադրասում հրատարակվեցին «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», «Որոգայթ փառաց» (1789) նշանավոր աշխատությունները:

Հայ տպագրության մեծ նվաճում էր *Սիմեոն Երևանցի* կաթողիկոսի (1763–1780) նախաձեռնությամբ *Էջմիածնում* տպարանի ստեղծումը (1771): Այստեղ լույս են տեսնում Սիմեոն Երևանցու մի շարք աշխատություններ: Կաթողիկոսի նախաձեռնությամբ 1776 թ. Էջմիածնում կառուցվում է թղթի գործարան:

XVII–XVIII դարերում տպագրական գործի զարգացմամբ խորանում էր տպագրիչների մասնագիտական պատրաստվածությունը, առաջանում էին հայազգի տոհմիկ տպագրիչներ: Կ. Պոլսում բարձր համբավ ուներ *Արապյանների* գերդաստանը: Պողոս Արապյանը վրաց Հերակլ II թագավորի հրավերով ժամանեց Վրաստան և 1781–1783 թթ. Թիֆլիսում իրականացրեց վրացական տպարանի վերակառուցման, նոր տպատառեր ստեղծելու ու նաև տեղացի աշակերտներ պատրաստելու գործը:

Այսպիսով՝ XVI–XVIII դդ. հայ գրատպությունն ունեցավ մեծ առաջընթաց. հոգևոր ու աշխարհիկ բովանդակությամբ լույս ընծայվեց ավելի քան հազար անուն գիրք:

Առաջին հայ պարբերականը: Հնդկաստանի տարբեր քաղաքներում հաստատված հայ բնակչության աշխույժ հասարակական կյանքը կազմակերպելու և ուղղորդելու անհրաժեշտությունը առաջադրեց նաև պարբերական ունենալու խնդիրը: 1794–1796 թթ. Մադրասում *Հարություն Շմավոնյանի* նախաձեռնությամբ և հենց իր տպարանում լույս ընծայվեց *հայոց առաջին պարբերականը՝ «Ազդարարը»*: Այն ուներ քաղաքական, տնտեսական և լուրերի բաժիններ,

տպագրվում էին նաև բանավիճային ու պատմական բնույթի հոդվածներ:

Հայ ժողովրդին աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկություններ հաղորդելու նպատակով ***1799 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանությունը Ղուկաս Ինճիճյան*** վարդապետի խմբագրությամբ սկսեց հրատարակել ***«Տարեգրություն»*** պարբերականը (1799–1802), որն ամփոփում էր քաղաքական, պատերազմական, եկեղեցական անցուդարձի մասին լուրեր: Այն հրատարակվում էր ժողովրդին հասկանալի աշխարհիկ լեզվով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին հայկական մշակույթի զարգացմանը նպաստող հիմնական պայմանները նոր շրջանի սկզբում:
2. Այս ժամանակաշրջանի ի՞նչ կրթօջախներ գիտեք: Նախորդ դարերում հայտնի ի՞նչ կրթօջախներ գիտեք:
3. Ներկայացրե՛ք Ոսկան Երևանցու գործունեությունը և ներդրումը հայ մշակույթում: Ի՞նչ նշանակություն է ունեցել Ամստերդամի տպարանը հայ տպագրության պատմության մեջ:
4. Պատրաստե՛ք քարտեզ՝ նշելով այն քաղաքները, որտեղ XVII–XVIII դարերում հայերեն գրքեր են տպագրվել:
5. Ի՞նչ գիտեք առաջին հայ պարբերականի մասին:

§ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII ԴԱՐՈՒՄ

Պատմագիտությունը: Վերելք ապրեց նաև հայոց պատմագրությունը: XVII դ. առաջին կեսին Հայաստանում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունների հանգամանալի շարադրանք է ***Առաքել Դավրիժեցու*** մեծարժեք ***«Գիրք պատմութեանց»***-ը, որը տպագրության է արժանացել արդեն իսկ հեղինակի կենդանության օրոք (1669 թ.): Աշխատությունը կարևոր տեղեկություններ է պարունակում շահ Աբասի և նրա հաջորդների՝ Հայաստանում ու հարակից երկրներում վարած քաղաքականության, թուրք–պարսկական պատերազմների, հայ բնակչության բռնագաղթի և բազում այլ իրադարձությունների վերաբերյալ:

Զաքարիա Քանաքեռցին ***«Պատմություն»*** աշխատության մեջ նկարագրել է ոչ միայն իր տեսած և լսած դեպքերն ու իրադարձությունները, այլև հայ ժողովրդի պատմության նախորդ շրջանների համառոտ շարադրանքը՝ սկսած Արշակունիների թագավորության հաստատումից:

XVII դ. երկրորդ կեսի նշանավոր գործիչներից էր ***Երեմիա Չելեպի Քեռմուրճյանը***, որը մեծ նպաստ է բերել հայ պատմագիտության զարգացմանը: Նրա բազմաթիվ ստեղծագործությունները մեծ արժեք ունեն ոչ միայն մեր, այլև օսմանյան Թուրքիայի պատմության ուսումնասիրության համար: Նույն ժամանակաշրջանի ստեղծագործություններից են ***Հակոբ Կարնեցու «Ժամանակագրությունը»*** և պատմաաշխարհագրական բնույթի ***«Տեղագիր Վերին Հայոց»*** երկը:

Սայաթ-Նովայի քանոնչան

Սիբիլլա (մարգարեուհի).
Բոգդան Սալթանով, XVII դ.

XVIII դարում ստեղծված կարևոր պատմագիտական երկերից են ***Եսայի Հասան-Ջալալյանի «Համառոտ պատմութիւն Աղուանից»***, ***Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմաց»***, Սյունյաց ազատագրական շարժման մասին ***Ստեփանոս Շահումյանի «Պատմութիւն Դավիթ բեկին»*** և այլ աշխատություններ: Շարունակվում էին նաև մանր ժամանակագրություններ կազմելու ավանդույթները, որոնց մի մասը շատ արժեքավոր տեղեկություններ է պարունակում Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Հայ իրականության համար դարակազմիկ նշանակություն ունեցավ ***Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց»*** եռահատոր աշխատության տպագրությունը (1784–1786): Այն, ինչպես Մ. Խորենացու «Հայոց պատմությունը», ամբողջական պատկերացում է տալիս հայ ժողովրդի անցած ուղու մասին: Չամչյանի աշխատությունը հայ ժողովրդի զավակներին հաղորդում էր արժանապատվության ու ազգային ինքնագիտակցության հզոր լիցքեր: Այն թարգմանվել է նաև այլ լեզուներով: Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ը մեծապես խթանել է հայ պատմագիտական մտքի զարգացմանը:

Գեղարվեստական գրականությունը: XVII–XVIII դդ. կարևոր նվաճումներ են արձանագրվում նաև գեղարվեստական գրականության բնագավառում: Այդ ժամանակ չափածո ստեղծագործություններով հայտնի են դառնում ***Պետրոս Ղափանցին, Նաղաշ Հովնաթանը, Սայաթ-Նովան*** և ուրիշներ: Նաղաշ Հովնաթանը ոչ միայն բանաստեղծ էր, այլև նկարիչ, երաժիշտ: Նա մշակութային մեծ ժառանգություն թողած Հովնաթանյան տոհմի հիմնադիրն էր:

Սայաթ-Նովան (Հարություն Սայադյան) XVIII դարի ամենասիրված հայ բանաստեղծն ու երաժիշտն էր: Նա ապրում էր Թիֆլիսում, ստեղծագործում տար-

բեր լեզուներով: Նրա երգերը տոգորված էին սիրո, արդարության, ճշմարտության, ազնվության վեհ գաղափարներով: Դրանցով նա դատապարտում էր կեղծիքը, սոցիալական անհավասարությունը և պաշտպանում մարդկային արժանապատվությունը:

Արվեստը: XVII դ. երկրորդ կեսը և XVIII դարը արդյունավետ եղան արվեստի ու ճարտարապետության բնագավառում:

Հայ արվեստագետները ստեղծագործում էին ոչ միայն բուն Հայաստանում, այլև հայկական գաղութներում: Մինչև այսօր իրենց ճոխությամբ հիացնում են Նոր Ջուղայի հայոց պալատների ու բնակարանների որմնանկարները: Արվեստի նշանավոր կոթող էր հայ արհեստավորների պատրաստած «***Արմատեա գահը***», որը Նոր Ջուղայի հայկական պատվիրակությունը նվիրեց Ռուսաստանի Ալեքսեյ ցարին: Այն այժմ պահվում է Մոսկվայի զինապալատում:

Հայաստանում կառուցվեցին բազում եկեղեցիներ ու վերականգնվեցին թուրք-պարսկական պատերազմի տարիներին ավերվածները: Վերանորոգչական լուրջ աշխատանքներ ծավալվեցին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի վանքում, որի ներքին հարդարումներն ու որմնանկարներով նկարազարդումներն իրականացվեցին Հովնաթանյանների կողմից:

Հարցեր և առաջադրանքներ

1. XVII–XVIII դարերի ինչ պատմիչներ գիտեք. ինչ աշխատություններ են գրել և ինչ իրադարձություններ են նկարագրել: Վերհանեք Մ. Չամչյանի աշխատության նշանակությունը:
2. Ովքե՞ր էին XVII–XVIII դդ. հայտնի հայ բանաստեղծները: Ի՞նչ գիտեք նրանց ստեղծագործություններից: Ո՞վ էր XVIII դարի ամենանշանավոր բանաստեղծ–երգիչը: Թվարկե՞ք նրա երգերից: Ինչո՞վ էին առանձնանում այդ երգերը:
3. Ի՞նչն է վկայում նշված ժամանակաշրջանում արվեստի զարգացման մասին:

§ 3. ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Մշակույթի զարգացման պայմանները: XIX դ. առաջին երեսնամյակին հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցան քաղաքական կարևոր իրադարձություններ: Ռուս–պարսկական և ռուս–թուրքական պատերազմներից հետո գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանի անցումը Ռուսաստանին արմատապես փոխեց տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը: Հայության մի հոծ հատված, փրկվելով ֆիզիկական բնաջնջման վտանգից, հաղորդակից դարձավ անհամեմատ առաջադիմական ռուսական սոցիալ–քաղաքական համակարգին, մշակույթին ու գիտությանը: Այդ հանգամանքը նկատելիորեն ուժեղացրեց գաղթավայրերից գիտամշակութային կենտրոնները հետզհետե հայրենի հողի վրա տեղափոխելու հայ գործիչների ձգտումները:

Ցավոք, նույն ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի կյանքում ոչ միայն դրական տեղաշարժեր տեղի չունեցան, այլև արևմտահայերի զանգվածային արտահոսքից հետո տնտեսությունն ու

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը

մշակույթը հայտնվեցին ծայրահեղ ծանր պայմաններում: Դրանով պիտի բացատրել նաև այն հանգամանքը, որ հայ մշակութային կյանքը դեռ հիմնականում շարունակեց զարգանալ հայկական գաղթօջախներում՝ Հնդկաստանում, Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, Ղրիմում, Աստրախանում, Կ. Պոլսում, Վենետիկում, Նոր Ջուղայում և այլուր:

Դպրոցական կյանքի վերելքը: XIX դ. առաջին կեսին տարրական, հոգևոր–ծխական դպրոցների կողքին ստեղծվում են բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնք իրենց կրթական բարձր մակարդակով շուրջ մեկ դար վերածվում են հայ մտավորականության պատրաստման իսկական դարբնոցների: Նոր՝ աշխարհիկ դպրոցներին անցնելու կենսական պահանջը դարասկզբին գաղութահայ վաճառականական դասի առանձին ներկայացուցիչների, առաջադեմ գործիչներին մղում է այդօրինակ կրթական հաստատությունների ստեղծման գործին:

Դարասկզբին ռուսահայ ազդեցիկ գաղթօջախներից Աստրախանն ապրում էր աշխույժ համայնքային կյանքով: Գործում էին եկեղեցիներ, դպրոցներ, կար տպարան, որտեղ տպագրվում էին դասագրքեր, ձեռնարկներ, օտար գրական երկերի թարգմանություններ և այլն: Այս հաստատությունների շուրջ միավորված տեղի մտավորականների ջանքերով ***1810 թ.*** հիմնվում է ***Աղաբաբյան դպրոցը***: Այն հատկապես մեծ ճանաչում է ձեռք բերում մեկ տասնամյակ անց՝ ***Սերովբե Պատկանյանի***՝ տեսուչ եղած ժամանակ: Այստեղ կրթություն է ստանում Ս. Պատկանյանի որդին՝ ապագա մեծ մանկավարժ Գաբրիել Պատկանյանը, ուսուցչությամբ է զբաղվում գրող–մանկավարժ Հարություն Ալամդարյանը:

Ռուսաստանում ազդեցիկ դիրքեր ունեցող հողատեր և արդյունաբերող Լազարյանների (Ղազարյաններ) նշանավոր տոհմի ներկայացուցիչ ***Հովհաննես Լազարյանի*** կտակի համաձայն՝ ***1815 թ. Մոսկվայում*** բացվում է ***Լազարյան ճեմա-***

ռանը: Այն դառնում է ամբողջ Ռուսական կայսրության միակ արևելագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունը, որտեղ պատրաստվում են պարսկերենի, թուրքերենի և արաբերենի բարձրակարգ մասնագետներ: Սակայն ճեմարանը նախ և առաջ վերածվում է հայագիտական խոշոր կենտրոնի, որտեղ սովորելու էին գալիս ոչ միայն Ռուսաստանից, այլև Արևմտյան Հայաստանից, Պարսկաստանից, հեռավոր Հնդկաստանից ու այլ վայրերից: Այստեղ դասավանդել են Հ. Ալամդարյանը, Ս. Նազարյանցը, Մ. Նալբանդյանը, իրենց կրթությունն են ստացել Քերովբե, Գաբրիել և Ռափայել Պատկանյանները, Ս. Շահազիզը և ուրիշներ: Ճեմարանականները, լեզուներից զատ, ուսումնասիրում էին նաև բնական գիտություններ, բժշկագիտություն և այլ առարկաներ: Ճեմարանի տպարանում, բացի հարուստ հայագիտական գրականությունից, լույս են տեսել եվրոպական ու արևելյան 13 լեզուներով գրքեր:

Գիտակցելով հայ հասարակության մեջ հայահոծ Թիֆլիսի կարևորությունը՝ վիրահայոց թեմի առաջնորդ ***Ներսես Աշտարակեցին*** 1824 թ. հիմնում է հայկական ուսումնարան, որը շուտով հռչակվում է ***Ներսիսյան դպրոց*** անունով: Շուրջ մեկ դար այս հաստատությունն իր շուրջն է համախմբել արևելահայ գրական–հասարակական միտքը, բազմահազար մասնագետներ պատրաստել հայոց դպրոցների, մամուլի ու մշակույթի տարբեր բնագավառների համար:

1837 թ. Երևանում և 1838 թ. Շուշիում բացվում են հայտնի ***թեմական դպրոցները***: Նախապես այստեղ սովորում էին միայն հոգևորականների, իսկ հետագայում նաև աշխարհականների զավակները:

XIX դ. առաջին կեսին գործում էին Վենետիկում նշանավոր Ռափայելյան, Զմյուռնիայում՝ Մեսրոպյան, Կ. Պոլսում՝ Խասգյուղի և Սկյուտարի դպրոցները, Կալկաթայում՝ Մարդասիրաց ճեմարանը և այլն: Արևմտյան Հայաստանում գործող կրթօջախներից համեմատաբար ճանաչված էին Վանի և Էրզրումի դպրոցները: 1830–ական թթ. Կարապետ Բագրատունու նախաձեռնությամբ ստեղծվեցին Ախալցխայի Կարապետյան և Ախալքալաքի Մեսրոպյան դպրոցները: Հայ երիտասարդությունը կրթություն էր ստանում նաև Մոսկվայի, Փարիզի և եվրոպական այլ համալսարաններում:

Գիտությունը և մամուլը: XIX դ. սկզբին Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ ***Ղուկաս Ինճիճյանը*** հանդես է գալիս բազմաթիվ պատմաաշխարհագրական աշխատություններով: Նա ամենայն մանրամասնությամբ անդրադառնում է հին և նոր Հայաստանի նահանգների, բնակավայրերի, դրանց բնակչության ու տեղադրության հարցերին:

Վիեննայում լույս տեսած ***«Տիեզերական պատմության»*** երկհատորյակը, որը հայերենով գրված համաշխարհային պատմության առաջին ձեռնարկն էր, մեծ ճանաչում է բերում պատմաբան ***Հովսեփ Գաթրճյանին***: Հեղինակն արծարծում է նաև հայոց պատմության բազմաթիվ հարցեր:

Հայագիտության խնդիրներով սկսում են զբաղվել եվրոպացի գիտնականներ: Գերմանացի լեզվաբանները ձեռնամուխ են լինում հայերենի՝ որպես հնդեվրոպական հնագույն լեզուներից մեկի ուսումնասիրությանը: Ֆրանսիացի ***Մարի Բրոսսեն*** և ուրիշներ հետազոտում են հայ մատենագիրների գործերը, դրանք հրատարա-

կում եվրոպական լեզուներով: ***1809 թ. Պետերբուրգում ռուսերենով*** լույս է տեսնում ***Մ. Խորենացու «Հայոց պատմությունը»***: Ռուս պատմաբան ***Սերգեյ Գլինկան*** գրում է ***«Հայ ժողովրդի պատմության տեսություն»*** աշխատությունը:

Ահռելի աշխատանք է կատարվում բառարանագրության բնագավառում: 1836–1837 թթ. Մխիթարյանները հրատարակում են ***«Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»*** մեծարժեք բառարանը: Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի համալսարաններում բացվում են հայագիտական ամբիոններ: ***Հայագիտությունը դառնում է միջազգային գիտություն***:

Հայ մշակույթի զարգացմանը մեծ նպաստ է բերում նորաստեղծ հայ մամուլը: Դարի առաջին կեսին հրատարակված 40 անուն պարբերականներից նշանավոր էին ***«Բազմավեպը»*** (Վենետիկ), ***«Ազգասերը»*** (Կալկաթա), ***«Լրո գիրը»*** (Կ. Պոլիս), ***«Կովկասը», «Արարատը»*** (Թիֆլիս) և այլն: 1843 թվականից առ այսօր տպագրվող «Բազմավեպը» դառնում է ոչ միայն հայ մամուլի ամենաերկարակյաց պարբերականը, այլև ամենածանրակշիռ գրական, գիտական ու գեղարվեստական հանդեսներից մեկը:

Գրականությունը: XIX դ. առաջին կեսը նշանավորվեց գրական լեզվում գրաբարից աշխարհաբարին անցման ժամանակաշրջանով: Գրաբարով ստեղծագործող մի շարք գրողներ, հասկանալով, որ պատմական ճակատագրի բերումով տրոհված հայ ժողովրդի համար դասական հին հայերենը դարձել է անհասկանալի, հետզհետե անցում կատարեցին աշխարհաբարին: Պոլսահայերեն բարբառի հիմքի վրա սկսեց ձևավորվել գրական արևմտահայերենը, իսկ Արարատյան բարբառը կազմեց աշխարհաբար արևելահայերենի հիմքը: Սակայն այդ գործընթացն այնքան էլ արագ տեղի չունեցավ: Շատերը շարունակեցին ստեղծագործել ոսկեդենիկ գրաբարով: Այն մնաց Հայ առաքելական եկեղեցու պաշտոնական լեզուն:

Դարասկզբին իր չափածո վեպերով աչքի ընկավ ***Հովհան Վանանդեցին***: Նրա ազգային–հայրենասիրական երկերի հիմքում ընկած էին Հայաստանի հին և վաղմիջնադարյան ժամանակաշրջանի դեպքերը: Պատմական վիպերգերի և դրամատիկական երկերի հեղինակ էր ***Արսեն Բագրատունին***:

Ժամանակաշրջանի հայտնի գրող–մանկավարժ ***Հարություն Աբամելիքյանը*** (1796–1834) քնարերգու բանաստեղծ էր, սովորել և աշխատել էր ժամանակի նշանավոր դպրոցներում: Նրա՝ տեսուչ աշխատած տարիներին Ներսիսյան դպրոցը վերածվեց հայ կրթական կյանքի կենտրոնի: Ալամդարյանի գրական համեստ ժառանգությունը՝ շուրջ երեք տասնյակ բանաստեղծություններ, առանձին ժողովածուով հրատարակվեց Պետերբուրգում:

Մեսրոպ Թաղիադյանը (1803–1858) հանրագիտակ մտավորական էր՝ բանաստեղծ, պատմաբան, խմբագիր, մանկավարժ, ջերմ հայրենասեր: Նրա ջանքերով ***1846 թ. Կալկաթայում*** բացվել է հայ իրականության մեջ առաջին երկսեռ դպրոցը: Թաղիադյանը ***«Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ զարգացնում է այն միտքը, որ ազգի փրկությունը գաղթօջախներում չէ, ուստի ժամն է բռնելու հայրենադարձության բաղձալի ճանապարհը***:

XIX դ. լուսավորական շարժման և գրական կյանքի ամենաականավոր դեմքը

Խաչատուր Աբովյանն էր (1809–1848): Նա առաջին հեղինակն էր, ով կոտրելով միջնադարյան մտածողության պատնեշը, համարձակվեց անցնել աշխարհաբարի՝ միաժամանակ դրանով չնսեմացնելով գրաբարի դերը հայ ժողովրդի կյանքում: Աբովյանն իրավամբ դարձավ հայ նոր գրականության հիմնադիրը:

Նա ծնվել է Քանաքեռում, սովորել Էջմիածնում, եղել Ներսիսյան դպրոցի առաջին սաներից, Էջմիածնի Մայր աթոռի թարգմանը: 1829 թ. սեպտեմբերին ***Դորպատի*** (այժմ՝ Տարտու) համալսարանի պրոֆեսոր ***Ֆ. Պարրոտի*** հետ եղել է Արարատի գագաթն առաջինը նվաճած արշավախմբի կազմում: 1830–1835 թթ. սովորել է Դորպատում: Տիրապետել է մի քանի լեզուների: Թիֆլիսում և Երևանում զբաղվել է մանկավարժությամբ: Աբովյանը հեղինակ է և արձակ, և չափածո ստեղծագործությունների, ունի ազգագրական, փիլիսոփայական տնտեսագիտական բնույթի աշխատություններ: Քաջածանոթ է եղել եվրոպական գրականությանն ու փիլիսոփայությանը:

Հայրենասեր գործիչ ու լուսավորիչը հայ–ռուսական զինակցության ջերմ պաշտպան էր, ուստի «Վերք Հայաստանի» վեպում ողջունել է ռուսական զորքերի մուտքը Հայաստան: Միաժամանակ, կյանքի վերջին շրջանում մեծ հումանիստը անձնական ծանր ողբերգություն է ապրում, երբ իր հայրենիքը կրկին տեսնում է խավարամիտ մարդկանց իշխանության ներքո: 1848 թ. ապրիլի 2–ին չբացահայտված հանգամանքներում Խ. Աբովյանը անհետ կորչում է: Սակայն նրա ակոսած ուղին հետագա սերունդների համար առաջադիմության ճանապարհ է հարթում:

Ստեփանոս Ներսիսյան.
«Խնջույք Քուռ գետի ափին»

Արվեստը: XIX դ. առաջին կեսին հայ կերպարվեստը թևակոխում է նոր փուլ: Այս շրջանում շարունակում են ստեղծագործել Հովնաթանյանների համբավավոր տոհմի ներկայացուցիչները: Գերդաստանն արժանանում է ռուսական իշխանությունների բարձր հովանավորությանը: Ասպարեզ է իջնում տոհմի չորրորդ սերնդի ներկայացուցիչը՝ դիմանկարիչ ***Մկրտում Հովնաթանյանը***, ապա նրա որդիները՝ ***Հակոբն*** ու ***Աղաթոնը***: Հակոբի թողած շուրջ 60 գործերի մեծ մասը վիմագրական տեխնիկայով վերարտադրում է Աղաթոնը: Մկրտումն ու Հակոբը անզուգական վիմապատկերներ են ստեղծում Էջմիածնի Մայր տաճարում, Թիֆլիսի, Նորաշենի, Սիոնի և այլ եկեղեցիներում: Հետագայում Հակոբը մեկնում է Պարսկաստան և դառնում շահի պալատական նկարիչը:

Հայտնի նկարիչ ***Ստեփանոս Ներսիսյանը*** Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում սովորել է Աղաթոն Հովնաթանյանի հետ: Նրան ճանաչում են բերում Մ. Մաշտոցի, Ս. Պարթևի, Ա. Տեր–Ղուկասյանի, Վ. Բեհբութովի դիմանկարները, «Խնջույք Քուռ գետի ափին» գեղանկարը:

Որոշակի աշխուժացում է ապրում թատերական կյանքը: 1827 թ. վերջին Երևանի բերդում բեմադրվում է ***Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»*** պիեսը՝ հեղինակի ներկայությամբ: Ներկայացումներ են տրվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Շուշիում, Երևանում, Ախալցխայում և այլուր: 1836 թ. դրամատուրգ ***Գալուստ Շերմազանյանը***, որը հետագայում երկու անգամ ընտրվել է Թիֆլիսի քաղաքագլուխ, թատերական շենքի վերածած իր երկհարկանի տանը բեմադրում է հայ և օտար թատերագիրների պիեսներ: Այդ յուրահատուկ թատրոնը հայտնի էր «Շերմազանյան դարպաս» անունով:

Հայ հոգևոր երաժշտության անաղարտության պահպանման ու զարգացման գործում նշանակալից ավանդ է ունեցել պոլսահայ ***Համբարձում Լիմոնճյանը*** (1769–1839): Նրա ամենամեծ ծառայությունը 1815 թ. հայկական նոր ձայնագրության ստեղծումն էր: Միջնադարյան հայ երգարվեստի նմուշները, որոնք գրի էին առնված հատուկ հայկական նոտաներով (խազերով), Լիմոնճյանը կարողանում է վերծանել՝ դրանք հարմարեցնել եվրոպական գծային նոտաներին և փրկել կործանումից:

Կ. Պոլսում հայերը լուրջ հաջողություններ են ունենում տպագրության, նոր տառատեսակների ձուլման բնագավառում: Շուտով ***Պողոս Արապյանը*** դառնում է Օսմանյան կայսրության ամենանշանավոր տպագրիչը, սուլթանի տպարանի տեսուչը: Նա ստեղծում է հայկական, թուրքական և վրացական տառատեսակներ: Թուրքերենի տառատեսակը կայսրությունում գործածություն է գտնում «Արապ օղլու» անունով: Նշանավոր տառագետ էր նաև ***Հովհաննես Մյուհենտիսյանը***, որը Հ. Լիմոնճյանին օգնում է նոր ձայնանիշերի համար ստեղծելու տառատեսակներ: Թուրքական տպագրության գործում ունեցած վաստակի համար Մյուհենտիսյանին կոչել են «թուրքական Գուտենբերգ»:

XIX դ. առաջին կեսին տեղի ունեցած անցումային փուլի հաջող ավարտը հող է նախապատրաստում նույն դարի երկրորդ կեսին և XX դ. սկզբին հայ մշակույթի անանխադեպ վերելքի համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էր հայ մշակույթը շարունակում զարգանալ հիմնականում գաղթօջախներում: Թվարկե՛ք XIX դ. առաջին կեսին գործած հայկական նշանավոր ուսումնական հաստատությունները:
2. Ի՞նչ ձեռքբերումներ արձանագրվեցին գիտության մեջ: Վերհիշե՛ք, թե երբ և որտեղ է առաջին անգամ տպագրվել Խորենացու «Հայոց պատմությունը»: Թվարկե՛ք նշված ժամանակաշրջանի գիտության հայ ներկայացուցիչների (նաև դասագրքում չնշվածները): Ինչո՞վ են նրանք հայտնի:
3. Ներկայացրե՛ք XIX դ. առաջին կեսի գրականության նշանավոր գործիչներին, գնահատե՛ք նրանց ներդրումը հայ գրականության զարգացման գործում:
4. XIX դ. առաջին կեսի ի՞նչ հայ նշանավոր կերպարվեստագետներ գիտեք: Ի՞նչ գործերով են նշանավորվել: Երաժշտական արվեստի ո՞ր ճյուղն էր զարգացած: Երաժշտության զարգացման գործում ի՞նչ ներդրում է ունեցել Հ. Լիմոնճյանը: Ովքե՞ր էին տպագրական գործի հայ նշանավոր ներկայացուցիչները Օսմանյան կայսրությունում:

ԳԼՈՒԽ 2. XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԵԼՔԸ

§ 1. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ: ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայ մշակույթի վերելքի նախադրյալները: XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին արդյունաբերական հասարակության քաղաքակրթական նվաճումների հետ անմիջական նոր շփումը, դրանց մի մասի յուրացումն ու համադրումը ազգային ավանդական արժեհամակարգի հետ ապահովեցին հայ մշակույթի առաջընթացը բուն Հայաստանում և մերձավոր հայաբնակ շրջաններում ու հայկական գաղթավայրերում:

Ժամանակի առաջադիմական գործընթացները՝ Եվրոպայի հեղափոխական գաղափարներն ու շարժումները, գիտության, տեխնիկայի ու արվեստի զարգացման արդյունքները արևելահայ ու արևմտահայ մշակույթի վերելքի կարևոր նախադրյալներ էին:

Մասնավորապես Ռուսաստանում արդյունաբերական հասարակության ձևավորումն ու զարգացումը, ռուսական գրականությունն ու արվեստը էական ազդեցություն ունեցան արևելահայության մշակութային առաջընթացի վրա:

XIX դ. երկրորդ կեսին մշակութային կյանքում նախաձեռնությունն անցնում է եվրոպական կրթություն ստացած երիտասարդ մտավորականությանը, որը բերում է նոր աշխարհընկալում և տարածում առաջադիմական գաղափարներ: Արևմտահայ և արևելահայ մտավորական նոր սերունդը գերակա խնդիր է հռչակում ժողովրդի մեջ լուսավորության տարածումը, ազգային ինքնագիտակցության վերելքը, ազատության ու արդարության գաղափարների իրագործման համար պայքարը:

Հայ գաղթավայրերը ևս մշակութային կարևոր կենտրոններ էին: Մեծ դեր կատարեցին Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության գործիչները: Անուրանալի են նրանց ջանքերը հայոց պատմությունն ու մշակույթը եվրոպական ազգերին ծանոթացնելու և եվրոպական մշակույթը հայությանը հասանելի դարձնելու գործում:

Եվ վերջապես՝ մշակութային կյանքի վերելքին նպաստեց հայ քաղաքական ու հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Հայկական առաջին քաղաքական խմբակներն ու կազմակերպություններն իրենց կարևոր խնդիրն էին համարում ժողովրդին առաջադիմական գաղափարներով կրթելը: Հետագայում արդեն ազգային կուսակցությունները և սոցիալ-դեմոկրատական ու ազատական ուժերն իրենց գործունեությունն ուղղորդեցին նաև ազգային մշակույթի պահպանման ու զարգացման գործին:

Կրթական համակարգը: Հայ մտավորականության առաջադեմ ուժերը, քաղաքական-հասարակական շրջանները մեծ կարևորություն էին տալիս ժողովրդի լուսավորությանը, գրագիտության տարածմանը: Ի տարբերություն նախորդ շրջանների՝ XIX դ. երկրորդ կեսից կրթական գործը բուռն վերելք է ապրում Արևելահայաստանում: Չնայած ցարական վարչակարգի հարուցած դժվարություններին՝ արևելահայ դպրոցը առաջընթաց ապրեց:

Երևանի Ս. Հռիփսիմեի անվան օրիորդաց գիմնազիայի շենքը

Երևանի ուսուցչական սեմինարիայի շենքը. 1920 թ.

Կարևոր նորություն էր աշխարհիկ կրթության ծավալումը. աստիճանաբար ներդրվեցին ուսուցման առաջադիմական մեթոդներ, աշխարհականացվեցին դասավանդվող առարկաները:

Արևելահայությունն ուներ երկու տեսակի դպրոց՝ պետական և ազգային: Պետական դպրոցներում ուսուցման պարտադիր լեզուն ռուսերենն էր: Աստիճանաբար աճեց պետական դպրոցների թիվը: Դրանց շարքում աչքի ընկան ***Երևանի գավառային*** և ***Հռիփսիմյան իգական գիմնազիաները***: Կարևոր դեր ուներ նաև Երևանի ուսուցչական սեմինարիան:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ–ն Էջմիածնում ստեղծեց ուսումնական հանձնաժողով, որի խնդիրը բոլոր գյուղերում դպրոցներ բացելն էր: Ժողովրդին կրթելու հիմնական հաստատություն դարձավ եկեղեցական–ծխական տարրական դպրոցը: Այստեղ դասավանդում էին կրոն, հայերեն և ռուսերեն, վայելչագրություն, թվաբանություն, երգեցողություն, նաև տրվում էին նախնական գիտելիքներ աշխարհագրությունից, բնագիտությունից, պատմությունից: Հայկական գրեթե բոլոր բնակավայրերում բացվեցին տարրական դպրոցներ, որոնք մեծապես օգնում էին ժողովրդի մեջ գրագիտություն տարածելուն:

Բացվեցին նաև իգական ուսումնական հաստատություններ, որոնք կյանքի կոչելու գործում մեծ է ***Պերճ Պռոշյանի*** ավանդը: Նրա անմիջական ջանքերով ***1864 թ. Շուշիում*** և ***1866 թ. Երևանում*** բացվեցին իգական դպրոցներ: Այսպիսի դպրոցներ բացվեցին նաև Ալեքսանդրապոլում և Թիֆլիսում:

Արևելահայ կրթական համակարգում մեծ նշանակություն ձեռք բերեց ***1874 թ.*** կաթողիկոս Գևորգ Դ–ի նախաձեռնությամբ ***Էջմիածնում բացված հոգևոր ճեմարանը***: Թեև ճեմարանի գլխավոր խնդիրը հոգևորականներ պատրաստելն էր, այն դարձավ հայագիտական խոշոր կենտրոն, որտեղ դասավանդել և կրթություն են ստացել XIX դ. երկրորդ կեսի և XX դարասկզբի հայ մշակույթի, գիտության և ազգային ու հասարակական բազմաթիվ նշանավոր գործիչներ: Իրենց բեղմնավոր գործունեությունն էին շարունակում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Մոսկվայի Լազարյան ճեմարանը:

Անդրկովկասում հայկական դպրոցների թիվը 1885 թ. կազմում էր 270, որոնցից 41–ը՝ իգական: Այդ նույն ժամանակ Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր մոտ 300, իսկ եվրոպական երկրներում՝ մոտ 200 հայ ուսանող:

Արդեն 1914–1915 ուսումնական տարում Անդրկովկասում կար 400 հայկական եկեղեցական դպրոց՝ 31 հազարից ավելի աշակերտով: Դպրոցներ կային նաև Ռուսաստանի հայաբնակ վայրերում:

Օսմանյան կայսրության կազմում գտնվող արևմտահայությունը կրթության ոլորտում դանդաղ, բայց հաստատուն քայլեր էր կատարում: Ավելացավ կրթական հաստատությունների թիվը հայրենիքում: ***1857 թ. Վարագա*** վանքում ***Մկրտիչ Խրիմյանը*** բացեց ***Ժառանգավորաց վարժարանը***: Նման դպրոց Գ. Սրվանձտյանցի ջանքերով բացվեց Տարոնի Ս. Կարապետի վանքում:

Արևմտյան Հայաստանում հատկապես կարևորվում էր ուսուցիչներ պատրաստող դպրոցների բացումը: ***1878 թ.*** աշնանը ***Վանում*** հիմնվեց ***Վարժապետանոց***, որի տեսուչն էր մանկավարժական գործունեությամբ մեծ հռչակ վայելող ***Մ. Փորթուգալյանը***: Վանում գործող ուսումնական նշանավոր հաստատություններից էին նաև Երկրագործական ու Երամյան վարժարանները:

Կարինի ուսումնական հաստատությունների մեջ ամենահռչակավորը ***1881 թ.*** բացված ***Սանասարյան միջնակարգ վարժարանն*** էր: Ուսուցիչների մեծ մասը մեծահարուստ Մկրտիչ Սանասարյանի միջոցների հաշվին բարձրագույն կրթություն էր ստացել Գերմանիայում՝ Լայպցիգի համալսարանում:

Ճիշտ է, կրթական ոլորտը լայնորեն ծավալվում էր հայկական նահանգներում ու կայսրության հայաբնակ վայրերում, սակայն արևմտահայության 80%-ը կազմող գյուղացիության չնչին մասին էր միայն դա հասանելի: Այնուհանդերձ, Արևմտյան Հայաստանի դպրոցական կյանքը բռնել էր վերելքի ուղին: XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում կար 800 հայկական դպրոց՝ 82 հազար աշակերտով:

Կրթական գործը ծավալվում էր նաև հայկական գաղթավայրերում: Գործում էին բազմաթիվ նշանավոր ուսումնական հաստատություններ, որոնցից աչքի էր ընկնում ***1870 թ.*** Վենետիկի Ռափայելյան ու Փարիզի Մուրադյան վարժարանների միավորմամբ ստեղծված ***Մուրադ-Ռափայելյան վարժարանը***:

Հայկական մշակույթը, չնայած հայության երեք հիմնական հատվածների տնտեսական, սոցիալ-քաղաքական կյանքի յուրահատուկ պայմաններին, պահպանեց իր ինքնատիպությունն ու միասնությունը, կարևոր դեր խաղաց ազգային համախմբման և ժողովրդի լայն շերտերի մեջ առաջադիմական գաղափարների տարածման գործում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ էր պայմանավորված հայ մշակույթի զարթոնքը XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին: Որո՞նք էին նշված ժամանակաշրջանի հայ մշակույթի նշանավոր կենտրոնները:
2. Հիմնավորե՛ք ժողովրդի մեջ լուսավորության և գրագիտության տարածման կարևորությունը: Ինչ տեսակի դպրոցներ կային Արևելյան Հայաստանում. ի՞նչ էին դասավանդում այդ դպրոցներում: Թվարկե՛ք այդ ժամանակաշրջանի նշանավոր ուսումնական հաստատությունները: Աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք ժամանակաշրջանի հայկական ուսումնական հաստատությունները: Փաստերով հիմնավորե՛ք, որ այդ ժամանակաշրջանում դպրոցական կյանքը վերելք էր ապրում:

§ 2–3. ԲՆԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին աննախընթաց զարգացում ապրեցին համաշխարհային գիտությունն ու տեխնիկան: Արտադրության, հաղորդակցության և սպասարկման ոլորտներում ու կենցաղում գիտատեխնիկական նվաճումների ներդրումն արմատապես փոխեց մարդկանց աշխարհայացքն ու ապրելակերպը: Այս գործընթացից անմասն չմնացին նաև հայ գիտնականները:

Բնական գիտություններ: Հայկական պետականության բացակայության պայմաններում հայ գիտնականների մեծ մասն ապրում և աշխատում էր հայրենիքի սահմաններից դուրս:

Նշանավոր երկրաբան, բյուրեղաքիմիկոս ***Անդրեաս Արծրունին*** (1847–1898) սովորել է Դորպատի և Գերմանիայի մի քանի համալսարաններում: Նա ուսումնասիրել է Ուրալի օգտակար հանածոների հանքավայրերը, հետազոտել Կովկասի և Հայաստանի մի շարք տեղանքներ՝ Սևանի ափերը և Լոռու շրջանը: Ա. Արծրունին ժամանակակից երկրաքիմիա գիտաճյուղի հիմնադիրն է: Նա հայտնի հրապարակախոս Գ. Արծրունու եղբայրն էր, «Մշակ» թերթում տպագրում էր հոդվածներ, երազում էր աշխատել հայրենիքում:

Ճանաչված քիմիկոս ***Ջակոմո (Հակոբ) Չամչյանը*** (1857–1922) իր գիտամանկավարժական գործունեությունը սկսել է Հռոմի համալսարանում, ընտրվել է Պադուայի և Բոլոնիայի համալսարանների պրոֆեսոր: Նա համարվում է ժամանակակից օրգանական լուսաքիմիայի հայրը: Ջ. Չամչյանի անունն է կրում Բոլոնիայում նրա նախագծով կառուցված քիմիական ինստիտուտը:

Ֆիզիկայի ասպարեզում XX դ. կարևոր հայտնագործություններից մեկը՝ տարածության մեջ պատկերներ հաղորդելու համակարգի մշակումը, կապված է ***Հովհաննես Ադամյանի*** (1879–1932) անվան հետ: Նա աշխատել է Բեռլինում, Պետերբուրգում, խորհրդային իշխանության տարիներին՝ նաև Երևանում: ***1907 թ.*** Բեռլինում իրագործել է 600 կմ հեռավորության վրա ***գունավոր պատկեր հաղորդելու առաջին փորձը*** և ***դրել գունավոր հեռուստատեսության հիմքը***: Գունավոր հեռուստատեսության զարգացումը հետագայում ընթացել է Հ. Ադամյանի մշակած համակարգով:

Աստղագիտության բնագավառում հռչակվել է վենետիկցի հետազոտող ***Խորեն Սինանյանը***: Ս. Ղազար կղզու հայկական աստղադիտարանում 1894 թ. նա է առաջինը հայտնաբերել Յուպիտերի վեցերորդ արբանյակը:

Հայ գիտնականները մեծ ներդրում են ունեցել նաև կենսաբանական գիտությունների բնագավառում: Իր գործունեությամբ աչքի է ընկել արևմտահայ բժիշկ և գյուղատնտես ***Նազարեթ Տաղավարյանը***: Նա 1885–1887 թթ. Կ. Պոլսում հրատարակել է առաջին գիտական հայ պարբերականը՝ ***«Գիտական շարժում»*** խորագրով:

Երևանում բժշկասանիտարական գործի հմուտ կազմակերպիչ էր ***Լևոն Տիգրանյանը***: Նրա ջանքերի շնորհիվ Երևանի հայկական դպրոցներում մտցվում են առողջապահության և մարմնամարզության դասեր:

Արևմտահայ ականավոր հասարակական գործիչ, Ազգային սահմանադրության հեղինակներից մեկը՝ ***Սերովբե Վիչենզանը***, նշանավոր բժիշկ էր և Կ. Պոլսի բժիշկների միության հիմնադիրը: Նա աշխատել է Կ. Պոլսի ազգային հիվանդանոցում:

Հայ բժիշկների փայլուն համաստեղության մեջ իր ուրույն տեղն ունի ***Մարգար Առուստամովը***: Ցարական կառավարությունը նրան աքսորել էր Աստրախան: 1892 թ. այստեղ բռնկված խոլերայի համաճարակի ժամանակ անգնահատելի օգնություն է ցուցաբերել հիվանդներին և պայքարել համաճարակի տարածման դեմ: Մ. Առուստամովը թողել է նաև գիտական հետազոտություններ:

ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանում ճանաչված ռենտգենաբան էր ***Միհրան Ղասաբյանը***: Ռենտգենաբանությանը նվիրված նրա աշխատություններն այժմ էլ որպես դասագիրք են օգտագործվում ԱՄՆ բժշկական ինստիտուտներում:

Ֆիզիոլոգիայի բնագավառում մեծ գործ է կատարել ռուս մեծ գիտնական Ի. Պավլովի սան ու հետևորդ ***Լևոն Օրբելին***: Նա, զարգացնելով Պավլովի ուսմունքը, դարձել է էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրը:

Հայագիտության վերելքը. բանասիրությունը: Այս ժամանակաշրջանում առանձնակի զարգացում ապրեց հայագիտությունը: Հայոց լեզվի, գրականության, պատմության, մատենագիտության, Հայաստանի աշխարհագրության հետազոտության ասպարեզում աչքի ընկան հայ և օտարազգի հեղինակները:

Լուրջ առաջընթաց է ապրում հայ բանասիրությունը: XX դ. սկզբի բուռն վերելքը կապված է նոր սերնդի ներկայացուցիչների՝ ***Ստ. Մալխասյանի, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի*** բեղուն գործունեության հետ:

Հայագիտական աչքի ընկնող աշխատանքներ կատարվեցին ոչ միայն հայ հեղինակների, այլև Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի նշանավոր ուսումնասիրողների կողմից:

Ականավոր արևելագետ ***Մարի Բրոսեն*** տեղափոխվում է Ռուսաստան և արդյունավետ գործունեություն ծավալում հայոց պատմության ու բանասիրության ուսումնասիրության բնագավառում:

Ընդհանուր լեզվաբանության ականավոր ներկայացուցիչներ և հմուտ հայագետներ ***Հ. Հյուբշմանը*** և ***Ա. Մեյեն*** ձշտում են հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում՝ որպես նրա առանձին ճյուղ:

Պատմագիտության զարգացումը: XIX դ. վերջին և XX դ. սկզբներին հայ պատմագիտական միտքը հզոր առաջընթաց ունեցավ: Ժամանակի առաջադիմական գաղափարների, ազատական ու հեղափոխական շարժումների ազդեցությունը կարևոր նախադրյալներ ստեղծեց հայ պատմագիտության զարգացման համար: Վերանայվեցին մինչ այդ գերիշխող հայացքները, հաղթահարվեց հայոց պատմության լուսաբանման կրոնաաստվածաբանական մոտեցումը:

Կարևոր դեր խաղացին նաև պատմագիտությանն օժանդակող գիտաճյուղերի՝ մատենագիտության, աղբյուրագիտության, հնագիտության, ազգագրության, դրամագիտության ձեռքբերումները:

Հայ պատմագիտության ***պահպանողական թևը*** ձգտում էր ազգային ինքնագիտակցության եկող հայ ժողովրդի մեջ հետաքրքրություն սերմանելու անցյալի

Ղևոնդ Ալիշան

Լևո (Առաքել Բաբախանյան)

արժանահիշատակ պատմական իրողությունների հանդեպ և ժողովրդի մեջ բորբոքելու հայրենասիրական ոգի:

XIX դ. 80–90-ական թթ. իր դիրքերը բավականաչափ ամրապնդեց ***ազատական ուղղության*** պատմագիտությունը, որի ներկայացուցիչները սկսեցին նորովի վերլուծել պատմական երևույթներն ու իրադարձությունները, սոցիալական հարաբերությունները:

Ազգային և սոցիալ–դեմոկրատական կուսակցությունների գործունեության ծավալմանը զուգընթաց սկիզբ է առնում ու զարգանում նաև ***կուսակցական պատմագիտությունը***:

XIX դ. երկրորդ կեսի հայ պատմագիտության մեծավաստակ դեմքերից է Մխիթարյան միաբանության ներկայացուցիչ ***Ղևոնդ Ալիշանը*** (1820–1901): Իր ամբողջ կյանքում երբեք Հայաստանում չեղած Ալիշանը գրեց բազմահատոր հայագիտական աշխատություններ, որոնցից առանձնապես նշանավոր են միջնադարյան Հայաստանի առանձին «աշխարհներին» նվիրված գործերը: Կոչ անելով հայությանը «զենքն ի ձեռին» ազատագրել հայրենիքը՝ նա ապագա Հայաստանը բնորոշել է որպես լուսավորյալ միապետություն: Ալիշանը հետևել է ժամանակին մեծ համարում ստացած այն հայեցակետին, ըստ որի՝ մարդկային հասարակության զարգացման հիմնական գործոնը ***աշխարհագրական դիրքն*** է: Իր աշխատություններում նա այդ սկզբունքի հիման վրա էլ ներկայացրել է Հայաստանի պատմությունը: Ալիշանն իր գիտական հսկայական ժառանգությամբ (ավելի քան 45 հատոր) մեծապես նպաստել է ազգային գիտության զարգացմանը:

Ժամանակի ճանաչված գիտնականներից էր Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր ***Մկրտիչ Էմինը*** (1815–1890): Նա իր բազմաթիվ աշխատություններում անդրադարձել է հայ առասպելաբանության հարցերին, հրատարակել մի շարք մատենագիրների երկերի բնագրերը: Էմինը ռուսերեն է թարգմանել և հրատարակել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» և միջնադարի ուրիշ հայ

պատմագիրների զանազան աշխատություններ:

Մ. Էմինի ստեղծած հայագիտական դպրոցի ականավոր ներկայացուցիչ էր ***Քերովբե Պատկանյանը***: Նա ևս ուսումնասիրել և հայերեն ու ռուսերեն է հրատարակել հայ միջնադարյան պատմագիրների երկերը, զբաղվել Հայաստանում հայտնաբերված սեպագիր արձանագրությունների վերծանմամբ ու մեկնաբանմամբ: Խոշոր ներդրում է կատարել գիտական աշխարհի հետաքրքրությունը հայկական մշակույթի վրա հրավիրելու և հնդեվրոպական ժողովուրդների համակարգում հայերի գրաված տեղի հարցը լուծելու ուղղությամբ:

Հայ պատմիչների երկերի հրատարակումն ու դրանց գիտական մեկնաբանությունը, տարաբնույթ պատմական աղբյուրների վերհանումն իրական պայմաններ ստեղծեցին հայ ժողովրդի ամբողջական պատմությունը գրելու համար: Այդ ուղղությամբ մեծ է ***Անտոն Գարագաշյանի*** ներդրումը: Նրա ***«Քննական պատմութիւն Հայոց»*** ուսումնասիրությունն ընդգրկում է հայ ժողովրդի ծագումից մինչև V դ. ավարտն ընկած ժամանակաշրջանը: Նա հասարակական առաջադիմության վճռական ուժ է համարում լուսավորությունը:

Հայ ազատագրական շարժման կողմնորոշման և Հայկական հարցի հետազոտությամբ աչքի ընկավ ***Ալեքսանդր Երիցյանը*** (1841–1902): Նա ուսումնասիրել է XIX դ. հայ նշանավոր հասարակական–քաղաքական ու գրական–մշակութային դեմքերի կյանքն ու ստեղծագործությունը: Ա. Երիցյանի գիտական ժառանգության գլուխգործոցը ***«Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում»*** երկհատոր ուսումնասիրությունն է: Հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է XIX դ. առաջին կեսի քաղաքական, ռազմական և դիվանագիտական իրադարձություններին, Էջմիածնի կաթողիկոսության գործունեությանը: Աշխատության մեջ մեծ տեղ է հատկացրել հայ–ռուսական հարաբերությունների լուսաբանմանը:

Ուշագրավ է ***Ստեփանոս Պալասանյանի «Պատմութիւն Հայոց»*** աշխատությունը: Այն շուրջ քառորդ դար հայկական դպրոցներում դասագիրք է եղել: Ս. Պալասանյանն իր ուսումնասիրություններում հետևում է պատմականության սկզբունքին: Նա Հայկական հարցի լուծումը տեսնում է ազգի ֆիզիկական և հոգևոր ուժերի համախմբման, ազգային–ազատագրական պայքարի միասնական ճակատի ստեղծման մեջ:

Հայ ժողովրդի պատմության բազմաթիվ հիմնահարցերի մասին ուրույն վերաբերմունք ուներ հայտնի եկեղեցական գործիչ, հրապարակախոս, պատմաբան և բանաստեղծ ***Մատաթիա արքեպիսկոպոս Օրմանյանը*** (1841–1918): Մեծ նշանակություն ունի հատկապես նրա ***«Ազգապատում»*** եռահատոր աշխատությունը: Մ. Օրմանյանը զերծ էր անցյալի ազգային–քաղաքական անցուդարձերին զգացմունքային ու հախուռն գնահատականներ տալուց, ուներ երևույթները տեսնելու և վերլուծելու տրամաբանական եղանակ ու անաչառ մոտեցում: Հայկական հարցի ընթացքի վերլուծությամբ նա հանգել էր այն համոզման, որ եվրոպական տերությունների համար գլխավորը «շահն ու օգուտն է», որ նրանց «ո՛չ խօսքերուն հնար է հաւատալ և ո՛չ խոստումներուն վստահիլ»: Նա զալիք սերունդներին

ավանդեց նրանց քաղաքականությունից զգուշանալու պատգամը:

Հայոց պատմության ուսումնասիրությունը որակական նոր աստիճանի բարձրացրեց պատմաբան ***Լեոն*** (Առաքել Բաբախանյան, 1860–1932): Նա պատմագրության մեջ ազատական ուղղության հետևորդ էր: Հետազոտել և գրել է հայոց պատմության բոլոր պատմական շրջանների ու հիմնախնդիրների մասին: Լեոն բացահայտել է տերությունների դիվանագիտական խարդավանքները Հայկական հարցում: Ժամանակի քննությանն են դիմացել պատմաբանի այն մտքերը, թե մեծ տերությունների համար Հայկական հարցը սոսկ միջոց էր Օսմանյան կայսրության գլխին մտրակ ճոճելու, նրա ներքին գործերին միջամտելու համար:

Բյուզանդիայի պատմության, հայոց միջնադարի և Հայկական հարցի ուսումնասիրության ասպարեզում զգալի ներդրում ունի ականավոր պատմաբան ***Նիկողայոս Ադոնցը*** (1871–1942): ***«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»*** ծանրակշիռ աշխատությունում նա ներկայացրել է Հայաստանի պատմաաշխարհագրական պայմանները, հայ–բյուզանդական հարաբերությունները, գիտականորեն վերլուծել հայկական ավատատիրության խնդիրները:

XX դ. առաջին տասնամյակների հայ պատմահասարակագիտական մտքի ներկայացուցիչների շարքում պատվավոր տեղ ունի ***Ալեքսեյ Ջիվելեգովը***: Նրա ***«Թուրքահայաստանի ապագան»*** (ռուսերեն) մենագրությունը նվիրված էր Հայկական հարցի դիվանագիտական պատմությանը:

Ռուսաստանում կովկասագիտության երախտավորը ***Նիկողայոս Մառն*** է (1864–1934): Նա իր գիտական գործունեությունը սկսել է իբրև հայ մատենագրության պատմաբան: Նա ուսումնասիրել է Էջմիածնի և Սևանի մատենադարանների հայկական ձեռագրերը, հիմնավորապես զբաղվել Անիի պեղումներով (1893–1917 թթ., ընդմիջումներով), որի գիտական ուսումնասիրությունների ամփոփումն էր ***«Անի»*** աշխատությունը: Ն. Մառի ջանքերով 1915–1916 թթ. փրկվեցին հայոց մշակույթի բազմաթիվ հուշարձաններ:

Հայ փիլիսոփայական միտքը: Մինչև XIX դ. վերջերը հայ փիլիսոփայական միտքն առավելապես լուսավորական բնույթ ուներ: Գոյություն ունեին երկու հիմնական ուղղություններ՝ ***պահպանողական*** և ***լուսավորական***: Այս երկու ուղղությունների միջև ընթացող հիմնական բանավեճը և գաղափարական պայքարը խղճի ազատության հնարավորության ու անհրաժեշտության, բնական օրենքի, մարդկանց և ազգերի ազատության ու իրավահավասարության հիմնահարցերի շուրջ էր:

Պահպանողական ուղղության ներկայացուցիչները՝ ***Խ. Աշըգյան, Հ. Տերոյենց (Չամուռճյան), Մ. Օրմանյան*** և ուրիշներ, փորձում էին հաշտեցնել գիտությունը և կրոնը: Պաշտպանելով հավատի գերակայությունը բանականության նկատմամբ՝ նրանք շեշտում էին Հայ եկեղեցու անփոխարինելի դերը ազգի պատմության մեջ և սերունդների կրթության գործում:

Մ. Օրմանյանը լուսավորականների փառաբանած խղճի ազատության սկզբունքը համարում էր ազգը պառակտող գաղափար: Նա պնդում էր, որ ազգի միասնության սկզբունքը հակառակ է խղճի ազատությանը: Նա գրում էր, որ օսմանյան կառավարության որոշմամբ ստեղծված հայ կաթոլիկ և բողոքական

համայնքները հայ հասարակության արհեստականորեն անջատված մասերն են, և նման բաժանումը տկարացնում է ազգը:

Աշխարհիկ–լուսավորական թևի ներկայացուցիչները՝ ***Ս. Նազարյանց, Մ. Նալբանդյան, Ա. Գարագաշյան, Ս. Պալասանյան*** և ուրիշներ, քննադատում էին իրենց դարն ապրած կրոնաաստվածաբանական հայացքները: Նրանք գիտության և լուսավորության մեջ էին տեսնում հասարակական առաջընթացի, ազգային հիմնախնդիրների լուծման միակ ճանապարհը:

Հայ լուսավորական իմաստասերների կարծիքով փիլիսոփայությունը անհրաժեշտ էր ծառայեցնել ազգային կենսական հարցերի լուծմանը: Հետազոտելով քաղաքակրթությունների, հասարակական կյանքի զարգացման օրինաչափությունները՝ նրանք ցույց էին տալիս այն ուղիները, որոնք կարող էին ապահովել ազգային առաջընթացը և նախադրյալներ ստեղծել հայկական պետականության վերականգնման համար:

Մ. Նալբանդյանի կարծիքով՝ Կանտը, Հեգելը և ուրիշ մեծ փիլիսոփաներ խոշոր ավանդ ունեն փիլիսոփայության զարգացման գործում: Սակայն նրանք լուծում էին առաջին հերթին իրենց ազգային խնդիրները: Նրանց փիլիսոփայությունը, ըստ Նալբանդյանի, չէր բխում հայության շահերից, ուստի անիրագործելի էր:

Ս. Պալասանյանի պատմափիլիսոփայության համաձայն՝ հասարակական առաջընթացի նպատակը (պատմության իմաստը) ոչ թե համասեռ մարդկության ձևավորումն է, այլ ազգերի ինքնության պահպանման և մարդու ազատության ձեռքբերումը:

Ժամանակի հայ փիլիսոփայության բնորոշ կողմերից է ***գիտապաշտական*** ուղղությունը: Ըստ այդմ՝ փիլիսոփայությունը մասնավոր գիտություններին տալիս է ճշմարտության բացահայտման մեթոդաբանությունը: Այս թևի նշանավոր ներկայացուցիչն է ***Գալուստ Կոստանդյանը*** (1840–1898), որի փիլիսոփայական հայացքներն արտահայտված են ***«Մեթոդի վրա»*** աշխատության մեջ: Ըստ նրա՝ գիտական հայտնագործությունների բուռն դարաշրջանում, որի ականատեսն էր, գիտության և կրոնի միջև չի կարող լինել որևէ ընդհանրություն: Գիտությունը միավորել է մարդկությանը և մեծ դեր է խաղում հասարակության բարոյական, իրավական, սոցիալական և տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում:

Տարբեր ուղղությունների միջև մրցակցությունը նպաստեց հայկական միջավայրում փիլիսոփայական գաղափարների տարածմանը: Իսկ XX դ. սկզբից հայ փիլիսոփայությունը սկսում է զարգանալ ժամանակի փիլիսոփայության գլխավոր ուղղություններին համահունչ:

Այդ ժամանակ հայ փիլիսոփայության մեջ տարածում գտավ ***պոզիտիվիստական (դրական գաշտական)*** ուղղությունը, որի խոշորագույն ներկայացուցիչն էր ***Երվանդ Ֆրանգյանը*** (1878–1928): Նրա կարծիքով՝ յուրաքանչյուր գիտություն ունի իր մասնագիտական փիլիսոփայությունը (օրինակ՝ պատմության փիլիսոփայություն, բնության փիլիսոփայություն), իսկ ընդհանուր փիլիսոփայությունը դրանց հիմնական դրույթները միացնում է մեկ ամբողջական, տրամաբանորեն հիմնավորված համակարգի մեջ: Ֆրանգյանը չէր ընդունում հասարակական կյանքի և

պատմության բացատրության իդեալիստական և մատերիալիստական տեսությունները: Նա պաշտպանում էր ***պատմական ռեալիզմի (իրապաշտության)*** տեսությունը: Ըստ դրա՝ պատմական գործընթացը մի ամբողջություն է, որին մասնակցող յուրաքանչյուր տարր և ուժ ունի իր տեղն ու դերը: Դրանք բոլորը պատմական գործընթացում շաղկապված են «իրարպատկանելիությամբ և փոխազդեցությամբ», սակայն տվյալ դարաշրջանում կարող է գերակշռել, ավելի վճռորոշ դեր խաղալ այս կամ այն տարրը:

Հայ փիլիսոփայական մտքի մեջ XX դարասկզբին ամրակայվեց նաև ***մատերիալիստական-մարքսիստական*** ուղղությունը: Վերջինիս հետևորդները համոզված էին, որ մարքսիզմը միակ ճշմարիտ տեսությունն է, դրա միջոցով հնարավոր է բացատրել բնության, հասարակության և ճանաչողության զարգացման օրինաչափությունները: Բոլշևիկյան հայտնի տեսաբան ***Ս. Շահումյանի*** համոզմամբ՝ պատմական գործընթացի շարժիչ ուժը նյութական արտադրությունն է և դասակարգային պայքարը: Պետությունն իր հերթին դասակարգային տիրապետության կազմակերպություն է: Նա ազգային հարցի արմատական լուծումը կապում էր կապիտալիստական հասարակարգի վերացման հետ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկեք XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի բնական գիտությունների հայ ներկայացուցիչներին: Ինչով են նրանք նշանավոր: Աշխատանքը ներկայացրեք աղյուսակով:
2. Ովքե՞ր էին այդ ժամանակաշրջանի նշանավոր հայագետները: Ի՞նչ գործերով են աչքի ընկել:
3. Ի՞նչ գործոններով էր պայմանավորված հայ պատմագիտական մտքի զարգացումը:
4. Ովքե՞ր էին այս ժամանակաշրջանի հայ պատմագիտության նշանավոր ներկայացուցիչները. լուսաբանեք նրանց գործունեությունը:
5. Ի՞նչ թեմաներ էին շոշափում հայ փիլիսոփայական մտքի ներկայացուցիչները: Ժամանակաշրջանի փիլիսոփայական ի՞նչ հայտնի ուղղություններ և դրանց հայ ներկայացուցիչների կարող եք նշել: Ներկայացրեք նրանց հայացքները:

§ 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ

Գրականության հասարակական դերի բարձրացումը: XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին բուռն վերելք է ապրում նաև հայ գրական կյանքը: Ամրագրվում է «գրականությունը կյանքի հայելին է» բանաձևը:

XIX դ. կեսերին հայ գրականության մեջ գերիշխող էր ***կլասիցիզմը:*** Այս ուղղության գրողների երկերում ներբողվում էին հայրենասիրությունը, առաքինությունը, առաջադրվում էր հայրենիքի ազատության գաղափարը: Հայ կլասիցիզմի գլուխգործոցը ***Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազն»*** (1858 թ.) վիպերգն է,

Հովհաննես Թումանյան, Պերճ Պռոշյան, Ղազարոս Աղայան

որի նյութը քաղված է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»:

Նշված ժամանակաշրջանում կլասիցիզմին հաջորդում են նոր ուղղություններ՝ ***ռոմանտիզմը*** և ապա՝ ***ռեալիզմը***: Գրաբարին փոխարինելու է գալիս աշխարհաբարը: Ջուգահեռաբար ձևավորվում է հայ նոր գրականությունը՝ արևելահայ և արևմտահայ ճյուղերով:

Հայ գրողների նոր սերնդի շարքերում առանձնանում է ***Միքայել Նալբանդյանը***՝ հայ գրական քննադատության հիմնադիրը: Ըստ Մ. Նալբանդյանի՝ մինչև հիմա մենք եղել ենք կրոնական ազգ, այժմ պետք է դառնանք քաղաքացիական հասարակություն:

XIX դ. 50–60–ական թթ. գրականության խոշոր նվաճումը կարելի է համարել վեպի ծնունդը: Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից հետո ***Պերճ Պռոշյանի «Սոս և Վարդիթեր», Ռաֆֆու «Սալբի»*** ստեղծագործությունները հիմք են դնում հայոց ազգային վիպասանությանը:

Ժամանակի ազգային ոգու արտահայտիչը բանաստեղծությունն էր: Հայոց մուսաները խոսում էին բանաստեղծությամբ, և ամենուրեք հնչում էր բնաշխարհի, հայրենի եզերքի, հայրենիքի կարոտի մեղեդին: ***Մկրտիչ Պեշիկթաշլյանի*** «Եղբայր եմք մեք», ***Սմբատ Շահազիզի*** «Երազ», ***Մ. Նալբանդյանի*** «Մանկության օրեր», ***Նահապետ Ռուսինյանի*** «Կիլիկիա», ***Ռափայել Պատկանյանի*** «Արաքսի արտասուքը» բանաստեղծություններն արտահայտում են ազգային–հայրենասիրական ոգու ռոմանտիկական օրհներգը:

Հասարակական զարգացումն ուղեկցվում է ազգային ինքնագիտակցության վերելքով՝ օրակարգի խնդիր առաջադրելով ազգային ազատագրության գաղափարը:

Ռաֆֆին (Հակոբ Մելիք–Հակոբյան) նոր հուն բացեց ազգային վիպասանության մեջ: ***«Սամվել», «Դավիթ բեկ», «Խաչագողի հիշատակարանը», «Ջալալեդդին», «Խենթը», «Կայծեր»*** վեպերում նա ստեղծեց գաղափարատիպեր, որոնք կոչված էին քարոզելու ազգային ազատագրության գաղափարը: Փրկության միակ ուղին զինված պայքարն է: Ռաֆֆին կապ է ստեղծում ներկայի ու անցյալի միջև և հայոց պատմության դրամատիկ անցումների մեջ փորձում հայտնաբերել հաղթանակի ու պետականության վերականգնման իրական ուղին:

1880–ական թթ. երկրորդ կեսին հայ գրականությունը ռոմանտիզմից անցում է կատարում ռեալիզմին: Ասպարեզ է գալիս պոեզիայի նոր սերունդը՝ ***Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Հովհաննես Հովհաննիսյան*** և ուրիշներ:

Արձակի նոր սերնդի ականավոր դեմքեր էին ***Մուրացանը, Շիրվանզադեն, Գրիգոր Զոհրապը, Նար-Դոսը, Լևոն Շանթը, Երվանդ Օտյանը*** և ուրիշներ:

XX դարասկիզբը բեկում է նշանավորում հայ գեղարվեստական մտածողության մեջ: Դասական ռեալիզմը տեղի է տալիս արդիական ուղղություններին՝ ***նատուրալիզմ*** (բնապաշտություն), ***սիմվոլիզմ*** (խորհրդապաշտություն), ***նեոռոմանտիզմ*** (նորվիպապաշտություն): Փոխվում է գրականության հերոսը. գեղջուկին ու կալվածատիրոջը փոխարինում են հեղափոխականը, մտավորականը, բանվորը:

Ասպարեզ է գալիս բանաստեղծների նոր սերունդ՝ ***Սիամանթո, Վահան Տերյան, Դանիել Վարուժան, Միսաք Մեծարենց***: Թատերգության մեջ նոր ուղղություն է նշանավորում ***Լևոն Շանթը***: Հայ սիմվոլիզմի հիմնադիր Վ. Տերյանին մեծ ճանաչում է բերում ***«Մթնշաղի անուրջներ»*** բանաստեղծությունների ժողովածուն:

Մամուլը: Արդյունաբերական քաղաքակրթության բնութագրիչ կողմերից էր տեղեկույթի արագ հավաքման, մշակման ու տարածման երևույթը: Այդ ասպարեզում յուրահատուկ դեր էր խաղում մամուլը: Այն XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբների զանգվածային լրատվության կարևորագույն միջոցն էր: Ի տարբերություն տվյալ շրջանում հայության տնտեսական ու սոցիալական կյանքի՝ հայկական մամուլը, որպես ազգային մշակույթի նոր և ինքնատիպ բնագավառ, զարգանում էր ժամանակի արդիական պահանջներին համընթաց:

Հիշյալ ժամանակաշրջանում Հայաստանի երկու հատվածներում ու հայկական գաղթավայրերում քանակապես ու որակապես աճում է հայ պարբերականների թիվը: Միայն XIX դ. երկրորդ կեսին հիմնադրվում է 250 թերթ ու հանդես:

Հայ մամուլը հատկապես ծաղկում ապրեց ***Կ. Պոլսում*** և ***Թիֆլիսում***՝ արևմտահայ ու արևելահայ հասարակական կյանքի երկու գլխավոր կենտրոններում: Այդ թերթերի ու ամսագրերի մեծ մասը, սակայն, կարճ կյանք ունեցավ. փակվեց նյութական դժվարությունների և իշխանությունների ճնշումների հետևանքով:

Վենետիկի «Բազմավեպ» և Վիեննայի «Հանդես ամսօրյա» պատմաբանասիրական պարբերականները, որ շարունակում են լույս տեսնել մինչև օրս, կարևոր դեր են կատարում հայոց պատմության ուսումնասիրության գործում: Դրանցում հրատարակվում էին բազմաթիվ սկզբնաղբյուրներ, հայ պատմիչների գործեր:

Դարի կեսերի ամենանշանավոր պարբերականն էր ***1858–1864 թթ. Մոսկվայում*** հրատարակված ***«Հյուսիսափայլը»***, որի խմբագիրն ականավոր հրապարակախոս, հայագետ և արևելագետ ***Ստեփանոս Նազարյանցն*** էր: Այս հանդեսը հայ լուսավորական շարժման ջահակիրն էր:

Ժամանակի հասարակական կարծիքը ձևավորելու առումով հսկայական դեր ուներ ***1872 թ. Թիֆլիսում*** լույս տեսնող ազատական ուղղության ***«Մշակ»*** թերթը, որը դարձավ հայ կաղետների և ապա Հայ ժողովրդական կուսակցության օրգանը: Դրա հիմնադիրն ու երկարամյա ղեկավարն էր հայտնի ազգային գործիչ և հրապարակախոս ***Գրիգոր Արծրունին***: Թերթը հանդես էր գալիս հետադիմության և պահպանողականության դրսևորումների դեմ, հետևողականորեն պաշտպանում էր Հայ դատը, առաջ էր քաշում

սուլթանական լծի դեմ ուղղված զինված ապստամբության ծրագիր և այլն:

Հայկական միջավայրն աստիճանաբար ներառվում էր արդյունաբերական հասարակության տարբեր գործընթացների մեջ: Մասնավորապես Արևելյան Հայաստանում ու Այսրկովկասում հայ բուրժուազիան տնտեսական առաջնային դիրք ուներ, աճում էին քաղաքները, փոխվում էին մարդկանց կենցաղավարությունն ու բարքերը: Տեղի էր ունենում գյուղացիության արտահոսք դեպի քաղաք՝ աշխատանքի ու փողի «թագավորություն»՝ փոխելով երկրամասի ժողովրդագրական պատկերը: *«Օրեցօր զարգացող հասարակական կյանքը,*— գրում էր Ա. Շիրվանզադեն,— *առաջին պլանի վրա էր քաշում հարցեր, որոնք պահանջում էին իրենց մանրամասն ուսումնասիրությունն ու լուրջ մշակումը մամուլի էջերում»*:

Հատուկ հիշատակման են արժանի XIX դ. վերջին և XX դ. առաջին երկու տասնամյակներին Թիֆլիսում, Կ. Պոլսում, Պետերբուրգում, Փարիզում, Վենետիկում և այլուր հայերեն, երբեմն նաև օտար լեզուներով հրատարակված գրական–գեղարվեստական պատկերազարդ շաբաթաթերթերն ու ամսագրերը՝ «Տարազ», «Անահիտ», «Կռունկ», «Գրականության և արվեստի բաներ», «Գեղարվեստ» և այլն, որոնց էջերում լուսաբանվել են նաև արվեստի տարբեր խնդիրներ:

Հայ մամուլի պատմության մեջ նոր երևույթ էր ***կուսակցական թերթերի ու ամսագրերի*** հրատարակումը: Դրանցում լուսաբանվում էր ժամանակի հասարակական կյանքը՝ իր բազմաբնույթ խնդիրներով ու մտահոգություններով, ազգային ու հասարակական–քաղաքական զարգացումների ծրագրային բացատրություններով: Կուսակցական մամուլը նաև թեժ գաղափարական պայքարի, տարբեր ուղղությունների միջև մրցակցության և բախման թատերաբեմ էր:

Հնչակյանների հրատարակած պարբերականներից աչքի էին ընկնում ***«Հնչակը», «Գաղափարը», «Երիտասարդ Հայաստանը»***: Հիմնական թեմաներն էին ազգային–ազատագրական պայքարը, Հայկական հարցը և սոցիալիզմը:

Դաշնակցության պարբերականների մեծ մասը հրատարակվում էր Թիֆլիսում և Արևելյան Հայաստանի խոշոր քաղաքներում: Պաշտոնական առաջին օրգան ***«Դրոշակը»*** հիմնադրվել է Թիֆլիսում, ապա տեղափոխվել Ժնև (Շվեյցարիա): Դարասկզբին սկսեցին լույս տեսնել տասնյակ նոր թերթեր ու հանդեսներ, որոնցից մեծ տարածում և ազդեցություն ունեին ***«Ալիք», «Ազատամարտ», «Հորիզոն»*** պարբերականները:

Կովկասի փոխարքայության սահմաններում սկզբնավորվեց ու աճեց նաև ***սոցիալ–դեմոկրատական*** ուղղության հայկական մամուլը: Հայ բոլշևիկների պարբերականներից էին «Պրոլետարիատի կռիվը», «Պայքարը», «Բանվորի կռիվը»:

Այսպես՝ XX դ. սկզբներին հայկական մամուլը մեծապես աճեց, հրատարակվող պարբերականների թիվը կազմեց շուրջ 1000 անուն:

Մամուլն աստիճանաբար դարձավ հասարակական կյանքի մշտական բաղադրիչը, որն էական դեր էր խաղում հասարակական մտածողության ձևավորման գործում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ ուղղություններ կային հայ գրականության մեջ: Ներկայացրեք այդ ուղղությունները և դրանց նշանավոր հեղինակներին: Թվարկեք նրանց ստեղծագործություններից: Դրանցից որո՞նք եք կարդացել: Ո՞ր ստեղծագործությունը կամ ո՞ր հերոսին եք նախընտրում և ինչո՞ւ:
2. Ի՞նչ դեր էր խաղում մամուլը ժամանակի հասարակական կյանքում: Ո՞ր փաստն է վկայում հայկական մամուլի զարգացած լինելու մասին: Որտե՞ղ և ի՞նչ նշանավոր պարբերականներ էին հրատարակվում: Վերհիշեք, թե որն էր հայերեն առաջին պարբերականը: Համառոտ ներկայացրեք հայ կուսակցական մամուլը: Ներկայումս հրատարակվող հայ կուսակցական մամուլի ի՞նչ պաշտոնաթերթեր գիտեք:

§ 5. ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Կերպարվեստը: Աննախադեպ վերելք է ապրում հայ կերպարվեստը: Եվրոպական կենտրոնների գեղարվեստի ակադեմիաները, բարձրագույն ուսումնարանները կամ գեղարվեստական մասնավոր կրթարաններն ավարտած հայ գեղանկարիչները հեղինակում են բարձրարվեստ գործեր: Իշխող ուղղությունների՝ ակադեմիզմի, ռոմանտիզմի ու ռեալիզմի կողքին ի հայտ են գալիս ժամանակի եվրոպական կերպարվեստում առկա գրեթե բոլոր հիմնական միտումները՝ նատուրալիզմից ու իմպրեսիոնիզմից մինչև ֆուտուրիզմ և այլն:

Ժամանակաշրջանի հայ կերպարվեստը նոր բարձունքների հասավ ականավոր հեղինակների ստեղծագործությունների շնորհիվ: Հայկական մշակույթին փառք ու ճանաչում բերեցին աշխարհահռչակ ծովանկարիչ Հ. Այվազովսկին, Վ. Սուրենյանցը, Գ. Բաշինջաղյանը, Ս. Աղաջանյանը, Մ. Սարյանը, Փ. Թերլեմեզյանը, Ե. Թադևոսյանը, Հ. Գյուրջյանը և ուրիշներ:

Հովհաննես Այվազովսկին, որին համաշխարհային ճանաչում բերեց «Ինն երորդ ալիք» կտավը, հայտնի է նաև հայկական թեմաներով վրձնած գեղանկարներով («Սևանա լիճ», «Խրիմյան Հայրիկը Էջմիածնում», «Նոյը իջնում է Արարատից»):

XIX դ. վերջին հայ գեղանկարչության մեջ դիմանկարի ժանրն աստիճանաբար իր տեղը զիջեց բնանկարին: Հայ ազգային բնանկարի հիմնադիրը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի սան ***Գևորգ Բաշինջաղյանն*** է: Նա իր կտավները հարստացրել է գուներանգների նուրբ անցումներով, որոնք նրա բնանկարներին հաղորդել են թարմություն և օժտել օդային թափանցիկությամբ («Զանգեզուր», «Դեպի Արագած տանող ճանապարհը», «Արարատ» և այլն):

Իր բնանկարներում իմպրեսիոնիզմին է հարել ***Եղիշե Թադևոսյանը***: Նա զբաղվել է նաև կենցաղային ժանրով, դիմանկարով, ստեղծել կրոնական և պատմաղիցաբանական պատկերներ («Գրիգոր Լուսավորչի տեսիլքը», «Ս. Հռիփսիմե» և այլն):

Հովհաննես Այվազովսկի.
«Ծովափ: Մառախլապատ առավոտ»

Գևորգ Բաշինջաղյան.
«Ս. Ղազար կղզին գիշերով», 1892 թ.

Այդ շրջանի հայ նկարչությունը, այդ թվում նաև բնանկարը, գեղարվեստական նոր որակ, արդիական շունչ և ազգային շեշտված դիմագծեր է ձեռք բերել հատկապես ***Մարտիրոս Սարյանի*** (1880–1972) գործերում: Զափազանց տպավորիչ են Մ. Սարյանի դիմապատկերները՝ «Ինքնանկար» (1909 թ., երկու տարբերակով), «Ալեքսանդր Ծատուրյանի դիմանկարը» (1915 թ.) և այլն:

Ոչ միայն կենցաղային, այլև պատմական նկարի ձևավորման ու զարգացման գործում բացառիկ դեր է խաղացել ***Վարդգես Սուրենյանցը*** (1860–1921): Արդեն 1890–ական թթ. նկարչի ստեղծած աշխատանքներում արձագանք են գտել սուլթանական Թուրքիայում տեղի ունեցած հայկական կոտորածները: Վ. Սուրենյանցն անդրադարձել է նաև առասպելական շրջանի պատմությանը՝ ստեղծելով գլուխգործոցներ՝ «Շամիրամն Արա Գեղեցիկի դիակի մոտ» ու «Սալոմե» կտավները:

Գեղարվեստական որակի և հոգեբանական խորության տեսակետից աչքի են ընկնում Փարիզում կրթություն ստացած ***Ստեփան Աղաջանյանի*** դիմանկարները:

Նոր շրջանի հայ քանդակագործության հիմնադիրներից է Հռոմի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, պոլսահայ վարպետ ***Երվանդ Ոսկանը***: Շոշափելի է նաև քանդակագործ ***Անդրեաս Տեր-Մարուքյանի*** ներդրումը: Նրա կերտած Խաչատուր Աբովյանի հուշարձանը նոր շրջանի հայ կերպարվեստի առաջին կոթողային քանդակն է:

Թատրոնը: XIX դ. կեսերին սկզբնավորվում ու զարգանում է հայկական թատրոնը: Հայ արհեստավարժ թատրոնի սկիզբ է համարվում 1861 թվականը, երբ Կ. Պոլսում կազմվեց առաջին մշտական խումբը՝ ***Պետրոս Մաղաքյանի*** ղեկավարությամբ: Այն կոչել են ***«Արևելյան թատրոն»***: Երկրորդ արհեստավարժ թատրոնը բացվում է Թիֆլիսում ***1863 թ.***: Ապա թատրոններ են ստեղծվում նաև Ալեքսանդրապոլում, Վանում և Երևանում:

Այսպիսով՝ հայ նոր թատրոնը կազմավորվում է հայության երկու մշակութային կենտրոններում՝ Կ. Պոլսում և Թիֆլիսում: Արևմտահայ միջավայրում ներշնչվում են եվրոպական ռոմանտիզմով ու պատմական թեմատիկայով, իսկ արևելահայ միջավայրում՝ ռուսական ռեալիզմով, բարքերի կատակերգությամբ ու հասարակական թեմաներով:

1868 թ. Կ. Պոլսում ***Հակոբ Վարդովյանի*** գլխավորությամբ ստեղծվում է երկրորդ՝ ավելի հիմնավոր թատերական կազմակերպությունը, որը հանդես

Վարդգես Սուրենյանց.
«Հռիփսիմեի վանքն Էջմիածնի մոտ», 1897 թ.

էր գալիս հայերեն ու թուրքերեն ներկայացումներով: Պ. Մաղաքյանի թատրոնը, սկզբունքորեն հակառակ լինելով թուրքերեն ներկայացումներին, մրցակցության մեջ մտավ Հ. Վարդովյանի հետ և իր շուրջը համախմբեց ամենաօժտված դերասաններին, որոնց թվում էին ***Պետրոս Ադամյանը*** (1849–1891) և ***Սիրանույշը*** (1857–1932):

Թիֆլիսում Գ. Արծրունու միջոցներով 1879 թ. կառուցվում է երկրորդ թատրոնական շենքը: Հայ թատրոնը հայտնվում է Թիֆլիսի հասարակական և մշակութային կյանքի կենտրոնում: Այստեղ հրավիրված պոլսահայ դերասանները՝ Պ. Ադամյան, Սիրանույշ և ուրիշներ, իրենց խաղացանկով մեծացնում են հասարակության հետաքրքրությունը թատրոնի հանդեպ: Փայլում է Պ. Ադամյանի տաղանդը: 1880–ական թթ. բեմում նա էր կենտրոնական դեմքը. ելույթներ էր ունենում Մոսկվայում, Պետերբուրգում, Օդեսայում և Ռուսաստանի շատ թատերական կենտրոններում:

Հայ թատերական արվեստն աչքի է ընկնում դերասանական վառ անհատականություններով և հարուստ ու բազմաժանր խաղացանկով: Ժամանակի հայ թատրոնի բեմական մշտական առաջնուհին էր Սիրանույշը: XX դարասկզբի

Եղիշե Թադևոսյան.
«Հանձարն ու ամբոխը», 1909 թ.

հայ բեմի առաջատարը ***Հովհաննես Աբելյանն*** էր:

Երաժշտությունը: Այս նույն ժամանակահատվածը շրջադարձային էր հայ երաժշտության համար՝ արձանագրվում են մեծագույն նվաճումներ: Ձևավորվում է երգահանային արվեստը, հիմնադրվում է հայ երգահանների դպրոցը:

XIX դ. երկրորդ կեսից սկսած՝ հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործությունը դառնում է բանահավաք ուսումնասիրողների և երգահանների անսպառ հետաքրքրության նյութ: Ժողովրդագուսանական արվեստը նույնպես ձևավորում է հայ ազգային դպրոց:

Միջնադարյան հոգևոր երաժշտությունը դառնում է լուրջ ուսումնասիրության առարկա: Հոգևոր երգը բազմաձայն դարձնելով՝ դրվում է հայ երգահանական արվեստի հիմքում:

Տիգրան Չուխաճյանը հայ առաջին երգահանն է և հայ օպերային արվեստի հիմնադիրը: Նրա «Արշակ Բ» օպերան (1868 թ.) ոչ միայն հայ, այլև ամբողջ Առա-

Սիրանույշը «Կամելիազարդ տիկինը» պիեսում՝ Մարգարիտայի դերում

Եղիշե Թադևոսյան. «Կոմիտաս», 1936 թ.

ջավոր Արևելքի երաժշտական մշակույթի պատմության մեջ օպերային ժանրի առաջին նմուշն է:

Կ. Պոլսում առաջին կամերային նվագախումբը ստեղծվել է 1861 թ. ***Գրիգոր Սինանյանի*** ղեկավարությամբ, իսկ 1888–1896 թթ. երգահան, ջութակահար և խմբավար ***Հարություն Սինանյանը*** ստեղծեց և ղեկավարեց սիմֆոնիկ նվագախումբ:

XIX դ. երկրորդ կեսի կարևորագույն ձեռքբերումներից է արևելահայ երգահանական դպրոցի հիմնադրումը, որի հեղինակը ***Քրիստափոր Կարա-Մուրզան*** է: Նշանավոր երգահան ***Մակար Եկմալյանի*** շնորհիվ հայ հոգևոր երգը դարձավ բազմաձայն:

Ձևավորվեց հայ գուսանական ազգային դպրոցը՝ ***Ջիվանու*** (Սերովբե Լևոնյան) գլխավորությամբ: Հայ գուսանական դպրոցն իր առջև խնդիր դրեց ստեղծագործելու միայն գրական հայերենով, սահմանելու գուսանական խմբերի գործունեության ներքին կանոններ, հավատարիմ մնալու գուսանական ստեղծագործության երգարվեստի առավել ազգային ակունքներին ու հրաժարվելու արևելյան ազդեցությունից:

Ձայնագրության՝ Համբարձում Լիմոնճյանի ստեղծած նոր համակարգը կատարելագործվեց, համալրվեց նոր նշաններով, ապա դրվեց հայ հոգևոր երգը նշագրելու և աղավաղումներից փրկելու խնդիրը: Այդ գործը փայլուն շարունակողի գտավ՝ ի դեմս հանճարեղ ***Կոմիտասի***: XX դ. սկզբին նա բուռն գործունեություն ծավալեց՝ զբաղվելով հայ ժողովրդական ու հոգևոր երգերի նշագրմամբ, հետազոտությամբ և ժողովրդականացմամբ:

Հայ ազգային օպերայի առաջընթացի ճանապարհին նշանակալի քայլ էր ***Արմեն Տիգրանյանի «Անուշ»*** օպերան, որը 1912 թ. բեմադրվեց Ալեքսանդրապոլում և մեծ ժողովրդականություն ձեռք բերեց:

Ճարտարապետությունը: Հասարակական նոր հարաբերությունների վերելքը հանգեցրեց հայ քաղաքաշինու-

Էջմիածնի Գևորգյան ճեմարանը

թյան զարգացմանը: Եթե Արևմտյան Հայաստանի քաղաքները XIX դ. մնացին անփոփոխ, ապա Արևելյան Հայաստանի քաղաքներն էական վերակառուցման ենթարկվեցին: Երևան, Ալեքսանդրապոլ, Գորիս, Նոր Բայազետ քաղաքների կառուցապատումն իրականացվեց՝ ըստ հաստատված գլխավոր հատակագծերի: Դրա շնորհիվ Հայաստանի քաղաքներում ներդրվեց հատակագծման ժամանակակից համակարգ:

Երևանի վերակառուցումը սկսվեց՝ ըստ 1856 թ. կազմված քաղաքի զարգացման առաջին գլխավոր հատակագծի: Քաղաքի տարերային կառուցապատումը փոխարինվեց հարուստ քաղաքացիների առանձնատներով, վարչական և հասարակական երկհարկանի և եռահարկ քարե շենքերով ձևավորված փողոցների ուղղանկյունաձև ցանցով: Քաղաքի հատակագծի մեջ մտնող Երևանի բերդի և շուկայի հրապարակի միջև հիմնվեց զբոսայգի, անցկացվեց ջրմուղ: Քաղաքի կենտրոնական մասը ստացավ ուղղանկյուն, փոխուղղահայաց փողոցների ցանցի ձև: Ալեքսանդրապոլը նույնպես սկսեցին կառուցապատել: Մինչև XIX դ. վերջը ձևավորվեց քաղաքային հրապարակը, որն ունի ուղղանկյան ձև և արևմուտքից ու արևելքից կառուցապատված է վաճառատեղիների շարքերով, իսկ հյուսիսային ու հարավային կողմերից՝ եկեղեցիներով:

Վաղարշապատի կենտրոնական մասը Էջմիածնի Մայր աթոռի շինարարական գործունեության ծավալման շնորհիվ կառուցապատվեց մի շարք կոթողային շենքերով, որոնց թվում էին Գևորգյան ճեմարանը, նոր վեհարանը, մատենադարանը, աստղադիտարանը:

Ռուսական տիրապետության ենթակայության տարիներին քաղաքաշինությունը զարգացավ նաև Կարսում, որը կառուցապատվեց բնակելի, հասարակական, ուսումնական նոր շենքերով, բացվեցին գիմնազիաներ, կինոթատրոններ, ակումբ և այլն: Շուշիում կառուցվեցին թատրոնի, ակումբի, ուսումնարանների շենքեր:

Թիֆլիսում հայերի կողմից կառուցված թատրոն և դերասանական ակումբ

Մեծ փոփոխություններ տեղի ունեցան քաղաքացիական շինարարության մեջ: Արդյունաբերական հասարակությունը ասպարեզ հանեց Հայաստանի համար նոր շենքեր՝ դրամատներ (բանկեր), եվրոպական տիպի հյուրանոցներ, թատրոններ ու խանութներ, ռեստորաններ և այլն:

Երևանի բնակելի տները՝ կառուցված տեղական սև տուֆից, իրենց ճարտարապետությամբ ազգային ավանդույթները զուգակցում էին ռուսական կլասիցիզմի ոճի հետ: Վարչահասարակական շենքերն աչքի էին ընկնում համեմատաբար խոշոր չափերով, տեղադրվում էին քաղաքի տարածքի կարևոր հանգույցներում: Երևանում դրանց բնորոշ օրինակներն են նահանգապետարանի, քաղաքապետարանի, արական գիմնազիայի, քաղաքային ակումբի, հյուրանոցների, կինոթատրոնի, Ալեքսանդրապոլում՝ գիմնազիայի, առևտրական ուսումնարանի և այլ շենքեր:

Հայկական կապիտալը, որ գործում էր հիմնականում հայրենիքի սահմաններից դուրս, մեծ դեր խաղաց Թիֆլիսի և Բաքվի կառուցապատման ու զարգացման գործընթացում: Բազմազգ բնակչություն ունեցող Թիֆլիսում հայերի թվաքանակը գերակշռող էր, այդ պատճառով քաղաքագլուխն ավանդաբար հայ էր ընտրվում: Քաղաքում կար 24 հայկական եկեղեցի: Քաղաքի կենտրոնի ճարտարապետական կերպարում կարևոր էին հայկական թատրոնների շենքերը, հայ մեծահարուստների առանձնատները, առևտրական տները:

Թիֆլիսում գործող նշանավոր հայ ճարտարապետներից էին ***Գ. Տեր-Միքելյանը, Հ. Քաջազնունին, Ն. Բաևը*** և ուրիշներ: Հայ ճարտարապետների կառուցած կոթողային շենքերը նախագծված էին այդ ժամանակաշրջանում Եվրոպայում և Ռուսաստանում տարածված ոճերով: Այդ շենքերը մասնագիտական բարձր մակարդակի և նուրբ ճաշակի շնորհիվ բռնել են ժամանակի

քննությունը և այսօր Թբիլիսիի կենտրոնի լավագույն կառույցներն են:

Ամեց ու արդիական տեսք ստացավ նաև Ռուսաստանի նավթարդյունաբերության կենտրոն Բաքուն: Հայ նավթարդյունաբերողներ և գործարանատերեր Մանթաշյանի, Ղուկասյանի, Միրզոյանի և այլոց միջոցներով XX դ. սկզբին այդտեղ կառուցվեցին ոչ միայն արդյունաբերական և բնակելի շինություններ, այլև խոշոր հասարակական շենքեր: Թիֆլիսում ստեղծագործող հայ ճարտարապետները Բաքվում ևս ծանրակշիռ ներդրում ունեցան քաղաքի կենտրոնի կառուցապատման գործում: Նշանակալից է Գ. Տեր-Միքելյանի նախագծով նեոկլասիցիզմի ոճով կառուցված հասարակական ժողովարանի ակումբը (այժմ՝ Բաքվի ֆիլիարմոնիայի շենքը), որը հիացնում է ընդհանուր հորինվածքի և առանձին մասերի բարձրարվեստ լուծումով: Ն. Բաևը մոդեռն ոճով կառուցեց բազմաթիվ շենքեր, որոնցից Բաքվի կենտրոնի ճարտարապետության մեջ առավել նշանակալից են Մայիլովի հայկական թատրոնի (այժմ՝ Բաքվի օպերայի և բալետի թատրոն) և երկաթուղային կայարանի շենքերը:

Այսպիսով՝ հայ ճարտարապետությունը միջնադարյան շրջանից թևակոխեց նոր շրջափուլ, զարգացավ ժամանակի արդիական նվաճումների ու ազգային ավանդույթների համադրման ոգով: Այս փուլի ձեռքբերումները նախադրյալներ ստեղծեցին XX դ. հայկական ճարտարապետության վերածնության համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկեք XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի կերպարվեստի տարածված ուղղությունները: Ի՞նչ նշանավոր հայ կերպարվեստագետներ գիտեք. թվարկեք նրանց գործերը:
2. Ներկայացրեք հայ արհեստավարժ թատրոնի պատմությունը և նշանավոր ներկայացուցիչներին: Ի՞նչ գիտեք նրանց մասին: Ի՞նչ դեր է խաղացել թատրոնը հայ իրականության մեջ:
3. Ի՞նչ ձեռքբերումներ արձանագրվեցին հայ երաժշտական արվեստում: Ովքե՞ր էին նշանավոր ներկայացուցիչները: Նրանց ո՞ր գործերին եք ծանոթ:
4. Ինչո՞վ էր պայմանավորված քաղաքաշինության զարգացումը: Ներկայացրեք Հայաստանի քաղաքների կառուցապատման և ճարտարապետական դիմագծի փոփոխման գործընթացները: Ի՞նչ նշանավոր կառույցներ ստեղծվեցին: Ներկայացրեք հայկական ճարտարապետության ձեռքբերումները Թիֆլիսում և Բաքվում: Ի՞նչ նշանավոր ճարտարապետներ էին գործում այդ շրջանում:
5. Աղյուսակով ներկայացրեք նոր շրջանի հայկական մշակույթը: Գրեք սեղմագիր (ռեֆերատ) այդ ժամանակաշրջանի հայ մշակույթի որևէ նշանավոր ներկայացուցչի կամ ուղղության մասին:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

§ 1. ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Նոր շրջանում հայ ժողովրդի մի հատվածը շարունակում էր գոյատևել իր պատմական հայրենիքից դուրս՝ աշխարհի տարբեր երկրներում: Գաղութահայությունը, տվյալ երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի մի մասը կազմելով հանդերձ, պահպանում էր մայրենի լեզուն, սովորությունները, մշակույթն ու դավանանքը:

Այս պատմափուլում իրենց կենսունակ գոյությունը պահպանեցին դեռևս միջնադարից եկող շատ գաղութներ: Դրանց զուգահեռ՝ ձևավորվեցին հայկական նոր գաղթավայրեր:

Սիրիա և Լիբանան: Միջագետքում հայերի թիվն աճեց XIV–XVI դդ.: Հատկապես Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո զգալի թվով հայեր անցան Սիրիա: XVI–XVII դդ., երբ միջազգային առևտրական ճանապարհներն անցնում էին Սիրիայի տարածքով, հայկական համայնքները մասնակցում էին եվրոպական երկրների հետ կատարվող առևտրին: XIX դ. սկզբներին հայերն աշխույժ համայնքներ ունեին Հալեպում, Անտիոքում, Լաթաքիայում, Բեյրութում և այլ բնակավայրերում: Դարի վերջերին նրանց թիվը հասնում էր 80 հազարի: Հետամնաց Օսմանյան կայսրության կազմում գտնվող այդ տարածաշրջանում գերիշխում էին կյանքի ու կենցաղի միջնադարյան ձևերը:

Հայերը զբաղվում էին գյուղատնտեսությամբ, գերազանցապես՝ այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, շերամապահությամբ: Արհեստներից լայն տարածում ունեին ջուլհակությունը, ոսկերչությունը, գորգագործությունը, կաշեգործությունը, դերձակությունը: Ջուլհակության հետ կապված՝ զարգանում էր ներկարարությունը: Կային նաև գորգագործական խոշոր ձեռնարկություններ:

Նշանակալից էր այս գաղթավայրերի առևտրական կյանքը: Ներքին մանր առևտրից բացի՝ հայերն աշխույժ մասնակցում էին նաև արտաքին մեծածավալ առևտրին: Մարաշի ***«Խբբազյան ընկերությունը»*** սեփական գործակալություններ ուներ միաժամանակ Մանչեստրում և Բեյրութում: Բեյրութի ***Գալուստ Կյուլենկյան*** հիմնարկությունը ներմուծում էր Ծովյանովի և Մանթաշովի Բաքվի ընկերության նավթի արտադրանքը, միաժամանակ արտահանում հացահատիկ:

Այս երկրների հայկական գաղութները զրկված էին մշակույթը լայնորեն զարգացնելու հնարավորություններից: Դպրոցներից նշանավոր էին Հալեպի ***Ներսիսյան վարժարանը*** և տակավին ***1749 թ.*** կառուցված ***Զմմառի վանքի*** կաթոլիկ դպրոցը: Կային մշակութային կազմակերպություններ, ինչպիսիք են Հալեպի ***Ռուբինյան միությունը*** (1840), ***Ուսումնա-***

սիրաց ընկերությունը (1880), ***Դպրոցական միությունը*** (1894) և այլն:

XX դ. սկզբներին լույս էին տեսնում «Աղբյուր», «Հայ ձայն», «Տարազիր» և այլ հայկական պարբերականներ: Ստեղծվեցին թատերախմբեր, երգչախմբեր: Մի շարք հայազգի գրողներ ու գիտնականներ նշանակալի դեր կատարեցին արաբական մշակույթի զարգացման գործում:

Կոստանդնուպոլիս և Զմյուռնիա: Նոր ժամանակներում աճեց Կ. Պոլսի հայության դերը: Հայոց պատրիարքը դառնում է արևմտահայության հոգևոր կյանքի, ինչպես նաև աշխարհիկ ամենաբարձր պաշտոնյան օսմանյան Թուրքիայում:

Տնտեսական կյանքի տարբեր ճյուղերում մեծացավ հայության կշիռը: Չելեպիներին և խոջաներին այս շրջանում փոխարինելու եկան ամիրաները, որոնց ձեռքում էին կենտրոնացած առևտուրն ու արհեստագործությունը: Մեծ չափերով ընդարձակվել էր հայերի առևտրատնտեսական գործունեությունը:

Պոլսահայ մշակույթը՝ իր բոլոր ճյուղերով (գրականություն, արվեստ, թատրոն և այլն), բուռն զարգացում ապրեց հատկապես XIX դ. երկրորդ կեսին:

Ճարտարապետ–կառուցողներից նշանավոր էր ***Պալյան*** գերդաստանը, որի ներկայացուցիչները կառուցեցին բազմաթիվ գեղեցիկ շինություններ: Կ. Պոլսում գործում էին հարյուրավոր ուսումնական հաստատություններ, 80–ի հասնող տպարաններ, հրատարակվում բազմաքանակ պարբերականներ: Արևմտահայության կյանքի բոլոր ասպարեզներում Կ. Պոլիսը դարձավ լիարժեք ու զարգացած կենտրոն:

Զմյուռնիայում, որ հնուց ի վեր ենթակա է եղել հունական քաղաքակրթությանը, XIX դ. սկզբին բնակվում էր 12 հազար, իսկ XX դ. սկզբին՝ շուրջ 30 հազար հայ:

Արհեստներից տարածված էին ոսկերչությունը, գորգագործությունը, մետաքսագործությունը և այլն: Կային բազմաթիվ չթագործական արհեստանոցներ: Հայ արհեստավորների արտադրած չիթը ներկրվում, գունազարդվում էր և առաքվում արտաքին շուկաներ: Զմյուռնիայում XIX դ. երկրորդ կեսին կային 30 ոսկերչական, 20 կարի, 16 կոշկակարական, 17 ատաղձագործական, 15 վարսավիրական, 12–ական ժամագործական և երկաթագործական արհեստանոցներ: Արհեստավորները հիմնականում համախմբված էին էնաֆությունների (համքարությունների) մեջ:

Առևտուրը հիմնականում հայերի և հույների ձեռքում էր: Հայերը եվրոպական երկրներ էին արտահանում բամբակ, մրգեր, ձիթապտուղ, ծխախոտ և այլն: Լայն սպառում ունեին հայկական գորգերը: Բազմաթիվ մրգերի արտահանության մեջ առաջին տեղում էր թուզը: Այդ բնագավառի նշանավոր առևտրականներից էր ***Արամ Համբարձումյանը***, որը ստացել էր «Թուզի թագավոր» մականունը:

Զմյուռնիան ևս հայ մշակույթի ճանաչված կենտրոն էր: Այնտեղ կային կրթական հաստատություններ, որոնցից նշանավոր էր ***Մեսրոպյան վարժարանը***: Քաղաքում կային բազմաթիվ տպարաններ, հրատարակվում էին պարբերականներ: Հայ համայնքն ուներ մշակութային մի շարք ընկերություններ: Զմյուռնիայում էին ապրում ու գործում արևմտահայ նշանավոր

գործիչներ, գրողներ ու հրապարակախոսներ:

1919–1922 թթ. թուրքերի կողմից կազմակերպված զանգվածային կոտորածների ու արտագաղթի հետևանքով այնտեղ այլևս հայ բնակչություն չմնաց:

Իրան: Հայաստանի հարավարևելյան հարևան Իրանում միշտ հայ բնակչություն է եղել, որը ստվարացավ հատկապես շահ Աբասի կազմակերպած մեծ բռնագաղթի և Նոր Ջուղայի հիմնադրման հետևանքով: Պարսից շահը ձգտում էր հայերի միջոցով շենացնելու երկիրը: Այդ նպատակով նրանց տվեց մի շարք արտոնություններ: Նոր Ջուղան ուներ քաղաքապետ, որը տնօրինում էր գաղութի ներքին կյանքը և մարմնավորում նրա ինքնավարությունը:

Օգտվելով ստեղծված բարենպաստ պայմաններից՝ ջուղայեցի վաճառականներն առևտրական լայն գործունեություն ծավալեցին: Նրանք ստեղծեցին իրենց կազմակերպությունը՝ ***«Ջուղայի հայ առևտրական ընկերություն»*** անունով: Ընկերությունը 1667 և 1673 թթ. առևտրական պայմանագրեր կնքեց Ռուսաստանի, իսկ ավելի ուշ՝ անգլիական ընկերության հետ: XVIII դ. գաղութը թուլանում է, և հայերը բռնում են գաղթի ճանապարհը:

Հետագայում Իրանում հայ բնակչությունը կրկին ստվարացավ և XX դ. սկզբներին հասավ 180 հազարի: Հայերը բնակվում էին գերազանցապես երկրի հյուսիսային մասում՝ Թավրիզում, Պարսկահայքում՝ Խոյում, Մակուում, Սալմաստում և այլ վայրերում:

Պարսկահայերն աշխույժ առևտուր էին անում երկրի ներսում և նրա սահմաններից դուրս: XIX դ. առաջին կեսին դրան խոչընդոտում էին մաքսային արգելափակումները և առևտրի անապահով վիճակը: Դարի երկրորդ կեսին մեծածավալ առևտրի հետ զարգանում էր նաև արդյունաբերությունը: Կային մեծահարուստ առևտրաարդյունաբերողներ: Դրանցից էին ***Լիանոզովները***, որոնք իրենց ձեռքում էին պահում Կասպից ծովի ամբողջ հարավային մասի ձկնարդյունաբերությունը: Զգալի միջոցների տեր էին նաև ***Թումանյան*** եղբայրները, որոնք ունեին իրենց սեփական բանկը:

Իրանի հայ բնակչությունն ակտիվ մասնակցություն է ունեցել երկրի հասարակական–քաղաքական և մշակութային կյանքին: Պարսկական արքունիքում XIX դ. երկրորդ կեսին բազմաթիվ հայեր դիվանագիտական պատասխանատու պաշտոններ էին վարում: Այդ շրջանում Անգլիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում պարսկական դեսպանները հայեր էին: Անգլիայի դեսպան ***Մելքոն խանը*** Լոնդոնում հրատարակում է ***«Ղանուն»*** («Օրենք») պարբերականը, որը ժողովրդավարական, սահմանադրական գաղափարներ քարոզող առաջին ամսագիրն էր պարսկական իրականության մեջ: 1905–1911 թթ. հեղափոխությանը հայերը գործուն մասնակցություն ունեցան: ***Եփրեմ խանը*** դարձավ սահմանադրական շարժման ակտիվ մասնակիցներից ու առաջնորդներից մեկը: Հայերը երկրի բարձրագույն օրգանում՝ ***մեջլիսում***, երկու պատգամավոր ունեին: Նրանք ստեղծեցին ***Ազգային խորհուրդ***, որը միջնորդի դեր էր կատարում բարձրագույն իշխանությունների և հայ համայնքների միջև:

Ազգային մշակույթի պահպանման ու զարգացման գործում էական նշանակու-

թյուն ունեին մայր հայրենիքին մոտ լինելու համակարգը և նրա հետ ունեցած սերտ կապերը: XIX դ. սկզբներին դպրոցներ են հիմնվում Թավրիզում, Թեհրանում և այլուր: Սալմաստի գավառի 11 դպրոցներում XX դ. սկզբին տվորում էր 800 աշակերտ:

1880-ական թթ. հայկական տպարաններ են հիմնվում մի շարք քաղաքներում: Ստեղծվում են թատերասիրաց, բարեգործական և այլ ընկերություններ: Իրանահայ կենտրոններում հրատարակվում էին շուրջ երկու տասնյակի հասնող պարբերականներ: Շատ հայ գործիչներ, հայ մշակույթին ծառայելով, աչքի ընկան նաև երկրի ընդհանուր մշակութային կյանքի առաջադիմության մեջ:

Հնդկաստանի հայկական գաղութները: Հայերը Հնդկաստանում բնակություն են հաստատում հատկապես XVI–XVII դդ.: Գլխավորապես Պարսկաստանից կատարվող գաղթի հետևանքով մի շարք ծովափնյա քաղաքներում XVII–XVIII դդ. ձևավորվում են հայկական համայնքներ: Դրանցից էին Սուրաթը, Ագրան, Մադրասը, Կալկաթան, Բոմբեյը:

Եվրոպացիները սկզբնապես տեղական իշխանությունների հետ բանակցելու ժամանակ դիմում էին հայերի օգնությանը: Հատկանշական է, որ 1688 թ. պայմանագիր է կնքվում անգլիական Արևելահնդկական ընկերության և հնդկահայ վաճառականների միջև, որով հայերն արտոնություններ էին ստանում: Հնդկահայերն ունեին ծովային նավեր, որոնք երթևեկում էին հայկական դրոշներով: Եվրոպացիները Հնդկաստանում հաստատվելուց հետո սկսեցին խոչընդոտել հայերի առևտրին: Շուտով նրանց միջև տեղի ունեցող մրցակցությունը վերածվում է թշնամանքի:

Հայերը սկսում են մասնակցել տեղի բնակչության եվրոպացիների դեմ մղվող պայքարին: Հայ-հնդկական համատեղ պայքարի նշանավոր իրադարձություններ կատարվեցին Բենգալիայում: 1760–1764 թթ. ուժեղ պայքար ծավալվեց անգլիացիներին Հնդկաստանի արևելյան ափերից դուրս մղելու համար: Բենգալիայի բանակում կային շատ հայեր, իսկ հրամանատարն էր ***Գրիգոր Հարությունյանը (Գորգին խանը)***: Հատկանշական է, որ անգլիացիների դեմ տարած հաղթանակից հետո ամեն անգամ հնդկական դրոշի հետ բարձրացվել է նաև հայկական դրոշը: Անգլիացիները, հաջողության չհասնելով, փորձում են կաշառել Գորգին խանին, որպեսզի վերջինս անցնի իրենց կողմը: Նա անդրդվելի է մնում՝ պատասխանելով, որ չի կարող դավաճան դառնալ, նշում է, թե *«զի հեռի է յազգէն մերմէ այդպիսի ուխտադրժութիւն»*:

Հնդկահայ շրջաններում զարգացում ապրեց հայ մշակույթը: Ճարտարապետության մեջ նշանավոր են եռահարկ կամուրջը, քարե սանդուղքները, Կալկաթայի Հայկական նավահանգիստը, եկեղեցիները և այլ շինություններ: Այդուհանդերձ, հնդկահայերի ամենաարժեքավոր ներդրումը հայկական առաջին պարբերականի՝ «Ազդարարի» հիմնումն է: Մի շարք քաղաքներում հիմնադրվեցին հայկական տպարաններ:

Մադրասում XVIII դ. 70–80-ական թթ. մի խումբ հայրենասերներ լայն գործունեություն են ծավալում հայ ժողովրդի ազատագրումը քարոզելու ուղղու-

թյամբ: Հնդկահայ հայրենասիրական այդ խմբակը Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ հիմնում է տպարան: Նրանք հրատարակում են մի քանի արժեքավոր գրքեր, որոնցում քարոզում էին Հայաստանի անկախությունը վերականգնելու գաղափարը: Լուսավորություն տարածելու, հետամնացության դեմ պայքարելու հնդկահայ գործիչների քարոզը ժամանակի համար խիստ առաջադիմական էին:

Հնդկահայերը կապերը չէին կտրել մայր հայրենիքից: Նրանց կողմից մշակվում և տարածում է գտնում այն համոզումը, որ հայ ժողովրդի միավորումը պետք է տեղի ունենա Արևելյան Հայաստանում:

Լուսավորություն տարածելու կարևոր ձեռնարկում էր ***Կալկաթայում 1821 թ. Մարդասիրաց ճեմարանի*** բացումը: Դպրոցն ուներ գիշերօթիկ բաժին այլ երկրների հայ համայնքների երեխաների համար: Ճեմարանում դասավանդել են Մեսրոպ Թաղիադյանը և ճանաչված այլ դեմքեր:

Հնդկահայ համայնքները XIX դ. կեսերից թուլանում և կորցնում են իրենց նշանակությունը:

Եգիպտոս: Հայերը Եգիպտոսում հաստատվել և իրենց փոքր համայնքներն են հիմնել XII–XIII դդ.: Երբ երկիրն ընկավ օսմանյան տիրապետության տակ (1517), հայերի վիճակը վատթարացավ: Միջազգային տարանցիկ առևտրի շնորհիվ XVIII դ. հայ համայնքներում կյանքն աշխուժացավ: Դարի վերջում Ֆրանսիայի դեմ կռվող եգիպտական զորքի որոշ հրամանատարներ հայազգի մամլուքներ էին: Նրանցից ոմանք, ծառայության մտնելով Նապոլեոնի բանակում, անցել են Ֆրանսիա: Թուրքական տիրապետության տակ Եգիպտոսը մռայլ ժամանակաշրջան էր ապրում: Համանման վիճակում էին նաև հայկական համայնքները: Մուհամեդ Ալիի կառավարման ժամանակ (XIX դ. առաջին կես) ամբողջ երկրի հետ վերելքի ուղի բռնեցին նաև հայ գաղթօջախները: Սկսվեց հայերի գաղթը դեպի Եգիպտոս: Եթե XIX դարի սկզբին հայ ազգաբնակչության թվաքանակը հազիվ հասնում էր 3 հազարի, ապա դարի կեսին կազմում էր 10 հազար, իսկ XX դարի սկզբներին՝ 15 հազար:

Հայերը նկատելի դեր էին կատարում երկրի տնտեսության մեջ: Այստեղ ևս զարգացած էր արհեստագործությունը: Լայն ճանաչման էին արժանացել հայ ոսկերիչները, դերձակները, ասեղնագործները: Հայերը կարևոր դեր էին կատարում նաև արդյունաբերության մեջ: Գերազանցապես հայ և հույն մասնագետների միջոցով Եգիպտոսում հիմնադրվեց և զարգացավ ծխախոտագործությունը: Եգիպտոսի ծխախոտի արտադրության կեսից ավելին բաժին էր ընկնում հայ ձեռնարկատերերին:

Եգիպտահայերն աշխույժ մասնակցություն ունեին երկրի ներքին և արտաքին առևտրին: Նրանք հանդես էին գալիս որպես վաճառականական կապիտալի ներկայացուցիչներ: Հասնելով մեծ հզորության՝ նրանք 1837 թ. Կահիրեում հիմնեցին Եգիպտոսի առաջին բանկը:

Եգիպտահայերն աչքի ընկան նաև երկրի քաղաքական կյանքում: Հիշատակության արժանի են ***Նուբար փաշան, Առաքել Ապրոյանը, Հակոբ Արթինը, Պողոս Նուբարը:*** Նուբար փաշան, որը մի շարք բարձրաստիճան պաշտոններ էր

վարել, հեղինակեց նաև դատական բարեփոխումները: Նրա որդու՝ Պողոս Նուբարի ջանքերով 1906 թ. հիմնադրվեց համազգային նշանավոր կազմակերպություն՝ ***Հայկական բարեգործական ընդհանուր միություն***:

Եգիպտահայերն ունեցել են աշխույժ մշակութային կյանք, որը եվրոպական մշակույթի ազդեցությամբ առաջադիմել է: Առաջին հայկական դպրոցը հիմնվել է Կահիրեում 1828 թ., իսկ Ալեքսանդրիայում՝ 1851 թ.: Հայկական դպրոցների թիվը XX դ. սկզբներին հասավ 11–ի, որոնցում ուսանում էր շուրջ 1600 աշակերտ: Հայկական համայնքներում կային գրադարաններ, ակումբ–ընթերցարաններ, մշակութային ընկերություններ: Առաջին հայ պարբերականը՝ «Արմավենին», հրատարակվել է 1865 թ. Ալեքսանդրիայում, 1889 թ. լույս է տեսել «Նեղոս» շաբաթաթերթը: Հետագայում հրատարակվեցին բազմաթիվ պարբերականներ: Կահիրեում և Ալեքսանդրիայում գործում էին բավականաչափ կատարելագործված 20 տպարաններ:

Եգիպտահայերը տվել են նաև գիտության ու արվեստի շատ նշանավոր գործիչներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ աճեց հայերի թիվը Սիրիայում և Լիբանանում: Ո՞ր քաղաքներում կային հայ համայնքներ: Ինչո՞վ էին զբաղվում հայերը:
2. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին պոլսահայ գաղութում նոր ժամանակներում: Պոլսահայ ճարտարապետների ի՞նչ նշանավոր գերդաստան գիտեք: Որտե՞ղ է Զմյուռնիան (Իզմիրը): Նշե՛ք փաստեր, որոնք վկայում են քաղաքում հայ կրթամշակութային աշխույժ կյանքի մասին:
3. Ինչի՞ հետևանքով ստվարացավ Իրանի հայ բնակչության թիվը: Ե՞րբ թուլացավ Նոր Ջուղայի հայ գաղութը: Ո՞րն էր պարսկահայերի հիմնական զբաղմունքը: Ի՞նչ մեծահարուստ առևտրաարդյունաբերողներ, նշանավոր գործիչներ կային:
4. Հնդկաստանի ո՞ր քաղաքներում էին ձևավորվել հայկական համայնքներ: Առևտրական գործունեության մեջ ի՞նչ հաջողություններ ունեցան հնդկահայերը: Ի՞նչ գիտեք Գորգին խանի մասին: Հայաստանի ազատագրության, հայ մշակույթի, լուսավորության պատմության մեջ ի՞նչ ներդրում են ունեցել հնդկահայերը: Ե՞րբ և ինչո՞ւ իրենց նշանակությունը կորցրին հնդկահայ համայնքները:
5. Ե՞րբ են հայերը հաստատվել և իրենց համայնքները հիմնել Եգիպտոսում: Ե՞րբ և ո՞ւմ օրոք մեծացավ հայերի հոսքը Եգիպտոս: Թվարկե՛ք եգիպտահայ նշանավոր գործիչների:
6. Աղյուսակով ներկայացրե՛ք Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղթավայրերը, համայնքները (քաղաքները), գոյության ժամանակաշրջանը, նշանավոր գործիչներին, հայերի զբաղմունքը, պատմամշակութային կարևոր իրադարձությունները:

§ 2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԵՐԸ

Աշխարհով մեկ ափռված հայկական գաղութներն առաջացել են տարբեր հանգամանքների բերումով և միանգամայն տարբեր ժամանակներում: Ռուսաստանի հայկական գաղութները փաստորեն հիմնվել են միևնույն պատմական փուլում՝ XVIII դ.: Այդ իրողությունը պայմանավորված էր Հայաստանի ազատագրումը Ռուսաստանի օգնությամբ իրականացնելու կողմնորոշման հետ: Արևելյան շուկաներին տիրանալու համար ռուսական պետությունը ձգտում էր ընդարձակելու երկրի հարավային սահմանները, դուրս գալու Սև ծով, հաստատվելու Անդրկովկասում: Այդ նպատակին հասնելու համար նա երկրի գրեթե անմարդաբնակ հարավային տափաստանները բնակեցնելու և տնտեսապես յուրացնելու քաղաքականություն էր վարում: Արտոնություններ էր տալիս այն օտարերկրացիներին, որոնք կբնակվեին այնտեղ: Ռուսական կառավարությունը, իր շահերից ելնելով, խրախուսում էր հատկապես հայերի և վրացիների ազատագրական շարժումները: Օգտվելով կառավարության ընձեռած հնարավորություններից՝ բազմաթիվ հայեր գաղթեցին Ռուսաստան և հիմնեցին իրենց համայնքները:

Ղրիմ: 1778 թ. արտագաղթի հետևանքով թուլացած Ղրիմի հայկական գաղութը հետագա տասնամյակներում համալրվեց հայերի ներհոսքով: Տնտեսական կյանքի քիչ թե շատ բարվոք պայմանները նպաստում էին տարբեր երկրներից, հատկապես Արևմտյան Հայաստանից հայերի՝ Ղրիմ գաղթելուն, որը 1783 թ. միացվել էր Ռուսաստանին:

1799 թ. հրապարակվեց կայսերական հրովարտակ, որը, վերահաստատելով նախկինում տրված արտոնությունները, նոր հնարավորություններ էր ընձեռում հայերին: Հրովարտակը Հին Ղրիմ քաղաքը հատկացնում էր հայերին, նրանց արտոնում էր սեփական ռատուշա (քաղաքապետարան) ունենալ, քաղաքին մերձակա ***Ս. Խաչ վանքին*** էր վերադարձնում նախկին կալվածքները: ***Հին Ղրիմի*** ռատուշան և ***Ղարասուբազարի*** դատարանը վարում էին այդ գաղթօջախների վարչական, տնտեսական և դատական գործերը:

Հայերի զբաղմունքն առաջվա նման հիմնականում առևտուրն ու երկրագործությունն էին: Ղրիմահայերն իրենց առևտրական գործունեությամբ կապված էին ռուսական շուկաների, օսմանյան առևտրական շրջանների հետ: Նրանք նկատելիորեն նպաստում էին Ղրիմում առևտրի վերելքին:

Նշանավոր առևտրականներից շատերն ունեին ընդարձակ կալվածքներ: Սուրբ Խաչ վանքն ուներ 4000 դեսյատին տարածք:

Գաղութում աշխույժ էր նաև մշակութային կյանքը: Ղարասուբազարում 1815 թ. բացվում է առաջին դպրոցը, ապա դպրոցներ են հիմնվում Հին Ղրիմում, Թեոդոսիայում, Եվպատորիայում: XX դ. սկզբներին Ղրիմի թերակղզում կար 9 հայկական տարրական դպրոց՝ 250 աշակերտներով:

Ղրիմահայ գաղութում XIX դ. երկրորդ կեսին հրատարակվում էին «Մասյաց

աղավնի» և «Դաստիարակ» պարբերականները:

Աստրախան: Այստեղ հայերը սկսում են բնակություն հաստատել XVI դարից, սակայն նրանց առևտրատնտեսական գործունեությունը մեծ թափ է ստանում XVIII դ.: Նոր Ջուղայի և ռուսական արքունիքի միջև 1667 թ. առևտրական պայմանագրի կնքումից հետո Վոլգան ջրային ուղին ավելի կարևոր նշանակություն է ստանում: Մեծ ծավալներ է ընդունում Ռուսաստանի և Պարսկաստանի միջև այդ ուղիով կատարվող առևտուրը: Առևտրի հիմնական ապրանքը հում մետաքսն էր, որի վաճառքում հայերի մասնակցությունը շատ մեծ էր: Աստրախանի միջոցով ներմուծվող մետաքսի 70–80%–ը կատարում էին հայերը:

Աստրախանը դարձել էր Ռուսաստանի մետաքսեղենի և բամբակեղենի արտադրության հիմնական կենտրոն, որում ևս նշանակալի էր հայերի դերը: 1804 թ. Աստրախանի մետաքսագործական 25 ֆաբրիկաներից 23–ը, բամբակագործական 39 ֆաբրիկաներից 36–ը և կաշեգործական 15 ձեռնարկություններից 6–ը պատկանում էին հայերին:

1717 թ. Աստրախանը դարձել էր Ռուսաստանում բնակվող հայության թեմական կենտրոնը: Դարի վերջին քառորդում թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանը լայն գործունեություն ծավալեց հայկական գաղութներում:

Աստրախանի հայերը ևս օգտվում էին առանձնաշնորհումներից: Կառավարությունը թույլատրեց (1746 թ.) հիմնել հատուկ հայկական դատարան կամ ***ռաթհաուզ***, որը հայերի ինքնավարության մարմինն էր: Ռաթհաուզը վարում էր դատական գործերը, հետևում հարկերի գանձմանը, իրագործում ոստիկանական պարտավորություններ և ներկայացնում համայնքի շահերն իշխանությունների առջև: Հայկական դատարանին անհրաժեշտ էր ունենալ դատաստանագիրք: Դրանով զբաղվեցին գիտակ մտավորականներ, և 1765 թ. ստեղծվեց «Աստրախանի հայոց դատաստանագիրքը»: Այն կազմված էր Մխիթար Գոշի դատաստանագրքի, և ընդհանրապես հայկական սովորութային նորմերի հիման վրա՝ ռուսական օրենքների հաշվառումով:

Ռուսական վաճառականությունը բողոքում էր հայերին և մյուս օտարերկրացիներին արտոնություններ տալու դեմ, պահանջում էր բոլոր ազգությունների համար ընդհանուր համահավասար պայմաններ ստեղծել: Աստիճանաբար կառավարությունը սկսեց վերացնել առանձնաշնորհումները: 1840 թ. հրապարակվեց Սենատի հրամանագիրը հիշյալ գաղութներում հայկական դատարանի գործունեությունը վերացնելու մասին: Ավելի ուշ՝ 1870–ական թթ., վերացվեցին հայկական գաղթավայրերի մյուս արտոնությունները:

Աստրախանի հայկական գաղութն ուներ ուրույն մշակութային կյանք: Վաճառական ***Նիկողայոս Աղաբաբյանը*** 1810 թ. հիմնադրեց իր անունը կրող դպրոց: Ուսումնարանը գոյատևեց հարյուր տարի և նշանակալի կրթական–լուսավորական գործունեություն ունեցավ: 1816 թ. լույս տեսավ ***«Արևելյան ծանուցմունք»*** շաբաթաթերթը, որը ռուսահայ առաջին պարբերականն էր:

Մոսկվա և Պետերբուրգ: Մոսկվան հայերին ծանոթ էր XIV դարից, սակայն

հայերի հոսքը ուժեղացավ, և հայկական համայնք ձևավորվեց միայն XVII դ. երկրորդ կեսին: Դրան նպաստեց 1667 թ. պայմանագիրը: Մոսկվա էին գալիս հայ վաճառականները, դիվանագետները, արվեստագետները:

Վաճառական Շերիմանը հիմնում է Մոսկվայի առաջին մետաքսի գործարանը: Մետաքսագործարանների տեր ***Վասիլի Խոստատովը*** ստեղծեց ռուսական առաջին բաժնետիրական ընկերությունը: Մոսկվայում և ապա Պետերբուրգում հաստատված Լազարյանները մեկ դարից ավելի կարևոր դեր կատարեցին բոլոր ռուսահայ գաղութների կյանքում:

Պետերբուրգի հիմնադրումից ***(1703 թ.)*** մի քանի տարի անց հայերը սկսեցին բնակություն հաստատել այնտեղ: Ռուսաստանի նոր մայրաքաղաքի աճող դերի հետ մեկտեղ ավելանում էր նաև տեղի հայ բնակչությունը: Այստեղ բնակություն են հաստատում ***Իսպահանով*** եղբայրները, որոնք հիմնում են բաժնետիրական ընկերություն Իրանի հետ առևտուր անելու համար: Պետերբուրգի հայերը (Մանուքով, Ախվերդով, Շիրվանով, Մանուչարյան եղբայրներ) հիմնեցին մետաքսագործական ֆաբրիկաներ, ուր արտադրում էին արևելյան գործվածքներ: 1779 թ. քաղաքի կենտրոնում բացվում է ***Ս. Կատարինե***, իսկ 1791 թ. հայկական գերեզմանոցում՝ ***Ս. Հարություն*** հայկական եկեղեցիները:

Մոսկվան և Պետերբուրգը լուսավորական շարժման նշանավոր կենտրոններ էին: Մեծ էր 1781 թ. Լոնդոնից Պետերբուրգ տեղափոխված ***Խարդարյան տպարանի*** նշանակությունը: Անչափ մեծ է 1815 թ. Մոսկվայում հիմնադրված ***Լազարյան ճեմարանի*** կրթական, մշակութային–լուսավորական դերը: Ռուսաստանի մայրաքաղաքների հայ համայնքների ինքնավարությունը իրականացնում էր եկեղեցական խորհուրդը, որի անփոփոխ ղեկավարն էին ***Լազարյանները***: Եկեղեցական խորհուրդը համազգային գիտակրթական և լուսավորական մեծածավալ գործունեություն ծավալեց: Թեպետև փոքր էին այդ քաղաքների հայկական համայնքները, բայց մեծ էր նրանց մշակութային ու հասարակական–քաղաքական դերը:

Հյուսիսային Կովկաս: Հայրենիքին մերձակա այս երկրամասում հայկական գաղութներ են հիմնվել XVIII դ.: Հայերը 1735 թ. բնակություն են հաստատում նորակառույց ***Ղզլարում***, իսկ մի քանի տասնամյակ անց՝ 1763 թ.՝ ***Մոզդոկ*** սահմանային ամրոցում: Հետագայում ձևավորվեցին ***Եկատերինոդարի*** (այժմ՝ ***Կրասնոդար***), ***Մայկոպի, Ստավրոպոլի*** և այլ քաղաքների հայկական համայնքները: Չերքեզահայերը ***1839 թ.*** հիմնեցին ***Արմավիրի*** հայկական գաղութը: Նրա ինքնավարությունը մարմնավորում էր ռաթհաուզը, որը նույն իրավասություններն ուներ, ինչ որ մյուս գաղութներում:

Տեղական պայմաններից ելնելով՝ հայերը սկսեցին մշակել բրինձ, բամբակ, քունջութ, խաղող և այլն: Որոշակի էր հայերի դերը նաև այգեգործության, բանջարաբուծության, հատկապես խաղողագործության մեջ: Ղզլարի, Մոզդոկի հայերն առանձնանում էին մյուս բնակիչներից թթենու մեծատարածք այգիներով, որոնք մշակվում էին մետաքս ստանալու համար: Երկրամասում մետաքսի հումքի արտադրողները հիմնականում հայերն

էին: Լայնորեն տարածված էր օղու և գինու արտադրությունը: Հայերը գործուն մասնակցություն ունեին երկրամասի ներքին և արտաքին առևտրին:

Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները սերտորեն կապված էին մայր հայրենիքի և Ռուսաստանի մյուս քաղաքների հետ: Մշտական շփումների շնորհիվ այդ գաղութները պահպանում էին իրենց լեզուն, ազգային սովորությունները: Այդ հարցում մեծ էր դպրոցների և բարեգործական, լուսավորական ընկերությունների դերը: Ղզլարում 1818 թ., Մոզդոկում 1820 թ. բացվում են առաջին դպրոցները: Մինչև դարի վերջն այդ քաղաքներում և հայաբնակ մյուս բնակավայրերում բացվում են բազմաթիվ դպրոցներ: 1912 թ. երկրամասի հայկական դպրոցների թիվը հասնում էր 34–ի, ուր սովորում էր 2300 երեխա: Հայկական շրջաններն ունեին իրենց թատերական, երաժշտական խմբերը:

Նոր Նախիջևան: Կովկասի նախադռներում հիմնադրված ***Նոր Նախիջևանը*** (այժմ՝ ***Դոնի Ռոստով***) Ռուսաստանի ամենախոշոր հայկական գաղութն էր: 1778 թ. Ղրիմի հայաշատ վայրերից գաղթեցվում են 12 600 հայեր: Նրանք հասնում են Դոնի տափաստանը և Ս. Դմիտրի Ռոստովսկու ամրոցի մոտակայքում հիմնադրում Նոր Նախիջևան քաղաքը: Քաղաքի մերձակայքում բնակություն են հաստատում ***Չալթր, Թոփտի, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նեավիտա*** հայկական գյուղերը: Եկատերինա II–ի շնորհագրով (1779 թ. նոյեմբերի 14) գաղթեցված ղրիմահայերը ստացան նշանակալի առանձնաշնորհումներ: Նրանց տրվեց 87 հազար դեսյատին հողատարածք: Տասը տարով հայերն ազատվեցին հարկերից: Հայությանը վերապահվեց դավանանքի ազատության, ազգային լեզվով գործավարության, ազատ առևտրի իրավունք և այլն:

Գաղութի ինքնավարությունն իրականացնում էր ***մագիստրատը***, որի իրավունքները տարածվում էին քաղաքի և գյուղերի վրա:

Դոնի հայությունն, օգտվելով ստեղծված նպաստավոր պայմաններից, զարգացրեց տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը: Գյուղատնտեսության մեջ նշանավոր էր ցորենի մշակումը. այն մեծ չափերով արտահանվում էր: Հայերը հաջողությամբ զբաղվում էին խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ: Լայն տարածում էր գտել անասնապահությունը: Նշանակալի հաջողությունների հասան արհեստագործությունը և արդյունաբերությունը:

Նոր Նախիջևանի գաղութը նշանակալի դեր ունեցավ հայ մշակույթի պահպանման և զարգացման գործում: Բազմաթիվ ծխական, իգական դպրոցների կողքին 1880–ական թվականներին հիմնվեցին ժամանակի պահանջները բավարարող ժառանգավորաց, արհեստավորական, թեմական դպրոցներ: Գաղութում գործում էին մշակութային, լուսավորական, բարեգործական կազմակերպություններ, հրատարակվում թերթեր, գրքեր: Հայության գրական–մշակութային կյանքում մեծ էր իրենց հայրենակիցներ Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի և այլ գործիչների դերը:

Գրիգորիոպոլ: Այս գաղութի հիմնադրումն առնչվում է 1787–1791 թթ. ռուս–թուրքական պատերազմի հետ: Պատերազմի ավարտից հետո Թուր-

քիայի տիրապետության տակ գտնվող Մոլդովայից և Բեսարաբիայից գաղթեցվեց շուրջ 4000 հայ: Նրանք Դնեպր գետի ավազանում հիմնադրեցին ***Գրիգորիոպոլ*** քաղաքը և ***Իոսիֆովկա, Վասիլևկա*** գյուղերը: Եկատերինա II կայսրուհու հրամանագրով արտոնություններ շնորհվեցին նորաբնակներին: Գրիգորիոպոլը ստացավ ինքնավարություն՝ հանձին մագիստրատի:

Հայկական գաղութը շուտով հայտնի դարձավ որպես առևտրական կենտրոն: Խոշոր վաճառականները ստեղծեցին 95 հոգուց բաղկացած առևտրական ընկերություն: Սկզբնական շրջանում առևտուրը կատարվում էր արևելյան երկրների հետ, իսկ հետագայում հայ վաճառականները թափանցեցին ռուսական շուկաներ:

Գրիգորիոպոլում բացվեցին դպրոցներ: XIX դ. 60-ական թվականների բարեփոխումների ժամանակ վերացան նաև այս գաղութի առանձնաշնորհները, սակայն ստեղծվեցին հոգաբարձության և բարեգործական հաստատություններ, որոնք ապահովում էին հայ համայնքի գոյատևումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ են հիմնվել Ռուսաստանի հայկական գաղութները: Ինչո՞վ էր դա պայմանավորված: Թվարկեք ղրիմահայ նշանավոր գերդաստաններ և դրանց ներկայացուցիչների: Մշակութային ինչ կարևոր իրադարձություններ կատարվեցին ղրիմահայերի կյանքում:
2. Երբ են հայերը բնակություն հաստատել Աստրախանում: Ինչ ձեռքբերումներ և առանձնաշնորհումներ ունեին Աստրախանի հայերը: Ինչո՞ւ և երբ վերացվեցին հայկական գաղթավայրերի արտոնությունները:
3. Երբ է ձևավորվել Մոսկվայի հայ համայնքը. ինչը նպաստեց դրան: Երբ են հայերը բնակություն հաստատել Պետերբուրգում, երբ և ո՞ր եկեղեցիներն են կառուցել:
4. Երբ և Հյուսիսային Կովկասի ո՞ր քաղաքներում ձևավորվեցին հայկական համայնքներ: Ինչ գործոնների շնորհիվ են Հյուսիսային Կովկասի հայ համայնքները պահպանել ինքնությունը, մայրենի լեզուն:
5. Ո՞րն էր Ռուսաստանի ամենախոշոր հայկական գաղութը. երբ է այն հիմնադրվել: Քաղաքի մերձակա ո՞ր գյուղերն էին հայաբնակ: Ինչ արտոնություններ էին ստացել հայերը:
6. Ինչպե՞ս և որտե՞ղ է առաջացել Գրիգորիոպոլ քաղաքը: Ներկայացրեք գաղութի առևտրական և լուսավորական կյանքը:

§ 3. ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Բուլղարիա: Միջին դարերում բավականաչափ հայեր էին բնակվում Բուլղարիայի տարբեր վայրերում: Հայկական համայնքներ էին ձևավորվում հատկապես XVII–XVIII դդ. ***Վառնայում, Ռուսչուկում, Սոֆիայում*** և այլ քաղաքներում: Թուրքական տիրապետության ծանրությունը հավասարապես կրում էին նաև

բուլղարահայերը: Նրանք զբաղվում էին արհեստագործությամբ և առևտրով:

1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում Բուլղարիան ազատագրվեց թուրքական լծից և բռնեց զարգացման ուղին: Պատմական այդ իրադարձությունն էական նշանակություն ունեցավ նաև հայ համայնքների համար: Նրանք օգտվում էին երկրում հաստատված ազատությունից և օրենսդրական կարգերից: Աշխուժացավ հայերի մշակութային կյանքը: Բացվեցին հայկական դպրոցներ, նրանցում կազմակերպվեցին երգի և թատերական խմբեր:

Դարեր շարունակ ապրելով Բուլղարիայում և պահպանելով ազգային մշակույթի ավանդները՝ հայերը որոշ ազդեցություն են թողել բուլղարական մշակույթի վրա: Ակադեմիկոս ***Գուվրիկ Կացարովը*** գրել է. *«Բուլղար եկեղեցիների վրա հայ ճարտարապետության ազդեցությունն ակներև է»*: Համանման ազդեցություն է երևում նաև կիրառական արվեստում:

1912 թ. Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ սկսված կամավորական շարժման ժամանակ Գարեգին Նժդեհը և Անդրանիկը կազմակերպեցին 230 հայ երիտասարդներից կազմված ջոկատ: Հայկական վաշտը քաջաբար կռվեց թուրքական ուժերի դեմ և աչքի ընկավ մի շարք ճակատամարտերում:

Վառնայում, Պլովդիվում, Ռուսչուկում և այլ քաղաքներում հիմնադրվում են հայրենասիրական ընկերություններ: Հրատարակվող ***«Հույս», «Իրավունք», «Դանուբ»*** թերթերը նպաստում են ազգային ժողովրդավարական շարժմանը:

Հունգարիա: Հայերն այս երկրում հաստատվել են միջին դարերում: Տեղեկություններ են պահպանվել Հունգարիայի նախկին մայրաքաղաքում XIII դ. փոքր հայկական համայնքի գոյության մասին: Հայերը երկրում ստվարացան և գործունեության իրավունքներ ստացան XVII դ. վերջերից:

Հունգարիայի կարևոր երկրամասերից ***Տրանսիլվանիայում*** ապրող հայերը կենտրոնացած էին երկու քաղաքներում: Դրանցից մեկը 1700 թ. հիմնադրված ***Գեոլան*** էր (***Արմենոպոլիսը***), մյուսը՝ ***Եղիսաբեթուպոլիսը***: Թագավորական հրամանով երկու քաղաքն էլ համարվեցին զուտ հայկական կենտրոններ և ստացան արտոնություններ: Նրանց շնորհվեց ինքնավարություն:

Հայերն այստեղ ևս հաջողությամբ զբաղվում էին արհեստներով, առևտրով և դաշտավարությամբ: Նրանց թիվը հասնում էր 20 հազարի: Հայերը պայքարում էին իրենց արտոնությունները պահպանելու համար: Սակայն XIX դ. առաջին կեսին սահմանափակվեցին հայերի նախկին իրավունքները:

Հունգարահայերը գործուն մասնակցություն ունեցան 1848–1849 թթ. ազատագրական, հեղափոխական շարժումներին: Մի քանի հայ գեներալներ՝ ***Յեգյանը, Վիլմոշ Լազարը, Էռնե Կիշյուսը***, ազատագրական բանակի հրամանատարներ էին: Շարժման պարտությունից հետո 13 նշանավոր գեներալների թվում ***Կիշը*** և ***Լազարը*** մահապատժի ենթարկվեցին, իսկ ***Յեգյանն*** անցավ Արգենտինա:

Հունգարահայերը կապված են եղել մայր հայրենիքի հետ և արձագանքել են

այնտեղ կատարվող իրադարձություններին: Նրանք 1880 թ. սկսված սովի և 1890-ական թթ. կոտորածների տարիներին, ինչպես նաև հետագայում նյութական օժանդակություն ցուցաբերեցին սովյալներին ու փախստականներին:

Հունգարահայերն ունեցել են մշակութային ուրույն կյանք: Հայաշատ կենտրոններում կային իգական ու արական դպրոցներ: Հունգարահայերը շարունակում էին հայկական ձեռագրերի ընդօրինակումը, ստեղծում պատմաբանասիրական աշխատություններ:

Ռումինիա: Մոլդովայի համայնքը XIX դ. սկզբներին շարունակում էր գոյատևել: Դարի կեսերին Մոլդովան և Վալախիան միավորվեցին ռումինական պետության մեջ: Այդ միավորումը հայության համար նպաստավոր պայմաններ ստեղծեց: Նրանց իրավունք վերապահվեց սեփական կալվածքներ ունենալու, ազնվականական տիտղոսներ ստանալու և այլն: Ռումինիայի տարածքում հայերը շարունակում էին բնակվել ***Բուխարեստում, Ֆոկշանում, Յասիում, Բոտոշանում*** և այլ վայրերում: Բնակչության զգալի մասը զբաղվում էր արհեստագործությամբ: Հայերը նկատելի կշիռ ունեին առևտրում, որը ծավալվում էր նաև արտասահմանում՝ Թուրքիայում, Ավստրիայում և այլ երկրներում:

Բուխարեստի, ինչպես նաև ամբողջ երկրի հայկական գաղութների պատմության մեջ նշանավորվեց դիվանագետ ***Մանուկ բեյ Միրզայանի*** գործունեությունը, որը ռուսական կողմնորոշման ջերմ ջատագով էր: Ռումինահայերը կապված են եղել Հայաստանի հետ և մշտապես արձագանքել են հայրենիքում կատարվող իրադարձություններին: Նրանք իրենց բողոքի ձայնը բարձրացրին կառավարության դեմ, որը հրաժարվում էր 1890-ական թթ. փախստականներին ընդունելուց, և հասան հաջողության:

Ռումինահայերն ակտիվ մասնակցել են իրենց հյուրընկալող երկրի կյանքին: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռումինական բանակի կազմում կռվում էին նաև հայեր: Նրանք ստեղծեցին ռազմաճակատին օգնող ընկերություններ և գործող բանակին ցույց տվեցին նյութական օգնություն:

Ռումինահայերը նոր շրջանում լուսավորական մշակութային նկատելի կյանք ունեցան: Բացվեցին բազմաթիվ դպրոցներ, որոնք պահվում էին տարբեր ազգային ընկերությունների կողմից: Բավականաչափ զարգացում ապրեց տպագրական-հրատարակչական գործը: Մշակույթի բնագավառում կարևոր տեղ ուներ նաև թատրոնը:

Ֆրանսիա: Միջին դարերում Ֆրանսիայի քաղաքներում հայերը գերազանցապես առևտրով էին զբաղվում և փոքր համայնքներ ունեին: Նոր շրջանում ֆրանս-հայկական առևտրատնտեսական և հատկապես մշակութային կապերը մտան հունի մեջ:

Նկատելի աշխուժություն սկսվեց ***Մարսելի*** հայ վաճառականների շրջանում, որոնք Միջերկրական և Սև ծովերում ազատ երթևեկող նավ ունեին ու ստեղծել էին իրենց ընկերությունը: Առևտրական այդ ընկերությունը գլխավորապես Թուրքիայից ներմուծում էր բամբակ, եգիպտացորեն, գարի, չամիչ և այլ ապրանք-

ներ: Մարսելի և Հարավային Ֆրանսիայի կենտրոնների հետ առևտրական կապերի մեջ էին նաև ռուսահայ վաճառականները:

Մեծ էր ֆրանսահայերի մշակութային գործունեությունը: Փարիզի արևելյան լեզուների վարժարանի հայերենի դասընթացները ***1811 թ. Շահան Զրպեռյանի*** ջանքերով վերածվեցին հայագիտական ամբիոնի: Ամբիոնն իր աշխատակիցներով օտարներին ծանոթացնում էր հայ մշակույթին և պատմությանը:

XIX դ. կեսերից Ֆրանսիան դառնում է հայ մշակույթի զարգացման օջախներից մեկը: Փարիզում 1846 թ. հիմնադրված ***Սամվել Մուրադյան*** վարժարանը 1870 թ. տեղափոխվում է Վենետիկ և միանում ***Ռափայելյան*** վարժարանին: Մուրադ–Ռափայելյան վարժարանը երկար տասնամյակների արդյունավետ գործունեություն ունեցավ: Ֆրանսահայերի մեջ զգալի թիվ են կազմում Փարիզում, Մարսելում, Լիոնում և այլ քաղաքներում կրթություն ստացող ուսանողները:

Փարիզում սովորող հայ ուսանողները հիմնեցին (1849 թ.) «Արարատ» ընկերությունը: Հետագայում ստեղծվում են այլ ընկերություններ, որոնք նպաստում են անապահով երիտասարդների կրթությանը: Դարի վերջերին ձևավորվեց «Փարիզի հայոց բարեգործական ընկերությունը», իսկ 1902 թ. քաղաքի կենտրոնում կառուցվեց առաջին հայկական եկեղեցին:

Ֆրանսիայում հրատարակվում էին շուրջ երեք տասնյակի հասնող թերթեր, որոնք պարբերաբար արծարծում և քաղաքակիրթ աշխարհի առաջ բարձրացնում էին Հայկական հարցը: Ֆրանսահայ հանդեսներից առավել նշանակալի էր «Անահիտ» ամսագիրը: Մեծ էր հանդեսի խմբագիր Արշակ Չոպանյանի դերը եվրոպացիներին հայոց պատմությանն ու մշակույթին ծանոթացնելու գործում:

Ֆրանսիայի ժողովրդավարական միջավայրում աճեցին շատ հայ արվեստագետներ, որոնք միջազգային ճանաչման արժանացան:

Անգլիա: Հայերն Անգլիային ծանոթ էին միջին դարերից: Նրանց հետ շփվել են խաչակրաց արշավանքների ժամանակ: Հայկական համայնքները ձևավորվել են XIX դ. 30–ական թթ., երբ Կ. Պոլսի հայ վաճառականները բնակություն են հաստատում այնտեղ: Հայերը ***1870 թ. Մանչեստրում*** կառուցում են առաջին եկեղեցին:

Նրանք այս երկրում ևս զբաղվում էին արհեստներով, ավելի շատ՝ արևելյան երկրների հետ առևտրով: Հայ բնակչության գերակշիռ մասը մտավորականությունն էր: Հայ մտավորականներից ***Արփիար Արփիարյանը, Լևոն Բաշալյանը, Երվանդ Օտյանը*** և ուրիշներ անգլիական պաշտոնական շրջանների ուշադրությունը հրավիրում էին Հայ դատի վրա: Հայկական շրջաններում կազմակերպվում են տարբեր ընկերություններ, միություններ, որոնց նպատակն էր օգնել սովյալներին, փախստականներին, բարձրացնել Հայկական հարցը:

Անգլիայի հայկական համայնքներում ուրույն տեղ ուներ մշակույթը: Տակավին ***1736 թ. Լոնդոնում*** թարգմանաբար հրատարակվում են ***Խորենացու «Հայոց պատմությունը»*** և ***Շիրակացու «Աշխարհացույցը»***: Լոնդոնում և Մանչեստրում հրատարակվում էին «Համայնք», «Հնչակ», «Մարտ» և այլ պարբերականներ: Լ. Բաշալյանի և Ա. Արփիարյա-

նի խմբագրությամբ հրատարակվում էր «Նոր կյանք» հանդեսը, որն ազգային–քաղաքական խնդիրների հետ լայն տեղ էր տալիս գեղարվեստական գրականությանը: Նույնպիսի ուղղվածություն ուներ նաև Մինաս Չերազի՝ Լոնդոնում հրատարակած *«Արմենիա»* ամսաթերթը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ: XVII–XVIII դդ. շատ հայեր էին գնացել Ամերիկա, իսկ հետագայում նրանց հոսքը պարբերական բնույթ էր կրել: 1870–ական թթ. ***Նյու Յորքում, Վուսթերում, Բոստոնում*** ձևավորվեցին առաջին հայ համայնքները: Վուսթերը, որի երկաթալարի գործարանում շատ հայեր էին աշխատում, դառնում է ԱՄՆ–ի արևելյան նահանգների հայության կենտրոնը: Այնտեղ կառուցվեց (1891 թ.) ***Ս. Փրկիչ*** հայկական առաջին եկեղեցին: Այդ նույն ժամանակ հայերը սկսեցին հաստատվել նաև Կալիֆոռնիայում: ***Ֆրեզնոյում*** հիմնվեց հայկական համայնք:

ԱՄՆ–ի հայ բնակչության քանակը XX դ. սկզբին հասնում էր 20 հազարի: Կալիֆոռնիայի հայերը զբաղվում էին հողագործությամբ, խաղողագործությամբ, այգեգործությամբ: Հայ բնակչության մեծ մասն ապրուստը հոգալու համար ծանր աշխատանք էր կատարում գործարաններում: Համազգային որևէ կազմակերպություն չկար. դրա փոխարեն ձևավորվել էին բազմաթիվ հայրենակցական միություններ:

Մինչև 1902 թ. Ամերիկայի թեմը ենթարկվում էր Կ. Պոլսի պատրիարքությանը, հետագայում՝ Էջմիածնի Մայր աթոռին: Այնտեղ հիմնվում են տարաբնույթ բազմաթիվ միություններ, ընկերություններ: Կարևոր դեր էր կատարում ***Հայ բարեգործական ընդհանուր միությունը***, որը շուրջ 20 մասնաճյուղ ուներ: Ամերիկահայության շրջանում եռանդուն գործունեություն են ծավալել ՀՅԴ և Հնչակյան կուսակցությունները:

Գաղթավայրերի կյանքում մեծ էր մամուլի դերը: Առաջին հայ պարբերականն *«Արեգակ»* (1888 թ.) ամսաթերթն էր: Հետագայում հրատարակվում են *«Արարատ»*, *«Հայք»*, *«Հայրենիք»* պարբերականները:

Ամերիկահայ գաղութները ստվարացան և եռանդուն գործունեություն ծավալեցին պատմության նորագույն շրջանում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ և որ քաղաքներում են ձևավորվել Բուլղարիայի հայ համայնքները: Ինչ նշանավոր հայորդիներ են աչքի ընկել Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ: Ո՞ր թերթերն էին նպաստում ազգային ժողովրդավարական շարժմանը:
2. Երբ են հայերը հաստատվել Հունգարիայում: Ինչ արտոնություններ ունեին նրանք, ինչո՞վ էին զբաղվում: Ովքե՞ր աչքի ընկան հունգարական հեղափոխական շարժումների ժամանակ:
3. Մոլդովահայ համայնքի ինքնավարությունն ինչպե՞ս էր իրականացվում: Ռումինիայի որ քաղաքներում էին հայեր բնակվում և ինչո՞վ էին զբաղվում: Ինչ գիտեք Մանուկ բեյ Միրզայանի մասին:

4. Ե՞րբ են հայերը բնակություն հաստատել Ֆրանսիայում և ինչո՞վ էին զբաղվում: Ներկայացրե՛ք ֆրանսահայ համայնքի կրթամշակութային կյանքը:
5. Ե՞րբ և ինչպե՞ս են ձևավորվել հայկական համայնքներն Անգլիայում. ինչո՞վ էին զբաղվում հայերը: Ե՞րբ և ո՞ր քաղաքում է կառուցվել Անգլիայում առաջին հայկական եկեղեցին:
6. Ե՞րբ և ո՞ր քաղաքներում են ձևավորվել ԱՄՆ–ի առաջին հայ համայնքները: Ո՞րն էր ԱՄՆ–ի արևելյան նահանգների հայության կենտրոնը: Ե՞րբ և ո՞ր եկեղեցին է այնտեղ կառուցվել: Ի՞նչ պարբերականներ էին հրատարակում ամերիկահայերը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Ռումին գիտնական Նիկոլայ Յորգան հայերի մասին

Ռումինիայի հայերը կարողացան մեծ հմտությամբ զուգակցել երկու դժվարին և նրբին պարտականություններ. մեկը՝ հավատարմությունը դեպի իրենց հայրենի ավանդույթներն ու իրենց ազգությունը, որ բնավ մոռացած չեն, և մյուսը՝ դեպի այն երկիրը, որտեղ իրենք և իրենց նախնիները հաստատվել են շատ հին ժամանակներից: Մեզ համար նրանք եղբայրներ են, ազնիվ եղբայրներ՝ միաժամանակ մնալով իրենց հնագույն հայրենիքի ընտրյալ որդիներ:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

850–855 թթ. — Հակաարաբական հուժկու ապստամբությունը. Հայաստանի ինքնավարության վերականգնումը
855 թ. — Աշոտ Բագրատունու ճանաչվելը հայոց իշխան և սպարապետ
862 թ. — Աշոտ Բագրատունին՝ հայոց իշխանաց իշխան
869 թ. — Զաքարիա Զագեցու նախաձեռնությամբ հրավիրված հայ իշխանների ժողովի կողմից Աշոտ Բագրատունուն հայոց թագավոր հռչակելու մասին որոշման ընդունումը
885 թ. օգոստոսի 26 — Գևորգ Գառնեցու կողմից Աշոտ Բագրատունուն հայոց թագավոր օծելը
885–890 թթ. — Աշոտ I Բագրատունու գահակալությունը
885–1045 թթ. — Հայաստանի Բագրատունյաց կենտրոնական թագավորությունը
890–914 թթ. — Սմբատ I Բագրատունու գահակալությունը
894 թ. — Հայոց բանակի հաղթանակը Սաջյան ամիրայի զորքերի նկատմամբ Դողսի ճակատամարտում
908–1021 թթ. — Վասպուրականի թագավորությունը
914–928 թթ. — Աշոտ II Երկաթի գահակալությունը
921 թ. — Արաբների պարտությունը Սևանի ճակատամարտում (Ծովամարտ)
921 թ. — Հայ–բյուզանդական հակաարաբական դաշինքի կնքումը Կ. Պոլսում
922 թ. — Աշոտ Երկաթի ճանաչվելը Հայաստանի շահնշահ
928–953 թթ. — Աբաս Բագրատունու գահակալությունը
948 թ. — Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Աղթամարից Արգինայի վանք
953–977 թթ. — Աշոտ III Ողորմածի գահակալությունը
961 թ. — Անիի հռչակվելը մայրաքաղաք
963–1065 թթ. — Կարսի (Վանանդի) թագավորությունը
977–990 թթ. — Սմբատ II Բագրատունու գահակալությունը
978–1113 թթ. — Տաշիր–Զորագետի (Լոռիի) թագավորությունը
987–1170 թթ. — Սյունիքի թագավորությունը
990–1020 թթ. — Գագիկ I Բագրատունու գահակալությունը
998 թ. — Ատրպատականի ամիրայի զորքերի ջախջախումը Ծումբի ճակատամարտում
1001 թ. — Տայքի կյուրապաղատության բռնակցումը Բյուզանդիային
1001 թ. — Անիի Մայր տաճարի կառուցման ավարտը
1029–1065 թթ. — Կարսի թագավոր Գագիկ Աբասյանի գահակալությունը
1042–1045 թթ. — Գագիկ II Բագրատունու գահակալությունը
1044–1084 թթ. — Սյունիքի թագավոր Գրիգորի գահակալությունը
1045 թ. — Բագրատունյաց կենտրոնական թագավորության անկումը
1048 — մոտ 1090 թթ. — Տաշիր–Զորագետի Կյուրիկե I թագավորի գահակալությունը
1064 թ. — Ալփ Արսլանի բանակի ներխուժումն Այսրկովկաս, Անիի հանձնումը Շադդադյաններին
1071 թ. — Մանազկերտի ճակատամարտը. Բյուզանդիայի պարտությունը սելջուկ–թուրքերից
1072–1090 թթ. — Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը՝ Մարաշ կենտրոնով
1080–1198 թթ. — Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում
1080–1095 թթ. — Ռուբեն I–ի գահակալությունը
1082–1117 թթ. — Գող Վասիլի իշխանությունը՝ Քեսուն կենտրոնով
1098 թ. — Վահկա բերդի գրավումը բյուզանդացիներից. Վահկան՝ Ռուբինյանների իշխանության կենտրոն

1100–1129 թթ. — Թորոս I Ռուբինյանի գահակալությունը
1104 թ. — Սիս և Անավարզա քաղաքների գրավումը բյուզանդացիներից. Անավարզան՝ Ռուբինյան իշխանության մայրաքաղաք
1107 թ. — Իկոնիայի սելջուկյան զորքի ջախջախումը Բերդուսի ճակատամարտում
1113 թ. — Աղթամարի կաթողիկոսության հիմնադրումը
Մոտ 1130 թ. — Հայկական առաջին դատաստանագրքի (Դավիթ Ալավկաորդու «Կանոններ») ստեղծումը
1145–1169 թթ. — Թորոս II Ռուբինյանի գահակալությունը
1151–1292 թթ. — Հռոմկլան՝ Ամենայն հայոց կաթողիկոսության նստավայր
1169–1175 թթ. — Մլեհ Ռուբինյանի գահակալությունը
1173–1375 թթ. — Սիսը՝ Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք
1175–1187 թթ. — Ռուբեն III Ռուբինյանի գահակալությունը
1176 թ. — Միրիոկեֆալոնի ճակատամարտը
1184 թ. — Դատաստանագրքի կազմումը Մխիթար Գոշի կողմից
1185 թ. — Սարգիս Զաքարյանի նշանակվելը վրաց զորքի ամիրսպասալար (սպարապետ)
1187–1219 թթ. — Լևոն II Ռուբինյան, 1198 թ. հունվարի 6–ից՝ հայոց թագավոր
1196 թ. — Ամբերդի ազատագրումը հայ–վրացական զորքերի կողմից
1198–1375 թթ. — Կիլիկիայի հայոց թագավորությունը
1199 թ. — Անիի ազատագրումը Զաքարյանների կողմից
1203 թ. — Դվինի ազատագրումը Զաքարյանների գլխավորությամբ
1226–1270 թթ. — Հեթում I–ի գահակալությունը
1236–1244 թթ. — Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից
1243 թ. — Իկոնիայի սուլթանության զորքի պարտությունը Զմանկատուկի ճակատամարտում
1254 թ. աշուն — Հայ–մոնղոլական պայմանագրի կնքումը Կարակորումում Մանգու խանի և Հեթում I–ի միջև
1265 թ. — Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքի ստեղծումը
1266 թ. — Սամցխե–Ջավախք հայ–վրացական իշխանության ստեղծումը
1266 թ. — Մառիի ճակատամարտը
1280–ական թթ. սկիզբ — Գլաձորի համալսարանի հիմնադրումը
1292–1441 թթ. — Սիսը՝ Ամենայն հայոց կաթողիկոսության նստավայր
1307 թ. — Սսի եկեղեցական ժողովի գումարումը. ունիայի (միություն) մասին որոշման ընդունումը
1317 թ. — Ադանայի եկեղեցական նոր ժողովը. միաբարական շարժման առաջացումը
1320–1342 թթ. — Լևոն V Հեթումյանի գահակալությունը
1344–1362 թթ. — Կոստանդին Նղրեցին՝ Կիլիկյան Հայաստանի թագավոր
XIV դ. երկրորդ կես — 1412 թ. — Տաթևի համալսարանի գործունեությունը
1361 թ. — Սսի եկեղեցական ժողովը. Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումների չեղյալ հայտարարվելը
1374–1375 թթ. — Լևոն VI Լուսինյանի գահակալությունը
1375 թ. ապրիլի 16 — Սիս մայրաքաղաքի գրավումը
1441 թ. — Մայր Աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում
1461 թ. — Կ. Պոլսի հայոց պատրիարքության հիմնումը
1465 թ. — Սմբատ Արծրունու օծվելը հայոց թագավոր Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում
1512 թ. — Հայկական տպագրության հիմնադրումը. «Ուրբաթագրքի» տպագրումը Հակոբ Մեղապարտի կողմից Վենետիկում

1547 թ. — Հակաօսմանյան պայքար կազմակերպելու նպատակով Էջմիածնի գաղտնի խորհրդակցության գումարումը Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի գլխավորությամբ
1555 թ. մայիսի 29 — Օսմանյան և Սեֆյան տերությունների միջև հաշտության պայմանագրի կնքումը Ամասիայում
1562 թ. — Հայաստանի ազատագրության նպատակով գաղտնի ժողովի գումարումը Սեբաստիայում Միքայել Սեբաստացի կաթողիկոսի գլխավորությամբ
1604 թ. օգոստոս — 30 0000 հայերի բռնագաղթեցումը դեպի Պարսկաստան
1638 թ. — Հայկական տպարանի հիմնումը Նոր Ջուղայում Խաչատուր Կեսարացու կողմից
1639 թ. — Օսմանյան պետության և Սեֆյան Իրանի միջև հաշտության պայմանագրի կնքումը Կասրե Շիրինում
1669 թ. — Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» երկի տպագրությունը. հայ առաջին հեղինակը, որի երկը տպագրվել է իր կենդանության օրոք
1677 թ. — Հայաստանի ազատագրության նպատակով Էջմիածնի գաղտնի ժողովի գումարումը Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ
1699 թ. — Մելիք Սաֆրազի և Իսրայել Օրու նախաձեռնությամբ Անգեղակոթի գաղտնի խորհրդակցության գումարումը
1722 թ. — Ռուսական զորքերի Կասպիական արշավանքը
1722 թ. աշուն — Դավիթ բեկի գլխավորած հայոց զորքի հաղթանակը ջևանշիր ցեղի դեմ
1724 թ. գարուն — Կարքի գյուղի 40–օրյա հերոսական պաշտպանությունը
1724 թ. հունիսի 7 — սեպտեմբերի 26 — Երևանի հերոսական պաշտպանությունը օսմանյան զորքերի դեմ
1724 թ. հունիսի 12 — Ռուս–թուրքական պայմանագրի կնքումը Կ. Պոլսում
1724 թ. — Դավիթ բեկի գլխավորությամբ հայկական իշխանության ստեղծումը Սյունիքում
1725 թ. մարտ — Թուրքական բանակի ոչնչացումը Վարանդայում
1727 թ. մարտ — Հալիձորի հաղթական ճակատամարտը թուրքական զորքերի դեմ
1728–1730 թթ. — Ազատագրական պայքարը Սյունիքում Մխիթար սպարապետի ղեկավարությամբ
1729–1731 թթ. — Գյուլիստանի սղնախի պայքարը թուրք նվաճողների դեմ Աբրահամ սպարապետի գլխավորությամբ
1736 թ. — Խամսայի (Արցախի) մելիքությունների ինքնավարության ստեղծումը
1769 թ. հունիս — Հայաստանի ազատագրության Մ. Սարաֆյանի ծրագրի ներկայացվելը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային
1771 թ. — Էջմիածնի տպարանի հիմնումը Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից
1771 թ. — Շ. Շահամիրյանի կողմից հայկական տպարանի հիմնումը Մադրասում
1772 թ. — Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի լույսընծայումը Մադրասում
1784–1786 թթ. — Մ. Չամչյանի եռահատոր «Պատմություն Հայոց» երկի տպագրությունը
1789 թ. — Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» գրքի հրատարակումը Մադրասում
1794 թ. — Հայ առաջին պարբերական «Ազդարարի» տպագրումը Մադրասում Հարություն քահանա Շմավոնյանի կողմից
1804 թ. հունվար — 1813 թ. հոկտեմբեր — Ռուս–պարսկական պատերազմը
1806 թ. դեկտեմբեր — 1812 թ. մայիս — Ռուս–թուրքական պատերազմը
1810 թ. — Աստրախանի Աղաբաբյան դպրոցի հիմնումը
1815 թ. — Մոսկվայի Լազարյան ճեմարանի բացումը
1815 թ. — Հայկական նոր ձայնագրության ստեղծումը Հ. Լիմոնճյանի կողմից

1816 թ. — Ռուսահայ առաջին պարբերականի՝ «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթի լույսընծայումը
1821 թ. — Կալկաթայի հայկական Մարդասիրաց ճեմարանի բացումը
1824 թ. — Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հիմնումը Ներսես Աշտարակեցու կողմից
1826 թ. հուլիս–1828 թ. փետրվար — Ռուս–պարսկական պատերազմը
1827 թ. հոկտեմբերի 1 — Երևանի բերդի գրավումը
1828 թ. փետրվարի 10 — Ռուս–պարսկական հաշտության պայմանագրի կնքումը Թուրքմենչայում
1828 թ. մարտի 21 — 1840 թ. ապրիլի 10 — Հայկական մարզը
1828 թ. ապրիլ — 1829 թ. սեպտեմբեր — Ռուս–թուրքական պատերազմը
1836 թ. մարտի 11 — Եկեղեցական կանոնադրության (պոլոժենիե) հրապարակումը
1837 թ. — Երևանի թեմական դպրոցի բացումը
1839 թ. — Հայկական Արմավիր գաղութի հիմնումը Ռուսաստանում
1839 թ. — Բարենորոգումների հրովարտակի (թանզիմաթ) հրապարակումը սուլթանական կառավարության կողմից
1843 թ. — մինչ օրս — Մխիթարյանների «Բազմավեպ» պարբերականի հրատարակումը
1844 թ. — Կովկասի փոխարքայության հիմնումը
1846 թ. — Փարիզի Մուրադյան վարժարանի հիմնադրումը
1853 թ. աշուն — 1856 թ. մարտ — Ղրիմի (Արևելյան) պատերազմը
1856 թ. փետրվար — Բարեփոխումների սուլթանական նոր հրովարտակը
1856 թ. — Երևանի առաջին գլխավոր հատակագծի կազմումը
1860 թ. մայիսի 24 — Ազգային կանոնադրության հաստատումը Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կողմից
1861 թ. — «Արևելյան թատրոնի» կազմավորումը Կ. Պոլսում
1861 թ. — Հայ առաջին կամերային նվագախմբի ստեղծումը Կ. Պոլսում
1862 թ. — Զեյթունի ապստամբությունը
1863 թ. մարտի 17 — Ազգային կանոնադրության վավերացումը սուլթանի կողմից
1868 թ. — Հ. Վարդովյանի երկլեզու թատրոնի ստեղծումը Կ. Պոլսում
1868 թ. — Հայ առաջին՝ «Արշակ Բ» օպերայի ստեղծումը Տիգրան Չուխաճյանի կողմից
1869 թ. ապրիլ — Ա. Կրիտյանի և Պ. Հայկազունու գլխավորությամբ «Բարենպատակ ընկերություն» խմբակի ստեղծումը Ալեքսանդրապոլում
1870 թ. — Մուրադ–Ռափայելյան վարժարանի ստեղծումը Վենետիկում
1870 թ. մայիսի 14 — Արևելյան Հայաստանում հողի սեփականության մասին ցարական օրենքի ընդունումը
1872 թ. — Գ. Արծրունու կողմից «Մշակ» թերթի հիմնադրումը Թիֆլիսում
1874 թ. — Էջմիածնի հոգևոր ճեմարանի բացումը
1874 թ. — «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի ստեղծումը Մեծ Ղարաբիլիսայում
1877 թ. ապրիլ 12 — 1878 թ. փետրվար 19 — Ռուս–թուրքական պատերազմը
1878 թ. փետրվարի 19 — Ռուս–թուրքական հաշտության պայմանագրի կնքումը Սան Ստեֆանոյում
1878 թ. հունիսի 1 — հուլիսի 1 — Բեռլինի վեհաժողովը
1881 թ. — Կարինի Սանասարյան վարժարանի բացումը
1881 թ. մայիս — Խ. Կերեքցյանի նախաձեռնությամբ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը Կարինում
1882 թ. — «Հայրենասերների միության» հիմնումը Մոսկվայում. հայ առաջին քաղաքական լրագրի՝ «Ազատության ավետաբերի» հրատարակումը

1885–1887 թթ. — «Գիտական շարժում» առաջին գիտական հայ պարբերականի հրատարակումը Կ. Պոլսում

1885 թ. աշուն — Առաջին հայ ազգային–քաղաքական՝ Արմենական կուսակցության հիմնադրումը Վանում

1887 թ. օգոստոս — Հնչակյան կուսակցության ստեղծումը Ժնևում

1889 թ. — Արմաշի դպրեվանքի բացումը

1890 թ. հուլիս — Գում Գափուի ցույցը

1890 թ. հուլիս — Հայ հեղափոխականների դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության հիմնադրումը Թիֆլիսում

1890 թ. սեպտեմբերի 22 — Ս. Կուկունյանի արշավանքը դեպի Արևմտյան Հայաստան

1890 թ. սեպտեմբեր — «Դրոշակ» թռուցիկ թերթի առաջին համարի հրատարակումը

1894–1896 թթ. — Հայերի զանգվածային կոտորածները (համիդյան ջարդեր). Հայոց ցեղասպանության առաջին փուլը

1894 թ. հուլիս–օգոստոս — Սասունի հերոսամարտը

1895 թ. մայիսի 11 — Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից հայկական նահանգների բարենորոգումների ծրագրի հանձնումը սուլթանին

1895 թ. սեպտեմբերի 18 — Հնչակյանների կազմակերպած Բաբը Ալիի ցույցը

1895 թ. հոկտեմբերի 12 — 1896 թ. հունվարի 30 — Զեյթունի ապստամբությունը

1895 թ. աշուն — Մալաթիայի հերոսամարտը՝ Եղիշե քահանա Խաչատրյանի գլխավորությամբ

1896 թ. հունիսի 3–8 — Վանի ինքնապաշտպանությունը՝ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ

1896 թ. օգոստոսի 14 — Դաշնակցության կազմակերպած «Բանկ Օտտոմանի» գործողությունը Կ. Պոլսում

1897 թ. հուլիսի 25 — Խանասորի արշավանքը. քրդական մազրիկ ցեղի նկատմամբ վրեժխնդրական գործողությունը

1898 թ. հոկտեմբերի 20 — Աղբյուր Սերոբի հաղթանակը Բաբշենի նշանավոր կռվում

1899 թ. — Թիֆլիս–Ալեքսանդրապոլ–Կարս երկաթուղու գործարկումը

1901 թ. նոյեմբերի 3–27 — Մշո Ս. Առաքելոց վանքի կռիվը

1903 թ. հունիսի 12 — Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին ցարական օրենքի ընդունումը

1903 թ. հուլիսի 29 — Հայ ժողովրդի հակացարական շարժման սկիզբը

1904 թ. մարտ–մայիս — Սասունի ապստամբությունը

1905 թ. փետրվարի 6 — Հայ–թաթարական ընդհարումների սկիզբը

1905 թ. հուլիսի 21 — Աբդուլ Համիդ II–ի դեմ մահափորձի իրականացումը

1906 թ. օգոստոսի 17–30 —Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական կենտրոնական ժողովը Էջմիածնում

1906 թ. — Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հիմնադրումը

1907 թ. — Գունավոր հեռուստատեսության հիմնադրումը Հ. Ադամյանի կողմից

1908 թ. հուլիս — Երիտթուրքական հեղաշրջումը օսմանյան Թուրքիայում

1909 թ. ապրիլ — Հայերի կոտորածն Ադանայում

1912 թ. հունվար–մարտ — «Դաշնակցության գործով» դատավարությունը Պետերբուրգում

1912 թ. հոկտեմբեր — 1917 սեպտեմբեր — Հայոց ազգային կենտրոնական բյուրոյի (Հայոց ազգային բյուրո) գործունեությունը

1912 թ. նոյեմբեր 10 — Գևորգ Ե–ի կոնդակով Պողոս Նուբարի նշանակումը Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ և ազգային պատվիրակության ստեղծումը

1913 թ. հունիսի 4 — Ա. Մանդելշտամի կազմած բարենորոգումների նախագծի ներկայացումը Կ. Պոլսում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպանների քննությանը
1914 թ. հունվարի 26 — Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու վերաբերյալ ռուս–թուրքական համաձայնագրի ստորագրումը
1914 թ. հուլիսի 19 (օգոստոսի 1) — 1918 թ. նոյեմբերի 11 — Առաջին համաշխարհային պատերազմը
1914 թ. հոկտեմբեր — Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի հայերի բռնագաղթն ու կոտորածները կազմակերպելու և իրականացնելու նպատակով Երեքի գործադիր կոմիտեի ստեղծումը
1914 թ. հոկտեմբերի վերջ — 1916 թ. ամառ — Հայոց մեծ եղեռնը
1914 թ. դեկտեմբերի 9 — 1915 թ. հունվարի 5 — Սարիղամիշի ճակատամարտը
1915 թ. մարտ–օգոստոս — Սասունի ինքնապաշտպանությունը
1915 թ. ապրիլի 1 — մայիսի 14 — Շատախի կենտրոն Թաղի ինքնապաշտպանությունը Բ. Սիմոնյանի ղեկավարությամբ
1915 թ. ապրիլի 7 — մայիսի 5 — Վանի ինքնապաշտպանությունը Ա. Մանուկյանի գլխավորությամբ
1915 թ. ապրիլի 16–18 — Դիլմանի ճակատամարտը
1915 թ. մայիսի 11 — Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի համատեղ հայտարարությունը հայերի կոտորածների կապակցությամբ
1915 թ. հունիսի 3–29 — Շապին Կարահիսարի ինքնապաշտպանությունը Ղ. Տեվլեթյանի գլխավորությամբ
1915 թ. հուլիսի վերջ — սեպտեմբերի 10 — Մուսա լեռան հերոսամարտը Տ. Անդրեասյանի ղեկավարությամբ
1915 թ. սեպտեմբերի 29 — նոյեմբերի կեսեր — Մ. Յոթնեղբայրյանի գլխավորությամբ Ուրֆայի (Եդեսիա) հերոսամարտը
1916 թ. հունվարի 13 — Խնուսի գրավումը Դրոյի ջոկատի կողմից
1916 թ. փետրվարի 3 — Էրզրումի գրավումը
1916 թ. փետրվարի 7 — Անդրանիկի գլխավորած զորաջոկատի կողմից Բիթլիսի գրավումը
1916 թ. մայիսի 16 — Սայքս–Պիկոյի համաձայնագրի կնքումը
1916 թ. հոկտեմբերի վերջ — «Արևելյան լեգեոնի» (Հայկական լեգեոն) ստեղծումը
1917 թ. փետրվարի 27 — Փետրվարյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում
1917 թ. մարտի 9 — Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ԱՀԿ) ստեղծումը
1917 թ. մարտ — Հայ ժողովրդական կուսակցության ստեղծումը
1917 թ. ապրիլի 26 — Արևմտյան Հայաստանում և գրավված այլ շրջաններում կառավարման նոր ձևի վերաբերյալ Ժամանակավոր կառավարության որոշման հրապարակումը
1917 թ. մայիսի 2–11 — Արևմտահայերի առաջին համագումարը Երևանում
1917 թ. սեպտեմբերի 29 — հոկտեմբերի 13 — Արևելահայերի համահորիդակցությունը Թիֆլիսում
1917 թ. հոկտեմբերի 25 — Բոլշևիկյան հեղաշրջումը Ռուսաստանում
1917 թ. նոյեմբերի 15 — Անդրկովկասյան կոմիսարիատի կազմավորումը
1917 թ. նոյեմբերի 16 — Հայկական կորպուսի ստեղծումը Կովկասյան ճակատում
1917 թ. դեկտեմբերի 5 — Երզնկայում զինադադարի ստորագրումը
1917 թ. դեկտեմբերի 29 — «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի (դեկրետ) ընդունումը Խորհրդային Ռուսաստանի կողմից
1918 թ. հունվարի 28 — Պատերազմի վերսկսումը Կովկասյան ճակատում

1918 թ. փետրվարի 10 — Անդրկովկասի Սեյմի գործունեության սկիզբը
1918 թ. փետրվարի 27 — Էրզրումի անկումը
1918 թ. մարտի 1 — Առանձին հայկական կորպուսի ստեղծումը, գեներալ Թ. Նազարբեկյանի նշանակվելը Կովկասյան ճակատի հայկական հատվածի գլխավոր հրամանատար
1918 թ. մարտի 3 — Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը
1918 թ. մարտի 24 — Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից Արամ Մանուկյանին Երևանի նահանգի դիկտատոր հաստատելը
1918 թ. ապրիլի 6–8 — Հայ ազգային–քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը Ալեքսանդրապոլում
1918 թ. ապրիլի 9 (ապրիլի 22) — Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության (ԱԺԴՀ) ստեղծումը
1918 թ. ապրիլի 12 (ապրիլի 25) — Կարսի հանձնումը թուրքերին
1918 թ. մայիսի 7 — հունիսի 6 — Թուրքական զորքերի դեմ ջավախահայության դիմադրական կռիվները
1918 թ. մայիսի 16–27 — Շիրակի գոյամարտը
1918 թ. մայիսի 22–28 — Սարդարապատի հերոսամարտը
1918 թ. մայիսի 23–29 — Բաշ Ապարանի հերոսամարտը
1918 թ. մայիսի 25–30 — Ղարաքիլիսայի հերոսամարտը
1918 թ. մայիսի 28 — Հայաստանի Հանրապետության հռչակումը. հայկական անկախ պետականության վերականգնումը
1918 թ. հունիսի 4 — Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում պատերազմի ավարտը. Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումը
1919 թ. ապրիլ — հուլիսի 5 — Մեծ եղեռնի կազմակերպիչ երիտթուրք պարագլուխների դատավարությունը
1921 թ. մարտ — 1922 թ. հուլիս — Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուների հատուցման «Նեմեսիս» ծրագրի իրագործումը հայ վրիժառուների կողմից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՄԱՍ Բ
ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ 6
§ 2. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼՔԸ 13
§ 3. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 18
§ 4. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՏՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ 24

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XI–XIV ԴԱՐԵՐՈՒՄ
§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ 29
§ 2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ XII–XIV ԴԱՐԵՐՈՒՄ 35

ԳԼՈՒԽ 3. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ
§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 42
§ 2. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ 47
§ 3. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 50
§ 4. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ XIII ԴԱՐՈՒՄ 55
§ 5. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ 59
§ 6. ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 62
§ 7. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ 65

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (XV ԴԱՐ — XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)
§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XV ԴԱՐՈՒՄ 69
§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVI ԴԱՐՈՒՄ ԵՎ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 72
§ 3. ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ 77

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ XV–XVII ԴԱՐԵՐՈՒՄ
§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: ՂՐԻՄԻ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 80
§ 2. ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ 84

ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՎ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X–XIV ԴԱՐԵՐՈՒՄ
§ 1. ԴՊՐՈՑԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 88
§ 2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 92
§ 3. ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԲՆԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ 95
§ 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ 98

ԳԼՈՒԽ 2. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԴԺՎԱՐԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ
(XV ԴԱՐ — XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)
§ 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 103
§ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ 108

ՄԱՍ Գ
ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

ԲԱԺԻՆ 1. ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ — XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

ԳԼՈՒԽ 1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII ԴԱՐՈՒՄ
§ 1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ 112
§ 2. ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ 114
§ 3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ 117
§ 4. ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 124
§ 5. ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 127
§ 6. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ 129
§ 7. ՀՆԴԿԱՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ 133
§ 8. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ 137

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ
§ 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 138
§ 2. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 142
§ 3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՆՈՐ ՓՈՒԼԸ 147
§ 4. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 20–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 151
§ 5. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ 30–40–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 155

ԲԱԺԻՆ 2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
§ 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 161
§ 2. ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 166

§ 3. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 168

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

§ 1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԻ ՍՐՈՒՄԸ: 1877–1878 ԹԹ. ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ 172

§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 177

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԵԼՔԸ

§ 1. ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ 182

§ 2. ԱԶԳԱՅԻՆ–ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 186

§ 3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ 191

§ 4. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 194

§ 5. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 198

ԳԼՈՒԽ 4. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԶԻՆՎԱԾ ՓՈՒԼԸ

§ 1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ: ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ 206

§ 2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՍԿԻԶԲԸ 211

§ 3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 1894–1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 215

§ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ 219

ԳԼՈՒԽ 5. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

§ 1. ՊԱՅՔԱՐ ՑԱՐԻԶՄԻ ՀԱԿԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ 223

§ 2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1907–1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 228

§ 3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 231

§ 4. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 236

§ 5. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912–1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 240

ԳԼՈՒԽ 6. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

§ 1. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ 246

§ 2. ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 250

§ 3. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ 255

§ 4. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ 262

§ 5. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 269

§ 6. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 273

§ 7. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 277

§ 8. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՍԿԶԲԻՆ 281

§ 9. 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ 286

ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ
§ 1. ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII ԴԱՐՈՒՄ 293
§ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII ԴԱՐՈՒՄ 296
§ 3. ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 298

ԳԼՈՒԽ 2. XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԵԼՔԸ
§ 1. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ: ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 304
§ 2–3. ԲՆԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 307
§ 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ 313
§ 5. ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 317

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ
§ 1. ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ 324
§ 2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ 330
§ 3. ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՄՆ–Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ 334

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 340

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ, ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ, ԱՐԱՄ ՆԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Վերստուգող սրբագրիչ՝ Նվարդ Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝ Գրիգորի Հարությունյանի
Քարտեզների համակարգչային մշակումը՝ Գրիգոր Բեգլարյանի
Աննա Ավագիմյանցի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 70x100 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Տառատեսակը՝ «Մաշտոց»:
Ծավալը՝ 22 տպ. մամուլ, 28,5 հրատ. մամուլ:
Տպաքանակը՝ 3086: Պատվեր՝ ՀՀ ԿԳՆ ԾՁԲ-15/22:

ՇԱՊԻԿԻՆ

Բաշ Ապարանի ճակատամարտին նվիրված հուշահամալիր © Սամվել Կարապետյան:
Արամ Մանուկյան, Կոմիտաս, Գարեգին Նժդեհ, Զորավար Անդրանիկը իր մարտիկների հետ.
լուսանկարները տրամադրել է Հայաստանի ազգային արխիվը:
Հովհաննես Թումանյան. լուսանկարը տրամադրել է Թումանյանի տուն–թանգարանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐ

Էջ 14՝ © Տարիել Հակոբյան, էջ 15՝ © Տարիել Հակոբյան, էջ 36՝ © Աշոտ Մելքոնյան, էջ 36՝ © «Զանգակ» հրատարակչություն, էջ 39՝ © Աշոտ Մելքոնյան, էջ 48՝ © Աշոտ Մելքոնյան, էջ 56՝ © Աշոտ Մելքոնյան, էջ 70՝ © Հովիկ Կարապետյան, էջ 78՝ © Տարիել Հակոբյան, էջ 90՝ © Էմին Մկրտչյան, էջ 91՝ © Աշոտ Մելքոնյան, էջ 91՝ © «Զանգակ» հրատարակչություն, էջ 96՝ © «Զանգակ» հրատարակչություն, էջ 100՝ © Աշոտ Մելքոնյան, էջ 122՝ © «Զանգակ» հրատարակչություն, էջ 125՝ Սարգիս Բաղդասարյան. «Հուշարձան Դավիթ բեկ», էջ 175՝ Հովհաննես Այվազովսկի. «Միխայիլ Լոռիս-Մելիքով», էջ 189՝ © Աշոտ Մելքոնյան, էջ 235՝ © Տարիել Հակոբյան, էջ 260՝ © Աշոտ Մելքոնյան, էջ 288՝ © Սամվել Կարապետյան, էջ 294՝ © Գրիգոր Հարությունյան, էջ 297՝ © Հովիկ Կարապետյան, էջ 314՝ © Թումանյանի տուն–թանգարան, էջ 321՝ Սարգիս Համբարձումյան:

Հայաստանի ազգային արխիվ
Էջեր՝ 51, 111, 130, 162, 167, 171, 179, 185, 193, 196, 199, 200, 203, 207, 207, 217, 225, 224, 226, 237, 241, 241, 251, 253, 252, 260, 264, 266, 272, 282, 284, 287, 290, 299, 305, 309, 309, 320, 322:

Երևանի պատմության թանգարան
Էջեր՝ 148, 152, 305:

Հայաստանի ազգային պատկերասրահ
Էջեր՝ 302, 318, 319, 320:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am